Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

3176

28
F-84

1379

y5.5 W39

2010

ԲԵՄԱՍՏԱՅՈՒԹԻՒՆՔ Ի ՏԻՐԱՄԱՅՐՆ

Ф- 8
5
520

ԵՐԵՑՈՒՆՑ ՀԱՅՑ

ԱՐԻ ՀԱՐՏԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ

ՊՕՍԻԿԻ ՄԵԼԴՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՄԱՄԻԼԻՈՆԻ ՓԼԵՐՄՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԵՒ ՀՕՐՆ ՊՈՒՐՏԱԼՈՑԻ

ԲԵՄԱՍՏԱՑՈՒԹԻՒՆՔ Ի ՏԻՐԱՄԱՅՐՆ

ԹԱՐԳՄԱՆՆԱԼՔ Ի ՉԵՒՆ

Ա. ԵՊՈՒԱՐԴԱՑ ՀԻՒՐՄԻՒԶ

ՇԻՐԱԿԱՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

Լուսն
36403

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՊԱՆՍ Ս. ՂԱԶԱՐՈՍ

1879

11505

ԱՀ

ԶԵԿՈՒՅՈՒՄՆ

Յութանասնիկն ծերութեան իմում վախճանելով դպրն ինչ նուէր սրբոյ Կուսին մատուցանել, խորհեցայ ժողովել ի մի որ ինչ երեցունց Հարց քրիստոնէական արդի ճարտարախօսութեան յօրինեալ է բեմասացութիւնս ի Տիրամայրն. յորս բովանդակին և որ ինչ Հարց նախնեաց իմաստք ներբողականք զնմանէ: Ոչ ոք ի բանասիրաց ժխտէ, զի ճարտարախօսքս այսորիկ գլխաւորք՝ են Պասիւէ Մելգայ եպիսկոպոս, Մասիլիոն Քլերմոնի եպիսկոպոս, և Հայրն Պուրտալու յիսուսեան, որ ճառիւքն իւրեանց մեծացուցին զփառս Տիրամօրն, և նովաւ զԱստուածորդւոյն, որչափ ինչ հնար է մուսայ մահկանացուի ըմբռնել, և գրչի բացատրել զայնս:

Հաղորդս վաստակոց նոցա ընդունել և զանարժանն նոցին թարգմանիչ՝ խնդրեմ ի Տիրամօրէն:

ՊՈՍԻԷԻ

ՄԵԼԴԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՎՇՏԱԿՑՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ԿՈՒՍԻՆ

Եւ կային առ խաչին Յիսուսի
մայր նորա, և այլն:

Յհ. ԺԹ. 25:

Զկնի տեսարան գործոյդ քան զառաքինութեան վէրացելոյ, որ 'ի ցաւս անհնարինս գիտէ կալ անյողդողդ, և զդէմ ունել բռնութեան մրրկի վէրաց: Հաստատութիւն իւր տայ նմա նոր փայլուձն, յաւելու առնել զնա ևս քան զևս պատկառելի, և ազդել 'ի տեսողս առաւելագոյն վէրակցութիւն. քանզի այնու իսկ առաւել շարժին նոքա յողբս, զի ինքն նուաղ ողբայ. և այնչափ գործոյդ ցաւոց նորա լինին կարեկից, որչափ զի արիութիւնն երևեալ 'ի նմա արժանագոյն կացուցանէ զնա անցաւութեան: Բայց զերկոսին զայսոսիկ 'ի միասին, ոչինչ երկմտիմ ասել, առաւել յոյժ եղեալ գործոյվէրն 'ի խորհրդեանս յայսմիկ՝ զորոյ կատարեմք ըզմօն: Յորժամ տեսանեմ զսիրտ սրբոյ Կուսին հարեալ կարեվէր առ ոտս խաչին 'ի չարչարանաց միածնին որդւոյ Աբրոյ, զգամ իսկապէս՝ զի պարտ է սրտի մերոյ շարժել 'ի գործով: Իսկ երբեմն նկատեմ նովին տեսութեամբ զհատրուածծ սրտի նորա և զպարզութիւն դիմաց, թուի ինձ՝ զի

դորանէ այն խառն ընդ պատկառանս, զոր աղդէ սըրտմտութիւն այսպիսի մեծամայելուչ, պարտի յուզել մորմոք լինն առաւել յոյժ կսկծալի. և զի չնչէ մարթ կարի խակ անկարելիսը սրտի ժոյժ ուշնել անդ արտասուաց: Մտանէք ասա, եղբարք իմ, արտասուօք և հեծութեամբ առ Տէր բամայրն վշտացեալ և արի, մի համարիք թէ արիութիւն իւր նուազ արասցէ նմա զգալ զվիշտս իւր. պարտ է նմա նմանել որդւոյ իւրում. որպէս զորդի իւր յաղթէ նա ամենայն ցաւոց, այլ հանգոյն նմին զգայ զամենայն դառնութիւն նոցա. Յիսուս Քրիստոս կամելով յուցանել յանձին մեր իւրոյ զկենդանի պատկեր չարչարանաց իւրոց, գրոշմէ 'ի նմա զամենայն տիպս նոցին: Յայս տեսարան հրաւիրեմ զձեզ. տեսանիցէք ընդ հուպ զՔրիստոս 'ի վերայ խաչին. յառաջ քան զօրն զայն մեծ, հրաւէր տայ ձեզ այսօր եկեղեցի տեսանել զնկարագիրն նորին 'ի Կոյան սուրբ: Որպէս ճառադայթից արեգական, ցոլացմամբ սաստկանայ ասել կրկնապատիկ, այսպէս թերևս ցաւք որդւոյն 'ի սէրտ մօրն ցոլացեալ՝ զօրանայցեն սաստկագոյնս աղդել 'ի սէրտ մեր: Զայս ընորհս մաղթեմ 'ի քէն, Հոգիդ սուրբ Աստուած, բարեխաւսութեամբ սրբոյ Կուսին:

Մի կարծէք, եղբարք իմ, թէ սուրբ Կոյան կոչեցաւ առ ոտս խաչին Քրիստոսի, առ 'ի կալ միայն 'ի տեսիլ չարչարանաց միածնին, և մորմոքիլ սրտի իւրոյ 'ի սուկալի տեսլենէն: Բարձրագոյն խորհուրդք են աստուածահաճոյ տեսլութեան 'ի վերայ ցաւագին Տէրամօրն, և պարտ է մեզ 'ի միտ առնուլ այսօր, զի ածաւ նա առնել թէր որդւոյն լքելոյ անոք, քանզի կամք էին Հօրն երկնաւորի՝ զի և սուրբ Կոյան ոչ միայն պատարագեսցի ընդ անպարտ զոհին, և բևեռեսցի 'ի խաչի որդւոյն նովին բևեռօք՝ որ ծակեցին զձեռս նորա, այլ և հաղորդ լինի բովանդակ խորհրդոյն՝ որ անդ մահուամբ նորին կատարեցաւ: Եւ քանզի այս Հնմարտութիւն է պատճառ խոսի, տուք ինձ մատդրութիւն, զի եդից նախ զչիմունս՝ յորոց վերայ հաստատի այն:

Այլ առ 'ի կարգաւ 'ի յառաջ խաղալ. հաճեսջիք տեսանել 'ի միտ առնուլ՝ զի երեք ինչ 'ի տէրունեան պատարագիս 'ի կատարումն սորին են զուգընթաց: Նախ չարչարանք, որովք մարգկութիւն նորա կոչնճեցաւ. երկրորդ՝ համակամութիւն, որով Փրկիչն մեր հնազանդեցաւ խոնարհութեամբ՝ կամաց Հօր իւրոյ. և երրորդ՝ արդասաւորութիւն, որով ծնաւ նա զմեզ 'ի շնորհս, և մահուամբ իւրով շնորհեաց մեզ կեանս: Զարչարեցաւ որպէս զոհ պատարաստեալ 'ի զենումն հարուածովք. յանձն եհան զզենումն որպէս քահանայ, որ կամաւոր մատուցանէ պատարագ ըստ սաղմոսերգուին. Եւ ինձ ընդէ պատրաստեցեր մարմին. և ծնաւ զմեզ չարչարանօք՝ որպէս նորոյ Ժողովրդեան հայր՝ վերոք իւրովք 'ի լոյս ածեալ զմեզ. այսոքիկ են մեծամեծքն երրեակ իրք, զորս Աստուածորդին կատարեաց 'ի վերայ խաչին: Չարչարանքն 'ի մարգկութիւն նորա հային. կամեցաւ նա յանձն առնուլ ըստ մարգկութեան զմեզս մեր, որով մատնեցաւ 'ի վճիռ հնդրութիւն արդարութեանն Աստուծոյ: Հնազանդութիւն նորա հայր առ Հայր, զոր քանզի ցասոյց անհնազանդութիւն, պատ էր հնազանդութեան ցածուցանել զնա: Իսկ արդասաւորութիւն հայր առ մեզ. ախորժ լինն Թշուառ, զորոյ նախահայրն մեր յանցանօք կամեցաւ առնուլ զձաշակ, եւ մեզ հարուած մահացու: Ո՛վ յեղափոխութիւն աղետալի. վիշտք անպատմականին եռաւն մեզ կեանս:

Երևեցաւ արդ, Կոյս անհամեմատ, եւ հաղորդ լինել խորհրդոյս, յաւել Հոգի քո և Աստուած, մատիր կայ առ խաչին, ընդունել տպաւորագոյն զերեքկին գրոշմ՝ որովք կամի Հոգին սուրբ նկարել 'ի քեզ զպատկերը կենդանի, և համանման խաչեցելոյ միածնիդ: Զայս առաջի կայ մեզ տեսանել ընդ հուպ կատարեալ ըստ Աւե-

տարանին. զի ոչ տեսանէք դուք, եղբարք իմ, որպէս կայ նա առ խաչին, և որո՛վ աջօք նկատէ ՚ի խաչին զորդին իւր արիւնաթաթաւ և վիրալից, ոչ ևս բերելով կեր- պարանս մարդոյ: Տեսի՛ր մահաւէտ Կուսին. մատչի նա ՚ի սեղան անդր ՚ի զենուման. և զգայ իսկ անդ զհարուած հատու սուսերին, որոյմ պարտ էր՝ գալով ջախ նախա- սացուածեան ծերունւոյն Սիմէոնի՝ անցանել ընդ անձն նորա, և կեղէքել զսիրտն մայրենի գժնդակ վիրօք: Կայր նա առընթեր որդւոյն, ոչ այնչափ մերձակայութեամբ մարմնոյ, որչափ կցորդութեամբ ցաւոցն. Կայր առ խաչին. և այս է առաջին դրոշին նմանութեան. « Կայ նա իսկա- պէս առ խաչին. վասն զի կրէ զնաչ որդւոյն մայր նորա սաստկագոյն ցաւով քան զայլոց ամենեցուն », որպէս սուրբն Բեռնարդոս ասէ:

Երթիցուք զհետ պատմութեան Աւետարանին, և տեսանեմք՝ որպէս կայ նա առ խաչի որդւոյն. ոչ ընկճեն զնա ցաւք, ոչ յերկիր անկանի նուաղեալ. այլ տեսանէք զուք զնա կանգուն յոտին. Կայր առ խաչին: Ո՛չ, սուրն այն՝ որ էհար զսիրտ նորա, ոչ եթարձ ՚ի նմանէ զզօրու- թիւն. արիութիւն և վեհակրութիւն զուգակիցք են ՚ի նմա, և վկայէ նա կացութեամբն՝ զի ոչ ինչ ընդհատ է հնազանդ քան վեհակիր: Զինչ այլ ինայ արդ, ո՛ հաւա- տացեալք, բայց զի միածին որդի իւր սիրելի, որ տեսա- նէ հանդոյն իւրոյնմն զվիշտս նորա և զհամակամութիւն, հաւատարեսցէ զնա և արդասաւորութեան իւրում: Սո- վին խորհրդով եւս նմա զսուրբն Յոհաննէս յորդի. Կին դո՛, ահա որդի քո՛. Ո՛վ կին, որ չարչարակիցդ լինիս ընդ իս, լեր ընդ իս և արդասաւոր, լեր մայր որդւոյ իմոյ, զորս քեզ տամ զամենեսեան՝ յանձին աշակերտիս, զորս ՚ի ձեռն ցաւոցս ծնանիմ: և որպէս զցաւոց իմոց ՀաշտԼ կիս զդառնութիւն, ընկալցիս և զզօրութիւն նորա, և վիշտ քո արասցէ զքեզ բազմածին: Ահա ձեզ, եղբարք, խորհուրդ աւուրս համառօտիւ. ահա սուղ բանիւք, ոյր

ինչ առաջի կայ ինձ բացատրել ընդհօքն Աստուածոյ ՚ի Հառիս: Սուրբ Կոյսն կայ առ խաչին, և զգայ զցաւս որ- դւոյն. կայ նա յոտին, և բերէ արիաբար զդառնութիւն նոցին. լինի անդ բազմածնութիւնդ որդւոց մայր, ընկալեալ զզօրութիւն ցաւոց միածնին: Լուարուք ուշիւ, և դորո- վեցարուք:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Պարտ է ինձ արդ խօսել ձեզ զցաւոց Կուսին, պարտ է յանգիման առնել աչաց ձերոց զհարուածն արիւնաուշս՝ զոր ընկալաւ նա ՚ի սիրտ, և ցուցանել ձեզ զվէրսն դեռևս արիւնահոսս: Ինչ գիտեմ՝ զի յոյժ դժուարին է բացատրել զցաւս մայրենի, ոչ միայն դառանել զսիրտս կենդանագրի դառնակսկիծ այնր ցաւոց. և եթէ դժուարին է նկարել զայն, ոչ ինչ նուազ է դժուարին և բանիւք բացատրել: Վասն որոյ ոչ իշխեմ ասել, եղբարք, թէ բանք իմ կարասցեն առնել զայն. ձեզ մանաւանդ պարտ է պատկերել ՚ի մտի, որպէսզի ինչ էին ցաւք Կուսին: Ո՛հ, եթէ կամիցիք խորհիլ եւեթ ուշիւ յայն, սիրտ ձեր փոխանակ իմ խօսեսցի ձեզ, և իմացուածն մտաց ասասցէ ձեզ առաւել քան զձառս իմ: Ա՛յլ առ ՚ի խելամուտ լինել յայն՝ յիշեցէք որ ինչ լուեալ է ձեր յաշխարհ, զի ամենայն ուրախութիւն սրբոյ Կուսին էր լինել մայր Քրիստոսի. քանզի ասէ զհետ գային ցաւք իւր դառնութեանն զոր ինչ մարտիրոս:

Ոչ է հարկ հուր բորբոքել, զինուորել զձեռս դահ- ճաց, և դրդռել զզայրոյթ բռնաւորաց, առ ՚ի չարչա- րակից Քրիստոսի առնել զմայրն. հանդերձանացս այսո- ցիկ ոչնչին պէտս արդարև սուրբ մարտիրոսք. անուոց

և ամենաստրանաց պէտք էին վասն նոցա, պարտ էր երկաթեղ եղնգանց Ճեղքել զմարմինս նոցա, և ակօսս առնել ի նոսա, առ ի խաչակցել զնոսա խաչեցեալն Քրիստոսի: Այլ ոչ այսոքիկ կարևոր էին վասն Կուսին. անգիտանալ էր զսէր նորա՝ ոչ շատ համարել զայն ի մարտիրոսութիւն նորին. նայն և մի խաչ բաւական էր սիրելոյն իւրում և իւր: Կամիս, Հայր երկնաւոր, զի լցցի Կայն վիրաք, ցոյց նմա զվէրս որդւոյն, ած զնա առ ոտս խաչին, և արասցէ զնա սէր որպէս զորդին:

Առ ի քաջ ի միտ առնուլ զայս, պարտ է մեզ խորհել ի սէր մայրենի. և զայս եգեալ հիմն, որպէս սրբոյ Կուսին սէր գեր ի վերոյ էր քան զամենայն մարդ, ըստ այմ պարտ է մեզ բարձրագոյն յոյժ զմիտս մեր վերացեալ: Այլ տեսցուք նախ զդծագիրս հին այնորիկ, զոր ընորհս ի սրտի նորա ներգործեցեալ, ի հրաշալի տիպս գործեալս ի բնութենէ յայլս ի մարդ: Ոչ է մարթ ըստ արժան բաւականին զարմանալ ընդ հնարս, որովք բնութիւն զմարս ընդ որդիս միաւորէ. զի կէտն՝ յոր ուշ ունի, և առ որ գոն գործէ, է յօրինել մի ինչ ի նոցանէ. և էի՛ ինչ դժուարին ի միտ առնուլ զայս՝ յամենայն կարգէ հնարից նորա: Ոչ ապաքէն առ այս յարէ բնութիւն զմանկիկն ի ծոց մօրն. կամ զի անուանդ նորա և կեանք անգամին ի նմին ականէ գայցէ յառաջ, և զնոյն ընդ մօրն կրեսցէ վտանգ, լեցի ընդ նմա անձն մի: Զօդ՝ քան զամենայն կցորդութիւն սերտագոյն. այլ թերևս կարծիցէ ոք, զի մանկիկն ի լոյս եկեալ՝ խզիցէ զկապ այսր միութեան: Ոչ, տեարք, մի կարծէք զայդ. չիք բնութիւն, որ բաժանել կարիցէ՝ զոր բնութիւնն այնպէս սերտիւ կցորդէ. իմաստութիւն նորա և նախահոգ զգուշութիւն այլ ինչ հնարս առ այս հայթայթեցին: Ի վախճանել այսր միութեան, այլս վտխանակէ, կապանս սիրոյ և գորովանաց, մայրն այլով իմն յերկնական կրէ յայնժամ զորդին յինքեան. ընդ գադարելն ի կրելոյ

զնա յարգանդէ՝ սկսանի յոյժ առաւել կրել զնա ի սրտի: Այսպիսի է գործ բնութեան, կամ մանաւանդ այնորիկ՝ որ սիրէ բնութեան. այսու Ճարտարութեամբ միացուցանէ զմարս ընդ որդիս, և պահէ զնոսա անբաժանելի. ի թողուլ զնոսա մարմնոյն՝ ընդունի զնոսա հոգին սիրով, և չիք ինչ՝ որ կարիցէ խլել զնոսա ի սրտէ մարդն: Այնպիսի է սէրս զոր նոցա, զի ի խառնել մանկանցն՝ յուզին և ազիք մարդն, և զգան զամենայն կիրս նոցա այնպէս ազդոյ և կենդանի, զի հաղիւ իմանալի առնէ նոցա բնութիւն՝ զի ոչ ևս կրեն զնոսա յարգանդի:

Քան ամենայն բանիւք, առաւել լիցի ձեզ ի միտ առնուլ զսագնապ մայրենի, օրինակաւ՝ զոր սուրբ Աստուածածնին պատմէ: Դուստր քանանուհւոյն տանջէր ի դիւէ. տեսէք զնա առ ոտս Փրկչին, տեսէք զարտասուս նորա, լուարուք զաղաղակ իւր, և գիտասջիք խորել, եթէ կարիցէք, ոմ է՝ որ տանջի, գո՞ւստրն թէ մայր. Ողորմած ինձ Տէր, որդի Դաւիթ, դուստր իմ լարալար այսահարի: Դիտեցէք՝ զի ոչ ասէ, Ողորմեաց դստեր իմում. այլ ասէ, Ողորմեաց ինձ: Եթէ կամէք՝ զի ողորմեացի ինքեան, պարտ էր նմա զիւր վիշտս յառաջ մատուցանել. այլ նա զվիշտ դստերն ասէ. ընդէր եցէ ինձ յաւելուլ զցաւս իմ. չիցէն բաւական ցաւք դստեր իմոյ առնել զիս արժանի ողորմութեան. Թուի ինձ կրել զնա տակաւին ի ծոցի իմում. զի ի տագնապել նորա, տագնապին և աղիք իմ. ի նմա իջեմ փանջանս. այսպէս ասէ նմա բարբառել սուրբն Բարսեղ Սելևկիոյ. ինչո՞ փանջիր, ես զցաւսն իջեմ. զնա գնա, զիս բնութիւնս փանջէ. հարուածք՝ զոր պայ նմա գնան, չիս ապրեն: Տեսանէք գուք ի գիւղեցիկ օրինակիս կենդանագրեալ զսէր մայրենի. տեսանէք զքաղցելի հաղորդակցութիւն, որով սէր կցորդէ զմարս ընդ որդիս. և շատ է այս առ ի սաղ ձեզ ի միտ առնուլ զի ցաւք Կուսին էին անպատմելիք:

Այլ ես խոստացայ ձեզ՝ ի վեր ևս ամբառնալ զմիտս

ձեր, և ցուցանել իրս առաւել զարմանալիս. ժամ է կատարելոյ զխոստումն իմ: Զոր ինչ տեսէքդ՝ի քանառուհին՝ սրտաւեր եմն է աղօտ՝ ցաւոց Կուսին: Սէր նորա, առանց համեմատութեան սաստկագոյն, առնէր՝ի նմա կցորդութիւն իմն կարի յոյժ կատարեալ. և թէպէտ չկրէ հնար ըմբռնել զայն, սակայն զկերպարանս ինչ նորին լեցի ձեզ առնուլ՝ի միտ, եթէ զնախասկիզբն այնորիկ ըստ իմաստից բանիս խնդրիցէք. զի սէր Կուսին առ որդին յառաջ գայր անդստին՝ի նմին ականէ, ուստի ընկալաւն զարգասաւորութիւն: Եւ յայտնի են պատճառքն. զի ամենայն՝ որ յառաջ բերէ ինչ, սիրէ զայն. և չէք ինչ բնականագոյն, զի պատճառք՝ որ տան մեզ առնել ինչ, տան և սիրել զոր առնեմքս. որպէս զի նոյն պատճառ՝ որ առնէ զմարս արգասաւոր՝ի ծնունդ, առնէ զնոսա և բարեգործով առ՝ի սիրել զծնեալսն: Կամիցեմք գիտել, ո հաւատացեալք, որմէ իւիք սէրն մայրենի՝ միացոյց զՄարիամ ընդ Յիսուսի, հայեցուք ուստի եղև՝ի նմա արգասաւորութիւն:

Ուստ մեզ, սուրբ Աստուածամայր, ասա մեզ՝ ուստի՞ եղև՝ի քեզ զօրութիւնդ այդ բեղնաւոր, թերևս՝ի բնականն զօրութենէ: Ֆաւ լեցի, եղբարք իմ, չէ և չէ այդ հնարաւոր. ընդ հակառակն ոչ տեսանէք՝ զի դատապարտեն նա զանձն յերջանիկ ամլութիւն, հաստատուն խորհրդով պահելոյ զկուսական մաքրութիւն. Զէ՞ որ էին նիւթ ինչ այդ. լինի՝ որ հաստատեալս եմ կալ՝ի կուսութեան՝ ծնանել որդի: Արդ եթէ ինքնին խոստովանի զամլութիւն իւր, ո՞րպէս եղանի այնու մայր: Լուարուք զոր հրեշտակն ասէ ցնա. Զօրութիւն Բարձրեայն հովանի լիցի՝ի քեզ: Արդ որպէս յայտնի է՝ զի արգասաւորութիւն Կուսին էր՝ի բարձանց, անտի է ապա և սէր իւր:

Յայտ իսկ է՝ զի բնութեան չէք աստ տեղի. քանզի համարեալ՝ թէ կամէր բնութիւն զարթուցանել՝ի Կոյսն սուրբ զսէր առ որդին, ալէ՝ զոր զգացումն կարէր

աղդել՝ի նա: Ա՛ռ՝ի սիրել զԱստուած ըստ արժանւոյն, պարտ է դնել պատճառ ինչ գերբնական. լցէ՛ թէ ազդէր՝ի նա մեծարանս կամ գորով, լցէ՛ թէ գթասանս կամ երկրպագութիւն, հպատակութիւն արարածոյ՝ թէ դրկախառնութիւն մայրենի: Սիրեսցէ՛ Մարիամ զՅիսուս որպէս զմարդ, թէ սիրեսցէ որպէս զմարդ աստուածացեալ: Ըբր կարասցէ նա ողջագուրել յանձին Քրիստոսի զաստուածութիւն և զմարմին, զոր Հոգին սուրբ այնպէս քաջ ընդ միմեանս կցորդեաց: Բնութեան ոչ էր մարթ կցորդել զնոսա՝ի մի անձն, և հաւատք ոչ ներելին բաժանել զնոսա. զինչ տպա կարէր առնել աստ բնութիւն. ստիպէր նա զկոյսն սուրբ՝ի սիրել. այլ յամենայն ազդմունս իւր չէր և ոչ մի՝ի դէպ որդւոյն Մարիամու:

Զինչ մնայր ապա, Հայր երկնաւոր, բայց զի շնորհք քո՝ի մէջ անցանէր, և ձեռն տայր ապիկար բնութեան: Ինձ, որ զկոյսն սուրբ աստուածայնութեամբ արգասաւորութեան հաղորդ կացուցեալ, արարեր զնա մայր Որդւոյ քո, պարտ էր ածել զգործ քո՝ի կատարումն, և յեղանակաւ իմն կցորդեալ զնա՝ի սուրբ ծնունդն յաւիտենական, որով զհան քո ծնանիս, ցայտել՝ի սիրտ նորա կայծ մի յամբաւ սիրոյդ՝ որով սիրես զՄիածին Որդի քո, որ է ճառագայթ փառաց քոց և պատկեր կենդանի աստուածութեան քո: Աստի ահա յառաջ գայ սէրն Մարիամու դեր՝ի վերոյ քան զբնութիւն. սէր գորովագութ, սէր միաւորիչ՝ ծնեալ անգստին՝ի գերաբուն միութենէ, սէր՝ որ ներգործէ հաղորդութիւն ամենակատար ընդ Յիսուս և ընդ Մարիամ, որպէս ընդ Յիսուս և ընդ Հայր իւր երկնաւոր:

Զարմանք թերևս թուիցէ ձեզ, ո հաւատացեալք, զի անօրինակ ասեմ զսէր Կուսին, և սիրոյն այնմիկ ներգործել՝ի նմա արդիւնս՝ որոց չէք ինչ երբեք համեմատս: Հայր և Որդի փառակից են միմեանց՝ի յաւիտենից, և մայր

և որդի վշտակիցք ընդ միմեանս ՚ի ժամանակի. Հայր և Որդի նոյն աղբիւր քաղցրութեան. մայր և որդի նոյն ուրախ դառնութեան. Հայր և Որդի աթոռակիցք ՚ի նոյն աթոռ, մայր և որդի խաչակիցք ՚ի նմին խաչն. փուշք ՚ի գլուխ որդւոյն մխեալք, խոցոտեն զմայրն. գլեղջյն ընդ քայեալի մատուցելոյ յարբուսին որդւոյն, մայրն ըմպէ բուլանդակ զդառնութիւն. որդին աարաձանի ՚ի խաչն, և մայրն կրէ զամենայն բռնութիւն ձգտանաց մարմնոյն: Եւ ո՞ առնէ զայս, բայց սէրն. և չկարէր սուրբ Կոյսն ՚ի տխուր ցաւն յայլ իմն միտս զՕգոստինեանն երկրորդել՝ Ինձ՝ ինձ, ա՛ր ինձ. զի յոյժ ՚ի վերայ նորա ծանրանաս ով սէր, կարի յոյժ զմայրենին սիրտ նորա ճմլես: Սէրն այն բեռն էր երկաթի ՚ի վերայ կրծոյ նորա, և այնպէս սաստիկ ճնշէր և ընկճէր զսիրտ նորա, մինչև հեղձամղձուկ առնել զնա ՚ի հեծեծանս, և յաւելուլ ՚ի նա բեռն անտանելի այնու, զի տխրութիւն ոչ նեբէր նմա թօթափել զայն արտասուօք ՚ի բաց: Ծանրանայր անհնարին զբոլոր անձամբն, և ճնշէր զնա մինչև ՚ի նուաղումն. և յաւելոյր և ևս զբեռն, ծանրացեալ և ՚ի վերայ որդւոյն. զի ոչ Քրիստոս միայն էր՝ որ տայր նմա զդաշ զցաւս իւր, այլ աւաղ, սակիկր և մայրն զդայցուցանել նմա զիւրան. երկաքանչիւր զմիմեանս խոցեին ցաւովք: Մայր և որդի որպէս հայելիք իմն էին եգեալք հանդէպ միմեանց, որք ցոլացուցանէին ՚ի միմեանս զպատկերս ընկալեալս՝ բազմապատկելով յանբաւս: Ըստ այսմ օրինակի ցաւք նոցա աճէին անսպառ. զի ալիք՝ ըստ յարուցանէին ՚ի սիրտս երեքից՝ մղէին զիրերաս, որպէս զերբագարձ երթևեկ ծովուս: Այլ սէր սրբոյ Կուսին առաւել էր յայսմ մասին ազեատալի, զի ընդն տայր նմա կրել ցաւ՝ առանց կարելոյ սփոփել զորդին. զի բաժանէր ընդ մերն զցաւս որդւոյն՝ առանց նուազեցուցանելոյ զայնս, այլ ընդ հակառակն սոխպէր յաւելուլ զցաւս որդւոյն՝ հաղորդելով զայնոսիկ մերն:

Այլ ասա զկայ առցուք, մի այլ ևս հետազօտել զցաւս Կուսին, ըմբռնել կամելով զանըմբռնելին: Զմտաւ ածցուք զանհնարին տրտմութիւն նորա, առ ՚ի տրտմակից լինել նմա քան ՚ի միտ առնուլ զայն. լցցին սիրտք մեր ըստ օրինակի Կուսին ցաւովք ընդ չարչարանս որդւոյն յաւուրս յայսոսիկ, յորս կատարեմք զվիշտսն նոցին, որպէս զի դառնութիւն այսր ցաւոց փակեսցէ մեզ ՚ի սպառ զդրունս ուրախութեանց աշխարհի: Ո՛հ, զի ոչ ևս կարէ սուրբ Կոյսն տանել կենցաղոյս յետ մահուան միածնի իւրոյ, ոչ ևս ինչ հաճոյ թուի յաչս նորա: Ոչ է հարկ Հօրն երկնաւորի խաւարեցուցանել վասն նորա զարև, և չինչուցանել զբոցս աստեղաց. զի ոչ ևս է նոցա լոյս վասն Կուսին. ոչ է հարկ՝ զի սասանեցուսցէ զչիմունս երկրի, և ծածկեսցէ արհաւրօք զհամագոյս, և սպառնասցի տարերայ դառնալ ընկղմել նոցա ՚ի վիհն առաջին. զի յետ մահու որդւոյ նորա միածնի՝ թուի նմա ամենայն ինչ ծածկեալ խաւարաւ, անկերպարան է նմա աշխարհ. ոչ այլ ինչ ուրեք տեսանէ նա, բայց սուսերս մահու. Որ ինչ և գնայէ՝ էր մահ: (Օգոստ):

Զսոյն զայս պարտ է խաչելութեանն Քրիստոսի ներգործել ՚ի մեզ. եթէ զդամբ զցաւս նորա, ոչ ևս աշխարհի իցէ քաղցրութիւն վասն մեր. փուշք աստուածորդւոյն հեղձուսցեն զծաղկունս նորա, և դառնութիւն զրոյ տայ մեզ յարբուսին՝ անհամեցուսցէ մեզ զախորժ բերկրութեանց: Երանի՛ այնոցիկ, Փրկիչ մեր, որոց տաս ճաշակել ՚ի լեզուս ասել քումմէ. երանի՛ այնոցիկ, որք ՚ի ձեռն նախատանաց քոց ծիծաղին զունայնութեամբք աշխարհի. երանի՛ այնոցիկ՝ զորս բեւեռք քո այնպէս հեղուսեն ՚ի խաչ քո, զի ոչ ևս կարեն ամբառնալ զձեռս իւրեանց և տարածանել զբաղձս, բայց ՚ի վեր յերկինս: Զայսոսիկ իմաստս պարտ է մեզ, եղբարք, յաւուրս յայսոսիկ առաջի խաչին Քրիստոսի ՚ի միտ առ-

նուէր. պարտ է մեզ ընդունել 'ի վերուց նորա զայս փրկաչէտ տրամութիւն, տրամութիւն խակապէս սուրբ, իսկապէս օգտակար, որ բառնայ 'ի մէնջ զսէր աշխարհի, որ մեծագնէ զամենայն պայծառութիւն նորա, որ տայ մեզ մտքանք յաւերժական ընդունայնութիւնս մեր անցեալս, դառն զղջութեամբ ապաշխարութեան: Այլ թերևս տրամութիւնս այս թուեսցի ձեզ ծանր և խիստ, և ոչ կարիցէք սովորել 'ի վշտակրութիւն. հայեցարուք 'ի սուրբ Կոյսն. հաստատութիւն իւր քաջալերեսցէ զձեզ, և համակամութիւն իւր ընդ Աստուծոյ ցուցցէ ձեզ՝ զի վիշտք իւր չէն առանց մխիթարութեան, որպէս տեսջիք յերկրորդումն մասին:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա՛ռ 'ի միտ առնուլ հաստատութեամբ ցոր վայր հաւաներ համակամութիւն սրբոյ Կուսին ընդ Աստուծոյ, պարտ է ձեզ ուշիւ զանազանել զերկուս գլխաւոր եղանակս, որովք մտքն է համբերել ցաւոց: Նախ՝ 'ի բաց փարատելով զտրամութիւն, և ակարացուցանելով զզգացումն, որով ամբքին ցաւք, և սիրտք սիրտ: Երկրորդ՝ յորժամ սիրտ նեղեալ 'ի ցաւոց՝ ոչ լքանի 'ի համբերելոյ, խրախուսէ՝ այլ է խռովեալ: Իսկ երրորդ՝ յորժամ զգայ սիրտ զցաւս, այլ ոչ խռովի. արդ զայս առաւելապէս պարտ է ինձ բացատրել:

Յառաջնումն յերեցուց ասաի եղանակաց՝ գադաթն ցաւք, և վայելէ սիրտ 'ի կատարեալ անդորրութ. Է՛ն եմ մխիթարութեամբ, առաւելեալ եմ ուրախութեամբ յամենայն նեղութիւնս մեր. ասէր Առաքեալն: Յերկրորդումն մատնչէն ցաւք ընդ համբերութեան, և 'ի յամառ մատնին թեպետև յաղթէ սիրտ, այլ չկարէ կալ անխռով. «ընդ

հակառակն, ասէ Տերտուղիանոս, խռովի առ յոյժ ձգանն կալոյ անխռով. և թէպէտ տկարութիւն իւր ոչ լքանի, այլ սասանի հաստատութիւն նորա ընդդէմ անհաստատութեան մարտուցեալ»: Իսկ յերրորդն ոչ է մարթ հասանել առանց մեծի սքանչելեաց. յորում Աստուած այնպիսի ընորհէ զօրութիւն ընդդէմ ցաւոց, զի համբերէ ոք անխռով խաղաղութեամբ. զի ուր յառաջնումն՝ խաղաղութիւն մերժէ 'ի բաց զամենայն ցաւս, և յերկրորդումն ցաւք խափանեն զնաղաղութիւն, երրորդն միաւորէ զերկուսին՝ կցորդեալ զդառնակսկիծ ցաւս ընդ անխռով խաղաղութեան:

Այլ աղօտ թերևս երեն բանքս. պարտ է այնպէս յայտնաբանել, զի ամենեքեան խակ հասու լինել կարասցեն: Այս զանազանութիւն լեցի ձեզ գիւրիմաց բանիւք սուրբ գրոց: Բազում խմաստութեամբ սուրբ գիրք համեմատեն յաճախս զցաւս ընդ ալէկոծ ծովու. և արդարև ցաւոց ևս են ջուրք դառնիք, որ ընդմտանեն 'ի խորս սրտի. Կէցո զիս Աստուած, զի հասին ջուրք յանձն իմ, ասէ սաղմոսերգուն. և տալիք սաստիկք են ցաւոց, որք ամբառնան որպէս ծով, և յորժամ թուխն ցածուցեալ, զայրանան ստէպ առաւելագոյն սաստիւ: Արդ զի նման ծովու են ցաւք, նուաճէ զնոսա Աստուած երբեմն, որպէս տեսանեմք 'ի սուրբ աւետարանին, զի Փրկիչն մեր նուաճէ զալիս:

Է՛ զի սաստէ ջուրց և հողմոց խաղաղել. և 'ի վերայ ածէ Աւետարանիչն, եղև խաղաղութիւն մեծ: Այսպէս զՀոգի իւր սուրբ հնչեալ 'ի սիրտ խռովեալ 'ի ցաւոց, խաղաղէ զամենայն ալիս նորա, յորժամ հաճոյ թուի նմա, և ցածուցեալ զմրրիկս՝ ածէ պարզութիւն. Ու՞ր է քո հանգիստ գոյս մարդոյ ներոմ, ասէ Առաքեալն. տեսանիցէք զալիս՝ որ խռովին զնա: Այլ որ հիւրընկալ ևս ոչ ընդ Աստուած խաղաղ զալիս, և տայ նմա հանգիստ 'ի խռովութեան: Է

ղև Թողու մրմնաւ ալևաց, ներբե ամբառնաւ ջուրց զայ-
բացելոց, որք բուռն մղեն զնաւ, և սպառնան նմա բե-
կուսմն: Պետրոս 'ի վերայ ալևաց՝ երկնչէ ընկղմել 'ի խոր-
այլ Քրիստոս ածէ զնաւն յանդորը, և ձեռն տայ Պետ-
րոսի ահաբեկելոյ, ուսնի զնա 'ի վեր: Ըստ սմին օրինա-
կի 'ի սասեկ ցաւս այնպէս Թուի ոք խռովեաւ, զի հա-
մարի ահա ընկղմել. Աստուած զնա ձեռամբ ծառայից: Սա-
կայն Քրիստոս այնպիսի տայ զօրութիւն, զի հոդմբ և ոչ
մրրիկք զօրեն լինչ ընդդէմ. և է այս երկրորդն եղանակ:
Իսկ երրորդն՝ որով Քրիստոս նուաճէր զծով, առաւել
էր մեծաւայելուչ և փառաւորեաւ. զի արձակէր զսանձ
մրրկաց, ներբե հոդմոց յուզել զծով, և ամբառնաւ մին-
չև յերկինս զալևս. սակայն ոչ լինչ խռովէր 'ի մրրկէն,
գնայր 'ի վերայ նորա հիանալի վստահութեամբ՝ կոխե-
լով զծով զայրացեաւ, և ձայնատուր լինն լինելով ան-
նուաճելի տարերն անդէն լակ 'ի սասեկ կատաղու-
թեան նորա: Ըստ այսմ օրինակի Թողու նա զսանձ ցա-
ւոց, ներբ նոցա զամենայն բռնութիւն, որպէս Զէ Ս յան-
ձինս ապաստան ելեմ, այլ ՅԱՓոխ՝ որ յարուցանէ զՔեռնալս:
Եւ արիութիւն, աներկևան 'ի մէջ այսր մրրկի և աղմկի,
ձեմ անայլայլելի և անխռով ընթացիւք 'ի վերայ ա-
լեաց 'ի զուր կոծելոց, որ բաղխեն զնա առանց սասա-
նեցուցանելոյ, և սասկին ընդդէմ իւրեանց բնութեան
'ի վեր ուսնել զնա: Այս է երրորդն եղանակ, որով Քրիս-
տոս տայ յաղթել վշտաց:

Համարեցարուք, ո հաւատացեալք, տեսանել ըզ-
պատկեր ցաւոց Կուսին, զոր կրէր 'ի տեսանելն զմահ
որդւոյն 'ի վերայ խաչին: Ապաքէն տրամութիւն զար-
հուրելի բռնութեամբ ամբառնայր զալևս 'ի վեր, որ
Թուէին մերթ սպառնալ երկնից 'ի յարձակելն ընդդէմ
արիութեան Աստուածամօրն ամենայն սոսկալի մա-
սամբք ցաւոց: Բանայր հուպ ընդ հուպ վհիս զառաջեաւ
'ի տեսիլ ևերթ արհաւրաց մահու. այլ մի համարիլք Թէ

էր սուրբ Կոյն խռովեալ. ոչ կամէր դադարել ցաւոց
իւրոց, որ նմանատիպ որդւոյ իւրոյ կացուցանէին զնա.
ոչ հատանէր սահման ցաւոցն, զի էկարէր բռնադատեալ
զսէր իւր. ոչ կամէր սփոփուսմն, զի էր ոք որդւոյ իւ-
րոյմ մխիթարիչ. ոչ խնդրէր նա, ով Հայր երկնաւոր,
զի ամբարեացես զարթմունեթիւն իւր. ոչ կամէր զայդ ընդ
'ի տեսանելն զբարկութիւն քո այնպէս ընդդէմ որդւոյ
քո բորբոքեալ, մինչև սասկել նմա տաղտկել Ընդէր ո-
ղէր էիս: Ոչ, էլևնէր նա խնդրել՝ զի առաւել խնայեացես
յինքն քան յորդի քո, պարտ էր նմա ասել ընդ Քրիս-
տոսի. Աչնայն էբօսանք ե ալէք տո անդին 'ի վերայ իմ. ոչ կամէր
նա կորուսանել և չնեթ մի 'ի ցաւոց անտի. ծանր էր նմա
չզգալ զամենայն լակ զկիրս սիրելւոյն: Ամբարձին ապա
ցաւք նորա յանբաւս 'ի վեր, եթե լցեն հնարաւոր, որ-
ժան ե Թողու նոցա ևս քան զևս զայրանալ. ոչ ներեսցե
Հոգին սասանել իւրուսմն տաճարի, զորոյ 'ի բարձու լե-
րին հաստատեալ ե զհիմունս. Չէմանէ նորա 'ի լեռան սուրբ
նորա. ոչ հասցեն անդր ալևք, և ոչ աղբիւրն այն վճիտ՝
զոր խնամով մեծաւ պահեաց յամենայն բծից՝ պղտորեա-
ցի յուզևսց ցաւոց. 'ի բարձրագոյն մասին, յորում էդ
զաթոռ իւր Հոգին, պահեացե միշտ զսպարզութիւն իւր
ընդդէմ մրրկաց, որ սպառնան նմա 'ի վերուստ:

Եթե զորպէսն խնդրէք, ներբեցէք լնձ բացատրել
սուղ լինչ բանիս զլսորհուրդն՝ յոր մարթ լցե ձեզ խոր-
հել պարապով յաւուրս յայսոսիկ: Ձարտարապետն և
նմատուն, սուրբն Ոսկեբերան, նկատեալ զՈրդին
Աստուծոյ մերձ 'ի մեռանել, ոչ դադարե 'ի զարմանա-
լոյ՝ Թե որպէս 'ի տապնապի անդ կայր յինքեան, և խո-
րագոյնս մտախոհ լնեալ յայն, առնէ զայս գեղեցիկ տե-
սութիւն. «Յերեկոյէ մահուն ընդ քերան գայ Աստուած-
որդին, զդողանի հարկանի և հառաչէ, այնքան ահաւոր
յանդիման լեալ նմա պատկեր պատուհասին. լակ 'ի
տագնապ ցաւոցն Թուի փոխեալ յանկարծակի, և առ

ոչ ինչ Թուխն նմա տանջանք. խօսի ընդ երանեալ աւազակին հանդարտ և անվրդով. հայի և ճանաչէ անչափ զնւրան առ խաչին, բարբառի առ նոսա, և քաջալերէ զնոսա. ընթեռնու՛ի մարգարէս զնեղն պատրաստեալ իւր՝ ի ճաշակ, ամբառնայ զձայն իւր առ՝ ի խնդրել զայն, և ըմպէ զայն անխռով. և ապա յայտ արարեալ՝ զի ամենայն ինչ կատարեալ էր, աւանդէ Հօր իւրում զհոգին, և աւանդէ իշխանաբար այնու խաղաղութեամբ և յառաջգիտութեամբ, զի յոյժ դիւրաւ է անտի՛ի միտ առնուլ զոր յառաջն ասաց. Դնեմ զանձն իմ, զի հրաման առիւ զնա. ոչ ոք հանէ զնա յինէն, այլ ես դնեմ զնա. իշխանութիւն առնեմ դնել զնա, և իշխանութիւն առնեմ հրաման առնուլ զնա:

Զինչ ունելովք ասել առ այս, ո՛ հաւատացեալք. ընդէ՞ր երկիւղ չարեաց այսպէս սաստիկ վշտացուցանէր զնա, ուր չարիք ոչ իսկ պատահէր Թուխին նմա: Մարթ է ապաքէն ասել՝ զի անտեսութիւն փրկութեան մերոյ է գործ զօրութեան միանգամայն և տկարութեան. վասն որոյ կամէր Քրիստոս ցուցանել երկիւղիւն՝ զի զգայր ցաւոցն որպէս զմեզ, և գիտեր արիութեամբ տիրել կրելոյն, և տեղի տալ այնոցիկ՝ ըստ հաճութեան կամացն Հօր իւրոյ: Զօրաւոր են ապաքէն այս պատճառք. այլ եթէ՛ի խորս խորհրդոյն մատիցուք, տեսանեմք այլ իմն բարձրագոյն յայսմ անօրէնութեան փրկչին: Աւեմ ապա՝ զի երևելագոյն պատճառ տեսանելոյ Գողգոթայ լերին այնպէս զնա անխռով, զոր լեառն ձիթենեաց ետես այնպէս խռովեալ, այս է՝ զի՛ի խաչին և՛ի Գաբաթան տեղւոջ՝ կայր՛ի նուիրել զանձն պատարագ, զոր ամենայն խաղաղութեամբ ոգւոյ պարտ էր կատարել: Որ կասդ առաջն սրբոյ պատարագին ցնդմամբ մտաց և անխորհուրդ, այսր անդր՛ի հետաքրքրութենէ կամ յախտաւոր կրից մղեալ, արգել զընդմունս քո. աւաղ, զի չև ևս՛ի միտ առեալ է քո զինչ է պատարագ:

Պատարագն է գործ, որով նուիրես դու Աստուծոյ

զպաշտօն քո. արդ ո՞ անգիտանայ, զխորհ առեալ, զի ամենայն սպասք մեծարանաց խնդրեն խաղաղութիւն և անդորր, զի այս է գրոշմ յարդութեան: Արդ Աստուած՝ որ քննէ զխորս սրտից, համարի թերի զպարգանս մեծ-վայելչութեան իւրոյ, եթէ ոչ յարդարէ ոք զանձն առաջի նորա, և ուղղէ զշարժմունս մտաց. վասն որոյ կարի խոկ պարտ է քահանայապետի խաղաղ մտօք մատուցանել զպատարագ. և իւրն որով սրբի նա, որպէս՛ի զևտաական օրէնն Ահարոն, նշանակ է սուրբ խաղաղութեան հեղեալ՛ի գլուխ նորա, և ազդ առնի նմա ունել անդորրութիւն մտաց, ՛ի բաց մերժել յանձնէ զամենայն խորհուրդս՝ որ խափանեն զմտադրութիւն, ունել զայն և՛ի սրտի՝ խաղաղելով զամենայն շարժմունս, որ խռովեն զպարզութիւն նորա: Քրիստոս քահանայապետ ճշմարիտ, սովին խորհրդով արդեօք ցուցանէս զքեզ այդպէս խաղաղ՛ի տապնապ մահուդ: Երևեր արդարև խռովեալ՛ի ձիթաստանին. այլ էր այն խռովութիւն կամաւոր, որպէս ասէ սուրբն Օգոստինոս, զոր ինքն զարթոյց յանձին. և ընդէ՞ր. զի համարէր զանձն զոհ պատրաստեալ՛ի զենուման, կամէր բերել յանձին զկիրս, և որպէս թէ զդէմս և զդործ զոհի. Թողոյր ձգել ածել զանձն՛ի սեղան ահիւ և դողութեամբ: Այլ՛ի կալն՛ի սեղանի, և՛ի սկսանել զպաշտօն քահանայական, և յամբառնալ զանպարտական ձեռս իւր առ՛ի մատուցանել զանձն պատարագ զայրացելոյ Հօրն, ոչ ևս կամէր յանձին խռովութիւն, ոչ երևեցուցանէր երկիւղ, որ դժմակութեան Թուի նշանակ. և թէպէտ կիրքն իւր այնպէս կամաց իւրոց էին հնազանդք, զի խաղաղութիւն ոգւոյ իւրոյ ոչ խռովէր նոքօք, սակայն ոչ կամէր և դոյզն ինչ կերպարանս խռովութեան յանձին բերել, որպէս զի՛ի միտ առցուք՝ զի է ողորմած քահանայապետ, որ ոչ բռնի և ակամայ՝ այլ մտադիւր և անխռով պատարագի, շարժեալ՛ի սիրոյ, վասն մերոյ փրկութեան: Ասի էր, ասէ

սուբբն Օգոստինոս, կալ նորա հեղ և խաղալ 'ի ցաւս անդ սաստիկս, և մեռանել առաւելագոյն քաղցրութեամբ, քան որով մեք սովոր եմք լինել 'ի քուն:

Այս է ահա խորհուրդն մեծ, եղբարք իմ, զոր խոստացայ ցուցանել ձեզ: Այլ մի համարիք կատարեալ զայն յանձին Աւետ Քրիստոսի, ազգէր նա ընդդէմ կիրս և 'ի մայր իւր սուբբ, զի և նմա պարտ էր հաղորդ լինել այսմ պատարագի: Պարտ էր և Նմա պատարագել զորդի իւր. վասն այսորիկ յարդարէ և ինքն հանդոյն նմին զանձն իւր, կայ կանգնեն առ ոտս խաչին՝ առ 'ի յայտ առնել զնուէրն իւր կամաւոր, և զի հանդերձ ամենայն ցաւովքն՝ նուիրեցէ նա զորդին 'ի բոլոր սրտէ Հօր երկնաւորի պատարագ արդար վրէժխնդրութեան նորա: Զարթուսցեք, եղբարք, զմտագրութիւն ձեր. եկայք ուսարուք 'ի սրբոյ Կուսէն՝ նուիրել Աստուծոյ հաստատութեամբ որ ինչ առաւել է ձեզ սիրելի: Ահա Մարիամ առ ոտս խաչին խլէ 'ի սրտէ իւրմէ զորդին իւր միածին տալ 'ի մահ, ոչ միանգամ ասա ևեթ, այլ անդադար յորմէ օրէ ծերուներն Սիմէոն գուշակեաց նմա յերեսաց Տեառն զպատահել հակառակութիւնս, որ առաջի կային որդւոյ իւրում: Յայնմ ժամանակէ սկսաւ Տիրամայրն նուիրել զնա Աստուծոյ յամենայն վայրկեանս կենաց իւրոց, և կատարեաց զնուէրն իւր առ խաչին: Իսկ թէ որպիսի՛ հատկութեամբ, անհնարին է ինձ բացատրել. դուք ձեզէն ածէք զայն զմտաւ 'ի վերայ բանից աւետարանին, և 'ի վերայ գնացից՝ զոր կայնմհետէ կալաւ:

Աւո՜ղ, ասէր ցնա Սիմէոն. Ահա սա կայ 'ի նշան հակառակութեան, և ընդ ո՞ր իսկ անյն անցցէ սուր: Գոյժ սոսկալի 'ի լուր մեր. ոչ մանրապատում արար նմա ծերուներն զհատածանս որդւոյն. այլ մի համարիք, ո՛ հաւատացեալք, զի խնայէր 'ի ցաւս նորա, մի՛ կարծէք զայդ. առաւել լագոյն այնու եղեն ցաւք Կուսին, զի լուսեղեամքն եթող նմա 'ի միտ առնուլ զամենայն: Զի զինչ գժնդակագոյն

և առաւել սոսկալի քան զանողորմ լուսեղիւնն զայն, սրտի՝ որոյմ չարիք մեծամեծք 'ի վերայ կայցեն, և ոչ կարիցէ գիտել՝ Թէ որպիսի՛ ինչ չարիքն այն լցեն: Ո՜հ, զի սիրտն այն եղկելի խռովեալ և պակուցեալ՝ տեսանելով չուրջանակի սպառնալիս, և սուր զգլխոյին 'ի կախ, և ոչ գիտելով յորմէ կուսէ պահ ոնել անձին, կրկ բիւր մահուն 'ի միում վայրկենի: Անդ երկիւղ Կուսին, հնարագէտ միչտ 'ի տագնապել զնա, ոչ գիտելով որ ինչ 'ի վերայ իւր պատրաստեալ կային չարիք, յեղյեղէր 'ի մոլ զամենայն չարիս՝ ամենեքեանցմէք իսկ զանձն տանջեալ. որպէս զի կրկր զամենայն ցաւս՝ զորս ազգէ նախապատուիրեն աներկբայելի, հանդերձ ամենայն դժնդակ անտանելի և տագնապեցուցիչ տառապանաց և անձկութեամբ՝ զորս ազգէ երկիւղ կեղակարծ: Յայսմ գտան աղէտ անստուգութեան՝ հանդիստ իմն Թուի գիտել որպիսի՛ ինչ հարուած մահաբեր 'ի վերայ կայցէ. և կարի իրաւամբք ասէ սուբբն Օգոստինոս՝ զի առանց համեմատութեան նուազ դժնդակ է կրել մի ևեթ մահ, քան կեալ ահիւ ամենայն մահուանց:

Այսպիսի էին ցաւք Տիրամօրն, աւա՜ղ, առանց խնայութեան: Ընդէր, Տէր, հարկանես զնա ամենուստ. գէթ զէշ իրացն լինէր նմա առնուլ 'ի միտ. կամ մի յայտնէին նմա աղէտքն, զի մի տանջէր յառաջագիտութեամբ. կամ յայտնէին բոլորովին, զի մի անակնկալ հասանէին 'ի վերայ: Այլ ոչ այսպէս. կամք եղեն Աստուծոյ մատուցանել զնա 'ի վորձ. յայտնեցան նմա աղէտքն յառաջագոյն, զի ընդերկար կրեսցէ. այլ ոչ յայտնեցան որպիսի՛ ինչ էին, զի մի բարձցի հարուած ցաւոյն՝ զոր անակնկալութիւն 'ի վերայ յաւելու: Ո՛վ նախապատուութիւն, ո՛վ կեղակարծիք. սակայն երկինք և երկիր և մահկանացուք, ասէ՛ք ցարտուղութիւն Կուսին: Գոյժն ազգէ 'ի նա երկիւղ, կատարումն կսկիծ. սակայն տեսիք զնաղաղութիւն նորա. ոչ հար-

ցանէ՝ թէ զի՞նչ հասանիցէ նմա կրել. որ ինչ և հասանէ, յանձն առնու կրել անտրտունջ: Որ ինչ կամք են Աստուծոյ, պարտ է կամել նմա ընդոյն. երկիւղ նորա չէ հետաքրքիր, ցաւ ոչ անհամբեր. երկիւղ անդէտ հանդերձելոց, ցաւ համբերող մերձակայից. կամի Աստուած, պարտ է նմա կամակար յանձն առնուլ. այսոքիկ են երկեակ մասունք համակամութեան. պատրաստ կալ առ ամենայն ինչ՝ զոր կամի Աստուած, յանձն առնուլ կամակար՝ որ ինչ անօրինէ:

Սուրբ Կոյն կանխագէտոյց ազէտիցն իւրոց՝ հայի տառապեալ յորդի իւր իբրև ի զոհ՝ ծածկեալ անգամին վիրօք, տեսանէ զնա ի հանդերձս իւր որպէս թէ թաղեալ. մահ նորա առաջի աչաց իւրոց կայ միշտ, և ասէ, Ծուար պապանի է եղբօրդւոյն իմ ինձ: Տեսիլ սոսկալի մայրենի աչաց. և գոչէ. Ախա, Տէր, ընդ դա որ ինչ և կամիս, քո է դա, յանձն առնում զամենայն: Տեսանէ զբևեռել նորա ի խաչին, և ասէ. Հայր յաւիտենական, ած ի կառարումն. եթէ պէտք իցեն հաւանութեան իմոյ՝ տալոյ զորդեակն իմ ի մահ, տամ զնա, քանզի այսպէս հաճոյ է քեզ. աւասիկ կամ, կազմ և յօժար ի կամս քո. հէղ զբարկութիւն քո ի վերայ դորա. մի զդա միայն հարկաներ, անցո զսուր քո և ընդ անձն իմ, կէղեքեա զանկս իմ, խլեա զսիրտ իմ, բարձ յինէն զորդի իմ սիրելի:

Ահ, եղբայրք իմ. ոչ ևս կարեմ յաւելուլ ինչ. կամի յորդորել զձեզ, այլ սուրբ Կոյն խօսեսցի առ ձեզ. ինքն յորդորեսցէ զձեզ՝ մի մեկնել աստի առանց նուիրելոյ Աստուծոյ, որ ինչ և իցէ ձեզ առաւել սիրելի: Իցէ ամուսին, իցէ որդի, ոչ կորուսանիցէք զնա ի յանձնել ի ձեռս Աստուծոյ. հաստուցանէ ինքն բիւրապատիկ: Մարիամ ընդունի առաւել քան զոր ասյ. հաստուցէ նմա Տէր ընդ հուսկ զորդին նորա սիրելի. և արդ իսկ ի բառնալ երեքօրեայ զորդին, տայ նմա յորդիս զամենայն հաւատացեալս, որպէս առաջի կայ ինձ ի հինիք բանիցս ասել:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Անկ է սիրեցելոյ աշակերտի Փրկչին մերոյ, անկ է սիրելւոյ անգրանկի Կուսին յորդիս՝ զորս որդին իւր միածին ետ նմա ի խաչին, նմա է անկ՝ յանդիման առնել ձեզ զնորհուրդ սքանչելահրաշ այսր արգասաւորութեան. և առնէ նա զայն ի գիրան Յայտնութեան գերազանց օրինակաւ. Նչան մեծ, ասէ, երևեցաւ յերկինս, կին մ արկեալ զիւրն զարեգակն, և լուսին ի ներքոյ ոտից նորա. ի վերայ գլխոյ նորա պսակ աստեղեայ յերկոտասանից, և էր յղի, և բազում վշտօք մերձ էր ի ծննդեանէ: Սուրբն Օգոստինոս հաստատէ՝ զի կինս այս էր սուրբ Կոյն. և բազում անժխտելի հաւաստեօք մարթի ցուցանել զայն. այլ որպէս ասպա մեկնել զծննդեան վշտալի: Գիտեմք, ո հաւատացեալք, և հաւատք ուսուցանեն մեզ, զի զերծ էր ամենևին սուրբ Կոյն ի հասարակաց անիծից մարդ, զի ծնաւ նա առանց երկանց ցՅիսուս, որպէս յղացաւ անապական. ո՞ր պէս ապա լուծանել կարիցեմք զայս կարծեցեալ հակառակութիւն:

Երկեակ ծնունդս է իմանալ Կուսին. ծնաւ ցՅիսուս, ծնաւ և զհաւատացեալս. ծնաւ նա զանմեղն, ծնաւ և զմեղաւորքս. ծնաւ զանմեղն առանց ցաւոց, այլ պարտ էր նմա վշտօք ծննդել զմեղաւորս: Խելամուտ այսմ լինել ոչ իք, եթէ ուշիւ զմտաւ ածիցէք քանի ծանրագին ստացաւ զնաս. հարկ եղև նմա տալ ի գինս նոցին զորդին իւր միածին. չկարէր լինել մայր հաւատացելոց, եթէ չտայր ի մահ զորդին իւր սիրելի. ոմ ցաւալից ծնունդ: Այլ առ ի տալ ձեզ ի միտ առնուլ զայս, տեսէք, պարտ է ինձ յիշեցուցանել ձեզ զայն՝ զի Հօրն ամենակալի կամք այսպէս էին, տալ ծնանել որդեգրոց՝ մա-

հուամբ հարազատ Որդւոյն. ահ, և ո՞ կարիցէ կալ ան-
դորովելի ընդ այս չքնաղ տեսիլ:

Զի և չէ մարթ զարմանալ ըստ արժան բաւականին
ընդ այսպիսի մարդասիրութիւն Աստուծոյ, որով ընտ-
րեաց զմեզ յիւր որդիս: Ծնաւ 'ի յաւիտենից զՈրդին
համադոյ, զնիպաստաւոր բերկրութիւն սրտի իւրոյ, և
սիրոյ լցուցիչ, որպէս բեղնաւորութեանն սպառուածն.
և սակայն, ահ բարութիւն մեծ, ահ ողորմութիւն. նոյն
ինքն Հայր, ուննելով որդի այնպիսի ամենակատար, հաճի
ընդունել այլս յորդեգրութիւն: Այս գթութիւն առ
մարդիկ, այս սէր անսպառելի և առատաձեռ՝ որ տայ
եղբարս անդրանկին, հաղորդս միածնին, և ժառանգա-
կիցս սիրեցելոյ սրտին, առնէ և առաւել ինչ, զոր տե-
սանէք 'ի Գողգոթայ լերին: Ոչ միայն կոյրդէ Որդւոյ
իւրում հարազատի որդեգիրս ողորմութեամբ, այլ որ
գերը 'ի վերոյ քան զամենայն հաւատս անցանէ, տայ 'ի
մահ զիւր միածին Որդին, առ 'ի ծնունդ որդեգրաց: Ո՞
երբէք այսպէս ծանրագնի առանձ կամիցի իւր որդե-
գիրս, տալ զորդի իւր փոխանակ որդեգրաց. սակայն
արար զայս Հայրն յաւիտենական:

Ոչ իմ է բանս, այլ Քրիստոսի որ ասէ 'ի սուրբ ա-
ւետարանին. Այնպէս սիրեաց Աստուածն զաշխարհ, զի զարմանք
աղդ մարդկան, ահա մարդասիրութիւնն Աստուծոյ,
ահա սկիզբն որդեգրութեանս մերոյ, զինչ պիտի էր
դնաքին էա. ահա միածին Որդին Աստուծոյ մանանել վասն
մեր 'ի մահ: Եկայք արդ, մանկունք որդեգրեալք, և
լուարուք. Ամենայն որ հաւատայ, ասէ, Ի նորին, այլ ընկալցի
զնեանան յաւիտենական: Ահա տեսանէք յայտնապէս՝ զի
միանգ Աստուած զՈրդին իւր 'ի մահ, առ 'ի ստանալ
իւր որդեգիրս. այս սէր Հօրն երկնաւորի, միանգ զՈրդի
իւր, զոհէ զնա, առ ընդունելոյ զմեզ յորդեգիրս. կե-
նագործէ զմեզ, և վերածնանի, որպէս թէ ածեալ զմնաւ՝
զի առ 'ի էգոյե հարազատ որդւոյ որդեգրին մանկունք,

սէր իւր հնարագէտ և ճարտար ածէ զնա յայս խոր-
հուրդ ողորմութեան 'ի բարեբախտութիւն մեր, լինել
իւր յերջանկաւս իմն անորդի՝ առ 'ի տալ տեղւոյ որդե-
գրութեան. և տայ 'ի մահ զժառանգ իւր՝ առ 'ի մու-
ծանել զմեզ յիւրաւունս ժառանգութեան նորա: Ածէք
արդ զմտաւ՝ քանի ծանրագնի եղերուք դուք Հօրն երկ-
նաւորի, մանկունք որդեգրեալք:

Այլ մի համարիք՝ զի սուրբ Կոյսն նուազագոյն գնոց
ստացաւ զմեզ. Եւայ է նա նորոյ ուխտիս, և մայր հա-
ւատացելոց ամենեցուն. պարտ էր և նմա մահուամբ
անդրանկին ստանալ զմեզ, պարտ էր նմա կոյրդել ընդ
Հօրն երկնաւորի, 'ի տալ զորդի իւրեանց 'ի մահ: Առ
այս կոչեաց զնա աստուածախնամ տեսչութիւն առ ոտս
խաչին. եկն նա անդր առ 'ի զոհել զհարազատ որդին,
զի մահուամբ նորա կեցցէ ազգ մարդկան: Եկն նա անդր
ընդունել այլ որդիս. Կին դո՛, ահա որդի քո՛ ասէր ցնա
Քրիստոս: Ո՛վ ծնունդ՝ իսկապէս ցաւալից, ո՛վ բեղնա-
ւորութիւն՝ ծանր յոյժ նմա. զինչ արդեօք զգաց 'ի լսել
զսեանն զայս ողջոյն հրաժարական միածնին 'ի ժամ
մահուն: Ոչ, ոչ երկմտիմ հաւատալ առնել ձեզ, զի քան
զամենայն վերս սրոյն՝ որ էանց ընդ անձն նորա՝ այս եղև
դառնակսկիծ անեղկեցոյցէս:

Ցուշ լինի ինձ ասել, ո՛ հաւատացեալք, զի սուրբն
Պաւղինոս եպիսկոպոս Նոլայ 'ի խօսելն զսրբոցն
Մելանեայ ազգականէ իւրմէ, որում 'ի բաղում որդւոց
իւրոց միակ մնացեալ էր մանկիկ, նկարագրէ այսու բա-
նիւ զկսկիծ նորա. «Մանկիկն այն, նշանաւոր ազետալի մեծի
կատարածին, ոչ միայն էջր նմա 'ի սփոփուն, այլ թուէր
յաճախել զցաւս նորա. թուէր իմն ապրեալ առ 'ի
յուշ ածել նմա զվիշտն, քան 'ի միխիթարութիւն կրե-
ցեալ վշտացն »: Ոչ թուին ձեզ, եղբարք իմ, բանքս այս
զվշտացս Տիրամօրն ստացեալ: Կին դո՛, ահա որդի քո՛. առէր
ցնա Քրիստոս. Ո՛հ, զայս լինձ ասաս, որդեակ իմ, ողջոյն

հրաժարական. այսոր վերջք Թողուս զնս. աւաղ, ըզի որդի փոխանակ քո տաս ինձ. պարտ է, զի Յովհաննէս այսքան ծանրագնի լեցի ինձ, մարդ մահկանացու ընդ Աստուածորդւոյդ անմահի փոխանակեալ. ով փոխանակութիւն դառնաղէտ, ով Թշուառ սիրտս:

Քաջ ի միտ առնում, Յիսուս փրկիչ, զի ոչ այնչափ սիրեալ կամիս զնա, քան անմահացուցանել զայս նորա. զի սէր նորա սովորեալ Աստուած, և փոխանակ նորա մարդոյ մահկանացուի հանդիպեալ, զպայծ յոյժ առաւել որ ինչ պակասէ նմա. և որդի, զոր տաս նմա, յանդիման արասցէ նմա զաղէտս իւր քան տուժիցն էլս հնարեսցի: Ասացեր բան քո այդ լեցի նմա ի մահ, նոյն և արասցէ զնա բազմաբեղուն. լեցի նա մայր հաւատացելոց յերկուսիս անչափ ցաւոց. ի լոյս ածցէ բազմութիւն որդւոց ի հարուած սուսերի, և բացցի սիրտ իւր ի սաստ բռնութեան, ընդունել ի նեղըս զսէր մայրենի վասն ամենայն հաւատացելոց:

Ո՛վ հաւատացեալք, որդիք Մարիամու, որդիք ցաւոց, որդիք ծնեալք արեամբ և վշտօք, կարիցէք ժոյժ ունել արտասուաց ի լուր ողբոց մոր ձերոյ, որովք զձեզ ծնանի: Իմաստութիւն Սիրաքայ պատուիրէր երբեմն Մէ վշտ երկոսիս մոռանալ. ով քրիստոնեայդ երկնեալ առ խաչին, առ քեզ են այս բանք: Ի հրապուրել զքեզ աշխարհն գրգռանօք իւրովք, յուշ լեցին քեզ ողբք Կուսին՝ առ ի դարձուցանել զնորս մտաց քոց վտանգաւորս, և մի մոռացես զերկուսիս այսպիսւոյ բարեգործով մեր. Զմէ երկոսիս մի մոռանար: Ի փորձութիւնս ծանուսն, ուր զորութիւն քո նուաղի, ուր ոտք քո սասանին յոլովիլ գնացս, ուր վտանգ և օրինակ չարեաց, ուր եռանդն սիրոյ ստիպէ զքեզ, մի մոռանար զերկուսիս մեր քո. յիշեա զարտասուս Մարիամու, յիշեա զցաւս գժնդակ՝ որովք զսիրտ նորա կեղեքեցեր ի Գողգոթա, գորովեսջիր ընդ ողբս մայրենիս: Զինչ խորհիս ով հէք և Թշուառ, կամիս

կանգնել միւս այլ խաչ առ ի բևեռել ի նմա զՔրիստոս. կամիս զի տեսցէ Տէրամայրն խաչեալ միւսանգամ զմիածնին իւր. կամիս պատկել զորդի նորա փշովք, և առոսն կոխել զարիւն նորոյ ոտիւք յանդիման աչաց նորա, և այսու սոսկալի տեսարանաւ փեռեկել անդրէն զվէրս մայրենի սիրոյն: Քաւ և մի լեցի, եղբարք իմ, մի լիցուք խորթ որդիք, գթասցուք յողբս մեր մերոյ:

Որդեակք իմ, ասէ նա ցմեզ. մինչև ցայսվայր չէամարիմ կրեալ ինչ, առ ոչ ինչ համարիմ զամենայն ցաւս՝ զորս կրեցի առ խաչին. Հարուածն՝ զոր դուք ինձ մեղօք ձերովք տայք, այս է որ կարեվէր խոցէ զիս: Տեսի զմահ որդւոյ իմոյ սիրելւոյ. այլ քանզի վասն փրկութեան ձերոյ մեռանէր, կամեցայ և ես զգենուիմն իւր, արբի մատղիւր զայս գառն բաժակ: Հաւատացէք, որդեակք, սիրոյ իմում. Թեթև ինձ Թուին վէրքն այնոքիկ համեմատեալ ընդ վէրս, զոր գործէ յիս յամառութիւն ձեր ի մեղս: Յորժամ տեսանեմ՝ զի զոհէք զհոգի ձեր մոլեգնութեան դիւին, յորժամ տեսանեմ զվատնումն աւրեան որդւոյ իմոյ, զի ի դերև առնէք զայն, զի խաղ առնէք զնաչ նորա, և անառութք զնորհուրդս, զի Թշնամանէք զողորմութիւն նորա՝ զեղծանելով երկայնմտութեամբ նորա ընդդերկար, յորժամ տեսանեմ՝ զի յաւէրս չէ՛ղեան զնեռութիւն, և ի մեղս անդ արհամարհէք զդեղ ապաշխարութեան, չըջէք զայն ի Թոյն դարձադարձիւք յանկուճն. և գանձէք ի վերայ ձեր զզայրոյթ և զվրէժխընդրութիւն յաւիտենից խստութեամբ անապաշխար սրտից ձերոց, յայնժամ հարկանիմ կարեվէր, որդեակք իմ, անդ անցանէ ընդ անձն իմ սուր, այդ կեղեքէ զանիս իմ:

Զայսոսիկ, եղբարք, բարբառի առ ձեզ Կոյն ի Գողգոթայ, եթէ լսէք. այսոքիկ յամենայն կողմանս լերինն հնչէն ողբք, եթէ անդր ի սուրբ աւուրս յայսոսիկ գնայցէք մեռք. անդր հրաւիրեմ զձեզ յեօթնեկին, յո-

րուամ չարչարանացն Քրիստոսի է յիշատակ. անդ արիւն և արտասուք, ցաւք դառնակսկիծք Որդւոյն, Մօրն ցաւակցութիւն, մխիթարութիւն Երկնաւոր, ահ և երկիւղ աշակերտաց, ողբք բարեպաշտից կանանց, հայհոյութիւնք ժայռեաքաք 'ի Հրէից, բարբառ աւազակին՝ որ խնդրէ զթողութիւն, և արեանն՝ որ պաղատի ողորմութիւն, բողոք մեղաց ձերոց՝ որ ձայն տայ արդարութեանն Աստուծոյ, աղաչեցեն 'ի սիրտս ձեր խմաստ՝ զորս պահանջէն 'ի ձէնջ խորհուրդքս մեծամեծք՝ որ կատարին 'ի փրկութիւն ձեր: Որպէս զի զարգասիս այնոցիկ ընկալեալ 'ի ձեզ և կատարեալ, ընկալջիք և զերծումն նոցին 'ի փառս երկնից, զոր ամենեցուն ձեզ ընձեռեսցուն:

ՊՈՍԻԻԻԷԻ

ՄԵԼԴԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԴԱՐՁԵԱԼ

Ի ՎՇՏԱԿՅՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ԿՈՒՍԻՆ

Ցիտաս ասէ ցմայրն. Կին դու, ահա որդի քո: Ցպա ասէ ցաշակերտն. Ահա մայր քո:
Յով. ԺԹ. 26, 27:

Հնարագէտ է սէր առ 'ի լոյս ածել մեծամեծ և ազնուական արգասիս, և մանաւանդ 'ի կատարածել կենաց երևեցուցանել զգեղեցկագոյն հնարագիտութիւնս իւր, և զանձնուագոյն հրաշակերտս: Քանզի սիրելութիւն ոչ թուի կեալ՝ եթէ չկայցէ ընդ սիրելւոյն. մինչ վտանգ առաջի կայցէ բաժանելոյ 'ի նմանէ 'ի սպառ, որչափ օրէնք անհրաժեշտք հեռացուցանեն զնա յերեսաց իւրոց, այնչափ և ինքն գուն գործէ տեսական առնել զնշանաւորս իւր նմա: Վասն այսորիկ սովոր են սիրելիք խաւսել գործս և բանս նշանաւորս ընդ ցաւս և ընդ արտասուս 'ի հրաժարական յետին ողջոյնի. և պատմիչք ոչ յայսպիսեաց ինչ գտանեն, առնեն 'ի նոսին գեղեցկագոյն տեսութիւնս:

Սրբազան է այս պատմութիւն, ո՛ հաւատացեալք, ոչ անփոյթ առնել զայս. և տեսանէք ապացոյց ինն գեղեցիկ առ այս 'ի բնաբանիս: Սիրելի աշակերտն Քրիստոսի

սուրբն Յոհաննէս՝ զոր օրէն է մեզ կոչել սիրոյ աչօք՝ ամենայն խնամով պահեաց մեզ զյետին բանս Փրկչին, որովք հաձեցաւ նա պատուել ՚ի մահուն զմայր իւր և զաշակերտ, զորս առաւել քան զամենեսեան սիրէր յաշխարհի: Բաբէ, քանի՛ արժանաւորք են բանքն այնոքիկ ՚ի խոհումն, և քանի՛ գեղեցիկ տեսութեանց պատճառք: Զի աղէ, կայցէ ինչ հաձոյագոյն՝ քան տեսանել զառաւտաձեռնութիւն Փրկչին մերոյ և ՚ի վերջին կարօտութեան իւրում: Աւաղ, բազում անգամ ինքնին իսկ յայտ արար, զի մեծութիւն իւր ոչ յայսմ աշխարհի էր. զի ոչ գոյր նորա՝ ուր դնիցէ զգլուխ իւր. և յորժամ ՚ի վերայ խաչին կայր, զինուորք ագահք բաժանէին զհանդերձս նորա յիւրեանս, և ՚ի վերայ խորհրդաւոր պատմուճանին նորա վիճակս արկանէին. որպէս զի կատարեսցի նոցա ասացեալն որ ասէ. Բաժանեցին զհանդերձս իմ ինձանից, և ՚ի պատմուճանիս իմ վիճակ արկին: Եւ սակայն մի՛ համարիք, ո՛ հաւատացեալք, զի մեծագոյն ինչ գրաւական սիրոյ իւրոյ:

Նախնի պատմութիւն կարի զարմացմամբ առանձէ զգործ ուրուսն Հիսուսեան ցանկացողացն, որոյ չուշնելով ինչ ՚ի մեռանելն Թողուլ Յայրուստ ընտանեացն, խորհեցաւ Թողուլ բարեկամաց իւրոց կատակաւ զմայր իւր և զորդիս: Արդ որ ինչ կարօտութիւն Թեզադրեաց Հիսուսի սիրելին, սէրն տայ գործել Փրկչին մերում զարմանալի և յոյժ եղանակաւ: Ոչ միայն Թողուլ նա զմայր իւր սիրելոյն, այլ և զսիրելին Թողուլ մոր իւրում. երկոցունցն և Թողուլ, զերկոսին և Թողուլ. երկոքին և չհաւատան. Ահա որդի քո. Ահա մայր քո: Ո՛վ երջանիկ կոյս. քանզի այսոքիկ յորդոյ քումմէ և ՚ի Տեառնէ մերմէ ասացան բանք, ոչ ինչ երկբայիմք՝ զի են ՚ի մխիթարութիւն քո և ՚ի յորդորումն մեր ասացեալ. յուսամք բարեխօսութեամբ քով իմանալ զայնոսիկ. և որպէս զի տացես մեզ իմանալ զբանն՝ որով եղեր մայր սրբոյն Յոհաննու, ընդ

ծայեմք քեզ զմիւսն բան՝ որով եղեր մայր Փրկչին. երկոքին և բանք ՚ի դիմացն Աստուծոյ ասացան քեզ, այլ զմին ՚ի շրթանց որդւոյ քո միածնի ընկալար, իսկ զմիւսն ՚ի ձեռն հրեշտակապետին՝ որ աւետեաց քեզ. Ողջո՛յն էիդ Մարիամ:

Ի սքանչելիս՝ զորս սուրբ խաչն Քրիստոսի ընծայէ աչաց մերոց, և սուրբ Յակեբերան, ՚ի մեկնութեան սրբոյ Աւետարանին՝ զոր յայսմ առաւօտու ընթերցաք, Թուի ինձ կարևոր յոյժ: Զի նկատեալ նորա զԱստուածորդին ՚ի խաչի մերձ յաւանդել զհոգին, զարմանայ՝ ընդ կալ նորա յինքեան և խօսել ընդ նմա: « Յերեկոյն մահուն, ասէ սուրբ Հայրապետն, քրանի և դողայ և սասանի յերեսաց չարչարանացն՝ որ երևէին նմա ահարկուք, իսկ ՚ի չարչարանս անդ՝ Թուի այլ ոք, ոչ ևս համարելով ինչ զչարչարանս: Բարբառի անխոով առ երանեալ աւազակին, հայի և ձանձրէ անչփոթ զիւրսն՝ որ կան առ խաչին, խօսի առ նոսա, մխիթարէ զնոսա, և յայտ արարեալ զի կատարեալ էր զամենայն որ ինչ առնել էր իւր՝ զի զամենայն կամս Հօր իւրոյ երկինաւորի լցեալ էր՝ աւանդէ նմա զհոգին խաղաղութեամբ ազատութեամբ և խորհրդով, որպէս զի գիւրաբա էր ՚ի միտ առնուլ՝ զի ոչ ոք հանէր զայն յիւրմէ, այլ ինքնիշխանաբար տայր, որպէս ասացն. Ոչ ոք հանէ զնա յինէն, այլ ես գնեմ զնա անձամբ իմով: » Եւ ո՞րպէս այս, հարցանէ նոյն ինքն սուրբ Հայրապետն. զի է զի պատկեր չարեացն ՚ի մոլի այնպէս ստոյգ տանջէ զնա, ուր չարիքն ինքնին ոչ Թուին ազդել ՚ի նա. Թերևս առ ՚ի յայտ առնել՝ զի տնտեսութիւն փրկութեան մերոյ էր գործ զօրութեան և տկարութեան միանգամայն: Երկիւղն ցուցանէր՝ զի ղեայր ցաւոցն իբրև զմեզ, և հաստատութեամբն՝ զի տէր էր կրելոցն, և նեղեալ արկանէր զայնոսիկ կամաց Հօր իւրոյ: » Զայս ուսուցանէ մեզ սուրբ Յակեբերան: Խոստովանիմ, ո՛ հաւատացեալք, զի չիշխեմ յաւելուլ յայն

զԱորհուրդս իմ, Եթէ ոչ պատճառք Ճառիս հարկ առ-
նէին ինձ։

Արդ նկատեմ զՓրկիչն մեր կախեալ զնաչէ, ոչ միայն
որպէս զոհ անպարտ՝ որ կամաւոր նուիրէ զանձն վասն
փրկութեան մերոյ, այլ և որպէս հայր՝ որ ՚ի ժամ մա-
հուն անօրինէ զինչս իւր կտակաւ։ Ի վերայ քաջայայտ
ճշմարտութեան հաստատեմ զայս իմ տեսութիւն։ Այր
առանուտէր կայ խօթ ՚ի մահճի. ազգ առնի նմա՝ տալ
հրաման վաղագոյն վասն տան իւրոյ, զի չէ ապրանաց։
Նա ՚ի սաստիկ ցաւոց հարեալ, ձիգն վերջին գործէ ՚ի
ժողովել զԱորհուրդս, առ ՚ի չայտ առնել զկեանն կամ
իւր առողջ և ամբողջ մտաց։ Խորհիմ զի Փրկիչն մեր այս-
պիսի ինչ յարիւնաթաթաւ մահճին իւր արար. իբր ոչ
Եթէ ցաւք և երկիւղ մահու կարէին խափանել զոգի նո-
րա, և խափան լինել ջօրութեան մտաց նորա։ Համրասցի
լեզու իմ քան յանդգնել այսպիսի ինչ ասել։ Այլ քան-
զի կամէր Փրկիչն մեր չայտ առնել ամենայն աշխարհի,
զի ոչ ինչ չայնմ պահու գործէր՝ առանց խոհական
խորհրդոյ, ՚ի գէպ վարկաւ մի ամենևին բերել ինչ չին-
քեան այլայլութիւն, որպէս զի լեցի կտակ իւր զերծ
չամենայն ստգտանաց։ Վասն որոյ զչս ՚ի մայր իւր և
չաշակերտն դարձուցեալ, խօսէր անխռով բարբառով.
զի զոր ունէրն ասել, էր մի ՚ի դլխաւոր չօդուածոց կտա-
կին. և ահա այս էին գաղտնիք իրացն։

Որդին Աստուծոյ ոչ ևս ունէր ինչ ՚ի վերայ երկրի,
բայց զմայր իւր, և զաշակերտս՝ զորս արեամբ իւրով
ստանայր. հաւատաւ է այս ամենևին, և կարէր անօրի-
նել զնոցանէ որպէս ժառանգութիւն իւր սեպհական։
Արդ չայնմ չետին աղետալի պահու, այլ ամենայն
աշակերտք իւր Թողուն զնա, միայն սիրելի աշակերտ իւր
Հնայր նմա. որպէս զի համարիմ զնա այսօր վերբերիչ
ամենայն հաւատացելոց. վասն որոյ և պարտ է մեզ չա-
րել չանձինս մեր՝ որ ինչ հայի չանձն նորա։ Տեսանեմ,

Փրկիչ իմ, զի տաս նմա զմայր քո, և անդէն ընդունի նա
զմայր քո ՚ի ժառանգութիւն որպէս իւր ինչ. Եւ չայնմ
ժամանակէ եառ աշակերտն զնա առ իւր։ Ի միտ առցուք զայս, ո
հաւատացեալք. ՚ի բարերար կտակիս չայսմիկ արդարև
հրնտակ մեծ է մեր. մեզ Աստուածորդին Թողուլ զմայր
իւր զերանուհին Մարիամ, ՚ի տալ զնա սիրելոյ աշա-
կերտին իւրում Յովհաննու։ Ահաւասիկ խորհրդաւորն
չօդուած կտակի Տեառն մերոյ, զոր հարկ համարեցայ
տալ ձեզ ՚ի միտ առնուլ, զի զայսմանէ առաջի կայ ինձ
Ճառել։

Մի միայք, ո հաւատացեալք, զի առից ես ՚ի մանր
բանսղ քննութիւն զմասունս կտակին առ ՚ի բերել
Ճշդիւ չարմարութիւն ընդ բանից Աւետարանին. չնցէ
լաւագոյն՝ ՚ի բաց եդեալ զնրբութիւն համեմատու-
թեանց, ժողովել զամենայն փոյթ ՚ի նկատել ուշիւ զբա-
րութիւնն ընորհեալ մեզ։ Եառես Յիսուս զմայր իւր, ասէ
Աւետարանիչն. բևեռեալ էին ձեռք իւր, և չկարէր ցու-
ցանել զնա մատնանիչ, հայեցուածովն չայտ առնէր,
ամենայն իրօք ՚ի կերպի տալոյ զնա մեզ։ Այն զոր տայ
մեզ՝ է մայր իւր. վասն որոյ և պաշտպանութիւն նորա է
հզօր, և համարձակութիւն բազում բարեխօսելոյ վասն
մեր։ Եւ տայ զնա մեզ ՚ի մայրութիւն, վասն որոյ գութ
նորա մայրենի՝ է ամենագորով, և ինքն ամենայօժար ՚ի
բարերարել մեզ։ Երկոքին այսոքիկ են մասունք Ճառիս։
Արդ որպէս զի լցցի մեզ յուսալ օգնականութեան ու-
րուք առաջի մեծավայելչութեանն Աստուծոյ, կարևոր է՝
զի մեծութիւն իւր մերձեցուսցէ զնա առ Աստուած, և
բարութիւն իւր մերձեցուսցէ զնա առ մեզ։ Մարիամ է
մայր Փրկչին մերոյ, աստուածամայրութիւն իւր տրամա-
դայ զնա ՚ի վեր, առաջի Հօրն երկնաւորի. Մարիամ է
մայր մեր, սէր իւր խոնարհեցուցանէ զնա ՚ի կարեկցու-
թիւն տկարութեան մերոյ։ Եւ համառօտիւ՝ կարէ նա
մխիթարել զմեզ, զի է մայր Աստուծոյ. և կամի միխիթա-

րել զմեզ, զի է մայր մեր: Յերկոցունց ասէ Ձեռն արկանեմ զՀետ բերել բանաւոր լինն ապաւինութիւն՝ի սուրբ Կոյսն, ըստ հաստատուն և աւետարանական վարդապետութեան. և խնդրեմ միտ դնել, ո հաւատացեալք:

ՄԱՍՆ ԱՒՕԶԻՆ

Մի՝ի գեղեցկագոյն հանդամանաց, զոր սուրբ դիրք ընծայեն Աստուածորդւոյն, է միջնորդութիւն նորա ընդ Աստուած և ընդ մարդիկ. զինքն է՝ որ առնէ խաղաղութիւն ամենայնի յանձին իւրում. զինքն է որ զօդէ սիրով զերկինս ընդ երկրի. և սուրբ կոյսդութիւն նորա ընդ մեզ, հաշտ առնէ զՀայր իւր ընդ մեզ, և տայ մեզ համարձակութիւն մատչելոյ յաթոռ ողորմութեան նորա: Յայս ՃՀմարտութիւն հաստատեալ է ամենայն հոյս որդւոցն Աստուծոյ. և զի այս այսպէս է, ահա որ ինչ աստի բերեմն զՀետ: Միւթիւն մեր ընդ Փրկչին՝ տայ մեզ մատչել վստահութեամբ առ մեծավայելչութիւնն աստուածայինն. արդ յընտրել նորա զՄարիամ՝ի մայր իւր, օրէն է ասել, զի եղ ընդ նմա գաղն առանձին. արդ ընդ նմա կցորդութիւն լինի այնպիսի սերտ, որ գերազանցէ քան զամենայն միտս մարդկան և հրեշտակաց. վասն որոյ միութիւնն այն ընդ Աստուածոյ, ընտրհք և համարձակութիւն նորա առաջի Հօրն երկնաւորի, անհատանելի է մեզ: Զկատարեմ այլազգ յանդիման առնել ձեզ հայեմ առաջինն մասին զգօրութիւն բանիս. այլ որպէս զի կարասցուք խելամուտ լինել խորագոյնս, Յանացայց զՀետ բերել կարգաւ ՃՀմարտութիւնս ինչ, որ տացեն մեզ՝ի միտ առնուլ զսուրբ կցորդութիւնն Յիսուսի ընդ Մարիամու. յորմէ լեցի մեզ զՀետ բերել, զի չէք ինչ յարարածս՝ որոյ հոյս միութիւն ընդ Աստուածոյ որպէս զսրբոյ Կուսին:

Ապա ասեմ նախ քան զամենայն, զի չէզև երբէք մայր՝ որոյ այնու գորովով սիրեալ լեցէ զորդի իւր, որպէս սիրեացն Մարիամ. ասեմ գարձեալ, զի չէզև երբէք որդի՝ որ այնու կաթոգին խանդաղատանօք սիրեաց զմայր իւր, որպէս սիրեացն Յիսուս: Յաւելում զՀաւաստիս՝ի յայտնեաց. հարցէք ումէք՝ի մարց, ընդէր յաճախ առաջի որդւոյն յայտ առնէ զյոյզս գորովոյ սրտի իւրոյ. և պատասխանի տացէ՝ զի չէ մարթ ածել ծածկել, զի մարմին և արիւն իւր է որդին. զի նա ինքն որդին զաղիս իւր յուղէ, և՝ի գորով զսիրտ իւր ածէ: Եթէ այս այսպէս լեցէ յայլս՝ի մարց, ապա առաւել ևս յոյժ՝ի սուրբ Կոյսն. զի՝ի զօրութենէ Բարձրելոյն յղացեալ, ինքն միայն էր զատարեալ՝ յորոց սուրբ մարմին Փրկչին կազմեցաւ. և ասա յառաջ բերեմ միւս այլ տեսութիւն:

Ո՞չ Թուի ձեզ՝ զի բնութիւն յեղանակաւ իմն հաւասարութեան բաժանիցէ զսէր որդւոյ ընդ հայր և ընդ մայր: Ասեմ է՝ զի սովորաբար տայ հօր սէր իմն հզօրագոյն, և տպաւորէ՝ի սիրտ մօր չգիտեմ որպիսի ինչ սէր առաւել զգալի. և չեցէ՞ այս իսկ Թերևս պատճառ, զի՝ի պահասել միոյ՝ի ծնողաց մահուամբ, միւսն զգայ պարտս իմն բնական յօժարութեամբ կրկնապատկելոյ զսէր իւր և զլնանամ. Թուի ինձ այս այսպէս ըստ յաճախ սովորութեան մարդկայինս բնութեան: Արդ քանզի ամենասուրբ Կոյսն չունէր բաժանել ընդ այլոմ զգորովագութ և զսաստիկ սէր իւր առ որդին իւր միածին Յիսուս, կարէք ձեզն՝ի միտ առնուլ յոր ծայր հասանէր սէր իւր, և որպիսի զգայր քաղցրութիւն՝ի նմա: Այլ այս տակաւին սկիզբն է բանիցս, զոր առաջի կայ ինձ ասել:

Ապաքէն սէր որդւոց այնպէս է բնական, զի հարկ է բառնալ՝ի մարդկութենէ զամենայն զգացումն առ՝ի չսիրել զծնօղս: Ընդունիցիք և դուք, զի և հանդամանք

ինչ ՚ի վերայ յաւելեալ՝ ածէն զայն ՚ի ծայր. օրինակ ինն՝ Աբրահամու հօր մերոյ էէր երբեք յայս ուսնելոյ որդի ՚ի Սառայէ, զի Սառայ ամուլ էր, և երկոքեին ևս անցեալ զաւուրբք: Այլ արար նոցա Աստուած, և ետ նոցա որդի. չէք երկբայել՝ զի սիրէր զնա Աբրահամ առանց համեմատութեան, և ուներ զնա ոչ որպէս որդի լուկ, այլ որպէս որդի առեքեայ, զոր հաւատաք իւր ընկալան յերկնից յանդրյաս: Եւ ո՛ անդիտանայ՝ զի Յովսէփ և Բենիամին քանի սիրելագոյնք էին Յակոբայ, և բերկրութիւն սրտի նորա այնոյ՝ զի յանցեալ ծերութեան ընկալեալ էր զնոսա ՚ի կինոջէ, որում Աստուած մերձ ՚ի վախճան կենացն ետ ծննդականութիւն: Յորմէ յայտ է՝ զի անակնկալ և հրաշալի եղանակ ծննդեան առաւել յոյժ առնէ սիրելի զորդիս: Ո՞ր բանք հրաբորբոք կարիցեն ապա յանդիման առնել ձեզ զսուրբ խանդաղատանս Կուսին: Որչափ հայէր նա ՚ի սիրելի որդին իւր, աբանչացեալ ասէր. Ո՞վ որդեակ իմ, ո՞րպէս գուռ նկատ իմ որդի. ո՞ կարէր հաւատալ, զի կարիցեմ ես կալ միւս կոյս, և լինել մայր այսպիսւոյդ սիրելւոյ որդւոյ. ո՞ր ձեռն կազմեաց զքեզ յարգանդի իմում, ո՞րպէս եղև մուտ և ելք քո յիս՝ անհետ ամենեցին: Զեզ Թողութիւն խնայեսիրել՝ ո՞րպէս երանէր նա զանձն, և քանի՛ հիացմամբ յափշտակէին միաբ նորա. քանզի կարէք և ես ածել զմեզ՝ զի չէք ուրուք ՚ի կուսից որպէս զնա փափուկ զգացմամբ զկուսութիւն իւր սիրեալ: Տեսանիցէք ընդհուպ ուր յանկի այս տեսութիւն:

Ոչ բաւէ ասել՝ զի էր նա գեր ՚ի վերոյ քան զամենայն խոստմունս մարգկան, իշխեմ և ասել՝ զի էր ՚ի վերոյ և քան զխոստումն աստուածային: Օտարացուցէ ինձ Թուէսցի այս յականջս ձեր. այլ շատ է ակնարկել ՚ի պատմութիւն Աբեսաղոմին: Դայ Դաբրիէլ առ Կոյս, աւետէ նմա՝ զի յղասցի ՚ի նմանէ որդի Բարձրելոյն, Թագաւորն և Նորոգող Իսրայելի. ահա խոստումն սքան-

չելի: Ո՞ կարէր հաւատալ՝ զի օրիորդ ոք խոռվեսցի ընդայսպիսի բարեբաստիկ աւետիս. ո՞ր կոյս չմոռանայցէ զնոսա մանրուքեան առ այսպիսի յոյս գերեցիկ: Այլ ոչ այսպէս Մարիամ. Զիա՞րդ լինիցի ինձ, ասէ, յղանալ զորդին՝ զորմէ ասես, ինձ որ հաւատաւեալս եմ չգիտել զայր. որպէս թէ ասէր. Մեծ է ինձ լինել մայր Մեսիային, այլ եթէ եղէց՝ զի՞նչ լիցի կուսութիւն իմ: Ուսարուք, ո հաւատացեալք, ուսարուք ըստ օրինակի սրբոյ Կուսին մեծարել զմաքրութիւն: Աւա՛ղ, զի սովրաբար առ սակաւ ինչ համարիմք զայսպիսի գանձ գերեցիկ, և բաղում այն է՝ զի տամք զայն առ նախկին ինդիր, և որ խնդրէ զայն՝ ընդունի: Ահա խոստմունք, քան զորս չէ մարթ առնել մեծամեծս ուամբ յարարածոց, առաջարկեալք սրբոյ Կուսին. և է հրեշտակ՝ որ յերեսաց Աստուծոյ առաքարկէ. միա դիք այս ամենայն հանգամանաց. սակայն Կոյսն խոռվի, երկնչի, պատրաստ կայ ՚ի հրաժարել, համարելով զկուսութիւն իւր առաքարկութեամբն այնուիկ ՚ի վտանգի. այնչափ պատուական է նմա կուսութիւն իւր: Ապա ՚ի տեսանել զաքանչելիս որդեծնութեանն, ո՛վ որպիսի՛ ինչ խնդութիւն զեղաւ ՚ի սիրտ նորա, և քանի՛ խանդաղատանք: Յայնժամ համարեցաւ նա զանձն երանելի քան զամենայն կանայս, զի ինքն միայն զերծ էր յամենայն անիծից համայնակցաց իւրոց. զերծ էր յանիծից ամբութեան՝ երջանիկ արգասաւորութեամբ, զերծ էր յանիծից մարց՝ առանց երկանց ծննդեամբն, որպէս անապական յղացմամբ: Որպիսեա՛ս ապա հիացմամբ մտաց փարեր զորդւովն, սիրելեաւ քան զամենայն որդիս, և այնու իսկ առաւել սիրեցելով՝ զի էր որդի իւր, ծնեալ յիւրմէ ամբիծ կուսութեամբ:

Սուրբ Հարք հաստատեն, զի սիրտ կուսական յարմարագոյն է ՚ի վառել սիրով Փրկչին մերոյ. չէք երկբայել զայսմանէ, զի յԱբաքելոյն զայս ՚ի կիր առնուն: Որպիսի՛

ինչ ապա պարտ էր դող սիրոյ Կուսին. դիտէր քաջ, զի առաւելապէս վասն մաքրութեան իւրոյ ընտրեալ էր զինքն ՚ի մայր որդւոյ իւրոյ միածնի. և այս իսկ սիրելի ևս առնէր նմա զկուսութիւն, ախերկբայելի է և այս: Եւ դարձեալ՝ զի սէրն այն, որով սիրէր զկուսութիւն իւր, քաղցրացուցանէր նմա առաւել քան զառաւել զդգուանս որդւոյն, որ այնու խնամով պահեալ էր իւր զայն: Համարէր զՅիսուս որպէս ծաղիկ, ընձիւղեալ յիւրմէ անթառամ կուսութեամբ, և սովին զգացմամբ համբուրէր զնա ՚ի համբոյրս առաւել քան զմայրենիս. զի էին համբոյրք Կուսի մօր: Կամիք լսել առաւելագոյն ինչ, առ ՚ի հասու լինել ծայրագոյն սիրոյ նորա. ահա յետին իմն տեսութիւն, զոր առաջի առնեմ ձեզ՝ ըստ նոցին պատճառաց:

Հնախօսութիւն պատմէ զումեքէ ՚ի դշխոյից Ամազոնաց, զի անձկայր ոնեալ որդւի յաղէտ մեծին Աղեքսանդրի... այլ Թողցուք ՚ի բաց զարտաքին վէպս, և խնդրեսցուք օրինակս ՚ի սրբազան պատմութենէ: Արդ իսկ բանք եղեն՝ զի նահապետն Յակոբ սիրէր զՅովսէփ քան զամենայն որդիս իւր. բայց ՚ի պատճառացն՝ զորս ասացաք, էր միւս ևս՝ որ առաւել շարժէր զնա ՚ի սէր. քանզի ՚ի Հռաքելէ էր ծնեալ՝ որ սիրելին էր յոյժ նմա: Սուրբ Ոսկեբերանն յառաջնում դիրս քահանայութեան, բերելով զողբական սիրալիր բանս մօր իւրոյ առ ինքն, նշանաւոր քան զամենայն համարէ՝ զի ասէր. «Զյաղէկ, որդեակ իմ, հայեաց ՚ի քեզ. քանզի Թուէր ինձ տեսանել ՚ի դէմս քո զվախճանեալ առն իմոյ պատկեր կենդանի»: Ա՛ռ ինչ զօրինակս զայսոսիկ ածէ.— առ ՚ի յուշանել, զի մի ՚ի հանգամանաց՝ որ յաւելուն զսէր ծնօղաց առ որդիս, է տեսանել ՚ի նոսա զպատկեր այնորիկ՝ յորմէ ընդունին զնոսա: Հարցէք արդ զԿայն՝ յումմէ ընկալաւ զորդին իւր սիրելի. ՚ի մահկանացուէ ումեքէ: — Զօրութիւն Բարձրելոյն հովանի եղև

նմա. Հոգին սուրբ ընձիւղեաց ՚ի նմա բողբոջ երկնային գերամաքուր գրկախառնութեամբ. և հեղեալ զսուրբ անձամբ նորա անպատում եղանակաւ, նկարեաց զայն՝ որ հանդերձեալն էր լինել միխթարութիւն Իսրայէլի և ակնկալութիւն հեթանոսաց: Վասն որոյ սքանչելին Գրիգոր Սքանչելագործ այսպէս նկարագրէ զսղոցութիւն Փրկչին. «Ի կազմել մատին Աստուածոյ զմարմին որդւոյ իւրոյ յամենամաքուր արեանէ Կուսին, ցանկութիւն ոչ իշխեաց անդր մերձենալ՝ հայեր ՚ի հեռուստ յապուշ հարեալ ընդ նորանշան տեսիլն, և բնութիւն կառեաւ հիացմամբ ՚ի տեսանել զտէր իւր և հաստիչ, որոյ զօրութիւն ևեթ ՚ի կուսական մարմնի անդ սքանչելապէս ներդործէր»:

Եւ ջնջէ այս, զոր Կայն ինքնին բերկրեալ՝ ասէր յիւրում օրհնութեան. Աւրէ ընդ իս ձեռն Հզօրն: Եւ զինչ արար ընդ քեզ ով սուրբ Կոյս: — Զկարէ ասել ինչ. և յիրաւի. այլ գոչէ ևեթ հիացեալ. Զի արար ինէ ձեռնէ: Տեսանէր լեալ իւր որդի աստուածազարմ, և ոչ գիտէր զինչ առնել, որպէս զսքանչելին Աստուծոյ պատմել, որպէս զհիացումն իւր յայտ առնել. գիտէր յղացեալ որդի՝ որոյ ոչ դոյր հայր, բայց Աստուած միայն: Եւ ևթէ ինքն ջկարէր զհիացումն իւր պատմել, որպէս կարիցեմ ես նկարագրել զդէորով նորա խանդաղատելի, և զսաստկութիւն մայրենի սիրոյն, որ բորբոքէր ՚ի նմա սրտեռանդն խորհրդովք: Թո՛ղ մեծացուսցեն մարք զսէր իւրեանց բնաւորական, զոր զգան ՚ի սրտի առ որդիս իւրեանց. հաւատամ ամենայնի՝ զի ասեն ճշմարտապէս. և տեսանեմք իսկ զարգասիս սիրոյ նոցա՝ որ անցանեն զանցանեն գեր ՚ի վերոյ քան զամենայն, զոր մարթ իսկ ածել զմտաւ. այլ հաստատեմ, և աղաչեմ զձեզ ՚ի միտ առնուլ զայս ճշմարտութիւն, զի սէր բարեգութ մօր ոչ այնչափ ՚ի վեր է քան զսովորական բարեկամութիւն, որչափ սէր Տիրամօրն գերազանցէ

քան զամենայն մարդ միանգամայն: Եւ զնմանէ. — զի գո-
ւել ամենևին աքանչելի մայրութիւն նորա, և բոլորովին
անսովոր հանդամանօք, հարկ է զի և սէր նորա ևս գեր-
ասիճան: Եւ որպէս ասի, և համարիմ աներկբայելի,
զի պարտ է ունել զսիրտ մօր՝ առ՝ի հասու լինել մայրենի
սիրոյ, զնոյն և ես ասեմ՝ զի պարտ է ունել զսիրտ Տի-
րամօրն, առ՝ի հասու լինել սիրոյ նորա:

Եւ զինչ ապա ասել ևս ինձ զսիրոյ Փրկչին մերոյ
առ մայր իւր. խոստովանիմ ճշմարտապէս, ո՛ հաւատա-
ցեալք, զի առաւել ևս անհնարին է ինձ բացատրել
զսէր որդւոյն քան զմօրն: Զի որչափ Փրկիչն մեր՛ի վեր
է քան զՏիրամայրն յամենայնի, այնչափ ևս գերազանցէ
Քրիստոս քան զմայրն բարեգութ՛ի բարութեան: Զնք
ինչ՛ի սուրբ Աւետարանին՝ որ այնչափ չարժէ զսիրտ
իմ, որպէս տարապայման սէր Փրկչին ընդ մարդկայինս
բնութիւն. ոչ անարժան համարեցաւ նա յանձն առ-
նուլ զամենայն ինչ զմարդոյ, բաց՛ի մեղաց. զդուշա-
քեայս իսկ, մինչև զվերջին տկարութիւն: Երթեցուք՛ի
պարտէզն Գեթսեմանէ. տեսանեմք զնա յերկիւղի և՛ի
տրտմութեան. տագնապէր մինչև ցքրտունս արեան,
յածել ևեթ զմտաւ զջարչարանս իւր: Զնք ուրեք եր-
բեք լուեալ՝ զի այլում ումեք պատահել ևս քրտն
արեան, որպէս զի ստիպիմ հաւատալ, զի և ոչ ուրուք
կրեալ ևս չարչարանս, ոչ այնպէս կսկծեցուցիչս սրտի:
և ոչ այնչափ գժնդակս, որպէս զՓրկչին մերոյ: Ո՛վ
Տէր, եթէ այսպէս հաճեցար զգենուլ ճոխաբար զամե-
նայն զգացմունս տկարութեան մերոյ, որ անարժան իսկ
Թուէին մեծութեան քումմ, և առաւել զայնոսիկ այնպէս
ամբիծս ամբողջս և պարզականս, որպիսի՛ ապա լեալ ևս
զգացումն որդիական սիրոյ քո, գոլով աներկբայելի՝
զի չէիր՛ի բնութեան բնականագոյն արգարագոյն և կա-
րևորագոյն ինչ քան զայն. մանաւանդ զի մայր քո է
նա ոչ ըստ դիպուածոյ՝ այլ՛ի յաւիտենից նախասահ-

մանեալ՛ի քէն, և՛ի ժամանակի պատրաստեալ և մա-
քրազարդեալ, խոստացեալ բազմապատիկ պատգամաք,
և ընտրեալ՛ի քէն որպէս հաճոյագոյն քեզ քան զամե-
նայն արարածս:

Վասն այսորիկ համարձակիմ հաստատել և զայս, ո՛
հաւատացեալք, ոչ ինչ նուազ ճշմարիտ, որ Թերևս
Թուեսցի ձեզ նորանշան: Գիտեմ քաջ՝ զի ամենայն
փառք սրբոյ Կուսին են՛ի լինելոյ նորա մայր Փրկչին.
այլ յաւելում՝ զի և յաճախութիւն և փառաց Փրկչին
լինել որդի Կուսին: Մի երկնչիք՝ Թէ գուցէ նուազե-
ցուցանիցեմ այսուհետև զմեծութիւն Տեառն մերոյ: Յոր-
ժամ տեսանեմ՝ զի սուրբ Հարք, ի խօսելն զՏեառնէ,
ախորժեն կոչել զնա որդի Կուսին, ոչ ևս երկմտեմ՝ զի
հաճոյ նմա համարին յոյժ զանուանս զայս մեծարանաց,
և յոյժ փառաւորեալ: Առ այս ուսանիմ՛ի սրբոյն Ծ-
գոստինէսէ, որ ըստ իս՝ հաստատութիւն մեծ ասէ այսմ
խորհրդոյ, զի ասէ. «Յանկութիւն, որ խառնի՝ որպէս
գիտէք՝ ի սովորական ծնունդս, այնպէս ապականէ զտա-
րերս բաղկացուս մարմնոյ մերոյ, զի մարմինն հազմեալ
նոքօք ձգէ յինքն ապականութիւն ինն անխորշելի»: Ո՛չ
յերկարեմ՛ի բացատրել զայս ճշմարտութիւն. շատ
համարիմ ասել՝ զի գոհանիցէք զայն բացատրեալ՛ի սուրբ
վարդապետէն՛ի բաղում դեղեցիկ բանս գրոց իւրոց:
Արդ եթէ սովորականս այս զուգութիւն, բերելով ան-
մաքուր ինն յինքեան, հաղորդէ՛ի մարմին մեր խառ-
նուրդ ինչ անմաքրութեան, կարեմ հաստատել ընդ
հակառակն՝ զի պտուղ կուսական մարմնոյ ձգէ՛ի մա-
քուր արմատոյ մաքրութիւն անհամեմատ: Աներկբայե-
լի է այս հեռևութիւն, և զհետ գոյ յայտնապէս՛ի
բանից անտի սրբոյն Օգոստինէսէ. «Եւ քանզի մարմնոյ
Փրկչին պարտ էր գոլ դերամաքուր և քան զհառագայթս
արեգական, յաւելում սուրբ վարդապետն, Փրկիչն մեր
՛ի յաւիտենից ընտրեաց իւր մայր կոյս: Զի արժան իսկ

էր սուբբ մարմնոյն Քրիստոսի գեղափայլել մաքրու-
թեամբ կուսական արեան, զի լինցի արժանի միանալոյ
ընդ Բանին Աստուծոյ, և յանդիման լինելոյ Հօրն երկ-
նաւորի որպէս պատարագ կենդանի՝ ի քաւութիւն
մեղաց մերոց: Որպէս զի մաքրութիւն մարմնոյն Քրիս-
տոսի, յառաջ գայ ըստ մասին ինչ՝ ի հրեշտակային մա-
քրութենէ անտի՝ զոր Հոգին սուրբ եհեղ՝ ի մարմին
Կուսին, յորժամ զուարճացեալ ընդ ամբիծ կուսու-
թիւնն նորին, մաքրազարդեաց զնա իւրև, և սրբեաց՝ ի
տաճար կենդանի Որդւոյն Աստուծոյ կենդանւոյ»:

Արարէք արդ ընդ նս, ո հաւատացեալք, զայս տե-
սութիւն: Փրկիչն մեր է սուրբ և սիրաստարփ վեհապ
կուսից, և փառաւորի կոչիլ որդի Կուսի, կամի զի ածին
առնա կոսանփ, և զնէպ ամբիծ գառինն գնայցէն՝ ուր ն երթիցէ.
սիրէ խանդակաթ զկուսանս, զորոց սրբեաց զմարմին
արեամբ իւրով. քանի՛ ապա խանդաղատի ընդ սուրբ
Կոյսն անհամեմատ, զոր ընտրեաց՝ ի յաւիտենից՝ մաս-
նաւորել՝ ի նմանէ զմաքրութիւն մարմնոյ իւրոյ և ա-
րեան: Կնքեացուք ապա յամենայն բանից աստի, զի
սէրն փոխադարձ որդւոյն և մօրն է անհասանելի. մարթ
է մեզ զգաքանչելի կցորդութեանս այսորիկ ունել աղօտ
ինչ կերպարան, այլ հասու լինել եռանդեան և սաստ-
կութեան ուղիից բոցոյն այնորիկ՝ որ յորդւոյն՝ ի մայրն,
և՝ ի մօրէն յորդին անդադար ղեղանի, հաւատացէք բա-
նիցս, և սերովբէք սիրաբորբոքք ոչ կարեն հասանել:
Այլ քանզի կարասցէ ոք համարել՝ զի այսմ սուրբ կցոր-
դութեան մարմին ևեթ Քրիստոսի էցէ զօդ, դիւրին լինցի
ինձ ցուցանել՝ որպէս խոստացայ՝ ի Աշմարտութենէն
ցայսվայր հաստատելոց, քանի՛ առաւելութեամբ սուրբ
Կոյսն մտեալ էցէ՝ ի կցորդութիւն Աստուծոյ փառա-
ւորեալ աստուածամայրութեամբն. և անտի թողուլ
ձեզ զկեա բերել՝ քանի՛ համարձակութիւն է մեզ այ-
սուիկ առաջի Հօրն յաւիտենականի:

Վասն որոյ աղաչեմ միտ դնել, զի սէր Կուսին ոչ
գադարէր՝ ի մարդկութիւն ևեթ որդւոյն, այլ անդր
ևս՝ ի ձեռն մարդկութեանն, որպէս միջնորդաւ միու-
թեան, անցանէր՝ ի բնութիւնն աստուածային՝ որ ան-
մեկնելին է՝ ի մարդկայնոյն: Ա՛ւ՝ ի բացատրել զմիաս իմ,
առաջի առնեմ ձեզ զայս վարդապետութիւն՝ ընդ որ
հարկ է ոան առ ոան յառաջ դնալ, զի մի՝ ի մոլորու-
թիւն անկանիցիմք. եցէ թէ կարիցեմ բացատրել զայն
պարզ, որպէս Թուխ ինձ հաստատուն: Արդ ահա այս-
պէս խմաստասիրեմ. մայր բարեգութ սիրէ զամենայն որ
ինչ է որդւոյն. գիտեմ իսկ՝ զի երբեմն յառաջ ևս ան-
ցեալ՝ սիրէ և զսիրելիս նորա, և զընտաւ ամենայն ինչ՝ որ
հայի՝ ի նա. այլ մանաւանդ որ ինչ յատկապէս պատ-
կանի անձին որդւոյ իւրոյ, գիտէք իսկ՝ զի սիրելի է նմա
յոյժ: Արդ ասացէք ինձ, որպիսի՞ ինչ էր աստուածու-
թիւն որդւոյն Մարիամու, ո՞րպէս պատկանէր այն ան-
ձին նորա, եկամո՞ւտ էր՝ ի նա: Ոչ առնեմ ձեզ աստ
խնդիրս անսովորս, խնդրեմ միայն ասել զոր հաւա-
տայքն. ասէք հանապազօր՝ ի հանգանակին, զի հաւա-
տայք՝ ի Յիսուս Քրիստոս, յորդին Աստուծոյ, ծնեալ՝ ի
սրբոյ Կուսէն Մարիամայ: Արդ զոր խոստովանիքն որդի
Աստուծոյ ամենակալի, և զոր դաւանիքն ծնեալ՝ ի Կու-
սէն, էցէն երկու անձինք: Փաւ լիցի, ոչ այսպէս խմա-
նայք, այլ զնոյն ինքն՝ Աստուած և մարդ, ըստ աստուա-
ծային բնութեանն՝ որդի Աստուծոյ, իսկ ըստ մարդկայ-
նոյն՝ որդի Կուսին: Վասն այսորիկ ուսուցին մեզ սուրբ
Հարքն Աստուածածնին զսուրբ Կոյսն. այս խոստովանու-
թիւն, ո հաւատացեալք, յայլեայնակեաց ընդդէմ հայ-
հոյութեանցն Նեստորի, և մինչև՝ ի կատարած աշխարհի
դողացուսցէ զդևս: Եթէ ասիցեմ այսուհետև՝ զի սուրբ
Կոյսն սիրէր բովանդակ զորդին, կարիցէ ոք՝ ի ժողովոյս
ժխտել զայն. ապա սիրէր նա զորդի իւր որպէս Աս-
տուած և մարդ: Եւ քանզի անօրինակ է յերկրի այս

խորհուրդ, հարկ է ինձ դեր ՚ի վերոյ զմիտս իմ ամբառնալ, և ՚ի մեծ ինն դիմել օրինակ այս ինքն յօրինակ Հօրն երկնաւորի:

Յորմէ հետէ միացաւ մարդկութիւնն ընդ անձին Բանին, եղև նա հարկաւորապէս հաճոյ Հօր: Բարձունք են ճշմարտութիւնքս, խոստովանիմ զայս. այլ ոչ հնմունք են քրիստոնէութեան, կարևոր է հաւատացելոյ ամենեցուն գիտել զայնոսիկ և չհամիմ ասել ինչ յայնցանէ, որոյ չէին հաւաստիք ՚ի սուրբ գիրս: Ասացէք աղաչեմ, ո հաւատացեալք, յորժամ բարբառ յերկնից հրաշալի հնչեաց ՚ի Թաբոր լերին. Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ. զուարճ համարիք ասացեալ զայն Հօրն երկնաւորի. ոչ ապաքէն զԱստուածոյ մարմնացելոյ, որ պայծառակերպեալն էր յաչս առաքելոց: Եւ եթէ այս այսպէս է, տեսանէք քաջ վկայելովն Աստուածոյ, զի սէր Հօրն զեղանի և ՚ի մարդկութիւն Որդւոյն, և առ սերս միութեան մարդկային բնութեանն ընդ աստուածայնոյն, ոչ բաժանէ զնոսա ՚ի սիրելութեան իւրում: Եւ եթէ քաջ ՚ի միտ առնուցուք զայս է բովանդակ հիմն յուսոյ մերոյ. զի Քրիստոս, որ է մարդ որպէս զմեզ, ընդունի և սիրէ Աստուած որպէս որդի իւր:

Մի առաւելաղանց Թուեսցի ձեզ, եթէ ասացից՝ զի հանդոյն իմն է և ՚ի սիրելութեան Տիրամօրն. զի և սէր նոքա ընդդրկէ ՚ի միասին զաստուածութիւն և զմարդկութիւն որդւոյ իւրոյ, զորս ամենակալն Աստուած միաւորեաց, սքանչելի իմաստութեամբ ՚ի գեպ համարեալ՝ զի սուրբ Կոյսն ծնցի ՚ի ժամանակի, զոր ինքն ծնանի միշտ ՚ի յաւիտենից անժամանակապէս, լեալ յերկնակաւ իմն յաւիտենական ծնողութեանն հաղորդ: Ի միտ առէք, հաւատացեալք, զնորհուրդս զայս. այս է Հօրն երկնաւորի հաղորդել ծնողութեան իւրում զսուրբ Կոյսն, առնելով զնա մայր նմին Որդւոյ ընդ իւր: Վասն որոյ ՚ի հաղորդէն զնա յաւիտենական ծնողութեան իւրում,

արժան էր և կայծ մի լուսանել ՚ի նմա ըստ աստուածային իւրումն իմաստութեան՝ զամբառ սիրոյն, որով սիրէ զՈրդին: Պարտ էր նախախնամութեան իւրում, որով անօրինէ սքանչելի կարգաւ զամենայն, տպաւորել ՚ի սրտի սրբոյ Կուսին սէր այնպիսի՝ որ դեր ՚ի վերոյ անցանէր բնութեան, և հասանէր ՚ի ծայր ընդրկաց. որպէս զի ունել նմա զգացումն արժանի աստուածամօր, և արժանի Աստուծոյ մարդացելոյ:

Ա. յաւուրհետե, ո՛վ սուրբ Կոյս, եթէ էին ևս յիս միտք հրեշտակայինք, և բարձրագոյն գաստակարգութեանցն զօրութիւն մտաց, կարի խակ ՚ի ստորև մնային հասու լինելոյ սքանչելահրաշ միութեան Հօրն յաւիտենականի ընդ քեզ. Զի այնպես սիրեաց Աստուածդ զաշխարհ, ասէ Քրիստոս մեր, մինչ զորդին իւր միածին եա: Զի որպէս զհետ բերէ Աւետարանն. Որ չիւր որդին ուլխայեաց, էնթ՚ը ուղնալա հանդերձ զամենայն ընդրկիցն մեզ: Եթէ մեզ եցոյց սէր այնպիսի սերա, որով զՈրդին իւր ետ մեզ փրկիչ և տէր, իսկ սէրն անճառելի, որով սիրեացն զքեզ, ետ նմա այլազգ ինչ յոյժ խորհել վասն քո: Սահմանեաց՝ զի այնու ետ զանհակառակ իցէ նա քո, որպէս է իւր, կցորդութիւն յաւիտենական ընդ քեզ կացուցանելով: Կամեցաւ՝ զի լիցես մայր միածնի որդւոյ իւրոյ, և լինել ինքն միածնի որդւոյ քո հայր: Ո՛վ սքանչելիք, ո՛վ խորք սիրոյ. ո՛ր միտք ոչ կորնչիցին ՚ի խորհել զայս անհասանելի հաճութիւն նորա ընդ քեզ, ՚ի մերձենալ քո այսպէս հուսկ ՚ի նա միջնորդաւ երկաքանչիւրոցդ միածնի որդւոյ, որ է ղօդ անլուծանելի ձերոյդ սուրբ կցորդութեան, և գրաւական փոխադարձ սիրոյ՝ զոր յօժարութեամբ ետուք միմեանց. նա անկրելի ամենևին աստուածութեամբ, իսկ դու մահկանացու մարմնով աս ՚ի կարող լինելոյ ընդուզ զկամն նորա:

Բարեխաւս լեր վասն մեր, երանուհի Կոյս. ՚ի ձեռս քո է, եթէ խչևելի իցէ ինձ ասել, բանալի աստուա-

ծայնն օրհնութեանց: Որդին քո է բանալին այն խմանալի՝ գանձուց Հօրն երկնաւորի. փակէ, և ոչ ոք է որ բանայ. բանայ, և ոչ ոք է որ փակէ. արիւն իւր անպարտական ինքնացանէ 'ի վերայ մեր զհոգանս երկնաւոր շնորհաց: Եւ ո՛մ առաւել իցեն իրաւունք 'ի վերայ արեան նորա, քան քեզ՝ յորմէ ընկալաւ զամենայն արիւն իւր. մարմին նորա է մարմին քո, ով Կոյս սուրբ, և արիւն նորա արիւն քո. և արիւնս այս պատուական ախորժէր ինն յորդագոյն վանս քո կայլակել 'ի խաչին, 'ի քէն զաղբերական իւր գիտելով: Իսկ դու այնպէս 'ի սէր նորա կաս, զի չէ հնար՝ թէ ոչ լուիցէ նա քեզ. վասն որոյ ջերմեռանդն 'ի պաշտօն քո սուրբն Բեռնարդոս կարի իրաւամբք աղաչէր զքեզ խօսել 'ի սիրա Քրիստոսի:

Եւ զի՞նչ էին իմաստք բանին խօսելոյ 'ի սիրա. զի նկատեր զսուրբ Կոյսն ի յաւիտենական ինջրէն. այս է յանդգնական ծայրագոյն սիրոյ, յանչխալից գրկախառնութենան որդւոյ իւրոյ տիրելոյ: Նկատեր նա զսուրբ Կոյսն սիրօք և սիրելի. զի այլք յոլոցէ կարեն խօսել յոտնկն, սէր միայն ունի իրաւունս խօսելոյ 'ի սիրա. սովին խորհրդով ինդրէր 'ի Կուսէն՝ խօսել 'ի պէրպ պեռան մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Քանիցս արդեօք, ո՛ հաւատացեալք, լինիցէ խօսեցեալ բարեգուէմ մօրն 'ի սիրա միածնին: Խօսեցաւ իսկ 'ի սիրա նորա 'ի Կանա, գթացեալ ընդ խռովել փեսաւերացն 'ի պակասել գինւոյ հարսանեկան կոչնոցն, և Թախանձեաց ընդ զկարօտութիւն նոցա: Թուի իմն մերժել անդ որդւոյն զբարեխօսութիւն նորա, Թէպէտ և հաստատեալ էր առնել զնորհան. Ջի՞նչ եմ ես ես, ինձ դու, ասէր, ընդ է հասեալ ժամանակ իմ: Իսկ Թուէին բանքն. և ամենեքեան, բաց 'ի սրբոյ Կուսէն, իմանային զայն մերժուն. այլ տեսանեմ առանց զարմանալոյ, զի պատուիրէ նա սպասաւորաց՝ առնել որ ինչ Քրիստոս հրամայէ. Որ ինչ ասիցէ ձեզ արասջիք. ասէր՝ վասն յընդունելութիւն խընդ-

բոյն, յետ այնպիսւոյ պատասխանւոյն: Քաջ գիտէր՝ զի 'ի սկզբան որդւոյն էր խօսեցեալ, և վասն այնորիկ ոչ 'ի բանս բերանոյ նորա հայէր. և ոչ 'ի գերևել 'ի յոտսն, ըստ գեղեցիկ տեսութեան սուրբ Ոսկեբերանին. և արժան համարեցաւ Քրիկէն կանխել զառաջին սքանչելիս իւր 'ի ընորհս սրբոյ մօր իւրոյ:

Աղաչեսցուք ապա, ո՛ հաւատացեալք, զՏիրամայրն՝ զի բարեխօսեսցէ վասն մեր 'ի սկզբան որդւոյն. գոանէ անդ հաւատարիմ փոխագարձ, սէր որդիական՝ որ փութայ ընդունել զսէր մայրենի, և կանխէ 'ի կատարումն ըղձից մերոյ: Ո՞չ տեսանէք, զի պակասէ մեզ գինի. ասէմ իսկ զսէր, որ է գինի նոր նորոյ ուխտի, որ ուրախ առնէ զսիրտ, որով պարտի զմայլել սիրտ հաւատացեալ: Ատի է, զի տխուր են կոչունք մեր, և անախորժ բերիմք 'ի մնունդ հոգևոր ատուածային բանին. ատի է, զի շուրջ պատիմք յազգի ազգի հերձուածոց: Տեսանէք Ատուած՝ զի հրաժարեմք յարել 'ի գերաբուն բարութիւն իւր սէրտ սիրով, պատուհասէ զմեզ արդար վրէժխընդրութեամբ յաղետսալի հերձուածս նեղքինս: Սուրբ Կոյս, ընկալ վասն մեր զսէր՝ որ է մայր խաղաղութեան, որ ամոքէ զկիզուցանէ և հաշտեցուցանէ զոգիս: Վատահութիւն մեծ է մեզ 'ի ընորհս քո. վասն զի մայր ես Ատուծոյ, և գիտեմք՝ զի կարող ես. և զի մայր մեր ես, ոչ խաբիմք 'ի յոտսալ մեր 'ի գթութենէ քումմէ ընորհս մեծամեծս: Զայսմանէ արդ, ո՛ հաւատացեալք, լինիցին մեզ բանք յերկրորդումն մասին:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Բաղում իրաւամբք կարդամք մեք յաղօթս մեր զսուրբ Կոյն, զի է նա մայր ամենայն հաւատացելոց. զայս աւանդուածիւն ընկալաք մեք ՚ի հարց մերոց. նոքա ուսուցին մեզ՝ զի խարդաւանելոցս մեզ ՚ի մահ յաւիտենական ՚ի ձեռն առն միոյ և կնոջ՝ սահմանեալ էր Աստուած միւս այլ եւայ, և նոր Ադամ, առ ՚ի ծնանել զմեզ վերստին: Ի հաւատոյ աստի, զոր ամենայն նախնիքն ուսուցին մեզ միաբան, դիւրին լեալ լինէ կնքել, զի որպէս նախամայրն Եւայ է մայր ամենայն ազգի մարդկան, այսպէս և երկրորդն՝ որ է սուրբ Կոյն՝ պարտի լինել մայր ամենայն հաւատացելոց: Եւ հաստատեմ զայս գեղեցիկ բանիւ սրբոյն Եպիփանու, որ ասէ. «Նախամայրն Եւայ կոչի ՚ի գիրս Ծննդոց առակաւ մայր կենդանեաց. այսինքն որպէս նա ինքն մեռանի, օրինակաւ. զի յանդիման առնէ զՄարիամ»: Յաւելում ՚ի սոյն գերևելի ասացուածն սրբոյն Օգոստինեայ ՚ի գիրսն յաղագս սրբոյ Կուսին. «Նա է մայրը փրկչին ըստ մարմնոյ, որ է գլուխ մեր. իսկ ըստ հոգւոյ՝ մայր հաւատացելոց, որ են անդամք նորա»: Այլ քանզի հարկ է լինէ համառօտել զբանս՝ զորս ՚ի մոռ ունկն ասել, առ ՚ի տալ ժամ աստուածային պաշտաման, Թողում բաղում լինել՝ զոր մարթ էր լինէ ածել առ այս ՚ի սրբոց Հարց, և առանց հեռաձգութեան զնա-ռաւորեալ անուանս՝ որովք սուրբ Կոյն իրաւամբք կոչի մայր հաւատացելոց, քանզայլ ցուցանել միայն, զոր և կարևորագոյն ձեզ համարիմ, զի է նա մայր մեր սիրով. այս լինքն զի իսկապէս ունի նա ՚ի վերայ մեր գործ մայրենի: Առ ՚ի հասու լինել այսմ, խնդրեմ ուշ եւեթ ունել բանիցս:

Որպէս սուրբ Հարք և եկեղեցի ուսուցանէ, Թէպէտ և համառօտիւ անցի զվարդապետութեամբս, հաւատամք՝ զի սուրբ Կոյն ՀՀմարտապէս է մայր մեր: Եւ եթէ հարցիցէ ձեզ, ո՛ հաւատացեալք, Թէ երբ սկսաւ նա լինել մայր հաւատացելոցս, ոչ ինչ երկբայիմ զի ասիցէք՝ Թէ ՚ի տալ արգեօք փրկչին ՀՀովհաննէս յորդի նմա: Եւ յիրաւի ամենայն իրօք պատշաճ այն է, որպէս ՚ի սկզբան բանիցս ասացի, և ՚ի դէպ լսել համարիմ յոյժ առնել ձեզ վերստին, զի Աստուած ած կացոյց զՀովհաննէս առ խաչին՝ ունել անդ զտեղի ամենայն հաւատացելոց, և յաւելի և ինչ՝ որ քաջայայտ Թուի լինէ ՚ի հաստատութենէն: Զի եթէ յիշէք՝ ասացի, Թէ ՚ի ցրուել այլոց ամենեցուն աշակերտաց՝ կալաւ առ Քրիստ չին վերնահինամ տեսչութենէն զաշակերտն սիրելի նմին, առ ՚ի բերել անդ յանձին զայլս ամենեսին, և յանուն ամենեցուն ընդունել զվերջին կամ փրկչէն: Արդ ըստ այսոցիկ անհաւանելի Թուի՝ զի Աստուածորդին, որոյ ամենայն խօսք և գործք են խորհրդաւորք, յայնպիսում կարևոր պահու նկատեալ լեցէ որպէս սոսկական ոք զՀովհաննէս: Աւացաք և, որպէս լինէ Թուի, բազում հաւատեօք՝ զի ընկալաւ Յովհաննէս զբանն զայն որպէս առ ամենեսին մեզ ասացեալ, և յանուն մեր ընկալաւ զսուրբ Կոյն առ իւր, և յայնժամ յատկապէս եղև սուրբ Կոյն մայր մեր:

Զայս այսպէս հաստատեալ, առաջի առնեմ ձեզ արդ և այլ ինչ: Զիարդ Թուի ձեզ, ընդէր Փրկիչն մեր յամեաց մինչև ցժամ յետին առ ՚ի տալ զմեզ յորդիս սրբոյ Կուսին: Ասիցէք Թերևս, զի գԹալով ՚ի մայր իւր անմիջապէս՝ որ կորուսանէր զԱստուածորդին, առ ՚ի սփոփել զնա՝ եւս նմա յաւերժական յաջորդութենէն որդոց: Բարւոք և հաստատուն է պատճառդ. այլ ունիմ և այլ ինչ յաւելուլ պատճառ, որ ոչ անհաւանելի Թերևս Թուեսցի ձեզ: Համարիմ զի որդին Աստուծոյ կամե-

ցաւ անդ աղդել ՚ի մայր Իւր գուԹ մայրենի վասն մեր։ Եւ ո՛րպէս, ասիցէք, մարԹ եցէ զՀեռ բերել զայդ։ Սա- կայն ինձ ոչ օտարոտի Թուի բանս. Մարիամ կայր առ խաչին, տեսանէր զորդին վիրաւից, բաղխատարած առ Ժողովուրդ անհաւանս եղկելի, և զարիւն նորա հոսեալ յամենայն կողմանց ընդ հերձս երակաց. և ո՞ կարիցէ պատմել՝ ո՛րպէս ՚ի սրտի նորին յոչէր արիւնն մայրենի։ Ոչ, ոչ երբէք եղև նմա զդալ զմայրութիւն իւր, որ- պէս անդ. ամենայն աղդի աղդի ցաւք որդւոյն խոցո- տէին դառնապէս զսիրտ նորա։

Զինչ արար յայնժամ Փրկիչն մեր. տեսանիցէք զի Ճարտար գիտէր նա զդաղտնիս չարժելոյ զոգիս։ Ցոր- ժամ սիրտ յուզեալ է ՚ի բուռն կրից, ընդունի հեշտեաւ զնոյն տպաւորութիւնս և վասն այլոց՝ որ լինին նմա ընդ առաջ։ Ի չարժել ուրուք ՚ի ցասումն, չէ ինչ դժուարին՝ զի սրբք մերձենան ՚ի նա, Թեպէտ և ամենևին անպարտք, զգայցեն զազդմունս կրից նորա. վասն որոյ յաղմկել ժողովրդեան՝ այր աղօղակ, որ գիտիցէ Ճարտարու- Թեամբ վարել զգի ռամկին, է ուրեք՝ զի չքնէ զցասումն նորա յայլս, յորս չէր մարԹ կարծել, և վասնզաւոր յոյժ զայսպիսի աղմուկս ապստամբութեան կացուցա- նել։ Ընդ բան է և յայլս ՚ի կրից. զի ՚ի յուզել միանգամ ոգւոյ՝ շատ է չքնել և՛ևԹ զգեմս կրից, և բերի անդր զՀեռ ինքնաշարժ։

Վասն այսորիկ որդին Աստուծոյ, որ հաստատեալ էր տալ մեզ ՚ի մայր զսուրբ Կոյսն՝ առ ՚ի լինել ըստ ամենայնի եղբայր մեր, (զարմացարուք ընդ մարգա- սիրութիւն նորա, ո՛ հաւատացեալք), տեսեալ ՚ի խա- չին՝ ո՛րպէս յուզեալ էին գուԹք մեր իւրոյ, և սիրտ նո- րա ի՛ջուցանէր յաչսն ուղիս գառինն արտաստուաց, որպէս Թէ ինալով այնմ պահու, ժամ էառ ասել՝ ցու- ցանելով նմա զՅովհաննէս. Կի՛ն դո՛ւ, ահա որդի՛ քո։ Ահա բանք են Քրիստոսի, և այս իմաստ նոցին, Եթէ քաջ ՚ի

միտ առնուցուք։ Ո՛վ մայր ցաւագին, որովհետև սէր աղի- ողորմ տայ արդ զգալ՝ ցո՛ր վայր կարէ հասանել կարե- կցուԹիւն մեր, զնոյն դորով որ յուզի արդ դառնակսկիծ ՚ի սիրտ քո վասն իմ, կալջիր վասն սիրելւոյ աշակերտին իմոյ Յովհաննու, և ամենայն հաւատացելոց իմոց, զորս քեզ յանձն առնեմ. զի ամենեքեան աշակերտք իմ են և սիրելիք. Ահա որդի՛ քո։ Իսկ Թէ ո՛րպէս այս բանք բղխեալ ՚ի սրտէ որդւոյն՝ իջին ՚ի խորս սրտի մերն, և որպիսի ինչ ազդեցին ՚ի նա, ոչ իշխեմ բացատրել։ Ածէք և ևԹ զմուսա, զի որ խօսէրն՝ ներգործէր զամենայն ամենազօր բանիւն, և ազդէր զբանիւն տպաւորէր, մանաւանդ ՚ի սիրտ սրբոյ Կուսին մեր իւրոյ և առ ՚ի տալ բանին առաւե- լագոյն ազդուԹիւն՝ զօրացուցանէր զայն արեամբ իւրով, և հնչէր նուաղեալ ձայնիւ մերձ ՚ի մահ, որպէս Թէ յեսուին շնչով։ Ա՛յս ամենայն ՚ի միասին՝ որ լինչ ներգոր- ծէրն ՚ի սիրտ սրբոյ Կուսին, անհնարին է ՚ի միտ առնուլ։ Եւ իբրև դարձոյց զբանս իւր առ սուրբն Յովհաննէս, և ասաց. Ահա մայր քո։ չարժեցան անդէն իղձք որդիականք ՚ի սրտի աշակերտին. և յայնմ ժամանակէ էառ զնա առ իւր. առաւել ևս ազդեաց բանն այն ՚ի սիրտ մերն, և գորովեցոյց զնա ՚ի վերայ մեր՝ որպէս ՚ի վերայ որդւոց իւրոց հարազատաց։

Աստանօր յուշ լինին ինձ մարք եղկելիք, որոց հատամարք ընդերացան ՚ի լոյս գան որդիք։ Հանդոյն ինձն և քեզ դեպ եղև, մայր ամենօրհնեալ. զի ՚ի սրտի քումմէ խոցելոյ ծնար զմեզ, ՚ի ձեռն սիրոյ. «Սիրովէ եղև գոր- ծակից, ասէ սուրբն Օգոստինոս, զի որդիք Աստուծոյ ծնցին յեկեղեցւոջ»։ Եւ իշխեմ ասել՝ զի բանք հրաժա- րական յեսուին ողջունի որդւոյդ անցին ընդ սիրտ քո որպէս սուսեր, և ածին ՚ի խորս անդ անհնարին ցաւովք զդուԹ մայրենի ՚ի վերայ ամենայն հաւատացելոց։ Ըստ այսմ օրինակի ծնար դու զմեզ ՚ի սրտիդ, ՚ի սաստկու- Թենէ ցաւոց սպառաւելոյ. և քանիցս յանդիման լինին

աչաց քոց հաւատացեալք, լինէս գլխոյնն զայն ողջոյն, և գալարին աղիք քո՛ի վերայ մեր՝ որպէս յորդիս ցաւոց և սիրոյ: Նա աւանիկ յակնարկել քո՛ի մեզ, յանդիման առնեմք սրտի քոմ զորդիդ քո սիրելի, զորոյ Հոգին սուրբ հաճի տալաւորել զպատկեր՛ի հոգիս ամենայն հաւատացելոցս. մանաւանդ զի տեսանես ծածկեալ զամենեսին զմեզ արեամբ Փրկչին, որով լուացեալս եմք և սպիտակացեալ, և զնկարագիր նորա ճանաչես՛ի մեզ:

Զայս վարդապետութիւն յաստուածային գրոց՛ի կիր առնում, և ի հզոր՛ի յորդորել զմեզ յառաքինութիւն, և՛ի պայծառացուցանել յոյժ զշնորհատութիւնն՝ զորմէ բանքս են. վասն որոյ և՛ի դէպ համարիմ յառաջ բերել զայն: Քանզի ուսանիմք Առաքելոյն, և է արժանաւոր՛ի լուր ձեր այս վարդապետութիւն, զի ամենայն հաւատացեալք՝ որոց կեանք համեմատ լցեն հաւատոյն, բերեն գրոշմեալ յանձինս իւրեանց զսիպսակ կենդանիս և զշնորհատ պատկեր Փրկչին մերոյ: Եւ ոչ պակաս.— արդարև աքանչելի օրինակաւ. զի կեալ քրիստոնէապէս՝ է կեալ ըստ վարդապետութեան որդւոյն Աստուծոյ: Արդ վարդապետութիւն Աստուածորդւոյն է կենդանագիր սուրբ վարուց նորա. վարդապետութիւն նորա դաղափար, վարք նորա նախատիպ. որով զանազանի յոյժ ինքն յայլոց վարդապետաց, որք ուսուցանեն բարւոք կեալ. զի ոչ ոք՛ի նոցանէ կարէ յանդգնել՝ զգործս իւր տալ յօրինակ բարի վարուց, այլ սովոր են կազմել դեղեցիկ նկարագիրս, հաստատեն կանոնս՝ յորոց վերայ գուն գործեն ձեւակերպել զինքեանս: Ընդ հակառակն՝ քանզի որդին Աստուծոյ առաքեալ էր յաշխարհ, լինել ճշգրիտ օրինակ բարձրագոյն կատարելութեան, վարդապետութիւն նորա էին կեանք իւր. ուսուցանէր զոր առնէրն, բանք իւր էր վարուցն պատկեր: Զքո՞ւ ապա սուրբ Հոգին ներգործէ՛ի հոգի հաւատացելոյ.— խորհրդարան կամաց նորա կացուցանէ սուրբ

զԱբեաւթարանն, և միակ կանոն գործոց նորա: Վարդապետութիւն որդւոյն Աստուծոյ անցանէ յանզգաստից՛ի վարս նորա, և կացուցանէ զնա որպէս Աբեաւթարան կենդանի. երևի՛ի նմա վարդապետն իւր ուսուցիչ, և եթէ մարթէը մնանել ումեք՛ի խիղճ մտաց նորա, տեսանէը՛ի նմա զնոյն տիպս, զնոյն կիրս, և զնոյն եղանակ գործելոյ, որպէս՛ի Փրկչին մերում:

Եւ այս է որ մեծապէս աղդէ՛ի սիրա սրբոյ Կուսին, որպէս դիւրին է ինձ ընտանի օրինակաւ բացատրել: Տեսանէք երբեմն ուրուք՛ի մարդ առաւել ինն սիրով գգուել զոք՛ի մանկանց, վասն այն եւթէ՝ զի Թուի նմա մանուկն այն համանման իւրումն. այսպէս մանկիկն իմ, ասէ, զձեռն հանգուցանէ, այսպէս ունի զշրթունսն և զաչերժուածս. զի մանրազնին են մարք: Եւ զինչ լցէ բերումն նոցա այն, բայց վաղք ինն ըղձէց այլմ յայլ՝ զոր սէր ատ նոցա առնել. ոչ շատ համբերեալ սիրել զորդեակն իւրեանց յինքեան, այլ և յամենայնի՝ ուր հանդոյն ինչ գտանէն նմին: Եւ եթէ նորա այսպէս գորովին ընդ աղօտ ինչ նմանութիւն, զինչ պարտ էցէ ասել զսրբոյ Կուսէն, ՛ի տեսիլ անմահական կերպարանաց գերահրաշ գեղոյ միածնին, զոր մատն Աստուծոյ գծագրէ խոհաքանչ՛ի հոգիս նոցա:

Դարձեալ՝ զի և ոչ միայն եմք մեք պատկեր կենդանի Աստուածորդւոյն, այլ և անդամք նորին, և կազմեմք նովաւ մարմին մի՝ որոյ ինքն է գլուխ, և եմք մեք լրումն մարմնոյ նորա, որպէս ասէ Առաքեալն, և այնպէս միացեալք ընդ նմա, զի որ սիրէ զՔրիստն, հարկ է նմա՝ նովին չարժութեամբ սիրոյ սիրել և զհաւատացեալսն: Այս է որ ձգէ զսրտութեամբ զնոցա Տիրամօրն՛ի մեզ՛ի վեր քան զամենայն մօր. որպէս դիւրին էր ինձ ցուցանել անժխտելի հաւաստեօք, եթէ չէր ինձ պարտ համառօտել զճառս: Այլ աւ՛ի խելամուտ առնել զձեզ,

կամիմ կարճ՝ ի կարճոյ զնմաստս նոցին առաջի առնել ձեզ, անցեալ վեր՝ ի վերոյ զՀնմարտութեամբք՝ զորս ջանացայ հաստատել յառաջնում մասին, զի կարևոր է ձեզ յիշել զայն՝ առ ի հասու լինել որոց ինայ լինճ ասել։

Ցուցի՝ զի մայրութիւն Կուսին գոլով անօրինակ, զնոյն է իմանալ և զսիրոյ նորա առ որդին. և քանզի է նա փառաւորեալ մայր միածնին՝ որոյ Աստուած միայն է հայր, վասն այսորիկ Թողեալ քաջ՝ ի ստորև զամենայն բնութիւն, խնդրեցաք մեք զօրէնս սիրոյ նորա՝ ի Ծոց Հօրն յաւիտենականի։ Զի որպէս Հայր, առեալ զբնութիւնս մարդկային այնպէս ընդ Որդւոյ իւրում միացեալ, ծաւալեաց զսէր իւր հայրենի՝ ի մարդկութիւն փրկչին, և զլրումն հաճութեան իւրոյ եդ յԱստուածորդին մարդացեալ, որպէս ցուցաք վկայութեամբ սուրբ գրոց, այսպէս և սուրբ Տիրամայրն ոչ ևս բաժաներ զաստուածութիւն որդւոյ իւրոյ՝ ի մարդկութենէն, այլ յերկանակաւ ինն զերկոսին ևս նովին սիրով ընդգրկեր։ Ի վերայ Հմարտութեանցս այսոցիկ հաստատեցաք զվիութիւն Մարիամու ընդ Աստուածոյ. յաւելումք և այլ առ՝ ի ցուցանել ձեզ զսէր նորա՝ որ առ մեզ։

Սուրբ գիրք, որ ուսուցանեն՝ զի Աստուած յերկանակաւ նովին ինն սիրով սիրէ զաստուածութիւն և զմարդկութիւն Որդւոյ իւրոյ՝ վասն անմեկնելի կցորդութեան նոցա յերկրպագելի անձին Քրիստոսի, ուսուցանեն ևս՝ զի սիրէ զմեզ նովին սիրով, որով սիրէ զմիածնին Որդի իւր սիրելի, վասն կցորդութեան մերոյ ընդ նմա որպէս անգամք մարմնոյ նորա. և յամենայն մասանց քրիստոնէական հաւատոյ՝ այսմ առաւելապէս պարտ է քաջալերել զմեզ, և ամբառնալ զսոյս մեր։ Խնդրեցէք առ այս վկայութիւն գեղեցիկ՝ ի բերանոյ Փրկչին մերոյ.— Լուարուք՝ զոր առ Հայր իւր աղօթէ. Զի «Էրբեք

զոր «Էրբեքէ ղէս, ՝ի նոսա էջէ, և ես ՝ի նոսա։ Այս է. Հայր, ես ՝ի նոսա եմ, զի են նոքա անգամք իմ. ազաչեմ զքեզ՝ զի սէրն, որով սիրես զիս, էցէ ՝ի նոսա։ Լուարուք, հաւատացեալք, լուարուք և ուրախ լերուք։ Երկինչի Փրկիչն մեր, թէ գուցէ Հայր իւր արասցէ խոիր ընդ դլուխն և ընդ անդամս. ասէ ՝ի միտ առէք՝ որպէս միացեալ եմք ընդ Փրկչին մերում, զի և Աստուած՝ որ զանազանէ զէակս առ հասարակ գեղեցիկ իմն զանազանութեամբ, ոչ խորէ զմեզ ՝ի նմանէ, և առնէ ընդ մեզ զամենայն սէր հայրագութ։ Եւ եթէ է աներկբայելի՝ զի սուրբ Կոյսն համեմատէ զսէր իւր ընդ սիրոյ Հօրն երկնաւորի, դիմեցէք հաւատացեալք, դիմեցէք վաղագոյն առ մայր այսպիսի անզուգական. հաւատացէք՝ զի ոչ խորեացէ նա զձեզ յորդւոյ իւրմէ, այլ ընկալցի զձեզ որպէս մարմին ՝ի մարմնոյ նորա, և ոսկր յոսկերաց նորա, որպէս ասէ Առաքեալն, վասն հեղանելոյ արեան նորա ՝ի վերայ ձեր և ՝ի ձեզ։ Աւելի ևս ինչ իշխեմ ասել. ընկալցի նա զձեզ որպէս զՅիսուս Քրիստոս ՝ի յերկրի. և ըստ չափոյ սիրոյն՝ որով սիրէ նա զորդին իւր՝ սիրեսցէ զձեզ. վասն որոյ մի երկմտիք կոչել զնա մայր ձեր. զի այնպիսի ուրն ՝ի վերայ ձեր գորով սրտալիր, որչափ մայրութիւն իւր խնդրէ ՝ի նմանէ։

Զայս խոստացեալ էի, եթէ ոչ սխալեմ, ցուցանել ձեզ յերկրորդումն մասին. և գոհանամ զԱստուածոյ, զի ընարհեաց մեզ հաստատել այսպիսի սէրս պաշտօն առ սուրբ Կոյսն ՝ի վերայ քրիստոնէական հաւատոց, որպէս ոչ ինչ երկբայիմ։ Բայց զդոյշ կացէք, զի սոքին իսկ հաւատաբանութիւնք՝ որոց պարտ է տալ մեզ վստահութիւն մեծ ՝ի բարեխօսութիւն Տիրամօրն, կարեն զղջծուցանել զմեզ ՝ի յանդուգն իմն վստահութիւն, յոր անխորհուրդք ոմանք կուբաբար զառածանին։ Զի ՝ի բնաւէից աստի բանից պարտ է ձեզ առնուլ ՝ի միտ՝ զի ջերմ եռանդն ՝ի պաշտօն կուսին չզօրէ ինչ առանց

քրիստոնէական վարուց։ Քանիք նանրահաւատ կարծեօք համարին զանձինս պաշտօնասէրս Կուսին, վասն այսօր ինչ մատուցանելոյ ի պաշտօն Տեառն, առանց ջանալոյ ուղղել զյոռութիւնս իւրեանց և զանկարգութիւն վարուց։ Եթէ երբեք յայսպիսեաց ոք գտանի ի ժողովս վարակեալ մոլորութեամբս այսուիկ, գիտասցէ՝ զի ցորչափ հեռի է սիրա Տեառն ի Քրիստոսէ, պիղծ հա- մարի զաղօթս Տեառն սուրբ Կոյսն։ զուր ջանայ շրթամբք պատուել զնա, ի նանիր կոչէ զնա մայր իւր կեղծ բա- րեպաշտութեամբ։ Ծպրտիցիս ոմն դու կարծել՝ զի շինիք հուսական կաթին Քրիստոսին ի շրթունս քո բազ- մապատիկ մեղօք պղծեալս. զի ընդդրկեսցէ նա զձեզնա- մին որգոյ իւրոյ, նովին բազկօք՝ յորս կրեր զորդին իւր միածին. զի հակառակորդ դոլով քո Փրկչին, տայցէ զքեզ յերկրայր նմին։ Նա աւանիկ խորշի ի քէն սիրտ իւր, խոռվին դէմք իւր ի մայրապէտ լինել քո նմա։

Մի կարծէք, ո հաւատացեալք, թէ Կոյսն ընկալ- չի անխտիր զամենեսեան ի Թիւս որդւոց իւրոց. պարտ է անցանել ընդ փորձ դժուարին յառաջ քան ըլլինել արժանի որդւութեան։ Գիտէք զինչ առնէ սուրբ Կոյսն ի կոչել ուրուք ի հաւատացելոց զնա մայր. յանդիման առնէ նմա զՔրկիչն, և ասէ. Եթէ կամիս լինել որդի իմ, պարտիս նմանիլ միածնի իմում։ Ա՛ռ մարդիկ խակ՝ բե- րեն որդիք զսիպտ նմանութեան իրաց՝ որ գրաւեն զմիտս մարդկն իւրեանց. արդ սուրբ Կոյսն գրաւեալ է բոլորո- վին ի Քրիստոսէ վերչէն մերմէ, Քրիստոս ոչերբ ի սիրտ Տեառն, նա միայն իշխէ ըղձից Կուսին, նա զամենայն խոր- հուրդս մտին գրաւէ. ոչ կարասցէ երբեք սուրբ Կոյսն համարել զձեզ որդիս իւր, եթէ չիցեն ի հոգիս ձեր տիպք ինչ նմանութեան որգւոյ իւրոյ։ Եթէ քաջ զննեալ՝ ոչ գտանիցէ ի ձեզ նմանութիւն ինչ զորգւոյն, աւաղ, քանի նախատինք լինիցին ձեզ մերժիլ ամօթով յերեսաց Տեառն, ի չայտ առնել Տեառն զաննմանութիւն

ձեր ընդ որգւոյ իւրում. և որ ևս սոսկալին է, եթէ դժպհի լինիցիք նմա՝ վասն հակառակութեան ձերոյ ընդ որգւոյ իւրում։

Իսկ ընդ հակառակն՝ եթէ տեսանիցէ զոք, օրինակ լինի, զի ի ժամանակի նեղութեան հասարակաց՝ որպէս զարդիս, տեսանելով զբաղումս ի յետին Թշուառու- թեան, և բացեալ զսիրտ իւր ի վերայ ազէտից կալօ- տելոյն Աչմարիտ կարեկցութեամբ, առատաձեռնէ առ ի սփոփել զնա, ասիցէ անդէն Տիրամօր յանձին, նմանութիւն լիցի և սա որգւոյ իմոյ, որ ոչ հայեր ան- կարեկիր ի կարօտեալս, այլ ասէր. Գնամ ի Վէրայ Ծողո- վէրդեանդ. և պատուիրեր աշակերտաց իւրոց տալ նոցա՝ որ ինչ ի պէտս իւր պահեալ էին կերակուր. և բազմա- ցուցանէր ևս զայն աքանչելիօք, զի առատապէս կերա- կրեսցեն զնոսա։ Եւ դարձեալ ի տեսանել Կուսին զոք ի պատանեաց, զի համեստութիւն ի դէմս իւր բերելով կայ առաջի Տեառն անդբօս մտօք, և եթէ խնդրեսցի ինչ ի նմանէ՝ որ հայի ի փառս Աստուծոյ, ոչ խուսէ պատ- ճառանօք, հայի ի նա հաճութեամբ, և ասէ. Քանի՛ սիրելի է ինձ դա, այսպիսի էր որգեակն իմ յերկոտա- սանամեայ, մտագիւր առաջի Աստուծոյ կայր հանապազ, Թողոյր զծնօղս իւր և զբարեկամս առ ի պարապել ի տան Հօր իւրոյ։ Եւ մանաւանդ՝ եթէ ոք ամենայն խնա- մով պահէ ամբիծ զմարմին իւր և զհոգի, ի պարկեշտ զբօսանս միայն սփոփի և ի սէր անմեղ, ժառանգէ Քրիս- տոս զսիրտ նորա, և բերկրի նովաւ. և եթէ լիցի նմա լսել բան ինչ անմաքուր, հարկանի ի հոգի, և հակա- ռակի պատճառանօք և համեստութեամբ ընդդիմ այն- պիսեաց բանից, նա է Աչմարիտ որգի Կուսին. քանի՛ զուարճանայ նովաւ սուրբ Կոյսն, քանի՛ փառաւորի, Թէ յաղթանակ, որով խնդութեամբ յանդիման առնէ զնա որգւոյ իւրում սիրելոյ, որ ի վեր քան զամենայն սիրէ զամբիծս հոգւով։

Վասն որոյ, հաւատացեալք, զարթօնեցէք զսիրտս ձեր՝ և սէր մաքրութեան, և մանաւանդ դուք՝ որ միաբանեալդ էք աստ յանուն սրբոյ Կուսին ընձիւղ կատարելութեան՝ ի քրիստոնէական կրօնս: Նախանձ ձեր պատրաստեաց զտաճարս զայս սուրբ, յորում մեծացուցանեմք զփառս Կուսին. այլ ածէք զմտաւ՝ զի ունիք պատրաստել միւս այլ տաճար, յորում բնակէ Քրիստոս, յորում հանգչի սուրբ Հոգին, այս ինքն է մարմին ձեր՝ զոր սրբեաց Փրկիչն մեր, որպէս զի յարգեսջիք զսա. յորոյ վերայ եհեղ զարիւն իւր, որպէս զի սուրբ պահեսջիք զսա յամենայն պղծութենէ. նուիրեսջիք զսա և արասջիք տաճար կենդանի Հոգւոյն սրբոյ, որպէս զի պահեալ սրբութեամբ և անմեղութեամբ յայսմ աշխարհի, զարգարեսցի յանախս անմահութեամբ և փառօք:

ՊՈՍԻԻԷԻ

ՄԵԼԴԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԻԻՆ ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ

Ամենևին գեղեցիկ ես, մերձաւոր իմ:

Երգ Երգոց. Դ. 7:

Եթէ սիրելի է ձեզ անուն Մարիամու, եթէ սիրէք զփառս նորա, եթէ խնդայք ընդ հռչակ գովութեանց նորա, ո՛ հաւատացեալք որդիք Մարիամու, զորս ամենասուրբ Կոյսն Ժողովէ այսօր այսր, ուրախ լերուք՝ ի Տէր: Մագեսցէ վաղիւ օրն այն սուրբ և երանաւէտ, յորում ամէնօրհնեալ Հոգին Մարիամու, Հոգին նախասահմանեալ՝ ի լուսաթիւն ընտրհաց և՝ ի գերասահման փառս, միացաւ ընդ մարմնի՝ որոյ սրբութեանն չիք ինչ հանգոյն, և ո և յոգիս հրեղէնս, և ձգեսցէ նա յաւուր միում յերկիր, զիւեսայն ամբիծ զՀոգւոց հաւատացեալց: Արժան է ապա, զի Հոգևոր ուրախութեամբ կատարեսցուք զտօն աւուրս: Հեռի են՝ ի յաղթենէ աստի հեծութիւնք և ողբք, կցորդք սովորականացն յաղթեանց. ամենևին մաքուր է սա և բոլորովին անբիծ: Մի՛, մի կարծէք ո՛ հաւատացեալք, զի ապականութիւն բնութեան մերոյ առ հասարակ՝ արատաւորեալ լիցէ և զմանկութիւն սահմանելոյն Աստուծոյ՝ ի մայր Որդւոյն Սրբոյ միածնի: Զայս առաջն կայ ինձ ցուցանել ձեզ

յայսմ խորհրդեան, այլ խոստովանիմ՝ զի ոչ աներկիւղ մատչիմ ՚ի ձառս յայս. զի քան զամենայն խնդիրս, զոր սովորութիւն է ձառել ՚ի ժողովս եկեղեցականս, դիւրաշօտանալի է սա: Զի բաց ՚ի գժուարութենէն, որ ձգնէ զձարտարագոյնս ՚ի բեմախօսից, հրամայէ ևս մեզ եկեղեցի զգուշութիւն մեծ, և չափաւորութիւն ՚ի ձառել զայսմանէ: Եթէ սուղ ինչ խօսեցայց, դիտեմ զի ոչ գոհասցի բարեպաշտութիւն ձեր. իսկ եթէ բազում, երկնչիմ թէ գուցէ անցից ըստ սահմանի՝ զոր սուրբ կանոնք հաստատեն ինձ: Զգիտեմ որպիսի՛ ինչ ազդումն մղէ զիս ՚ի հաստատել զանարատութիւն յղութեան Տիրամօր. այլ ոչ իշխեմ ասել զայն անժխտելի հաւատեաւ՝ պարտ է ինձ ՚ի միջասահմանին կալ, որ Թերևս չիցէ ինչ դիւրին: Սակայն ՚ի փառս Աստուածոյ ասացից, զի Կոյսն ամէնօրհնեալ եղև ջերծ ՚ի հասարակաց մեղաց բնութեան մերոյ. ասացից որչափ զօրեմն, այլ ասացից այնու արգար կշռութեամբ՝ զի մի վերջացայց ՚ի չափաւորութենէ: Ախտիս չատասջիք հաւատացեալքդ, այսպէս հնազանդեսցուք եկեղեցւոյ. այսպէս գոհասցի խանդակաթ բարեպաշտութիւն որդւոց, միանգամայն և մերոց նի հրամանաց խոհականութիւն:

Են բանք ինչ նորանշանք և գժուարահասք, որ պահանջեն առ ՚ի խելամտութիւն զամենայն ճիգն փառատանութեան, և զամենայն գիւտս հռետորականին: Են և ընդհակառակն՝ որ ՚ի լուր նախկին այնպէս ազդեն ՚ի հոգի, որ բազում այն է՝ զի սիրելի լինին և իսկ ծանուցեալ. այսպիսի բանք չունին իսկ պէտս ապացուցից. ՚ի բառնալ ևեթ խոչից, և ՚ի լուծանել գժուարութեանց՝ որ ընդ առաջ ելանեն, բերին միտք ինքնաշարժ ՚ի հաւանութիւն: Ի կարգս այսոցիկ գասեմ զառաջարկեալն յինէն. այս ինքն զի յղութիւն Տիրամօրն ունի ինչ չընորհս առանձինն ամենևին. զի Աստուածորդին ամենազօր կամեցաւ նախապատրաստել զնա ՚ի ժամանակի

ածի հասարակաց՝ որ ապականէ զամենայն զօրութիւնս մեր, որ աղտեղէ ՚ի սպառ զհոգի մեր, որ ածէ զմահ մինչև յաղբերական կենաց մերոց. ո՞ երբեք կարիցէ ժխտել զայս, ո՛ հաւատացեալք, ո՞ երբեք ոչ ընծայեցէ ՚ի սրտի հաւանութիւն այսմ գովելի կարծեաց: Այլ առարկութիւնք բազումք կարևորք ընդդէմ ելանեն, ասիցէ ոք, յառաջ բերեալք ՚ի մեծամեծ աստուածաբանից: Ֆալէ է. Յանացայց լուծանել զայնոսիկ վասն երկիւղածից. այսու օրինակաւ հաստատեսցի մեծ կէս մասն պատճառաբանութեանս իմոյ, և ոչ լիցի ինձ հարկ այնուհետև առաւել ևս ստիպել զձեզ. զի յորժամ խելամուտ լինիցիք գժուարութեանցն լուծանելոյ, հաւանեսջիք մտագիւբ՝ զի սուրբ Կոյսն ջերծ ՚ի սկզբնական մեղաց էիցէ պահեալ: Եւ ոչ այսչափ միայն, այլ և հաւատասջիք յայն ՚ի հաւանել մտաց ձերոց. և ամենայն զոր առաջի կայ ինձ ասել, ոչ առ այլ ինչ լիցի կարևոր, բայց ՚ի հաստատել զձեզ ՚ի սոյն հաւատս:

ՄԱՍՆ ԱՒԱՋԻՆ

Ոչ Թուի ինձ կարևոր բացատրել աստ զձշմարտութիւնն՝ զոր ոչ ոք անգիտանայ. զի նախահայրն մեր Ադամ ապստամբեալ Աստուածոյ՝ կորոյս զտէրութիւն իւր բնական, որով կրնայր տիրել: Անհնազանդութիւն նորա պատուհասեցաւ անհնազանդութեամբ. զգաց նա յանձին ապստամբութիւն իւրն անակնկալ, և ՚ի յառնել յանկարծ ստորին մասին նորա ընդդէմ բանին, յամենեղէն նա չկարեցաւ հնազանդել զոյն: Եւ որ ողբալին ևս է, ցանկութիւնք անբանականք՝ որ յառնեն ՚ի զգայութիւնս մեր ՚ի նախատինս հոգւոյ՝ մասն մեծ ՚ի ծնունդս մեր դրաւեցին. վասն որոյ է չգիտեմ որպիսի ինչ ամօ-

Թալե՝ ի ծնունդս մեր, զի ամենեքին գամք ի լոյս յանկարդ ախորժակաց անտի, որ չառադունանս նախահօր մերոյմ ածին: Խնդրեմ՝ի միտ առնուլ ձեզէն զիրացս ճշմարտութիւն, և ինայել զնս՝ի պատկառանաց յաւելլոյ այլ ևս ինչ զամօթալեացս, սակայն կարեւորաց՝ի գիտութիւն, առ՝ի հասու լինել յաղբերաին սկզբնական մեղաց. զի ընդ այս խողովակ իջանէ Թոյնն և ապականութիւնն՝ի բնութիւն մեր, որ՝ի ծնանելն և սպանանէ զմեզ. և՝ի նմին արմատոյ ընդունիմք զկեանս մարմնոյ և զմահ հոգւոյ. զանգուածն՝ յորմէ կազմեալս եմք՝ ապականեալ անդամոին յաղբերակնէ, Թունաւորէ զհոգի մեր մահաբերաւն ժանտախտիւ: Վասն այսորիկ Փրկիչն մեր, կամելով որպէս մատնանիչ զպատճառ աղէտից ցուցանել, ասէ յԱւետարանի անդ. Զի ծնեալն՝ի մարմնոյ մարմին է: Մարմին ասա, ըստ բարբառոյ աստուածային գրոց, նշանակէ զցանկութիւն. որպէս թէ ասէր. Ո՛վ մարդիկ Թշուառք, որ ծնեալք յապստամբութենէ և յապականեալ յօժարութեանց՝ որ են հակառակ աստուածային օրինաց, դուվին իսկ ծնանիլք ապստամբք յԱստուծոյ և Թշնամիք նմին. Զի ծնեալն՝ի մարմնոյ մարմին է: Այս իմաստ է բանի Փրկչին, և այսպէս մեկնէ զայն առաքեալն Օգոստինոս, եթէ ոչ սխալեմ. այն որ առաւել քան զամենայն Հարս ծանեաւ զաղէտս բնութեան մերոյ:

Զի՞նչ ապա ասասցուք զերանուհչոյ Կուսին. չիք երկբայել՝ զի յղացաւ նա կուսութեամբ զՔրիստոս, այլ ոչ յղացաւ՝ի հոգւոյ. այս փառք պահին որդւոյ և եթե ևբրում: Յղութիւն Կուսին՝ի մօրէ եղև ըստ բնական կարգաց. և պարտ էր նմա զերծանել յապականութենէ, որ անմեկնելին է անտի: Զի և Առաքեալն այսպէս հանրաբար խօսի զհասարակաց անիծից բոլոր բնութեանս, զի անամիտելին Թուի բան նորա. Անեղէն մեզան. Աստուած անեղէն մեռաւ. և այլ այսպիսի բանք բազումք, ոչ ինչ ընդհատ զօրաւորիք և հանրականք: Ո՞չ

ուրիք ապա գոյցուք ապաստան երանուհչոյ Կուսին, առ՝ի զերծուցանել զնա՝ի համաչխարհական գատապարտութենէ աստի. ՝ի դիրկս որդւոյն, յաղբերն ամբաւելի և անսպառ ողորմութեան: Թուի ինձ զի քաջ խնամուտ եղերօք երացն գԺառանգութեան, և ցուցի ձեզ, գէթ ըստ կարի իմում զամենայն զօրութիւն առարկութեանն: Լուարուք արդ զպատասխանին, զհետ եկեալ ուշիւ մտածութեանս իմում. համառօտիւ ասացից, զի առ ուշիմս բարբառիմ:

Խոստովանիմ, ո հաւատացեալք, զի հասանէր աներկբայապէս կորուստ և Կուսին որպէս այլ ամենայն մարդկան, եթէ բժիշկն աստենաղորմ, որ զհիւանդութիւն մեր առողջացոյց, ոչ արժան համարէր նախաժամանն չնորհօք պահպանել զնա: Մեղքս այս, որ ուղխօրէն յորդահոսէր՝ի մարդիկ, գիմէր և՝ի Կոյն սուրբ չարաթոյն ալեօքն. այլ չիք բուռն սաստկութիւն հոսանաց, զոր ամենազօր զօրութիւն աստուածային չկարիցէ՝ի կամէն նահանջել: Հայեցարուք յարեգակն քանի՛ արշաւասոյր ընթանայ ընդ ասպարէզն անծայր, զոր եթաց առաջի նորա նախախնամութիւն. սակայն ոչ անգիտաչաք՝ զի Աստուած կասեցոյց զնա երբեմն ընդ երկին՝ի ձայն առն միոյ: Բնակիչք գետեզերացն Յորդանանու՝ի Պաղեստին գիտեն քանի՛ սրընթաց գնայ նա անկանիլ՝ի ծով անդր Մեռեալ, եթէ ոչ՝ի նկարագիր վայրացն սխալեմ. սակայն բանակն Իսրայէլի համօրէն եաես զնա ընկրկեալ յաղբերակն անդր իւր, առ՝ի տալ անցս ժողովանակին՝ յորում հանգչէր Տէր ամենակալ: Ի՞նչ երբեք բնականագոյն քան զկիզանող զօրութիւն հրոյ՝ի հնոցի. սակայն ամպարիշտն Նաբոդոդոնոսոր ոչ ապաքէն կարկեալ եկաց՝ի տեսիլ երից մանկանցն, զի խայտային՝ի բոցն անդ՝ զոր անողորմ արբանեակք իւր բորբոքէին՝ի նոսին: Սակայն չիցէ՞ մարթ ընդգէմ այս ամենայն երևելի օրինակաց ասել ճշմարտապէս, զի չիք հուր՝ որ

ոչ այրեսցէ, և զի արեգակն մշտաշարժ ընդ երկինն ընթանայցէ, և զի չիցէ ուրեք երբեք գետ՝ որ յեաս ընդդէմ յաղբերակն իւր խաղայցէ: Այսպէս խօսիմք հանապազօր անխափան յօրինակաց ասի մեծամեծաց, զորս ոչ ոք անգիտանայ. և ընդ[ի]ր.— քանզի սուրբ եմք խօսել ըստ հասարակաց կարգի երից, թէպէտ և ուրեք ուրեք կամիցի Աստուած վարել ըստ օրինաց ամենակալող զօրութեան իւրոյ, որ գեր [ի] վերոյ քան զամենայն խօսս մեր է:

Ըստ այսմ օրինակի չէն ինչ զարմանք՝ զի Աբաքեանն հանդարտաբար ասիցէ, մեռեալ զամենայն որդիս Ադամայ մեղօք նախահօրին: Զի ըստ բնական կարգի երից խօսի Աբաքեանն. և յիրաւի՝ ծնանել Ադամայ ըստ սովորական օրինի, բովանդակէ զմեզս անխոսելի. ոչ առաւել է բնական այրել հրոյ, քան այսմ միաստապարտ ցանկութեան ժանտացուցանել ուր և հասանէ, և առնել ապականութիւն և մահ. չիւր թոյն քան զայն երազգոյն, և ոչ ժանտախտ աղդողազդոյն: Սակայն այս ամենայն անէծք հանրականք, այս ամենայն ատացուածք անխոխրք, չէն ինչ խափան կամաց ամենատեառն պահելոյ ինչ անպարագիր իւրումն իշխանութեան: Այս ուրեմն, ամենամեծդ Աստուած, զինչ Ճահադոյն անսահմանելի և ինքնակալ զօրութեանդ, և ոմն այլ ուրեք զայն [ի] վար արկանիցես, եթէ ոչ [ի] ընորհս Կուսին:

Գիտեմ իսկ՝ զի ոմանք [ի] վարդապետաց անխոհեմութիւն համարին ամփոփել զբանս զայսոսիկ, որպէս թէ տեղի տալով զհետ բերելոյ անպատեհս: Խնդրեմ միտ դնել խմաստասիրութեանս. ոչ է տալ տեղի այսպիսեաց հետևանաց, ուր չիք ինչ համեմատութիւն. օրինակ լիցի. եթէ կամիցի ոք առնել ինչ սոսկականի ոմանք ընորհս, պարտի զդոյշ կալ [ի] հետևանաց, զի և այլք բազումք կարեն զնոյն ընորհս պահանջել: Այլ անց գոյ ընդ ամենայն պարս հրեշտակաց, խնդրեա հետա-

զօտեա յամենայն կարգս երանելեաց, և գիտ զոր [ի] սահմանածոց, որ իշխիցէ՝ ոչ թէ հաւասարել, այլ և բազդատել զանձն ընդ Կուսին: Ոչ հնազանդութիւն նահապետին, ոչ հաւատարմութիւն մարգարէից, ոչ անխոնջելի եռանդն առաքելոց, ոչ անպարտելի հաստատութիւն մարտիրոսաց, ոչ յարատև ձգտունք խոստովանողաց, ոչ անապական մաքրութիւն կուսանաց, և ոչ բազմապատիկ զանազանութիւնք առաքինութեանց՝ զորս շնորհք աստուածային սիրեցին յայլևայլ կարգս երանելեաց, ոչ կարեն և ոչ յեղանակաւ իմն մերձենալ [ի] բարձրութիւն Տիրամօրն: Փառաւորեալ աստուածամայրութիւն նորա, և կոյրդութիւն յաւիտենական ընդ Աստուծոյ, գեր [ի] վերոյ կացուցանեն զնա [ի] կարգ առանձին անհամեմատ: Արդ յայսպիսում անհատութեան որոյ հետևանաց կայցէ երկիւղ. ցուցէք ինձ միւս այլ Աստուածամայր, ցուցէք զայլ ոք Կոյս և մայր, ցուցէք յայլսում ումեք զայս լիութիւն շնորհաց, զայս պարառութիւն աստուածային առաքինութեանց, խոնարհութիւն այսպիսի ընդ գերահրաշ արժանեաց, և զայլ ամենայն սքանչելիս՝ ընդ որս հիանամք [ի] սուրբ Կոյսն. և ապա ասացէք ինձ՝ եթէ կամիք, որ անտեղութիւն կարիցէ գալ զկետ [ի] բաց կացուցանելոյ [ի] հաւարակաց օրինաց զսուրբ Կոյսն, առանց համեմատութեան գերագոյն ամենայն արարածոց:

Եւ [ի] քանի՛ այլոց հանրական օրինաց ոչ գտաւ սուրբ Կոյսն ազատ: Ոչ ապաքէն հարկ իցէ հասարակաց ամենայն կանանց ծնանել երկամբք և վտանգաւ կենաց իւրեանց զորդիս. սակայն սուրբ Կոյսն ազատ գտաւ անտի: Ոչ ապաքէն զամենեցունց ասացաւ մեզանչել. Բաղամ ինչ յանցանէմք ամենեքեան: Կայցէ ոք յարդարոց, որոյ կարացեալ իցէ խոսել [ի] մեղաց տկարութենէ՝ զորս կոչեմք ներելիս. սակայն սքանչելին Օգոստինոս ոչ երկբայի [ի] բաց առնուլ զսուրբ Կոյսն յայսմ հանրական

Ճշմարտութենէ: Եթէ գտանէաք յայսպիսեաց ինչ ՚ի վարս նորա, կարէաք Թերևս կարծել զնա յղացեալ ՚ի մեղս որպէս զսոյսն ՚ի մարդկանէ: Այլ զի գտանեմք զնա ընդ հակառակն զերծ գրեթէ յամենայն օրինաց, և ըստ ուղղափառ հաւատոց, կամ գէթ ըստ կարծեաց վարդապետաց առաւել ընդունելեաց՝ զծնունդ նորա առանց երկանց, զմարմին նորա զերծ ՚ի մեղանչականութենէ, զզգայարանս նորա անապատամբս, զվարս նորա ամբիծս, և անվնաս զմահ նորա, եթէ փեսայն պահապան և եթէ նորա, եթէ հարսանիք քոյղ սուրբ առ ՚ի ծածկել և պահպանել զկուսութիւն նորա, եթէ ՚ի յղութեան Աստուածորդւոյն հնացեալ և յամեթ լեալ բնութիւն՝ կարծեր եղծեալ ՚ի սաստ զօրէնս իւր, եթէ Հոգին սուրբ կալաւ զտեղի նորա, և բերկրութիւն կուսական զտեղի ցանկութեան, ո՞ կարիցէ կարծել՝ թէ չիցէ լեալ և ՚ի յղութեան անդ իւրում գերբնական ինչ, և յայնմ և եթէ մասին կենաց նորա չիցեն ինչ լեալ աբանչելիք գերազանց:

Ասիցէք Թերևս՝ զի անմեղութիւն այսպիսի գերազանց միաքուր միայնում Աստուածորդւոյն էր պահեստ, և հաղորդել զայն սրբոյ Կուսին՝ էր բառնալ ՚ի Փրկչէն զառաւելութիւնն յատուկ բնութեան նորա: Ցեսին ճիգն է այս աստուածաբանիցն, զորոց լուծանեմք աստ զառարկութիւնս: Այլ մի՛ լինի այսպիսում յանդուգն կարծեաց ունել ՚ի միտս իմ տեղի. կոթիցեն ամենայն խորհուրդք իմ, Տէր, և ամենայն բանք իմ յամեթ լեալ հերքեսցին, եթէ նուաղութիւն ինչ մեծութեան քում ածիցեն: Դու անմեղ ես բնութեամբ, իսկ Մարիամ ընդհակառակ. դու ըստ առաւելագանցութեան, նա ըստ արտունութեան. դու որպէս Փրկիչ, նա երախայրի սրբարար արեան քո պատուականի: Որ ցանկայիցէ առաւելութեան փառաց Տեառն, ոչ աւելի ինչ քան զայս՝ որպէս լինէ Թուի՝ խնդրիցէ. զի եթէ չէաք մեք մեղապարտք ՚ի ծնէ, ոչ գտանէին առաւելութիւն ինչ յանմեղութեան Փրկչին. եթէ համարիք առնել ինչ մեծ՝ կացուցանելով զնա գեր ՚ի վերոյ անբասութեան մեղապարտից, մի՛ սոգտանիք զնա՝ եթէ ջանամ գտանել զոնեա զրք յարարածոց անմեղ առ ՚ի գերագասել և նմա զանմեղութիւն Փրկչին, առ ՚ի ցուցանել՝ զի ոչ յանցանք եւեթ մեր տան անմեղութեան նորա գերազանցութիւն:

Ի իսկ և է կարևոր գերազանցել Փրկչին անբասառաւելութեամբ քան զմայր իւր. այլ ոչ արժան համարիցիք զի և մեր իւրում իցէ ինչ առաւելութիւն գեր ՚ի վերոյ ծառայից իւրոց ամենեցուն: Զինչ տայցէք պատասխանի առ հարցուածս մի, որ ինձ Թուի յոյժ արդարացի. ոչ շատ համարիմ, եթէ ասիցէք զսուրբ Կայան սրբեալ յարգանդի. զի Թէպէտ գեղեցիկ է և այդ առաւելութիւն, այլ խնդրեմ յուշ ածել՝ զի և սրբոյն Յովհաննու Մկրտչի ընդհակառակ այդ, Թերևս այլոց ևս ոմանց ՚ի մարգարէից: Այդ ինձ այս խնդիր է ՚ի ձէնջ, զի տայցէք Տիրամօրն՝ եթէ կարէք՝ առաւել ինչ քան զայլոց, առանց բառնալոյ ինչ յիրաւանցն Յեսուսի: Ըստ ես գիւրին է պատասխանին. զի Փրկիչն մեր գեր ՚ի վերոյ է անբասալէս ՚ի հասարակաց մեռելութենէ աստի. իսկ Մարիամ նեղբոյ անկեալ այնմ, այլ նախապահեալ չընորհիւ. միտ դիք ազաչեմ այսմ զանազանութեան. այլք ՚ի սրբոց անկեալ ընդ նովաւ, և զերծան անտի ընորհիւ: Ըստ այսմ օրինակի պահեմք զառաւելութիւն Տիրամօրն, առանց ինչ սանձանելոյ գերազանցութեան Աստուածորդւոյն, Հզօրիս և արդար կարգաւ՝ որ Թուի ինձ արժանի աստուածախնամ սեպհութեան: Զի այսպէս Փրկիչն մեր, որ ըստ վարդապետութեան աստուածաբանիցն էին յաշխարհ առաւելապէս առ ՚ի սրբել զազգ մարդկան ՚ի սկզբնական մեղաց՝ որ էր յաղթանակ չարութեան բանսարկուին, պարտէ զնա փառաւորեալ յաղթութեամբ, նուաստն և հալածէ ամենայն ուստեք՝ ուր մարթ էր նմա սպասանել:

Եւ ըսէս, ո՛ հաւատացեալք. — քանզայայտ է բանիցս հետեւութիւն: Ախտս այս սկզբնական տիրէ՛ ի վերայ նորածնելոց մանկանց. Փրկիչն մեր յաղթէ անդ սուրբ մկրտութեամբ: Այլ ոչ ասա զկայ առնուն իրք՝ ի ձեռն այսր մեղայ մանկէ դևն և յարգանդ մարց, և անդ ալ ապիկարք ամենևին եմք, առնէ զմեզ թշնամիս Աստուծոյ: Բայց Փրկիչն մեր ընտրէ զոմանս ՛ի հոգւոյ վերհաղունից, և սրբէ զնոսա յարգանդի մարցն, սպանեալ անդ զմեզս: Սոքա են, զորս կոչեմք մեք սրբեալս յարգանդէ, որպէս զսուրբ Մկրտիչն, որպէս զԵրեմիա ըստ կարծեաց ոմանց ՛ի վարդապետաց, որպէս Թերևս և զԱստուածահայրն ըստ այլոց ոմանց: Այլ մնայ ուրեք սակաւին տեղի, ուր պարծի բանսարկուն դոլ անպարտելի, և կարծէ՝ Թէ չկայ մարթ հալածել զնա անտի. իմա ՛ի վայրկենի յղութեան, յորում քամահէ նա զամենակարող զօրութեամբ քոյ, Փրկիչ մեր. հայհոյէ նա, զի Թէ կարիցես արդեաւք զհոսանս, դէթ կացցէ նա աներկիւղ յաղբերակունս անդ և յարմատս: Արի Տէր, և հալածեացի անտի և Թշնամին, փախիցէ առաւելն քո յերեսաց քոց. Յարիջէ Աստուածդ, և ցրուեսցին ամենայն ընդդէմ նորա. փախիցեն ապերէսք նորա յերեսաց նորա: Ընարեա զքեզ զմի յարարածոց քոց, և սրբեա զնա յականէ, անգսաին յառաջին վայրկենէ հոգևորելոյ նորա. ցմիջ ոսոխի քոմ՝ զի կարես և զառաջս առնուլ Թունիցդ նորա զօրութեամբ շնորհաց քոց, և ոչ Թողուս նմա ածել ուր ոչն կամիս՝ զնաւար իւր գժոխային, և ուստի չկաց քեզ մարթ հալածել զայն պայծառութեամբ լուսոյ քո. ահաւասիկ ամենօրհնեալ մայր քո արժանաւոր ընտրիւք, և վասն գերահրաշ աստուածամայրութեան իւրոյ արժանի՝ զի ցուցցես ՛ի նմա զզօրութիւն շնորհաց քոց:

Զհամբոյր Թուխ ձեզ, եղբարք սիրելիք, հաւանիք վարդապետութեանս այսմիկ, ևցի՛ գովելի: Այլ ես ՛ի

խորհել խմամ զփրկիչն մեր Քրիստոս, զսէր մեր և ըզյոյս, ՛ի գիրկս սրբոյ Կուսին, կամ կուսական կաթինն դիեցիկ, կամ՛ի ծոց նորա հանգուցեալ քաղցր ՛ի քուն, կամ փակեալ ՛ի մաքուր արգանդին, ... զկայ առնուամ՛ ՛ի խորհրդեան ասա՝ որ ՛ի դէպ ևս է ժամանակիս, զի յետ ոչ բազմաց լինչ աւուրց առաջի կայ մեզ ծնեալ զծնունդ Փրկչին մերոյ, և նկատեմք զնա արդ յարգանդի սրբոյ Կուսին... ի խորհել խմամ զանապատ բագրելին պարագրեալ ՛ի նմա և զանբաւելին ամփոփեալ, ՛ի խորհել խմամ զազատիչն իմ յանձուկ և ՛ի կամաւոր բանտ, ասեմ երբեմն յանձին. Էր իսկ հնար կամել Տեառն Թողուլ բանսարկուին, և և վայրկեան մի զտառաճարն սուրբ սահմանեալ վասն որդւոյ իւրոյ, զտապանակն սուրբ՝ ուր առնելոց է նա զբնակութիւն իւր ընդերկար և զհանդիստ զարմանահրաշ, զառագաստն կուսական՝ ուր կատարելոց է զանապական և զհոգևոր հարսանիս ընդ բնութեանս մերում: Այսպէս խօսիմ ընդ իս, և ապա դարձուցանեմ զբանս իմ առ Փրկիչն և ասեմ. Աստուածորդիդ մանկացեալ, մի՛ Թողուր, մի՝ ներեր դիւին անսուրբ առնել զմայր քո, մի՝ մերձենալ յայն՝ զոր բնակութեամբդ քով առնես արքայութիւն. արձակեա զբանիս քո ՛ի գլուխ նորին. նախանձ քո աստուածասաստ պաշտպանեսցէ պատուոյ և անմեղութեան մոր քո: Մանուկ ամենօրհնեալ, քեզ երգեն յաւիտեանք, դու յառաջ քան զամենայն ժամանակս ես. ՛ի յղանալ նորա տեսանելիր զնա ՛ի բարձանց երկնից, դու լինքն յօրինեալիր զմայրն նորա. դու փչեցեր ՛ի նա շունչ կենդանի, որով հոգևորեցաւ մարմին նորա՝ յորմէ քոյդ կազմեցոյ էր: Ո՛հ, նայեաց, խնամատութիւնդ յաւիտենական, զի ահա կայ նա յայսմ վայրկենի ՛ի վտանգ ապականութեան ՛ի զարհուրելի մեղաց, անկանելոյ ընդ տերութեամբ դիւին: Պահեա զնա ՛ի թշնաւառութենէ աստ բարութեամբ քով, սկսիր

մեծարել զմայր քո, արա զի լիցի նմա աստանին ի բարի՝ լինել մայր որդւոյ՝ որ յառաջ է քան զինքն. զի է իսկ աստանին մայր քո, և այժմէն իսկ դու որդի նորա, քալ խնացեալ զնորհուրդն մեծ:

Ձմարիտ իցեն այս բանք, ո՛ հաւատացեալք. նա- խանձ արդեօք ծայրայեղ տայ լինել յանդգնել յայս- պիսի բանս:— Ամենևին ոչ. Աստուածամայր է նա այժմէն. Աստուածորդին այժմէն նորա է որդի. է իսկ, չէ արդեամբք, ոչ ըստ յերկրաբնութեան մարդկային երից, այլ ըստ աստուածային կարգաւորութեան, այլ ըստ յաւիտենական նախատահմանութեան: Մխա դիք կարգի բանիցս, աղաչեմ:

Ի հաստատել ինչ Աստուածոյ ի ծածուկ խորհրդեան իւրում, բազում ժամանակօք յառաջ քան զարդիւնս երկին՝ սուրբ են սուրբ գիրք համարել զայն երբեք եղեալ: Զոր օրինակ Եսայի ասէ զՔրիստոսէ. Մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ: Եւ զինչ կամիցի ասել, զի չէ ևս էր ծնեալ յայնժամ Քրիստոս. այլ չհամարէը մարգարէն զնոր- հուրդս Աստուածոյ որպէս զմարդկան, որ բազում ինչ դնեն ի մոռ ի նաւթիր. այլ ընդ հակառակն՝ կամացն Աստուածոյ անվրէպ և անհրաժարելի են գործք: Այսպէս լուսաւորեալ մարգարէն ի բարձանց, և նախատեսեալ զնորհուրդն մեծ Աստուածոյ՝ առաքելոյն զՈրդին իւր յաշխարհ, ցնծայ ի հոգի իւր, և համարի անդստին զնոյն յարդիւնս եկեալ, զի տեսանէ վճռեալ զայն անդարձ: Եւ է իսկ ի դէպ սրբոց մարգարէիցն այս եղանակ խօսից, և յուցանէ զմեծվայելչութիւնն Աս- տուածոյ՝ որ խօսէրն ի նոսին: Զի որպէս մեծն Տերտու- ղիանոս ասէ. «Վայելուչ իսկ է աստուածեղէն բնու- թեանն, որում չիք խորը ժամանակի, ունել որպէս եղեալ զոր հրամայէն. զի յաւիտեանք առ նմա անփո- փոխելի ունին զժամանակ»: Վասն որոյ Ձմարիտ է, և ոչ սխալեմ ի հաստատելն, զի Կոյսն ամենօրհնեալ

յառաջնմէ վայրկենէ կենաց իւրոց էր մայր Փրկչին, ոչ ըստ խօսից մարդկան, այլ ըստ պատգամացն Աստուածոյ, այսինքն ըստ սովորական բարբառոյ սուրբ գրոց, որպէս լուայք:

Զայս իմաստասիրութիւն կազդուրեմ այլով ինչ վարդապետութեամբ Հարց, զոր աքանչելապէս բացա- տրէ նոյն ինքն Տերտուղիանոս. «Որդին Աստուածոյ, ասէ պարս այս մեծ, սահմանեալ առնուլ մարմին ըստ մերում նմանութեան ի հասանել ժամանակին, հաձեցաւ ան- դըստին ի սկզբանէ հաղորդել ընդ մարդկան. սովին խորհրդով, լինելոր յաձախ յերկնից առ մարդիկ ի հնուսն, և ի կերպարանս մարդոյ խօսէը առ նահապետս և առ մարգարէս»: Եւ համարի Տերտուղիանոս զայսոսիկ այլևայլ երևմունս որպէս պատրաստութիւն ինչ մարդե- ղութեան, և որպէս հանդերձանս մեծի խորհրդոյն՝ որ ապագային սկսանէր. «Ըստ այսմ օրինակի ընդելանայր, ասէ, Աստուած ընդ մարդկան, և եթէ օրէն իցէ ասել, ուսանէը լինել մարդ. հաձոյ Թուէը նմա անցանել ի սկզբանէ աշխարհի ընդ կիրթ մարդկութեան, որ ի լման ժամանակաց լինելոցն էր մարդ»: Կամ մանա- ւանդ, առ ի խօսել արժանագոյնս զբարձր խորհրդոյն, ոչ ինքն ընդելանայր, այլ զմեզ ընդելացուցանէր՝ մի երկնչել ի լսելն զԱստուած մարդացեալ. ոչ ինքն ու- սանէր, այլ մեզ ուսուցանէր՝ վարել ընդ իւր ընտանե- բար, ի բաց դնելով քաղցրութեամբ զմեծվայելչու- թիւնն ահաւոր, և զիջանելով առ տկարութիւն մեր և առ ողջոյութիւն»:

Այս էր խորհուրդ Փրկչին. և ի վարդապետութենէ սուրբ Տերտուղիանոսի առնուամ իմաստասիրել զբանս իմ, որոց ինդրեմ միտ դնել, զի լիցին թեթև ձեզ ի ընծութիւն: Սուրբ Կոյսն էր մայր Աստուածոյ անդստին յառաջնին վայրկենէ հոգևորելոյ իւրոյ, որպէս արդ իսկ ասեմք. էր Աստուածամայր ըստ խորհրդոյն Աստուածոյ,

ըստ կարգի նախախնամութեան, ըստ օրինաց անփոփոխելի յաւիտենականութեան, որում չիք ինչ նոր, որ բովանդակէ ՚ի միութեան իւրում զամենայն յերկնիսն ժամանակաց: Յիշեցէք արդեօք զդեղեցիկ բանն Տերտուղիանոսի, որ բացայայտէրն զայս ճշմարտութիւն. արդ ըստ այսոցիկ կարգաց, և ոչ ըստ մարդկայնոց գործէ Որդին Աստուծոյ, ըստ յաւիտենական կարգաց, և ոչ ըստ օրինաց ժամանակի: Ուր զԱստուածորդւոյն են բանք, մի ինձ զմարդկային օրինաց ինչ ՚ի դէմս ածէք, խօսեցարուք զաստուածային կարգաց: Ասա սուրբ Կայն ըստ աստուածային կարգաց էր մայր Որդւոյն Աստուծոյ անգստին ՚ի յղութենէ իւրմէ, և առ մայր իւր զնա ունէր Որդին Աստուծոյ, և էր իսկ այնպիսի առնա: Ցուշի կալարուք, խնդրեմ, զճշմարտութիւնս զայսոսիկ, զի յոյժ կարեւորք են վասն առաջնակայից բանից:

Յառաջ մատուսցուք զբանս: Ուսաք արդ ՚ի Տերտուղիանոսէ՝ զի բանն Աստուած յառաջ քան զբաղումս ժամանակս, մինչ չէ զգեցեալ մարմին մարդկային, բերկրեր լեալ կանխաւ ընդ կերպարանս և ընդ զգայութիւն մարդկային. այնչափ ցանկալի էր նմա, լչնեցից ասել, մերս թշուառ բնութիւն: Արդ ո՞ր զգացումն բնականագոյն մարդոյ քան զսէր որդիական. ապա Որդին Աստուծոյ վաղագոյն յոյժ քան զմարդեղութիւն իւր սիրէր զՄայն սուրբ որպէս մայր. բերկրէր սիրոյն այնուհետ, ոչ գաղարեր ՚ի հոկելոյ ՚ի վերայ նորա, պահպանէր զտաճար իւր յանիծից անարգոց, գեղազարդէր զնա պարգեւօք իւրովք, և ընդոյր ընդհանրապէս անգստին յառաջին վայրկենէ կենաց նորա մինչև ՚ի չունչն վերջին, որով կատարեաց նա զկեանս իւր: Զայս կամէի զհետ բերել յիմաստուն բանից Տերտուղիանոսի. և Թուի ինձ հետեւութիւնս այս ճշմարիտ յոյժ, և հաստատէ ըստ իս հզօրեղապէս զանարատ յղութիւն Կուսին. և յերաւի այս բան անգիտելի լեալ զօրութեամբ աղդէ ՚ի միտս

երկիւղածաց. և յետ մասանց հաւատոյ՝ չիք ինչ գոյացեալ հաւատոյ քան զայս:

Վասն որոյ ոչ ինչ են զարմանք, զի հռչակաւորն կաճառ աստուածաբանից ՚ի Փարիզ՝ պարտ ՚ի վերայ դնէ կաճառորդաց իւրոց պաշտպան կալ այսմ վարդապետութեան: Կաճառ դերիմաստ, բարեպաշտութիւն քո այդ առ սուրբ Կոյն՝ մի ՚ի գեղեցկագոյն ժառանգութեանց, զոր ասանդեցին քեզ Հարք քո. պայծառացուսցէ զքեզ Տէր ՚ի սպառ. և այդ խանդաղատելի եռանդն քոյին առ Տիրամայրն ՚ի փառս Որդւոյն, դարուց ՚ի դարս յաւերժացուսցէ զհամբաւն գերահռչակ՝ զոր հրաշալեան երկասիրութիւնք քոյոցդ կաճառորդաց ծաւալեցեն ընդ տիեզերս: Իսկ ես, ո հաւատացեալք, զմայլմամբ կատարեմ այսօր զդիտաւորութիւն նորա. և կաթամբ նորա սնեալ հնազանդիմ մտադիւր հրամանաց նորա. մանաւանդ զի և սրբոյ եկեղեցւոյ այս են կամք. զի մեծամեծար ընծայէ պատիւ յղութեան Տիրամօրն: Եւ թէպէտ ոչ պարտ ՚ի վերայ մեր դնէ հաւատալ զայն անարատ [1], այլ յայտ առնէ մեզ զհաճութիւն իւր ընդ այն հաւատս մեր: Են ինչ ինչ՝ զորս հրամայէ, որպէս զի ցուցցուք զհնազանդութիւն մեր. և են՝ յորս յորդորէ, որպէս զի հանդէս արասցուք սիրոյ մերոյ առ ինքն: Բարեպաշտութեան մերոյ անկ է, եթէ լցեմք ճշմարիտ որդիք եկեղեցւոյ, ոչ միայն հրամանաց նորա հնազանդել, այլ և աւնարկութեան կամաց այնպիսւոյ մոր բարեշաւի և սրբոյ: Թուի ինձ տեսանել զամենեսին զձեզ յօժարեալս ՚ի սոյն հաւատս. այլ ոչ ինչ օգնէ լինել նախանձաւոր անարատութեան Տիրամօրն, եթէ ոչ ջանասցուք բերել յանձին մաքրութիւն: Ոչինչ երկբայիմ, զի առաւել ևս յորդորեսջիք ՚ի սոյն՝ սուղ ինչ խմաստասիրութեամբս, որով հնդեցից զբանս իմ. այսպէս յուսամ օգնականութեամբն Աստուծոյ:

1 Գանգի չէ ճշմարտութիւնս այս վճռեալ էր յաւուրս Պոսիւէի:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Լուարուք ցայս վայր, եղբարք իմ, զպատճառս՝ որովք ջանացայ ցուցանել ձեզ զանարատութիւն յղութեան սրբոյ Կուսին, յոր ի բաղում ժամանակաց հետէ և աստուածաբանք Եւրոպայ երևելիք ձգտին: Գիտէք զգերազանցութիւն սրբոյ Կուսին, և զարժանաւորութիւն գերարգոյ պատուոյ, և առանձին շնորհաց. սակայն չև ևս իչխեաց եկեղեցի սահմանել զպատութիւն նորա ի սկզբնական արատոյ. և ոչ սակաւք՝ այլ աւագամեծարք՝ ոչ ընդունին զայն: Եկեղեցի ոչ միայն Թողու զնոսա ազատ, այլ և չներէ ումեք գատապարտել: Ի միտ առէք, ո՛ հաւատացեալք, քանի՞ անհրաժեշտ և անխուսելի է ապականութիւն բնութեան մերոյ, մինչև երինչել եկեղեցւոյ ազատ կացուցանել անոն և զգերակայեալն քան զմենայն արարածս. ո՛վ Թշուառութիւն, ո՛վ աղետք, յոր ընկղմեալս եմք. աւա՛ղ, տղայք դեռևս գոլով անզգաստք և անչարժք, ապստամբք էաք Յաստուծոյ. չև տեսեալ զդեղեցիկս լոյս, գատապարտեալք էաք ի բնութենէ գատահինքաւ աստուածային արդարութեան ի բանս աղջամղջին, ի խաւար չջափելի, ի խաւար գժոխոց զարհուրելի: Եւ կարի իրաւամբք. զի գատաստանք քո արդար են, Տէր, Աստուած յաւիտենական, Թագաւոր յաւիտենից, և միահեծան տիեզերակալ. ո՞ զմեզ ի Թշուառութենէ աստի ազատեաց, ո՞ զապստամբեալքս հաշտեցոյց, ո՞ զորդիքս բարկութեան կոչեաց յորդեգրութիւն Աստուծոյ: Մարգարէն Յովհան ի փորոյ կիսոյն՝ որ եկուսն զնա, ձայն եբարձ յերկինս ի սրտէ. կարգացաք մեք առ քեզ, Տէր, ի խաւարչային բանտէ անտի, ի խորոց անտի դժոխոց՝ ուր մանկութիւնս մեր

Թաղեալ կայր: Չէր մեր անդ ոչ բարբառ, և ոչ զգայութիւն. մեզք մեր կարգային վրէժխնդրութիւն, և Թշուառութիւն մեր յեսին աղաղակէր ողորմութիւն: Ողորմեցար ի մեզ, հաճեցար ածել զմեզ յաւազանն անմահութեան, ուր լուացեալ յաղտից առաջին ծննդեան մերոյ, ընկալաք ծննդիւ երկրորդ նորահրաշ, ոչ ևս ի կամաց առն, ոչ ևս ի կամաց մարմնոյ, այլ ի Հոգւոյն սրբոյ, և ի ջրոյ՝ սրբեցեալ կենդանարարդ բանիւ: Խոստովանիմ, զի աղբիւրս այս ջրոյ կենդանւոյ բղխէ վասն ամենեցուն՝ որոց կամեցար պատրաստել դեղ ի սուրբ ատաղանին. այլ քանիք հանապազոր վաղամեռիկք զրկին յաւերժաբար յերանութենէ աստի, որումք մեք եղաք արժանի: Զինչ արժանիք էին ի մեզ. ուստի՞ խոհրս այս:— Ոչ արդարև յարժանաւորութենէ մերմէ, զի ամենեքին ի նոյն մեղս յղացեալ էաք: Այրեաք յարժանաւորութենէ ծնողաց մերոց. այլ քանիք ի բարեպաշտ ծնողաց, աւա՛ղ, ի ցաւոց սրտի բարբառիմ, քանիք յաւաքինի ծնողաց ոչ ընդունին զշնորհս զայս: Թերևս կարդ բնութեան եղև լինել բարեբար քան այլոց. ո՛վ տգիտութիւն, ո՛վ ապշութիւն, և որպէս ոչ տեսանես զձեռն ամենակալին՝ որ անօրինէ ըստ հաճոյս իւր զամենայն. չդիմիցես, զի առ գերագոյն ինչ պատճառ ուղղէ զամենայն: Չիցէ կուրութիւն այլանդակ՝ կամել վասն փրկութեան մերոյ շնորհապարտ գտանել պատահման իրաց և եղական պատճառաց, քան ողորմութեանն Աստուծոյ յաւաքագոյն խորհրդով սահմանելոյ: Զինչ ապա ունայ լինէ ասել, ո՞ր լինել ապաստան:

Հառաչեմ, ո՛ հաւատացեալք, յոգւոյ հանեմ ի խնդիրս յայս. խոստովանիմ, զի չգիտեմ զինչ ասել, չունիմինչ ածել պատճառս: Գիտեմ և եթ հաւաստեաւ, զի որ ինչ և պատճառքն լցեն այսր անհասանելի ընարութեան, անհնար է՝ թէ չիցէ արդար: Այլ զինչ օգուտ իցէ խնդրել զպատճառսն, զորս աստուածա-

խնամ տեսչութիւն Թաքուց ՚ի մէնջ. չեցէ՛ շատ ճանաչել մեզ, զի եթէ եղաք մեք արժանի ընորհաց Սրբուհեան, բարուհեանն ևեթ Աստուծոյ եմք վասն այնորիկ ընորհապարտք: Խնդրեսցէ որ կամին՝ զսատճառան. ճգնեսցէ որ կամին՝ ՚ի հետազօտութիւն գաղտնեացս այսոցիկ գաստատանաց. իսկ ես չկամիմ գիտել այլ պատճառ բարեբաստութեան իմոյ, բայց միայն զբարութիւն Աստուծոյ, օրհնեցից միշտ զողորմութիւնս նորա ցկեանս իմ, օրհնեցից զանուն նորա: Զայս միայն գիտեմ, և զայս միայն գիտել ցանկամ. «Որ միանգամ աւելի ինչ գիտել ցանկայ, դիմեսցէ առ Հմտագոյնս, ասէ սուրբն Օգոստինոս, այլ զդոյզ լեցի՝ զի մի յանդգնելոց պատահեսցէ»:

Այլ առողջացեալք սիրտութեամբ ՚ի սկզբնական մեղաց, ոչ արդեօք զննացուածս ինչ այնորիկ յանձինս բերիցեմք. կարիցեմք անցուցանել զկեանս մեր յապահովի: Մի՛ կարծէք, ո հաւատացեալք: Շնորհք սրբոյ աւազանին աղատեն զմեզ ՚ի յաւիտենական մահուանէ, այլ ի նաստակաւր և մահացու տկարութենից ներքոյ անկեալ դեռևս գտանիմք: Այսպէս հաճոյ եղև Աստուծոյ, բժշկել զամենայն զկերս իմ մի ըստ միոջէ, առ ՚ի լաւ ևս զգացուցանել ինձ զաղէտս՝ յորոց ազատեւ զիս, և զընորհս՝ որով փրկէ. այլ, եղբարք սիրելիք, լուարո՛ւք զհանգամանս հիւանդութեան իմոյ, և գտանիցէք անտարակոյս ոչ ինչ ընդհատ և զձերդ յիմմէս. զի զընութեանս մերոյ հիւանդութիւն զդամբ ամենեքելին՝ որ առաւել և որ նուազ, ըստ առաւել կամ նուազ հետևելոյ մերոյ ազդեցութեանց Հոգւոյն Աստուծոյ: Հէք եմ և թշուառ. ո՛ւր գտից բան բաւական առ ՚ի բացատրել զաղէտս իմ չարաչարս. վերաւորեալ եմ յամենայն զօրութիւնս հոգւոյ իմոյ, սպառեալ ՚ի զօրութենէ հաստատուր հարուածովք. զուր ճգնիմ, ոչ խորհիմ ինչ երբեք խորհուրդ արիական, որոյ ոչ ընդ հուպ ՚ի դերև ելնէ՝ զի ոչ արագիկ. ոչ կամիմ ինչ բարւոյ, որում ոչ ընդդէմ յարիցեն խղճք չարք. և ոչ սկսանիմ ինչ գործ առաքինութեան, որում ոչ մեղք ինչ խոչ ընդոտն արկանիցեն: Գան խառնին ՚ի ներքս գրեթէ միշտ հաճոյք ինչ անձնասիրութեան, և բաղում այլ ինչ կիրք անձնօթից թաքուցեալք ՚ի խորչս խղճի մտոց իմոց, որ է վիհ անյատակ՝ ինձ իսկ անղնելի: Թուի ինձ արդարև ղգալ ինչ յիս, որ կամի ամբառնալ առ Աստուած, այլ ղգամ վաղ ընդ փոյթ բեռն իմն հակառակ ցանկութեանց՝ որք ձգեն զիս ցվեր, և գերեն. և առանց օգնականութեան, մանն այն յիս տկար՝ որ Թուի բերիլ ՚ի բարին, չկարէ ինչ գործել յաջատութիւն իմ. կիրք ևեթ նա ղգատապարտութիւն իմ: Ի լսել իմում երբեմն խօսելոյ զնորհրդոց արքայութեանն Աստուծոյ, ղգամ եռանդն ՚ի սրտի, և Թուի ինձ կարել գործել զարմանալիս, խորհուրդս մեծամեծս դնեմ ՚ի մտի. այլ ՚ի ձեռն արկանել յայնս, դոյզն ինչ փչումն դիւրին շնչոցանէ զբոցն յեղյեղուկ և անկայուն, որ ոչ ձարակին ինչ, այլ ընթանայ թեթևակի ՚ի վերոյ: Զի՞նչ ևս. հիւանդ եմ բոլորովին, և ոչ ղգամ ինչ չար. ՚ի տագնապ մահու կամ, և կամիմ գործել որպէս քաջառողջ. չգիտեմ իսկ ողբալ զաղէտս իմ, և ոչ խնդրել օգնութիւն ՚ի Փրկչէն, ապիկար և հպարտ, տկար և յանդուգն. Այլ ի փառս պէաղ եմ, ձի ապրեցոյցն պիս ՚ի մարմոյ սոպի մահու: Ուստի ապա լեցի ինձ գտանել օգնութիւն. ո՛ւր գտից բժշկի. կամի երբեմն ինձէն գտանել առողջութիւն, գուն գործէ ՚ի յառնել. այլ զուր վաստակ նկուն արար զիս փոխանակ սփոփելոյ. որպէս հիւանդ հէք մահացու՝ որ ոչ ևս գիտէ զինչ առնել, կարծէ սփոփիլ ՚ի յառնելն, վասնի և զննացուածք ուժգին ՚ի ձիգն ընդունայն՝ տկարութեան իւրում ամբերելն. և յետ բաղումս տաժանելոյ ՚ի ձգել ՚ի քարչ զանգամն ծանրաբեռինս յետին ձգամբ՝ անկանի անդրէն որպէս վէմ անչարժ կիսամեռ, առաւել ևս անզօր և ապիկար, «Վէրս ՚ի վերայ վերոյ յա-

ՙելէալ՚» որպէս սուրբն Օգոստինոս ասէ. այսպէս և կամք իմ անօգնական ՚ի հզօր ձեռանէ: Այլ ի պատասխան եմ Աստուած իմ. ուստի՞ լինի ինձ գտանել օգնութիւն:

Իմաստասիրութիւն ցուցանէ ինձ ՚ի հեռուստ ՚ի տուփս գեղոյ գեղեցիկս, ամենայն պերճ զարդուք հռետորականին պաճուճեալս, ապրատամ լինչ արուեստակեալ խրտովք գեղեցիկ այլ խաբուսիկ առածիւք: Օրէնք հնչեն յականջս իմ հզօր և մեծատատ բարբառով. քարողք Աւետարանին ազդեն բանս կենաց յաւիտենականաց. և այլ ոչ ինչ օգուտ ընծայեն ինձ այս ամենայն հանգերձանք: Իմաստասէրք շաղփաղփք, հանգոյն խաբեբայ բժշկաց վնասակարաց Թովլեն և Թմբրեցուցանեն առ ժամանակ մի զախտն, և ՚ի սուտ անդորրու անդ ազդեն Թոյն ծածուկ ՚ի վէրսն: Ցուցանեն զառաքինութիւն այնպիսի դիւրին ինչ և զմայլելի, ոսկեզօծեն զնոյն այնպիսեաք ճարտար հնարիւք, զի համարիմ յաճախ կարել ինձէն լինել առաքինի, փոխանակ ցուցանելոյ ինձ զգերութիւն իմ և զակարութիւն: Եղո՛ւկ ինքնահաւան իմաստասիրութեանդ, չիցէ՛ ինձ շատ յաղէտս տկարութիւն իմ առանց գոռոզութեան: Իսկ օրէնք, Թէպէտ և արդարք, Թէպէտ և սուրբք, ընդունայն ցուցանեն ինձ զբար, ուր ոչ գտանեմ զմիակն գեղեցիկ՝ զոր խնդրեմ. ՚ի տագնապի ևեթ կացուցանեն զիս, եթէ չիցէ յիս հոգի շնորհաց: Ոչ զփորձ իսկ առեալ գիտեմ, զի յամառիմ ընդդէմ օրինաց. որ արգելու ինձ ինչ, մէկ զիս յայն. շատ է շներել ինձ որ զինչ և իցէ, առ ՚ի գերգռել զիս յայն. հրամայել ինչ ինձ՝ է յետս կացուցանել զիս յայնմանէ. հոգի իմ յետսամիտ է, անխզաղաստեր, ստահակ, և գժոխըմբեր կրթուԹեան. որչափ առաւել հրամայի, այնչափ առաւել հետս: Եւ համառօտիւ՝ որ ինչ ընԹեռնում, որ ինչ լսեմ, յորդորակք, խրատք, յանդիմանուԹիւնք սիրալիրք, սպեղանիք են վէր ՚ի վերոյք՝ որք ոչ արմատաբի խլեն յինէն զբարն.

կարօտիմ բժշկուԹեան սրտիս, ուր է աղբերակն ախտաժեռտուԹեանս. ո՞ր լինի ինձ գտանել բժիշկ ճարտար, որ աչխողակի չօշափեսցէ առ ՚ի գարման զմանն մարմնոյս ախտաժէտ և փափուկ:

Փրկիչ իմ Յիսուս, դու ես բժիշկն՝ զոր խնդրեմ. բժիշկ ճշմարիտ և ողորմած, որ ոչ կարգացեալ յուսմէքն՝ հաճեցար իջանել յերկինից ՚ի յերկիր յայցելուԹիւն հիւանդաց քոց տաժանաւոր վաստակօք: Ի ձեռս քո յանձն առնեմ զիս. տուր ինձ այսօր առաջադրել հաստատուԹեամբ՝ ՚ի քեզ միայն յուսալ, զքո օգնուԹիւն միայն սրտեռանդն խնդրել, մտադիւր ընդունել ՚ի քէն դեղ. եԹէ ոչ դու, Տէր, բժշկեսցես զիս, եղէց անբժշկելի. Ի՞նչ պիտի, Տէր, և ի՞նչ պիտի: Սո՛ւր ո՛ր և դիմեցից, բարեբեր ևեԹ ցվէրս իմ վէր ՚ի վերոյ. դու միայն արմատաբի ապաքինես, դու միայն շնորհես առողջուԹիւն յաւերժական. դու ես փրկուԹիւն իմ և կեանք, դու քաջալերուԹիւն իմ և փառք. դու յոյս իմ յաշխարհի աստ, և պսակ ՚ի հանդերձեալսն:

ՊՈՍԻԽԷԻ

ՄԵԼԴԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԴԱՐՁԵԱԼ

ՅԱՆԱՐՕՏ ՅՂՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ԿՈՒՍԻՆ

Աչար ընդ իս ամձամձս
հղօքն։

Ղեւ. Ա. 49։

Որ ինչ ոմնէ այսօր եկեղեցի, որ ինչ քարոզք Աւետարանին ուսուցանեն հաւատացելոց, որ ինչ և ես ընդհօքն Աստուծոյ յուսամ ուսուցանել ձեզ յաղագս անարատ յղութեան սրբոյ Կուսին, ՚ի բաղմաց հետէ ձգնէ զմիտս աւադադունից արանց. և ոչ երկմտեմ ՚ի խոստովանել, զի յամենայն այլ և այլ խնդրոց՝ զորոց ՚ի ժողովս հաւատացելոց լինին բանք, դժուարագոյն ինձ այս թուի խնդիր։ Սակայն ասել զայս՝ ոչ ՚ի նախանձ նմանութեան ճարտարախօսաց, որ բանիւք յանդիման առնեն զամբութիւն առաքինայ նիւթոյն՝ առ ՚ի պայծառագոյն ցուցանել զճոխութիւն հնարագիտութեան իւրեանց և զալծոյութիւն հռետորական. ոչ այս են խորհուրդք իմ, ո հաւատացեալք։ Գիտեմ՝ զի չէ արժան այսպիսեաք արտաքին խորհրդովք սկիզբն առնել սրբազան ճառից։ Այլ քանզի ցանկամ ցուցանել ձեզ՝ քանի՞ սուրբ, քանի՞ անմեղ, քանի՞ հրաշափառ լեալ է յղու-

Թիւն սրբոյ Կուսին, նկատեմ նախ զգժուարութիւնս՝ որ այսմ ընդդէմ ելանեն. որպէս զի ամենայն երկբայութիւն 'ի բաց թարձեալ, ըղձալի Հմարտութիւն լրացն հատատեսցի:

Ի խորհել խնդամ, տեսրք իմ, զահաւոր վճիռ Աստուածային՝ վասն ամենայն մարդկան՝ Անկեալին մեղան... ամենայն Ադամ... մինչ յանդանօք յամենայն մարդիկ գտանալոյն... 'ի մէջ մարդոյ յամենայն մարդիկ պարծելոյս նահ. ոչ գիտեմ որպէս 'ի բաց առնուլ զրք յայսպիսեաց անամփոփելի բանից: Այլ որ բացայայտագոյնս տան ինձ գիտել զհանրականութիւն անհնարին, են երկքին այլ և այլ բացատրութիւնք՝ որովք սուրբ գիրք յանգիման առնեն մեզ զիշխատութիւն ծննդեան մերոյ: Նախ՝ օրէնս լինն ցուցանեն անհրաժեշտ՝ զոր և կոչեն օրէնս մահու, և դատաւինք լինն 'ի վերայ ամենեցուն եգեալ անխտիր, ընդ որով ամենայն ոք ծննդեամբն ևեթ գտանի անկեալ. և ո՞ կարիցէ զերծանել յայնմանէ: Երկրորդ՝ ուսուցանեն մեզ սուրբ գիրք՝ զի է Թոյն լինն ծածկեալ և անխմանալի, որ բղխեալ յԱդամայ՝ ծաւալի յամենայն սերունդ նորա, ժանտախտ լինչ մահաբեր և անխուսելի, զոր սուրբն Օգոստինոս կոչէ ապականութիւն հնոյ մահուն. և այս իսկ է՝ որ հարկ առնէ նմա ասել զբովանդակ ազգ մարդկան ապականեալ նովաւ. և ո՞ կարիցէ գտանել լինչ անգիտայ ընդդէմ նորա և ազգդ այսր Թուոյ: Եւ երրորդ՝ զի ամենայն որ ծծէ զօդս զայս ժանտ, ձգէ յինքն հարկաւ ածած լինչ՝ որ անպատիւ առնէ զինս, եղծանէ 'ի նմա զպատկերն Աստուածոյ, և կացուցանէ զինս ըստ Սատանային որդի Բարիւնեան. և որպէս մարթ լցէ զառաջս առնուլ այսպիսւոյ չարի, որ ըստ նորին Առաքելոյ բնաւորեալն է 'ի մէջ անգստին 'ի յղութենէ:

Այսոքիկ են գժուարութիւնք՝ որ ընդդէմ ելանեն առաջարկութեանս, յուցանելոյ ձեզ այսօր զղութիւն սրբոյ Կուսին անմեղ և անարատ: Գիտեմ զի գժուարին

է յաղթել այսոցիկ, որ սատանեցուցին զբազմաց մեծամեծ արանց գիտուս, և ածին 'ի հակառակ կարծիս՝ զորս ոչ դատապարտէ եկեղեցի: Սակայն որ ինչ երկբայք և առարկիցին ինձ, չկարեմ ընդունել արտաքոյ զղութիւն դշխոյին երկնի և երկրի, որում անկ է ամենայն ընդոհօք գերազանցել: Ձգնեցայց ըստ կարի լուսաբանել:

Անժխտելի են օրէնք մահու, յոր դատապարտի ամենայն ոք 'ի ծնանելն. այլ դադարեն և հանրագոյնք յօրինաց 'ի ընդհս գերազանցելոյ ոմանց: Ընդհակ ինքսակար և մահաբեր հարկանէ զմարդիկ, այլ հնար է երբեմն զերծանել անտի զգուշութեամբ. արտաքնագական կացուցանէ զմեզ 'ի բնութենէ Թշնամիս Աստուծոյ, այլ կարեն ընդհքն նորա զառաջս առնուլ չարին. խնդրեմ միտ դնել առաջարկութեանս: Ընդդէմ օրինաց՝ գոն ընդհք, ընդդէմ տպականութեան՝ հեռացումն, և ընդդէմ բնական չարեաց՝ խափանումն. վասն որոյ առաջի կայ ինձ ցուցանել ձեզ զՏիրամայրն հանգիպեալ ընդհսի, զՏիրամայրն զատուցեալ յապականութենէ, զՏիրամայրն նախապահեալ. հանգիպեալ ընդհսի ընդդէմ հատարակաց օրինաց. զատուցեալ 'ի համաչխարհական տպականութենէ. նախապահեալ ընդհսք 'ի բարկութենէ՝ յոր 'ի ծնէ անկանիմք: Առ 'ի ընդհս զատուցութեան յօրինաց, դիմեմ յամենակարողութիւնն Աստուծոյ՝ որ 'ի բազում այնքան նուագս տպատ կացոյց զինս յօրինաց բնութեան: Առ 'ի բաց կացուցանելոյ յազգէ մարդկան՝ բողոքեմ յիմաստութիւնն Աստուծոյ, որ ակն յայտնի զատոյց զինս յայլոց, վասն մեծամեծ և անքննելի խորհրդոց իւրոց 'ի վերայ նորա յառաջ քան զամենայն յաւիտեանս: Եւ առ 'ի նախապահել զինս 'ի ցասմանէ՝ վերագոչեմ առ սերն Աստուծոյ յաւիտենական, որ ողորմեցաւ 'ի նա յառաջ քան զլինել նորա որդի բարկութեան:

Զայսոսիկ երիս ընորհս տայ մեզ Տէրամայրն ՚ի միտ առնուլ ՚ի հրաշալի օրհնութեանն, ուր ասէ. Աչքս ընդ ի՛ս ձգամբեա՛ հղօրն: Յամենակալ զօրութենէն առնէ սկիզբն՝ ասելով Հզօրն. այլ զի՞նչ արար ընդ նա ամենակալն. ո՛հ, արդարև ձգամբեա՛: Տեսէք, զի ձանաչէք զանձն զատուցեալ յամենեցունց՝ մեծամեծ և խորին խորհրդովք, որովք իմաստութիւնն Աստուծոյ նախասահմանեաց: Եւ ո՞ զմեծամեծս զայսոսիկ կարէր ներգործել, եթէ ոչ սէրն Աստուծոյ յաւիտենական, սէրն այն միշտ ներգործական, միշտ արգասաւոր, առանց որոյ անգործ մնայր զօրութիւնն Աստուծոյ, և իմաստութիւնն անսահման՝ որ բովանդակէ յինքեան զամենայն գնորհուրդս Աստուծոյ՝ ոչ ՚ի լոյս ածէր զինչ. Աչքս ընդ ի՛ս ձգամբեա՛: Սա միայն բանայ զծոցն Աստուծոյ առ արարածս իւր. սա է պատճառ ամենայն էից, և սկիզբն ամենայն պարգեւաց: Այս սէր ապա, ո՛ հաւատացեալք, այս սէր ամենապարգեւ զառաջս կալաւ ամենայն չարեաց ՚ի յղութեան սրբոյ Կուսին, նախապահեաւ զնա ՚ի սկզբանէ ՚ի սրբութեան: Զայսոսիկ այսպէս հաստատեալ յառաջագոյն, համարիմ լինով զբնաբան իմ բացատրեալ, և եղեալ կատարեալ զներբող երջանիկ յղութեան սրբոյ Կուսին, եթէ կարացից ցուցանել ձեզ յերիս մասունս ճառիս, զի ամենակարողութիւնն Աստուծոյ ազատ կացոյց զնա ՚ի հասարակաց օրինաց. զի իմաստութիւնն Աստուծոյ զատոյց զնա ՚ի հասարակաց ապականութենէ, և զի յաւիտենական սէրն Աստուծոյ զառաջս կալաւ ողորմութեամբ զբարկութեանն՝ որ յառնէր ընդդէմ ողորմութեան նորա: Զայսոսիկ առաջի կայ ինձ ցուցանել ձեզ օգնականութեամբ ընորհացն Աստուծոյ. և ապա անցեալ ՚ի հրահանգս, ցուցից ձեզ յամենայն հաւատացեալս զսպատակեր երեցունց ընորհացս այսոցիկ, առ ՚ի յորդորել զձեզ ՚ի գոհութիւն:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Մարթ է երկբայել՝ թէ առաւէլ էցէ երևելի իշխանութիւն ՚ի դնել օրէնս ՚ի վերայ ամենեցուն, թէ ՚ի պահել օրէնսդրին իւր տեղի ըստ հարկի իրաց իմաստութեամբ տալոյ ուժեք ազատութիւն յօրինաց անտի: Ի նախկին տեսութեան թուի այնպէս, զի պահեստս այս ՚ի բաց կալոյ ՚ի սովորական ընթացից՝ էցէ գերագոյն ինչ, և ցուցանիցէ ազատութիւն իմն ինքնօրէն ամենևին: Զի որովհետև չիք յաշխարհի իշխանութիւն գերագոյն քան զօրինաց, և իրաւունք օրէնսդրութեան է վեհափառագոյն և սրբազնագոյն ազատ ինքնակալութեան, չէցէ՞ մարթ ասել իրաւամբ՝ զի որ կարէ զոք ազատ կացուցանել յօրինաց, զիշխանութիւն նոցա արկանելով ընդ իւրայումն, էցէ յեղանակաւ իմն գերագոյն քան զիշխանութիւն օրինաց: Ըստ այսմ օրինակի գործէ Աստուած ազատութիւնք ՚ի սովորական օրինաց, առ ՚ի ցուցանել յայտնագոյն զամենակարողութիւն իւր. ուստի յայտ է, զի աստուգագոյն նշանակ գերագոյն իշխանութեան է կարողութիւն ազատ կացուցանելոյ զոք յօրինաց: Սակայն և ՚ի հակառակն ոչ ինչ ընդհատ զօրաւոր են պատճառք առ ՚ի ցուցանել՝ զի գերագոյն է իշխանութիւն օրէնսդրութեան. վասն որոյ պարտ է նկատել՝ զի օրէնք տարածանին յամենայն մարդիկ, իսկ ազատութիւն ՚ի սակաւս ոմանս ամփոփի. և եթէ ազատութիւն յամենեսին տարածանէր, ոչ ևս կոչէր ազատութիւն յօրինաց, այլ օրինաց փոփոխումն: Արդ հարցանեմ, տեառք. իշխանութիւն նուազ ամփոփեալ՝ չէցէ՞ նոյնպէս գերագոյն, և ոչ երևի առաւելագոյն իշխանութիւն ՚ի դնել օրէնս՝ որոց բիւրք բիւրուց

նեբքոյ անկանխելին, քան 'ի տալ աղատութիւն հնդից կամ վեցից ոմանց յօրինաց անտի ըստ պատճառաց ինչ. և ըստ այմ չիցէ պարտ ասել, զի առաւելագոյն ճանաչի իշխանութիւն 'ի հաստատել ինչ վճիռ, որպիսի է օրինադրել, քան 'ի գործել ինչ արտաքոյ կարգի, որպիսի է աղատ կացուցանել զոք յօրինաց:

Աւ 'ի միաբանել զերկոսին զայսոսիկ այլ և այլ իշխանութիւնս, ասեմ՝ զի յերկոսին ևս փայլէ հաւասարապէս մեծութիւն. զի որպէս կարի խմաստութեամբ ասէ սուրբն Թովմաս, մարթ է երկու ինչ զանազանել յօրինս. պատուէր հանրական, և կատարումն այնորիկ 'ի վերայ իւրաքանչիւրոյ: Զոր օրինակ դատապարտեաց Պրտաշէս զՀրեայս առ հաւատակ 'ի մահ. ահա հրաման հանրական. այլ կատարումն հրամանին անկանի՛ և 'ի վերայ Եսթերայ: Հրամանն այն հանրական է իշխանութիւն օրինացն, այլ յատուկնական կատարմանն է աղատութիւն. և քանզի նմին իշխանութեան՝ որ սահմանէ զհանրական օրէնս՝ անկ է կարդել զկատարումն այնորիկ 'ի վերայ իւրաքանչիւրոյ, զկետ դայ՝ զի դնել օրէնս, և աղատ կացուցանել զոք անտի, փոյթ են հաւասարապէս անկաւորք դերագոյն իշխանութեան, և չէ մարթ բաժանել զնոսա:

Զայս այսպէս հաստատեալ, մատիցուք արդ յառաջարկութիւն մեր: Օրէնս լիմ մահու 'ի դէմս ածէք դուք ինձ սահմանեալ վանն ամենայն մարդկան, և յաւելուք՝ զի աղատ կացուցանել անտի զսուրբ Կոյան, լցէ երդծանել զիշխանութիւն օրինաց. իսկ ես զհակառակն հաստատեմ ըստ ասացելոցս, զի իշխանութեան օրէնսդրի երկուս ունելով մասունս, ոչ ինչ ընդհատ երդծանի իշխանութիւն նորա 'ի չկարելն աղատ կացուցանել զոք 'ի կատարմանէ օրինաց, որպէս եթէ չկարիցէ տալ ինչ հրաման հանրական: Յայտնագոյնս ասացից. հաստատէ Աւրաքեանն՝ զի ոմն յանցանօք յամենայն մարդիկ դատապարտո-

ելիս. և չէն ինչ զարմանք՝ զի խօսի զիշխանութենէ օրինաց՝ որ՝ ըստ ինքեան վանն ամենեցուն է, այլ ոչ մերժէ 'ի բաց զաղատութիւն յօրինաց անտի՝ զոր կարէ իշխանն տալ ուժք, և ոչ զշնորհս դերագոյն իշխանութեան: Խոստովանիմ՝ զի զօրութեամբ իշխանութեան օրինաց դատապարտէր և սուրբ Կոյան որպէս զայլ ամենայն մարդիկ, այլ շնորհօքն Աստուծոյ և պահպանութեամբ և ամենակալ զօրութեամբ եկաց աղատ 'ի դատապարտութենէ անտի:

Այլ ասիցէք՝ թէ օրէնք ընդ աղատութեամբ արկեալ, կորուսանեն զօրբազան վերափառութիւն իւրեանց, և զամենայն զօրութիւն: Ձշմարիտ այդ այդպէս պատահէր, եթէ ոչ երեք ինչ զօրընթանային, որոց խնդրեմ միտ դնել. այս ինքն է դերազանցութիւն ազատեալոյն յօրինաց, հաստատութիւն 'ի վերայ օրինակի, և փոյթ յօրէնսդրին աննուազութիւն: Զառաջինն պարտիմք մեծարել վանն օրինաց. զերկրորդն վանն հասարակաց. զերրորդն վանն օրէնսդրին: Պարտիմք 'ի մեծարանս օրինաց չընդունել զաղատութիւն ուրուք, բայ 'ի գերազանցելոց քան զօրէնս. պարտիմք 'ի մեծարանս հասարակաց չճանաչել զոյն յուժք առանց օրինակի. պարտիմք օրէնսդրին, մանաւանդ Աստուծոյ օրինադրի, մեծարանս առաւել քան զառաւել: Վանն որոյ ուր երեքին այսոքիկ միաբանին, իրաւամբք մարթ է ակն ունել շնորհաց. տեսցուք զայսոսիկ 'ի Տիրամայրն:

Աղէ, զինչ երկիւղ լցէ 'ի տալ ամենօրհնեալ Կուսին զաղատութիւնս զայս. հետևանաւ ինչ անտի. քընեսցուք թէ արդարև լցէ ինչ ըստ այմ մասին տեղի երկիւղի, տեսցուք զինչ այնմիկ կարիցէ գալ զկետ: Գուշակիչք անտարակոյս զմիտս իմ, և երկնչիք 'ի նմանօրինակ այլոց աղատութենէ: Այլ ո՞ր լցէ գտանել միւս այլ Աստուածամայրս, ո՞ր այլ կոյս և մայր, որոյ ըզնոյն շնորհս մարթ լցէ անկ համարել՝ որպէս Տիրամօր

Կուսին: Ո՞ է որ չգիտէցէ՝ զի աստուածամայրութիւն նորա և յաւիտենական կոյրդութիւն ընդ Աստուծոյ ամբառնայ զնա յաստիճան գեր՛ի վերոյ անբաղդատելի: Արդ յայսմ անհատասարութեան որոյ հեռևանաց երկիւղ կարիցէ գտանել տեղւոյ. կամիցիք, զի օրինակաւ հաստատեցից զբանս իմ. այլ մի կարծէք՝ թէ կարացից գտանել յայլ՛ի սրբոց օրինակ ինչ մեծութեան Կուսին. զի վասն ամենեւին գերակայութեան նորա՝ ի զուր խնդրեսցէ ոք յայլուս ուսմէք շնորհս հանդոյն իւրոցն. և ուստի՞ ապա օրինակս ինչ գտանիցեմք՛ի հաստատութիւն բանիցս: Չարկ է անդստին՛ի նմանէ առնուլ. և ահաւասիկ որպէս խորհիմ:

Ի սկսանելոյ շնորհաց առնուլ ընթացս ինչ, հոսեն յորդագոյնս, որպէս է տեսանել՛ի պատմութիւնս իշխանաց. շնորհք զշնորհս մղեն, և օգնեն միմեանց: Եւ Փրկիչն մեր ասէ՛ի սուրբ Աւետարանին. Զի ամենայնի՝ որ առնիցէ, փոյթ նմա և յաւելցէ. այս ինքն զի ըստ սովորական օրինաց առատաձեռնութեանն Աստուծոյ՝ ոչ ինքնուրոյն գնան շնորհք, այլ գրաւականք են այլոց ևս բազմաց. և է տեսանել զայս՛ի սուրբ Կոյսն: Եթէ ընդ հասարակաց օրինօք էր նա, կարէաք Թերևս համարել՝ զինքն ևս յանօրէնութեան յղացեալ որպէս զայլ մարդիկ. այլ տեսանեմք զնա ընդհակառակն աղատ գրեթէ յամենայն բնական օրինաց, զի ըստ ուղղափառ հաւատոց, և ըստ կարծեաց վարդապետաց, առաւել ընդունելեաց, ծնաւ նա առանց երկանց, զի մարմին նորա չէր բնաւորեալ՛ի խնամս չարին, զի զգայութիւնք նորա չէին ապստամբք՛ի բանէն, զի կեանք նորա էին անարատք, զի մահ նորա եղև անվնաս, զի փեսայ նորա պահապան եւեթ էր նորին, զի հարսանիք նորա էր քօղ սուրբ՝ ի ծածկոյթ և՛ի պաշտպանութիւն կուսութեան նորա, զի որդի նորա միածին էր որպէս ծաղիկ ծլեալ՝ անխախտելի ճաւալով մերն կուսութեան, զի՛ի յղանալ նորա զորդին՝ հիացաւ

բնութիւն, և յապուշ հարեալ՝ համարէր եղծեալ՛ի սպառ զօրէնս իւր, զի Հոգին սուրբ կալաւ զտեղի բնութեան, և բերկրութիւն կուսութեան զտեղի՝ զոր սովորաբար գրաւէ ցանկութիւն. և միանդամայն ասացեալ, եթէ ամենայն ինչ՛ի սուրբ Կոյսն է նորօրինակ, ո՞ հաւատալ կարասցէ՝ զի չիցէ լեալ՛ի նմա գերբնական և յղութիւն նորա, և այն միայն՛ի կեանս նորա չիցէ լեալ նշանաւոր աքանչելիօք: Եւ չիցէն ինձ իրաւունք ըստ օրինակի ազատութեան նորա յայսքանէ այլոց բնական օրինաց համարել զնա ազատ և յայսմանէ: Այսպէս գերազանցութիւն անձին նորա և զօրութիւն օրինակաց օգնեն ազատութեանն, զոր հաստատեմք:

Դարձեալ և ըստ երրորդումն մասին՝ առնեմ՛ի հաստատութիւն առաջարկութեանս զայն, զի ազատութիւն Կուսին յօրինաց անտի երաշխաւորէ յայտնապէս փառաց օրէնսդրին, այս ինքն Քրիստոսի: Կարէի առ այս ածել զդէպս ասացուած մեծի ուրուք թագաւորի՛ի Կասիոդորոսէ, զի՛ի դէպս ինչ չահին թագաւորիք՛ի տալն, ուր առատաձեռնութիւն յաճախէ նոցին փառս: Ի պատուել որդւոյն զմայր իւր, չահի ձգմարիւ զոր ինչ նմա չնորհէ. զի առաւել փառաւորի ինքն նովաւ, քան թէ մայրն ընդունելութեամբ չնորհացն: Այլ մանրացնին և նկատեսցուք, ի զգենուլ Բանին Աստուծոյ զմարմին մարդկային յեղծումն մահաբեր օրինացն, զոր կոչեմք օրէնս մեղաց, վայել էր մեծութեան նորա եղծանել զայն ամենայն ուրեք՝ ուր և սիրէրն: Յառաջ խաղացուք, եթէ ախորժէք տեսանել, ըստ այսմ տեսութեան, ընդ կարգ յաղթութեանցն Քրիստոսի:

Տիրէ մահ յամենայն մարդիկ՛ի զարգուն հասակի, յաղթահարէ զնա Փրկիչն մեր չնորհօք իւրովք. ազատ և նորածինք հեծեծն ընդ բնաւորութեամբ նորա, ի պարտութիւն մատնէ զնա Քրիստոս սուրբ մկրտութեամբ. մոռանէ մահ և յընդերս մարց, և ապանանէ՝ զոր

գտանէ անդ, այլ Փրկիչն մեր ընտրեալս իւր երևելիս ղերծուցանէ և անդ ՚ի մահուանէ, որպէս զՄկրտիչն Յովհաննէս: Հատանէ մահ և ՚ի սկիզբն անդր, և գտատ-պարտէ զմարդիկ անդստին ՚ի յղութենէ. ոչ Փրկիչ մեր ամենայաղթ, այն և է՛թ ապա ՚ինայցէ նմա տեղի ապատանի՝ ուր ոչ հատանիցէ յաղթութիւն քո. արիւն քո, դեղ ամենաբոյժ, որ զօրէ աղատել զմեզ ՚ի չարէն, ո՛չ կարիցէ և զառաջս առնուլ չարին. բուժես յո՛ և է՛թ զայն, և ո՛չ կարասցէ պահել յայնմանէ: Իսկ է՛թէ կարող էիցէ պահել ՚ի չարէն, կարողութիւնդ այդ ՚ինայցէ՛ ՚ի սպառ անդործ, առանց ուրուք յանդամոց քոց զգալոյ զզօրութիւն նորա: Ի՞նչ լեցի քեզ, Փրկիչ իմ. վասն փառաց անուան քո, գէթ զմի յարարածոց քոց ընտրեա՝ յորում երևեսցի զօրութիւն սուրբ արեան քո ընդդէմ օրինացս մահու: Եւ ո՞վ լեցի արարածս այս, է՛թէ ոչ ամենօրհնեալ մայր քո. ներեա ինձ ասել Փրկիչ իմ, գուցէ ընդ երկբայութեամբ անկցի ամենակարող զօրութիւն սուրբ արեան քո:

Արժան է ստուգապէս՝ զի պատուական արիւն որդւոյ Կուսին աղդեացէ ՚ի նա զամենայն զօրութիւն իւր, առ ՚ի պատուել զընակարանն՝ ուստի եկն նա ՚ի լոյս: Ցիշեցէք աղաչեմ, տեարք իմ, զոր ինչ ոք ՚ի նախնի Հայրապետաց Գաղղիոյ, մեծն Եւքեր եպիսկոպոս Լիոնի, ասէր իւրումն պերճախօսութեամբ, զի Մարիամ ևս դբնեցաւ որպէս զայլսն ՚ի մարդկանէ արեամբ որդւոյ իւրմ, բայց այսուհետ զանազանեալ յամենեցունց՝ զի արիւնն այն եղեալ էր ՚ի կուսական մարմնոյ նորա: Հասարակաց է ընդհ հատատացելոց՝ զի Քրիստոս տայ և նմա զարիւն իւր. այլ այս առանձին նմա է ընդհ, զի ՚ի նմանէ ընկալաւ Քրիստոս զարիւնն զայն. զամենեքեանդ իսկ ցօղէ զարիւնն զայն սրբարար, այլ առանձին ընդհ այն է սրբոյ Կուսին, զի ինքն է աղբիւր արեանն այնորիկ: Որպէս զի կարեմք համարել զյղութիւն սրբոյ

Կուսին որպէս աղբերական արեանն Քրիստոսի. անտի սկըսանի գեղեցիկս այս գետ ծաւալիլ, գետս այս ընդհանուր՝ որ հոսէ յերակունս մեր ՚ի ձեռն սուրբ խորհրդոց, և ածէ հոգի կենդանարար ՚ի մարմին եկեղեցւոյ: Եւ զոր օրինակ աղբիւրքդ, որպէս թէ յուշ ածեալ զակունս իւրեանց, ցայտեն ՚ի վեր մինչև ՚ի բարձրութիւն նոցին ընդ օդս, այսպէս հաւատացուք աներկմիտ՝ զի արիւնն Քրիստոսի հասուցանէ զզօրութիւն իւր ՚ի վեր մինչև ՚ի յղութիւն մեր իւրոյ, առ ՚ի պատուել զաղբերական իւր:

Մի՛ ևս ապա, ո՛ հաւատացեալք, մի՛ զանուն Կուսին խնդրիք ՚ի դատակնիք մահուն հասարակաց ազգի մարդկան. ոչ գտանիցէք զայն անդ, ջնջեալ է անտի: Եւ ո՛րպէս. — ՚ի ձեռն աստուածային արեանն, զոր ՚ի կուսական ծոցոյ նորա էառ Քրիստոս, և փառս իւր համբի ՚ի կիր արկանել վասն նորա զամենայն զօրութիւն արեանն այնորիկ ընդդէմ մահաբեր օրինացն՝ որ անդստին ՚ի սկզբանէ սպանանէ զմեզ: Աստ ապա դիւրին է կընքել՝ զի նպաստաւորագոյն քան զամենայն ինչ է այս աշխատութեանն, զորմէ մեր բանքս են. զի ուրեմնէ աստ ՚ի միասին և զգերազանցութիւն ազատելոյն, և զօրինակ ազատութեանն, և զփառս ազատողին՝ որ է ինքն Քրիստոս:

Երևելին յեկեղեցական մատենագիրս, Տերտուղիանոս, ասէ՝ այնքան է մեծվայելչութեանն Աստուծոյ մեծութիւն, զի ոչ միայն հնազանդել պարտ է մեզ հրամանաց նորա, այլ և ակնարկութեանցն հպատակել խնամով, և կանխել ևս՝ է՛թէ հնար իցէ ՚ի կատարումն կամաց նորա ամենայն յօժարութեամբ կազմք և պատրաստք: Արդ զոր նա զՀօրէն հաւատացելոց ասէ, իշխեմ ևս ասել զեկեղեցւոյ՝ որ մայր է նոցին: Ոչ չանթիւք նշդվից հրամայէ մեզ եկեղեցի՝ գաւանել անվեղ ամենեին և անարատ զյղութիւն սրբոյ Կուսին. ոչ գասէ նա զայս գաւանութիւն ընդ մասունս քրիստոնէական

հաւատոց. սակայն հրաւիրէ զմեզ զհետ երթալ այսմ վարդապետութեան հանդիսիւ սերկեան տօնիս: Եւ զինչ առնել իցէ մեզ. — արժան է, ոչ միայն հնազանդել պատուիրանաց այսպիսւոյ սուրբ և բարեգութ մօր մերոյ, այլ և խոնարհիլ ակնարկութեան կամաց նորա: Խոստովանեսցուք ապա վատահութեամբ անարատ զաղօթիւն նորա, փառաւորեսցուք զՔրիստոս՝ի մայր իւր. հաւատասցուք Որդւոյն Աստուծոյ արարեալ աքանչելիս և՝ի յաղթեան սրբոյ Կուսին, զոր էր ընտրեալ՝ի գործակցութիւն յաղթեան իւրոյ:

Այլ յածել զմտաւ զբարերարութիւնս՝ որովք Որդին Աստուծոյ պատուեաց զմայր իւր, յիչեսցուք և զայնս՝ զորս ընկալաք մեք՝ի ձեռն ընորհաց: Տպաւորեսցուք՝ի միտս մեր, ո՛ հաւատացեալք, քանի՛ խիստ և անխուսելի է վճիռն՝ որ դատապարտէ զմեզ, զի առ՝ի պահել անտի զսուրբ Կոյսն՝ հարկ եղև Աստուծոյ զաճենակարողութիւն իւր՝ի վար արկանել. և որ առաւել է հրաշալի, ամենայն գերազանցութեամբ ընորհաց՝ որ անկ են աստուածամայրութեան Կուսին, չև ևս կամեցաւ եհեղեցի վճռել զազատութիւն նորա՝ի դատակընքոյ անտի: Ողբալի պայման ծննդեան մերոյ, որ երկայն չղթայիւ աղեխից՝ ընդ որովք հեծեմք ընդ ամենայն կեանս մեր, ձգէ զմեզ՝ի յաւիտենական պատուհաս, արդար և անքննին դատաստանաւն Աստուծոյ: Այլ գոհութիւն աստուածային ողորմութեանն, զի դատակնիքս այս մահու եղծաւ մահուամբն Քրիստոսի. արիւն նորա խորտակեաց զկապանս մեր, և եբարձ զլուծն երկաթի՝ի պարանոցաց մերոց. ոչ ևս եմք ընդ օրինօք մահու: Մի՛ լինիր ապաշնորհ, ո՛վ քրիստոնեայ. փառաւորեա զամենակալն զօրութիւն, որ փրկեացն զքեզ՝ի խիստ օրինաց աստի. յիչեա, զի որպէս ասացաքն, երկու մասունք են գլխաւորք գերագոյնի այսր իշխանութեան. օրինադրէ նա, և ազատէ յօրինաց. հրամայէ, և

խափանէ զկատարումն հրամանին, որպէս հաճոյ Թուի նմա: Շնորհիւ նորա գտեալ ազատութիւն յօրինաց անտի, մեծարեա զիշխանութիւն նորա՝ի վերայ օրինացն՝ զոր եդ. ընդհակառակ ես դու հրամանին, ոչ ինչ նուազ և ազատութեանդ յայնմանէ. պարտ է քեզ հնազանդել հաւատարմաբար հրամանաց նորա, այլ և ընդհակս հանապազ մատուցանել նմա վասն ազատութեանդ՝ի խիստ օրինաց անտի: Աքանչելի օրինակաւ արար զայս սուրբ Կոյսն. Աբր ընդ ի՞ն ՀԷՅՄԷՅՈ հղբն, ասէ. տեսէք ո՛րպէս ընդհակառակ զանձն խոստովանի կարողութեանն Աստուծոյ, որ ազատեացն զնա յաղետաւոր օրինաց անտի, որ եղեռնաւորս կացուցանէ զամենայն յղացեալս: Այլ ոչ ինչ նուազ ընդհակառակ գտաւ նա և խմաստութեանն Աստուծոյ, որ զատոյցն զնա՝ի համաչխարհական ապականութենէ, որպէս լիցի մեզ տեսանել յերկրորդումն մասին:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Աստուածաբանութիւն ուսուցանէ մեզ՝ զի աստուածային իմաստութեան է զանազանակս՝ի լոյս ածել. և որպէս նմա է անկ հաստատել կարգս էից, նոյնպէս նմին ինքեան է և զանազանութիւնս առնել՝ի նոսա, զի առանց այնորիկ չկարէ կալ կարգ: Յարդեանց իսկ անտի՝ի միտ առնումք, զի՝ի սկզբանէ աչխարհի իմաստութիւնն Աստուծոյ արար այսպէս. զի մինչ դեռ անկերպարան էր նիւթն՝ զատոյց զլոյս՝ի խաւարէ, զջուրս ներքինս՝ի վերնոց, և պարզեաց զնառնակութիւն՝ որ պատէրն զտարերքս: Արդ զոր երբեմն յարարչագործութեանն արար, առնէ արդ հանապազօր՝ի փրկագործութեան քնութեանս մերոյ. զատոյց յայն-

Ժամ զմասունս աշխարհի, որ խառն ի խուռն լին էին և անպատրաստ. իսկ արդ որոշէ զազգ մարդկան, զնառնուրդն եղեռնաւոր, վասն որոյ ասէ Առաքեալն. Յոլով կամեցաւ Աստուած, որոշեաց պէս յոլովանէ մօր իմոյ. այս ինքն ազատեաց զնս և փրկեաց. քանզի շնորհք Աստուծոյ փըրկեն զմեզ բարեբաստիկ լինն բաժանմամբ՝ որ որոշէ զմեզ ի զանգուածոյ ապականութեան: Այս գործ է աստուածային իմաստութեան, զի նա ընտրէ զմեզ ի յաւիտենից, և պատրաստէ մեզ ընծայս՝ որովք արդարանամք:

Այսպա ուրեմն զատուցեալ է սուրբ Կոյսն, և այս հասարակաց է շնորհ ամենայն հաւատացելոց. այլ առ ի գիտել զառանձնական շնորհսն նորա, պարտ է նկատել զկցորդութիւնն նորա ընդ Քրիստոսի: Ուսարուք, հաւատացեալք, զնորհուրդս զայս ի նայն պերճախօս և ի գիտուն Հայրապետէ, ի սրբոյն Եւքերեայ, որ ի ճառին իւրում յաղագս ծննդեանն Քրիստոսի՝ ուրախակից լեալ սրբոյ Կուսին վասն յղանալոյ նորա զՓրկիչն մեր ի կուսական արգանդին, զայս բան դեղեցիկ ուղերձէ առ նա. «Երանի քեզ, մայր անզուգական, զի ընդունիս նախ քան զամենեսին զայն՝ որ ամենեցուն խոստացեալ է, և առանձին շնորհիւ ժառանգես միայնակ զուրախութիւնն ամենեցից»: Զինչ կամիցի ասել սուրբ Հայրապետն. եթէ Յիսուս ամենեցուն է, եթէ խորհուրդք իւր են վասն ամենայն աշխարհի, որպէս կարդացեալ սուրբ Կոյսն միայն ժառանգել զնա: Քրիստոս պատարագեցաւ վասն ամենեցուն, արիւն նորա հեղաւ ի քաւութիւն մեղաց ամենեցուն, քարոզութիւն անուան նորա է ի լուսաւորութիւն ամենայն ժողովրդոց, և զի ի փրկութիւն ամենայն աշխարհի եկն Քրիստոս՝ յայտ անաւ իսկ է, զի ընդ ծնանել նորա կոչեցան առ նա Հրեայք ի ձեռն հրեշտակաց, և հեթանոսք ի ձեռն աստեղ. ամենայն աշխարհի է Որդին Աստուծոյ, զի բարութեամբ իւրով շնորհեաց նա զանձն ամենեցուն մեզ: Բայց սակայն, ո՛վ

արժանապատուութեան Կուսին. ի համաչխարհական շնորհաբաշխութեանն Աստուծոյ, գերագոյն լին իրաւունք են նորա ժառանգելոյ զնա միայնակ, զի է որդի իւր. ոչ ումեք չարարածոյ հաղորդական են իրաւունքս այս. միայն Աստուած և Մարիամ կարեն ունել զՅիսուս իբրև որդի. և այսու կցորդութեամբ տայ նմա զանձն Աստուածորդին այնպէս, զի գանձն հասարակաց ամենայն մարդկան՝ լինի Տիրամօրն գանձ առանձնական. ժառանգիցէ դայնակ:

Եւ ո՞ չ աքանչասցի ի տեսանել զՏիրամայրն այսպիսի փառօք որոշեալ յայլոց: Այլ ասիցէք՝ Թէ զինչ հարկ ածիցէ այս՝ անարատ յղութեան նորա. պարտ է ինձ անդա ցուցանել՝ զի յղութեան Փրկչին է ինչ զօրութիւն ներքին, որ ածէ շնորհս և սրբութիւն ի յղութիւն սրբոյ Կուսին: Այլ առ ի հասու լինել քանիցս՝ որ առաջի կան, յուշի կալցուք զՀմարտութիւնն քրիստոնէական՝ միսիթարիչ յոյժ հաւատացելոցս, զի կենաց Փրկչին մերոյ է ազերս ինչ ընդ կեանս մեր առ ի սրբութիւն: Զայս Հմարտութիւն պայծառագոյնս յայտ առնէ Առաքեալն՝ գեղեցիկ բանիւն. Քանզի ի նոյն իսկ և Քրիստոս և էիեաց, զի հեռելոց և ի հեպանէաց առ հասարակ փրկեսցէ Տեսէք՝ զի կեանք Փրկչին սրբէ զմեզ, և մահ մեր սրբի իւրոյին. նոյնպէս և այլն ամենայն ըստ սուրբ գրոց: Ցանձն էառ Քրիստոս զտկարութիւն մեր, և այս քաջալերէ զտկարութիւնս մեր. վշտակիր եղեւնա, սիրոյ ցարուք վշտացեալքդ, զի սովաւ սրբէ նա զվիշտս ձեր և պղպաքերս առնէ: Եւ համառօտիւ՝ է ինչ նորա աներեւոյթ զօրութիւն ի վերայ մեր, որ սրբէ զմեզ. և վասն այսօրիկ յանձն էառ նա զամենայն ինչ զմեզ, քաւ ի մեղաց, առ ի սրբել որ ինչ եմքս: Եւ ուստի՞ իցէ այս սքանչելի հաղորդութիւն մահու նորա ընդ մերս մահ. ո՛հ, պատասխանի տայ Առաքեալն, զի Քրիստոս մեռանելոյն վասն մեր՝ եղև մեր, ետ մեզ զմահ իւր, և գտանեմք ի մահու

նորա զաղբիւր չնորհաց՝ որ սրբէ զմահ մեր, և ածէ ՚ի նմանուԹիւն մահուն իւրոյ: Քրիստոս չարչարելովն վասն մեր՝ եղև մեր, և չարչարանօք նորա սրբին ցաւք մեր: Զայս կարեմք ամենայն հաւատացեալքս ասել. այլ սուրբ Կոյսն միայն կարէ ասել, զի Քրկիչն յղացեալ ՚ի նմա գերագոյն օրինակաւ եղև իւր, և ըստ այսմ՝ յղուԹիւն նորա ազդէ սրբուԹիւն ՚ի նորայն անխմանալի զօրուԹեամբ:

Եւ կարի խոկ քաջ, ո հաւատացեալք. Քրիստոս յղացեալ ՚ի Կուսէն, Կուսին խոկ է. Հայրն երկնաւոր պարգևեաց նմա զՔրիստոս. ամենայն կեանք Քրիստոսի ամենեցուն մեր է, այլ ՚ի ժամանակի յղուԹեան և ընդելը ՚ի ծոցի Կուսին, նորա միայնոյ է ժառանգուԹիւն. առանչին ընդհանրապէս նա, այս ինքն որպէս մայր զօրգի: ԿոյրգուԹիւն նորա ընդ Քրիստոսի որպէս ընդ փրկչի՝ որոշէ զնա ՚ի մարդկանէ որպէս զայլս, կոյրգուԹիւն նորա առանձին ընդ Քրիստոսի որպէս ընդ որդւոյ որոշէ զնա գերահրաշ օրինակաւ: ԽմասաուԹիւն աստուածային, որ անդ ուրեմն զհաւանակուԹիւն տարերց պարզեցեր, առ քեզ կարգամ, է և աստ խառն ՚ի խուռն ինչ պարզելի, ամբոխ մեղապարտից՝ յորոց արժան է ո՛ րոշել մի յարարածոց ՚ի մայր արարչին: Ցիսուս է փըրկիչ արարածոյն այնորիկ, պարտ է որոշել զնա յայլոց. այլ Ցիսուս է որդի նորա, և ՚ի միջի նոցա կոյրգուԹիւն լինի է առանձին, պարտ է որոշել զնա և յայլոց անտի: Եթէ այլք ազատեալ լեցեն ՚ի չարէ, պարտ է նմա և ոչ իսկ անկանել ՚ի չար անդր: Եւ ո՛րպէս. — ՀաղորդակցուԹեամբ գերազանցուԹեան որդւոյն. անմեղ է որդին, պարտ է և նմա գոլ անմեղ: ԽմասաուԹիւն աստուածայինն՝ որ որոշեցեր զնա յայլոց, զատո զնա և յորդւոյն, զի է անսահմանաբար քան զնա ՚ի ստորև: Այլ ո՛րպէս մարթ լեցէ մեզ զանազանել զնոսա ՚ի միմեանց, զի երկոքեան ևս անմերձք են ՚ի մեղաց: — Այլ Քրիստոս բնուԹեամբ

է անմեղ, խոկ Մարիամ չնորհօք. Քրիստոս յիրաւանց, խոկ Մարիամ արտաքնուԹեամբ և գԹուԹեամբ: Եւ ահա սուրբ Կոյսն զատուցեալ. Զի արդ ինչ ղեծուիցի հղջն: Բաւ է ասացեալս զնմանէ. տեսցուք արդ Թէ ո՛րպէս և մեք լեցեմք որոշեալ. զի այս երրորդ մասն է ճառիս, յոր պարտ է լինել անցանել՝ լեա ցուցանելոյ ձեզ, զի Թեպէտ և չնչեմք մեք հանդոյն սրբոյ Կուսին գերազանցուԹեամբ զատուցեալ, սակայն և մեք եմք որոշեալ:

Զի զինչ են հաւատացեալք, բայց ժողովուրդ զատուցեալ յայլոց, զերծեալ ՚ի համաչարհական կորստենէ և ՚ի հանրական ապականուԹենէ. ժողովուրդ՝ որ ընակէ յաշխարհի, այլ չէ յաշխարհէ. ժառանգուԹիւն իւր յերկինս է, անդ է տուն նորա և ստացուած: Աստուած դրոշմեաց ՚ի ճակատ նորա զինչիք սուրբ մկրտուԹեան, իւր միայնում պահեալ զնա: Այո, ո հաւատացեալ, եԹէ կայ դու ՚ի սէր աշխարհի, չես դու բաժանեալ ՚ի նմանէ, կորուսանես զչնորհս քրիստոնէուԹեան: Այլ ասիցես՝ Թէ ո՛րպէս մարթ լեցէ բաժանել ՚ի նմանէ. կամք ՚ի՞մ ՚ի աշխարհի, ՚ի զբօսանս և ՚ի կենակցուԹեան. պարտ լեցէ ՚ի բաց կալ յայլոց, և հրաժարել յամենայն կոյրգուԹենէ: — Զի՞նչ տաց քեզ պատասխանի. Թերևս զի սրտիւ գոնեա լեցես հրաժարեալ, զի սրտիւ հաւատամք ըստ Առաքելոյն, և պարտ է մեզ զսիրտ մեր բաժանել յաշխարհէ: Այլ ասիցես՝ զի այն է գժուարին. սիրտս այս ձգի ամենուստ ՚ի քաղՀ, ամենայն ուստեք խնդրի այն. ողբէ զնա աշխարհ, ծիծաղի նմա. փառս և հաճոյս առաջի դնէ նմա. է որ սիրէ զնա, և է որ խնդրէ ՚ի նմանէ սէր. և ո՛րպէս հնար լեցէ նմա պաշտպանել անձին, և ո՛րպէս կամիս՝ գէԹ սրտիւ հրաժարել ինձ յաշխարհէ: — Գիտեմ, ո հաւատացեալ, զի գժուարին է յոյժ կալ յաշխարհի, և չարիլ սրտիւ ՚ի հաճոյս՝ որ շուրջ կան ըզմեզ. սակայն չիարեմ այլ ինչ տալ քեզ խրատ. զի՞նչ կամիս՝ Թէ ասացից քեզ. կարեցե՞մ քարոզել քեզ այլ

Աւետարան: Ի բազում այնքան ժամուց, զորս ընդու-
նայն ընծայեա յերկրաւորս, պահեսջիր քեզ գոնեա
քանի մի, առ 'ի պարապել անձին. առանձնացիր եր-
բեմն, և զմոռաւ ած զքաղցրութիւն երկնաւոր բարու-
թեանց, և զուրախալութիւն անցաւորացս: Մեկնեաց ընդ
Քրիստոսի, տարածեա զքեզ առաջի նորա, խնդրեա 'ի
նմանէ զչնորհս՝ որ աստուածային քաղցրութեամբն
ձգեսցէ զքեզ 'ի բաց 'ի հաճոյից աշխարհի, զչնորհս՝ որ
որոշեցին զսուրբ Կոյսն, և այնպէս լցին զնա, զի բար-
կութիւնն սպառնացեալ որդւոց Ադամայ չեգիտ տեղի
'ի յղութեան նորա, զի զառաջս չարին կալաւ սէր բա-
րեգութ:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Եթէ Որդին Աստուծոյ, որպէս ուսուցանէն մեզ
սուրբ գիրք, յանձն էառ 'ի մարմնանալն իւրում զամե-
նայն տկարութիւնս մեր՝ բաց 'ի մեղաց, եթէ 'ի կամէն
լինել մարդ իբրև զմեզ՝ ոչ անարժան համարեցաւ իւր
զքաղց և զծարաւ, զերկիւղ և զտրտմութիւն, և ոչ
զայլ կարիս մեր՝ որ ոչ թուէին ձահաւորք մեծութեան
նորա, պարտ է առաւել ևս իրաւամբք հաւատալ՝ զի
տպաւորագոյնս կրեր յանձին զսէրն զոյն այնպէս սուրբ
և արդար, զոր բնութիւն գրոշմէ 'ի սրտի մերում առ
ծնօղս մեր: Այս ճշմարտութիւն բացայայտ է յոյժ. այլ
ես կամիմ ցուցանել ձեզ, զի այս սէր կանխեաց քան
զերջանիկ յղութիւն սրբոյ Կուսին, և արժան համա-
րիմ պարզաբանել զայս:

Երկակի նկատեմ զայս սէր փրկչին առ սուրբ Կոյսն,
'ի մարդեղութեան և յառաջ քան զմարդեղութիւն: Զի
ի՞նչ սա լեալ 'ի մարդեղութեան, դիւրին է 'ի միտ առ-

նուլ. զի որովհետև 'ի մարդեղութեան Բանին Աստու-
ծոյ եղև սուրբ Կոյսն աստուածամայր, ապա Քրիստոս 'ի
հրաշափառ խորհրդեանս սէր որդիական կալաւ առ
մայր իւր: Այլ զի նոյն սէր լեալ էիցէ Աստուածն Բան
և նախ քան զմարմնանալն, գԺուարին թուի. զի որդին
Աստուծոյ մարդեղութեամբն եւեթ եղև որդի Կուսին.
սակայն 'ի վեր ևս երթիցուք, և գտանեմք զայս սէր նա-
խաժամանեալ զեղմամբ պարգեւաց 'ի սուրբ Կոյս: Ի
միտ առեք զայս ճշմարտութիւն, և խելամուտ լինիցիք
մարդասիրութեանն Աստուծոյ:

Այլ առ 'ի միտ առնուլ զայս վարդապետութիւն,
պարտ է գիտել՝ զի սուրբ Կոյսն զանազանի, մանաւանդ
այսուհիկ, յայլոց առհասարակ մարդ՝ զի ծնաւ զբաշխողն
չնորհաց, և Քրիստոս զանազանի և այսուհիկ յայլոց
որդւոց՝ զի 'ի նախկին վայրկենէ կենաց իւրոց ներգործէր
զօրութեամբ. և հրաշափառագոյն ևս այն է՝ զի սուրբ
Կոյսն եղև մայր այնմ, որ յառաջ քան զինքն էր: Աստ
ջգիտ գայ երեք լինչ 'ի չնորհս ամենօրհնեալ Կուսին:
Զի որդին իւր գոլով բաշխող չնորհաց, հաղորդէր նմա
առատապէս զչնորհս. զի 'ի նախկին վայրկենէ կենաց
իւրոց գոլով հզօր 'ի ներգործել, ոչ միայր աճման հա-
սակին՝ վասն առատաձեռնելոյ նմա չնորհս, վասն որոյ
անդատին 'ի վայրկենէ յղութեան իւրոյ սկսաւ զեղուլ
'ի նա զպարգևս իւր. և երրորդ՝ զի ծնանելով Կուսին
զնա, որ յառաջ իսկ էր քան զինքն, գերահրաշ լինի բե-
րեր յանձին՝ զի սէր որդւոյն կանխեր առ ինքն 'ի յղա-
նալ իւր զնա: Այս էր՝ որ առնէր զնա ազատ 'ի մեղաց,
զի պարտ էր յաւելուլ 'ի չնորհս Կուսին՝ ծնանել իւր
զնա, որ յառաջ իսկ էր քան զինքն: Այլ և ևս պար-
զեսցուք զայս ճշմարտութիւն՝ գերազանց վարդապե-
տութեամբ Հարց, և տեսանիցեմք որպէս 'ի յաւետենից
լեալ էիցէ սէր Աստուածորդւոյն առ սուրբ Կոյսն:

Ընդ՞ երբեք զարմացեալ ձեր, տեսլեք իմ, յըն-

Թեաննու՝ ի սուրբ գիրս՝ որպէս խօսի Աստուած, որպէս յանձին բերէ զնա մարգկային՝ նմանելով ինն մեզ՝ ի գործս և ի բարս, ի սովորութիւնս, ի շարժմունս, և ի կիրս: Է զի յայտ առնէ՝ ի ձեռն մարգարէից զյուզել սրտի իւրոյ՝ ի գութ, և է զի զբորբոքել՝ ի բարկութիւն. ուրեք զհաշտել իւր, այլուր զատրճանալ. մերթ զուարախութիւն իւր, և մերթ զտրտմութիւն: Եւ զինչ ևս խորհուրդս այս. պարտ էր Աստուծոյ գործել այսպէս: Եթէ բանն մարգացեալ այսպէս առ մեզ բարբառէր, չէին ինչ զարմանք, զի էր մարդ. այլ զի Աստուած միչչև լեալ մարդ, խօսիցէ և գործիցէ՝ որպէս խօսին և գործեն մարդիկ, օտար ինչ Թուի: Ասիցեք արդեօք՝ զի մեծ վայելչութիւնն աստուածային զինչսն վարել ընդ մեզ այսպէս ըստ բաւականութեան մերում, այլ սուրբ Հոգի այլ ինն պատճառ խորհրդաւոր լմնան ասա: Զի սահմանեալ բանին Աստուծոյ մարդ եղանիլ, ոչ անարժան իւր համարէր՝ ի կիր առնուլ անդստին զմարդկայնոց զգայարանացս կերպ: Այլ ընդ հակառակն սեփականէր նա զայնոսիկ իւր, և որպէս թէ կրթէր զանձն՝ ի նոյնս:

Զիցէ՞ մարթ բացատրել զխորհուրդս զայս ընտանի ինն օրինակաւ: Կամելով ուրուք յանձն առնուլ պաշտօն ինչ յանձանձանաց տեսչութեան կամ իրաց պատերազմի, պատրաստի՝ ի նոյն, յանձին բերելով յառաջագոյն զամենայն հանգամանս պաշտամանն, և սկսանի վարժել՝ ի զգօնութիւն աւագութեան, կամ յարիւթիւն պատերազմողի: Հաստատեաց Աստուած լինել մարդ. չև ևս էր յաւուրս մարգարէից, այլ լինելոց էր՝ անդարձ վճռով. վասն որոյ չէն ինչ զարմանք՝ զի անդրս աին խօսէր և գործէր որպէս մարդ նախ քան զմարդանալն, և որպէս թէ զուարճանայր երևել մարգարէից և նահապետաց՝ ի մարդկային կերպարանս: Եւ առ ինչ. — Տերտուղիանոս բացատրէ զայն աքանչելապէս, այրն գերազանց. «Պատրաստութիւն էր այն մարդեղու-

թեան, ասէ, որ հանդերձեալն էր խոնարհել մինչև՝ ի մերս բնութիւն, նախակրթէր նմին՝ ի կիրս մեր, ընդելացնէր տակաւ լինել մարդ, հաճոյ եղեալ նմա ուսանել՝ ի սկզբանէ աշխարհի, որ ինչ՝ ի լման ժամանակի լինելոց էր»:

Մի կարծէք, ո՛ հաւատացեալք, զի ինքայր նա գալստեան իւրում առ՝ ի սկսել որդիաբար զկոյսն. չատ էր հաստատել նորա զմարդեղութիւն իւր, առ՝ ի բերել յինքեան զամենայն զգացմունս այնր որդիական սիրոյ: Եւ եթէ էառ նա յանձն զամենայն զգացմունս մարդկայինս, մանրթ էր նմա Թողուլ՝ ի բաց զզգացումն որդիական զբնականադոյնն և զառաւել մարդկային: Ապա սիրեաց նա միչտ զսուրբ Կոյսն որպէս մայր, և համարէր զնա իւր մայր, որպէս՝ ի վայրկենէ յղութեան իւրոյ. արդ կարիցէ՞ն մեզ միաբանել ընդ այնչափ չնորհս, վըկայ-ինդրութիւն ընդ սիրոյ, թշնամութիւն ընդ հաւատութեան: Զկարիցէ՞ սուրբ Կոյսն ասել ընդ Սաղմոսերգուին. Աջոյ-ձով իմով անդէց ընդ պարիսպս: Որմ բաժանման կանգնեցին մեզ ընդ Աստուած և ընդ մարդիկ, է՝ ի միջի թշնամութիւն իմն բնական. այլ ասէ սուրբ Կոյսն՝ Անդէց ընդ այն: Եւ ո՞րպէս. — Աջոյ-ձով իմով Աստուծով՝ որ է որդի իմ, և իմ է գերահրաչ իրաւամբք. Աստուծով՝ որ սիրեացն զիս անդստին՝ ի նախկին վայրկենէ կենաց իմոց. Աստուծով՝ որ է ամենակարող, և կալաւ վասն իմ զառաջս բարկութեան, որ սպառնայ որդւոց Եւայի առ հասարակ: Այս այսպէս եղև՝ ի Տիրամայրն. և կնքեցից զայս՝ յանդիման առնելով ձեզ զպատկեր իմն այսր չնորհաց՝ ի հաւատացեալս, և խոստովան եղիցուք՝ զի մարդասիրութիւնն Աստուծոյ եկաց ընդդէմ բարկութեան, որ հալածէրն զմեզ, և կայ հանապազ: Այս լիցի պատուղ ճառիս, որպէս է կարևորագոյն ճշմարտութիւն քրիստոնէական կրօնիցս:

Այս ամենևին, ո՛ հաւատացեալք, այս իսկ է հիմն

կրօնեցա՝ զի ոչ մեք սիրեցաք զԱստուած, այլ նա սիրեաց զմեզ. ոչ միայն մինչչև մեր սիրեալ զնա, այլ և մինչդեռ թշնամիքն էաք նմա: Արիւն նորոյ ուխտիս, հեղեալ՝ի քաւութիւն մեղաց մերոց, վկայէ այսմ ճշմարտութեանս. զի եթէ չէաք մեք թշնամիք Աստուծոյ, էին պէտք միջնորդի՝ի հաշտութիւն նորա ընդ մեզ, ոչ պատարագի առ՝ի ցածուցանել զբարկութիւն նորա, և ոչ հեղման արեան՝ի վրէժխնդրութիւն արդարութեանն Աստուծոյ: Ապա ուրեմն ինքն նախ սիրեաց զմեզ՝ տալով մեզ զՈրդին իւր միածին մարդասիրութեամբ իւրով: Այլ թերևս կարի հանրական էր այս ընորհ, և խոստատրութիւն մեր ոչ չարժէր այսուիկ. եկեսցուք առ բարեբարութիւնս նորա առանձնաբար, որովք սէր նորա կանխեաց առ մեզ:

Զինչ ասել իցէ զկոչմանէս մերմէ՝ի միրտութիւն. խնդրեաւ էր մեր զօգնութիւն նորա, կանխեաւ էր մեր կարգալ զողորմութիւն նորա, առ՝ի ծնանել վերըստին՝ի սուրբ աւազանէն. ոչ ինքն կանխեաց՝ի սիրել զմեզ: Այլ թերևս վաղեմի իցէ ընորհս այս, և ապերախտութիւն մեր ոչ ևս յիշելոյ զայս. խորհեսցուք յայն՝ ըզորոյ հանապազ առնուամք զիորձ: Յիշեցէն, ով մեղաւոր, քանի՞ եռանդեամբ գայիր զմեղօք. վրէժխնդրութիւն կամ ցանկութիւն տիրեր՝ի քեզ. ոչ ստէպ աղդեր Աստուած՝ի սիրտ քո, յետս կալ՝ի հրոց քոց. ոչ դիտեմ՝ թէ լուաւր դու նմա, այլ գիտեմ՝ զի յամձախեաց խօսել ինքն առ քեզ. հրաւիրէիր դու զնա, թէ վախչէիր՝ի նմանէ. կարգայիր առ նա, թէ զինէիր ընդդէմ նորա: Սակայն այդ առնէր նա առ քեզ ընորհօք իւրովք, բաղխէր զդուռն քո, կոչէր զքեզ. ոչ ըստ այսմ օրինակի կանխեաց նա առ քեզ, ոչ ինքն նախ սիրեաց զքեզ:

Տեսանեմ զայլ ոք, որ ոչ ևս յամառեալ կայ՝ի մեղս, յանձն առեալ է ծառայել Աստուծոյ. այլ հայհոյէ, բարախօսէ, և անառակի. ոչ խնայէ ոչ յինչս և ոչ՝ի պա-

տիւ այլոց վասն փառամոլութեան իւրոյ, զսկատեալ՝ի սէր աշխարհի: Ինչի՞ Քրիստոս յանգուցանգա, ինչի՞՝ի դժոխս յայս. էր երբեմն՝ի գժոխս, այլ կարգացեալ ազաղակաւ և ըղձիւք նահապետաց և մարգարէից, որք հառաչէին գալստեան նորա: Իսկ աստ մերժէ մեզաւորն զաղդեցութիւնս նորա, փախչի յերեսաց նորա, պատերազմի ընդդէմ նորա: Սակայն գայ նա, այց առնէ՝ի տունս, ՝ի յոբելէնի, ՝ի սուրբ հանդէսս. ահ արկուն է՝ի խղճմ մեղապարտ, չարժէ զնա՝ի զեղջ՝ի ներքուստ. փախչի նա, այլ զհետ նորա մտանէ Աստուած. նա ոչ զդայ, յամձախէ Աստուած՝ի խթել զարթեցուցանել զնիրհեալն: Եւ չիցէ այս կանխել՝ի սէր առ մարդիկ անչափ ողորմութեամբ:

Իսկ դուք արդարք, որդիք Աստուծոյ, գիտեմ զի սիրէք զՀայր ձեր. այլ կանխեցի՛ք դուք՝ի սիրել զնա. ոչ խոստովանիք ընդ Աւաքելոյն՝ զի սէրն Աստուծոյ տեղեալ է՝ի սիրտս մեր՝ի յՀոգւոյն սրբոյ, որ տուաւ մեզ. և տայր մեզ Աստուած զայսպիսի պարգև մեծ, եթէ ոչ յառաջագոյն սիրեր զմեզ: Ապա նախ ինքն սիրեաց զմեզ աներկբայապէս, ինքն միշտ կանխ քան զմեզ՝ի տալ ընորհս: Այլ՝ի միտ առիք, զի կանխ նա, որպէս զի կանխեսցուք և մեք. զիարդ թուի ձեզ, կարելի՞ իցէ այս: Այո՛ կարեմք, ո հաւատացեալք. լուարուք Սաղմոսերգուին, զի ասէ. Կանխեսցուք առաջի նորա խոստովանութեամբ: Եւ զիա՞րդ պարտ իցէ կանխել: — Կրկին ստորոգելիք են Աստուծոյ, որ առաւել հային՝ի մարդիկ, ողորմութիւն և արդարութիւն. արդ ոչ է մարթ կանխել քան զողորմութիւն, ինքն է՛ որ կանխէ միշտ, և կանխէ՝ որպէս զի կանխեսցուք մեք քան զարդարութիւն նորա: Ոչ է քեզ պարտ, ով մեղաւոր, անգիտանալ՝ զի մեղք գանձեն անձին քումմ բարկութիւն. զմեղս քո գայթակղելիս պատուհասէ արդարութիւն առաջի ամենայն՝ աշխարհի. և եթէ գաղտնածածուկք իսկ իցեն, յայտնեսցէ զայնոսիկ

ամենայն աշխարհի: Կանխեալքիր քան զարդար ցասումն նորա, դու լինքնին լեր վրէժխնդիր, և ոչ խնդրեսցէ լինքն վրէժ. խոստովան լեր զայնոսիկ, և ոչ յայտնեսցէ լինքն. Կանխեցուսք առաջի նորա խոստովանութեամբ:

Գիտեմ զի խոստովանութիւն ասա նշանակէ գովութիւն, այս լինքն է խոստովանել զմեծութիւնն Աստուծոյ. այլ ոչ կարծեմ հեռանալ՝ի բուն իմաստից, եթէ իմա՝ նամ ասա ապաշխարութիւն: Զի եցէ՞ իսկ այլազգ լաւ ևս զմեծութիւնն Աստուծոյ խոստովանել, քան խոնարհել մեղաւորին և ամաչել առաջի նորա: Այմաչեցուք ապա, ո՛ հաւատացեալք, առաջի Աստուծոյ, զի մի՛ լինքն յամենի արասցէ զմեզ յահագին աւուրն. իջցուք՝ի խորս խղճի մտաց մերոց, ուր ծածկեալ կան թշնամիք մեր. իջցուք անդր՝ ջահ՝ի միւսմ ձեռին, և սուր՝ի միւսում. ջահիւն խնդրել զմեզս մեր լըջամիտ քննութեամբ, և սրով հատանել զնոսա կամ՝նովին՝ի ձեռն ճշմարիտ ղղջման: Այսպէս զառաջս կալցուք բարկութեան մեծին Աստուծոյ, ողորմութեան նորա կանխելով առ մեզ: Ո՛վ սուրբ Կոյս, որ դերահրաշ ազատութեամբ ընտրեալ յամենայն մարդկանէ, և նախաժաման չնորհիւն Աստուծոյ պահեցար անարատ, հաս յօգնութիւն տկարացս բարեխօսութեամբ քով, և ընկալ վասն մեր զչնորհս կանխելոյ ապաշխարութեամբ զառաջս առնուլ վրէժխնդրութեանն՝ որ հալածէ զմեզ, որպէս զի լիցի մեզ հասանել՝ի սահմանս յաւիտենական խաղաղութեան, և փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին. ամէն:

ՊՈՍԻԻԷԻ

ՄԵԼԴԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՏՕՆԻ

ՍՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ԿՈՒՍԻՆ

Արար ընդ իս մեծամեծս հզօրն:

Ղ-ի. Ե. 49:

Ըստ առաքարկութեան իմում տալոյ ձեզ այսօր քրիստոնէական հրահանգս՝ի պաշտօն ամենօրհնեալ Տիրամօրն, և ցուցանելոյ ձեզ զամբաւ օգտակարութիւնս նորին, և զպէտսպէս զեղծմունս՝ որ ապականեն զայն, մանց աստուածային յիմաստս ճառիս. և առանց լինելոյ ձեզ՝ի ձանձրոյթ երկայն նախերգանաց, բաժանեցից զճառս զայս յերկուս մասունս: Յառաջնումն ցուցից զհաստատուն և զանսասանելի հիմունս այսր պաշտամն, և յերկրորդումն զանցեղլի կանոնս՝ ուղիղ կարգաւ՝ի վար արկանելոյ զայս պաշտօն: Վարդապետութիւնս այս կարևոր է առ՝ի մեծարել քրիստոնէապաշտ զսուրբ Տիրամայրն, ոչ միայն՝ի ծանից անարատ յղութեան նորա, այլ և յամենայն ծանս՝ զորս սուրբ եկեղեցի առաջի առնէ բարեպաշտութեան հաւատացելոց՝ի չքնաղ տարուց: Եւ քանզի անդստին՝ի յղութենէ սրբոյ Կուսին սկսանիմք մեք յարիլ՝ի նա, և անմեկնելի գիտեմք երթ

յամենայն խորհուրդս՝ որ կատարեցան ի նմա, կամիմ վառել ի ձեզ աստուածն զեռանդն քրիստոնէական բարեպաշտութեան առ նա, և հրահանգել զձեզ ի պաշտօն նորա ըստ աւետարանական կարգաց:

Մի ասիցէք, ո՛ հաւատացեալք, թէ հանրական յոյժ եցէ այս հրահանգ, և ակն ունիցիք լսել պատկանաւորագոյնս ինչ մեծի հանդիսիս: Օգուտ որդւոցն Աստուծոյ է գերագոյն կանոն բեմիս. խոստովանիմ մտադիր՝ զի մարթ էր ինձ ընտրել յարմարագոյն ինչ բանս ծանիս. այլ և դուք ոչ ժխտիցէք՝ զի չէք ինչ առաւել փրկաւէտ, և ոչ պատկանաւորագոյն ի հրահանգ արքունականիս ժողովոյ ունկնդրացս: Լուարուք ապա ուշիւ՝ որ ինչ առաջի կայ ինձ ասել զպաշտաճանէ սրբոյ Կուսին, և ի միտ առէք՝ ո՛ր իցէ հիմն այնորիկ, և որպիսի կատարումն:

ՄԱՍՆ ԱՒԱՋԻՆ

Հիճ այլ ոչ ոք կարէ դնել, ասէ Առաքեալն, զան զեղեալն՝ որ է Յիսուս Քրիստոս: Լեցի ապա Փրկիչն մեր հիմն անշարժ բարեպաշտութեանս մերոյ առ սուրբ Կոյսն. զի և ոչ մարթ է աղգի մարդկան ըստ արժան բաւականին մեծարել զՏիրամայրն, յետ ընդունելոյ ի կուսական արգանդ նորա զՅիսուս Քրիստոս: Ամբարձէք, եղբարք իմ, զմիտս ձեր, խորհեցարո՛ւք ուշիւ՝ քանի՛ մեծ և քանի՛ է գերազանց կոչումն սրբոյ Կուսին, զոր յառաջ քան զամենայն յաւիտեանս սահմանեաց Աստուած՝ առ ի տալ նովաւ աշխարհի զՅիսուս Քրիստոս: Այլ պարտ է և յաւելուլ, զի ի կոչելն Աստուծոյ զնա ի փառաւորեալն յայն պաշտօն, կամեցաւ՝ զի ոչ խոլովակ լոկ լինի հնորհացն, այլ գործէ կամաւոր՝ պաշտօնեայ մեծի գործոյն, ոչ միայն գերազանց պատրաստութեամբքն՝ այլ և յօժա-

բութեամբ կամացն: Վասն որոյ Հայրն յաւիտենական առաքեաց առ նա հրեշտակ՝ առաջարկել նմա զնորհուրդն, կամելով զկատարումն այնորիկ հաւանութեամբ Կուսին. որպէս զի մարդեղութեան Բանին խորհուրդն մեծ, որում գարուց ի գարս ակնկալեալ մեծայնին համադոյք, ի կամէն Աստուծոյ կատարել զայն՝ կայր տակաւին մնայր հաւանութեան Կուսին. այսչափ էր կարևոր ազգի մարդկան իղձ սրբոյ Կուսին ի փրկութիւն նոցին: Ընդ տալ նորա զայս հաւանութիւն՝ բացան երկինք, և Որդին Աստուծոյ իջեալ ի յերկինից՝ եղև մարդ, և եկն փրկիչ մարդկան: Ապա սէր Կուսին եղև երբ աղբիւր յորդ, ուստի հոսեալ ծաւալեցան ընորհք առատապէս ի բնութիւն մարդկային: Եւ որպէս սուրբն Ամբրոսիոս, և զհետ նորա սուրբն Թովմաս ասեն. «Յաղթեալ արգանդն անտի հոսեաց յորդառատ հոգին այն սուրբ եռանդեան, որ նախ զնա, և ապա ելից զերկիր»: Եւ յաւելուլ սուրբն Թովմաս, զի «Յորդառատ լիութեամբ ընորհացն, զոր ընկալաւ սուրբ Կոյսն, հնաս յայնպիսի միութիւն ներքին ընդ ընորհատուին, զի արժանի եղև ընդունելոյ յինքն զայն՝ որ լինի է ամենայն ընորհօք. և ի ծնանելն զնա՝ հետեղ յերանակաւ ինն զերնորհս ի վերայ ամենայն ազգի մարդկան»:

Հարկ եղև ապա, ո՛ հաւատացեալք, զի սուրբ Կոյսն ի ձեռն սիրոյ լեցի գործակից տալոյ աշխարհի փրկիչ: Եւ քանզի քաջայայտ է այս ճշմարտութիւն, չեն ինչ պէտք բացատրելոյ. այլ զհետ միայն բերից ինչ, զոր չեցէ թերևս ածեալ ձեր զմտաւ. այս ինքն զի կամեցեալ Աստուծոյ միանգամ տալ մեզ ի Կուսէն զՔրիստոս, ոչ ևս յերկոփոխի այս կարգ. Քանզի անկէզ են ընորհք Աստուծոյ: Է, և եղիցի միշտ ճշմարիտ, զի ընկալեալ մեր միանգամ ի ձեռն սրբոյ Կուսին զառուիչն ընորհաց ամենայն աշխարհի, ընդունիմք ևս միշտ միջնորդաւ նորա զշնորհս աղեցութիւնս ընորհաց յամենայն մասունս քրիս-

տունէական կենաց: Սէր նորա մայրենի, որ այնպէս զոր-
ծակից եղև փրկութեան մերում՝ ի խորհուրդն մարդե-
ղութեան, լեալ և՝ ի յաւիտեան գործակից յամենայնի՝
որ այնմ գան ղհետ:

Աստուածաբանութիւն երից դլխաւոր արդիւնս
ուսուցանէ, ղհետ եկեալս ընդհացն Քրիստոսի. որ են
կոչել Աստուածոյ զմեզ, արդարացուցանել, և տալ մեզ
յարատևութիւն: Կոչումն է նախկին քայլ. արդարանալ
մեր՝ յառաջնադաղացութիւն. և յարատևութիւն լուծ-
ման ձանապարհին՝ որ ածէ զմեզ՝ ի հայրենիս մեր յերկինս,
՝ի հանգիստ և՝ ի փառս: Գիտէք իսկ՝ զի յերեսին և
յայսոսիկ կարևոր է մեզ զօրութիւնն Քրիստոսի. այլ
պարտ է ինձ ցուցանել ձեզ՝ ի սուրբ գրոց՝ զի և սէր
սրբոյ Կուսին կցորդ է յայնոսիկ. Թերևս ոչ կարծիցէք,
զի ձշմարտութիւնքս այսոքիկ կցեն բացայայտք՝ ի սուրբ
Աւետարանին. այլ ես յուսամ ցուցանել ձեզ զայն
սուղ ինչ բանիւք:

Շնորհք կոչման նկարագրի մեզ յանկարծ լուսա-
ւորութեամբն, զոր սուրբ Կարապետն ընկալաւ յար-
գանդի մօրն: Ոչ գիք սքանչելեացս, և տեսանիցէք
զպատկեր մեղաւորի՝ զոր կոչեն շնորհք Աստուածոյ: Կայր
Յովհաննէս՝ ի խաւարի յարգանդի մօրն. ձայր լսէք,
մեղաւորք, յորմէ մեծան: Յովհաննէս ոչ կարէր տեսա-
նել և լսել. ոչ խլութիւն առաւել քան զձէրդ կայցէ,
և ոչ կուրութիւն ձերումդ հանդոյն. ՝ի զուր որոտան
ձեզ երկինք ահագին սպառնալեօք. և ձշմարտութիւն
իսկ՝ որ յաչս ձեր փայլատակէ՝ ՝ի սուրբ Աւետարանին,
նկարել լուսաւորել զձեզ: Քրիստոս այդ առնէ Յովհաննու
անակնկալ, կանխէ առ նա, խօսի՝ ի սէրս, զարթուցանէ
զներկհաւ սէրս նորա անզգայ յառաջագոյն. խորհիցէք
երբեք, մեղաւորք, յորժամ եկն Տէր՝ ի զարթուցանել
զձեզ աներևոյթ զօրութեամբ սրբոյ Հոգւոյն՝ ՝ի խա-
ւարի անդ, յորում խարխափիցէք, որպիսի՛ լոյս անակն-

կալ ծագեաց ձեզ յանկարծ որպէս փայլակն, որպիսի՛
ազդումն նորահրաշ չարժեաց զսիրտ ձեր. ոչ խնդրիցէք
զայն, և կոչէր նա զձեզ յաւիտենաբարութիւն: Նա է՝ որ
աղդէ՝ ի սիրտ ձեր զաղաղակութիւնս զայդոսիկ ներքինս,
զդառնութիւնս գաղտնիս՝ որ ցանկալի առնեն ձեզ զնա-
ղաղութիւն, և կոչեն զձեզ՝ ի զիղջ: Փախչիցէք դուք, քանզ
զի տացէ նա դառնալ զձեզ: Այլ՝ ի ցուցանել իւրում մեզ
զպատկեր մեղաւորի՝ առ որ կանխէ, ՝ի սուրբն Յովհաննէս
որ խայտայցէ, յայտ առնէ մեզ զգործակցութիւն սրբոյ
Կուսին՝ ի պաշտպանել անդ: Եթէ սուրբն Յովհաննէս՝ առ
որ կանխէն Քրիստոս՝ Թուի նկրտել ելանել յարգելա-
նոց անտի բանտին, ՝ի լուր ձայնի Կուսին է՝ որ զարթու-
ցանէրն զնա. Զի ահաւասիկ էբէ եղե ձայն ողջունի քո յականջս
իմ, խաղաց ցնծալով մանուկ յորովայնի իմում: «Մարիամ է,
ասէ սուրբն Ամբրոսիոս, որ ամբարձ զսուրբն Յովհաննէս
՝ի վեր քան զբնութիւն. և մանկիկն՝ ի լուր ձայնի նորա
չարժեալ, նախ քան զծգել զօդս՝ ձգեաց զհոգի աս-
տուածպաշտութեան»: Յաւելու նոյն ինքն գարձեալ.
«Շնորհք՝ որով լի եղև Մարիամ՝ այնչափ էր մեծ, զի ոչ
միայն պահեաց ՝ի նմա զպարգև կուսութեանն, այլ և
որում այլ առնէրն՝ էա զապացոյց սրբութեան: Ի ձայն
սրբոյ Կուսին խաղաց մանուկն յորովայնի մեր իւրոյ,
հնաղանդեալ նախ քան զծնանել իւր. և չէն ինչ զար-
մանք՝ զի պահեցաւ անապական ամենևին մարմին նորա,
զոր մայր Փրկչին էօծ որպէս իւղով եռամսեայ ընթե-
րակայութեամբ իւրով, և խնկովք սրբութեան իւրոյ»:

Հարսանիքն Կանայ յանդիման առնեն զարգարա-
ցուցումն յանձն առաքելոց. լուարուք զբան Աւետա-
րանչին, որ ՝ի պատմէն զջրոյն փոխել ՝ի գինի՝ ասէ.
Զայս արար սկիզբն նշանաց Յիսուս ՝ի Կանա գալիլեացւոց, և յայտ-
նեաց զփառս իւր, և հաւատացին ՝ի նա աշակերտք նորա: Աչա-
կերտքն վաղ իսկ կոչեցեալ էին, այլ չև էին ՝ի նոսա
հաւատք կենդանի՝ որ արդարացուցանեն. գիտէք իսկ՝

զի հաւատոց ընծայի արդարութիւն, իսը ոչ եթէ բա-
ւիցեն հաւատք, այլ զի այն է սկիզբն, և ժողովն սրբի-
գենաւեան կոչէ զայն Աբմոպ ընդհաց: Վասն որոյ չէր մարթ
սուրբ գրոց պայծառագոյնս բացատրել ըստ իարան ընդհ-
այլ և ոչ յայտնագոյն զգործակցութիւն սրբոյ Կուսին
'ի աքանչելիս անդ:

Զի ո՞ է՝ որ չգիտիցէ, զի աքանչելիքս այս մեծ՝
յորոյ վերայ հիմնեցան հաւատք Առաքելոց, եղեն ար-
գիւնք սիրոյ և բարեխօսութեան սրբոյ Կուսին: Ի խոն-
դրել նորա զընդրհս զայս, Թուէր լինել անլռելի. Զի նայ
իմ և ֆո, կին գոս. լե է հասնել ժամանակ իմ. ասէր ցնա Քրիս-
տոս, որ խիստ լիմն Թուէին բանք, և բերէին զկերպա-
րանս բացէ 'ի բաց մերժման: Բայց Մարիամ ոչ համա-
րեցաւ մերժեալ զինդրուած իւր. գիտէր զբարեգութ
յամեցուածն, զբարեչնորհ մերժուածն, և զնորհրդաւոր
Թաքուստ սրբոյ փեսային. գիտէր զդաղանիս՝ որովք
սէր փեսային հնարագէտ փորձէ զհոգիս հաւատարիմս,
և մերժէ յաճախ՝ որպէս զի ուսցուք համբերել խոնար-
հութեամբ, և յարատև վստահութեամբ, չլինելոյ մերոյ
փութոյ լսելի: Ոչ խաբեցաւ ակնկալութիւն Կուսին.
զինչ ոչ կարէ ընդունել մայր այնպիսի, որում որդին
իւր չնորհէ զամենայն, և ս և 'ի վարելն ընդ նմա իւր
խաւիւ. և զինչ ոչ պարգևեսցէ նմա 'ի հասանել ժա-
մանակին փառաւորելոյ զնա ընդ իւր ընդ ամենայն աշ-
խարհ, եթէ կանխէ 'ի չնորհս նորա զժամանակին սահ-
մանեալ յիւրմէ, որպէս ասէ սուրբ Ոսկեբերանն: Եւ
ահա կատարէ զինդրուած նորա Քրիստոս, որ Թուէրն
մերժել զայն:

Ա՜ՀԼ ո՞ չզարմացի՝ զի Քրիստոս զառաջին աքան-
չելիս իւր բարեխօսութեամբ սրբոյ Կուսին կամեցաւ
առնել, ուր և ոչ զկարևորաց էին բանք. զի զինչ հարկ
անհրաժեշտ էր գինւոյ 'ի կոչունս անդ. բաղձանք այնմ
Մարիամ, բաւ է: Ո՞ ոչ հիասցի ընդ այն՝ զի ոչ բարե-

խօսէ Կոյսն վասն այլ ինչ իրաց, բայց միայն ուր յայտնի
երևելոց էր պատկեր արդարանալոյ մեզաւորաց: Եւ
արդեօք ըստ դիպուածոյ ինչ այսպէս յայլոցեալ, և ոչ
մանաւանդ տալով մեզ Հոգւոյն սրբոյ 'ի միտ առնուլ՝
զոր սուրբն Օգոստինոս խմաստասիրէ 'ի մեկնելն զայս
խօսհրդ, քանզի ասէ. « Կոյսն անզուգական, գոլով
գլխոյն մերոյ մայր ըստ մարմնոյ, պարտ էր լինել ըստ
հոգւոյ մայր ամենայն անդամոց նորա, գործակից լինել-
լով 'ի ձեռն սիրոյ, հոգևոր ծննդեան նոցա յորդիս
Աստուածոյ »: Ահա այսպէս իմացան զխօսհրդոյս 'ի նախ-
նի դարուց հետէ և Հաւք որպէս զմեզ 'ի սուրբ գիրս:
Բայց ոչ միայն 'ի ծննդեանդ որդւոյն Աստուածոյ գործա-
կից լինի Տիրամայրն, այլ ահագնաբար արդ ևրպէս Քրիստոս
կացուցանէ զնա մանակից և 'ի տալ նոցա յարատևու-
թիւն:

Երևեցարուք ապա որդիք ողորմութեան և չնոր-
հաց, որդեգրեալք և նախասահմանեալք 'ի յաւիտենից
'ի յաւիտեանս, ընկերք հաւատարիմք Յիսուսի փրկչին,
յարատևաղք մինչ 'ի սպառ, դիմեցէք առ սուրբ Կոյսն,
եկայք ընդ այլ կացէք ընդ Թևովք մայրենի սիրոյն: Տե-
սանեմ, ո հաւատացեալք, զի աշակերտն սիրելի Յիսուսի
յանդիման առնէ զնոսա 'ի Գողգոթա. զի գնայ ընդ Կու-
սին զհետ Յիսուսի մինչև 'ի խաչն, 'ի ցրուել աշակեր-
տակցացն իւրոց 'ի փախուստ, զի յարի անմեկնելի 'ի
խաչն խմանալի, և գայ արիաբար մեռանել ընդ Քրիս-
տոսի. օրինակ է նա հաւատացելոց՝ որ յարատևեն, և
ահա յանձնէ զնա Քրիստոս սրբոյ Կուսին. Կին գոս, ահա
որդի ֆո: Յաւելու սուրբն Ամբրոսիոս, զի և զսուրբ Կոյսն
յանձնեաց Քրիստոս Յովհաննու կուսի. « Եւ աչ զարմա-
նամ, ասէ, զի ասա առաւել քան զայլս յայտնեաց մեզ
զաստուածային խորհուրդս, ընկալեալ առ իւր զնա՝
որում բաց էին միշտ դանձք երկնային գաղտնեաց »:
Զայսոսիկ յայս վայր շատ համարիմ. որք գիտեն թէ

քանի՛ խորհրդաւոր են սուրբ գիրք, խելամուտ լինիմ յերից օրինակաց սասի, զի սուրբ Կոյան բարեգութ բարեխօսութեամբ Իւրով մայր է կոչեցեալոց, արդարա-յեալոց, և յարատևողաց, և զի սէր Իւր յորդառատ՝ է գործի ամենայն զօրութեանց չնորհաց: Վասն որոյ ու-րախ լինցուք ընդ երջանիկ յղութիւն նորա, զի չնորհեն մեզ այսօր երկինք զնա՛ ի պաշտպան: Զի ո՛ այլ հզօրա-գոյն քան զՏիրամայրն կարիցէ բարեխօսել վասն մեր. խօսի նա՛ ի սիրտ որդւոյ Իւրոյ, որում է միշտ լսելի: Ջգացմունք բնութեան ոչ չինչանին՛ ի փառս, այլ առա-ւելուն և կատարելագործին. վասն որոյ ոչ երկեայի Տի-րամայրն լինել լսելի. «Սէր որդիական լսէ ըղձից մօրն, բնութիւնն ինքնին սահմէ՛ ի չնորհս մօր, դիւրաւ լինին լսելի աղաչանք սիրելւոյ». ասէ Սաղոմոնաս:

Այսմ զհետ գայ, եղբարք սիրելիք, զի պաշտամունք Կուսին հիմն հաստատուն է և անսասանելի. վասն որոյ անիծեալ՝ որ ոչ ընդունի զայն, և բառնայ՛ ի հաւատա-յելոյ զօդնութիւն այսպիսի. անիծեալ՝ որ նուազեցու-ցանէ զայն, զի եղկացուցանէ զեռանդն բարեպաշտու-թեան: Տաղ անէծս և որոյ զեղծանին նոսաս.— մի, եղ-բարք իմ. որդիք են նոքա եկեղեցւոյ, հնազանդք վճռոյ նորա, թէպէտ և տգէտք իմաստից նորա. մի արկցուք զնոսա ընդ անիծիւքս, այլ ուսուցցուք նոցա զկարգս պաշտամանս այսորիկ: Քանի՛ դժնդակ լինէր կուրու-թիւն, եթէ յետ հաստատելոյ զայն՛ ի հիմն այսպիսի ամուր, կառուցանէաք զայն՛ ի նանրահաւատ կրօնս: Այս ուրեմն հաստատեալ զբարեպաշտութիւն մեր ամ-բակառոյց՛ ի վերայ Ճշմարտութեան, ուղղեսցուք և կարգաւորեսցուք զկատարումն նորին գործովք ըստ իմաստից եկեղեցւոյ: Յուցից ձեզ համառօտիւ յերկրորդումն մասին, ո՛ հաւատացեալք, զի՛ր պաշտօն առ Աստուած, զի՛ր առ սուրբ Կոյան, և զի՛ր առ ամենայն սուրբս, պարտ իցէ մեզ մատուցանել:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Գլխաւոր կանոն պաշտամանն, զոր մատուցանեմք սրբոյ Կուսին և սրբոց, է վերաբերել զայն առ Աստուած՛ ի փրկութիւն մեր. զի եթէ ոչ վերաբերէր այն առ Աս-տուած, լինէր մարդկային ինչ ամենևին գործ, և ոչ կրօնական. և քանզի սուրբք լի են Աստուծով և փառօք նորա, ոչ էննոցա ընդունելի մեծարանք լոկ մարդկայինք: Կրօնք կցորդեն զմեզ ընդ Աստուծոյ, և անտի ընդունին զանուն իւրեանց, որպէս ասէ սուրբն Օգոստինոս, և ըստ այսմ սահմանին, Կոյդոնիոն ընդ Աստուածոյ ամենապէս: Վասն որոյ ամենայն եռանդն պաշտամանն սրբոյ Կուսին է անօգուտ և նանրահաւատ, եթէ ոչ ածէ զմեզ առ Աս-տուած՝ առ՛ ի ստանալ զնա յաւիտեան, և վայելել՛ ի ժառանգութիւն երկնից: Այս է հանրական կանոն, որ սկսանի յԱստուածոյ և դառնայ յԱստուած, համատա-րած՛ ի սուրբս՝ անբաժան յԱստուծոյ:

Այլ՛ ի մանաւանդ ևս՛ ի հրահանգս լքեալ, ցուցից խոհիս ինչ ընդ պաշտօն հաւատացելոց և ընդ կա-պակից. և Թէպէտ աւելորդ ինչ Թուի՛ ի լոյս պայծառ քրիստոնէութեան հերքել զմոլորութիւնս հեթանոսաց, սակայն հակադրութեամբ յայտնագոյնս երևեսցի ճըշ-մարտութիւնն: Այ՛ ի մտաչել աստսուն՛ ի սկզբանէ յարմատ չարին, հեթանոսք ոչ լեալ խելամուտ զօրու-թեան անուանն Աստուծոյ, որոյ մեծութիւն և փառք՛ ի միութեանն է միայն, բաժանեցին զԱստուած՛ ի սուրբ-գերս և յայլևայլ զօրութիւնս իւր, և ասպա՛ ի տարբեր և յայլ մասունս աշխարհի, բաշխեալ զայնոսիկ ընդ երեսս և ընդ կրաստերս որպէս կալօած ժառանգու-թեան. զերկինս որպէս աղնուագոյն և գլխաւորագոյն

ման ընծայեալ ՚ի բնակութիւն Աբրամաղեայ, իսկ զայլս ՚ի մասանց Թողեալ երկրաց նորա և քեռ, որպէս թէ պետութեան տիեզերաց մարթ էր բաժանել վիճակաւ, որպէս ոչ անհատ ինչ և անբաժանելի. կամ որպէս թէ հարկ էր Աստուծոյ տալ այլոց զաստուածպետականն տէրութիւն: Եւ ՚ի քակտել միանգամ զսուրբ միութիւնն Աստուծոյ Թշնամանագիր հաղորդութեամբ անհաղորդականին, զառաջան տակաւ ՚ի բազմաստուածութիւն անկարգ և անպատ, մինչև սահմանել աստուածս տանց և ծխահանաց և աստղաստանաց, որպէս կշտամբէ սուրբն Օգոստինոս զՀելլէնս և զՀռովմայեցիս: «Ի պահպանութիւն երեք միութեամ միութեամ՚ ի դրանց եդին աստուածս երիս, ասէ սուրբ հայրապետն, ուր մի ոք այր բաւական է ՚ի պահել զդուռն»: Եւ առ ինչ այսքան բազմութիւն աստուածոց, բայց յանհաղորդութիւն մեծի անդաստանն, և յարհամարհութիւն մեծավայելչութեանն Աստուծոյ: Ոչ ՚ի նաներ յաւելի զայս, այլ առ ՚ի ցուցանել՝ թէ որպէս ազգ մարդկան կարաց ընդ դարս բազում հաստատել այսոցիկ անմիտ մոլորութեանց, և անձնատուր եղև յառաջ քան զգալուսան Քրիստոսի իշխանութեան խաչարի, և յորմէ՛ անհնարին կուրութենէ եհան զմեզ Քրիստոս մեր ՚ի ձեռն լուսոյ Աւետարանին. Շնորհս Աստուծոյ ՚ի վերոյ անպակասս մեզ ընդունիցիմք նորա:

Իսկ մեք պաշտեմք մի Աստուած, արարիչ և անօրէն ամենայն էից, յորոյ անուն նուիրեալս եմք ՚ի սուրբ աւազանին (ով հնորհք արհամարհել, ով հաւատք այսպէս դիւրաւ դրժել), և ՚ի նմա խոստովանիմք զամենակալ տէրութիւն, զբարութիւն անսահմանելի, և զերանութիւն: Պատուեմք զսուրբս և զամենասուրբ Կոյսն, ոչ իբրև ծառայք և հպատակք նոցին, զի եմք աշխատք ամենևին, և զԱստուած միայն պաշտեմք, այլ մեծարեմք զնոսա սիրով և ոչ ծառայութեամբ, որպէս սուրբքն Աթանասիոս և Օգոստինոս ասեն, և երկրպագեմք ՚ի նոսա

եքանչելեաց ձեռին Աստուծոյ, հաղորդութեան շնորհաց նորա, զեղման աստուածային փառաց, և սուրբ և փառաւորեալ ծառայութեանն՝ որով կան և ինան յաւիտեան հպատակք էին անելի, յոր միայն վերաբերեալք զպաշտօն մեր բովանդակ, որպէս ՚ի տուիչ ամենայն բարեաց մերոց, և ՚ի կէտ ամենայն ըղձից մերոց: Մի լեցուք ապա որպէս զայնոսիկ, որք համարին նուաղել զփառս Աստուծոյ և զԲրիստոսի, ՚ի մեծացուցանելն զսուրբս և զամենասուրբ Կոյսն:

Այսպիսի է տարատարտ երկիւղն Թշնամեաց եկեղեցւոյ, որով տկարութիւն աւազելի ածեն զԱստուծով, և նախանձաւորութիւն ընդ պարգեւս իւր և ընդ լոյս՝ զոր սփռէ յարտարածս իւր. զի զինչ են սուրբքն և ամենասուրբ Կոյսն, բայց գործք ձեռին Աստուծոյ և շնորհաց իւրոց: Եթէ կենդանի էր արեգակն, չնախանձէր երբէք ընդ լուսին՝ որ իշխէ գիշերի պայծառ լուսովն, զի յիւրմէ է լոյսն այն, և ինքն լուսաւորէ զգիշեր ճառագայթիւն անդրադարձութեամբ: Որչափ և կատարելութիւն խոստովանիմք մեք ՚ի սուրբ Կոյսն, նախանձիցի՛ երբէք Քրիստոս ընդ այն. զի ամենայն ՚ի Քրիստոսէ է ՚է նմա, և ՚ի Քրիստոս միայն վերաբերին ամենայն փառք նորա: Մոլորութիւն ողորմելի. այլ յոյժ առաւել ողորմելութեան են արժանի, որք կառապաշտութիւն զպաշտօն մեր սուրբ՝ համարին, և բամբասեն ընդ մեզ զԱմբրոսիոս, զՕգոստինոս և զՄակեբեան, զորոց ինքեանք խակ խոստովանին զի զհետ երթամք մեք վարդապետութեան և օրինակի. ոչ ժխտեմ: Կշտամբութիւնք այսպիսի անիրաւք, զորս նոքա զայրագինն ընդդէմ ուղղափառ եկեղեցւոյ արձակեն, ոչ զայրացուցանեն զմեզ ընդդէմ նոցա, այլ սան մեզ ողբալ զզառանցանս՝ յորում գտանին յամառ և նեղչակախիսս մոլք, և ազգն ՚ի մեզ անկեղծ խղճս եղբայրսիրութեան ՚ի լուսաւորել զնոսա և ՚ի հրահանգել:

Որպէս մի է մեզ Աստուած, նոյնպէս և մի միայն միջնորդ ամենեցուն, որ և փրկեացն զմեզ սուրբ արեամբն իւրով: Խմաստասէրք ոմանք հեթանոսք ասացին՝ թէ բնութիւնն աստուածային անմատչելի է մահկանացուաց, և ոչ խառնի ինքնին անընդմէջ լերս մարդկայինս՝ զի մի սրբութիւն իւր ապականեսցի. և թէ ոչ կամելով զի արարածք տկարք որպէս զմեզ՝ մատիցեն յաթոռ իւր, կարդեալ էին միջնորդս ընդ ինքն և ընդ մեզ, որ վասն այսորիկ կոչէին միջին դիք: Հերքեմք մեք զվարդապետութիւնս զայս, զի Աստուած զոր մեքն պաշտեմք՝ ձեռամբ իւրով արար զմեզ ’ի պատկեր իւր և ’ի նմանութիւն. և հաւատամք իսկ՝ զի ’ի սկզբանէ արար զմեզ հաղորդս իւր. այլ մերժեցաք յերանաւէտ երեսաց իւրոց և ’ի քաղցր հաղորդակցութենէ անտի վասն մեղաց մերոց: Արիւնն Քրիստոսի հաշտեցոյց զմեզ, և յանուն նորա կարեմք այսուհետև մերձենալ առ Աստուած. անուամբ այսուիկ աղօթեմք վասն մեր, անուամբ այսուիկ աղօթեմք և վասն ամենայն հաւատացելոց. և Աստուած որ հաճի ընդ սէր և ընդ խաղաղութիւն եղբարց, լսէ զաղօթս մեր վասն միմեանց: Ըստ այսմ ոչ ինչ երկբայիմք, զի և սուրբք՝ որ թագաւորեն ընդ Քրիստոսի՝ բարեխօսք աստուածահաճոյք աղօթեն վասն մեր: Եւ քանզի սկիզբ զմեզ Աստուած, ամենեքեան՝ որ ընդ նմա են՝ բարեկամք են մեր. այո, ամենայն հոգիք երանեալք՝ բարեկամք մեր են և եղբարք. վստահութեամբ խօսակից լինիմք ընդ նոսա, և թէպէտ աներևոյթք են, սակայն հաւատոք մեր երևեալս կացուցանէ մեզ զնոսա, և եղբայրսիրութիւն և նոցա առնէ զնոսա մեզ նպաստաւորս, օգնական լինին մեզ յիղձս՝ զոր բարեպաշտութիւն ազդէ ’ի մեզ: Այլ լուարուք, հաւատացեալք, վարդապետութիւն ինն օգտակարագոյն և գերազանց. Այլեւս առաւել ևս ճանապարհ ցուցանէմ ձեզ: Հեթանոսք պաշտէին զդիս երեւնաւորս բազմաձեւս,

զորս չէր մարթ պատուել առանց ամպարշտութեան, զի չէր օրէն նմանել նոցա առանց ամօթոյ. իսկ քրիստոնէական կարգ այս է, զոր խնդրեմ ’ի ձէնջ կապել յուշի. պարտ է քրիստոնէի նմանող լինել ամենայնի՝ զոր պատուէ, ամենայն զոր պաշտեմքս՝ պարտի լինել օրինակ վարուց մերոց, որպէս սուրբն Յոհաննէս ասէ:

Սաղմոսերգուն յետ ցուցանելոյ զերանդն նախանձուն իւրոյ ընդդէմ կռոց համերց և անզգայից, որոց երկրպագէին հեթանոսք, հնչէ այսպէս. Նման նոցա եղիցին՝ որք արարին զնոսա, և որք յոյսացեալ են ’ի նոսա: Եւ տայ իմանալ, տեարք իմ, զի որում պաշտէն ոք՝ պարտի լինել նմանող, որպէս զի երկրպագուք կռոցն այնոցիկ արժ անի են հանդիպ նոցին խուզք և կոյրք լինելոյ. այլ մեք՝ որ պաշտեմքս զԱստուած կենդանի, կենդանի լինելոյ եմք ձշմարիտ կենօք որպէս զԱստուած: Պարտ է մեզ լինել սուրբս, որպէս սուրբ է փէր Աստուածն մեր. լինել գթածս, որպէս և հայրն մեր գթած է. խղճալ մարդկան զյանցանս նոցա, զի խղճէ և մեզ Հայրն մեր երկնաւոր, որ զարեգական իւր ծագէ ’ի վերայ լաւոց և բարեաց. պարտ է և մեզ տարածանել զսէր ’ի վերայ բարեկամաց և թշնամեաց: Պարտ է մեզ լինել երկրպագուս հոգևորս, երէից պագանել Աստուծոյ հոգւովն և ճշմարտութեամբ, զի հոգի է Աստուած: Եւ պարտ է մեզ լինել խոհեմ ըստ ասելոյ, որպէս և Հայրն մեր երկնաւոր խոհեմ է:

Ա՛ւ ինչ կատարեմք զսոյն սրբոց. առ ’ի յաւելուած Թեւեա զվտառս նոցա. զի են նոքա փառօք և լիապատարագ. այլ սոյնմամբ՝ առ ’ի լինել նոցին նմանողք: Եւ ’ի յարգել մեր զնոսա, պարտս յանձն առնումք հետևելոյ նոցա. այս են միաք եկեղեցւոյ ’ի խմբել ժողով ’ի պատիւ նոցին, և զայս յայտ առնէ ’ի գեղեցկիկ յաղօթս յայս, «Տուր մեզ, Տէր, զշնորհս նմանող լինելոյ սրբոյս՝ զորոյ կատարեմք զվերջաւոյն»: Եւ սուրբն Բարսեղ Աւետիսոյ ասէ. «Զորբանեաց ’ի սրբոց կատարեմք զսոյն, նոյնքան պատկերս առաքելի առնէ մեզ եկեղեցի ’ի նմանութիւն»: Եւ սուրբն

Օգոստինոս ասէ. «Տնաիմբուելիւնք մարտիրոսաց յորդորեն զմեզ՝ ի վկայուելիւն». և այլուր. «Ոչ յօժարակամ բերին մարտիրոսք՝ ի բարեհաճել վտան մեր, եթէ ոչ տեսանէն՝ ի մեզ զառաքինուելիւնս ինչ իւրեանց»: Այս է ասա աւանդուելիւն և վարդապետուելիւն անփուխրն կաթողիկէ եկեղեցւոյ, զի կարևորագոյն մասն պաշտաման սրբոց է յօգուտ՝ ի կիր արկանել մեզ զօրինակս նոցին: Ընդունայն տօնեմք զսուրբս, եթէ ոչ ջանամք նմանիլ նոցա. պարտ է մեզ ապաշխարել և մահանալ որպէս զնոսա ովքանոսն՝ ի տօնս նոցա. լինել խոնարհս զդաստս և պարկեշտս որպէս զկուսանս՝ ի պատուել զնոսա, և մանաւանդ զկուսանացն Կոյս:

Ապա ուրեմն, ո՛ հաւատացեալք որդիք Աստուծոյ, եթէ ցանկայք երջանիկ որդեգրուելիւն Տէրամօրն, լերուք հաւատարիմ նորին նմանիլք, եթէ կամիք լինել պաշտօնեայքդ նորին: Ի նուագել մեր հանապազօր զՀրաշալի երգ սրբոյ Կուսին Մեծացոյցէ անձն իմ զՏէր, և ցնծացոյծ հոգի իմ յԱստուած փրկիչ իմ, նմանեսցուք եռանդեան աստուածպաշտուելիւն նորա, ասէ սքանչելապէս սուրբն Ամբրոսիոս. «Լիցի՝ ի մեզ հոգին Մարիամայ առ՝ ի մեծացուցանել զՏէր, լեցի՝ ի մեզ եռանդն Կուսին առ՝ ի ցնծալ յԱստուած»: Սքանչանամք ընդ կուսական մաքրուելիւն նորա, որ արարն զնա մայր, և որով յղացաւ նա զԲանն Աստուած յարգանդի. «Գիտասջիք, ասէ նոյն ինքն սուրբ վարդապետն, զի ամենայն ոք զգաստ և պարկեշտ՝ որ պահէ զմաքրուելիւն իւր և զանմեղուելիւն՝ յղանայ յինքեան զհնաստուելիւնն յաւիտենական, և ընու Աստուծով և շնորհօք նորա հանգոյն Կուսին»:

Թոյլ տուք ինձ, դստերք, առաջի առնել ձեզ յօրինակ զմաքրուելիւն նորա, որ են վառք իւր: Սիրելի է աչեսանել զկենդանագիրս և զկեպս երևելի որերոյ. ո

տայր ինձ կարել առաջի առնել ձեզ այսօր զփափուկ կերպարանս սրբոյ Կուսին, զշնորհս և զանմահական գեղեցկուելիւնս Տէրամօրն: Նկարիչք յանգիման առնեն ձեզ հանապազօր զպատկերս նորա ըստ մտաց իւրեանց, և ոչ ըստ նախատիպին նմանուելեան: Պատկեր, զոր ես յանգիման առնեմ ձեզ, և հրաւիրեմ զձեզ տեսանել, և մանաւանդ ուխտեալք, առ՝ ի սարասել ըստ այնմ զվարս ձեր, ՝ի կիր առեալ է՝ ի սուրբ Աստուածանէն, և իշխեմ ասել՝ զի է նկարեալ ըստ Թելադրելոյ Հոգւոյն սրբոյ՝ ի սուրբ գիրս: Այլ սուրբ գիրք ոչ ցուցանեն մեզ զգեղարգոյն կցորդուելիւնս նորա ընդ Աստուածոյ, բայց միայն զսովորական առաքինուելիւնս, որպէս զի լիցի նա յընտանի օրինակ և՝ ի պէտս ամենեցուն. ապա նկարագիրս սրբոյ Կուսին խնկաքանչ է պարկեշտուելիւն նորա և մաքրուելիւն: Ոչ խորհէր նա երևել՝ թէպէտ և էր գեղեցիկ, ոչ զարդարել՝ թէպէտ և օրիորդ մատաղ, ոչ մեծանալ՝ թէպէտ և էր աղնուազգի, և ոչ ձոխանալ՝ թէպէտ և չքաւոր: Աստուածով չատանայր, Աստուած միայն էր նմա ամենայն ինչ. քանի պլաղդ յայնցանէ, որոց շուրջ յածին աչք համարձակք, և կամին երևել արուեստակեալ ձևովք իւրեանց և շարժուածովք: Մարիամ՝ինգրեր զբերկրուելիւն իւր յատանձնուելեան, և չէր սովոր երևել մարդկան, մինչև խոռվել՝ ի տեսիլ հրեշտակին. ես նա ընդ բանս խոռվեցաւ, ասէն սուրբ գիրք, և խորհէր ընդ ինքն՝ որպիսի՞ իցէ ողջոյն այս: Մի՛ նա գիք, խռովի նա և խորհի, զգոյշ կայ միշտ, և յեղակարծն տեսիլ ոչ թմրեցուցանէ, այլ մանաւանդ զարթուցանէ զուշ նորա: «Աչսպիսիք են անձինք պարկեշտք, ասէ սուրբն Բեռնարդոս, միշտ զգոյշք, միշտ յերկիւղ. գոլան ուր իցեն ինչ կասկածելի, որպէս զի՝ ի վտանգի իսկ կան յապահովի. կասկածեն ամենայն ուրեք որոգայթ, և երկնչին առաւել՝ ի յարգանաց քան յանարգանաց, ՝ի հաճոյականաց քան յանհաճոյից, յողբանաց քան յարհամարհանաց»:

Զարմացարուք՝ զի սուրբ Կոյն խորհի ընդ ինք, այլ ոչ խօսի, ոչ յամէ՝ի խօսս, ոչ համարձակի յընդունայն բանս և՝ի խնդիրս։ Ո՞ւր իցեն, որք պարծին որսալ զխորհուրդս և զիղձս՝ի սրտից, և խելամուտ լինել՝ի գաղտնիս սրտից։ ուսցին՝ի սրբոյ Կուսէն զդոյշ լինել, մի՛ հեռաքրքիրք և մի՛ անհանգարտք, հսկել՝ի ներքուստ, քան զերկնալ արտաքս։ Այլ խօսի Կոյն ուր հարկն պահանջէ, ուր խնամք զգաստուԹեան խնդրեն։ Ա-տուածամայրուԹիւն առաջարկէ նմա հրեշտակն, և ո՞ ոչ կամիցի մայրուԹիւն այսպիսի հրաշափառ. այլ նա ասէ ցհրեշտակն. զնմ՞դ կարացից լինել մայր, եԹէ հաստատեալ եմ լինել միշտ կոյս։ Պատրաստ կայ հրաժարել՝ի մեծէ և՝ի փառաւորեալ առաջարկուԹենէն, զոր հրեշտակն ընծայէ նմա յերկնից Աստուծոյ։ Ոչ յորդորի՝ի փառաց անտի, առաւել ընտրէ զպարտս իւր քան զմեծուԹիւն, և սկսանի երկնչել՝ի վտանգէ կուսուԹեան իւրոյ։ Ո՛վ սէր զգաստուԹեան Կուսին, ոչ միայն՝ի վեր քան զամենայն խոստմունս մարդկան, այլ եԹէ նշևլէլի ևոյ ասել՝ և քան զիւրաքանչիւր ամենայն խոստմանցն Աստուծոյ։ Յայտնէ նմա հրեշտակն զնորհուրդն աստուածային, և զանդուր գաղտնիս հրաշալի մայրուԹեանն. և սուրբ Կոյն խօսի երկրորդ անգամ առ՝ի հնազանդել կամացն Աստուծոյ. Ահաւասիկ ևս աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում։ Երանի՛ նմա, զի ոչ խօսի՝ բայց միայն առ՝ի պահպանել զկուսուԹիւն իւր, և առ՝ի խոստովանել զՀնազանդուԹիւն իւր կամացն Աստուծոյ։

Այլ զարմացարուք ընդ խոնարհուԹիւն նորա, զի լուԹեան փառաց, որ յապուշ կրԹէ զմիտս մարդկան և զհրեշտակաց, ոչ բարձրամտէ, ոչ խորհի՝ի մեծուԹիւն իւր, այլ ամփոփեալ՝ի խորին խոնարհուԹեան իւրում, հնանայ ընդ հայել Աստուծոյ յինքն, և ասէ. Հայեցաւ՝ի խոնարհուԹիւն աղախնոյ իւրոյ։ Եւ քաջ՝ի բաց՝ի

համարելոյ զանձն՝ի աքանչելիս աշխարհի, առ որ պարտ իցէ ամենեցուն փութալ՝ի տեսիլ, ինքն երԹայ այց առնել ազգականի իւրում ԵղիսաբեԹի. առաւել փութացեալ բերկրիլ ընդ բարուԹիւնս նորա, քան՝ի խորհել յիւրմէ. և ինդակից լինի վասն շնորհացն Աստուծոյ, որով պատուեին երկինք զտունն նորա։ Մեծացուցանէր ընդ նմա զքաւնչելիս՝ որ կատարէին յանձին իւրում, զի եգիտ զինա տեղեկացեալ այնոցիկ՝ի Հոգւոյն Սրբոյ։ Այլ ամենայն ուրիք լսէր նա և խելամուտ լինէր՝ի սրտի իւրում խոնարհ լուսուԹեամբ. որով դատապարտէր զամենեսեան, որք յընդունելն դոյզն ինչ շնորհ՝ տաղակացուցանեն զամենեցուն լսելիս, պատմելով որ ինչ ասացինն, որ ինչ արարին, և որոց ինչ արժանի եղեն։ Եւ յայտ առնէր ամենեցուն անզուգական խոնարհուԹեամբ իւրով, զի մարԹ է լինել մեծ՝ առանց ջոջ, և երջանիկ՝ առանց համբաւոյ, հասանել ստոյգ փառաց անսեսաբար՝ վկայուԹեամբ ևսԹէ իւրոյն խղճի մտաց։

Այսպիսի է սուրբ Կոյն, տեարք իմ. և գարձեալ ասեմ, զի պաշտօնասիրուԹիւն ձեր առ նա չիցէ երբէք նմա հաճոյ, եԹէ ոչ լինիցիք նմանողք նորա։ Կանգնեցէք նմա այսօր պատկեր սուրբ, կացէք դուք ինքնին պատկերք նորա. «Լիցի իւրաքանչիւր ոք՝ի ձէնջ, ասէ սուրբն Գրիգոր Նիւսացին, նկարիչ և քանդակիչ վարուց նորա յանձին»։ Յօրինեցէք զվարս ձեր ըստ գեղեցիկ օրինակից. լերուք խոնարհք, լերուք զգաստք, լերուք ամբնդք, արհամարհեցէք զունայնուԹիւնս աշխարհի, և զամենայն նորահնարուԹիւնս հակառակս պարկեշտուԹեան. հանդերձեք սպասահարկուք ամօԹխածուԹեան՝ ծածկեացեն՝ի ձեզ խնամով, տիկնայք սրբասէրք, որոց ինչ չիցէ պարտ երևել։ ԵԹէ երբէք նուազ ինչ այնու լինիցիք հաճոյք մարդկան, սակայն հաճոյապոյնք լինիցիք որուամ պարակքն լինել հաճոյք. և դեմք ձեր, որուամ միայն պարտ է երևել, զի՝ի նմա փայլէ պատկեր Աս-

տուծոյ, աքօղէսցի և այն պատշաճականաւն աստուա-
ծահաճոյ քօղով պարզուԹեան և համեստուԹեան: Ա-
նիցէ սուրբ Կոյն՝ զի պատուէք զինքն, եԹէ լինիցիք ա-
ռաքինուԹեանց իւրոց նմանօղք. բարեխօսեսցէ վասն
ձեր, եԹէ չանայցէք լինել որդւոյ իւրում հաճոյ. և լի-
նիցիք որդւոյ իւրում հաճոյք, եԹէ տեսցէ նա զձեզ
նման մօր իւրում ընտրելոյ յիւրմէ:

Յայսմհետէ չանացայ ցուցանել ձեզ, ո՛ հաւատա-
ցեալք, զի Աչմարիա պաշտօն սուրբ Կուսին և սրբոց է
ըստ օրինակի նոցին առնել զկամս Աստուծոյ, և ընդհանուր
՛ի խնդիր լինել Աչմարիա բարւոյն, այս ինքն յաւիտեան-
կան փրկուԹեան մերոյ, կատարելով զքրիստոնէական
առաքինուԹիւնս՝ որոց նոքա եղեն կատարեալ օրինակք:
Դիւրին լիցի արդ գատապարտել, սահմանելովն ՛ի
մէնջ կանոնաւ, զամենայն կարծեցեալ պաշտամունս՝
որ անարգեն զքրիստոնէական բարեպաշտուԹիւն: Ո՛ր
ապականէն զպաշտօն մեր անդստին յարմատոյ՝ այն է,
զի ոչ առ ՛ի փրկուԹիւն մեր կարգեմք զայն, այլ առ
ժամանակեայ շահ օգտից մերոց: Ծխտեցէք զայս, եԹէ
կարէք. ո՞ է՝ որ ուխտիւք խնդրէ ՛ի սրբոց օգնականու-
Թիւն ընդդէմ մեղաց իւրոց և ախտից, և զբարեխօսու-
Թիւն նոցա առ ՛ի գտանել ՛ի Տեառնէ զշնորհս գարձի:
Ուխտք կարևորք յանձնեալք յեկեղեցիս մեր ոչ ապա-
քէն են ՛ի խնդիր ժամանակիցց իրաց. և երանի՛ Թէ այ-
սոքիկ ևս լցեն արժանահայեցք. և եԹէ չէրկնչիմք առնել
զԱստուած և զսուրբս նորա պաշտօնեայս և գործա-
կիցս կենցաղական օգտի մերոյ, գէԹ երկիցուք ՛ի կա-
մելոյ առնել զնոսա գործակիցս մեզաց մերոց: Տեսանեմք
՛ի մեզ անկարեկիր աչօք զխտաս՝ որ սպանանէն զմեզ, և
ոչ աղօԹեմք առ Աստուած փրկել զմեզ յայնցանէ. իսկ
եԹէ հասանէ մեզ խօԹուԹիւն կամ նեղուԹիւն ինչ
յընտանիս, յայնժամ սկսանիմք գիմել յուԹօրեայ պաշ-
տամունս ՛ի սուրբս սեղանս առ ամենայն սուրբս, և ծան-

րաբեռնել ուխտիւք մերովք զերկինս. զի երջ՞ ինչ ծան-
րագոյն երկնից, քան աշխատ առնել զնա անարգ և շա-
հասէր ուխտիւք և պաշտամամբք: Յայնժամ յուշ լի-
նին մեզ՝ զի են Թշնամեաք՝ որ հեծծեն ՛ի բանս, և աղ-
քատք անտէրունչք՝ որ մեռանին ՛ի քաղցոյ և ՛ի հիւան-
դուԹենէ ՛ի խաւարչտին ուրեք անկեան: Յայնժամ շար-
ժեալք յիղբայրսիրուԹիւն և ՛ի գԹուԹիւն բռնի, ըն-
ծայեմք խունն ինչ Աստուծոյ վասն ընդունելոյ բաղում,
և գոհք ընդ եռանդն նախանձու մերոյ՝ որ է խնդիր շա-
հու մերոյ, հաւատամբ՝ զի Աստուած է տուիչ ամենայնի,
և աքանչելագործ իսկ ՛ի լուսին ըղձից և անձնասիրու-
Թեան մերոյ: Ո՛վ Տէր, այսպիսիք են երկրպագուք քո՝
որ լնուն զեկեղեցիս. սուրբ Կոյս և հոգիք երանեալք,
այսպիսիք են՝ որք զբարեխօսուԹիւն ձեր խնդրեն. Թա-
խանձեն զձեզ ՛ի փոյԹ իրաց իւրեանց, աշխատ առնել
չանան ՛ի հնարս ամբառնալոյ զբախտ իւրեանց, կամին
զի մուռացիք զարհամարհել ձեր զաշխարհ, և աղաչեն
զի հաստատեսջիք զինքեանս ՛ի նմա: Տէր Յիսուս, այս-
պիսիք են խղճք այնոցիկ՝ որ աշակերտք քո անուանին,
զորոց կարեաղ ասել, որպէս ասացեր երբեմն՝ Թէ Ժող-
վուրդ պնդեն ՚ն նեղեն զքեզ, այլ մի՛ ՚ն նոցանէ վերյիշես
՚ի քեզ: Ամբոխն այն՝ շուրջ պատեալ զսուրբ սեղանով
քով է բազմուԹիւն վարձկան Հրեից, որ խնդրեն զեր-
կիր պարարտ, և զուղխս կաԹին և մեղու, որպէս Թէ
Հաբ գեռեսս յանապատին Սինայ յափունս Յորդանանու,
՛ի տուեալս մովսիսականս, և ոչ ՛ի լոյս Աւետարանի
Փրկչին՝ որ ասաց. Իմ արքայուԹիւն չէ յայսմ աշխարհի:

Իբր ոչ եԹէ չիցէ մեզ օրէն խնդրել բարեխօսու-
Թեամբ սրբոց և զպէտս աղքատաւոր կենացս, զի Փրկիչն
մեր ինքնին ուսոյց մեզ խնդրել ՛ի Հօրէ իւրմէ զհաց մեր
հանապազորդ, և սուրբ Տիրամայրն ոչ անարժան հա-
մարեցաւ առաջի առնել որդւոյ իւրում զպէտս գինւոյ
՛ի հարսանիսն Կանայ: Խնդրեսցուք ապա վստահու-

Թեամբ զհայց մեր հանապազորդ, խմանալով ընդ հայիւս ոչ միայն զկարևոր պէտս մեր, այլ եթէ կամիք և զդիւրութիւնս կենցաղոյս վասն տկարութեան մերոյ. այլ գոնեա մի մոռասցուք, ո՛ հաւատացեալք, զի եմք քրիստոնեայք, և սպասեալ միամբ լաւագոյն կենաց: Խորհեցարուք՝ զի յեօթնեակ հայցուածս տէրունական աղօթից յեռեալ է ինդրուածս այս, փակեալ յառաջոյ և յետոյ՝ի հոգեկանաց պիտոյից. նախ զսրբութիւն անուանն Աստուծոյ ինդրեմք, զգալուստ արքայութեան իւրոյ, և զհամաձայնութիւն ընդ նմա, ապա խոնարհութեամբ զթողութիւն մեզաց մերոց, զգնականութիւն նորա ընդդէմ չարին, և փրկութիւն՝ի չարեաց. ՝ի մէջ այսոցիկ հաւանցի զպէտս ժամանակաւորս, գոգցես ինն ընկալեալս՝ի հայցուածս պիտոյից հոգւոյ: Հացն իսկ հանապազորդ՝ զոր ինդրեմք, կրկին ունի իմաստս. զի նշանակէ զնիւթ մարմնոյ և զհոգւոյ, այսինքն զսուրբ հաղորդութիւնն՝ որ է ճշմարիտ հաց որդւոց Աստուծոյ: Այլ քան զդուշացաւ Փրկիչն մեր, զի մի ինամք մահկանացու մարմնոյս և ծշուառ կենցաղոյս գրաւեսցէ իւր վայրկեան մի զկենաց մերոց. կամեցաւ զի միշտ և հանապազ դէտսին կալցուք հանդերձելոցն բարեաց և յաւիտենական կենաց: Իսկ մեք զպէտս աղցաւոր կենացս ևեթ ինդրեմք. և պարապեալ՝ի յանձն առնել Աստուծոյ զողորմելի գործառնութիւնս մեր, և՝ի թախանձել զնա ամենայն սրբովք իւրովք՝ի շահ օգտից մերոց, յաւելուածք և եսյարել՝ի նոսին: Վասն որոյ ելանեմք յաղօթիւ՝ ոչ առաւել խաղաղացեալք սրտիւ, ոչ առաւել՝ի կամս Աստուծոյ ապաստանեալք, և ոչ առաւել եռանդունք՝ի պահպանութիւն աստուածային օրինաց. այլ և քան զևս եռանդնոտք և ջերմագոյնք յերկրաւորս. վասն այսորիկ և՝ի չաջողել իրաց՝ ոչ պատկառանօք և հնազանդ սրտմտութեամբ հեղուք զաղերս ձեր առ ոտս Աստուծոյ, այլ սրանջելով իմն՝ի ծածուկ, և գժկամակութեամբ իմն՝ որպէս թէ դառնացեալք:

Մոռանայք դուք, ո՛ հաւատացեալք, զի Աստուած՝ առ որ աղօթէքն՝ էՙ ի գից անտի ոք, զի համարիք խոնարհեցուցանել զնա՝ի կամս ձեր, այլ է ճշմարիտն Աստուած, որ առնէ ընդ ձեզ որպէս և կամի: Գիտեմ՝ զի գրեալ է. Զկամս երկիւղածից իւրոց առնէ Տէր. այլ պարտ է ապա երկնչել՝ի նմանէ, և հպատակել նմա՝ի բոլոր սրտէ: Աղօթք, ասէ սուրբն Թովմաս, է ամբարձումն մտաց առ Աստուած. յայտ է ապա, ասէ նոյն ինքն հրեշտակապետն վարդապետն, զի չաղօթէ նա՝ որ առանց ամբառնալոյ զմիտս իւր առ Աստուած, ինդրէ՝ զի Աստուած առ ինքն խոնարհեսցի. կայ յաղօթս, ոչ առ՝ի կամել զոր կամի Աստուած, այլ առ՝ի տալ Աստուծոյ կամել զոր ինքն կամի: Անհամարհութիւն անհանդուրժելի. այսպէս մարմնաւորքս ոչ իշխելով չորհել զԱստուած՝ի կամս մեր, մտաբերեմք՝ի հնարս յանկուցանելոյ՝ի մեզ դիւրաւ զՏիրամայրն և զսուրբս ողբական պաշտամամբք, և յոգնաթախանձ աղերսանօք: Մի առաւելազանց զբանքս համարիցիք. վարիմք մեք ընդ սուրբս որպէս ընդ հասարակ մարդկան, կարծեմք չահել զնոսա խնամովք ինչ և հանապազորդ սպասուք անոտեօք. ոչ խորհիմք՝ զի են աստուածարեալք, նմանք՝ի չորութիւնս Տեառն, որպէս Աղմսեորդուն ասէ, վրէժխնդիրք փառաց և արդարութեան նորա ընդդէմ մեղաւորաց, որպէս աղաչաւորք բարութեան և ողորմութեան նորա:

Ո՛վ աղետից, արք ապաշնորհք կարասցե՞ն միշտ զերծանել բարեբարոյութեամբքն Աստուծոյ, և զվերս իւրեանց չայրացուցանել դառն սպեղանեօք: Չի զի՞նչ այլ եցէ պաշտօնդ այդ ընծայեալ սրբոյ Կուսին՝ի քրիստոնէից ոմանց. օրէնս սահմանեն անձանց, և պահեն. պարտս՝ի վերայ իւրեանց դնեն, և են անվրէպք՝ի կատարումն նոցին. սակայն արհամարհեն որ ինչ Աստուած օրինագրէ նոցա, և զանցանեն յանդգնաբար զսրբազնագոյն պարտուք իւրեանց, արժանիք ահագին սպառ-

նալեացն, որովք մերժէ Տէր ՚ի ձեռն մարգարէին զաղօթս և զպահս այնպիսեացս. Ու զայնպիսի պահս ընտրեցի, ասէ Տէր. չի յաւուրս պահոց իւրոց գտանին կամք իւր կոփածք։ Համարիմք զամենայն պարտս մեր կատարեալ ՚ի պատիւ սրբոյ Կուսին, ՚ի մեծացուցանել զփառս նորա գեր ՚ի վերոյ քան զդասուց հրեշտակաց, և ՚ի դաւանել զսրբութիւն նորա անարատ անդստին ՚ի յղութեանէ իւրմէ։ Գովեմ, եղբարք, զեռանդն ձեր. գիտեմ՝ զի արժանապատուութիւն նորա գեր ՚ի վերոյ սրբեաց քան զամենայն միտս ձեր և զխորհուրդս. այլ եթէ ըստ կրկնականն այն արատ այդչափ սոսկալի է ձեզ, վասն որոյ չհանդուրժէք համարել լեալ զայն ՚ի սուրբ Կոյսն, զի՞ է զի ոչ հակառակ կայք ազահութեան և փառասիրութեան և անմաքրութեան, որք նորին են թշնամք արգասիք։ Է որ նեղի՝ վասն չկարելոյ կատարել զպատակ Կուսին և զայլ կարգս աղօթից իւրոց, կամ վասն պակասառնելոյ ողջոյնս ինչ ՚ի տանց վարդապետին. և ոչ եպերեմ, քաւ լիցի. գովեմ մանաւանդ ՚ի հրահանգս բարեպաշտութեան զՁդութիւն կարգի. այլ ո՞ կարասցէ հանդուրժել զանցանելոյ նորա հանապազորդ չորից և հնգից զպատուիրանացն Աստուծոյ, և առ ոտն կոխելոյ անխիղճ զսուրբ կարգս քրիստոնէական կրօնից։ Այլանդակ խաբէութիւն, որով Թշնամին ազգի մարդկան պատրէ զմեզ. չկարէ նա խլել ՚ի սրտէ մարդկան զկրօնս, զի տեսանէ խորագոյնս դրոշմեալ զայն անդ, և ոչ ըստ օրինի ներից վարել նովաւ՝ այլ վտանգաւոր օրինակաւ, որպէս զի կերպարանօք կրօնից պատրեալ՝ համարեացուք դուշնակեայ կարգօք ընդ զկարեւոր պարտս, զոր սահմանեն մեզ կրօնք. խաբէք ո՛ հաւատացեալք։ Աղօթեցէք առ Տիրամայրն, յորդորեմ զձեզ. օգնեսցէ նա մեզ ՚ի վորձութիւնս, ընկալցի վասն մեր զմաքրութիւն՝ որ կարեւոր է մեզ, ընկալցի զդիմի ՚ի կոչնակն՝ այսինքն զսէր ՚ի կենակցութեան, և արիութիւն ՚ի ծուլութեան. այլ

լուարձուք որ լինէ ՚ի հարսանիս անդ խրատ եւս այնոցիկ՝ վասն որոց բարեխօսէրն. Որ պինդ ասիցէ ձեզ, արասջի՛։ Բարեխօսեմ էս, ասէ, այլ և դուք արարէք որ լինէ որդին իմ հրամայէ, որպէս զի տեսջիք զբանէղելիսն, և զարդասիս բարեխօսութեան իմոյ։ Զնոյն և ես ասեմ ձեզ, եղբարք իմ. յուսացարուք ընդունել զամենայն ՚ի սրբոյ Կուսէն, եթէ պատրաստ լինիք առնել զամենայն՝ որ լինէ հրամայէ ձեզ Քրիստոս. զայս օրէնս սահմանէ նա ձեզ։

Այլ ասիցէք. Ո՞ր վարեալ տանիս զմեզ, Թողցո՛ք ապա զաղօթս ՚ի բաց, եթէ չկացեմք դարձեալ բոլորովին առ Աստուած, կացցո՛ք ճնացուք առանց աղօթից որպէս անհաւատք։ Մի եղբարք, քաւ լիցի. մատուցէք զաղօթս ձեր. լաւ է ձեզ Թերի բարեպաշտել՝ քան Թողուլ ՚ի սպառ ՚ի բաց զբարեպաշտութիւն, եւ մոռանալ զքրիստոնէութիւն։ Բժիշկ, որ դարմանէ զձեզ ՚ի վտանգաւոր հիւանդութեան՝ որ տիրեալ լիցէ ՚ի ձեզ, մատուցանէ դեղս սաստիկս, այլ սահմանէ և դեղս մոքիչս. ընկալարուք զայսոսիկ, եթէ չկարէք տանել առաջինոյն. այլ ազդ առնէ նա ձեզ՝ զի ոչ բաւեն ամոքիչքն այնոքիկ դեղք զբժշկութիւն ձեր կատարել։ Զայրանայցէք Թերեւս ընդդէմ նորա, մանաւանդ Թէ ընդդէմ ձեր, և ասիցէք Թողուլ ՚ի բաց զդարմանն, և չբանիցէք զառողջութիւն և զկեանս. այլ նա ոչ զայրանայ ընդդէմ ձեր, համարի զզայրոյթ ձեր դառն արգասիս կամ մանաւանդ մանն լինչ խոթութեան ձերոյ, և խրատէ. Մի այդպէս, մի դադարիք առնուլ զդեղս՝ որ գէթ չկարեն առնել լինչ ձեզ ինեա, Թերեւս կարասցեն կազդուրել զբնութիւն ձեր ընկճեալ. ապա Թէ ոչ, յետոյ ապա կորնչիցիք անդարման, եթէ ոչ զօրանայք ՚ի մեծագոյն ձիգն առողջութեան։ Զնոյն և ես առ ձեզ երկրորդեմ. մի Թողուք ՚ի բաց զհրահանգս զայդոսիկ բարեպաշտութեան, կատարեցէք զաղօթիցդ կարգ. լաւագոյն է ձեզ այդ քան մոռանալ ՚ի սպառ զԱստուած և զձեզ.

այլ մի վատահիք ՚ի գուշնաքեայ հրահանգող յայդոսիկ. խափանեսցեն արդեօք դոքա զՔեծադոյն էսը, զյայտնի ամպարշտութիւնն և զարհամարհութիւնն Աստուծոյ համարձակ. սմին երկն ներբեսցի ձեզ այդ, այլ գիտասջիք՝ զի ոչ կատարեն այդոքիկ զքժշկութիւնն ձեր. և եթէ յոբասյք՚ի դոսա, լսցեն խափան առողջութեան ձերում մինչ ՚ի սպառ: Լուարո՛ւք որ ինչ սուրբ գիրք ասեն զընացից ձերոց և զվեր ՚ի վերոյ բարեպաշտութենէդ. Յոսայեայ ՚ի անոքիս, խօսին զանայնութիւնն. զսպասյնս սպրդիչ անկանէն. ապտյնէ նոցա ոչ յոյժ ոչ ինչ, և ոչ զգեցոյն ՚ի գործոց ձեռաց իւրեանց. ոտք նոցա ՚ի լաքն ընկանան:

Զայս վճիռ տայ Հոգին սուրբ ընդդէմ այնոցիկ, որք զբարեպաշտութիւնն իւրեանց հաստատեն ՚ի մնոանս յայտսնի, ներբեցէք համարձակութեան բանիցս, և անփոյթ լինին առնել պատուոյ արժանի ապաշխարութեան ըստ Աւետարանին: Բարեպաշտութիւն նոցա վեր՚ի վերոյ ոչ կարասցէ ծածկել զնոսա, անօրինութիւնք նոցա յայտնեսցին, և ամաչեսցեն ընդ ջքաւորութիւն իւրեանց: Ի բերանոց իւրեանց դատեսցին ծառայք չարք. և սուրբք, զորս նոքա գովէին, դատապարտեսցեն զնոսա օրինակօք իւրեանց: Կամիցիք ապա լինել պաշտօնաակր Կուսին, որպէս զի պաշտօն ձեր լիցի ձեզ օգտակար. ՚ի երոյք սրբասէրք, ՚ի երոյք եղբայրասէրք, ՚ի երոյք արդարասէրք. իրաւ արարէք որբոց և այրեաց, պաշտպան կացէք զրկելոյն, սփոփեցէք զալքատն և զտառապեալ: Եւ առաւելեալ՚ի գործս բարութեան, զդոյշ լերուք չարկանել զկարեւորն ՚ի մոռացօնս. պատկառ կացէք օրինաց, կատարեցէք զոր Փրկիչն մեր հրամայէ. Որ գնիլ ասիցէ յեղ, արասջիւ. և ընկալջիք զոր խոստացաւն. եղիցի եղիցի:

ՊՈՍԻԻԷԻ

ՄԵԼԴԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՇՆՈՒՆԴ ՏԻՐԱՄՕՐՆ

Գիշերն մեծ եցաւ, և տիւն մերձեցաւ:

Հռոմ. ԺԳ. 12:

Ոչ արուեստք, ոչ համադոյք, և ոչ Աստուած ինքնին, յանկարծ ՚ի լոյս ածեն գործս մեծամեծս. այլ տակաւ գան այնոքիկ յառաջ. ծրագրի նախ քան զպատկերել, տեղագրի նախ քան զկառուցանել, նախ քան զհրաշակերտս յօրինին արուեստականք: Նոյնպէս գործիք և բնութիւնն, և որք զգաղտնիս նորա հետազօտեն, գիտեն՝ զի ՚ի գործս ուրեք Թուի նա խաղալ, կամ մանաւանդ կրթել զՀեռն՝ առ ՚ի գործել ինչ կատարելագոյն: Առաւել ևս հրաշալի, զի և Աստուած զնոյն ունի կարգ, և զայն առաւելապէս եցոյց ՚ի խորհուրդն մարդեղութեան, որ իմաստութեան իւրոյ է հրաշակերտ, և զօրութեան իւրոյ ձիգն հզօրագոյն. վասն որոյ ասէ, զի առ՚ի կատարել զայն շարժեսցէ զերկինս և զերկիր. Դարձեալ մի՛ւանգամ շարժեցից զերկինս և զերկիր. և է այն ըստ առաւելապանծութեան գործ իւր. Հայեցայ ՚ի գործս ձո, և պարհուրեցայ. և դարձեալ՝ զի Թեպետև ՚ի սկզբանէ աշխարհի էր սկսեալ, այլ՚ի հասանել ժամանակին երևեցաւ: Եւ օրինք բնականք, և օրինք գրաւորք, արարողութիւնք և զոհք,

քահանայութիւն և մարգարէութիւնք, էին նախագիծք Քրիստոսի, ասէր ոմն ի հնոց. և էին նա ի գործն մեծ, բայց հանդերձանօք անթիւ պատկերաց և օրինակաց՝ որ եղեն նմա ի պատրաստութիւն: Այլ ի հասանել ժամանակին, ի մերձենալ ժամու կատարման խորհրդոյն, աքանչելագոյն ևս ինչ խորհեցաւ. զամենօրհնեալն Աստուած ի լոյս, բերել յանձին կենդանի զպատկեր Քրիստոսի՝ զոր առաքելոց էր ընդ հուպ յաշխարհ, և զգեղեցկագոյն տիպս կերպարանաց նորա եղոյց յայնմ, զոր ի մայրութիւն նորին սահմանէր: Խոստովանիմ զի գժուարին է յոյժ ձառս, այլ չիք ինչ անհնարին որուամ յուսացոյն ի Տէր. խնդրեսցուք լոյս ի նմանէ բարեխոսութեամբ Կուսին, ողջունելով զնա ընդ հրեշտակին. Ողջոյն:

Սկսայց զձառս գեղեցիկ մտածութեամբն Տերտուղիանոսի, որ ի գիրսն յաղագս յարութեան մարմնոց: Մատենագիրս այս զգոն և անուանի ածեալ զմտաւ՝ թէ որպէս Աստուած ստեղծ զմարդ, զարմանայ ընդ խնամն՝ զոր ի կիր արկանէ անդ արարչին: Խորհեցարուք, ասէ, զոր հաւ յերկրի հող խոնաւ, տեսէք քանի խնամով յածէ զայն ի ձեռին, որպէս չաղէ, զնարդ պատրաստէ, քանի ճշդիւ և արուեստիւ ածէ ի յարդ և ի կերպարան, և միանգամայն ասէ՝ որպէս գուն գործէ և պարապի բովանդակ ի գործն յայն: Եւ զարմացեալ ընդ մտադրութիւնն Աստուծոյ ի նիւթն անարդ, և ոչ կարելով մտաբերել՝ զի պարա էր Աստուծոյ այնքան արուեստ և ճարտարութիւն ի կիր արկանել առ ի կուտել զփոշի և զանդել զկաւ, զհետ բերել՝ զի հեռագոյն ինչ ապա գիտէր Աստուած, և նկատեր երևելագոյն ինչ գործ: Եւ առ ի բացատրել զխորհուրդն՝ ի վերայ ածէ, զի Քրիստոս էր գործն այն, և Աստուած ի կերպարանել զնախամարդն՝ խորհէր գծագրել ի նմա զՔրիստոս, որ յաւուր միում յազգէ նորա ծնանելոց էր. և վասն այնորիկ

այնու մտադրութեամբ պարապէր ի կարևորն վաստակ, որպէս ասէ. «Ի կաւն յայն՝ զոր կերպարանէ, խորհի տալ մեզ զպատկեր կենդանի Որդւոյ իւրոյ՝ հանդերձելոյ եղանիլ մարդ»:

Այսոքիկ են գեղեցիկ բանք Տերտուղիանոսի. յորս յաւելում տեսութիւն ինչ, և խնդրեմ ուշիւ կշռադատել: Եթէ այսպէս իցէ, եղբարք իմ, զի Աստուած անդրնտին ի սկզբանէ աշխարհի ի ստեղծանել զառաջինն Ադամ՝ գծագրէր ի նմա զերկրորդն, և եթէ վասն փրկչին մերոյ Քրիստոսի կերպարանէր զնախահայրն մեր այնուհետև ամենայնիւ, զի Որդին իւր յետ բազմայոլով դարուց և ազգաց ծնանելոց էր ի նմանէ, այսօր ի տեսանել իմում զծնունդ ամենօրհնեալ Կուսին՝ որ հանդերձեալն է տանել զնա յարգանդի, չիցէ՞ն ինձ առաւելագոյն իրաւունք կնքելոյ, զի Աստուած ի ստեղծանել զաստուածընտիր մանկիկս զայս՝ ունէր ի մտի զՔրիստոս, և վաստակէր վասն նորա: Ապա մի զարմանայք, ո հաւատացեալք, զի այնպիսի խնամով ստեղծ զնա, և այնքան չնորհօք արար նմա ծնանել, զի վասն Քրիստոսի ստեղծ զնա, առ ի կացուցանել զնա արժանի Աստուածորդւոյն, ըստ նմին զմայր նորա կերպարանեաց. և զի հանդերձեալ է տալ մեզ ընդ հուպ զԲանն մարմնացեալ, ընծայէ մեզ այսօր ի ծննդեան Մարիամու զնկարագիր Քրիստոսի, և օրէն իսկ է ինձ ասել՝ ընծայէ զՔրիստոս սկսեալ, կենդանի և խաչաքանչ բացատրութեամբ ամենայն կատարելութեանց նորա. Թէպէտ և վաղ ի երկրպագանէր, այլ զհանդերձեալ մարմնաւորութիւնն Քրիստոսի ի նմա նկարագրէր: Սմին իրի յարեմ՝ ի ծնունդ Տիրամօրն զգեղեցիկ բան Առաքելոյն. Գիշեր ցերեկոյ, և օր գիշերոյ: Այո, եղբարք իմ, մերձենայ սիւն. և թէպէտ չև ևս երևի արեգակն, սակայն տեսանեմք այժմն զպատկեր նորա ի ծննդեանն Մարիամու:

Աքանչելի են ի Փրկիչն մեր ազատութիւն ի մեղաց, լուսութիւն չնորհաց, և սէր անսպառ առ մարդկայինս

քնուԹիւն. այսոքիկ են երեքին ձառագայԹք մերոյս արեգական, որովք փարատէ զամենայն խաւար: Զի պարտ էր Քրիստոսի գոլ անմեղ, առ՝ի սրբել զմեզս մեր. պարտ էր գոլ լի ընծհօք, առ՝ի ձոխացուցանել զաղքատուԹիւն մեր. պարտ էր բորբոքել մարգասիրուԹեամբ, առ՝ի ձեռնարկել՝ի բժշկուԹիւն ախտից մերոց: Երեքին այսքիկ հանգամանք՝ գլուխք են անբաժանելիք և տիպք կենդանիք և ընդակիցք, որովք է ճանաչել զՔրիստիչն. և Աստուած, որ առեղծ զկոյն սուրբ յայս տիպ սքանչելի, տայ մեզ տեսանել զնմանուԹիւն նմին նորին՝ի սեղծեալն: Ուրախ լինցուք ապա, եղբարք իմ, և գոչեսցուք ընդ Աւաքեղյն. Դիչէրն ՂերԹեցաւ, և պիտն Ղեյեցաւ. տիւն այն գեղեցիկ և բարենչան, տիւն երևելի՝ աւետեալ յայսքան՝ի բազում գարուց ընուԹեանս մերում. մերձ ձենայ նա, և մերժին սաուերք. վայելեմք այժմեն՝ի նշոյլս նորա. սկիզբն է տուընջեանն Քրիստոսի. զի որպէս ասացաք, ԹԷպէտ չև ևս երևի արեգակն, տեսանին այժմեն պայծառագոյն ձառագայԹք նորա՝ի նորածնին Մարիամ, այս ինքն անմեղուԹիւն, լուսաւորիչն ընծայից, և աղբիւր անհամեմատ սիրոյ առ մեզս աւրհնեալ, այս ինքն առ ամենայն ազգ մարդկան: Այսոքիկ են, տեսլիք իմ, երեքին գեղանչոյլ ձառագայԹք, զորս Աստուածորդին արձակէ՝ի Մարիամ. չէ՝ի նոսա ամենայն զօրուԹիւն լուսաւորելոյ՝ որ՝ի Քրիստոս աւետ, ՝ի նմա միայն է նոցին միջոցեալ պայծառուԹիւն, որ լուսաւորէ բոլոր բովին զնուԹիւն մարդկային, սակայն յօրինեն նոքա՝ի սուրբ Կոյն առաւօտ հաճոյական՝ որ սկսանի զուարճանալ ցուցանել զտիւն. յայս ուրախուԹիւն սուրբ և փրկաչէտ հրաւիրեմ ձառիս զձեզ:

ՄԱՍՆ ԱՒԱՋԻՆ

Զի՛ սուրբ Աւետարանին առաւել ինչ սրտաչարժ քան զսիրալիր քաղցրուԹիւնն, որով ընդունի Աստուած զԹշնամիս իւր եկեալս՝ի հաշտուԹիւն, խմա զմեզաւորս զղջացեալս: Ոչ շատ համարի ընդել զմեզս մեր, և լուսանալ զաղտեղուԹիւնս. սակաւ ինչ Թուի ամբաւ բարուԹեան իւրում զմեզք մեր ոչ ջնասեցին մեզ, այլ կամի զի և օգտեսցեն. այնքան բարիս չառաջ ածէ անտի, մինչև ստիպել զմեզ՝ եԹէ իչխելի իցէ ինձ ասել, երանել զմեզս, և գոչել ընդ սուրբ եկեղեցւոյ՝ Երջանի՛ն Ղէ՛: Շնորհք նորա պատերազմին ընդ մեզս մեր, և յաղԹեն. մինչև ասել Աւաքեղյն, զի Ով առաւել եղեն Ղէն, առաւել Ով յաբելան ընդհան: Եւ ոչ այսչափ միայն, այլ առաւել ևս հիանալի, զի այնու սիրով ընդունի զմեզաւորս զղջացեալս, մինչև ամենևին անմեղուԹեան (ներեա ինձ, Տէր, ասել զայս) ունել իրաւունս յեղանակաւ իմն արանջելոյ, կամ գԹե նախանձելոյ: Այնու քաղցրուԹեամբ վարի ընդ նոսա, զի եԹէ միայն իցեն զղջացեալ՝ ոչ ևս իցեն նոցա պատճառք զղջալոյ: Մի յոչխարաց իւրոց եԹէ օցիւէ, այլք ամենեքեան՝ որ մահաղեալ կան՝ Թուի նմա ոչ այնպէս սիրելիք որպէս զօցտեալն, ասէ Տէրտուղիա-նոս. յուզի գուԹ իւր առաւել ընդ անառակ որդին կորուսեալ՝ զոր գտանէ, քան ընդ անդրանիկն կացեալ ձեացեալ միշտ հաւատարիմ:

ԵԹէ այս այսպէս իցէ, եղբարք իմ, Թուի ինձ ԹէԿարիցեմք ասել՝ զի մեղաւորք զղջացեալք բարեբաստգոյնք իցեն քան զարդարս ոչ մեղուցեալս, և արդարուԹիւն վերսին ստացեալ՝ գեր՝ի վերոյ իցէ քան զանմեղուԹիւն յարատև: Սակայն չէ այդպէս, և չէ օրէն

երկրայել՝ զի անմեղութիւն միշտ է հնարք առանձին. քանզի թող զայլ ամենայն առաւելութիւնս նորա, չեմք բաւական ՚ի փառս իւր՝ զի Քրիստոս ընտրեաց իւր զսոյն: Լուարուք ո՛րպէս յայտ առնէ Առաքեալն զանմեղութիւն վարդապետին իւրոյ աստուածորդւոյ. Զի այսպիսի՛ էոկ և վայել էր մեզ քահանայապե՛տ սուրբ, անմեղ, անարատ, պոռնեալ ՚ի մեղաւորաց, և բարձրացեալ քան զերկինս, որոմ ոչ հարկ է որպէս այլոց քահանայապետից վասն ի՛րեանց մեղացն պատարագս մատուցանել. այլ զի ամենեցին գոլով սրբութիւն, զմեղս մեր քաւեսցէ: Իսկ եթէ Որդին Աստուծոյ զանմեղութիւն կալաւ իւր բաժին, չեմք պարտ խոստովանել՝ զի այն եղեւ իւր սրբել:

Մի՛, եղբարք իմ, մի՛ կարծիցէք՝ թէ այս յուղումն գթութեան, զոր զգայ Տէր վասն զղջացելոց մեղաւորին, կացուցանիցէ զմեղաւորն ՚ի վեր քան զսրբութիւնն՝ որ չեմք աղտեղեալ մեղօք: Առաւել է ախորժելի առողջութիւն գեհենս յարուցեալ ՚ի խոթութենէ, այլ ոչ եթէ չեմք գերարդոյ քաջողջութիւն քան զախորժ անդրէն հաստատելոյ առողջութեան: Յիրաւի յափշտակի սիրտ ուրախութեամբ ընդ անակնկալ հնարս գեղանչոյլ տուընջեան ՚ի ձմերայնի, որ յետ անձրևաց յանկարծ պայծառանայ, սակայն չեմք այնու առաւել յոյժ սիրելի հաստատուն պարզութիւն բարեխառն եղանակի: Այսպէս եթէ օրէն իցէ գտանել զխորհրդոց Փրկչին ըստ մարդկային զգացմանց, գիւրաւ նա գորովով զմեղաւորս գեհենս եկեալս ՚ի գարձ, որ են նորոգ ստացուածք իւր, այլ սիրէ միշտ առաւելագոյն զարգարս, որ են անսայթալելի բարեկամք իւր. կամ եթէ այսպէս հաճոյ իցէ խմաստասիրել զողորմութիւնն նորա բարձրագոյն տեսութեամբ, ասացից՝ այլ հակիրճ, առ ՚ի չօտարանալ յառաջարկութենէս, զի այլ են խորհուրդք Քրիստոսի ըստ աստուածային բնութեան և որպէս Որդի Աստուծոյ, և այլ ըստ մարդկօրէն անօրէնութեանն և որպէս փրկիչ մարդկան. այս զանազանութիւն բացատրէ բովանդակ զխորհուրդն:

Քրիստոս որպէս Որդի Աստուծոյ, թէպէտև ախորժ է տեսանել առ ոսս իւր զմեղաւոր զգաստացեալ, սակայն առաւել սիրէ զանմեղութիւն՝ որ չեմք արատաւորեալ, զի սա մեծաւոր ևս է ՚ի գերամաքուր սրբութիւն իւր, և տպաւորագոյն բերէ զիւր նմանութիւն: Պատուէ զսոյն Քրիստոս մտերմագոյն ընտանութեամբ, և որչափ և հաճոյ լեգեն յաչս իւր արտասուք ապաշխարողի, չկարեն հաւասարել ամբիծ հնարհաց հաւատարիմ սրբութեան: Այսպիսի են խորհուրդք Քրիստոսի ըստ աստուածութեանն. այլ վասն սիրոյ մերոյ էառ նա այլ խորհուրդս ՚ի լինելն փրկիչ մեր. զի թէպէտ և նախամեծար առնէ իւրև Աստուած զանմեղութիւն, այլ ուրախ եղիցուք, ո՛ հաւատացեալք, զի որպէս փրկիչ բազմագութ՝ եկն նա ՚ի խնդիր մեղաւորաց, և ոչ կեայ՝ բայց վասն մեղաւորաց, զի վասն նոցա առաքեցաւ: Լուարո՛ւք ո՛րպէս յայտ առնէ նա զվասն էրն առաքելութեան իւրոյ. Ուէնի՛ լուել ղբդեաս. զի թէպէտ և առաւել հաճոյ են լինել և արժանի սիրոյ իմոյ արդարք, այլ ոչ վասն նոցա եկի. որպէս փրկիչ՝ պարտիմ խնդրել զկորուսեալս, որպէս բժիշկ՝ զհիւանդս, որպէս աղատարար՝ զգերեալս: Այսր աղագաւ և սիրէ ընդ նոսա կենակցիլ, զի վասն նոցա միայն կայ յաշխարհի: Հրեշտակք, որ միշտ կացին արդարք, կարեն մերձենալ առ նա որպէս առ Որդի Աստուծոյ. ահա առանձին հնարք անմեղութեան. այլ որպէս փրկիչ նախագահ նա զմեղաւորս: Զոր օրինակ բժիշկ առաւել ախորժէ որպէս մարդ՝ կենակցել ընդ առողջս, այլ որպէս բժիշկ՝ սիրէ դարմանել զախտաժէտս, այսպէս բազմագութ բժիշկն երկնաւոր, որպէս Աստուածորդի՝ նախագահ ապաքէն զարդարս, այլ որպէս փրկիչ՝ խնդրէ առաւել զմեղաւորս: Ահա ՚ի լոյս ածեալ խորհուրդն բովանդակ ըստ սուրբ վարդապետութեան Աբեսարանին. Ներեցէք լինձ, եթէ երկարեցի, զի լի է սա մխիթարութեամբ վասն մեղաւորացս,

և յառաւելագոյն փառս սրբոյ և մշանջենաւորի անմեղութեան Տիրամօրն:

Զի եթէ արդարև սիրէ յոյժ Աստուածորդին զանմեղութիւն, ապէ, իցէ՞ երբեք կարելի՝ զի ոչ ուրեք գոցէ զայն յերկրի. գիտեմ զի ժառանգէ զայն յանձին ամենակատար, այլ չիցէ՞նմա բերկրութիւն տեսանել յոմանք հանգուցեալսիպ ինչ կամ մերձաւոր սրբութեան իւրոյ: և զնոսա՝ պարտ էր արդարոյն և անմեղին այնմիկ կալ յաւիտեան 'ի մէջ մեղաւորաց, առանց ունելոյ զմխիթարութիւն հանգիստելոյ ուժգնէ անարատէ. և ոչ այլ, եթէ ոչ մեր իւրում աստուածածնին: Այո, տեսցէ իմ, փրկիչն մեր բազմագութ՝ որ ստանձնեաց զամենայն զմեղս մեր, ընդ ամենայն կեանս իւր ընթացաւ զհետ մեղաւորաց անդադար 'ի խնդիր նոցին յամենայն անկիւնս Պաղեստինոյ. այլ մինչ բոլոր աշխարհ յանդիման առնէր նմա եղերունս, ա՜հ, դէթ տեսանէր առանին ընդ յարկաւ իւրով զոք, յորում աչք իւր բերկրէին ընդ անայլայլելի և ընդ յարատև գեղեցկութիւն անարատ սրբութեան:

Ապաքէն փրկիչն մեր բարեգութ ոչ մերժէ զմեղաւորս յերեսաց իւրոց, և ոչ անարժանս համարի զնոսա կոչել 'ի գեղեցկագոյն գործս արքայութեան իւրոյ. կարգէ հովիւ հօտին իւրոյ զՊետրոս զուրացօղն, 'ի դշուխ Առեսարանչաց զՄատթէոս մաքսաւորն, կացուցանէ առաքչին 'ի քարոզս զՊօղոս զառաքչին 'ի հալածչաց իւրոց: Ոչ են սոքա արդարք և անմեղք, են մեղաւորք զղջացեալք՝ զորս ամբարձ 'ի բարձրագոյն աստիճանս. այլ մի կարծէք զի 'ի դասս ասի ընտրեալ զսուրբ մայր իւր. պարտ է խոիր մեծ դնել ընդ նա և ընդ այլս. և որ իցէ այս խոիր. ահաւասիկ, և խնդրեմ քաջ միտ դնել, զի է կարևոր յոյժ և հիմն Ճշմարտութեան՝ զոր բացատրեմ:

Զի զնոսա ընտրեաց վանն այլոց, իսկ զՄարիամ

վանն իւր. զնոսա վանն այլոց ըստ բանին. Ահաւադիկ ինչ իցէ է. էրէն Պօղոս, էրէն Ապօղոս, էրէն Կեփաս. իսկ զՄարիամ վանն իւր, որպէս ասէ. Եղբօրորդին իմ ինձ, և ես նմա. որդի իմ է նա, և ես մայր իւր: Զորս միանգամ կոչէ վանն այլոց, առնու զնոսա 'ի մեղաւորաց, որպէս զի կարասցեն լաւ ևս պատմել զողորմութիւն իւր, և զմեղաց թաղութիւն: Խրախուսէր այսուհետև զհոգիս վհատեալս մեղօք. զի ո՞ պաղաբերադոյնս կարէր քարոզել զողորմութիւնն Աստուծոյ, քան զայնոսիկ՝ որ էին ինքեանք իսկ առհասարակ այնորիկ երևելիք: Ո՞ այլ կարող էր առաքելագոյն արքասեօք ասել. Հաւատարիմ է բանն, զի Յիսուս Քրիստոս էկն յաշխարհ փրկել զմեղաւորս, քան զԱռաքեալն՝ որ կարէր զհետ բերել՝ ոտոյ գլուխն ես իմ: Ո՞չ նոյն էր թէ ասէր ըստ Օգոստինեայ ցմեղաւորն՝ զոր ցանկայր ածել 'ի գարձ. «Մի երկնչիր, Ճանաչեմ զձեռն բժշկին՝ առ որ առաքեմ զքեզ. նա ինքն է՝ որ առաքէ զիս առ քեզ պատմել նրպէս զնա բժշկեաց, քանի հեշտեաւ, քանի գգուանօք»: Իցէ՞ ինչ ազդողագոյն և առաւել զօրաւոր 'ի քաջալերել զհետևանդն, 'ի սրտապնդել զլքեալն և զվհատեալն խղճիւ: Ապա խորհուրդ լմնաստուն էր առ 'ի ձգել առ Աստուած զմեղաւորս՝ պատմել նոցա զողորմութիւնն Աստուծոյ 'ի ձեռն այնոցիկ, որոց առեալ էր զխորհ այնորիկ. զոր և յայտնապէս ուսուցանէ Առաքեալն. Զի նա՛ իմ էդայդ Յիսուս Քրիստոս պաճնայն էրէյնմդուրիւն, յօրինակ այնոցիկ՝ որ հաւատալոցն իցեն 'ի նա: Տեսանէք առ ինչ Աստուած պատուէ յեկեղեցւոջ յառաջին աւադուրթիւնս զմեղաւորս զղջացեալս, լմա 'ի հրահանգս հաւատացելոց:

Այլ զի ըստ այսմ օրինակի կոչեաց զայլս, մի համարեսցուք զի այսպէս արար և ընդ սիրելի արարած իւր, ընդ արարածն գերազանցեալ, ընդ արարածն միակ և առանձնաշնորհ, զոր վանն իւր միայնոյ արար, այսինքն զի ընտրեաց զնա իւր 'ի մայր: Յառաքեալս իւր և 'ի

պաշտօնեայս որ ինչ օգտակարագոյն ՚ի փրկուԹիւն ա-
մենեցուն էր՝ արար. այլ ՚ի մայր իւր՝ որ ինչ քաղցրա-
գոյնն էր, որ ինչ հրաշափառ, որ ինչ ցանկալի իւր.
ւան որոյ ոչ ինչ երկբայիմ, զի արար անմեղ զՄարիամ:
զի է նա միակ իւր, և ինքն միակ նորին. եղբօրորդին իմ
ինչ, և ես նմա: Գիտեմ զի պարգև անմեղուԹեան ոչ ա-
ռատապէս բաշխի ապականեալ բնուԹեանս մերում,
այլ չէ առատաձեռնեալ՝ մեր ևԹէ չնորհել զայն. այլ մա-
նաւանդ լինէր Ճշդել՝ չչնորհել զայն մեզ:

Ֆաւ լիցի, եղբարք իմ, ոչ արասցէ Փրկիչն մեր
զայն. այժմիկն տեսանեմ ՚ի նորածինն Մարիամ փայլեալ
զանմեղուԹիւնն՝ որով պսակէ նա զմայր իւր. եկայք
պատուեսցուք զնորանչելն ՃառագայԹ, զոր ծագէ որ-
դին իւր ՚ի նա. գիչերն մերժի, տիւն մերձենայ. Յիսուս
հանդերձի ածել ընդ հուպ զիս երանաւէտ երևմամբն:
Ո՛վ տիւ երջանիկ, տիւ անամպ, տիւ՝ անմեղուԹեան
Աստուածորդւոյն փայլեալ պայծառ և ջինջ, երբ գայ-
ցես դու ծագել յերկիր: Մերձի այն, ցնծասցուք, ո՛հա-
ւատացեալք, տեսէք այժմիկ զայդ նորին ծագեալ
զսուրբ Կոյսն. Ծննդեամբ Կոսին երևի արշալոյն, ասէ սուրբն
Պետրոս Դամիանոս: Զարմանայցէք այսուհետև զի ասեմ
երևեալ անարատ զԿոյսն սուրբ անդստին յառաջնմէ
վայրկենէ կենացն: Զի օրն այն մեծ Քրիստոսի գոլով
այնպիսի պայծառ և լուսաւոր, ոչ Թուի ձեզ՝ ի դէպ՝ զի
և առաւօտ նորա ևցէ գեղեցիկ, և պայծառուԹիւն առա-
ւօտին խոստանայցէ զառաւընչէանն. ամին իրի, որպէս
կարի քաջ յաւելու նոյն վարդապետ. «Մարիամ արե-
փնասկիզբն հրաշափառ աւուրն, գեղեցկացոյց զա-
ռաւօտ նորին բարենշան ծննդեամբ իւրով»: Դիմեսցուք
ասել խնդրուԹեամբ տեսանել զսկիզբն նորահրաշ տուրն-
ջեանս. տեսցուք անդ փայլեալ զոյսն քաղցր անարատ
մանկուԹեան նորա. և մի համարեսցուք, զի առ ՚ի զա-
նաղանել զՄարիամ ՚ի Յիսուսէ՝ պարտ լիցէ բառնալ ՚ի

նմանէ զանմեղուԹիւն, և Թողուլ զայն յորդին միայն:
Առ ՚ի զանաղանել զառաւօտ ՚ի միջօրեայ տուընջենէ՝ ոչ
է պարտ ընդ զերկին մերկաւ և ամպովք, շատ է զի
տկարագոյնք եցեն առաւօտուն ՃառագայԹք, և լոյս
աղօտագոյն: Ըստ այսմ օրինակի առ ՚ի զանաղանել
զՄարիամ ՚ի Յիսուսէ, ոչ է հարկ՝ զի մեզք անգր ՚ի ներքս
մտանիցեն. շատ է զի անմեղուԹիւն նորա ևցէ որպէս
ՃառագայԹ աղօտ առ պայծառուԹեամբ լուսոյ որդւոյն:
Քրիստոսի է այն իրաւամբք, չնորհիւ փայլէ ՚ի Մարիամ.
Քրիստոսի է այն բնուԹեամբ, Մարիամու տուչուԹեամբ. պատուեմք զաղբիւր նորին ՚ի Քրիստոս, զՀո-
սումն ՚ի Մարիամ: Այլ որ առաւել ևս պարտի մխի-
Թարել զմեզ, եղբարք իմ, յաւելում ասել խնդուԹեամբ, յաւելում ասել զայն յուսալով յողորմու-
Թիւնն Աստուծոյ, զի այն ցոլացումն անմեղուԹեան
վասն Թշուառ մեզաւորացս ևԹէ փայլէ ՚ի Մարիամ:
ԱնմեղուԹիւն սովոր է կշտամբել զմեզաւորս վասն ան-
կարգ կենաց նոցա, և Թուի տալ նոցա զվէրս դատա-
պարտուԹեան. այլ ոչ այսպիսի է անմեղուԹիւն Մա-
րիամու, այլ նպաստաւոր նոցին. զի որպէս ասացաք,
ցոլացումն է անմեղուԹեանն Քրիստոսի. և անմեղու-
ԹիւնՆ Քրիստոսի է կեանք և փրկուԹիւն մեղաւորաց.
որով և անմեղուԹիւն Կուսին ընդունի ԹողուԹիւն
մեղաւորաց: Հայեսցուք ապա, ո՛ հաւատացեալք, ՚ի
սուրբ և յանմեղ արարածս յայս որպէս ՚ի ստոյգ պատըս-
պարան ԹշուառուԹեան մերոյ. դիմեսցուք առ լոյսն
կենդանի անապական մաքրուԹեան նորա ՚ի քաւու-
ԹիւՆ մեղաց մերոց, և գուն գործեսցուք Ճոխանալ լնու-
ԹեամբՆ չնորհաց նորա, զորմէ յերկրորդումն մասին ա-
ռաջի կայ լինէ ասել:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ոչ թուի լինէ դժուարին ճառել զանմեղութենէ Կուսին. շատ է նկատել՝ի նմա զբարձր պատիւ Աստուածամայրութեանն, առ՝ի հնքել՝ զի պարտ էր նմա լինել անարատ: Այլ՝ի բացատրել զլնութիւն ընորհաց՝ի նմա՝ սասանին միտք, և չդիտեն ուր կառուցանել զաչս. մի ապա ձեռնարկեցուք՝ի նկարագրել զիատարելութիւնս Մարիամու մի ըստ միոջէ, զի այս է հետազօտել զանդունդս. այլ շատացուք դատել զընդարձակութիւն նոցին՝ի պատճառէն՝ որ յառաջ էած զնոսին:

Մեծն Թովմաս ուսուցանէ մեզ՝ զի պատճառ ընորհաց սրբոյ Կուսին է կարևոր միութիւն նորա ընդ Բրիստոսի: Այ՝ի խելամուտ լինել արդասեաց այսր հրաշափառ միութեան՝ի սուրբ դրոց, միտ դիք աղաչէմ մեծի այսմ ճշմարտութեան՝ որ հիմն է Աւետարանին. զի աղբիւր ամենայն ընորհաց՝ որով ճոխացաւ բնութիւնս մարդկային՝ է կցորդութիւնս մեր ընդ Բրիստոսի. զի այս կցորդութիւն եթաց սուրբ հիմն տուրևառ երկնի ընդ երկրի, որ ամբաւ ճոխացոյց զմարդիկ. վասն որոյ եկեղեցի աղաչէ՝ի Հոգւոյն, կոչէ տուրևառ զմարդեղութիւնն Բրիստոսի. Ո՛վ սպանչելի փոխանակութիւն, որով Բրիստոս բարեգութ միշնորդ եկեալ յաշխարհ՝ի տուրևառ ընդ օտար աղին, էառ՝ի մէնջ զթշուառ բերս՝ զորս երկիր ապերախտ պատաբերէ, զկարօտութիւն, զհիքութիւն, զմահկանացու կեանս, և էա զճշմարիտ բարիս՝ զորս պատաբերէ երկնայինն գաւառ բնիկ ժառանգութիւն իւր, այսինքն զանմեղութիւն, զնսաղատութիւն, և զանմահութիւն: Այս կցորդութիւն է ասա՝ որ ճոխացոյց զմեզ, և այս պատճէնէ տուրևառ՝ որ լիացուցանէ զմեզ ամենայն բարեաք. վասն որոյ ասէ Առաքեալն՝ զի ոչ ևս աղքատանալ կաբեմք, ցորչափ մեր է Բրիստոս. Ոչ չիւր Որդին ու խոստաց, զիա՞րդ ու նովաս հանդերձ պարգևայն ընծրհիցէ մեզ:

Եւ եթէ կցորդութիւն մեր ընդ Բրիստոսի ածէ մեզ այսպիսի ամենամեծ բարիս, լուռ լեր և կարկեաց միտք մարդկեղէն, մի՛ իշխեր բացատրել զընորհս սրբոյ Կուսին. զի եթէ անհասանելի է ընորհ՝ որով Հայրն երկնաւոր տայ մեզ որպէս փրկիչ զԲրիստոս, զի՞նչ պարտ իցէ մեզ խորհել զԿուսէն՝ որում Հայրն երկնաւոր ոչ պարզաբար տայ զնա, այլ որպէս զնորին ինչ, որպէս որդի նորա, որպէս որդի միածին, որպէս որդի՝ որ առ՝ի չբաժանել զնիրա իւր, այլ ունել զամենայն՝ի սուրբ մօրէն, ոչ կամեցաւ ունել հայր յերկրի. կայցէ ինչ համեմատ այսպիսում կցորդութեան: Եւ մի կարծեցէք թէ կցորդութիւնս այս միացուցանիցէ զԿոյսն ընդ Փրկչին ըստ մարմնոյ միայն. քանզի մարթ է խորհել այսպէս՝ի սկզբան, այլ ընդ հուպ փոխիցէք զնորհուրդս՝ յածել զմտաւ զնաիւրն մեծ ընդ Մարիամ և ընդ այլս՝ի մարդ: Քանզի կցորդութեանս այսմիկ է ինչ յատուկ, որ զանազանէ յայլոց բնաւից. զի յղացաւ նա զորդի իւր մտօք, մինչ չև յղացեալ էր զնա յարգանդ: Եւ ոչպէս. զի ոչ բնութիւնն կազմեաց՝ի կուսին զԱստուածորդին, այլ Կոյսն հաւատովք յղացաւ զնա, այլ յղացաւ հնազանդութեամբ: Այս անչեղլի վարդապետութիւն է սրբոց Հարց բոլորից, և հաստատեալ յայտնապէս՝ի բանն սուրբ գրոց, որում չիցէ ձեր թերևս քաջ միտ եդեալ. զի ելնասբեթ յորջնունել զԿոյսն հանարհութեամբ որպէս մայր Փրկչին, Եւ ոտոփ է ինչ այս՝ զի եղեալ մայր Տեառն իմոյ առ իս. գոչէ ապա յափշտակեալ մտօք. Երանի՛ որ հաւատաքեղէ. որպէս թէ ասէր. Մայր ես ապաքէն, այլ հաւատաք քո արարին զքեզ մայր: Ոչսոյ

սուրբ Հաբք զհետ բերեն միաբան՝ զի սուրբ Կոյն ՚ի միտս իւր յղացաւ զԱստուածորդին նախ քան զտանելն զնա յարդանդէ։ Մի ապա որպէս զայլոց մարգ առնէք զԿուսէն գաւառաստան։

Գիտեմ իսկ զի միանան նոքա ընդ որդիս Իւրեանց և մնոք, ո՛չտեսանիցէ զայդ, ո՛ ոչ զգայցէ որպէս բերեն զնոսա ՚ի խորս սրտի. այլ ասեմ՝ զի միութիւն նոցա ընդ որդիս ՚ի մարմնոյ սկսանի, և զօդի նախ ՚ի ձեռն արեան. իսկ ՚ի սուրբ Կոյն նախկին տպաւորութիւն ներգործի ՚ի սրտի, կցորդութիւն իւր ընդ որդւոյն առնու սկիզբն ՚ի մտաց, զի հաւատովք յղացաւ. և եթէ կամիք խելամուտ լինել ցոր վայր կցորդութիւնս այս հասանէ, դատեցարուք ըստ համեմատութեան կցորդութեանն ըստ մարմնոյ։ Ներեցէք լինձ լքանել ՚ի խոս խորհրդոյս, և բացատրել ձեզ զայս Աչմարտութիւն, որ ոչ ինչ նուազ լեցի ձեզ յօգուտ, քան Կուսին ՚ի փառս։

Փրկիչն մեր Քրիստոս միանայ ընդ մեզ մարմնով, առ ՚ի միանալ առաւել սերտիւ ըստ հոգւոյ։ Սեղան խորհրդական, Ճաշ երկրպագելի, սուրբ մատուցարանք, զձեզ կարդամ ՚ի վկայութիւն առաջարկեալ Աչմարտութեանս. լերուք լինձ վկայք, որք սրբոյ խորհրդոյն հաղորդիք։ Յորժամ մատչիցէք յաստուածայինն սեղան, յորժամ տեսանիցէք զՔրիստոս եկեալ առ ձեզ մարմնով իւրով և արեամբ, յորժամ ընդունիք զնա ՚ի շրթունս ձեր, ասացէք լինձ, խորհիցիք երբէք՝ զի կամիցի նա ՚ի մարմնի ևւեթ ձերում զկայ առնուլ։ Քաւ լիցի ձեզ խորհել զայդ, և ՚ի մարմին ձեր միայն ընդունել զնա՝ որ ՚ի խնդիր հոգւոց ձերոց գայ առ ձեզ։ Որք այդպիսին ընդունին զնա, որք ոչն միանան ընդ նմա հոգւով ըղրոյ զմարմինն պաշտելի ընդունին յանձինս, եղծանեն զխորհուրդս նորա, և թշնամանեն զսէր. վասն որոյ ասէ սուրբն Կիպրիանոս զգեղեցիկ՝ այլ զահագին բանիս, զի Ճառնաբարնն այնպիսիք պմարմն և պարիան Փրկչին։ Եւ զինչ իցէ բանաբա-

րութիւնս այս, եղբարք իմ։ Հոգիք սուրբք, հոգիք երկնաշխարհք, որ գիտիք առնուլ զձեռաչակ քաղցրութեանն Քրիստոսի յերկրպագելի խորհրդեանս, ճանաչէք դուք զբնաբարութիւնս զայս. զի Քրիստոս խնդրէ զսիրտ, իսկ նոքա արգելուն զնա ՚ի մարմնի՝ ընդ որ նա անցանել ևւեթ կամի. արգելուն զփեսայն երկնաւոր, և ոչ ներեն նմա կատարել ՚ի հոգիս Իւրեանց զսուրբ միութիւնն՝ որ բուն անձկայ, բնաղատեն զնա ամփոփել զհոսանս շնորհաց Իւրոց, զոր կամի հեղուլ ՚ի նոսա։ Այսպէս սէր նորա կրէ բնաբարութիւն. և չեն ինչ զարմանք, զի ըստ այսմ օրինակի բնաբարեալ՝ գտանայցէ նա ՚ի ցասումն և ՚ի զայրոյթ, և փոխանակ փրկութեան՝ զոր ածէր նոցա՝ ներգործեսցէ զգատապարտութիւն նոցա, յայտ արարեալ զասացեալ Աչմարտութիւնն, զի ՚ի միանալն ըստ մարմնոյ՝ խնդրէ ըստ նմին համեմատութեան զմիութիւն հոգեկան։

Եթէ այս այսպէս իցէ, ով Տէրամայր, այնպիսի ինչ մեծ խմանամ զքեզն, զի ոչ միայն չկարեմ բացատրել, այլ Ճգնին և միաք իմ յբմբռնել զայն. քանզի այնպիսի եղև միութիւն քո ընդ Յիսուսի ըստ մարմնոյ ՚ի յղանալ քումմ զնա յարդանդէ, զի աւելի քան զայն չէ մարթ զմտաւ ածել անձուկ միութիւն. և եթէ ոչ համեմատէր այնմ միութիւն հոգւոյ, սէրն Յիսուսի ըղձիցն չհանդիպէր, և կրէր ՚ի քեզ բնաբարութիւն. հարկ էր ապա ընդ քեզ զնզնա նորա, և միանալ ընդ նմա հոգւով ըստ չափոյ անձուկ միութեանդ զոհիւ բնութեան և արեան։ Եւ քանզի միութիւնս այս կատարի ՚ի ձեռն շնորհաց, զինչ մարթ իցէ խորհել, զինչ ասել, ո՛ւր մտաց մերոց ամբառնալ, առ անհուաղելի ունելոյ զքո մեծութիւն. և եթէ էր մեզ ժողովել ՚ի մի զամենայն արարածոց շնորհս, այն ամենայն կարէր կալ ՚ի կշիռ ընդ լուսթեան շնորհացդ։

Եկայք ապա ցնծութեամբ, եղբարք իմ, պատուել

'ի նորածին Կույսն զլեռնութիւնս զայս չնորհայ, զի ընդունայն թուի ինձ ձիգն՝ երկայնել ճառս, առ 'ի ցուցանել որ ինչ եբեր նա 'ի գալն 'ի լոյս: Մի լեցի մեղ համանել սահման սիրոյ Աստուածորդւոյն առ մայր իւր. ուսցուք դառել զսրբոյ Կուսէն, ոչ որ ինչ մարթ է արարածոյ խնդրել, այլ որ ինչ արժան է որդւոյն առաքեալ ընդ ինքեան: Զինչ օգուտ էր Կուսին ունել որդի՝ որ նախ քան զննչն լեցե և արարիչ իւր, եթէ ոչ առներ նմա ծնանել իւր արժանի: Հանդերձեալ ստեղծանել իւր մայր, ոչ կատարելութեան մորն մարթ էր լինել բարձր քան զարժանն, և ոչ սկզբան նորա մարթ էր լինել վաղագոյն քան զարժանն. և եթէ գիտիցեմք հասու լինել քանի հրաշափառ լեցե պատիւն՝ յոր կոչեցեալ էր, գիւրաւ 'ի միտ առնուցուք՝ զի չէր վաղ պատրաստել զնա յառաջնմէ վայրկենէ կենացն նորա: Այլ շատ է յառել զաչս ցայս վայր 'ի նկատել զնորհուրդս զայսոսիկ մեծամեծս. չլացեալ'ի սաստիկ պայծառութենէն՝ ստիպեմ խոնարհել զհայեցուածս, և հանգուցանել զզգայութիւնս իմ ապչեալս 'ի յերկար զննելոյ զնա 'ի բարձր մեծութեան հուպ առ Աստուած, պարտ է լինել, տեառքդ իմ, նկատել զնա 'ի սէրն մայրենի՝ որ մերձ առ մեղ կացուցանէ զնա, և որով առաջի կայ լինել հնչել զճառս:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Մնայ լինել ցուցանել ձեզ այնպիսի ինչ կարևոր, զորմէ արժան էր յօրինել ճառ ուրոյն, և ոչ ամփոփել զայն 'ի յեսոին յայս մասն. և քանզի չկարեմ ևս զանց առնել զնովաւ՝ առանց թերի առնելոյ զճառս, անցից զկարևոր մասամբքն. և խնդրեմ քաջ միտ դնել, զի այս է

հիմն՝ յորում պարտ է հաստատել զպաշտօն սրբոյ Կուսին: Զայս ապա դնեմ առաջին ճշմարտութիւն, զի սահմանեալ Աստուծոյ 'ի յաւիտենից տալ մեզ 'ի ձեռն նորա զՅիսուս Քրիստոս, ոչ չատ համարեցաւ առնուլ զնա որպէս գործել միայն, այլ կամեցաւ զի գործակից լեցի մեծի գործոյն կամաւորապէս: Վասն այսորիկ յղեաց առ նա հրեշտակ՝ առաջարկել նմա զխորհուրդն. և մարդեղութեանն գործ մեծ, որում դարուց 'ի դարս անյունելին երկինք և երկիր, կայր անհատար մինչև ցհաւանութիւն սրբոյ Կուսին: Ապա ունէր նա յանկալութեան զԱստուած և զհամադոյս. այսչափ էր կարևոր ազգի մարդկան ըղձանալ Կուսին զիրկութիւն նոցա. և ըստ ըղձից նորա հաճեցաւ Հայրն երկնաւոր, զի լեցի Մարիամ 'ի ձեռն սիրոյ իւրոյ գործակից տուչութեան Փրկչին աշխարհի:

Եւ քանզի քաջածանօթ է այս ճշմարտութիւն, ոչ երկարեմ 'ի բացատրել զայն. այլ և ոչ կարեմ լռել զհետևանս այնորիկ, զոր թերևս չիցէ ձեր զմուաւ ածեալ: Քանզի խնամատարութեանն Աստուծոյ հաստատեալ միանգամ տալ զՔրիստոս 'ի ձեռն սրբոյ Կուսին, լեցի միշտ ճշմարիտ՝ զի մայրենի սիրոյ նորա այնքան եղեալ ձեռնտու փրկութեան մերոյ 'ի խորհուրդն մարդեղութեան, որ է սկիզբն ամենայն չնորհաց, լեցի նա ձեռնտու յաւիտեան և յայլ ամենայն գործս՝ որ անտի գան յառաջ. և առ 'ի քաջ 'ի միտ առնուլ զայս՝ խնդրեմ, տեառք իմ, խորհել յերիս գլխաւոր արգասիս չնորհացն Քրիստոսի: Կոչէ զմեզ Աստուած, արդարացուցանէ, և տայ մեզ յարատևել յարդարութեան. կոչումն է առաջին քայլափոխս, արդարութիւն՝ յառաջադիմել մեր 'ի կոչման, իսկ յարատևութիւն կէտ կոչման մերոյ. գիտեք քաջ քանի կարևոր է յերեսին իսկ ազգեցութիւն չնորհացն Քրիստոսի. այլ պարտ է լինել ցուցանել յայտնապէս 'ի սուրբ գրոց, զգործակցութիւն սիրոյն Մարիա-

մու յերեսին յայսոսիկ. Թերևս ոչ կարծիցէք՝ զի ձմեր-
տուԹիւնքս այսքիկ այնչափ յայտնի և պայծառ էցեն
յԱՀեռաստանի, որպէս յուսամ ցուցանել ձեզ սուղ
բանիւ:

Վասն կոչման, միտ դիք աղաչեմ, տեսջք իմ, որ ինչ
անցք պնդին ընդ Մկրտիչն Յովհաննէս՝ յարդանդի մօրն
դեռևս փակեալ, և տեսանիցէք անդ զպատկեր մեղաւո-
րի՝ զոր կոչեն չնորհք աստուածայինք: Յովհաննէս կայ
անդ՝ի խաւարի, որպէս դուքդ ևս մեղաւորք. ոչ կարէ
տեսանել ինչ, և ոչ լսել. գայ առ նա Յիսուս անահնկալ,
մերձենայ, խօսի՝ի սիրտ, զարԹուցանէ, ձգէ առ ինքն
զսիրան ներհեալ անզգայ. այսպէս վարի Աստուածորդին
ընդ մեղաւորս, զորս կոչէ: Խորհիցիք դուք ևս մեղաւորք,
յորժամ եկին նա ընդոստուցանել զձեզ. ծածկիցիք՝ի
նմանէ, տեսանէր նա զձեզ. խուսիցիք՝ի նմանէ, գտանէր
նա զձեզ. խօսեցաւ նա՝ի սիրտ ձեր, կոչեաց առ ինքն,
խակ դուք ոչ խնդրիցիք զնա: Այլ ինքն Քրիստոս ցուցա-
նէ մեզ՝ի սուրբն Յովհաննէս, զի սէրն Մարիամու ձեռն-
տու լինէր գործոյն մեծի. ոչ սէրն Մարիամու է՝ որ մա-
տուցանէ Յովհաննու զՅիսուս. ազդէ Յիսուս՝ի սիրտ
Յովհաննու, ոչ ապաքէն՝ի ձայն Մարիամու. Իբրև եղե
ձայն ողջոյնի քո յականջս իմ, խաղաց ցնծալով մանուկ յորովայնի ի-
մում: Այհաւասիկ Մարիամ՝ի սուրբն Յովհաննէս մայր մե-
ղաւորաց կոչեցելոց՝ի Քրիստոսէ. տեսցուք զնա արդ և
յարդարացեալս:

Տեսանեմ զնոսա առանց առակի՝ի սուրբ ԱՀեռա-
բանին՝ի հարսանիսն Կանայ. կոչեցեալ են նոքա յանձինս
Աւաքելոց, այլ լուարուք ԱՀեռաբանչին. Զայս արար
սկիզբն նշանաց Յիսուս՝ի Կանա գալիլեացւոց, և յայտնեաց զփառս
իւր. և հաւատացին՝ի նա աշակերտքն նորա: Կարէր յայտնա-
գոյն ևս ցուցանել զսրբարար չնորհս, որոյ հիմն է հա-
ւատք. այլ և ոչ յայտնագոյն կարէր ցուցանել զգոր-
ծակցուԹիւն Տէրամօրն անդ. քանզի ո՞ անգիտանայ՝

զի սքանչելիքն այն եղեն արգասիք սիրոյ և աղաչանաց
նորա: Վայրապատճ արդեօք Աստուածորդին, որ զա-
մենայն ինչ լինքն տնօրինէ, կամեցաւ սկիզբն նշանացն
՝ի չնորհս սրբոյ մօրն սքանչելագործել. և ո՞ ոչ զար-
մասցի, ո՛ հաւատացեալք, զի Տէրամայրն ոչ այլ ու-
րեք՝ բայց աստ միայն հաղորդ գտաւ սքանչելեաց
Աստուածորդւոյն, ուր զհետ գայր յայտնապէս պատ-
հէր արդարանալոյ մեղաւորաց. ըստ դիպուածոյ եղև
այս, Թէ արգեօք կամք էին Հոգւոյն սրբոյ տալ մեզ
՝ի միտ առնուլ, որպէս սուրբքն Օգոստինոս իմաստասիրէ
՝ի վերայ խորհրդոյս, զի Պարտ էր Մարիամ՝ մօր գլխոյս մե-
ղոյ ըստ մարմնոյ՝ լինել մայր ըստ հոգւոյ անդամոց նորա, և գործա-
կից հոգեւոր ծննդեան նոցա՝ի յերկն սիրոյ:

Այլ էր բաւական սրբոյ Կուսին լինել գործակից
վերածնունդեան մեղաւորացս յարդարութիւն, կատա-
րեսցուք ցուցանել՝ որ ինչ գործէ նա և՝ի սուրբ յարա-
տևութեան որդւոյն Աստուծոյ: Երևեցաբուք արդ հո-
գիք կոչեցեալք յորդեգրութիւն, նախասահմանեալք՝ի
յաւիտենից, որդիք ողորմութեան և չնորհաց, հաւա-
տարիմ ընկերք Յիսուսի՝ որք հաստատուն ընդ նմա կայք
մինչև՝ի սպառ. գիմեցիք առ սուրբ Կոյսն, եկայք դասե-
ցարուք ընդ այլս ընդ Թևովք մայրենի սիրոյ նորա: Տե-
սանեմ զնոսա, ո՛ հաւատացեալք, ընդ սիրեցելոյ աշա-
կերտի Փրկչին մերոյ՝ որ զնոսա յանդիման առնի՝ի Գող-
գոթա. պատկեր է նա յարատևողաց՝ հետևելով Քրիս-
տոսի մինչև՝ի խաչն, յարեալ հաստատութեամբ՝ի փայտն
խորհրդաւոր, խաչակից լինելով արիաբար ընդ Քրիս-
տոսի: Օրինակ է նա յարատևողաց, և տեսէք՝ զի յանձ-
նէ զնա Քրիստոս մեր իւրում. Կին դո՛, ահա որդի՛ քո: Կա-
տարեցի զոր խոստացայն, ո՛ հաւատացեալք. որք գի-
տենն քանի՛ խորհրդաւոր են գիրք աստուածայինք, ՝ի
միտ առցեն երիւք օրինակօքս, զի սէրն Մարիամու գոր-
ծակից է յամենայն գործս չնորհաց:

Յնծասցուք ապա այսօր ընդ ծնունդ պաշտպանիա մերոյ, գէնէր Ներոն. հանց գիշերն հանդերձ արհաւրօք խաւարով և զարհուրելի խաւարաւ յուսահատութեան. և ինքն Ներոն նշուլիւքն յուսոյ. տեսանեմք վայելել զառաջին ճառագայթ նորա՝ ի պաշտպանութեան սրբոյ Կուսին. գայ նա յօգնութիւն մեր. և ոչ գիտեմ՝ թէ ձիչ նորա և արտասուք ոչ բարեխօսեն այժմէն վասն թշուառութեանս մերոյ. այլ գիտեմ՝ զի ոչ է մեզ մարթ ընտրել հզօրագոյն բարեխօս: Խնդրեսցուք ապա ի նմանէ ընդ սրբոյն Բեռնարդոսի՝ զի խօսեսցի վասն մեր ի տէրս տրտմոյ Ինոյ: Այո՛ ամենևին, ով սուրբ Կոյս, քեզ անկ է խօսել՝ ի սիրտ նորա, զի է քո ընդ նմա անճուկ կցորդութիւն, այս ինքն սէր նորա որդիական՝ որ յաւելեսցէ ընդունել զսէր քո մայրենի, և կանխեսցէ նա կատարել զնշձս քո: Իսկ երբեք քեզ երկիւղ անլսելի լինելոյ՝ ի խօսել քումառ Փրկիչն մեր: «Սէր նորա բարեխօսէ վասն մեր, ասէ սուրբ վարդապետն, և թշուառութիւն ինքնին թախանձէ զնա վասն մեր, և դիւրաւ լսելի լինին խնդրուածք որում պարտեալն է՝ ի սիրոյ»: Վասն այսորիկ, ո՛ հաւատացեալք, ազդողաբար խօսի միշտ Մարիամ, զի խօսի՝ ի սիրտ որդւոյ. խօսեսցի ապա զօրութեամբ, խօսեսցի վասն մեր՝ ի սիրտ Յիսուսի:

Այլ զո՞ր ընորհ խնդրեսցէ վասն մեր, զինչ՝ ի ձեռն նորա ցանկալի է մեզ ընդունել. յերկուանայցէք արդեօք, եղբարք իմ: Եղբայրսիրութեանս վայր, յորում կայք, ոչ ազդէ՝ ի ձեզ իզձս հաստատելոյ՝ ի սէր. զսէր զսէր, ով ամենօրհնեալ Կոյս, զսէր պաղատիմք. առանց խնդրելոյ զեղբայրսիրութիւն՝ զինչ օգուտ իցէ կարգալ զանուն Մարիամու: Ա՛ռ՝ ի վառել զձեզ յեռանդն եղբայրսիրութեան՝ մոռիք, տեսլեք իմ, ՝ի սրահս յայտսնի երկայնաձիգս՝ նկատել՝ ի սոսա զաեսարան մարդկային տկարութեան. տեսանիցէք աստ քանի՛ ազգի ազգի ախտք վշտացնեն զմարմին մեր. ոմն անկեալ

տարածեալ, ոմն կծկեալ, ոմն գալարեալ, ոմն խախտեալ անդամոք, այլ ոք անդամալոյծ, ոմն գօսացեալ, է որ բոլորովին խեղանդամ, և է որ կէս՝ ի կէս, ոմն բևեռեալ անշարժ, այլ ոք դողդոջուն. ալիոզորմ զանազանութիւն. խաղ առնեն ախտք ըստ հաճոյս զմարմնով մերով, զոր մեզք մատնեցին նոցին անողորմ կամաց, և բախան հաւասարապէս թշնամանալից ոչ ինչ նուազ յաճախ մեզ զարկածս գժնդակս:

Հայեաց, ով մարդ, քանի՛ ապիկար ես. տես քանի՛ սակաւ զօրես, ուսոյր զանթիւ չարիս, որ սպառնան տկարութեան քումբ: Եթէ չէ նցես վչտագնեալ նոքօք, կարեկից լեր ընդ Թշուառս. քանի՛ և հպարտ խոյրս չանաս գտանել ընդ քեզ և ընդ նոսա, ՝ի նմին զանգուածոյ ստեղծեալ ես, ՝ի նոցունց տարերաց կազմեալ, ՝ի նմին կաւոյ շաղեալ. ահն ած ՝ի նոսա մարդկեղէն բնութեան անհնարինս տառապելոյ, երկիւր պապ խոնարհաբար ձեռինն՝ որ խնայէ ՝ի քեզ, և վասն սիրոյ նորին՝ որ ներէ քեզ, ողորմեա այնոցիկ՝ զորս վչտագնէ: Երթ՝ ի բաց սովին խորհրդով, Մարիամ է՝ որ խօսի առ քեզ բերանով իմով: Ահկեաննոցս այս ընդ հովանեաւ նորին է կառուցեալ. եթէ լսես խրատու իմոմ, մի մեկնիր այսօր՝ ի տանէ նորա՝ առանց Թողոյ ասա առհաւատչեայ ինչ սիրոյ, մի ասիցես՝ թէ լցեն աստ հոգաբարձունք. կարի յոյժ վատ է եղբայրսիրութիւն, որ Թողու միշտ այլոց չհոգ Թշուառաց. տեսանես քանի՛ կարիք կողկողին առ սէր քո: Եթէ ողորմիս, որպէս յուսամ, կարասցես շընորհօք Տեառն յաւելուլ օրըստօրէ ՝ի սէր, և ոչ էս զգայցես խաուսութիւն ընդ տառապեալս, և ոչ նախանձ ընդ բարեկեցիկս. չիցեն քեզ այնուհետև Թշնամիք՝ ընդ անկարեկիր սիրտ քո զայրացեալք, և ոչ բարեկամք գգուանօք քովք ապականեալք. կարասցես զեղբայրսիրութիւն քո յօգուտ ՝ի կիր արկանել, և հասցես ապա ՝ի բարձրագոյն աստիճան աստուածասիրութեան, որ զո-

բացուսցէ զքեզ յայսմ աքսորանաց վայրի ընդդէմ յարձակմանց աշխարհի, և պսակեսցէ զքեզ՝ի հանդերձեալ կեանս երանաւէտ անմահութեամբ. եղիցի եղիցի։

ՊՈՍԻԻԷԻ

ՄԵԼԴԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԴԱՐՁԵԱԼ

Ի ԾՆՈՒՆԴ ՏԻՐԱՄՕՐՆ

Ջինչ լինիցի մանուկս այս։

Ղուկ. Ա. 66։

Ընդունայն մեծամեծք երկրի բարձրամտեալ երբեմն քան զպատման մարդկային՝ ճգնին իմն ծածկել զակարութիւն բնութեան իւրեանց ընդ խաբուսիկ շքով բարեբաստութեան իւրեանց։ Գիտեմ, զորք իմ, զի պարտ է մեզ մեծարել զնոսա ըստ խրատու Առաքելոյն որպէս փոխանորդս Աստուծոյ՝ի վերայ երկրի, զորս կացոյց նախախնամութիւն իշխանս ժողովրդոց. և այս մեծարանք հաստատուն ունին զպետութիւնս, զապահովութիւն հասարակաց; և զանդորրութիւն իւրաքանչիւրոց։ Այլ քանզի պատահէ յաճախ, զի արբեցեալ նոցա՝ի յաջողութեանց կենցաղոյս՝ կամին ամբառնալ՝ի վերքան զպատման իւրեանց, կարի իրաւամբք խմաստնոցն գերազոյն յամօթ առնէ զնոցին յանդգնութիւն։ Կոչէ զնոսա՝ի սկիզբն կենաց իւրեանց, յանդիման առնէ նոցա զտկարութիւն նոցա սկզբնական, և զսիրտս նոցա վքացեալս աղնուականութեամբ՝ խեղամուտ առնէ, զի որչափ և

լսեն երևելիք՝ առաւել է նոցա նուաստութիւն քան մե-
ծութիւն: Թէպէտ և Թագաւոր լսեմ հզօր, խոստովա-
նիմ, ասէ, անկեղծութեամբ՝ հանգոյն ամենեցուն լեալ
զծնունդ իմ. Մերկ եկի յաշխարհ, և ի նոյն ի նմանավիճակ
անկայ. պառաւին բարեաւն զմանն ամենեցուն նոյնգոռնակ լոյր. ու
ոչ ի ներգաւոյդ այլոցէ ինչ սիրելի կալաւ լինելոյ. և որչափ և
արքունիք մարդահաճեն զնոսա, բնութիւն՝ մայր բարե-
գութ՝ որ ոչն գիտէ չնթերել, ոչ այլազգ վարի ընդ նոսա
քան ընդ կրտսերագոյնս ի հնազանդելոյ նոցա:

Ահաւասիկ, ո հաւատացեալք, ուր իմաստնագոյնն
քան զամենայն Թագաւորս Սողոմոն կոչէ զմեծամեծս
աշխարհի առ ի տալ նոցա ի միտ առնուլ զփառասիրու-
թիւն իւրեանց. և զի յայսմ մասին անշուշտ կրէ առա-
ւելապէս փառասիրութիւն, չհաւատալի թուի քանի՛
հնարս հնարին նոքա՝ առ ի չհաւասարել ընդ ուժեք, ևս
և ի հաստարակաց յայսմ տկարութեան: Պարտ համա-
րին ամենայն մարթանօք զանազանել ի հաստարակածին
մարդկանէ զպայազատս ծորածին. եւևէլս առնեն զնրբերօք
ի հարկանել նմա ասպաս, զոր և ոչ գեռ ևս ճանաչէ: Եթէ
նոր ինչ կամ զարմանալի պատահէ յաշխարհի, առնուն
զայն ի հմայս բարենշան՝ որպէս թէ տիեզերաց յօրի-
նուած մեծ վասն մանկանն այնորիկ չարժիցի: Եւ եթէ
ժամանակն չէցէ նմա բարեպատեհ, և ոչ ընծայէ ինչ
նմա խոր զանազանութեան ի համատիպն, հարկ լինի
դիմել յապագայն և ի գուշակութիւնս: Ա՛ս այս ասե-
զագէտք խառնեն զնբութեանց մտոտի հմայս, զհետազօտու-
թիւնս և զշրջումս, յանդգնեալք ի խոստմունս, տալով
նոցա առհաւատչեայ գաղտնածածուկ ազդեցութիւնս:
Սովին խորհրդով դուն գործեն ճամարտակք արդոյ ըն-
ծայեցուցանել զարուեստ ախտարոյց. և այսպէս փա-
ռամոլութիւն մարդկային ոչ կարացեալ ամփոփել ի
չափուն՝ զոր բնութիւն չանայ ազդել ի մեզ, ուռնու
և ճարակի կարծեօք և յուսով:

Գոհութիւն և փառք ողորմութեանն Աստուծոյ,
զի հրաւիրիմք այսօր ի ծնունդ արքայուհւոյ որ ոչ
խնդրէ ինչ ի մնոտեաց աստի: Զգոյշ լերուք, քորք իմ,
ի՛ մնոտեօք այսպիսեօք, որովք վարինն մարդիկ, ուս-
նասմբել. այլ խորհել մանաւանդ՝ զի զոր ունեմքս է
մայր Փրկչին մերոյ. և ուսցուք յԱւետարանէ անտի
նորին՝ որպէս պարտ իցէ մեզ կատարել զսոն ծննդեան
ընտրելոց: Ծնօղք Յովհաննու Մկրտչին ասն մեզ առ այս
օրինակ գեղեցիկ. ոչ հետազօտեն նոքա յանդգնաբար
զհանդերձեալս մանկանն, այլ երկրպագեն ի նմա խոր-
հրդոյն Աստուծոյ, թէպէտև խնդրեն խոնարհաբար՝
Զինչ լինիցէ մանուկս այս: Աւրարիցս և ես վասն մոր Փրկչին
մերոյ, որ ինչ ուսանիմքս արարեալ վասն Կարապետի
նորին:

Անձինքն նուիրեալք Աստուծոյ և երկիւղածք, որ
տեսանէքդ զանհամեմատ Տիրուհւոյս մերոյ զմուտս յաշ-
խարհ, զինչ խորհիք՝ թէ լինիցի մանուկս այս: Զինչ
ասյք պատասխանի, և ես իսկ զինչ ասացից: Ի սուրբ
Աւետարանէն, զոր ընթերցաք յառաւօտուս, ընկալցուք
զպատասխանին. Յովհ ծնաւ Յիսուս, որ անուանեցաւ Քրիստոս:
Եկեսցէ, գայցէ ժամանակ, զի Քրիստոս իմաստութիւնն
Հօր, միակ փրկիչ հոգւոց մերոց, լոյս աղգի մարդկան,
յորում լցաք ամենայն աղգի աղգի ընորհօք, զգեցցի
մարմին մարդկային յարգանդի ամենօրհնեալ մանկանս,
ըղծոյ պատուհամբ զծնունդ: Ա՛յսու օրհնութեամբ պարտ
է մեզ, քորք իմ, փառաւորել զմեծութիւն նորա, և
իմաստասիրել առաքեա՝ զինչ լինելոց է մանուկս այս:
Ծնունդ սրբոյ Կուսին ցուցանէ մեզ զառաքեալն կենդանի,
յորում բնակելոց է աէր Աստուած զօրութեանց՝ ի
գալ իւրում յայց Հոդովրդեան իւրոյ. ցուցանէ զսկիզբն
մեծի և երանաւէտ աւուրն, որ ընդ հուպ ծագելոց է
Քրիստոսիւ աշխարհի: Հասցէ մեզ փրկութիւն ընդ-
հուպ, զի աւետանեմք այժմեան երկրի զայն՝ որ ձգելոց է

զիրկիչն մեր յերկիր: Անէծք բնութեանս մերոյ սկսանին փոխիլ յօրհնութիւն և ի չնորհս. զի յարմատոյն Ադամայ, որ երբեմն էր դատապարտեալ, բողբոջի ամենօրհնեալն Մարիամ, որ միայն քան զամենայն արարածս ելբելն է Աստուծոյ, և բարեչնորհ մարդկան. քանզի մեծութիւն սրբոյ Կուսին՝ է մեծութիւն բարերար, մեծութիւն հաղորդական և համատարած: Եւ տեսջիք յառաջիկայս, զի աստուածամայրութիւն կացուցանէ զնա և մայր հաւատացելոց. և չիք ինչ՝ որում ոչ կարիցեմք ակն ունել ի պաշտպանութենէ Տիրուհւոյս, զոր ընծայեն մեզ այսօր երկինք, հաստատագոյն նեցուկ յուսոյս մերոյ յետ Քրիստոսի փրկչին:

Զայս առաջի կայ ինձ ցուցանել ձեզ անժխտելի հաւաստեաւք, յերկոսին մասունս Ճառիս: Որպէս զի կարասցէ ոք լինել մեզ պատշաճաւոր առաջի մեծվայելչութեանն Աստուծոյ՝ անհրաժեշտ կարևոր է, զի մեծութիւն իւր լցէ աստուածամերձ, և բարութիւն իւր մեզ դիւրամատոյց. զի եթէ չլցէ աստուածամերձ, չըկարէ առնուլ յաղբերէն՝ ուր ամենայն չնորհք փակեալ կան, և եթէ ոչ բարութիւն իւր մերձ կայցէ առ մեզ, չկարիցեմք ընդունել ինչ՝ի ձեռն նորա: Մեծութիւն է ձեռն՝ որ ընդունի, բարութիւն է ձեռն՝ որ բաշխէ. երկոքին ևս կարևորք՝ի հաղորդականութիւն: Մարիամ է մայր Փրկչին մերոյ, մայրութիւն նորա ամբառնայ զնա՝ի բարձրագոյն կայս առաջի Հօրն երկնաւորի. Մարիամ է մայր մեր, գութ նորա խոնարհեցուցանէ զնա մինչև՝ի տակարութիւն մեր, մինչև ցանկալ երջանկութեանս մերում: Վասն որոյ ծննդեամբ Տիրուհւոյս պարտ է աշխարհի ցնծալ խսկապէս, զի ընդ զաշխարհ յուսասպասութիւն բացաւորութիւն կարևոր ձչմարտութենեանցս հաստատեցէ զպաշտօն Կուսին՝ի վերայ աւետարանական վարդապետութեան:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Թէպէտև պատկերք զանազանք, զորս կերպարանեմք՝ի մտի առ՝ի յանգիման առնել զէութիւնն Աստուծոյ՝ չլցեն իսկականք, այլ ստուերք ևեթ անկատարք. այլ այն որ Թուի վեհափառագոյն և առաւել արժանի մեծվայելչութեան նորա՝ է նկարել զաստուածութիւնն վիհ իմն անդնդախոր, և գանձ անսահման, յորում ամենայն կատարելութիւնք սքանչելապէս բովանդակին: Զի Աստուած ունի յինքեան զամենայն, զոր կարէ էակ բերել յանձին. զամենայն չնորհս և զամենայն գեղեցկութիւնս՝ զորս տեսանեմք սփռեալ՝ի համագոյս, բերի զամենայն յիւրումն միութեան. վասն որոյ խոստացաւ Մովսիսի ցուցանել նմա զամենայն բարութիւնս յէութեան իւրում. զի բնութիւն բարոյ զոր տեսանեմքս բաժանաբար, է՝ի միասին յԱստուած: Այլ ոչ է չատ՝ զի լցէ՝ի նմա, պարտ է՝ զի յանսահմանի աղբերէ անտի հոսեսցէ ինչ յարարածս. ապա թէ ոչ, մնայր ամենայն փակեալ խառն՝ի խուռն յոչնչի. զի ոչ ինչ գոլով մեր յանձինէ, ոչ կարէաք լինել ինչ՝ առանց Ճառագայթից ինչ գերբնութն էին ցոլանալոյ՝ի մեզ: Վասն որոյ առ՝ի լոյս ածել զարարածս՝ հարկ է անսահման գանձուն այնմիկ, և անպարագրելի աստուածային ծոցոյն՝ յորում ամենայն ինչ բովանդակի, բացցի յեղանակաւ իմն, և հոսեսցէ՝ի մեզ: Եւ ո՞ բանայցէ զայն, բայց բարութիւնն աստուածային. նմա պահեալ է բանալ զգանձ՝ առ՝ի հաղորդել արարածոց. և եթէ օրէն լցէ մարդկան զանազանել զայլևայլ պաշտամունս աստրոգելեացն Աստուծոյ, կարեմք ասել յիրաւի՝ զի որպէս անսահմանութիւն բովանդակէ յԱստուած զա-

ՃՆայն բարուԹիւն, այսպէս և բարուԹիւնն աստուա-
ծային հաղորդէ զայն:

Դիւրին լիցի ինձ բացատրել զայս՝ գեղեցիկ բա-
ժանմամբ սրբոյն Օգոստինոսի: Ամենայն ոք, որ հաղոր-
դէ այլոց բարիս, տայ երկակի. կամ յառաջադոյն զո-
րուԹենէ բնագատեալ, և տայ հարկաւ. կամ առ՝ի
շահ ինչ օգտի՝ զոր անտի ընդունի, և տայ վասն շա-
հասիրուԹեան. և կամ՝ի յօժարուԹենէ բարեբարու-
Թեան, և տայ վասն իւրոյ բարուԹեան: Այսպէս արե-
գակն տայ զլոյս իւր, զի Աստուածօրինադրեաց նմա
ծագել զլոյս, և ծագէ՝ի հարկէ: Այսպէս այր մեծա-
տուն սիրէ զգանձս իւր, առ՝ի յաճախել իւր ձեռա-
սունս, և սիրէ առ՝ի շահ օգտի: Այսպէս հայր տայ
պարգևս որդւոյ իւրոմէ, զի սիրէ զնա՝ի բարուԹենէ:
Արդ քաջայայտ է՝ զի ոչ հարկ ինչ կարէ ստիպել զԱս-
տուած, ընդ զմեզ պարգևօք. զի չէք զօրուԹիւն՝ որ
կարիցէ հրամայել նմա. ոչ օգուտ ինչ, զի է Աստուած
անկարօտ արարածոց իւրոց. ապա ուրեմն բարուԹիւն
ևԷթ իւր է բաշխող ընդհաց, և նմա է բանալ զգանձս
Աստուծոյ, և յանսպառելի ծոցոյ նորա աղբերացուցա-
նել զամենայն՝ որ ինչ ժառանգեն արարածք: Վասն այ-
սորիկ ընԹեռնումք՝ի սուրբ գիրս, զի Աստուած յետ
առեղծանելոյ զսիեզերս՝ հաճեցաւ ընդ նոսա. եւ էին
Ադամ զամենայն զոր արար, և ահա բազում են յոյժ: Եւ վասն
էր, ասէ սուրբն Օգոստինոս, բայց զի առնանէր՝ի նոսա
զպատակեր բարուԹեան իւրոյ՝ որ՝ի լոյս էած զայնոսիկ:
Եւ աստի զՀետ գայ յայտնապէս, զի սէր միայն է առա-
ւաձեռն յԱստուած. զի որպէս սեփական է արդարու-
Թեան նորա գատել խստիւ, և զօրուԹեան նորա ներ-
գործել ազդազաբար, նոյնպէս և բարուԹեան նորա սե-
փական է գործել սիրով միայն:

Այլ զայս եղանակ գործելոյ սիրովՅայտնագոյնս է
առանձին՝ի մարդասիրեալն Աստուած. դիտէ նա՝ զի սէր

Հօրն յաւիտենականի առաքեաց զինքն յաշխարհ. Զի
այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչ զՈրդին իւր միա-
էք: Յուզեալ էր զմարդասիրուԹիւն իւր յարարչա-
գործուԹեան. զի « Արար զմարդ, ասէ Տէրտուղիանոս,
ոչ բանիւ հրամանի որպէս զայլ արարածս, այլ ընտե-
լական ձեռօք և գործական բանիւ, արասցուք ասէ-
լով զմարդ »: Անհատասիկ սէր նորա՝ի առ ի ստեղծանելն, այլ
չև ևս հասանէ՝ի կաԹոդին խանդաղատանս՝ զոր եղոյց
՝ի փրկագործելն: Այս երկրորդ սէր Հօրն երկնաւորի,
որով հաճեցաւ փրկել զմարդիկ, յափշտակուԹիւն ինչ
է սիրոյ. այսքան սիրեաց Աստուած զաշխարհ: Սէր
խանդակաԹ, սէր ծայրագոյն: Այսր աղագաւ և Աս-
տուածորդին մարդացեալ բորբոքեր սիրով մարդկան,
որպէս ինքն ասաց. Ուխորբ որդի մարդոյ առնել չանինչ և ոչ
ինչ, երբէ ոչ գիանիցէ զՀայրն զի առնէ, զի զոր նայն առնէ, զնոյն
և Որդին նմին նման գործէ: Որպէս Հայր եւս մեզ զնա՝ի սի-
րոյ, նոյնպէս և ինքն՝ի սիրոյ եւս մեզ զանձն. և նոյն
սէր է, որ բաշխէ զընորհս նորա:

Զայս աւետարանական վարդապետուԹիւն քննա-
լեալ, մասիցուք, քոյրք իմ, խոնարհ յարդուԹեամբ յոր-
դանս սրբոյ Կուսին, և խորհեսցուք՝ զինչ լինիցի յա-
ւուր միում մանուկս այս սիրոյնէ Յիսուսի: Կարէի ա-
սել՝ զի սէր փրկչին Յիսուսի, որ է պարգև վասն այլոց,
է իբր պարտ առ մայր իւր, և փոխի՝ի բնուԹիւն պար-
տականուԹեան, զի է սէր որդւոյ: Այլ խորագոյնս ինչ
ցուք՝ի գաղտնիս աստուածայինս՝ առաջնորդուԹեամբ
սուրբ գրոց, և առ՝ի լաւ ևս ճանաչել զսէր Աստուած-
որդւոյն առ սուրբ Կոյսն՝ նկատեսցուք զայն որպէս
կարեւոր՝ի լուսաւն խորհրդոյ մարդեղուԹեան: Մինա դիք,
աղաչեմ բանիցս՝ զոր՝ի կիր առնուցմ յԱռաքելոյն, ՝ի
հրաշալի ԹղԹոյ նորա առ եբրայեցիս: ՄատածուԹիւն
ինն սուրբ և փրկաւէտ է՝ խորհել հանապազօր գործով-
նօք զբազմագործուԹ մարդասիրուԹիւն Փրկչին մերոյ, զի

ոչ անարժան իւր համարեցաւ՝ որ ինչ բնութեանս մերոյմ է անկ. յանձն էառ զամենայն, մինչև զդուրընաքեայս իսկ, մինչև զակարութիւնս մեր կարևորս, զքաղց և զծարաւ, յար և նման որպէս զմարդիկ, և բաց ՚ի մեղաց զամենայն զկարիս մեր. Փոքչ է ամենայնէ ըսպ նմանութիւնն, առանց մեղաց: Զայս ամենայն եկն յաչխարհ յանձն առնուլ, և փոխանակ տկարութեանց մերոց՝ զորս յանձն էառ, հաղորդս արար զմեզ մեծութեանց իւրոց: Ոչ ապաքէն այսր աղագաւ, քորք իմ, եկեղեցի աստուածազգեցիկ կոչէ տուրևառ զմարդեղութիւնն. « Տուրևառ հրաշալի, ասէ տուրբն Օգոստինոս, զոր արար Ֆրիստոս՝ երկնաւորն վաճառական. զի եկն յերկինից ՚ի յերկիր վաճառակից լինել ընդ ազգի օտարի, և զի՞նչ արար: Ո՛հ, եբեր առ մեզ զբարութիւնս երկնային գաւառի՝ որ է բնիկ ժառանգութիւն իւր, զնորհս, զփառս և զանմահութիւն. և էառ զվաճառս՝ զորս բերէ Քրիստոս այս երկիր, զտկարութիւն, զաղէտս և զմահ. ո՛վ սիրալիր տուրևառ, ո՛վ շահաւէտ վաճառականութիւն. ո՛հ, քանի՛ պարտ էր մեզ քեզ ամբառնալ ՚ի յոյս յաւիտենական բարութեանց: Ցիսուս հաձեցաւ ընդ չքնութիւն իմ, ինձ անհաձոյ Թուէ մեծութիւն իւր. մարդասիրութիւն նորա եգիտ ինչ ախորժ ՚ի զգենուլ զապականութիւն իմ, իսկ ես ոչ ախորժեմ զգենուլ զփառս նորա, և սիրտ իմ ընտրէ զհետ երթալ հաձոյից՝ որ անցանեն, և բարեաց՝ զորս բառնայ յինէն մահ »:

Այլ դարձցուք ՚ի կարգ բանիս, հարցցուք զիեսուէն երկնաւոր՝ թէ ընդէր ոչ չատ համարեալ զգենուլ զմերս բնութիւն, կամեցաւ յանձն առնուլ և զտկարութիւնս մեր: Ցայտնի է ՚ի տուրբ գրոց. զի խորհուրդ Փրկչին մերոյ յերկրպագելի մարդեղութեանն՝ էր նման լինել մարդկան. և քանզի ամենայն գործք նորա կատարեալք են և չմոլթի թերի ինչ ՚ի նոսա, ասաի է քորք իմ, ասաի է՝ զի ոչ կամի անկատար ինչ նմանութիւն. լուարուք Աստքե-

ղյն. Վանդի ալ երբեք վերբերոյոց բոլոն հարկանէ, այլ զքառասնեն Աբրահամա բոլոն հարկանէ. ուսրի պարտ իսկ էր նմա ամենայնիս եղբարց նմանելոյ. կամի նմանել մարդկան, պարտ է զի ըստ ամենայնի լիցի չար և նման. ապա թէ ոչ, թերակատար գտանի գործն: Այսր աղագաւ տեսանեմ զինա ՚ի պարսիկն յերկիւղ և ՚ի տրտմութեան, և յայնպիսում տագնապի՝ զի ընդ քերան արեան հարկանի չահէ չարչարանացն՝ որ պատրաստին նմա: ՈՀր երբեք պատմին գէպք այսպիսի այլում ումեք պատահեալ, և չիցէ պարտ չանսովոր արգասեաց ասաի զհետ բերել՝ զի չիք ուրուք երբեք կրեալ այսպիսի գառնակակիծ և տաստիկ չարչարանս որպէս զՔրիկիչն մեր, թէպէտ և համակամութիւն նորա ամենևին ընդ Հօր իւրում ամբեր միշտ զայն: Եւ ընդէր, Փրկիչ մեր և տէր, կրեիր զայդպիսս, բայց զի կամէիր նմանել մեզ: Զի եթէ ոչ կրեր այսպէս, թուէր նմա թէ պակասեր ինչ ՚ի լրումն խորհրդոյ մարդեղութեան:

Առաւելագոյն երաւամբք պարտ է ասել՝ զի սիրտ իւր բորբոքեր բոլորովին ՚ի սէր սրբոյ մօրն. զի եթէ այսպէս ճոխաբար զգեցեալ էր զմարդկային կիրս տկարութեան՝ որ անարժան Թուէին անձին իւրում, զկիրս մահաբեր տագնապի, զկիրս տաստիկ երկիւղի, և կրեր զայնոսիկ անխառն և անթերի, քանի՞ առաւել պարտ էր նմա յանձին բերել զսէր որդիական, քան զոր չիք ինչ բնականագոյն, արժանավայելուչ և կարևոր: Զիր արդեօք անպատիւ առնել զմօրմինն՝ չերել տաստկապես զսուրբ Կոյսն, յորոյ արենէն կազմեալ էր այն, որպէս զի անհնար էր աստուածային սրտին Ցիսուսի չլինել խորագոյնս տպաւորեալ սիրով ամենամաքուր մօրն. զի սէրն այն որդիական՝ էր կարևոր ՚ի լրումն երկրպագելի մարդեղութեանն:

Եւ մի ասիցէք՝ թէ սէրն այն զհետ գայր մարդեղութեան, և չէր մարթ Աստուածորդւոյն բերել զայն յանձին նախ քան զմարմնաւորութիւնն: Առ ՚ի խնդամուտ

լինել գաղտնեաց աստուածախնամատեսչութեան՝ի շնորհս Մարիամու, միա գիք գեղեցիկ վարդապետութեանն Տերոտուխանոսի։ Ա՛յս այս մեծ, յերկորդ գիրսն ընդդէմ Մարկիոնի, ուստեցանէ հաւատացելոց, զի յետ միանգամ սահմանելոյ Որդւոյն Աստուծոյ միանալ ընդ մարմնաւորեալ մարդկան, և յանձին բերել զկիրս մարդկային։ Սմին իրի և՝ի հին օրէնս իջեալ յաշխարհ՝ի յերկինից՝ի կերպարանս մարդոյ երևեր նահապետաց և մարգարէից, համարելով զերևմունս զայսոսիկ որպէս պատրաստութիւն մարդեղութեան. զի այսու օրինակաւ սովորեր իմն, ասէ, և ուսանէր (եթէ օրէն իցէ ասել այսպէս) լինել մարդ. Ուսանէր անդրդին՝ի սկզբանէ ալեաբերի, որ ինչ՝ի լրման ժամանակին հանդիպեալ էր լինել։

Այդ եթէ՝ի սկզբանէ աշխարհի, չէ զգեցեալ զմարմին մարդկային, ախորժէր բերել յանձին զկերպարանս և զկիրս մարդոյ՝ այսքան տարիս ընդ մարդկան, մանաւանդ արդեօք գալստեան իւրոյմ յաշխարհ՝ առնուլ զսեր որդիական առ Կոյսն Մարիամ։ Յառաջնմէ օրէ ծննդեան Կուսին յաշխարհ՝ հայէր՝ի նա որպէս՝ի մայր իւր, զի և էր իսկ ըստ սահմանելոյն Աստուծոյ։ Տեսանէր՝ի նմա զարիւնն՝ յորմէ մարմին իւր կազմելոց էր, և անդամն համարէր իւր զայն. և որպէս թէ առնոյր զժառանգութիւն նորին, սրբազանեալ զայն Հոգւովն իւրով սրբով. և ըստ այսմ կցորդութիւն իւր ընդ Կուսին սկսանէր՝ի ծննդենէ նորին, և ընդ կցորդութեանն սէր, և ընդ սիրոյ առատաբաշխութիւն շնորհաց։ Զի չէ հնար, քորք իմ, թէ սիրիցէ Աստուած առանց առատաձեռնելոյ. և՝ի սկզբան բանիցս՝ի միա առաք, զի չիք առաւել ինչ առատաձեռն յԱստուած քան զսէր, և զի այն է՝ որ բանայ զդանձս աստուածային շնորհաց։ Քանի՛ ապա մեծ և հրաշալիառ է սուրբ ծնունդ քո, ով Տիրամայր, և քանի՛ առատութիւն երկնային

պարգևաց զեղաւ այսօր՝ի վերայ քո։ Թուի ինձ տեսանել զհրեշտակս, զի հիացեալ կան մեծարանօք ընդ յարկին սահմանեալ Տեառն իւրեանց, դրոշմեալ աստուածային հնքով Հոգւոյն սրբոյ. այլ տեսանեմ զՈրդին Աստուծոյ զհանն յաբիսեենական, զի գայ ինքնին օրհնել զտաճար իւր, և ճոխացուցանել զնա երկնային գանձիւք, անբովանդակելի զեղմամբ. կամի նա, ով մանկիկ ամենօրհնեալ, զի՝ի քէն սկիզբն կալցի օրհնութիւն մեր. կամի արժանի իւր զծնունդ քո, և ունել քեզ յորդի՝ զպատանեաւ ծնընդեան քո։ Ո՞ր միտք՝ի տեսիլ այսքանեաց սքանչելեաց ոչ սասանեսցին. ո՞ր խմացումն մտաց կարասցէ վերանալ՝ի բարձրութիւն փառաց և մեծվայելչութեան մերն Աստուծոյ։

Սակայն կարիցէ՞ք հաւատալ, քորք իմ, զի մարթէ ամենայն հաւատացելոց հաղորդս լինել այսմ փառաւորեալ անուան։ Կարեմք մանաւանդ լինել յեղանակաւ իմն փառաց աստուածամայրութեան. ՝ի բաց կացցեն աստի ղոյզք մարդկայինք, իմաստասիրութիւնք բնականք. լուիցուք բանից նորին իսկ Ֆրիստոսի. Զի ո՛ր առնիցէ վամս Հօր իմոյ, որ յերկինս է, դա է իմ եղբայր և քոյր և մայր. այս ինքն զի դու, Փրկիչ մեր, առաւել քան զամենայն կցորդութիւն ընդ քեզ համարիս զհնազանդութիւն կամաց Հօր քո երկնաւորի. այս է որ կցորդե ընդ քեզ զմարդիկ։ Ի կամս քո է, ո՛ հաւատացեալ, քեզ Թողեալ է յընտիր՝ որպէս ընդ Ֆրիստոսի լինել կցորդ, որով օրինակաւ միանալ ընդ Փրկչին քումմ։ Այնպէս սիրէ զմեզ Ֆրիստոս, զի ոչ հրաժարէ տալ մեզ զո՛ր և է անուն կցորդութեան, զո՛ր և է աստիճան ազգակցութեան. արասչիր զկամս Հօր նորա, և կարես լինել նմա որ ինչ և կամիս. եթէ եղբայր հաճի իցէ քեզ կոչել նմա, շնորհէ քեզ զայն. եթէ զմայրս ընդ փառս մայրութեան, որչափ և մեծ իցէ, որչափ և բարձր, ոչ զլանայ քեզ և զայն. Նա է իմ եղբայր և քոյր և մայր. կարես յեղանակաւ լինի հաղորդ լինել և սիրոյն

զոր առ մայր իւր բերէ. Զի ամենայն ինչ ՝ի նէ է: Մեր է Մարիամ, ամենայն ինչ նորա մեր է, զի և Քրիստոս ինքնին է մեր:

Ո՜հ, քանի՛ մեծատունք եմք, քորք իմ. այլ յայս ամենայն հոգևոր Հոխութիւնս կամիմք մեք յաւելուլ զերկրաւոր բարիս, և ցրեմք զգանձս երկնաւորս: Այլ լա՛ւ որ ինչ քեզն օրինադրէ. առ ՝ի ժառանգել զայսպիսի փառաւորեալ անուանս, ոչ օրէն է մեզ առնել զկամս մեր, այլ զկամն Հօրն երկնաւորի պարտ է մեզ կատարել, զի այս է զօգն կցորդութեան, առնել զկամն Հօր նորա. իսկ որ զկամս իւր առնէ, չէք նորա կցորդութիւն ընդ Քրիստոսի: Ապացուք ապա զկամն Հօրն երկնաւորի, և մերձաւորք լինցուք Քրիստոսի. արդ այս են կամք Հօր նորա՝ զի մի հաճեսցուք զանձինս մեր, զի Քրիստոս ոչ ինդրեաց զկամս իւր. Քանզի Ե՛ Քրիստոս ու ԷՒՒ անյին հաճոյ եղե՛, ասէ Առաքեալն, այլ հնազանդ եղև կամաց Հօր իւրոյ մահու ջուի: Մարիամ ոչ ինդրեաց զկամս իւր, այլ հակառակ բնական յօժարութեան իւրոյ՝ նուիրեաց ՝ի մահ խաչի զորդին իւր սիրելի. ոչ ածաւ նա ՝ի Թաբօր՝ տեսանել զփառս միածնի իւրոյ, այլ ՝ի Գողգոթա՝ տեսանել զնահատինս նորա, և նուիրել զկամս իւր կամաց Հօրն երկնաւորի: Նուիրեսցուք և մեք զկամս մեր, քորք իմ, մի լուիցուք հաճոյից մերոց, լուիցուք ձայնի հնազանդութեան, և լինի Մարիամ՝ ՝ի մայր մեր, որպէս ցուցից յերկրորդումն մասին ՝ի հնից բանից:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Առ ՝ի բարւոք ՝ի միտ առնուլ՝ ո՛րպէս Մարիամ է մայր բազմածին, և ո՛րպէս ամենայն հաւատացեալք որդիք են նորա, զանազանեսցուք յերկուս զմայրութիւն.

՝ի մայրութիւն բնական, և ՝ի մայրութիւն սիրոյ: Տեսանեմք՝ զի հարք անորդիք գուն գործեն ընդուլ սիրով որդեգրութեան, որ ինչ ոչն տայ նոցա բնութիւն. այսպէս բեղնաւոր է սէր. և որք լսեին Առաքելոյն ասելոյ. Որդեակք իմ, զորս դարձեալ վերստին երկնեմ, մինչև նկարեսցի Քրիստոս ՝ի յիս. քաջ գիտեն՝ զի սէր ծնանի որդիս. վասն որոյ յաճախ կրկնէ Օգոստինոս՝ զի Մայր է սէր: Առ ՝ի հասուս լինել այսմ ճշմարտութեան՝ գիտելի է, զի բեղնաւորութիւնս այս կրկին՝ զոր տեսանեմք յարարածս, յառաջ գայ յաստուածայնոյն, յորմէ ծագի ամենայն հայրութիւն: Բեղնաւոր է բնութիւն աստուածային, տայ զՈրդին բնական ծնեալ ՝ի յաւիտենից. բեղնաւոր է և սէր աստուածային, զի տայ որդեգիրս. այսու օրինակաւ ծնանիմք մեք որդիք Մարիամու, որդեգրեալք առհասարակ: Մարիամ հաղորդ է բնական բեղնաւորութեանն Աստուծոյ, ծննդեամբ Աստուածորդւոյն, և բեղնաւորութեանն սիրոյ՝ ծնանելով զհաւատացեալս ՝ի Քրիստոս, որոց ծննդեանն եղե՛ գործակից սիրով՝ ըստ Օգոստինեայ:

Ուրախ լինցուք ապա, քորք իմ, ընդ սուրբ ծնունդ Կուսին, և գոհացուք զԵառնէ ՝ի կատարել զհրաշափառ աւուրս տօն: Խորհեսցուք՝ զի նոյն ընդ Քրիստոսի են աստանօր իրք մեր. ծնանի վասն նորա սուրբ Կոյս, ծնանի և վասն մեր. տեսանեմք ծնեալ ընդ Կուսին վասն մեր և զանսպառ աղբիւր սիրոյ, աղբիւր յաւէժահաղաց. բերկրեսցուք ՝ի սէր իւր մայրենի քաղցր, այլ հզօրիչ: Այլ զի մի զկայ առցուք ՝ի տեսութիւն աւետ, քննեսցուք զինչ ՝ի մէնջ մայրութիւն Կուսին պահանջէ, և ո՛րպէս պարտ իցէ մեզ կենցաղավարել՝ առ ՝ի լինել նմա ճշմարտիւ որդիք: Որդիք նորա հարազատք չեն հաւատացեալք փափկասէրք՝ որք ոչ կամին վշտակրել, և դողան յանուանէ ապաշխարութեան: Զեն նորա որդիք քո, ո՛վ Տիրամայր. քաջագոյնս և արիագոյնս կամիս գուշնասս առ ոտս խաչին: Հաստատեսցուք ՝ի սուրբ գրոց

զայս Աչմարտութիւն, և գլխովք հինն առաջնի՝ զի հաւատացեալք ըստ այնմ պայմանի են Մարիամու, որով Քրիստոս էտ նմա ընտա. զի ինքն միայն կարէր տալ զմեզ նմա, գնեալ արեամբն իւրով։ Արդ՝ ի խնդրել յԱհեսարանի՝ թէ ուր զմեզ էտ Մարիամու, գտանեմք՝ զի էտ առ խաչին. ուր ասաց ցաշակերտ իւր սիրելի՝ Ահա մայր քո. ուր ցմայր իւր՝ Ահա որդի քո. ոչ ապաքէն ՚ի խաչէն։ Անդ ապա, յանձին սիրելոյ աշակերտին էտ զմեզ որբոյ մերն, անդ եղեալ մեք որգիք նորա։

Եւ ընդ ծր կամեցաւ Փրկիչն մեր ինալ այնմ յետին պահու, առ ՚ի տալ զմեզ մեր իւրում յորդիս. ահա Աշխատարիան պատճառ. քանզի կամէր տալ նմա զաղիս և զսիրտ մայրենի։ Եւ որպէս, ասեցէք. զարմացարուք, քորք իմ, ընդ գաղտնիան։ Մարիամ կայր առ խաչին. տեսանէր վիրաւոր զմիածին իւր բազկատարած առ ժողովուրդ անհաւատ և անողորմ. տեսանէր զարիւն նորա՝ զի հոսէր ամենուստ ընդ երակունս նորա կեղեքեալս անգթաբար. և ո՞ կարիցէ բացատրել զմորմոքումն մայրենի սրտին։ Ո՛չ, չէր նորա զգացեալ երբէք զմայրութիւն իւր որպէս անդ. ամենայն չարչարանք որդւոյն զգացուցանէին նմա զայն խորագոյնս. և զի՞նչ արար անդ Փըրկիչն մեր։ Տեսէք, քորք իմ, եթէ գիտէր քաջ զգալանիս յուզելոյ զգուշ։

Յորժամ սիրտ յուզեալ է ՚ի բուռն կրից, ընդունի գիւրաւ զնոյն տպաւորութիւնս և վասն այլոց՝ որ ընդ առաջ լինին նմա։ Ի չարժել ուրուք ՚ի ցասումն, չէ ինչ դժուարին՝ զի որք մերձինն ՚ի նա՝ զգային զազդմունս կրից. առտի պատահէ՝ զի յայնմհկս ժողովրդեան մի ոք, որ գիտիցէ ճարտարութեամբ վարել զդիս ռամկին զայրացելոյ, զրչէ գիւրաւ զգայրոյթ նորա յայլ յորս չէր մերթ կարծել։ Զնոյն և զայլոց կրից է ասել. զի ՚ի յուզել ոգւոյ, եթէ միայն գիտիցէ ոք շրչել զդէմս կրից, բերի անդր ինքնաշարժ։ Այսր ազագաւ Փրկիչն մեր, որ

կամէր՝ զի մայր իւր լիցի և մեզ՚ի մայր, որպէս զի և ինքն լիցի ըստ ամենայնի եղբայր մեր, տեսեալ ՚ի խաչէն զմորմոքումն սրտի նորա, որպէս թէ դէտահին ունելով այնմ պահու, և պատեհ առեալ, եցոյց նմա զաշակերտն, և ասէ. կէն դո, ահա որդի քո։ Այս բան է Քրիստոսի, և ահա իմաստ նորին. Ո՛վ կին դու տառապեալ, որում սէր ոչ զիտիցէ առնուլ՝ ցոր վայր կարէ հասանել գորով և կարեկցութիւն մայրենի՝ որ այդպէս զսիրտ քո մորմոքէ, ցոյց զայդ և աշակերտին իմում սիրելւոյ, ցոյց և ամենայն հաւատացելոց իմոյ՝ զորս քեզ յանձն առնեմ ընդ նմա, զի ամենեքեան իսկ իմ աշակերտք են, և սիրելիք իմ։ Այս բանք տպաւորեցին ՚ի սիրտ Կուսին գորով մայրենի վասն ամենայն հաւատացելոց որպէս ճշմարիտ որդւոց իւրոց. և մարթէր իսկ լինել ինչ ազդուզադոյն ՚ի սիրտ սրբոյ Կուսին քան զայսպիսի բանս Քրիստոսի ՚ի մեռանելն։

Յերկուանայցէք այսուհետև, ո՛ հաւատացեալք, թէ ո՛րք էին որդիք Մարիամու։ Ո՞ոչ տեսանէք, զի ճշմարիտ որդիք նորա են՝ զորս գտանէ նա առ խաչին Քրիստոսի խաչակից. և ո՛րք այսոքիկ էին։ Սոքա են՝ որք մեռուցանեն յանձինս իւրեանց զՔին մարդն, որք ՚ի խաչ հանեն զմեղս կարեօքն և ցանկութեամբք հանգերձ՚ի ձեռն ապաշխարութեան։ Կամիք լինել որդիք Մարիամու, քորք իմ, բարձէք զխաչն Քրիստոսի, զոր վաղ իսկ յանձն առեալ էք ՚ի հրաժարելն յաշխարհէ. յարատևեցէք ՚ի կոչման ձերում. հաւատիք ՚ի բաց հանապազօր զչար ցանկութիւնս. և զի արհամարհեցիք զաշխարհ, մի՛ ինչ ՚ի հրապուրանաց նորա ձգեսցէ զձեզ, և մի՛ ինչ յուշացութեանց նորա աղբեսցէ ինչ ՚ի ձեզ՝ բայց արհամարհանս։ Այսպէս լինիք արժանի փառաւորեալ և աստուածային պաշտամանդ՝ զոր վասն սիրոյ յանձն առեալք էք վաստակել ՚ի փրկութիւն հոգւոց։ Պարտ է ձեզ չահել զնոսա նովին ձանապարհաւ՝ որով Քրիստոս չահեցաւ, խո-

նարհուԹեամբ, նուաստուԹեամբ, աղքատուԹեամբ և վշտօք, և ամենայն ազգի ազգի Թշնամանօք: Տեսէք զաՀինօրհնեալ Կոյսն, ծնանիլ նա վշտօք չհաւատացեալս. որ խորհիքդ այսօր 'ի ծնունդ նորա, ածէք զմտաւ՝ զի հանդերձեալ է նա լինել մայր հաւատացելոց, ծնանելով զնոսա Աստուծոյ 'ի ձեռն վշտաց և ցաւոց. հաւատացէք՝ զի և զվաստակս փրկուԹեան հոգւոց՝ մեռելուԹիւն և ապաշխարուԹիւն առնեն պտղաբերս:

Եւ դուք, մեղաւորքդ երբէք զնս, եկայք 'ի խանձարուրս Մարիամայ՝ խնդրել զօգնուԹիւն նորա, կարգալ զղջացեալ և բեկեալ սրտիւ զբարեգուԹէ սիրտ նորա մայրենի: Ա՛յլ եԹէ կամիք ընդունելի լինել նմա, առէք 'ի ձեզ զխաչն Քրիստոսի որդւոյ նորա. մի՛ ևս լսէք աշխարհի՝ որ զձեզ խարդաւանէ 'ի վէհ, և մի՛ հրապուրանաց նորա՝ որովք զեղծոյցն զձեզ: Ողջացէք զզաւանցանս ձեր. ապաշաւ քրիստոնէական ջնջեսցէ զվէրս՝ յորս զառածեցոյց զձեզ սէր հաճոյ լինելոյ աշխարհի: ԵԹէ անմեղուԹիւն առնու զպակաս իւր, ապաշխարուԹիւն ևս ունի զնա. Յիսուս եկն 'ի խնդիր մեղաւորաց. և Մարիամ անմեղն բղխորովին՝ 'ի նոցանէ ունի զմեծագոյն փառս իւր. զի ոչ լինէր նա մայր Աստուծոյ, եԹէ ինձ փրկուԹեան մեղաւորաց ոչ հրաւիրէր զողորմուԹիւն որդւոյն 'ի զգենուլ մարմին մահկանացու: ԵԹէ տակաւին կայցէ ինչ 'ի ձեզ մնացուած խստասրտուԹեան, արտասուք մանկանս կակղեսցեն զայն:

ՊՈՍԻԻԷԻ

ՄԵԼԴԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԴԱՐՁԵԱԼ

Ի ԾՆՈՒՆԴ ՏԻՐԱՄՕՐՆ

Ջինչ լինիցի մանուկս այս:
Ղ—Ի. Ա. 66:

Մինչ չև էր ծնեալ փրկիչն մեր Քրիստոս, ամենայն աստուածապաշտք 'ի վերայ երկրի՝ որ ակնկալեալ մնային փրկուԹեան Իսրայէլի՝ հառաչէին ըղձիւք գալստեան նորա, և ուխտիւք պաղատէին առ Հայրն երկնաւոր՝ առաքել վաղագոյն զմիայն ազատարարն Ժողովրդեան իւրոյ. և եԹէ նշան ինչ երեւնայէր ժամանակին մերձենալոյ կատարման ըղձից նոցա երևէր, հրճուալից ուրախուԹեամբ գոհաբանէին զԱստուած: Այդ եԹէ ազգ լինէր նոցա ծնունդ սրբոյ Կուսին՝ յորմէ ծնանելոց էր Քրիստոս, որպիսի գգուանօք ոչ ողջունէին զնա, և քանի զմայլմամբ ոչ զնա ողջագուրէին, յուսով տեսանելոյ զօրն գեղեցիկ՝ յորում՝ ակնկալուԹիւն ազգաց երևելոց էր յաշխարհի: Ժողովուրդք կոյրք, որք սքանչացեալ ընդ արեգական լուսաւորու աշխարհի՝ ընծայեն նմա զաստուածականն պաշտօն, սկսանին ուրախանալ 'ի տեսիլ արշալուսոյ՝ որ յառաջընԹաց է նորին: Այսպէս

ինն և մեք, ով Տէրամայր, յաջորդք ազգացն այնոցիկ, համախորհուրդք ընդ նոսին, լուռութեամբ և երկիւղած մեծարանօք երկրպագուք այնորիկ՝ որ ընտրեացն զքեզ, գամք ՚ի պատուել զնանձարուրս քո, ոչ վարդիւք և շուշանօք, այլ սրբազան ծաղկամբք՝ որ փթթին ընորհօք Հոգւոյն սրբոյ, զոր հաձեացեր տէր առաքել առ մեզ բարեխօսութեամբ քով. Ողջոյն ։

Ա՛ի կարգաւ յառաջ խաղաց՛ի ձառիս, բաժանեմ զայն ՚ի գլուխս. ասացից նախ, ով Տէրամայր, զի լեցիս դու միշտ օրհնեալ՝ գոլով մայր Փրկչին մերոյ, զի սիրես զնա անհամեմատ սիրով, և այս է առաջին ընորհ քո ա֊ռանձին. նոյնպէս և Փրկիչն մեր սիրեացէ զքեզ անհա֊մեմատ սիրով, և այս երկրորդ ընորհ է քո առանձին: Այս սուրբ կցորդութիւն քո ընդ նմա միացուացէ զքեզ ընդ Հօր յաւիտեան, և այս լեցի քո երրորդ գերազան֊ցութիւն: Յայսմ յաւիտենական միութեան ընդ Հօր լեցիս մայր հաւատացելոց, որ են որդիք իւր, և եղբարք որդւոյ քո. և այս է յետին գերազանցութիւն քո, որով կինքեցից զքանս իմ:

Թերևս զարմանիք, ո՛ հաւատացեալք, համարելով կարի ընդարձակ զբուանդակութիւն ձառիս, և կամ գէթ բաղմակնձիռն. այլ ոչ լեցի այնպէս՝ ընորհօք Տեառն: Զի առ անչփոթ տալոյ զնմաստս՝ քայլ քայլ յառաջ մատիցուք, հաւատաւելով անժխտելի փաստիւք զարժա֊նապատուութիւն Կուսին ՚ի վերայ փառաւորեալ աս֊տուածամայրութեան իւրոյ: Փութամ զի ձշմարտու֊թիւնքս կարի բարձունք են, այլ ոչ վհատիմ ՚ի բացատ֊րել զայսոսիկ պարզ ոճով. մեծամեծս արդարև թուիմ խոստանալ, այլ քաւ լեցի՝ թէ ՚ի կար իմ վստահանայցեմ: Յոյս իմ ՚ի Տէր է, և հաձեացի տալ ինձ այսօր զընորհս փառաւորելոյ զնոսն իւր ՚ի ձեռն սրբոյ Կուսին: Հայրն երկնաւոր օգնեացէ ինձ վասն գտաեր իւրոյ սիրելւոյ. Աստուածորդին վասն մօր իւրոյ սիրելւոյ. և սուրբ

Հոգին վասն ամբիծ հարսին իւրոյ: Քաջալերեալ գե֊ղեցիկ յուսով, զի՛ ևս երկնչիմ ՚ի սկսանել. միա դիք, ո՛ հաւատացեալք:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ասացէք ինձ, աղաչեմ. յետ լսելոյ որ ինչ ցայս վայր ասացաքս, զինչ խորհիք զսիրելւոյ մանկանէս՝ որ գայ ՚ի լոյս, զինչ կարծէք թէ լեցի ա՛ի զարգանալ սիրոյն. Զինչ լինիցի մանուխս այս: Սիրեմ ես ասա աղաղակել՝ ով բնւրելոց երանեալ գաւրիկ, նախասահմանեալ ՚ի սէր ծայրագոյն առ նա՝ որ միայն է արժանի ըղձից մերոց:

Ոչ անգիտանայք, ո՛ հաւատացեալք, զի սէրն Քրիս֊տոսի է դեղեցկագոյն պարգև Աստուծոյ առ սուրբս: Ի սկզբանէ ժամանակաց, հեռի դեռ ևս գոլով գալուստն Քրիստոսի, էր բերկրութիւն նահապետաց. Աբրահամ, Իսահակ և Յակոբ, չկարէին ՚ի չափս ունել զինեզու֊թիւն իւրեանց ՚ի խորհել ևեթ՝ զի յաւուր միում յազգէ իւրեանց ծնանելոց էր: Դու ապա ամենօրհնեալ Կոյս, որ կրելոց ես զնա յերանելի արգանդի քումմ, որ տե֊սանելոց ես զննջել նորա ՚ի վերայ բազկաց քոց, կամ մածեալ ՚ի սուրբ ստինս քո, քանի՛ զմայլեցիս: Ի դիել նորա զկաթն քո կուսական՝ ոչ ուղիօրէն զեղուցու ՚ի սիրա քո անուշակ սէր նորա սուրբ. և ՚ի սկսանել նոր մայրակոչ լինել դեռևս թոթովելով, և ՚ի մատուցանել նորա Հօր իւրում զառաջին պաշտօն բարեբանութեան ՚ի պարզել մանկականի լեզուի նորա, և յորժամ տես֊ցես զնա ՚ի տան քում առանձինն հյուծ և հնազանդ հրա֊մանաց քոց, քանի՛ ջերմագերմ լեցի եռանդն սիրոյ քո:

Թոռտռալն լեցուք և զայս՝ զի մի ՚ի մեծամեծ ընոր֊հացն Աստուծոյ է՝ խորհել սակս ՚ի Փրկիչ մեր. անուն

Նորա մեղը ՚ի բերանի, լոյս յաչս մեր, բոց ՚ի սրտի մե-
րում, ըստ Բեռնարդեայ: Անթարգմանելի իմն շնորհս
սփռեալ է Աստուծոյ յամենայն բանս նորա և ՚ի գործս.
խորհել յայնոսիկ՝ են կեանք յաւիտենականք. խորհե-
ցարուք ՚ի նոսա ստէպ, ո՛ հաւատացեալք, և գտանիցեք
անդ աներկբայ մխիթարութիւն անճառելի: Այս էր բո-
վանդակ քաղցրութիւն Կուսին, ընթեռնումք յԱՒե-
տարանի, զի որ ինչ և ասէր նմա որդին իւր, և որ ինչ
այլք ըստ իւրմէ, պահէր զամենայն ՚ի սրտի իւրում,
և յեղյեղէր անդադար ՚ի մտի. և՝ Մոքիամ վամենայն
չբանս պայսոսիկ պահէր, և խելամոպ լինէր ՚ի սրտի իւրում: Այն-
պէս պինդ ունէր զամենայն ՚ի սրտի, զի և ոչ մի ինչ
բռնութիւն կարէր խլել զայնոսիկ. զի հարկ էր հանել
յերակաց նորա զյետին կաթիլս մայրենի արեան, որ ոչ
դադարէր ՚ի բարբառելոյ ընդ նմա ըստ որդւոյն: Որպէս
աղդողադոյնս զգան մարք զամենայն գործս որդւոց
իւրեանց, այսպէս Մարիամ խորագոյնս զգայր զամե-
նայն՝ որ ինչ յորդին իւր սիրելի հայէր: Հրաշանայր
ընդ վարս նորա, զմայլէր ընդ բանս. քանի՛ վիշտս ընդ
յարչարանս նորա կրեր, քանի՛ խանդաղատանս ընդ սէր
նորա, քանի՛ բերկրութիւն ընդ փառս նորա. և ՚ի դառ-
նալ նորա առ Հայր իւր, քանի՛ անձուկ հասանելոյ
զհետ նորա:

Սուրբ Ագուինացին, ՚ի խօսել զայլևայլ աստի-
ճանաց երանելեացն յերկինս, ասէ՝ զի առաւել բեր-
կրին յերեսաց Աստուծոյ, որք ջերմագոյնս յաշխարհի
աստ ցանկացան տեսանել զնա. զի քաղցրութիւն վայե-
լից, ասէ, համեմատ է ըղձից: Որպէս նեռ բռնագոյնս
ոստոյնս յաղեղանէ՝ խորագոյն մտանի ՚ի նպատակն՝
յոր ուղղեալ է, այսպէս հոգի հաւատացեալ խորա-
գոյնս մտանի յանդունդս էութեանն Աստուծոյ, որ միայն
է նպատակ յուսոյ իւրոյ, ՚ի դիմել իւրում անդր առա-
ւելագոյն ջերմութեամբ ըղձից: Որպէս զի եթէ Աստ-

քեալն հարեալ ՚ի խորս սրտի սիրով փրկչին, եռայր
այնու անձկանօք տեսանել վաղագոյն զկատեալ զորմ
մարմնոյն՝ որ բաժանէր զինքն ՚ի Քրիստոսէ. Յանիւ ելա-
նել ՚ի մարմնոյ ասպէ, և ընդ Քրիստոսի լինել ՚ի միտ առեալ
զանձուկ Տիրամօրն, և զքաղցր յուզումն սրտի նորա:
Եթէ պատանւոյն Տոբիթայ տարւոյ հեռաւորութիւն
յանմխիթար ցաւս զսիրտ մօրն համակէր, քանի՛ խոր
ընդ Քրիստոս մեր և ընդ Տոբիթ:

Արդ որ ընծայես մեզ այսօր, ով սուրբ մանկիկ,
մտածութիւն այսպիսի մեծ, և որ հանդերձեալդ ես
ըստ չափոյ ըղձից զարգանալ, որ տեղի փառաւորեալ
ընկալցի զքեզ յերկինս. չկայ՛ պարտ անցանել քեզ գեր
՚ի վերոյ քան զամենայն հրեշտակային դասակարգու-
թիւնս, դիմել առ Քրիստոս մեր: Անդ, Թողեալ ՚ի ստորև
զամենայն կարգս նախասահմանելոց, լուսափայլեալ
փառօք, ձգեալ զբոլորից երկնային արքունեաց աչս ՚ի
քեզ, ամբարձեալ կալ առ գահոյիւք միածնի որդւոյ քո,
վայելել յաւիտեան յանխմանալի գաղտնիս շնորհաց
նորա: Անդ զմայլեալ ՚ի քաղցր գրկախառնութիւնս
որոց սրտեռանդն անձկայիր, խօսեացիս ՚ի սիրտ նորա
հրաշալի զօրութեամբ: Ո՛հ, ո՞ առաւել քան զքեզ զօ-
րեացէ խօսել ՚ի սիրտ իւր. զի գոցես անդ սէր փոխա-
դարձ, սէր որդիական համեմատ մայրենի սիրոյդ, եկեալ
ընդ առաջ ընդունել զայն, և կանխեալ ՚ի կատարումն
ամենայն ըղձից քոց:

Ահա հասաք յանդգնութիւն ՚ի սէր անդր, որով Որ-
դին Աստուծոյ փառաւորէ զսուրբ Կոյսն. զինչ զայն-
մանէ ասացիս ձեզ, ո՛ հաւատացեալք: Եթէ չկարացեր
նկարագրել ձեզ զսէր մօրն ըստ արժանւոյն, կարացիք
նկարագրել զորդւոյն. քանզի դիտեմ հաւատով՝ զի
որչափ որդին գեր ՚ի վերոյ քան զմայրն է յամենայնի,
նոյնչափ գերազանց է նա որդի քան զբարեբաշտ մայր:
Սակայն առցուք առ ձկայ, ո՛ հաւատացեալք. մի, այլ

ֆնդրեսցուք, հետազօտեսցուք և այլ ինչ հզօրագոյն ՚ի սուրբ Աւետարանին տեսութիւն. անդ է ուր շարժին սիրտք, միակ բառ նորա առաւել ունի զօրութիւն ՚ի վերայ սրտից մերոց, քան զամենայն ազդուութիւն և քան զամենայն Ճարտարմտութիւն հռետորականին: Ասացուք ապա օգնականութեամբն Աստուծոյ յԱւետարանէ անտի. և զինչ կարիցեմք գտանել անդ գեղեցկագոյն քան զհնանալի հարուսն փրկչին ՚ի սէր մարդկայինս բնութեան: Ներեցէք ինձ աստանօր սուղ ինչ արտուղի ելանել. ոչ անհաճոյ լիցի այն սրբոյ Կուսին, և ոչ անօգուտ ձեզ և իմումս առաջարկութեան:

Ի լսել, և պարտ լինել մեզ յուրախութիւն մեծ, զի փրկիչն մեր ոչ անարժան համարեցաւ իւր՝ յանձն առնուլ որ ինչ է մարդոյ. հաւ զամենայն, բայ ՚ի մեղաց: Ասէմ իսկ զամենայն, մինչև զդուշնաքեայս. զամենայն, մինչև զկարի իսկ ակարութիւնս: Զկարեմ ներել հերեսիովասց, զի ժպրհեալ ուրանալ զՀմարտութիւն մարմնոյ նորա, ժխտեցին վասն այնորիկ և զնակութիւն չարչարանացն, անձամբ զանձինս զրկելով ՚ի քաղցր միխիթարութենէ. փոխանակ զի իսկականս խոստովանեալով իմ զայնոսիկ, որ ինչ ինձ վիշտք և հասանիցեն՝ սփոփեցայց չարչարակից փրկչին իմում գտեալ: Ի կրել իմում կարիս, յիշեցից զքաղց և զծարաւ փրկչին իմոյ և զտեսին կարօտութիւն. եթէ նախատեցայց, յուշ լիցի ինձ ասացեալն զնանէ ՚ի մարգարէէն՝ լցաւ նախատանօք. եթէ անկայց ՚ի սկարութիւն, կրեաց նա զայն մինչև ցմահ. եթէ անկայց ՚ի տրտմութիւն, երթայց ՚ի Գեթսեմանի, տեսանել զնա յերկիւղի ՚ի տրտմութեան և ՚ի տագնապի՝ ընդ քրտան արեան հարեալ յահէ ևեթ չարչարանացն: Զինք իմ լուեալ երբեք՝ զի դեպք այսպիսի պլշում ումեք լեցեն պատահեալ. և ՚ի միտ առնում՝ զի ոչ ոք, բայ ՚ի փրկչէն իմմէ, կրեաց մարմնոյ այսպիսի սասկիկ և դառնակսիծ, թեպետև ոչ սակաւ ամբեալ համակամութեամբն ընդ Հօր:

Այլ ասիցէք՝ թէ զինչ այս օգնէ առաջարկութեանս. գիւրին լցի ինձ առ զպատասխանին. զի եթէ փրկիչն մեր կամեցաւ զդէնուլ անխափան զոկարութիւնս զայսոսիկ՝ որ անարժան իմն Թուէին ճանճին նորա, զանհնարին տագնապն և զարհաւիրս անխառն ամբողջ և խակապէս, զինչ ասել կայ զրդիական սիրոյ՝ քան զոր չիք ՚ի բնութեան ընդաբոյս ինչ և արդար, մանաւանդ առ այնպիսի մայր՝ որպիսի սուրբ Կոյսն էր, յորմէ միայնոյ ունէր յերկրի զկեանս իւր, ընդ մասին ինչ փառաց իւրոց, և յեղանակաւ իմն զանապականութիւն իսկ մարմնոյ իւրոյ. որպէս զի առաւելութիւնս այս, որ ոչ կարէ դալ ՚ի դէպ այլոցմ ումեք ՚ի մարց՝ բայ ՚ի նմանէ, յայժ առաւել յաձախէր զսէր փրկչին որդիական:

Եւ մի երկնչիք, ո հաւատացեալք, թէ խորհրդեմ ինչ այսոսիկ ՚ի մեծութենէ փրկչին մերոյ. զի ճշմարիտ է բանս, թէպէտ և թուիցի առաւելազանց, մանաւանդ ըստ նախկին տեսութեան: Եւ համարիմ հաստատել զայն ՚ի վերայ հաւատարիմ և հրաշալի վարդապետութեան սրբոյն Օգոստինոսի, որում և միաբ գժուարահաւանք ստիպեսցին տալ տեղի: Այլ ես այս մեծ նախատեալ՝ զի յամենայն առաքինական ծնունդս խառնի ցանկութիւն, որպէս է իսկ ճշմարիտ ըստ մերումն թեչութեան, զկետ բերի՝ զի անհնազարտս այս ցանկութիւն այնպէս ապականէ յոր ինչ և մերձենայ, զի և մարմինս մեր ՚ի նիւթոյ անտի կազմեալ՝ ճգէ հարկաւ ապականութիւն ինչ յինքն: Վասն այսորիկ մարմինք մեր ՚ի յարութեան նորոգեսցին բոլորովին, այս ինքն լիցին լուսափայլ և անապական, ծնցին վերստին ոչ ՚ի կամաց առն, և ոչ ՚ի կամաց մարմնոյ, այլ ՚ի փչմանէ Հոգւոյն Աստուծոյ, որ հաճեսցի շնչել ՚ի նոսա հոգի, ՚ի թողուլ նոցա յերկրի զապականութիւն առաջնոյ ծննդեան իւրեանց: Այդ զի չէ աստ տեղի լուսաբանելոյ զայս ճշմարտութիւն, քան համարիմ ասել յանսխալ

հաւատամք, զի է սա վարդապետութիւն սրբոյն Օգոստինոսի, զոր գտանիցէք աքանչելապէս բացատրեալ ՚ի նմանէ բազում ուրեք ՚ի հրաշազան բանս իւր, մանաւանդ ՚ի բազմահմուտ գիրսն ընդդէմ Յուլիանոսի:

Արդ ինդրեմ ուշ ունել՝ որ ինչ ՚ի վարդապետութենէ աստի առաջի կայ ինձ զհետ բերել: Զի եթէ սովրական կարգ ծննդեան բերելով ինչ անմաքուր, ածանցէ ՚ի մարմին մեր խառնուրդ ինչ անսրբութեան, կարեմք հաստատել ՚ի հակառակէն՝ զի պտուղ հուսական մարմնոյ ընդունի ՚ի մաքուր արմատոյ անտի սրբութիւն իմն հրաշալի: Աներկբայելի է այս հետեւութիւն, և է վարդապետութիւն հաստատուն սրբոյ Հայրապետին առեալ յաստուածային գրոց, ինդրեմ զհետ գալ բանիցն՝ զոր ասէ. « Եւ քանզի պարտ էր մարմնոյն Քրիստոսի գոլ սրբագոյն քան զՃառագայթս արեգական, վասն այսորիկ ընտրեաց ՚ի յաւիտենից հոյս մայր, որպէս զի զօրութեամբ ևեթ սուրբ հաւատոյ բողբոջեացի ՚ի նմանէ »:

Ըստ այսոցիկ գերազանցութեանց պատրաստելոց սրբոյ Կուսին, բաւէ, զինչ յաւուր միում լինի գատրիկս այս. Զինչ լինիցի մանուկս այս: — Լիցի բիւրեցս երանելի ՚ի սիրել այսպէս զՔրիկէն, և այսպէս լինել նմա սիրելի: Սիրել զորդին Աստուծոյ է ընդունել զնա ՚ի հոգի, զոր ՚ի նմանէ ևեթ ընդունին արդարք. և քանզի Մարիամ է մայր Աստուծոյ, և բնական է մեր սիրել զորդիս. ոք ինչ վասն այլոց է ընդունել՝ սիրել զՅիսուս, է վասն Կուսին բնութիւն: Եւ դարձեալ՝ սիրելի լինել որդւոյն Աստուծոյ, պարգեւ իմն է աստուածային՝ զոր ինքն ընդունէ մարդկան. և քանզի է նա որդի Կուսին, և չիք որդի՝ որում չկոչէ պարտ սիրել զմայր իւր. այն որ պարգեւ է առ այլս՝ լինի պարտ առ սուրբ Կոյսն: Եւ եթէ սիրէ զնա այսպէս Յիսուս, պարտի հարկաւ մեծապարգեւ մեծարել զնա. և չիարէ տալ նմա այլ ինչ պարգեւ, բայց զբարութիւնս իւր. և

բարութիւնք Աստուածորդւոյն են առաքինութիւնք և ընդունէ. է արիւն իւր սուրբ՝ զոր հեղու ՚ի վերայ մարդկան. և զո՞ համարիցիք՝ թէ առաւել հաղորդ արասցէ արեան իւրոյ քան զնա, յորմէ ընկալաւ զարիւն իւր: Ինձ այսպէս թուի՝ զի արիւնն այն պատուական ՚ի մեծամեծ կայլակս ախորժէր հոսել ՚ի խաչէն ՚ի Կոյսն, քաջ զգացեալ՝ զի աղբերակն իւր լեալ էր ՚ի նմա: Նա ասանիկ անդիտանայցեմք իսկ՝ զի Հայրն երկնաւոր չկարէ փակել զսէր իւր յամենայնիկ, որ պատկանի որդւոյ իւրում. զի ո՞չ ՚ի նմա համբուրեցան երկինք ընդ երկրի ՚ի հաշտութիւն. չեցէ՞ նա զոգ սիրոյն Աստուծոյ ընդ մարդկան. ո՞չ ինքն է ամենայն փառք մեր, և խարիսխ յուսոյ մերոյ: Եւ ո՞րպէս լեցի նմա չսիրել զՏիրամայրն, որ ընդ որդւոյ իւրում միացեալ կալոց է ՚ի յաւիտեան: Այս ամենայն հաստատեալ է ՚ի հաւատս անսասանելի. այլ քանզի մարթ է կարծել ոմանք՝ զի սուրբ միութեանս այսմիկ մարմին և արիւն միայն նցե զոգ, եդից զվերջին հինիք առաջարկութեանս, ցուցանելով ըստ խոստման իմում՝ քանի գերազանցապէս ամբարձաւ սուրբ Կոյսն ՚ի կցորդութիւն ընդ Հօրն երկնաւորի փառաւորեալ աստուածամայրութեամբն:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Աստ է բարձրագոյն և դժուարագոյն մասն ճառիս, և սակայն չիցեն պէտք երկայն բանից. զի որ ինչ ցայսմայր ասացի դիւրին զմուտս ՚ի նոսին, և որպէս թէ զհետ բերեն զայնոսիկ առաջնոց տեսութեանցս: Արդ առ ՚ի բացատրել ձեզ զհօրհուրդս իմ, առաջի առնեմ վարդապետութիւն իմն, յորում զգուշութեամբ պարտ է յառաջ գնալ՝ զի մի լեցի մեզ մոլորել: Տացէ ինձ Տէր

այնպէս պարզ տալ ձեզ խմանալ զայն, որպէս է հաս-
տատուն: Արդ այսօր եղանակաւ խմաստասիրեմ: Սէր
Կուսին, զորմէ յառաջ ասացի, ոչ զկայ առնոյր 'ի մարդ-
կութիւնն Քրիստոսի, այլ անդր ևս ընդ այն անցանէր
աներկբայապէս 'ի ձեռն միութեանն յաստուածային
ևս բնութիւնն: Բարձր է աստուածաբանականս Հմար-
տութիւն, և պարտ է ինձ առնել զայն դիւրիմաց: Սիրէ
մայր որ ինչ և իցէ անձին որդւոյ իւրոյ, որպէս բազում
անգամ ասացի, և ոչ վայրապար կրկնեմ ասս. դիտեմ՝
զի յառաջ ևս երբեմն խօսեայ, և զսիրելին ևս որդւոյ
իւրոյ սիրէ, և զամենայն ինչ՝ որ պատկանի որդւոյն.
այլ մանաւանդ որ ինչ անձին նորա իցէ, դիտէք թէ որ-
պէս է նմա սիրելի: Արդ աղէ, զի՞նչ էր աստուածու-
թիւն Քրիստոսի, որպէս պատկանէր անձին նորա, էր
ինչ այլ 'ի նմանէ: Զկամիմ առնել ձեզ աստ հարցուածս
օտարս, հարցանեմ ևեթ զհաւատս ձեր, ինքն տացէ պա-
տասխանի: Ասէք իսկ հանապազորդ 'ի Հանգանակին.
Հաւատամք 'ի Յիսուս Քրիստոս յՈրդւոյն Աստուծոյ 'ի Կուսէն
Մարիամայ: Արդ այն՝ զոր խոստովանիք Որդի Աստուծոյ
ամենակալն, և այն որ ծնեալն է 'ի Կուսէն, երկո՞ւ իցեն
անձինք. քաւ լիցի՝ թէ այդպէս խմանայցէք. այլ զի նոյն
անձն՝ որ Աստուած է և մարդ, ըստ աստուածային բնու-
թեանն է Որդի Աստուծոյ, և ըստ մարդկայնոյն որդի
Մարիամու: Վասն այսորիկ ուսուցչին մեզ սուրբ Հայր՝
զի սուրբ Կոյսն է Աստուածամայր. այս հաւատաք յաղ-
թանակեցին ընդդէմ հայհոյութեանցն Նեստորի, և
մինչև 'ի կատարած աշխարհի դողացուսցեն զբանակս
դիւաց: Եթէ յետ այսորիկ ասեմ զի սուրբ Կոյսն սիրէ
զորդի իւր բովանդակ, ո՞'ի ձէնջ երկբայել կարիցէ ընդ
Հմարտութիւն այսպիսի անժխտելի. ապա զորդին՝ զոր
սիրէր սուրբ Կոյսն, սիրէր որպէս մարդ և Աստուած.
և քանզի չիք ինչ 'ի վերոյ երկրի նման այսմ խորհրդոյ,
պարտ է ինձ ամբառնալ գեր 'ի վերոյ զմիտս իմ՝ առ 'ի
գտանել օրինակ ամենամեծ, զՀօրն երկնաւորի:

Ի միանալ մարդկութեան ընդ անձին Բանին, էղև
այն հարկաւորապէս սիրելի Հօր. խոստովանիմ՝ զի բար-
ւոյնք են Հմարտութիւնքս, այլ զի հիմունք են քրիս-
տոնէական հաւատոց, կարևոր է ամենայն հաւատացելոց
գիտել զայսոսիկ. և ոչ ինչ 'ի մէջ բերեմ, որոյ չիցեն 'ի
սուրբ գիրս հաւաստիք: Ասացէք, աղաչեմ, ո՛ հաւատա-
ցեալք. բարբառն հրաշալի՝ որ հնչեաց 'ի Թաբօրական
լերին 'ի դիմաց Հօր, Դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեայ,
զումմէ համարիցիք ասացեալ. ոչ ապաքէն զԱստուած-
որդւոյն մարդացելոյ՝ որ երևեցաւ անդ լուսափայլ յաչս
Առաքելոց: Տեսանէք ապա սիրապէս յայտ արարեալ 'ի
Հօրէ, զի սէր իւր հայրենի բովանդակէր և զմարդկու-
թիւն Աստուածորդւոյն, և զի բնութիւնն մարդկային
այնպէս սերտիւ էր միացեալ ընդ աստուածայնոյն, զի
ոչ բաժանէր զայն Հայրն երկնաւոր 'ի սէր իւր: Վասն
որոյ, եթէ քաջ 'ի միտ առնումք, այս է քովանդակ խոս-
իսս յուսոյ մերոյ. տեսանել զՔրիստոս, որ մարդ է
իբրև զմեզ, ընկալեալ և սիրեցեալ 'ի Հօրէ որպէս իւր
Որդի:

Մի առաւելագոյնս Թուխսցի ձեզ, եթէ նման ինչ
այսմիկ ասիցեմ 'ի սէր Տիրամօրն, զի սէր նորա բովան-
դակէ 'ի միասին զաստուածութիւն և զմարդկութիւն
որդւոյն, զորս ամենակարող աշն Աստուծոյ այնպէս
միացոյց անբաժանելի: Ջանզի Աստուած սքանչելահրաշ
խորհրդով 'ի դէպ համարեալ՝ զի սուրբ Կոյսն ծնցի 'ի
ժամանակի զայն որ 'ի յաւիտենից ճշմարտապէսն
ծնանէր յիւրմէ, կցորդեաց զնա յեղանակաւ իմն 'ի
ծնողութիւն իւր յաւիտենական: Ի միտ առէք, ո՛ հա-
ւատացեալք. զի կացուցանել զսուրբ Կոյսն մայր նմին
Աստուածորդւոյ, է առնել զնա հաղորդ յաւիտենական
ծնողութեանն իւրոյ: Այսր աղագաւ, քանզի Հայրն
երկնաւոր հաղորդ իմն յաւիտենական ծնողութեանն
կացոյց զսուրբ Կոյսն, 'ի դէպ էր իմաստութեան իւրոյ

և զանսահման սիրոյ իւրոյ առ Ոլորն զկայծակունս ինչ վառել ՚ի սիրտ նորին: Զի աստուածախնամ տեսչու-թեան, որ զամենայն ըստ պատշաճի անօրինէ, արժան էր տպաւորել ՚ի սիրտ Կուսին սէր այնպիսի՝ որ անցա-նէր զանցանելը քան զամենայն սէր բնական, և հասանէր ՚ի ծայրագոյն աստիճան հնարից, որպէս զի ունել խան-գաղատանս առ որդին արժանիս Աստուածամօր և Աս-տուածորդւոյ:

Ըստ այսմ ասա, ով Տիրամայր, եթէ էին ինձ միտք հրեշտակայինք և բարձրագունից դասակարգութեանց իմացութիւնք, սասանէին ըմբռնել զամենակատար միու-թիւն Հօրն երկնաւորի ընդ քեզ. Անդէս սիբեաց Աստուած զալիսրհ, գնալ ՚Որդին իւր գաղթին եգ. ասաց Փրկիչն մեր: Եւ Առաքեալն յաւելու. Ոչ միւր Որդին ոչ խոստեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա, պիտոյ ոչ նուազ հանդերձ զամե-նայն ընդհինէն մեզ: Արդ եթէ մեզ Հայրն երկնաւոր եցոյց սէր այսպիսի մեծ՝ տալով զՈրդի իւր որպէս տէր և փըր-կիչ, ապա սէրն անճառելի՝ որով սիրէրն զքեզ՝ յոյժ այլազգ խորհուրդս վասն քո իմանայր: Պատուէր եա՝ զի լինի նա քո այնու օրինակաւ, որով էն իւր. և առ ՚ի կացուցանել ընդ քեզ կցորդութիւն յաւիտենական, կամեցաւ՝ զի լինիս դու մայր միածնի Որդւոյ իւրոյ, և ինքն Հայր քոյումդ: Ո՛վ սքանչելիք, ով անդունդք սի-րոյ. և ո՞ր միտք ոչ կորնչին ՚ի խորհել զանհասանելի հա-ճութիւն նորա ընդ քեզ, որ այսպէս սերտիւս կցորդես ընդ նմա ՚ի ձեռն երկաքանչիւրոցդ որդւով. որ է զոք անլուծանելի կցորդութեանդ ձերոյ, և գրաւական փո-խադարձ սիրոյդ՝ զոր եատաք միմեանց, ինքն լի անկրելի աստուածութեամբն, իսկ դու մահկանացու զգեցեալ մարմին առ ՚ի հնազանդել նմա:

Աձեայ ասա, գաղրիկ երջանիկ, աձեայ խնդու-թեամբ. երկինք բարեբար ցօղեսցեն յամբիծ գլուխ քո զքաղցրագոյն օրհնութիւնս իւր. աձեայ, և ամենայն

ազգք և ազինք եկեսցեն ընդ հուպ երկրպագել որդւոյ քումմ, և ծանիցեն զվառս քո. և տայցէ նոցա ծնունդ քո խաղաղութիւն յաւիտենական: Իսկ մեք շարժեալք երկիւղած գոհութեամբ զՏեառնէ՝ որ ընտրեացն զքեզ, դամբ ՚ի պատուել զլոյսդ նորածին, և սիրել զորբանաւ քով վարդ և շուշան, փունջս սուրբս սրտեառանդն ըղձից և անլռելի օրհնաբանութեանց: Խոստովանիմ այո, Կոյս սուրբ, զի գովութիւնք՝ զորս քեզ ընծայեցի՝ են կարի ստորև մեծութեան քո, և ըղձից իսկ իմոց: Այլ արդ շնացեալ յընդերկար հայելոյ, թեպէտև ընդ թանձրա-թիւն ամպոց, ՚ի ձառանէչ լուսոյ քո, ստիպիմ խոնարհել զհայեցուած իմ. և որպէս աչք մեր տկարք շնացեալ ՚ի ճառագայթից արեգականն ՚ի միջօրեայ պայծառութե-նէն, մեան հայել ՚ի նա անխափող ՚ի խոնարհել նորա ՚ի մուտս, ուր թուի աչաց մերոց մերձագոյն յերկիր, այսպէս հնացեալ, ո՛ պանչելապայծառ Կոյս, խլեսելով յառել ընդ երկար ՚ի վեմ բարձրութիւն աստուածա-մայրութեան քո՝ որ զքեզ այնպէս մերձ կացուցանէ մեծվայելչութեանն Աստուծոյ, և ամբառնայ գեր ՚ի վե-րոյ քան զմեզ, հարկ է ինձ առ ՚ի զօրանալ՝ նկատել զքեզ վայրկ մի որպէս մայր հաւատացելոց, որով խոնարհիս քաղցր հաճութեամբ մինչև առ մեզ, և որպէս թէ ինքս նեա ՚ի տկարութիւնս մեր՝ կարեկից եղեալ մեզ մայրենի գթով: Այլ ոչ օտարացայց, ո՛ հաւատացեալք, յառա-ջարկութենիս չանալոյ հանել ինչ անտի ՚ի խրատ մեր. ժամ է արդ կինիք բանիցս դնելոյ:

Բարեխօսեա վասն մեր, սրբուհի մայր. զի որպէս Ջերմեռանդն քո սուրբն Բեռնարդոս ասէ, ո՛չ առա-ւել քան զքեզ կարէ խօսել ՚ի սիրտ Փրկչին մերոյ: Գիտանես անդ սէր փոխադարձ, սէր որդիական՝ որ գայ ընդառաջ սիրոյդ մայրենի, և կանխէ քան զիղձս քո. վասն որոյ ևմ իմիք չկարեմք յաւասալ ՚ի գորովագութ բարեխօսութենէդ քումմէ:

Ոչ է մարթ խորհել քանի օգուտք անտի մեզ յառաջ գան. բազում երաւամբք եկեղեցի համասփիւռ ընդ տիեզերս յորդորէ զմեզ մտանել առանձինն օրինակաւ ընդ Հովանեաւ Տիրամօրն։ Սակայն ոչ զանդիտեմ ասել, զի յոլովք խաբին 'ի պաշտօն Կուսին. բազումք համարին լինել ջերմեռանդ Կուսին, այլ չեն. յոգունք կոչեն զնա մայր, այլ չընդունի ինքն զնոսա յորդիս. և ոչ սակաւք կարդան զնա յօգնութիւն, այլ սրբուհի Կոյն ոչ կամի բարեխօսել վասն նոցա։ Ուսարուք ապա, ո՛ հաւատացեալք, ուսարուք որ իցէ ճշմարիտ պաշտօն սրբոյ Կուսին, զի մի ընծայելով զայն նմա՝ ոչ որպէս պարան է՝ կորուսանիցէք զպտուղ պաշտաման նորա, որ շահաւէտ յոյժ կարէ լինել ձեզ։

Յորժամ եկեղեցի հրաւիրէ զսրբոյս իւր՝ դիմել 'ի բարեխօսութիւն սրբոց, որ Թագաւորին ընդ Քրիստոսի յերկինս, խորհի աներկբայ՝ զի պատուղս կարևորս քաղեմք մեք անտի։ Այլ ոչ երկմտեմ հաստատել մեծագոյն 'ի նոսա զայն, զի 'ի պատուել մեր զառաքինութիւնս սրբոց՝ բարեպաշտ յիշատակ նոցա վառեսցէ 'ի մեզ եռանդն 'ի նմանութիւն վարուց նոցա. ապա թէ ոչ, 'ի զուր է ընտրել մեզ 'ի նոցանէ պաշտպանս՝ առանց նմանող լինելոյ նոցա։ «Պարտ է, ասէ սուրբն Օգոստինոս, զի գացեն 'ի մեզ հետս ինչ զառաքինութեանց իւրեանց, որպէս զի բարեխօսեսցեն վասն մեր առ Տէր»։ Անտի է կարծել՝ թէ ամենօրհնեալ Կոյսն ընկալցի յորդիս իւր զայնոսիկ, որ ոչն ջանան նմանել իւրումն գեղեցիկ և սքանչելի նախատիպ։

Եւ զինչ առաւելապէս պարտ իցէ մեզ առնուլ 'ի նմանութիւն 'ի սուրբ Կոյն, եթէ ոչ զեռանդն խանդակաթ սիրոյն առ փրկիչն մեր Քրիստոս, որ որպէս տեսեքդ՝ է աղբիւր կենդանի ամենայն գերազանցութեանց և կատարելութեանց Կուսին։ Եւ դարձեալ՝ զինչ կարիցեմք հաճոյագոյն ընծայել նմա, բայց յարել զամենայնի իղձս մեր յայն՝ որ եղևն և լիցի յաւիտեան ամենայն բերկրութիւն իւր։ Եւ դարձեալ՝ զինչ այլ կարեւորագոյն կայցէ մեզ, որ ինչ պատուականագոյն, որ ինչ քաղցրագոյն և հաճոյագոյն քան զայս սէր, և զինչ մեծագոյն հարկ քան զսիրել զՅիսուս, վասն որոյ ասէ Առաքեալն. Եթէ ոք ոչ սիրէ զՏէր Յիսուս, եղիցի նզովեալ։ Եւ որ մեծագոյն պատիւ՝ քան սիրել զԱստուած, և որ քաղցրութիւն զմայլելի՝ քան սիրել զմիայն Աստուած մարդացեալ։

Եւ կարի յիրաւի, չիք ճշմարտագոյն ինչ. Աստուած ամբաւ է սիրելի լինքեան. այլ յորժամ նկատեմ զնա եղեալ մարդ, կորնչին միտք իմ, և ոչ ևս գիտեմ զինչ խորհել, և զինչ ասել. և Թուի ինձ զգալ յանձին՝ զի եմ քան զամենայն արարածս չարագոյն, անիրաւ, ապերախտ, և արհամարհ, եթէ ոչ սիրեմ զնա 'ի վեր քան զամենայն։ Չի զինչ է Քրիստոս, բայց Աստուած՝ որ խնդրէ զմեզ, Աստուած՝ ընտանի լեալ մեզ, Աստուած՝ վառեալ 'ի սէր մեր, Աստուած՝ որ զինքն բովանդակ տուեալ է մեզ, և տալով մեզ զինքն բովանդակ, ոչ այլ ինչ խնդրէ արիաւոր 'ի մէնջ, բայց զմեզ։ Ապաշնորհ և բիւրիցս ապաշնորհ, որ ոչ սիրէ զնա. Թշուառ և բիւրիցս Թշուառ՝ որ չսիրէ զնա, և ոչ իմանայ՝ քանի՛ քաղցր է երկիւղածաց սէրս այս. պարտ էր ամաչել մեզ՝ զի 'ի լուր լեթէ անուանն Քրիստոսի ոչ վառին անդէն սիրտք մեր, և ոչ գորովին աղիք։

Ապա ուրեմն եթէ կամիք հաճոյ լինել Մարիամու, արարէք զամենայն վասն Յիսուսի, կեցէ՛ք 'ի Յիսուս, Յիսուս լեցի ձեզ 'ի կեանս. այս լեթէ է հնար շահելոյ զսիրտս բարեգութ մեր մերոյ, եթէ նմանող լինիցիք սրբոյ նորա։ Մայր է նա Քրիստոսի, և մեք անդամք Քրիստոսի. լինքն յղացաւ զմարմին Քրիստոսի, մեք ընդունելիմք զայն 'ի մեզ. արիւն իւր ընթանայ յերակունս մեր 'ի ձեռն սուրբ խորհրդոյ. քաւիմք նովաւ և սնանիմք։

Քրիստոս ինքնին, որպէս յորժամ ասացինն ցնա՝ Ահա մայր քո և եղբարք քո դուրս կան, ձգէ զձեռն իւր առ աշակերտսն, և ասէ՝ Ահաւասիկ մայր իմ և եղբարք իմ, զի որ առնէ զնամս Աստուծոյ, նա է իմ եղբայր և քոյր և մայր: Ո՛վ քաղցր և զմայլելի բարբառ. եղբարս իւր կոչէ զՀաւատացեալս. և ոչ միայն եղբարս, այլ եղբարս և քորս. և զայս ևս ոչ շատ համարեալ, կոչէ զնոսա և եղբարս և քորս և մայր: Եղբարք իմ, այնպէս Քրիստոս մեր սիրէ զմեզ, զի ոչ հրաժարէ տալ մեզ և զմերձաւորագոյն աղգակցութեան անուանս. տայ մեզ որ ինչ անուանս և կամիցիմք, եթէ միայն արասցուք զկամս Հօր իւրոյ երկնաւորի: Եւ զի՞նչ են Հօր իւրոյ կամք, բայց զի սիրեսցուք զմիածին Որդի իւր. Դա է, ասէ, Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ: Ա՛ մեծայն ինչ հաճոյ է նմա ի Յիսուս, և անհաճոյ են նմա որք ոչ նուիրեն Յիսուսի զսիրտ իւրեանց:

Ո՛վ հաւատացեալք, առնեմք մեք զոր Քրիստոս մեր ասէ. Ուր կամիցէ գնել իմ գալ, ուրացիր զանձն. ո՛ւ մեջ ուբանայ զանձն, ո՛ հրաժարէ յանձնէ: Այնուհետեւ զնդանոյ խնդրեն, ասէ Առաքեալն, և ոչ զՅիսուսի Բրէնտոսի: Առնք դուք երբեք ի միտ՝ քանի գժուարին է գործ հրաժարել յանձնէ: Այսեղ ոք. Թողի ես ի բաց զմահացու յօժարութիւնս մարմնոյ: — Իարաւդ է, ոչ փակեսցէ Տէր ի քէն զընարհս ողորմութեան իւրոյ. սակայն զի մեծաբեալ պահես ոմն ի սրտի, և խնդրես պարապ վեհմիտդրութեան, ոչ հրաժարեցեր յանձնէ: — Այլ յաղթեցի ջեր ցանկութեան, այս է՝ զոր խնդրէ յինէն Քրիստոս: — Ոչ խաբիս, այլ էջ այդ բաւական. քննեսջիր զգաղտնիս սրտի քո, գուցէ ագահութիւն, գուցէ թոյնն այն զանխուլ սնափառութեան, գուցէ կարի իմն դիւրասիրութիւն քնութեան և լիզ հաճոյ լինելոյ աշխարհի, և քնան իւիզ ամբառնալոյ միշտ ի վեր քան զայլս, կամ այլ ինչ այսպիսի յօժարութիւն տիրէ ի քեզ: Եթէ կայ այդպէս, ոչ հրաժարեցեր յանձնէ:

Հատիկ համառօտ. ի միջի կամք ամբաւ իրաց, ա՛ հաւատացեալք, որք հրապուրին զմեզ անգադար. ցորչափ կայցէ ի սրտի մերում մի ի թեւից յարեալ ի մահացու ինչ, չեմք հրաժարեալք յանձնէ. վասն որոյ ոչ գնամք զհետ այնորիկ՝ որ ասէն. Որ կոխոյի զնի իմ գալ, ուրացսցի զնոյն: Եւ եթէ ոչ զհետ գնամք Յիսուսի, ոՀր գտանիմք:

Ո՞իցէ ապա, ասիցէք ինձ, որ ձշմարտիւ հրաժարեալ իցէ յանձնէ: — Այն որ արհամարհէ զաշխարհ. որ ոչն երկնչի յիմեքէ, որպէս ի հաճոյ լինելոյ անձին. որ զկենցաղս զայս համարի աքսոր. որ վաղ զաշխարհս, ըստ բանի Առաքելոյն, որպէս թե չէզոքէցէ, զի անդնալ է վայելեցուն զաշխարհս. որ յոգւոց հանէ զհետ Յիսուսի. որ հաւատայ չունել բարի ինչ և ոչ հանդիսա՝ չև հասեալ առ նա: Այնպիսին ուրացեալ է զանձն, հրաժարեալ է յանձնէ, և կարէ ընծայել Յիսուսի զսիրտ իւր՝ որպիսի հաճոյ է նմա, զի նորին ևեթ անձկալին առջորի: Եթէ չիցեմք հասեալ յայս կատարելութիւն, որպէս և եմք իսկ հեռի յոյժ անտի, գոնեա գոն գործեսցուք դիմել անդր ամենայն ձգամբք, եթէ ցանկամք կոչիլ քրիստոնեայք: Ըստ այսմ օրինակի կենցաղավարեալ, ա՛ հաւատացեալք, կարիցէք վատահութեամբ դիմել առ Կայն, զի մատուսցէ որդւոյ իւրում զաղօթս ձեր, եղիջիք ձշմարիտ որդիք իւր ի Քրիստոս, սիրեսջիք զնա, և նա սիրեսցէ զձեզ ի Քրիստոս. բարեխօսեսցէ վասն ձեր առ Քրիստոս, և ընկալցի վասն ձեր զկատարեալ վայելս որդւոյ իւրոյ Քրիստոսի, յորում միայն է երանութիւն. ամէն:

ՄԱՍԻԼԻՈՆԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՓԼԵՐՄՈՆԻ

ՅԱՆՍԱՑՍ ՅՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԿՈՒՍԻՆ

Անցեալ սեպից զտեսիլն
զայն մեծ։
Եզէկ. Գ. 3։

Տէր ասէքայ, նշանն՝ որ յուցաւ Մովսեսի ՚ի Սինայ լերինն՝ էր սքանչելահրաշ, Մորենի չըջապատեալ ՚ի բոցոյ, և ոչ այրէր. զինչ էր՝ որ զայրեցոյց բնութիւն հրոյն անկիզանող առնկր. ընդէր տարին, որ ծախէ զամենայն, թուի ակն ածել ՚ի հրաշալի մարեննոյն։ Ո՞վ ոք չասէր անդ ընդ Մովսեսի. Անցեալ պէտ պտեսիլն զայն մեծ։ Ակն նշանն, զոր ընծայէ այսօր եկեղեցի սուրբ երկիւղածութեան հաւատացելոց, առաւել ևս է սքանչելի։ Ախորած սոսկ, դուստր Ադամայ, մանն աղգի մարգկան պատկանելոյ, որ թէպէտև յաղեղի ականէ սերեալ, և ՚ի մէջ ապականութեան բնակեալ, թէպէտև զթուհնաւոր ծծէ այեր, սակայն պահէ զմաքրութիւն հոգւոյ իւրոյ սրբոյ, և կայ մնայ անապական։ Ո՛ Տէր, ով նման է քեզ, դու ես՝ որ առնես սքանչելիս։

Աղաչեք իսկ երկիւղածագոյնք, հանգերձ ահիւն իւրեանց և զգուշութեամբ, հանգերձ ընորհօք՝ որ օժանդակէ նոցա, առնուն հանապազօր՝ ոչ գամ մի և եթ՝

զփորձ տկարութեան իւրեանց. և եթէ երբէք համա-
բերացին զանձինս սուրբք 'ի մեղաց, ստեն Հոգւոյն սրբոյ
և անձանց: Իսկ Մարիամ յառաջին վայրկենէ անտի,
յորում Աստուած եհնդ 'ի հոգի նորա զարգարութիւն
և զսրբութիւն, մինչև 'ի վայրկեան մտանելոյ իւրոյ 'ի
յաւիտենական երանութիւն, յաղթանակեաց միշտ ընդ-
դէմ մեղաց, և աշխարհի ամենայն խաբէութեանց նորա,
աշխարհի և ամենայն մնոտի կարգաց նորա՝ որովք զբազ-
մութիւն մարդկան ածէ 'ի Ճանապարհ կորստեան, աշ-
խարհի և ամենայն հրապուրանաց նորա, որովք մար-
մնոյն ընդդէմ առաքինութեան, և զբաղումն յարդա-
րոց՝ զորս սուրբ Աւետարանն կոչէ սա ժամանակ ջ հաւա-
տացեալ՝ կործանէ 'ի թշուառութիւն: Բոց մեղաց չըջա-
պատէ զՄարիամ, այլ ոչ ազդէ 'ի նա զեղեռնաւորն
տապ. Նորահրաշ աքանչելիք. փառք և ընդհնդ միայնոյ
Կուսին պահեալք. Անբնաւ պեծոյ պեծոնի պայ ջեծ:

Սակայն ծնեալ այսպիսի գերագոյն ընդհնդ, որ
արհանէր ընդ նա և ընդ մեզս խարոյց իբր անբաւ, ոչ հա-
մարէր նա զանձն յատկահովի՝ բայց միայն հաւատարմու-
թեամբ և զգուշութեամբ: Լիութիւն ընդհնդ, որ գեր
'ի վերոյ կացուցանէր զնա ամենայն վտանգաց, թուէր
առնել նմա զայնոսիկ առաւել երկիւղալիս: Ոչ բերելով
յանձին զտկարութիւն և զապականութիւն՝ որ զամե-
նայն ինչ առնեն մեզ վտանգաւոր, և զառաքինութիւնս
իսկ զմեր յեղաշրջեն յորոգայթս, զգուշութիւն ևեթ
խոստ՝ համարէր ամուր ապաստանի անմեղութեան իւ-
րոյ: Աչանձնութիւն, աղօթք, հրաժեշտ յաշխարհէ, և
ուրացութիւն անձին, եղեն նմա կանոնք վարուց անյել-
լիք. և թէպէտ այնքան ընդհնդ ընկալեալք յերկնից՝
տային նմա վստահութիւն մեծ և հաստատուն չքնաղա-
գոյացանելոյ զինքն անօգնական, սակայն կեպ նա միշտ
յերկիւղ կրօնաւանելոյ զնոսա:

Խրատ մեծ, օրինակ մեծ. եթէ Մարիամ զերծ յա-

պականութենէ՝ որ առնէ մեզ այսքան դիւրին և գոգցեա
անխուսափելի զսահեցմունս՝ փախչի յաշխարհէ, կեպ ա-
ռանձինն 'ի զգուշութեան և յաղօթս, յուսայցեմք մեք
պահպանել 'ի մէջ զբօսանաց և վտանգաց զանմեղու-
թիւն՝ որ վաղ իսկ 'ի ներքս 'ի մեզ գտանէ թշնամիս ա-
հաւորս յընդգիմամարտս: Խելամտութիւն բոլորովին
բնական, յոր սերկեանս խորհուրդ ածէ զմեզ: Արդ
գտանեմ 'ի Մարիամ, զորոյ հաւատարմութիւն կամք
են ինձ տալ յօրինակ հաւատացելոց ընտրելոց յԱստու-
ծոյ՝ որք ընորհաք նորին 'ի բաց կան յախտից, գտանեմ
կրկին հաւատարմութիւն առ ընորհս ընկալեալս յԱս-
տուծոյ, հաւատարմութիւն զգուշութեան՝ որ տայ նմա
կալ միշտ յերկիւղի յերեսաց Թեթև իսկ վտանգաց. և
հաւատարմութիւն յարգելոյ զընորհս մինչև 'ի սպառ,
գուն գործելով յաճումն նոցին, և զկեա երթալով նոցա
ցոր վայր և ածել կամիցին: Դիմեսցուք առ նա ինքն սուրբ
Կոյսն, ընդունել 'ի ձեռն իւր զայս կրկնակ հաւատար-
մութիւն. Ողջոյն քեզ Մարիամ:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Երբեակ վտանգք են երկիւղալիք այնոցիկ, որոց չար-
ժեալ 'ի հոգս փրկութիւն հոգւոց իւրեանց, և խելամուտ
լեալ՝ղի բաց յԱստուածոյ ամենայն ինչ երազք են, սկսանիլն
հաւատարմագոյնք լինել առ նա: Նախ՝ տկարութիւն
իւրեանց, որ ձգէ զնոսա զկեա. երկրորդ՝ աշխարհ, ընդ
որում կամին գեռ ևս խնայութեամբ և հայեցմամբ վա-
րել. և երրորդ՝ մոռացումն ընորհաց՝ որ տակաւ առնէ զնո-
սա Թերահոգս մեծութեան և պատուականութեան բա-
րերարութեանն Աստուծոյ, որ 'ի մոլորութեան անդ իւ-
րեանց փոխեաց զսիրտ նոցա, և զուսաւորեաց զխաւա-

բեալ միտս: Արդ ընդդէմ երեցունց այսոցիկ ծանուցից վանգաց ցուցանէ այսօր սուրբ Կոյն երիս զգուշութիւնս, որ լեցին մեզ յօրինակ. նախ ընդդէմ տկարութեան՝ հրաժեշտ բոլորովին յաշխարհէ. ընդդէմ մնոտի անհնածութեան հասարակաց կարծեաց՝ անզգայութիւն վեհմախոհ մնոտի բանից և խորհրդոց մարդկան, և ընդդէմ մոռացման շնորհաց՝ դոհութիւն հանապազօր ըստ մեծութեան բարերարութեանն Աստուծոյ: Ուշ ունել աղաչեմ:

Առաջին վանգ անմեղութեան մերոյ մեք իսկ եմք: Սուրբ առաքադրութիւնք մեր խրին դրեթէ միշտ ի խոչ և ի խոթ բերման յօժարութեանց մերոց. զգացումն սրտի՝ որ տայ մեզ զմորմիք և զարտասուս զղջման, սուղ ինչ յետոյ յողդողդէ զմեզ և ապաղաքացուցանէ. և առանց իսկ արտաքին իրաց ի նեղքս խառնելոյ և խոտորեցուցանելոյ զմեզ՝ նուաղի առաքինութիւն ի սրտի մերում, ուր էր յառաջն արծարծեալ:

Սակայն մի ի խաբեութեանց, որովք վարի դևն առ ի մոլորեցուցանել զհոգիս՝ որք սկսանին ծառայել Աստուծոյ, է համոզել զնոսա՝ թէ չիցէ կարևոր բացէ ի բաց հրաժարել յաշխարհէ, առ ի քրիստոնեաբար կենցաղավարել, այլ թէ մարթ է և ի մէջ զբօսանաց կեալ անզբօս. զի ի փոխել սրտի, իբրև յառաջագոյն ինասակաբք անմեղութեան՝ եղանին անվնաս, և վտանգք իսկ՝ աւետեալք ի մեծոյ՝ լինին ի խրատ և յուղղութիւն:

Առ ի յամօթ առնել զայս մոլորութիւն թշնամի բարեպաշտութեան, առաքի առնէ մեզ սուրբ եկեղեցի զօրինակ Կուսին: Քանզի նա զօրացեալ բոլորովին օրհնութեամբք շնորհաց, պաշտպանեալ արտունութեամբ սքանչելահրաշ յղութեան իւրոյ, և երաշխաւոր անմեղութեան իւրոյ ունելով զնոստուումն Աստուծոյ, ոչ համարի զանձն յապահովի՝ առանց կալոյ հեռի յաշխարհէ և ի վտանգաց նորա: Փախուստ ի վտանգաց կանխէ իսկ ի

նմա քան զվտանգին վտանգաւոր. մեկուսանալ նորա ի նաշարժել եղև առաջին ապաստան, ուր մտագիւր ամբացոյց նա ի կորսանէնէ զգանձ շնորհաց: Անդ՝ մեկնեալ յաշխարհէ, միացեալ ընդ Աստուծոյ, սուրբ եռանդեամբ սիրոյ՝ որ անգամին կատարեալ էր ի նմա, ժառանգաւոր ըղձից նահապետաց ամենեցուն՝ իւրոց նախահարց, յանձին բերելով զուխտս ամենայն ժողովրդեան, հառաչէր հանապազ վասն գալստեան Փրկչին, հեծէր ընդ լքումն Երուսաղեմի և ընդ զեղծումն ազգին. աղաչէր զԱստուած՝ այց առնել Իսրայելի ողորմութեամբ, և խորհելով հանապազ ի նա՝ որ գալոցն էր ի փրկութիւն Յուդայ և ի լոյս հեթանոսաց, կերպարանէր զնա հաւատովք ի սրտին՝ որպէս սուրբ Հարք բացատրեն, չև զօրութեան Բարձրելոյն կերպարանեալ զնա անեսաբար ի սուրբ որովայնին: Ոչ զօրութիւն օրինակաց, ոչ ապականութիւն բարուց ժամանակին, զի կը ցորդութիւն հեթանոսաց, և արքայութիւն օտարազգեայ պղպղեալ էին յոյժ ի Յուդա զպարզութիւն առաքինոյն բարուց և զպահպանութիւն աստուածային օրինաց, չկարացին մեղմել ինչ ի խիստ զգուշութեանց և ի գնացից Կուսին: Դուստր Դաւթի, հարսն Յովսեփայ, մայր Մեսիայի, և ապա յանձնեալ սիրելւոյ աշակերտին, յամենայն պղպղեալ պայմանս կենաց իւրոց, կայր ծածկեալ մեկուսի յաշխարհէ, ընդ տեսութեամբ Աստուծոյ միայնոյ. աղօթք միայն և առանձնութիւն թուէին նմա հնարք պահպանելոյ զընդորհն ընկալեալս յԱստուծոյ: Այս առաջին խրատ:

Ապաքէն մոլորութիւն է կարծել՝ թէ աշխարհ և վտանգք նորա լցեն նուաղ երկիւղալի ի փոխել սրտի, և ի չվստահել հոգւոյ ի նոսա: Նախ՝ զի է ի վտանգ արկանել զընդորհս ընկալեալս յԱստուծոյ, որ է յանդգնութիւն՝ պատուհասեալ դոգլես միշտ կորստեամբ բարերարութեանն վտանգելոյ: Երկրորդ՝ զի է ապերախտու-

Թիւն, և նչան արհամարհելոյ զողորմութիւնն Աստուծոյ. զի ապերախտութեան վհետ գայ միշտ տհաճութիւն, և յաճախ ցասումն բարերարին: Կարեմ և յաւելուլ, զի որչափ առաւել ընորհք Հմարիտ գործի սրբեն զհոգի, այնչափ ինասակարագոյնք լինին նմա վտանգք: Ո՛ հաւատացեալ, յորժամ գնայիր դու ընդ արտուղի Հանապարհ վհետ զդայութեանց քոց և ախտից, ոչ այնչափ ազդեին նորա՛ ի քեզ. ընտանութիւն հաճոյիկ բերէր հին զաղգեցութիւն նոցա, սեսանելիր ստէպ զվտանգս՝ առանց մտադրութեան հանգարտ աչօք. տաղտկութիւն լինէր քեզ յատակովութիւն. և եթէ այսպէս օրէն էգէ ասէր, եղեւն ընդդէմ եղեւան լինէրքեզ՛ի պատուար: Այլ արդ զի Հանաչելով քո զպարգեւս Աստուծոյ, խորհիս յամենայնի՝ որ անհաճոյ է նմա, չարաթոյնք և լինին քեզ հաճոյք զդայութեանց. և որչափ խուսես յայնցանէ, այնչափ առաւել յերեսաց նոցա վտանգ է քեզ. որչափ երկնչի սիրտ քո յարել՛ի նոսա, այնչափ առաւել և աղդեն՛ի նա: Թշնամի ահարկու՝ տանի զհիս յաղթութեան անդէն՛ի ձայնատուր լինել մեր նմա յանդգնաբար. Թեթևագոյնք՛ի ինասակարաց, որք հաղիւ զաչս քո ձգեին յիւրեանս, խոցեն զանմեղութիւն քո: Որ ինչ արդեշանի, լինի առաւել սիրելի. հաճոյք՝ յորոց ոք հրաժարէ, առաւել և լինին ախորժելի. մեղք՝ զորոց թողու ոք՛ի բաց զսովորութիւն, առաւել միշտ լինին զգալի սրտի. վտահիս յառաքինութիւն քո, այլ նոյն ինքն առաքինութիւն արկեալ՛ի վտանգ՝ ինասակարագոյն գտանի փորձութիւն հոգւոյ երկիւղածի:

Ցէու արքայ ամենարիշտ սեսանէ անզգայ զգուռոզն Յեզաբէլ, որ շուրջ պատեալ՛ի սլերճանաց և՛ի հեշտութեանց՝ կամի հաճոյ լինել նմա. իսկ Դաւիթ, երկիւղած և արդար, կորուսանէ զանմեղութիւն իւր՛ի սեսիլ և՛ի անզգոյշ: Ի երբեմն զի առաքինութիւն մերձ ևս է յանհնութիւն քան զյոռութիւն. և դու Տէր, Թողուս այսմ

այսպէս լինելոյ, զի որ քոյքդ են՝ գործիցեն զանձանց փրկութիւն փախստեամբ՛ի վտանգաց, անվստահք յանձինս:

Եթէ երկիւղած իցես Աստուծոյ, զոր գեղեցկութիւն գտանես յաշխարհի՝ ուր կեսդ. եթէ կարելիր իսկ երաշխաւորել ակարութեան սրտիդ, և յուսալ՝ զի կարի իսկ հրապուրող վտանգք ոչ կարասցեն պատրել յանպատրաստից զանզգուշութիւն քո կամ զակարութիւն, որք երբեմն յսկան թօթափել տան կորուսանել զարդասիս առաքինութեան ամաց բազմաց, սակայն զինչ գտանիցիր՛ի նմա հաճոյական: Ընդէր պարապիս՛ի անոսիս, ընդ որս հաւատաք քո հեծեն՛ի նեղքս՛ի քեզ: Զինչ լսես դու անդ, բայց ընդդիմաբանութիւնս նորոյ ընտրութեանդ, կամ եղկայուցիչս եռանդեան քո: Զինչ լսեն վասն քո բերկրութիւնք իւր, բայց հարկ հաճելոյ զնա տուժիւք քովք. զինչ կցորդութիւնք իւր պատուաստրք, բայց պատշաճք ծանրատաղտուկք. զինչ ախոմբք իւր առաւել զբօսալիք, բայց սեսարանք տագնապեցուցիչք. և զինչ է քեզ աշխարհ բովանդակ, բայց բռնադատութիւն յարատևակ: Ո՛վ հոգի երկիւղած, դու էջ սուրբն Օգոստինոս, զի գործես դու ապա յաշխարհի, որ ոչ ևս վասն քո է ստեղծեալ. Զի՞նչ ես ընդ հանդերս դիտին, ո՛վ փիլոսոփայ: Քանի՞ հնչք և թշուառ լինիցիր, եթէ տակաւին սիրիցիր զաշխարհ. այլ քանի՞ առաւել ես թշուառ, եթէ առանց սիրելոյ զնա՝ հանապազորդես կեալ՛ի մէջ վտանգաց նորա: Եւ ապա յապականեալ աշխարհէ այսի. լսա զոր ասեմ. արա քեզ այլ կցորդութիւնս, այլ զբօսանս. միացիր՛ի Թիւս սակաւուց արդարոց՝ որք որպէս զքեզ կեան յաշխարհի, այլ ոչ կեան ըստ աշխարհի. ի ժողովն նոցա, ասէ սուրբն Օգոստինոս, գոյեսց զհաւատարմութիւն, զճշմարտութիւն, զանհնդունելութիւն, զուրախութիւն անապակ և խաղաղական, և զաներկիւղութիւն, զորս ոչ երբեք իցէ քեզ գտանել

յաշխարհական ախուեաբս։ Թուղ ապա արիաբար 'ի բաց՝ զոր ոչ ևս օրէն է քեզ սիրել. քաջ լեր հեռի կալ յիրաց, զորս հաւատաք տան քեզ արհամարհել. մի ևս խնայեր 'ի անոսի դատաստանս աշխարհի, զոր ոչ ճանաչէ Տէր, և որ վաղ իսկ 'ի Տեառնէ է դատապարտեալ։ Եւ այս երկրորդ զգուշութիւն, զոր սուրբ Կոյն ընծայէ մեզ յօրինակ։

Միւս այլ խոչ է մեզ, եղբարք իմ, մարդկային դատաստան, զոր դէմ դնէ ընդդէմ ամենայն սուրբ աղաչողութեան ընտրեալ։ Զգամք զի բազում ճգանց պէտք են մեզ՝ առ 'ի հետևել շարժմանց, զորս բարուքիւնն Աստուծոյ աղէ 'ի սիրտս մեր 'ի փրկութիւն. այլ յետս կամք այնու՝ զի աշխարհ ատգանիցէ զմեզ, դատապարտեսցէ և ծաղր արասցէ. արհամարհեմք զնա, այլ երկնչիմք 'ի նմանէ։

Աբդ սուրբ Կոյն գիտելով զի է անհնարին միաբանել զոր ինչ խնդրեն 'ի մէնջ ընտրեալք, ընդ սովորութիւնս և ընդ հպատակութիւնս՝ զորս պահանջէ 'ի մէնջ աշխարհ, և զի ոչ ևս հաւատարիմ կարէ կալ ընդ Աստուծոյ՝ որ ոք մարդկային ախնածութեամբ հնարի մեղմել զպարտս բարեպաշտութեան, ոչ քննէ ամենևին թէ գնացք իւր ՚ի ոչափս դատեցին 'ի մարդկանէ, այլ թէ իցէ՞ն կարևորք 'ի պահպանութիւն ընկալեալ հնորհացն։ Վասն որոյ թէպէտ և 'ի նախատինս էր կուսութիւն առ Հրեայս, և յետին արհամարհութեան արժանի համարէին որք հրաժարէինն 'ի յուսոյ լինել մայր Մեսիային, այլ զի ընդ այն ճանապարհ կամէր Աստուած ածել զինքն, ընդգրկեաց զնոսնարհեցուցչէն զայն պայման կենաց, և առանց զմտաւ ածելոյ զաղերութիւն տումին, զայս ազգականացն՝ զոր 'ի դէրև հանէր ընտրելով զկուսութիւն, և առ ոչ ինչ համարեալ զնօսս աշխարհի որ ախորժէր գտանել ինչ անսովոր 'ի գնացս լաւաց, առ 'ի կարող լինելոյ պարտաւել զբարեպաշտութիւն իւր այլանդակութիւն նմին և վատասրտութիւն, նուիրել հաւատով զկուսութիւն իւր կամացն Աստուծոյ, և զհետ գնալ երկնաւոր ձայնին՝ առանց ուշ ունելոյ մարդկային խորհրդոց։ Չի ոչ յարատևէ 'ի ճանապարհի Տեառն, եղբարք իմ, որ խնայէ յանիրաւ մտահաճութիւնս աշխարհի։

Եւ զինչ՝ սիրելիք իմ ունկնդիր, որ չարժեալ 'ի հնորհացն Աստուծոյ՝ սակայն միտ դնես մարդկային խորհրդոց, և խնայելով վարիս ընդ աշխարհի՝ զոր ոչ ևս սիրես, զինչ չահիս՝ զնոց առնելով 'ի հնորհս մտահաճութեանց նորա զբաղմապատիկ իրօք, զորս խնդրէ 'ի քէն հաւատարմութիւն առ Աստուած։ Եթէ կարծես խուսել այդուիկ 'ի ատգանոց իւրոց, և չահել զնա 'ի նպաստս նորոգութեան վարուցդ, խաբիս. որչափ առաջել տեսցէ զքեզ աշխարհ՝ զի զգուշանաս օրինաց իւրոց, այնչափ ևս առաւել ստգանի զբարեպաշտութիւն քո. որչափ առաւել յարմարիս նմա, այնչափ ևս առաւել տաս պատճառս չարամտութեան նորա և ատգանոց. պատշաճողութիւնք իսկ՝ զորս դժկամակութեամբ ներէ քեզ սիրտ քո առ 'ի հաճոյ լինել նմա, ծաղր կացուցանեն զքեզ առաջի նորա. ոչ անգոնի նա 'ի բարեպաշտս, բայց որ ինչ յիւրոց անտի 'ի նոսա գտանէ. ծաղրէ նա զդեղեակս ընդ ինքն և ընդ առաքինութիւն, ոչ գիտէ լոկ որ յերկոցունցն իցեն. ծիծաղի զնոքօք, որոց թողեալ զինքն և տակաւին խնդրեն հաճոյ լինել իւր. և թէպէտ առեալ զառաքինութիւն, այլ բազում այն է զի ատգանք իւր անկանի 'ի վերայ թերութեանց առաքինութեան, քան 'ի վերայ նորին իսկ առաքինութեան։

Կամ՞ ապա՝ զի և աշխարհ հաւանեսցի ընդ փոփոխումն վարուց քոց, արա զայն անկեղծ և բոլորովին. կամ՝ զի գովեսցէ նա զապաշխարութիւն քո, արա զայն ըստ չափոյ անցելոց անկարգութեանց քոց. մի տեսցէ զքեզ ապաշխարող զդայսաէր, անփոյթ, գաղջ, և կիսովին աշխարհային, յետ տեսանելոյ զքեզ մեղաւոր

կենդանի եռանդուն և անձնատուր յախտս. մի կարաց-
ցէ նա ասել զքէն, զի ի ծայրայեղ ախտաւորութենէ
անցեալ եցես յանաչխատ առաքինութիւն, զի ծուլու-
թիւն ի քեզ զտեղի մոլեգին ախտից կալեալ եցէ, և զի
չիք զարմանալի ի նորոգ վարս քո՝ բայց յայտնի հրա-
ժեշտ յամենայնէ, որ նեղէ զքեզ: Մի երկնչիր յաշխար-
հէ, բայց ցորչափ ինայես ի նա: Սամսոն ցորչափ եկեաց
յայտնի թշնամի վիշտացուց, և հեռի ի քաղաքաց նո-
ցա, համարէր առ նոսա որպէս այր առաքեալ Աստու-
ծոյ, և սահմանեալ ի փառաւորել զիսրայէլ. ընդ մեր-
ձենալ իւր առ աղգն անհաւատս, ընդ կցորդել իւրում
ընդ նոսա, և նմանել բարուց նոցա, եղև ի ծաղր և ի
խաղալիկ հանդիսից նոցա:

Ոչ ներէ աշխարհ առաքինութեան և ոչ ինչ. ոչ
դովէ զլաւսց միաբանել ի սովորութիւնս իւր, պահան-
ջէ ի նոցանէ առաւելագոյն պարկեշտութիւն և զգու-
շութիւն, առաւել եղբայրսիրութիւն և նուաղ չահասի-
րութիւն, առաւել մոռացումն անձին, և հրաժեշտ ի
հաճոյից՝ եթէ եցէ հնար՝ առաւել քան զԱւետարանն,
խիստ էքան զչափ ի կանոնս՝ զորս սահմանէ արդարոց,
և ոչ դոյզն ինչ շնորհէ նոցա ամբարտաւանութենէ. համարի նոցա ի
յանցանս զԹեթրութիւն, դայթակղի ընդ ան-
մեղ ազատութիւնս նոցա. կամի գատապարտել զնոսա
յառանձնութիւն մերկնչեանսն, ի սխորութիւն անմեղ-
թար և յանզգայութիւն բոլորովին օգտի անձանց. կամի՝
զի ոչևս եցեն նոքա մարդիկ առ ի լինել արժանի կալոյ ի
Թիւս արդարոց. և ցայն վայր անիրաւի, մինչև առաւելա-
զանց պահանջել պարտս ի նոցանէ. Թող Թէ անբասիր
առնել զակարութիւն նոցա: Վարդապետ է յայտմա-
սին խստակրօն. փարիսեցիք զանպաճոյճ ձաշ Քրիստոսի
ամբաստանէին յանժուժկալութիւն. Մեղքող պարսա-
ւադէտ ակամբ հայեր ի սուրբ կայսուս ցնծութեան
Դաւթի. աւագանին Երուսաղեմի համարէր Երեմիայի

ի փառասիրութիւն զողբս և զնախատացութիւնս նորա:
Աստուածացուցանէ աշխարհ զամենայն գործս լաւս,
Թուսնաւորէ զամենայն, ներող միշտ անձին, և սաստիկ առ
նոսա. մէկ անգր քան զսահման զպարտս բարեպաշտու-
թեան, կամելով ինն համոզել զանձն՝ Թէ անհնարինք
եցեն այնոքիկ ի կատարումն, որպէս զի արդարացուս-
ցէ զօրինազանցութիւնս իւր:

Միւս այլ պատսպարան առ ի պահպանել զընկա-
լեալ շնորհս՝ եղեւ գոհութիւն սրբոյ Կուսին հանապա-
զորդ. և այս է երրորդն վտանգ, երկիւղալի մեզ ի նորո-
գութեան կենաց, զի ոչ խոստովանիմք զմեծութիւն բարե-
բարութեանն Աստուծոյ, որ զերծոյց զմեզ յանկարգու-
թենէ: Արդ այս թերութիւն շնորհակալեաց յառաջ գայ
նախ ի գաղանել ինն ամբարտաւանութենէ, որ ըստ մա-
սին ընծայէ զվոխոխումն իւր բարի բնաւորութեան իւ-
րում, բնական ուղղութեան և լաւութեան անձին, որ
յանկարգութիւնս իսկ տայր ամաչել մեզ ընդ ախտս,
գներ սահմանս ինչ ախտից ինչ մերոց՝ զորովք յոգւոնք ի
մեղաւորաց վազեն ի բաց, և պատկառելի առներ մեզ ըզ-
պարտս մեր ի ժամանակի իսկ, յորում տեղի տայաք
ախտաւոր հաճոյից մերոց: Արդ սուրբ Կոյսն ծնեալ
այնքանեօք բարեմասնութեամբք, և որպէս Թէ սահեր-
ծեալ յառաքինութիւն, ոչ ինդրէ յանձին պատճառս
ինչ բարեբարութեանցն Աստուծոյ, այլ խոստովանի.
Զի որ ինչ ինձ ընծայեցս հզօրն, յիւրմէ ղեղրմութիւն է: Թուի
նմա դառն ապերախտութիւն՝ ընծայել անձին և դոյզն
ինչ. և ոչ գտանելով ինչ յինքեան բաց ի նուաստու-
թենէ՝ առ ի ձգել յինքն զաչս Աստուծոյ, որչափ հայի
յանձն՝ առաւել և առ ի միտ առնու զմեծութիւն բարե-
բարութեանն Աստուծոյ, և առաւելագոյն պատճառս
շնորհակալեաց գտանէ յանձին:

Հաճոյ է Աստուծոյ՝ զի ծանիցուք զյարդ շնորհացն,
ղոր տայ մեզ. նախանձախնդիր է պարգևաց իւրոց որպէս

փառացն. և ոչ ինչ առաւել խափան է ողորմութեանց նորա, քան խնդրել ՚ի մեզ զպատճառս ողորմելոյ նորա մեզ: Վասն զի ոչ միայն և բնարի բնաւորութիւն զգալոյ զբարերարութիւն՝ պարգև է չնորհաց. աներաւութիւն մեծ է նուաղել զմեծութիւն բարերարութեանն՝ որ փոխէ զսիրտ մեր, և թերի առնել զչնորհատարատ գոհութիւն՝ զոր պարտ է մեզ մատուցանել բարերարին: Ուսո՞ւ է՝ զի բազումք ՚ի մեզաւորաց երջանկագոյն քան զմեզ ծնեալք, և բերեալք ՚ի բնէ առաւել քան զմեզ ՚ի պարկեշտութիւն և յանմեղութիւն, և առաւել շարժեալք յառաքինութենէ և ՚ի սուրբ Հմարատութեանց՝ որ ազդեն ՚ի նոսա, սակայն տակաւին ոչ արիանան ՚ի խզել զկապանս իւրեանց, և ոչ դադարեն ՚ի դառնացուցանելոյ զԱստուած՝ զոր ճանաչեն իսկ, և տակաւին առոյն կոխեն զՀմարատութիւն՝ զոր մեծարեն, և տակաւին անձնասոսր լինին իբր տկամայ ՚ի բերումն յօժարութեանց իւրեանց, և ընդդէմ իսկ ձայնի բնութեան՝ որ Թոյլ կոչել զնոսա ՚ի զգաստութիւն, դնան տակաւին իբր ՚ի քարշ ածեալ զհետ աշխարհի՝ ՚ի հրապոյրս մեղաց: Զինչ ասեմ. ուսո՞ւ է, զի յօժարութիւնքս այսքիկ բարեբաստիկք՝ զորս բերեն յանձինս իւրեանց անդստին ՚ի ծննդենէ, սոքին ևս լինին նոցա պատճառք անզղջութեան, խոստանալով միշտ զգարձ իւրեանց ապագայ, և առաւել զգայունք գոլով բարւոյն քան զայլ մեղաւորս՝ մեռանին անզղջք, այնու զի ոչ էին խստացեալք: Ոչ յաւելում այլ ինչ, եղբարք սիրեցեալք. քննեցէք որ ինչ անցք անցանեն յաշխարհի, և տեսանիցէք զի բնաւորութիւնք քաղցրագոյն, զգայունք և ընդունակք առաքինութեան, և սիրտք փափկագոյնք, առաւել անկեղծք, և աղնուականք, բազում այն է՝ զի նոքին տեղի տան ախտից և ապականութեան: Զինչ ապա եւս դու չնորհաց՝ ՚ի մատուցանել քո նմա զբոյս բարուց բարի և հլու՝ բայց զյօժարութիւն ՚ի հաճոյս, առաւելագոյն

արդելս առաքինութեան: Որչափ ինչ առաւել Թուէր բնութեան չնորհեալ քեզ, այնչափ ևս առաւել հեռի էիր յարքայութենէն Աստուծոյ, և առաւել պարտ է քեզ գոհանալ զբարերար ձեռանէն, որ յեղաչըջեաց քեզ յօճան սրբելոյ զանձն քո զնոյն յօժարութիւնս՝ որ յայլս են որոգայթք անմեղութեան. զգուշ սրբոյ քո ընդ արարածս՝ ՚ի զիջ գորովական առ Աստուած. զզգայութիւնս քո անսուրբս՝ ՚ի սուրբ արտասուս. և եթէ երբէք լեցի քեզ դառնալ հայել ՚ի բարեբաստ բնաւորութիւն քո ընկալեալ ՚ի ծնէ՝ պարտ է քեզ ամաչել առաջի Աստուծոյ, զի ընդդէմ նորին վարեցար նոքօք ընդ երկար, և զընական բարեմասնութիւնս՝ որով առաւելուիր քան զայլս՝ ոչ յայլ ինչ ՚ի կիր արկեր, բայց ՚ի Թշուառ առաւելութիւն ՚ի գիտութիւն չարեաց և ՚ի յայղղութիւն ախտից: Ո՞վ եմ ես ապա, Տէր իմ, որ հետազօտեմ ՚ի սրտի իմում պատճառս ողորմութեան քո. եկեղեցի ոք՝ առաւել ևս զեղծեալ պարգևօք քովք ՚ի մեղս, մեղաւոր ոք՝ որ ՚ի պարգևս քո գտի զաղբիւր աղեխից իմոց. հրեշ լիմ ապերախտութեան, որ կցորդեցի յիս որ ինչ բարեբաստ բնաւորութիւն կարէ տալնպաստս առաքինութեան ընդ ամենայն՝ որ ինչ կամք ապականեալ կարեն ազդել ՚ի ծայրագոյն ախտաւորութիւն:

Երկրորդ պատճառ վերջնանալոյ մերոյ ՚ի չնորհակալեաց, որոց պարտ է գոլ մշտնջենաւոր ՚ի չարժեալսն Աստուծոյ ՚ի զգաստութիւն, է նուաղումն յիշատակի և կամ ՚ի սպառ մոռացումն անցելոյ Թշուառութեանն: Ի սկզբան գարձի մերոյ չիչխեմք իսկ խորհել ՚ի մեզ, զի սոսկումն հոգւոյ մերոյ՝ դեռևս կենդանի ՚ի մեզ՝ տայ հառաչել հաւատոց մերոց. անկարգութիւնք մեր տակաւին յանդիման լինին մեզ սաստիկ. հարկ լինի խոհական և զգեցած խոստովանահօր դրեթէ ծածկել զյոնսիկ յաչաց մերոց առ ՚ի քաջալերել զմեզ յարհաւրաց, և օգնել տկարութեան մերում. և փորձութիւն մեր յայն-

ժամ է միայն ՚ի սաստիկ զգալոյ զաղէտս մեր: Այլ տա-
կաւ ընտանենան մեզ այնոքիկ, կարծեցեալ առաքինու-
թիւնք մեր քողարկեսցեն ՚ի մէնջ զանցեալ մեղս մեր. և
աւուրբք լինչ գործոց ապաշխարութեան, և սուգ լինչ ար-
տասուք, ընկերն ՚ի մտաց մերոց զսոսկումն բովանդակ
կենացս անօրէնութեան: Այսպէս բարերարութեանն՝
որ սրբեաց զմեզ՝ աղօտանայ ՚ի մեզ ճանաչումն, ընդ յի-
շատակի խոհերացն՝ որ ծածկէին զմեզ:

Այսպիսի են, ըստ առաւելագոյն մասին՝ գարձք, և
աստի յառաջ գայ՝ զի սակաւք յոյժ յայնցանէ են տևո-
ղականք: Կամի Աստուած զի ընդ ամենայն կեանս մեր
յիշեսցուք հանապազ զարդ անկշռելի ընծրհացն, որ
փոխեաց զսիրտ մեր. և ոչ ևս ողբմի մեզ՚ի գադարել մե-
ղուս՚ի ճանաչելոյ զողորմութիւն իւր: Դաւիթ յետ
այնչափ սաստիկ ապաշխարութեանց և արտասուալից
աղաղակութեանց՝ տակաւին համարէր զանձն սպա-
նող Ուրիայ և ընացող. մեղք իւր ՚ի բազմոց հետէ քա-
ւեալք, որպէս խուճապք դժնդակք երևութանային
հանապազ առաջի աչաց նորա. ոչ ձաձանչ գահոյից, ոչ
յաջողութիւնք թագաւորութեան նորա, ոչ յաճախու-
թիւն յաղթութեանց, ոչ հաւատարմութիւն իւր յետ
այնորիկ պահպանութեան աստուածային օրինաց, ոչ նա-
խանձ իւր ՚ի մեծվայելչութիւն աստուածայնոց պաշտա-
մանց, և ոչ գովութիւնք մարգարէից, որոց գրեթէ մո-
ռացեալ զթերութիւն նորա՝ զբարեպաշտութիւն ևեթ
նորա յիշէին և զբարեգործութիւնս, որ յայնմհետէ փո-
խարինեալ էին ընդ թերութեանն, ոչ կարացին ընկալ՚ի
մտաց նորա և ՚ի սրտէ զյիշատակ այնորիկ, և ասէր.
Մեղ իմ առաջի իմ են յամենայն ժամ: Եւ յետ զգալեր հանապազ
աբբայն ապաշխարող. Ի յիշել իմում, Տէր, առաջի քո
զբազմութիւն մեղաց իմոց, զշնորհս՝ որով օգնեցեր ինձ,
և ՚ի պղծել իմում զսուրբ օրէնս քո ապերախտու-
թեամբ և գայթակղութեամբ, խառնի սիրտ իմ, զօրու-

թիւն իմ նուաղի, ոչ ևս տեսանեն աչք իմ զշուք և զմե-
ծութիւնն՝ որ շուրջ են զինև. Սիրտ իմ խռովէցաւ յիս, և ե-
ղեղ ինձ զերծութիւն իմ, լոյս ալաց իմոյ և այս ոչ եղեն ընդ իս: Այո՛,
Տէր, ամենայն հաճոյք թագաւորութեան իմոյ ոչ ևս
կարեն սփոփել զտխրութիւն սրտի իմոյ՚ի ցաւոց, զի
զքեզ դառնացուցի. Զօրհնապատ գրգռեմ գնայէ: Ամենայն
փառք թագաւորութեան իմոյ ոչ զօրեն ընդոլ զտեղի կո-
րուսելոց իմոց՚ի յիշել իմում առաջի քո զղջառածանս իմ.
Խռնարհ եղէ մինչև յոյժ, մռնչէի առ հեծութիւնն սրտի իմոյ:
Զինչ ապա ասացս տրիտուր, Տէր իմ, ընդ ամենայնի՝ զոր և
կանխեցեր առնել ընդ իս. ոչ թողեր զիս երբեք՚ի խո-
տորել իմում՚ի քէն, յարուցեր մարգարէս՝ առ՚ի ցու-
ցանել ինձ զսուրբ կամս քո. Եասուր ինձ սիրտ հնազ ձըշ-
մարտութեան, օգնեցեր ինձ միշտ ընդդէմ նեղչաց իմոց.
բազմացուցեր զաղգ իմ, հաստատեցեր՚ի յաթոռն
զաթոռ Յուդայ՚ի տան իմում, արարեր զիս ահաւոր
դրացեաց իմոց, և սիրելի իմում ժողովրդեան: Զինչ
ասացքեզ, Տէր, տրիտուր ընդ ամենայնի. կարասցե՞ն բա-
ւել արտասուք իմ առ՚ի քաւել զմեզս իմ, և գոհանալ
զշնորհացդոց. Զինչ պոյ պրիպուր Տեառն ընդ ամենայնի, զոր
և էպ ինչ: Ըստ այսմ կարաց Դաւիթ յարատևել մինչ՚ի
սպառ, յիշելով միշտ զմեզս իւր, թէպէտ և ապահովեալ
զապաշխարութենէ իւրմէ:

Յետին պատճառք՝ որով տկարանան շնորհակալքն
մեր յետ նախկին գնացից դարձին մերոյ, այն է չխորհել
բաւականապէս, զի Աստուած՚ի փոխել զսիրտ մեր՝ նա-
խամեծար առնէ զմեզ քան զամբաւ բազմութիւն հոգ-
ւոց, նուաղ քան զմեզ մեղաւորաց, զորս թողոյ գետևս
՚ի ճանապարհի կորստեան: Արդ այս ընտրութիւն, զոր
արար Աստուած սրբոյ Կուսին, ոչ՚ի զերծուցանել՝ այլ
առ՚ի կանխել պահել զնա՚ի մեղաց, է հզօրագոյն պատ-
ճառ շնորհակալեաց: Յիշէ նա՝ զի Աստուած թողեալ
զամենայն դատեցաւ Յուդայ, արժան համարի հայել՚ի խո-

Նաբհոնիդեան աղախնոյ խօսքոյ, ընտրել զնիզքն և ընդ պատրդէօք և շնորհօք. այս ընտրութիւն ողորմութեանն Աստուծոյ, և սիրելոյ զնիզքն քան զայլս, էր քաղցր պարապումն մտաց իւրոց, տածէր զՀաւատս Նորա, զարթուցանէր զսէր, և հաստատէր զՀաւատարմութիւն:

Զնիզ ինչ՝ որ առաւել զգացուսցէ զյարդ շնորհաց, հոգւոյ՝ որում Աստուած անախորժ առնէ զաշխարհ, և տայ սոսկումն 'ի գործեցելոցն մեղաց, քան տեսանել զամբաւ բազմութիւն մեղաւորաց յամենայն կարգաց և հասակաց և բնութեանց, և զվեղսակիցս իսկ իւրոց անցելոց զեղծմանցն՝ որք կան դեռևս կուրութեամբ յապականութեան սրտից իւրեանց, և զնիզքն ընտրեալ և զատուցեալ առանձինն նմին բարերարութեամբն Աստուծոյ, մեկնեալ յանկարգութենանց իւրոց, լուսաւորեալ և կոչեցեալ 'ի Ճանաչութիւն Ճշմարտութեան: Ո՛հ, զի յայնժամ հոգին այն շարժեալ 'ի մեծութենէ բարերարութեանն Աստուծոյ, գոչէ. Զինչ գտեր յիս, Տէր իմ, զի արժանի արարեր այսպիսւոյ առանձին շնորհաց և ողորմութեան, զինչ էր յիս առաւել քան 'ի բազում յայնքան հոգիս, զորս Թողեր 'ի կորուստեան առաջի աչաց իմոց յաշխարհի, եթէ ոչ առաւել կարօտութիւն բժշկութեան, և առաւել արգելս շնորհաց. զինչ գտեր յիս արժանի ընտրութեան, առաւել մատնեցեր ես զանձն իմ 'ի յոռութիւնս, երկարագոյնս հակառակ կացի սուրբ աղաչութենանց քոց, կապեալ կայի 'ի չղթայս ծանրագոյնս և առաւել ամենայնից. այսքիկ են արժանիք իմ, Տէր, առաւելութիւն անօրէնութեանց իմոց ձգեաց յիս զբազմազեղ առատութիւն շնորհաց քոց. ընտրեցեր զյոռեգոյնն և զառաւել եղեռնաւոր յարարածս քո՝ առ 'ի ցուցանել առաւելչհրաշ զղօրութիւն բազկի քո և զբանչելիս ողորմութեան քո: Ո՛վ Տէր, քաւիչ մեղաւորաց, տուր ինձ ապա սիրտ ընդունակ սիրոյ քո՝ որչափ շնորհասփարտ գոհութիւն

իմ խնդրէ, և որչափ ծայրագոյն բարութիւն քո է արժանի: Ահաւասիկ, եղբարք իմ, լինչ հաստատեալ է հաւատարմութիւն զգուշութեան, որ կարևոր է առ 'ի պահպանել զընկալեալ շնորհս. իսկ սուրբ Կոյսն 'ի հաւատարմութիւն զգուշութենանցն յաւէտ և զՀաւատարմութիւն յարգելոյ զշնորհս:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Զէ բաւական փրկաւէտ զգուշութեամբ խուսել 'ի վտանգաց, յորոց երկիւղ է 'ի սկզբան քրիստոնէական կենաց. պարտ է և դնալ ընդ Ճանապարհ, յոր կոչէն զմեզ շնորհք, և յառաջ խաղալ անդադար ընդ Ճանապարհն փրկութեան՝ յոր մատանեմք:

Ո՞ր են պատճառք սովորականք վերստին անկման մերոյ. — Նախ այն է՝ չհետեւել ամենայն զօրութեան և ընդարձակութեան շնորհացն, որով դարձոյց զմեզ Տէր 'ի մեղրութենէ. երկրորդ՝ խոտորել 'ի Ճանապարհէ, ընդ որ կամին շնորհք առաջնորդել մեզ. և երրորդ՝ վհատել յընթացս և լքանել 'ի խոչից, զորս դնէն կամ տկարութիւն մեր արկանէ խափան: Արդ սուրբ Կոյսն ընծայէ շնորհաց համաձայնութիւն ըստ կատարելութեան, համաձայնութիւն ըստ պայմանի, և համաձայնութիւն ըստ յարատեւութեան, խրատելով զմեզ ըստ ամենայնի:

Ածացի նախ համաձայնութիւն ըստ կատարելութեան. ըստ այմ սուրբ Կոյսն ուսուցանէ սիրողաց զփրկութիւն իւրեանց, մի վտանգել զանձինս՝ սահման հատանելով շնորհացն Աստուծոյ, որ դարձոյցն զնոսա 'ի մեղրութենէ և յախտաւոր ցանկութենէ աշխարհի: Ոչ ոք 'ի մարդկանէ այնպիսի հրաժարական վարեաց կենցաղ յաշխարհի, այնպիսի մաքուր և այն-

պիսի կատարեալ կեանս, որպէս սրբուհիս այս դուստր Յուդայ։ Ոչ և սուրբ ինչ օտար ղազմման բաժանեաց կամ տկարացոյց ի սրտի նորա զսէր Յիսուսի. սիրեաց զնա առաւել քան զանարատութիւն ա-նուան իւրոյ, զի կասկածանք ևս փեսային ոչ ետուն նմա խոստովանել զձշմարտութիւն, որ սանանէր խո-նարհութեան իւրում. սիրեաց զնա առաւել քան զկոյ-րենիս, գնալով ընդ նման նժդեհ Յեփթայեայ՝ առանց ընդ բանս ինչ ածելոյ. սիրեաց զնա առաւել քան զիւրաս մարդկան, ոչ խնդրելով ի նմանէ որպէս զազ-գականն՝ զի յայտնեացէ նա զանձն աշխարհի. սիրեաց զնա առաւել քան զհանգիստ իւր, ամաչանաւոր ուղե-կցութեամբն ընդ նմա. սիրեաց զնա և առաւել քան զանձն, նուիրելով զնա ի Գողգոթա՝ մայրենի գթոյն աե-զի տուեալ մեծութեան հաւատոցն։ Կոչէին զնա չնորհք ի մորմոքելի բաժանմանէս, յաւաքինութենէն ամենակա-տար, և ի գնացս գերաշխարհիկս. իսկ ինքն չդնէր իւր սահման մինչև յազգ ինչ առաքինութեան չափաւոր և հասարակաց։

Արդ չկայ ինչ չքնաղագիւտ ի զգաստացեալս յան-կարգութենէ քան զայսպիսի համաձայնութիւն ընդ չը-նորհս Աստուծոյ։ Գիտեմ զի իւրաքանչիւր ոմանք սը-կսեալ է չափ ինչ պարգևաց, զի չափ չնորհաց ոչ նոյն է յամենեսին, և զի նուազ պահանջի ի ծառայէ՝ որում նուազ տուեալ իցէ. այլ ասեմ՝ զի դու, ո հաւատացեալ, զորոյ չարժեաց Աստուած զսէրս, չես հաւատարիմ առ չնորհս, եթէ ի հրաժարել քո ի մեղաց՝ սահման դնես նմին, զգալի, ղբօսասէր, և զհասարակաց կենցաղ։

Այս ձշմարտութիւն հաստատեալ է ի չնորհս՝ զոր պարգևէ Աստուած վասն ապաշխարութեան։ Ի բանալ նորա զաչս ձեր, ո հաւատացեալք, առ ի տեսանել զան-հնարին մեղս ձեր, զայ ձեզ տեսանել միանգամայն զընդ-դարձակութիւն պարտուց ձերոց։ Գիտէք դուք զկա-

նոնս հաւատոց, տեսանէք ցո՛ր վայր սուրբ Աւետարանն հաստուցանէ զհրաժարումն յամենայնէ, զատելութիւն աշխարհի, զարհամարհութիւն անձին, զսէր վշտակրու-թեան, զընդդատութիւն զգայութեանց և մտաց. տե-սանէք յառաւելագոյնս ի սովորութեանց հաստատեալս յաշխարհի բազում ինչ, զորս ոչ տեսանեն աշխարհա-սէրք. ի գործս իւրաքանչիւր գիտէք ընտրել զլաւն ըստ Աւաքելոյն, զոր պարտ է առնել ըստ հոգւոյ հաւատոց։ Արդ ասեմ. ըստ ձանաչման ձերոյ գատեցարուք, և գի-տութիւն ձեր լեցի առաջի Աստուծոյ չափ պարտուց ձե-րոց։

Զայս ձշմարտութիւն հաստատեմ և ի զգացմունս, զորս տայ ձեզ Աստուած. յիշեցէք զսկիզբն գարձի ձե-րոյ, յորժամ սկսայք ատել զանկարգութիւնս անցելոց կենացդ. ախորժելի էր ձեզ չայնժամ աղօթել, կալ ա-ռանձինն, ի սուրբ ձգնութիւնս պարապել. հառաչէիք ի սրտէ վասն կցորդութեանց, որ դեռ կապէին զձեզ ընդ աշխարհի. վասն զբօսանաց՝ զորս պարտ էր ձեզ տա-կաւին ներել անձանց, վասն սովորութեանց՝ յորս դեռ սահէին զձեզ պատշաճք. ասէիք անձամբ ցանձինս՝ զի պարտ էր ձեզ մերժել և զնացորդս զայնոսիկ աշխար-հական զբաղմանց, և զի մեզաւորի գատապարտելոյ իբ-րև զձեզ չարտասուս ապաշխարութեան՝ պարտ էր յերեսս համարել զայնպիսի սխալանս։ Զիցէ ձշմարիտ, զի հանգերձ տկարութեամբդ՝ որ ետ ձեզ հանապազորդ-դել չայգոսիկ՝ այս ղգացմունք հաւատոյ չև ևս անդգա-չեալ են ի սիրտս ձեր, և դեռևս կշտամբէք հանապազ զթուլութիւն ձեր և զթերութիւն հաւատարմութեան առ չնորհսն ընկալեալս, և զի վերջանայք տակաւին չայն-մանէ՝ զոր խնդրէ Տէր ի ձեզ, և զի թէպէտ և գովեն այլք զերկիւղածութիւն ձեր՝ այլ ձանաչէք դուք զձեզ առաջի Աստուծոյ, զի հեռի էք անտի՝ ուր կոչեն զձեզ չնորհք. և զի գովութիւնք մարդկան՝ որք համարին ի

ձեզ առաքինութիւնս՝ յորոց զուրկ էք, սաստկագոյն ևս
կացուսցեն զդատապարտութիւն ձեր: Եւ չիցէ ձչմա-
րիտ՝ ըզ ամենայն կեանք ձեր, Թէպէտ և յաչս մարդկան
անմեղ, խայթեն հանապազ ըզխիղճ մտաց ձերոց, և ոչ
տան ձեզ վայելել՝ի խաղաղութիւն անմեղութեան՝ որ
քաղցրագոյն արգասիք են ընորհաց, և զի հրաժարեալ
ևս՝ի մեղաց՝ սակայն զկեալ գտանիք՝ի մխիթարու-
թենէ առաքինութեան:

Արդ կոչումն Աստուծոյ դրեալ է գոգցես յաղմուկս
սրտի ձերոյ. եթէ վարք ձեր այդ, դեռ ըստ մասին աշ-
խարհական, եր այնպիսի՝ որպիսի խնդրէ՝ի ձէնջ Տէր,
եթէ ընորհք ոչ կոչէին զձեզ յառաւելագոյն հրաժա-
րումն յաշխարհէ և՝ի խստագոյն սքնութիւն՝ի վերայ
զգայութեանց ձերոց, վայելեցիք՝ի խաղաղութեան՝ի
ձերումդ պայմանի, և ոչ այլ իմիք ցանկայիք՝ բայց կա-
տարելագոյն կենաց, ընդ նմին և քրիստոնէական արդա-
րութեան, և ոչ զգայիք զանձկութիւնս անհանգիստ
բազմայոյզ աժգոհ և վհատեալ սրտի, որ տենչայ Թռա-
նել ամբառնալ՝ի վեր քան զինքն, և անկանի անդէն՝ի
ստոր տկարութեամբ իւրով: Կարէիք Ճաշակել քանի
քաղցր է լինել Տեառն, և ծառայել նմա. առաքինու-
թիւն ձեր է տխուր և անանդորր, զի գաղջ է և չէ հա-
տատարիմ: Թերևս այլ ոք, կոչեցեալ՝ի խոնարհագոյն
աստիճան ընորհաց և արդարութեան, պահի՝ի տաստիկ
կործանմանէ յանկատարութեան իւրում. բերմունք
իւր ոչ այնչափ եռանդունք, բնաւորութիւն իւր ոչ այն-
պէս ծայրայեղ, սիրտ իւր ոչ այնքան դիւրաշարժ, ոչ
գտանի Թերևս՝ի նոյն վտանգ՝յորս գուգդ կայք: Իսկ
գուք, որ առաւել դիւրագայթգդ էք, և առաւել զգա-
յունք, ոչ կարէք կալ յապահովի՝ բայց հեռի՝ի վտան-
գաց. և պաշտպանեալք ամենայն սպառազինութեամբք
հաւատոյ՝ զգայեցէք տակաւ թուլանալոյ առաքինութեան
ձերոյ, և նուազելոյ՝ի ձեզ զարհուրանաց ախտից. օր-

ըստօրէ յաւելցի տկարութիւն ձեր, տեսիլ իւրաքան-
չիւր և ևս տկարացուսցէ զսիրտ ձեր նորոյզ ազդեցու-
թեամբք, և յաղթութիւնք իսկ՝ զորս տարջիք՝ նուաղե-
ցուսցեն զզօրութիւն ձեր, և այնչափ վտանգաւորա-
գոյնս անկանիցիք, որչափ զի բիւր այլ անտեսաբար
անկմունք կանխեալ էին՝ի սրտի ձերում, յառաջ քան
զայտնի լքումն ձեր՝ որով ծանոյց ձեզ Աստուած զան-
կումն ձեր: Անմարթ է ումեք կալ ընդ երկար հաւատա-
րիմ, ուր արտաքոյ կամացն Աստուծոյ կայ:

Յետ ամենայնի հաստատեմ զսյս Ճշմարտութիւն՝ի
վերայ անցելոց վարուց ձերոց: Կամիք դուք գիտել զնր
սահման պարտ լցեք ձեզ դնել առաքինութեան ձերոյ,
յորմէ ծանիք որ ինչ եղևն չափ և սահման ախտից ձերոց:
Անսխալ է կանոնս. արարիք զնոյն յառաջադիմութիւն
յառաքինութեան, զոր առնիքդ՝ի յոյութեան. հա-
տուցիք Աստուծոյ նոյնչափ, որչափ եաուքն աչխարհի:
Զնոյն եռանդն, զնոյն արբեցութիւն, զնոյն մոռացումն
չահու և փառաց, զնոյն նախանձ՝ի պահպանութիւն
անսուրբ պարտուց, զնոյն պարապումն սրտի հանապա-
զօր՝ի տածել զախտս, և՝ի համարել երջանկութիւն
զանձկութիւնս. զայս ամենայն զորս կրեիք վասն աչ-
խարհի, յանձն առէք վասն Քրիստոսի. տուք սրտի
ձերում սէր սուրբ առ՝ի սիրել զԱստուած՝ որ միայն
արժանին է սիրոյ՝ նովին եռանդեամբ, նովին հաստա-
տութեամբ, նովին նախանձու, զոր ունիցիք վասն մնոյն
արարածոյ: Պարծիցիք, չգիտեմ ընդ որպիսի՞ ինչ գե-
րաչխարհիկ յախտս ձեր ողբալիս, որպէս առաւել ան-
կեղծք, առաւել ազնուականք, առաւել հաւատարիմք և
վեհագոյնք քան զայլս՝ի մարդկանէ. ծառայեցէք Քրիս-
տոսի նովին ազնուականութեամբ, նովին երկիւղիւ, ա-
ռանց խնայութեան, առանց բաժանման, առանց նուաս-
տութեան. մատուրուք նովին վեհանձնութեամբ առ ոտս
սուրբ սեղանոյ, մի՛ ամխոփիցէք զձեզ յառաքինութիւն

տկար և 'ի սովորական, և մի սիրտ նուաստ ածէք առ Բրևատոս, որ ընդհօք իւրովք ամբարձ և աշնուացեալ զայն յերկրաքարշ նուաստութենէ և 'ի վատութենէ:

Այո, եղբարք իմ, ախտք՝ մանաւանդ յանձինս ոչ հասարակածինս՝ են եռանգունք միշտ, երևելիք, և ծայրացեալք. իսկ ապաշաւ՝ տկար և նուաղ և երկչոտ. պահեն զանձինս 'ի մեծամեծ զառանցանաց, ուղղեն զվարս, դառնան 'ի բարեգործութիւն, այլ ոչ փոխարինեն անցեալսն. պաշտպանեն թերևս լաւաց, պատուեն զնոսա ընտանութեամբ իւրեանց, օգնեն նախանձու նոցին, նպաստեն գործոց բարեպաշտութեան. այլ օտար են 'ի նոցանէ ողբք, ճգունք, սուրբ հրաժեշտք, և նուէրք ապաշխարութեան: Բերեն յանձինս զհասարակաց ախտս՝ որոց ոչ կրե ինչ անձնասխրութիւն; այլ է ինչ նոցա փոյթ զառանձնականաց՝ որք միայն նորոգեն զներքին մարդն, և գործեն զճշմարիտ փոփոխումն սրտի: Այսպիսի է գարձ, մանաւանդ մեծամեծաց. լինին նոքա նպաստամատոյց բարեպաշտութեան, այլ ոչ խոտակիրօնք 'ի վերայ անձանց, չեն նոքա ապաշխարողք: Արդ առաջին՝ զոր խնդրէ Աստուած 'ի մեզ, որչափ և մեծ լցէ ըստ աշխարհի, են հեծութիւնք, արտասուք և ճգունք: Դաւիթ ոչ չատացեալ ածել զտապանակն սուրբ յաղթանակաւ յԵրուսաղէմ, մխերել գանձիւք նիւթ և ատաղձ 'ի կառուցումն հոյակապ տաճարի, մեծարել զնաթան և զքահանայապետն Աբիաթար, լայր ևս ընդ մեզս իւր 'ի քուրձ և 'ի մոխիր, յառներ առեպ 'ի քնոյ՝ առ 'ի թանալ զանկողինս իւր արտասուօք, և խոստովան լինել առաջի Աստուծոյ զմեծութիւն ապերախտութեան իւրոյ մեղաւք առ Աստուած, և զնայուած կենացն անցուցանէր 'ի զիջ և 'ի դառնութեան, և ոչ համարէր զանձն վասն արքունական բարձրութեանն աղօտ 'ի կարգաց կարևորաց ապաշխարութեան: Պարտ է վերտակրել՝ առ 'ի ընդ առաջի Աստուծ

ծոյ զվհոխարէն մեղանչականացն հեշտութեանց. և ոչ չկարեն բոցք ախտից ոչ պատուհասեցոյ:

Այսքիկ են կանոնք հաւատոց և արդարութեան, խորհեցարուք 'ի սոսին: Ոչ է բաւական մեկնիլ 'ի Սոդոմայ, և 'ի Հանապարհէ անիրաւութեան. պարտ է և զհետ երթալ ընդհօք ցոր վայր կամիցի առաջնորդել մեզ: Եւ Ղովտ 'ի դատապարտ քաղաքէն, զոր Աստուած մատնեաց 'ի բոց վրէժխնդրութեան իւրոյ. այլ այն սկիզբն ևեթ էր փրկութեան իւրոյ. կամեր հրեշտակն ածել զնա մինչև 'ի կատար լերինն. ոչ իշխէ նա զհետ երթալ, գժուարութիւն ուղղոյն խառնի զկարութիւն նորա. խնդրէ պատապարել 'ի քաղաք ուրեք մերձակայ 'ի կողս լերինն. Ուխ կորեմ վերծանել 'ի լեառն. ահա փաղաքսա այս մեզ է: Կարծէ այսու օրինակաւ զինքն յապահովել, զերծեալ 'ի վտանգէ անտի Սոդոմայ, և յաշխատութենէ վերելոյն. այլ հնարք խուսափելոյ 'ի պարտուց միշտ են վտանգաւոր: Եթող նմա Տէր անկանել յարբեցութիւն, և տալ տեղի ամօթապարտ եղեռան: Զիք մեծ ինչ խոչը ընդ առաքինութիւն յուշացեալ, և ընդ առաքինութիւն մոլորեալ. և որ ոչ 'ի սպառ փախչի յախտից՝ գտանէ զայնոսիկ առ ոտս: Առաջին թերութիւն հաւատարմութեան, որ առնէ 'ի գերև զընդհօս գարձի:

Իսկ երկրորդ՝ առնել իւր ճանապարհ ըստ ունայնութեան կամ ըստ հաճոյից, և չհետևել ընդ որ ընդհօք աստուածայինք կամին առաջնորդել: Արդ սուրբ Կայսն խուսեաց 'ի վտանգէ աստի համաձայնութեամբ ըստ իւրումն պայմանի: Ամբարձեալ 'ի բարձրագոյն աստիճան ընդհօս, և ունելով իրաւունս գնալոյ ընդ անտառոյ ճանապարհ, ոչ եկ 'ի պարզ և 'ի բնական ճանապարհէ իւրոյ պայմանին. զամենայն եռանգն բարեպաշտութեան իւրոյ ժողովեաց 'ի խնամել զորգեակն իւր երկիւղածութեամբ յառանձնութեան 'ի Նազարէթ. 'ի մատու

ցանել Յովսէփայ զՀարկ մեծարանաց և հնազանդու-
թեան, զոր զօդ սուրբ պահանջէր յԻւրմէ. յԼանել
ամի ամի յԵրուսաղէմ առ՝ի կատարել ընդ ժողովրդեան
զՕրսակին, և՝ի պահպանութիւն հասարակաց օրինաց:
Հաւատարմութեամբ զՀետ երթեալ միշտ ընորհաց յա-
մենայն դէպս կենաց իւրոց, ոչ երբեք խորհեցաւ յան-
ձին՝ զի այլ ինն եղանակ կենաց առաւել կարէր օգնել
բարեպաշտութեան. ոչ եգիտ երբեք՝ի հանգամանս,
յորս եդ զնա Աստուած, պատճառս անբասիր առնելոյ
վասն իւր՝ զոր ինչ դատապարտէ Տէր. և Ճանապարհն,
ընդ որ ընորհք ածէին զնա, Թուէր նմա միշտ գիպողա-
գոյն՝ի փրկութիւն: Արդ յայսմ մասին է, ուր գիտա-
ւորութիւնք և սուրբք խօսին, և ուր բարեպաշտու-
թիւն իսկ՝ բազում այն է՝ զի լինի՝ի վտանգաւորագոյն
պատրանս, և գրեթէ չառնու յանձն գնալ առ Աստուած՝
ընդ որ յայտնապէս ձգեն զնա ընորհք: Զամենայն խաչ
համարի Թեթև քան յայնմանէ, զոր աստուածախնամ
տեսչութիւն տայ նմա. համբերել ընդ կորուստ ընչից և
մեծութեանց, այլ ոչ կարէ լռել ընդ չարութիւն թըշ-
նամւոյ՝ որ զաղարտէ զՀամբաւ նորա և զղպարտէ զնա.
իրաւացի Թուէ նմա անդ վրէժխնդրութիւն: Կամք հա-
ւատարիմ ամենայն ուրեք, ուր ոչ զետեղէ զմեզ Աս-
տուած. անդ միայն, ուր կամին ընորհք յարդարել զմեզ
սուրբս, խոստմբ՝ի ձեռաց նախախնամութեան, և՝ի
կարգաւորութենէ նորա:

Յաչխարհի և յարքունիս, ուր պայման կենաց մե-
րոց կոչէ զմեզ, խորհիմք՝ զի հաւատարիմ ևս կարեցեմք
լինել առանձնացեալք և հեռի՝ի վտանգս. և յառան-
ձնութեան՝ ուր է զի պարտիմք կալ, գնեմք՝ի մարի՝ զի
բարեպաշտութիւն միայնիկ նուաղի և Թուլանայ, և զի
կենակցութիւն ընդ լաւս, և նպաստաւ առաքինութեանց
նոցա քաղցրացուցանեն զայն և իրախուսեն: Ի յան-
ձանձն հասարակաց՝ Թուէ գիպողագոյն՝ի փրկու-

թիւն ինքնուրոյն կեանք. իսկ սոսկական կենաց պա-
տրուակ լինի գեղեցիկ Թուէ ապիկարութիւն օգտելոյ, և
համարել անհնար՝ի պատրագրգռութեան զանմեղութիւն:
Որ ընդ լծով ամուսնութեան կան՝ տրտնջին, զի հակա-
կրութիւն՝ գոգցես անբաժանելի՝ի յարատև և՝ի փո-
խադարձ հպատակութենէ, իցէ խափան փրկութեան.
իսկ ազատք՝ի լծոյ անտի համարին՝ զի ամուսնութիւն
հաստատեալ զսիրտ, լինի՝ի սանձ զգայական ախտից:
Ի՞րաքանչիւր ոք զպարտս կարեւորս իւրոյ պայմանին
գիւրաքանչիւր կարծէ յայլոսմ պայմանի. ոչ ոք է հաւա-
տարիմ առ ընորհս իւրոյ պայմանին: Աչէին իսրայէլա-
ցիք յանապատին զՄովսէս և զԱհարոն. Ընդէր հանէք զմեզ
յանապատս յայս, սպանանել զամենայն ժողովուրդս՝ի սովս: Եւ
նոքին դարձեալ, ելեալ յանապատէն, և հասեալ յեր-
կիրն Քանանու, ասէին. Ընդէր հանէք զմեզ յանապա-
տէն. անդ պաշտպանել միայն պարտ էր մեզ՝ի վշտաց
երթևեկին Ճանապարհին, իսկ աստ լիցուք որպէս բազմու-
թեան ազգաց հզօրաց՝ որ շուրջ կան, և ածէք զմեզ
յերկիր հակայից և հրեշից որ կլանեն զմեզ. Ելիր մարդ-
ածին է բնակել իւրոց: Ցանապատին, ուր հմայեբութեան
ևեթ պէտք էին, քաջութիւն և զօրութիւն՝ի պատե-
րազմունս Թուէին գիւրին. իսկ՝ի Պաղեստին, ուր
պարտ էր պատերազմել, քաղցրագոյն Թուէին տառա-
պանք անապատին: Ակնյպէս է, տէր Աստուած. յարա-
տև պատրանօք խորշիմք միշտ յանձանց, և Թերացեալք
՝ի հաւատարմութենէ ուր ձեռն քո կացուցանէ զմեզ,
փոխանակ առաջնակարգ պարտուց՝ որ ծանր Թուին մեզ,
կամիմք նուէրս ցնորականս՝ որ քաղցրանան ախորժակաց
մերոց, և ոչ ծանրանան սրտից մերոց:

Ցայս համաձայնութիւն պայմանի կենաց ընդ չը-
նորհս՝ յարել սուրբ Կոյսն և զյարատևութիւն համա-
ձայնութեան: Նուիրեաց նա առ ամենայն խիստ կար-
գաւորութիւնս Աստուծոյ՝ի վերայ իւր, հաւատարմու-

Թիւն միշտ առաւել եռանդուն, և միշտ առաւել հաստատուն: ԵԹԷ Փրիստոս, դեռևս մանուկ, դոգցես առ՝ի փորձ մայրենի գորովոյ նորա ծածկի՝ի նմանէ՝ի տաճարի, քաջ՝ի բաց յանվոյթ առնելոյ՝ դիմի նա որպէս հարան զհետ սիրելւոյն կորուսելոյ, և հոգի իւր ոչ դադարեն մինչ չև գտեալ զնա: Ի հարսանիսն Կանայ պատասխանի օրգուոյն՝ խնամ յերևման՝ ոչ լքուցանէ զհաւատս նորա. սպասէ նա ընդունել յորդւոյն զամենայն, ՚ի վայրկենի ևս անդ՝ յորում որդին Թուի մերժել զնդիր իւր ասելով Զի՞նչ ի՛մ և ձեր. և հաւատարմութիւն իւր վստահ՝ի կարգս հաստատունս, ոչ դեղեի յայլևայլ գնացս որդւոյն ընդ ինքն:

Բազում այն է զի՝ի սկզբան գործի օգնէ մեղաւորին ախորժ լինն զգալի, որ կցորդ է դոգցես միշտ առաջնոց քայլից նորոգութեան կենաց. ախորժ լինն, որ յաճախ գործ է բնութեան քան ընորհաց, և որ յառաջ գայ՝ի փղձկմանէ սկսը և երիչոտ սրտի՝ քան՝ի լուծեն սիրոյ և զղջման: Այլ՝ի նուազել ընդ հուպ ախորժանացն, ոչ ևս ունելով սրտի յենարան զգալի՝ անկանի զիւրև, տկարանայ, կորուսանէ զարիւթիւն, հայի յետս իւր, և մերձ կայ՝ի կործանումն, և կործանի՛ն իսկ. այսպիսի է Թշուառութիւն առաւելագունից: Բարեպաշտութիւն նոցա ախորժակ լինն է և գորով, և անգիտելի լինն բերումն յարակից նորութեան, որ սիրէ առաւելապէս յեղյեղուկ և յողդողդ հոգւոց. և չէ խնամալիս խնդամոութիւն խորին սուրբ Աշմարտութեան, երկիւղ Աշմարիտ՝ի գատաստանացն Աստուծոյ, սուրբ խորշումն յանձնէ, արիական արհամարհութիւն աշխարհի և հաճոյից, և փոփոխումն սրտի բոլորովին: Այսպէս յառաջ գան տխուր տեսարանք՝ի վիշտ եկեղեցւոյ, և՝ի նախասինս առաքինութեան, զորս տեսանեմք հանապազօր, վասն որոյ և աշխարհ իսկ ծաղրէ զբազումս, որք յետ հրաժարելոյ յիւրմէ՝ դառնան անդրէն՝ի հաճոյս իւր:

Արդ՝ի նուիրել մեր միանգամ զանձինս մեր Աստուծոյ, եղբայրք սիրելիք, պարտ է մեզ յանձն առնուլ տաղտկութիւնս և դառնութիւնս, և համարել զյանոսիկ որպէս մասունս ապաշխարանաց՝ զորս դնէ Տէր՝ի վերայ մեր. հանստաւել զհաւատարմութիւն մեր, ոչ յախորժակս՝ որ անցանեն, այլ՝ի կանոնս սուրբս, ՚ի հաւատս, ՚ի Աշմարտութիւն՝ որ ոչ անցանէ. խելամուտ լինել աստուածային լուսով զի երազ է աշխարհ, զի մեղք միայն Թշուառութիւն են մարդոյ, զի անմեղութիւն է Աշմարիտ երանութիւն՝ի վերայ երկրի, զի բարիք և չարիք կենցաղականք չեն իսկապէս այնպիսիք, զի մեծարանաց անուանք և պատիւք, և միանգամայն ասացեալ՝ որ ինչ եմք յաչս մարդկան՝ կորիցէ ամենայն ընդ մարդկան, և լեցուք յաւիտեան որ ինչ եմք յաչս Աստուծոյ: Ախորժ՝ի բաց անցանէ, այլ Աշմարտութիւն մնայ յաւիտեան: Եւ քաջ իսկ կշռադատեալ, ո՛ հաւատացեալ, աշխարհի՝ յորմէ հրաժարեցերդ՝ էիւն տաղտկութիւնք և դառնութիւնք. հաճոյից իսկ իւրոց էիւն ձանձրութիւնք և տրտմութիւնք. ձանձալարհք ախտաւոր կրից, ուստի եղէրդ՝ի բաց, էին միշտ ծաղկալիցք: Սիրելի եղև քեզ ընդ երկար՝ աշխարհ անիրաւ, տաժանաւոր, ծանրատաղտուկ և գժպհի. իսկ աստ յառաջնում վայրկենի ձանձրութեան՝ լքանիցիս յառաքինութենէ և յանմեղութենէ. մի թէ տաղտկութիւնք առաքինութեան գժոխքս բերիք իցեն քան զդառնութիւնս մեզաց. սոքա Թողուն զհետ իւրեանց՝ի խորս սրտի, էգիտեմ որպիսի ինչ տխուր և գժնդակ, որք զանձն իսկ անբերելի առնեն մեղաւորին. յուղիս դառնութեան հեղհեղն զնիցեմ մեզ տաց նորա, ոչ Թողուն՝ի նմա տեղի սփոփանաց, և լքեալ զնա յինքեան՝ դարձուցանեն՝ի նա զամենայն աղետս իւր:

Ընդ հակառակն տաղտկութիւնք առաքինութեան, որ Թողուն միշտ՝ի խորս խղճի մտաց ծածուկ լինն խա-

ղաղութիւն և անդորրութիւն, են ամեք վաղանցիկք՝ որ գողանան առ վայր մի՝ ի սրտէ ըստէր Աստուած իւր, այլ ոչ չինչուցանեն՝ ի նմա զլոյս հաւատոյ՝ որ փայլէ և՝ ի խաւարի անդ, և մթութիւն զնա լուծանայն՝ ի վիշտս իւր: Տեսէք զայն՝ ի սուրբ գիրս. Յաւուղ տաղտկացեալ յանձնէ և պարտասեալ՝ ի մեղաց հէք և թշուառ ոչ ևս կարէ բերել զբեռն խղճի մտաց իւրոց, դառնայ յամենայն կողմանս, և ոչ իւիք կարէ զմխիթարութիւն հոգւոյ իւրոյ ցածուցանել. քնար հովուի միոյ սփոփէ զտըրտմութիւն նորա, այլ ոչ կարէ բժշկել զնա. կախարդութիւն վհկի կնոջ ցնորեցուցանէն զաչս նորա, այլ ոչ կարէն պատրել զսիրտն. փառք թագաւորութեանն զբօսուցանեն զտաղտկութիւն նորա, այլ ոչ սթափեցուցանեն զնա՝ ի տխուր հոգոյն. խնդրէ պատրել զանձն, և ոչ կարէ. փախչի յիւրմէ, և ամենայն ուրեք գտանէ զինքն. ամենայն ուրեք ածէ ընդ իւր զանձկութիւնս և զտաղտկութիւնս իւր. և ոչ միայն չկարէ ամրել զդառնութիւն սրտի իւրոյ՝ ի մէջ հաճոյից՝ որ շուրջ են զնովաւ, այլ հեղու ևս զդառնութիւնն զայն յամենայն հաճոյս՝ որոց մարթ էր քաղցրացուցանել զայն: Իսկ Դաւիթ յանձկութիւնս, զորս երբեմն տայ Աստուած որդւոց, ասէր առ Աստուած. Ե՞րբ եցէ, Տէր, զի հեղուցուս՝ ի սիրտ իմ զանձառ մխիթարութիւնս քո, որ տան սիրոյդ զքեզ ճաշակել. քանի՛ քաղցր ես, և քանի՛ երանելի են այնոքիկ՝ որ քոյդ են. Աւաղ՝ ԵՐԲ ՓԻՒՈՒՇԵՑԷ ԶԻՍ: Ո՛հ, եթէ օրինիք քո սուրբք ոչ զօրացուցանէին զիս յանձկութիւնս իմ և՝ ի վիշտս, չկարէի պաշտպանել ինձ. ակարութիւն իմ յաղթէր մեծութեան բարեբարութեանց և ճշմարտութեան խոստմանց քոց, և հաւատարմութեան՝ զոր բազում անգամ ուխտեցի քեզ. ԵՒՆԷ ՈՒ ՕՐԷՆՔ ԴՈ ՍՈՒՐԲՔ ԻՄ ԷԻՆ, ԱՆԽԱՍ ԱՒ ԱՐԴԵ�օՔ ԿՈՐՈՒՍՒԱԼ ԷԻ՝ Ի ԽՈՒՈՐՀՈՒՐԴԵԱՆ ԻՄՄԱՄ: Մին Թողեալ յԱստուծոյ, և լքեալ յանձնէ, ոչ գտանէ սփոփումն՝ ի խիղճ մտաց իւրոյ.

միւսն փորձեալ յԱստուծոյ, այլ բերելով զնա՝ ի խորս սրտին ծածկեալ, բերէ ընդ նմա մխիթարութիւն ամենայն վշտաց իւրոց: Եւ զի՞ երկարեմ. մեղաւորն կորուսանէ զամենայն կորստեամբ ախորժակացն հաճոյից. արդարն ոչ կորուսանէ և ոչ ինչ՝ կորստեամբ զգալի մխիթարութեանց առաքինութեան, զի անկորուստ ունի զառաքինութիւն: Աստուած իմ, քանի՛ գիւրին է սփոփել սրտի՝ ի ժառանգելն զքեզ. դառնութիւնք իսկ առաքինութեան քանի՛ ի վեր են քան զամենայն անուտի բերկրութիւնս մեղաց. խստութիւնք իսկ, որովք փորձես զհաւատարմութիւն քոյոցդ, քանի՛ արադ փրխալինին մխիթարութեամբք՝ զորս ոչ ճանաչէ աշխարհ, և չկարէ տալ: Զայսոսիկ ընծայէ մեզ խրատս այսօր սուրբ Կոյսն. եցէ և մեք ըստ օրինակի նորին հաւատարիմք առ Տէր հաստատել, արժանի լեցուք վայելել՝ ի լուութիւն նոցին յերկնային խորանս. եղիցի եղիցի:

ՄԱՍԻԼԻՈՆԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՓԼԵՐՄՈՆԻ

ՅԱՅՏԵԼՈՒԹԻԻՆ ԿՈՒՍԻՆ

Յարուցեալ Մարիամ յաւուրն
յայնոսիկ գնաց ի լեռնակողմն
փութապէս ի քաղաքն Յուդայ։

Ղուկ. Ա. 39։

Զարմանք են, եղբարք սիրելիք, ասէ սուրբն Ամ
բրոսիոս, զի օրիորդ երկնոտ և ակար, անեալ ի խաղա
ղութեան և ի պատկառանս մեհուսի յաշխարհէ, և որ
յառաջ քան զսակաւ մի խռովիլը յերեսաց իսկ հրեշ
տակի, երևի այսօր յայտնապէս ի տեսիլ մարդկան,
առ ոչ ինչ համարեալ զաղմուկ և զվտանգ երկայն և
տաժանաւոր ուղեգնացութեանն։

Թերևս Թերահաւատեալ ընդ բանս հրեշտակին,
կամէր երաշխաւոր մայրութեան իւրոյ զսքանչելիս բեղ
նաւորութեանն պատասխան եղեսաբեթի. Թերևս առ
երկմտութեան գայր յայտնել եղեսաբեթի զգաղտնիս
հրեշտակութեանն առ ի գիտել՝ թէ պարտ էցէ հաւա
տալ այնմ. Թերևս նորահրաշ փառաբն փառաւորեալ
և շարժեալ ի ներքուստ յուսոյն բերկրանաց՝ փութայր
պատմել աղգականին իւրում զաւետաւորն լուր։ Ո՛հ,
աղաղակէ նոյն ինքն սուրբ Հայրն, ամենայն ինչ աստ

զկոնարհումեւթիւն կուսին յայտ առնէ. խելամուտ լեալ՝ զի կամք էին ամենակալին առնել մեծամեծս, դիտելով՝ զի չէր նմա գժուարագոյն կացուցեալ զբեղնաւորումեւթիւն ընդ կուսութեան քան ընդ նախատինս ամլութեան, և ’ի միտ առեալ՝ զի երբ Սառայի և Աննայի էին նախերգանք առաջնակայիցն լրոց՝ զորս տեսանէր, լքանէ ’ի խորս ոչնչութեան իւրոյ՝ որչափ Աստուած մատչէր առնա, առ ’ի բարձրացուցանել զնա: Մայր Փրկչին Սիոնի, զոր գարբ գարուց խոստացեալ էին, յոգունք յարդարոց աւետաւորեալ, և մարգարէք և թագաւորք բազմաց ցանկացեալ էին տեսանել զնա, երթայ մատուցանել Եղիսաբեթի զպարտս՝ զոր որդի իւր մատուցանելոց էր յաւուր միում Մկրտչին, և պարտ անձին համարի որպէս զորդի իւր՝ ընուզ զարդարութեան. Զի այսպէս վայել է մեզ ընուզ զամենայն արդարութիւն:

Ոչ պատշաճք ինչ, յաւելու նոյն սուրբ վարդապետ, որոց այնքան նախանձաւորք են բնութենականիցք իւր, և յառաքինութիւն համարին զայնս, ոչ գժուարութիւն ճանապարհին, և ոչ երկայնութիւն ուղևորութեան, ոչ խռովին զվափկութիւն նորա. արհամարհեալ զամենայն արգելս՝ զորս անձնասիրութիւն կուտակէ միշտ և ստուարացուցանէ ճարտարանօք և չարթէ, տայ զանձն ’ի բերումն աստուածաղդեցիկ, և առանց ընդ բանս ինչ ածելոյ հեռաւի ազդեցութեան Աստուածորդւոյն՝ զոր կրէրն յարգանդի: Ու պոպոռանք ֆոռնիեանն ’ի մարգիանէ, ու գժռուարութիւն լերինն ’ի ճգանդ, և ու երկայնութիւն ուղւոյն ’ի պոպռճիչ կռեցոցին վկայեն:

Ներեցէք ինձ, եղբարք, վկայ առնուլ յերեսին յայսոսիկ տեսութիւնս. ոչ ’ի խորս խորհրդոյս ինձանէմ, զի կարևորագոյն է մեզ աստ յորդորումն սրտի քան զնկեզամտութիւն: Աքանչելիքս այսոքիկ՝ յորս հաստատին կրօնք՝ քաջալերեն արդարև զմիտս, և գոգոյես համախոհ ընդ հաւատս կացուցանեն զոյս բանին, այլ թո-

զուն յաճախ անչարժ զսիրտ: Են նշոյլք՝ որք զբաթացուցանեն վայրիկ մի զմիտս, այլ ոչ վառեն զսիրտ: Ընկալցուք ապա զամենայն հանդամանս խորհրդոյս ’ի չնութենէն վարուց մերոց:

Ո՞ր են արգելքն, զորս անձնասիրութիւն արկանէ դրեթէ միշտ ընդդէմ չնորհաց: — Նախ՝ մնոտի իմն պատշաճութիւն, որ տայ մեզ խնայութեամբ վարել ընդ աչխարհի, և չներէ մեզ յայտնել համարձակաձայն զի Քրիստոսի եմք: Երկրորդ՝ դժուարութիւն առաքինութեան, որ խռովէ զմեզ: Եւ երրորդ՝ տևողութիւն, որ թուլացուցանէ զեռանդն մեր, և համոզէ զմեզ՝ որպէս թէ մարթ իցէ քաղցրացուցանել զայն, խնդրելով ուղեւորութիւն և դիւրին ’ինպատա տկարութեան մերոյ: Արդ սուրբ Կոյս ուղւոյ լինելով միայնակ՝ յամօթ առնէ զմեզ ըստ բաղում մասանց պատշաճից, որ ոչ ներքին մեզ հետևել երկնաւոր կոչման. այս առաջին տեսութիւն: Սուրբ Կոյս մատուցահասակ՝ փափուկ բնութեամբն ուղևորելով ընդ լերինս և ընդ դժուարագնաց ուղի առ Եղիսաբեթ՝ դատապարտէ զվատութիւն մեր, որ ’ի դժուարութենէ առաքինութեան ահաբեկեալ՝ կայ մնայ յախտաւորութեան. այս երկրորդ տեսութիւն: Սուրբ Կոյս փութալով ընդ երկայնութիւն ուղւոյն՝ խրատէ զմեզ, մի ստերիւր խնդրել ուղի, և մի գանգատանօք և խնայելով կասել ամաքել զխստութիւն աւետարանական ճանապարհին. և այս երրորդ տեսութիւն: Ահա առաջարկութիւն բովանդակ ճառիս. խնդրեսցուք ’ի սրբոյ Հոգւոյն լոյս՝ բարեխօսութեամբ սրբուհւոյ Կուսին: Ողջոյն ձեզ Մարիամ:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Յամենայն մոլորութեանց, որ տիրեն արդ յաշխարհի, չիցէ արդեօք նուազ ապականարար այն՝ որ ի փառս համարի զանաստ, և յամենի զառաքինութիւն: Գիտեմ, եղբարք իմ, և չէն ինձ կամք ստուարացուցանել զանօրէնութիւն աշխարհի քան զոր էն. անօրէնութիւն, հանդերձ ամենայն ապականութեամբ մարդկէղէն սրտի, չէ ևս եգիտ ի մեզ յայտնի պաշտպանութիւն, և չիցեն իսկ դոգցես անձինք այնպիսի յուսահատք, որք պարծանս անձանց համարիցին զամենի իրեանց ըստ առաքելական բանին, և պատիւ իւրեանց զնախատինս. մեզք ձգեն զհետ իւրեանց վատութիւն իմն, զոր գիւրին է ծածկել յաչաց հասարակաց. և չգիտեմ որպիսի ինչ հետք ուղղութեան աշխարհի իսկ՝ չհարկ հրաժարել ի դատապարտելոյ բարձրաձայն, զոր ապականութիւն իւր տայ նմա լռելեայն հաստատութիւն:

Այլ են ախտք նուազ ատելիք, անկարգութիւնք երջանկագոյնք, և մեղք՝ եթէ օրէն իցէ ասել՝ ոչ այնպէս անգեղեցիք, որք Թուխն նախագրութիւն իմն ընդդէմ Աւետարանին ստացեալ, զորս դասակարգէ աշխարհ ի Թիւս առաքինութեանց, և որք ոչ անդէն և անդ ընծայեն աչաց զամին սխրութիւն. բերեն յինքեանս զամենայն յոռութիւն ախտից, առանց աղդելոյ զամենի նոցին և զսոսկումն: Այլ ասաղ, զի յանիրաւի կարծին առաքինութիւն՝ որք իսկապէս յոռութիւնքն են, յառաջ եկեալք յանկնածութեանց ընդդէմ քրիստոնէական կրօնից, և ի մեզապարտ ամենի խոստովանելոյ զմեզ քրիստոնեայս: Ասի յառաջ գայ, զի և բազում ինչ ընդդէմ

գաղտ բողոքոյ խղճի մտաց գործեմք, և զբաղում իւիք զանց առնեմք՝ զորոց զգամք ի սրտի զկարևորութիւն. և զայս ամենայն վասն չգծգծնեցուցանելոյ զաչխարհ:

Այլ ասեն. Ո՞րպէս կարիցեմք չյարմարել սովորութեանց, որ զօրացեալ են. որպէս գեր ի վերոյ կալ բազմութեան, որ չխղճէ ինչ ընդ այնս. քաջայայտ է՝ զի աչխարհ ոչ պարսաւէ զայնոսիկ, և իցէ նոյնպէս յայտնի՝ զի Աւետարանն գատապարտ առնիցէ զայնս. պարտ իցէ մեզ դատապարտել զաչխարհ առ հասարակ մերովս առանձնաւորութեամբ: Վասն այսորիկ է՝ զի բարեպաշտութիւն երիչոտ և ահաբեկ խնդրէ զնաւար, և կամ ստիպի յարմարել աչխարհասիրաց, այլակերպել որպէս զՊաւղոս յարքունեաս Անքուսայ, և չիշխէ գոգցես երևել որ ինչ է. իսկ յոռութիւն ծաւիաձայն գովութեամբ նազի աներկիւղ: Զէր բաւական, ասաղ, զի տկարութիւն սրտի պաժանաւոր և դժպհի կացուցանէր զառաքինութիւն, պարտ էր և չարամտութեան յաւելուլ յայն զամենի և զարհամարհանս:

Նկատեացուք արդ ի գնացս Կուսին՝ որ ինչ ի մասինս յայսմիկ յամենի առնէ զաչխարհ: Էր աղագաւ մեկնի նա ի Նազարեթ:— Չբնչտակ երկնառաք աղդառնէ նմա՝ զի Եղիսաբեթ, Թէպէտ և ամուլ, յղի էր ի ծերութեան իւրում. և նմին իսկ Կուսին՝ զորութիւն Բարձրելոյն հովանացեալ, իջանէր խոստացեալն ի բազմայոլով դարուց Իմմանուէլ յարգանդ նորին, լինել լոյս հեթանոսաց և փառք Իսրայելի: Այլ այս պատգամ, այսպէս վերափառ, այսպէս նորահրաչ, զանխոով էր ի ժողովրդենէ. մանրեմ էր Կուսին համարել՝ զի հաւատարիմ լինէին բանք իւր. չէր պարտ նմա ապատել մանաւանդ անմիտ զրուցաց և ծաղրս պանծացելոց ի խելս իւրեանց: Դարձեալ՝ զի սուրբ Կոյն յարենէ արքայից Յուդայ էր սերեալ, և աստուածամայրութեամբ պայծառացեալ, անպատչաճ էր նմա, և նուաստութիւն

ին պայմանի նորա՝ խոնարհել գնալ մատուցանել սպաս ստորնագունին յոյժ իւրումն աղգականի։ Եւ դարձեալ՝ զի օրինաց ամենախածուածութեան ոչ պատշաճեին դէպք և պիտոյք երկայն ուղևորութեան։ Այսպէս զեղծանին միտք խօթացեալք, ճարտարամիտք՝ ի պատրել զանձինս. և հոգիք տկարք՝ որոց ոչ պակասեն հաւատք, յուսան և ցանկան հասանել՝ ի սուրբ Լերինս ցեղին Յուդայ, այլ ոչ ընդ ճանապարհ՝ որ ածէ կարասցէ զնոսա անդր։ Քանի՛ ինչ ոչ պատճառեն յապշութիւն իւրեանց, և անձնասիրութիւն քանի՛ պատճառանս ոչ հնարի յամփոփումն պարտուց իւրոց։

Հեծէ աւաղն ընդ աղմուկս, որ շուրջ կան զնովաւ. և անձնատուր՝ ի խնամս գոյից, ՝ի պարտս պաշտամանն, ՝ի պատշաճս իւրոյ պայմանին, գնէ զայսոսիկ անզօր պատճառս ընդդէմ երկնաւորը ճայնին՝ որ կոչէ զնա, կալեկից տկարութեան իւրում կամի զԱստուած. և համարի՝ զի հպատակութիւն օրինաց՝ զորս հնարին հաճոյք կամ ունայնասիրութիւն մարդկան, իցէ առաջի Աստուծոյ պատճառ օրինաւոր՝ լինելոյ ազատ յօրինաց Աստուածոյ պատճառանին։ Ոչ կարեմ, ասէ տիկին հաւատացեալ, բերել զկերպարանս առանձնաւորի, և դատապարտել զնա՝ ի միայնութիւն մշտնջենաւորս. ցանկալի է ինձ՝ զի տուղբութիւն ընկալցի կենցաղ իմն նահատակի և հրաժարական հաւատարակաց իմոմն պայմանի, և աշխարհ մի յօրինս կարգեսցէ զաղմուկս ինչ կենցաղական, զորովք մարթ է ինձ առանց բազում դժուարութեան զանց առնել. այլ ընդդէմ իցէ ինձ ծաղր կացուցանել զնս առանձնաւորութեամբք, և օտարացուցիչս իմն բերել յանձին վան բարեպաշտութեան։

Սակայն յահագին աւուր վրէժխնդրութեան քո, Տէր, ոչ ըստ նմին Աւետարանի զաւաղն և զամիկ դատեսցես։ Պատշաճութիւն իմն հեղձուցանէ՝ ի սիրտս ամենեցուն զերմանս չնորհաց՝ արիւնալս՝ ի քէն. օրէնք

աշխարհիս, Աւետարանն այն աշխարհասիրաց, կարասցէն կալ առաջի հաստարակաց օրինաց Աւետարանին քո։ Եթէ արդարութիւն քո կարէր ներել ամբիծոյ ինչ յօրինս, զորոյ լուսն մինչև ցնշանախեց մի՝ ցուցեր յաւաջադոյն, ներէր երբէք՝ ի չնորհս աւագաց աշխարհիս՝ որք և զդոյզն ինչ մեռեալութիւն ախտից զլացան քեզ, և ոչ ինչ՝ ի հաճոյից իւրեանց թողլն՝ ի բաց, քան՝ ի չնորհս թշուառաց՝ որք ըստ գաղտնի անտեսութեան նախախնամութեան քո կեցեալ ասա՝ ի քաղց և՝ ի ծարաւ, և՝ ի բազմապատիկ տառապանս ընդ ծանրաբեռն լծով ոչ կարացին՝ ի սպառ համբերութեամբ ստանալ զոգիս իւրեանց։

Որպիսի՛ կուրութիւն է՝ զոր յանձին բերեմք, եղբարք իմ. չկամիմք երևել երկիւղած և անսովոր. այլ եթէ ամբոխ բազմութեան գնայ ընդ լայն ճանապարհ, կարիցե՞մ հետևել ընդ ուղին աւետարանական առանց երևելոյ նշանաւոր։ Ուրեմն նոյն, յորժամ ջրհեղեղն հանդերձեր ծածկել զերեսս ամենայն երկրի, չէր պարտ լինել զտապանն՝ առ՝ ի փրկիլ ընտանեօքն. ուրեմն պարտ էր Ղովտայ կալ խաղաղութեամբ՝ ի զնին Սոդոմայ հրդեհելոյ, առ՝ ի չերևել առանձնաւոր։ Ոչ ապաքէն արդարք առհասարակ օտարք միշտ՝ ի հասարակաց մարդկանէ համարեցան. Տեսիլ եղեւ, ասէր սուրբ Աւաքեանն, հրէշտակաց և մարդկան։ Վարք հասարակաց չեն քրիստոնէականք, և այժմէն գտանին գտատպարտեալ՝ որք ընդ բազմութեան կամին փրկիլ. զի բազմութիւնն ոչ ճանաչէ այլ ճանապարհ. գնայ ընդ լայնն և ընդարձակ, որ տանի՝ ի կորուստ. և եթէ իցէք անկեղծք, ոչ տեսանէք և դուք զպատրանս մարդկան։ Եւ զինչ. կայցեն միշտ պատճառք մեզանչելոյ և հետևելոյ աշխարհի՝ զոր պարտ է մեզ ատել և անիծանել որպէս ոխերմադոյն ոսոխ մեր, և Քրիստոսի երբէք պատճառք գտանելոյ առ ամենաբարին Աստուած, առ գթածն և բարերար,

և ծառայելոյ նմա, մինչդեռ ամենայն ինչ աղաղակէ ՚ի լուր մեր՝ զի ստեղծեալ եմք ՚ի նմանէ և վասն նորա պարտիմք կեալ: ՊաՓրա ևցէ իւրաքանչիւր հասակի և պայմանի սահմանել օրէնս և պատշաճս իւր հակառակս Աւետարանին: Ոմն պատճառէ զպատանեկութիւն, այլ ոք զպակաղ և զնուաղեալ զօրութիւն. որք ՚ի յաջողութեան կեան առնուն ՚ի պատճառ զղջալոյն և զհոգս մեծութեանց. յորոց վերայ ձեռն Տեառն ծանրանայ, պատաղեալք յաղէտս իւրեանց քան ՚ի խոստովանութիւն մեզայ՝ որք աղետիցն են պատճառք, թողուն զդարձ իւրեանց այլեւս պատեհ և անդորրագոյն ժամանակի: Որք քաջառողջքն են, բիւր հոգս յաճախեն անձանց, պարապեն պատշաճից և զբաղմանց կարգի իւրեանց և պայմանի. իսկ որք հիւանդքն ևցեն խափանեալք ՚ի կցորդութենէ աշխարհի, հոգս և հայթայթանս յառողջութիւն ևեթ իւրեանց բերեն յանձինս, և ասեն. Գործ յաւիտենական փրկութեան պահանջէ մտադրութիւն յոյժ, որ չէ կարելի ՚ի հիւանդութեան. խորք խզձի մտաց, յորս պարտ է իջանել, խնդրեն պարապ և անդորր, և զայրանան ախտք մտածութեամբ փոխանակ սփոփելոյ:

Այսպէս անցանեն զմեօք վայրկեանք ընտրհաց, այսպէս մերժեմք ՚ի մէջ զձեռնն փրկարար՝ որ բաղխէ զդուռն սրտից մերոց, մինչդեռ եմք ճարտարամիտք ըստ աշխարհի առ ՚ի չկորուսանել զպատեհութիւնս՝ որ ընծայեն մեզ յոյս ճախողութեան և աւագութեան: Վայրկեանք են մեծամեծաց, զորս գործ է գիտել ասեն՝ առ ՚ի չկորուսանել զդէպ բարեպատեհ. այլ ողորմութեան Աստուծոյ չկայ դէպ ժամանակ: Եւ զի՞նչ, մի թէ Աստուած յամենայն ժամու պատրաստ կայցէ վասն մեր ՚ի բաշխել զընտրհս իւր ըստ հաճոյս մեր. և ոչ տաղտկացեալ ՚ի յապաղել մեր և յարհամարհել զընտրհս իւր, զորս մերժեմք ՚ի կամս նորա սահեալ տալ մեզ: Աւա՛ղ, խոս-

տովան լինցուք յամենի մեր, Զի որչի աշխարհիս այսորիկ խոտոր-նոգոյն են ևան զորչիս լսեայ. ոչ խոտսափիմ ինչ ՚ի նոցանէ. տեսչ նոցա եռանդուն է և գործօն. իսկ մեք կորուսանեմք զպատեհ, զի տկար է և նուաղ եռանդն ՚ի մեզ:

Քանիցս անգամ, Տէր իմ, ազդեցեր ինձ, փութացուցեր զիս, ստիպեցեր մտանել ՚ի ճանապարհս արդարութեան քո, և ելանել ՚ի ճանապարհէ անիրաւութեան. փոխանակ արձակելոյ յիս չանթիս, ձգեցեր զձեռն քո յօդնականութիւն, յորժամ ախտք իմ կշտաւելնդք հանդարտեալք՝ թողուին զմիտս իմ ազատ ՚ի խորհել և իմանալ զվտանգ ահագին հետևանաց կենաց իմոց: Ո՛հ, զի և սիրտ անգութ չարժէր ՚ի գործով, եթէ ՚ի ձգել նորա սուր ՚ի կողս մեր՝ խնամ ունէաք կենաց իւրոց. իսկ հոգի իմ, միշտ ապստամբ ՚ի քէն և միշտ խնամեալ, ժուժկալեաց ցարդ ընդդէմ գործոյնաց քոց: Այլ յետ գալոյ քո զկնի իմ՝ ՚ի խնդիր, և իմ խուսելոյ միշտ ՚ի քէն, երկայնամտեսցես տակաւին, Տէր իմ, կալ առ գրան սրտի իմոյ՝ առ ՚ի գտանել պարապ մտանելոյ անդր. քեզ պարտ ևցէ, Թէ ևնձ փոյթ գարձի իմոյ. զընտրհս՝ զոր պատրաստեալ էիր ևնձ, և ես մերժեցի, կարիցեմ ընդունել արդ ըստ հաճոյս իմ. ոչ աղէ արարեր ևնձ, զի գայցէ ժամանակ՝ յորում խնդրեցից զքեզ, և ոչ ևս գտից, և զի մահ աղետալի վախճան արասցէ մեզայ իմոց, և սկսցի ևնձ յայնժամ պատուհաս յաւիտենական:

Արդ ևկ ասա ևնձ քաջահմուտդ պատշաճից, յորժամ անօրինութեամբք քովք էիր ՚ի գայթակղութիւն հասարակաց, էր բաւական ՚ի սանձահարել զքեզ զօրութիւն պատշաճից: Ցորժամ մոռացեալ զպատիւ քո, պաշտօնեայդ Քրիստոսի, յինջանել ՚ի սուրբ սեղանոյն՝ ՚ի տեսիլ ամենեցուն լուծանէիր զօրէնս, որոց պարտ էր քեզ լինել աւանդապահ և պաշտպան, զոյգք նոցա խափանէին զքեզ յիմքէ ՚ի հաճոյիցդ: Յորժամ կե-

նակցուԹիւնք համարձակք և գնացք անպարկեշտք կայուցանէին զքեզ, կին դու, յառակ դրացեաց և 'ի նախատինս ընտանեաց, յորժամ բարեկամք և մերձաւորք ազդ առնէին քեզ մտերմաբար և սրտառուչ բանիւք, յորժամ այր քո իրաւացի զայրացմամբ մունչէր, յորժամ յայտնապէս չուք տանն մԹագնէր, ուղղէիր զզառանցանս քո ըստ դժպհի և խիստ օրինացդ պատչաճուԹեան: Ա՛հաղ, կիւրք մոլեգինք անզգայ առնէին զքեզ յայնժամ ամենայնի: Վասն քո միայն, Տէր, երկչոտք եմք և զգուշաւորք. 'ի ծառայուԹիւն քո ևԹե չեմք հարձակք, անդ միայն չափով և կշռով վարիմք, ըստուերք իսկ անոանք Թուին մեզ յայնժամ Թանձուն և ստուարք, և երկնչիմք յերեսաց ցնորից:

Ա՛հաղ, զդամ'ի մասինս յայսմիկ զամենայն անիրաւուԹիւն գնացից եմոց. 'ի Թշնամանէն զքեզ՝ բարձր 'ի դլուխ գնայր, պանծալի յանօրէնուԹիւնս իմ, և ոչ ծածկէի զմեղս: Աներկիւն ընդ պատիս իմ ընդ բախտ ընդ խնդ մտաց և ընդ բարեկամուԹիւն, փոխանակէի ընդ կրից զանմեղուԹիւն, զբարեկամուԹիւն, զհամբաւ, զդոյս, զբարեկամս և զառողջուԹիւն. իսկ առ 'ի դառնալ առ քեզ, և անցանել 'ի խաւարէ 'ի լոյս, ո՛հ, զօրուԹիւն իմ լքանի, առ նախկին խոչ ընդ ոտն ամենայն խորհուրդք դարձի ընդ օգս ցնդին, Թուի ինձ ընկըճմել ընդ Պետրոսի՝ 'ի լինել իսկ քո ինձ ձեռնտու: Ա՛հաղ, զի սէր քո ոչ տիրէ 'ի սրտի իմում, որպէս տիրէին յայնժամ ախտք: Ի հաստատել սուրբ սիրոյդ ըզաէրուԹիւն իւր 'ի սրտի, ոչ ևս գժուարուԹիւն ինչ լքուցանէ զնա. վիշտք իսկ Թուին փափկուԹիւնք, և սրբուԹեամբ զմայլեալ 'ի գեղ աստուածային ընդոյհայ, փոխանակ ստուարացուցանելոյ յայս իւր զարգեալ՝ ծածկէ զնոսա սիրտ Ճարտարանաք: Ա՛յսպիսի է օրինակն, զոր տայ մեզ այսօր Կայն սուրբ. անոանի պատՃառանք մարմնոյ և արեան ոչ խափանեն զնա, յորոշել գնալ. գժուարուԹիւն իսկ Ճանապարհին, լերինք իսկ անմատոյցք ոչ խոչընդոտեն զՀաւատս նորա, 'ի խրատ այնոցիկ՝ զորս գժուարուԹիւն փրկուԹեան խափանէ 'ի մտանելոյ յաւետարանականն Ճանապարհ, և այս երկոցուն տեսուԹիւն:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊղորուԹիւնք երկու հակառակք իրերաց, այլ հաւասարապէս վտանգաւորք, տիրեն յաշխարհն զգըժգոյաւորուԹենէ փրկուԹեան: Յայսոսիկ երկուս մոլորուԹիւնս յանկին ամենայն ախտք և սուտ առաքինուԹիւնք քրիստոնէից:

Առաջինն 'ի սոցանէ, որում հակաՃառեմ, այնոցիկ է մոլորուԹիւն՝ որք յապուշ հարեալ ընդ պատկեր քրիստոնէական կատարելուԹեան՝ որպէս նկարենն ինքեանք 'ի մոլ, և ահաբեկեալք 'ի տեսիլ ևԹե աւետարանական լերինն, կարծեն անգնալի զՃանապարհ նորին, և առանց յուշ ածելոյ՝ զի անհնարինք առ 'ի մարդկանէ հնարաւորք են Աստուածով, ծերպան յանօրէնուԹեան այնու ևԹե՝ զի ոչ վտահին հասանել 'ի ձչմարիտն արդարուԹիւն: ԽաբէուԹիւն վտանգաւոր, որ Թշնամանէ զշնորհս Փրկչին:

Այդ գնացք սրբոյ Կուսին զերծուցանէ զմեզ 'ի խաբուԹենէ աստի աշխարհի. ազդեալ 'ի Տեառնէ ընդոր ուղի պարտ էր իւր գնալ, լերինք առաջարք ոչ խաւովեցին զակարուԹիւն նորա. գնաց 'ի լեռնակողմն: Եւ զօր այլ ուղի կարէր ընտրել, ասէ սուրբն Ամբրոսիոս. ձգեն միշտ շնորհք աստուածայինք զսիրտ 'ի լերինս յաւետնականս, ուր է գանձ մեր: Ընդայլ խրատս այս այնոցիկ, որոց Թերահաւատեալ 'ի շնորհս Աստուծոյ՝ յուսա-

հատին հասանել՝ի քաղաքն սուրբ՝ի կատար լերին կառուցեալ:

Ասիցէք. Զդամ բովանդակ զակարութիւն իմ, զարհուրիմ՝ի մեղաց, և ոչ կամիմ անիրաւել ումեք երբեք. այլ բազում՝ինչ է՝ զորս քարողք բանին Աստուծոյ չանթահարեն հանապազ՝ի բեմէ, և չկարեմ զդոյշ կալ յայնցանէ: Հաւանիմ, զի առ՝ի կեալ ըստ Աւետարանին՝ պարտ է ինձ փոխել բոլորովին զվարս իմ. գիտեմ, զի սպառնայ Քրիստոս պատիժ յաւիտենական՝ որոց ոչ կամին կրել ինչ յաշխարհի աստ. զի որ ինայէ յոյժ յանձն իւր՝ կորուսանէ զնա. զի պարտ է բառնալ զխաչ, և հրաժարել յանձնէ առ՝ի լինել աշակերտ իւր. զի կեանք քրիստոնէի յայնի խոստովանութիւն է առ պաշխարութեան. և զի որպէս ոչ է մարթ մատչել առ Աստուած՝ առանց միանալոյ ընդ Քրիստոսի, նոյնպէս և ոչ մարթ է միանալ ընդ Քրիստոսի՝ առանց խաչակից լինելոյ նմա: Գիտեմ զայս ամենայն, և այս իսկ է՝ որ յուսահատ առնէ զիս լինել այլ բարւոյ: Անկեղծ եմ՝ի մասինս յայսմիկ, ոչ ստեմ. ճանաչեմ զամենայն ընդարձակութիւնն պարտուց իմոց. և եթէ յանձն առից զառաքինութիւնն, ոչ ըստ մասին յանձն առից զայն. վէրկեց որպէս զայնոսիկ՝ որք կամին միաբանել զԱստուած ընդ աշխարհի, զԱւետարանն ընդ հաճոյս, և առ՝ի լինել աշխարհի և Քրիստոսի՝ չեն ընդունելի ոչ միւսին և ոչ միւսում:

Այլ յոյժ մեղրիս, ով դու. զգաս զակարութիւն քո, և զթերութիւն օրինապահութեան. այլ էգիտիցես զի ընդհակ զօրացուցանէն զակարութիւն. ոչ խմանաս զվախճարիչ բանս Փրկչին. Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ: Յայտ առնէ մեզ միւրաւի, զի առանց իւր ոչ ինչ կարեմք առնել. այլ ոչ այսու վստահ առնէ զմեզ՝ զի կարեմք իւրեւ զամենայն, և զի չիք խափան՝ որում չկարիցեմք ընդհակառ իւրովք յաղթել, և ոչ տկարութիւն՝ զոր ոչ կարասցեն ընդհակ իւր բռնաժել: Ահա, ով դու, ուր պարտ էցէ քեզ խնդրել զօրութիւն տկարութեանդ: Զինչ պարտ էցէ ասել, եթէ ոք անկեալ՝ի զօրութենէ և վատնգեալ՝ ոչ կամիցի հայթայթել հնարս առողջութեան անձին, այնու զի ճանաչէ զհիւանդութիւն իւր. ոչ ապաքէն հիւանդութիւնդ ինքնին ազդ առնէ քեզ դիմել առ բժիշկ և խընդրել դեղ:

Դժուարութիւն գործոյն խափանէ զքեզ. աւաղ, եթէ պարտ էր քեզ որպէս երբեմն մատնել զանձն մահուան բռնաւորաց, կորուսանել զինչս և զպատիւս և զկեանս վասն քրիստոսական հաւատոց, գոյր քեզ տեղի դողալոյ վասն տկարութեանդ, թէպէտև պարտ էր քեզ ասել ընդ Առաքեալն. Ամենայնի կարող եմ այնմ՝ որ զօրացոյցն զիս: Այլ ոչ այնչափ ինչ պահանջէ՝ի քէն Տէր: Խաղաղ՝ի մէջ ընտանեաց քոց և բարեկամաց կեաս, և չիք քեզ վտանգ կորուսանելոյ զոյս և զկեանս. և զինչ խնդրի՝ի քէն, բայց մեռուցանել զկիրս, հրաժարել յախտից, ատել զաշխարհ և զօրէնս նորա, զառաքինութիւնս աւետարանականս՝ի վար արկանել, աղօթից սուղ ինչ աւելի ստեպ կալ, փոքր մի աւելի սիրել զառանձնութիւն, առաւելագոյն յեռանդն և՝ի յաճախութիւն սուրբ խորհրդոց, առաւել քրիստոնեաբար՝ի կիր առնուլ զժամանակ, առաւել ևս միտ դնել անձին, ոչ այդչափ խորշել՝ի խաչէ. իսկ դու յետս կացեալ, խռովեալ, լքեալ, չիշխես ձեռնարկել՝ի գործ, և փոխանակս խօլաբար զյոյս յաւիտենական երանութեան ընդ քումդ մեղկութեան և յուլութեան:

Ո՛վ նախնի ժամանակացն հաւատացեալք քաջասիրտք, բաբէ, տանջանք գժնդակագոյնք ոչ կարացին մեկնել զձեզ՝ի սիրոյն Քրիստոսի. գողայիք գոյք ընդ առաքինութիւն ձեր, և երկմտեիք ընդ հաստատութիւն սիրոյդ, եթէ ոչ հեղուիք զարիւն ձեր վասն անուան

իւրոյ. համարեխք գոնք վատագոյնք ի վերայ երկրի, և քաղցրագոյն մխիթարութիւն ձեր այն էր՝ լինել անմխիթար յաշխարհի, և արժանի կրելոյ նախատինս վասն Քրիստոսի: Իսկ այժմ ծանրագնի համարի քրիստոնէութիւն՝ եթէ տացի ի գինս մի ինչ ի հաճոյից աշխարհի, և ծանրագինք թուին երկինք այսքանոյ գնեալ: Եւ ի ցեմք մեք յաջորդք հաւատոյ ձերոյ. այլ ինչ ի ձերմէդ իցէ յոյս մեր. և Աստուած, զոր պաշտեմքս, չիցէ թերևս այնչափ փութոյ արժանի:

Սակայն լուարուք, ո հաւատացեալք՝ որ գտանէքդ դառնութիւնս ի վարս առաքինութեան. լեմ զերկնային մխիթարութիւնս, զոր տայ Աստուած և յաստիս որոյ սիրեն զնա. լեմ զնաղաղութիւնն նեքքին՝ պտուղ բարւոյ խղճի, զոր մարթ է կոչել ճաշակ լիոն՝ միանգամայն և գրաւական երանութեանն, որ պահի առաքինեաց յերկինս. լեմ զոր Աւաքեաչն ասէ՝ Զէն աթոռ նի լարլարաւ ժամանակիս հանգերձեալոց փառացն, որ յայտնելոց են ի մեզ: Այլ եթէ իցէք անկեղծք, և կամիցիք խոստովանել անկեղծաբար զամենայն վիշտս կցորդս աշխարհային կենաց, զինչ ասիցէք առ այս, և զինչ ասիցեն աշխարհասէրքը իսկ. գոչեսցե՞ն արդեօք ի տեսանել զոք զերծեալ ի պատրանաց աշխարհի, որպէս երբեմն գոչեաց Եղիսաբեթ. Երանի՛ որ հաւատացեր: Ասիցե՞ն. Քանիցն է երանելի, զի արհամարհեաց՝ զոր կրօնք առել հրամայեն. քանի՛ իմաստուն է, զի խորհի յայլ իոն կեանս, ընտրէ զմանր բարի. ընդէ՞ր չարիանամք և մեք առնել նայապէս. աստ է հաւատաւոն բարի, այլ ամենայն ինչ զբօսանք են, և չիք ինչ ի նոսա՝ որ ոչ բիւրեցց վշտաց իցէ գինն: Զի՞նչ են զպրոյնքք անյարմարաւոր ամուսնութեանց, զի՞նչ և տարփանաց արհամարհելոց. զի՞նչ կորստեան խաղուց, և բարեբաստի կենաց. դրժանաց բարեկամութեան, վրիպման յաւագութենէ, աղարտման համբաւոյ, կորըստեան դատի, սաստկութեան ձմերայնոյ, անաւեր հարկահանութեաց, նախատալից խնամութեան, չիջևլափառ անուանարկութեան, մահուան սիրելոյ կամ կարևորի ուրուք անձին, անկրթութեան ընտանեաց, անկման ի ընորհաց, և այլոյ ուրուք անիրաւ նախապատուութեան:

Գոնէ դու ի բնաւից աստի արկածից զերծ. սակայն աւաղ, ոչ կարիցես յանձնէ քումմէ խոսել. ի զուր մեղաւորն չըսելոյն առնէ, մեացուած ինչ քրիստոնէական դաստիարակութեան բողոքէ միշտ ի խորս սրտի նորա վասն քո ցէր, և դառնացուցանէ զքաղցրագոյն բերկրութիւնս նորա: Զգայ զի զուրկ է յամենայն հաճոյից. է երբէք՝ զի մտաբերէ արկանել զքեզ ի մոռացօնս, այլ սիրա իւր ստեղծեալ ի հաստատուն երջանկութիւն՝ ի զբօսանս իսկ անդ չկարէ առնել զնա գոհ. չորի նա զարարածովք, այլ ոչ կարէ զկայ առնուլ ի նոսա. ած է ամենայն ուրեք ընդ իւր անհանգստութիւն իմն և տաղտուկ, որ զարթուցանէ զնա և ի մէջ բերկրանաց և զբօսանաց, մինչև տայ գտանել ի ցաւս անդ սպեղանի, և վիշտ ի վայելս. և ոչ զգայ զբերկրութիւն, բայց ի վայրկենի՝ որ կանխէ քան զայն:

Յայսոսիկ յածեալ կոծի աշխարհ. ի՝միտ առեալ զաղէտն՝ որ անջէ, այլ հաշի ընդ այնս. ընդվզանայ ընդ նոսին, զոր չիք ինչ՝ որ ամրքէ, չիք ինչ որ փոխարինէ. սակայն հառաչէ ի յիշատակել ևեթ զհամբոյր խաւութիւն Աւետարանին՝ զոր հաւատք ամրքեն, յոյս օժանդակէ, և սէր քաղցրացուցանէ: Ո՛հ, ընդէ՞ր չկարեմ աստ յանդիման առնել ի հակառակէն զսիրտ արդարոյ, և ցուցանել ձեզ ի նմա զուրբ հեշտութիւնն և զանդորրաւէտ երջանկութիւն, որ անբաժանելի է յանմեղութենէ: Զո՞ր գաղտնի բերկրութիւնս չգտանէ նա ի կեանքն ըստ հաւատոց, ի համարել զանձն պանդուխտ ի վերայ երկրի, ի հառաչելն հանապազ հասանել ի հայրենիս իւր. զո՞ր զմայլումն ի սրտառանդն աղօթս իւր, յորս պայծառ տեսութիւնք հաւատոց մերձ ցուցանեն նմա

զյաւիտենական երանութիւն, և 'ի հեռուստ լեռն տան նշմարել զաչխարհ և զպատկեր նորա: Քանի՛ ծանր է նմա թողուլ զղմայլումն զայն վասն մնոտի գբօսանաց աշխարհի. ողբայ և աշխարե զաշխարհասէրս, համարի զնոսա որպէս ցնորեալս՝ որք 'ի մահճին ցաւոց ծիծաղին, և որպէս մահապարտս՝ որ խնդութեամբ գնան յանգեստս 'ի տեղի պատուհասին:

Եւ զինչ ոչ կարիցէք յաւելուլ փոխանակ իմ, կուսանք աստուածանուէրք, որ լսէիդ աստ բանից իմոց, վարժեալդ 'ի սուրբ բերկրութիւնս՝ որ կցորդք են անմեղութեան և երկիւղածութեան. որպիսի՛ սքանչելիս զընորհացն Աստուծոյ ոչ կարիցէք յայտնել մեզ: Զինչ կարէր աշխարհ հանել 'ի ձակատ այսպիսւոյ մխիթարական օրինակի. հասակ, բնութիւն, աղնուականութիւն, պատրուակք մնոտիք և յաճախ 'ի գէմս ածեալք, յամօթ լինին. զի է տեսանել աստ և զհասակ մատաղագոյն, և զբնութիւն փափուկ, և զաղգ պայծառագոյն, որք 'ի վերայ խստութեանց Աւետարանին այլս ևս յաւելուն, և 'ի սուրբ առաքինութիւնս կրօնաւորականս գտանեն քաղցրութիւն ճշմարիտ, զոր աշխարհ ամենայն չկարէ տալ լուրցն յայտնի կուսակցաց:

Այլ ինձ կամք են աստանօր՝ զանիրաւութիւն անիրաւութեամբ յամօթ առնել: Լքանիցի՛ փառամոլն վասն գժուարութեանց, որ ընդ առաջ լինին նմա 'ի գնացս իւր. յեղափոխի նա, այլակերպի, բռնագբօսէ զբնութիւն իւր, ներքոյ արկանէ զայն կրից իւրոց. գոռոզն և ամբարտաւան՝ երկչոտ հպատակութեամբ կատարէ զհաճոյս իշխանի, բազմապատիկ նուաստութեամբք ստանայ զպաշտպանութիւն հզօրի ուրուք պաշտօնէի, և խնամոյ հի յանձն առնու լինել ընորհապարտ վասն բախտի իւրոյ՝ ունայնութեան պատուիրակի ուրուք, կամ ագահութեան ստրկի: Զբօսասէր եռանդուն ծախէ ձանձ-

րութեամբ 'ի նախասենեակս և զհետ աւագանւոյ զժամանակ իւր, առ 'ի ձեռս բերել առաւելագոյն զբօսանս: Ծոյլն թշնամի աշխատանաց և հոգոց՝ յանձն առնու պաշտօն տաժանաւոր, ոչ միայն կորստեամբ հանգստեան իւրոյ՝ այլ և քնոյ և առողջութեան առ 'ի բաւական լինել պարտուց աւագութեան: Կծծին և ագահ՝ լինի առատաձեռն, և շռայլ խակ. զեղուս ամենայն ուրեք զպարգևս իւր, առ 'ի շահել նոքօք և զբարեհամբոյր ակնածութիւն սպասաւորի:

Գիտէք խակ, զի 'ի խնդիրս աշխարհականս չէք ինչ խոչ, չէք ինչ գժուարին առ 'ի հաձել զխաստ. գժուարութիւնք խակ անդ ախորժելիք են, հաճելին զվաստակ, և զարթուցանեն զզօրութիւն, միայն 'ի խնդիրս փրկութեան յուշ լինի տկարութիւն, և ընդառաջ ելանեն լրիւնք անմատոյցք: Աւաղ, եղբարք, հեշտասերն և փառամոլն յարիցեն յաւուրն յայնմիկ ընդդէմ մեր գատաղաք, և յիշատակաւ վշտացն կրելոց առ 'ի յափճոյցանել զգանկութիւնս իւրեանց յամօթ արասցեն յաւուրն Քրիստոսի զպատճառանս տկարութեան մերոյ:

Ասացուք ապա ցանձինս մեր որ ինչ բարբառ երկնաւոր ասէր երբեմն առ սուրբն Օգոստինոս՝ որ ահաբեկեալն էր իբրև զմեզ 'ի դժուարութենէ ճանապարհին փրկութեան. Զկարէիցե՞ զոր կարացին այլք, ասէ և կանայք. և ընդէր չկարիցեմ զոր այլք բազում կարացին, և կարեն հանապազորդ: Պա՞րտ էիցէ ինձ գնալ 'ի քարշ զհետ աշխարհի, և զառածանիլ ընդ հոսանս ուղխից, մինչդեռ առաջի աչաց իմոց այս ոք և այն, յարանց և 'ի կանանց, զերծ 'ի նաւակոծութենէ, գնան ողջամբ 'ի նաւահանգիստ: Զիցե՞ գոռ, որպէս նոցին և իմ արարիչ, ոչ ձեռք քո արարին և զիս, ոչ արեամբ Որդւոյ քո լուացեր և զիս, չիցէ՞ և իմ նոյն յոյս, ոչ 'ի նոյն ժառանգութիւն կոչեցեր և զիս: Եղո՛ւկ, վաստութիւն իմ միայն խափանէ զիս չհետևել ձայնիդ. բազում

անգամ չնորհք քո եւտուն ինձ առնել զառաջին քայլս, այլ լքեալ ՚ի դոյզն խոչից՝ գարձար ՚ի նոյն Ճանապարհ. կոչեա զիս, Տէր, միւսանգամ, կոչեա մեծաձայն, այնու հզօրդ բարբառով՝ որում և սիրտ խիստ ոչ խլանայ. որպէս զի հանգոյն Պետրոսի, մերկացեալ ՚ի զգեստուց՝ որ արդելուն զիս, ազատ և անխափան եկից առ քեզ ընդ ծուփս ալեաց: Այո, Տէր, եկից առ քեզ ընդ մրրիկս ծովուս աշխարհիս, ուր ժայռք խիտք և լայնիրթք, ուր յաճախաւոր են նաւակոծութիւնք, և գժուարին փրկութիւն:

ՄԱՍՆ ԵՐԲՈՐԴ

Միւս ևս մոլորութիւն աշխարհի է, գարձեալ յաղագս փրկութեան, յոյժ պլաղդ յայնմանէ՝ զոր արդ ցրեցի. և մոլորութիւնս այս, Թէպէտ և նուազ բերէ զկերպարանս Ճշմարտութեան, սակայն ընդհանրագոյն է, և գժուարագոյն յուղղութիւն: Զի որպէս են՝ որ ՚ի խստութենէ աւետարանական կարգաց լքեալ, խափանին ՚ի մուտս Ճանապարհին՝ որ տանի ՚ի կեանս, որպէս արդ իսկ տեսաք, են և՝ որք համողել զանձինս ջանան, եթէ թէև չնչ գժուարութիւն մեծ այնր Ճանապարհի: Հանդարտ և պարզք ՚ի բնէ, ոչ գտանեն յԱւետարանի հակառակ ինչ անձնասիրութեան. յարգարեն իւրեանց կարգ ինն կենաց, յոր մուծանեն ընդ կեղծ առնուամբք զփառասիրութիւն զշնչելութիւն զմեղկութիւն զոնձայնասիրութիւն, և զայլ ևս կիրս փափկագոյնս: Կարդ կենաց նոցա հաստատ առաւելապէս ՚ի փախչել ՚ի չարեաց, քան ՚ի գործել զբարիս. և աներկևանք զփրկութենէ իւրեանց, ողբան զմոլորութիւն մեղաւորաց հրաժարելոց ՚ի փրկութենէ, յորում նուազ

համարին վաստակ քան ՚ի գատապարտութիւն: Զայս մոլորութիւն Թանձրամիտ, Թշնամանագիր խաչին Քրիստոսի, յամենի առնէ սուրբ Կոյն գարձեալ օրինական իւրով:

Ոչ հաւ նա ՚ի քնին՝ Թէ մանր ինչ հասանել ՚ի քաղաքն Յուդայ ընդ այլ Ճանապարհ, ոչ այնչափ առապար և տաժանաւոր, այլ ՚ի գժուարութեան անդ գտանէր զապահովութիւն: Եւ այս է խրատն, զոր արդեամբք ընծայէ սուրբ Կոյն, որոց կամին հասանել յերուսաղէմ վերին ընդ հոլթ և ընդ գիւբին Ճանապարհ, առանց հատանելոյ զսուրբ լերինն՝ յորոց վերայ կառուցեալ է: Մի խաբեսցուք, եղբարք իմ, պարտ է վաստակել առ ՚ի փրկութիւն. զարքայութիւնն երկնից ոչ է ստանալ, բայց բռնաբարութեամբք՝ զոր պարտ է մեզ առնել հանապազ ՚ի վերայ անձանց: Սակայն լի է աշխարհ օրինօք սուիք ՚ի կրօնական մասին: Խստակրօն կեանք մենաստանաց սուրբ է, ասեն, այլ չնչ պատճառ ստիպելոյ յայն՝ որք չնչեն յերկնից կոչեցեալ: Ի տան Հօրն երկնաւորի օթեւանք բազումք են. և որք ոչն արժանի գտանին առաջնոցն օթեւանաց, չէ հարկ արտաքսել զնոսա և յայլոցն. են իսկ զբօսանք և վայելք աշխարհի համեստք, յորոց ոչ հրամայէ Աւետարանն հրաժարել:

Այսպէս տիկին՝ հաւատարիմ առն իւրում, որ ոչ անցանէ ըստ չափ ՚ի զբօսանս, որ զդոյզ կայ յանչափութեանց՝ անպատշաճից ևս և վայելուչ կենցաղավարութեան, որ ՚ի խօսս ևս իւր չառնէ ինչ ընդդէմ վայելչութեան և բարեկրթութեան բնութեան իւրոյ, որ երբէք յեկեղեցիս ՚ի տօնս՝ ընդունել զսուրբ խորհուրդս, որ առնէ և ողորմութիւնս ինչ ՚ի սփոփումն աղքատաց Քրիստոսի. զայս ամենայն շատ համարի, առ ՚ի կեալ աներկեան ընդ փրկութիւն իւր: Զկարէ խոստովանահայրն հանդերձ աստուածաշնորհ իշխանութեամբն

խոռվել զկարդ կենցաղավարուԹեան նորա, առանց դժպհի լինելոյ նմա. պինդ կայ նա և չփոխէ ինչ 'ի կարգ իւրոց, սիրէ զպերճուԹիւն և զշուք, տածէ գործ վահան բարեկամուԹիւնս, զուարԹացուցանէ զհոգիս բս, ժպտի ընդ աշխարհասէր՝ որ քաղարիկ զնոհերս ախորժաբար, 'ի շնորհս ձարտարմտուԹեան նորա, հաձի ընդ ապաշխանուԹիւն սրտի, յաւելու 'ի գէղ իւր նրբուԹիւնս սնոտիս, և 'ի վերայ զարդուց իւրոց խնամս այնչափ, զի յաւիտենական երանուԹեամբ վարձատրիցէր, Աստուած իմ, եԹէ զնոյն 'ի կիր արկանէր Քանս առ 'ի զարդարել զհոգի իւր երկնային առաքինուԹեամբք: ՈւրացուԹիւն անձին՝ է նմա բառ անխմանալի. չկայ նորա Թերևս և ոչ միտս իմիք յղձէից իւրոց յաղԹեալ վասն սիրոյն Քրիստոսի. և զի երկարեմ, ամենայն կրօնք նորա յանկին 'ի պատիւ անձին իւրոց, և 'ի խնամս կաւեղէն մարմնոյն՝ զոր պաշտէ: Արդ կամ Աւետարանն օրինադրէ խստուԹիւն ծայրայեղ, և կամ չկայ տիկնին այն քրիստոնեայ. զի զինչ առաւել անմիաբան ընդ Աւետարանին, որով և հակառակ քրիստոնէուԹեան կայցէ քան զայսպիսի ամբարհաւաճուԹիւն, քան զայսպիսի անձնասիրուԹիւն, և քան զայսպիսի գրգանս՝ ընդ որ չխղձէ նա: Այլ չէ ինչ նմա փոյթ, շատ է զի սովորուԹիւն ինդրէ զայն՝ առ 'ի համարել զանձն յաւելուած անապարհի, քանզի չև է հասեալ 'ի խորս գահավիժուԹեան:

Այսպիսի է զարդիս յամառուԹիւն աշխարհի. անձամբ անձին յօրինէ կրօնս, և յարդարէ իւր բարոյական այնպիսի՝ որ միաբանէ զՔրիստոս ընդ բելիարայ, պատուաստէ 'ի բուն քրիստոնէուԹեան զօրինս բոլորովին հեԹանոսականս, պինդ ունի զհաճոյս աշխարհի, զունայնուԹիւն, զմեղկուԹիւն, զվատասիրուԹիւն, և զհաւատս Աւետարանին մեռեալ և անպիտան՝ որ ասի կոճապղձիր, և անտի զառաքինուԹիւն:

Ըստ այսմ օրինակի, Տէր իմ, կեան այսպիսիք խաղալուԹեամբ յաշխարհի ասա, և սպասեն աներկիւղ քումդ սոսկալիատենի: Իսկ արդարն կայ մեկուսի ժժգոյն նուաղեալ կԹուցեալ, և նիհարեալ 'ի ճգանց ընդերկար ապաշխարուԹեան. և սուրբ սրտիս, ջերմանդն աղօԹիւք, պաղատի առ քեզ ընդ մարդարէին՝ մի մոռանել ընդ իւր 'ի դատաստան, խոստովանի 'ի դառնուԹեան սրտին զԹեԹև ինչ մեղանս՝ զորս երկիւղածուԹիւն իւր ծանրացուցանէ, յորս տկարուԹեամբ յեղակարծուամ գԹեալ՝ ոչ էշխէ վստահել յանսպառ դանձս ողորմուԹեան քո, և ոչ 'ի գործս իւր բարիս մԹերԹեալս ճգամիք՝ յորս հաւատք իւր գտանէն արատս: Զի՞նչ էան զայսպիսի խորհրդիւն առաւել խաւարային կայցէ, գոչէ սուրբն Ոսկեբերան: Զի մեղք մեծամեծ ածէն երբեմն 'ի վիրջ, այլ այս կենցաղ յանկի միշտ 'ի տխուր և յաղեսուալի անդրջուԹիւն:

Յորմէ՞ս իմիք չկայ մարԹ մոլորել մարդկեղէն մտաց, եԹէ 'ի մասինս ևս յայսմիկ անկանի 'ի խաբս: Զինչ ևս մարԹ էր, Տէր իմ, յաւելուլ 'ի նախահոգ խնամս, զորս իմաստուԹիւն քո հոգացաւ առ 'ի ցուցանել մարդկան՝ զի խաչք և վիշտք այնպէս անհրաժեշտ կարևոր են նոցա, որպէս խորհուրդն՝ վերածնուԹեան, և զի այնպէս անկարելի է լինել Ճշմարիտ քրիստոնեայ առանց վշտակրուԹեան՝ որպէս լինել քրիստոնեայ առանց մկրտուԹեան. յինչ բովանդակի Աւետարան քո սուրբ, բայց 'ի սոյն ՃշմարտուԹիւն, զոր յեղեղես անդ, և զգալի օրինակօք ցուցանես մեզ:

Յետ այսոցիկ ամենայնի ո՞ տակաւին իշխեսցէ ասել՝ ԹԷ քրիստոնէական կրօնք ոչ արգելուցուն զվայելս աշխարհի. արա դու զամենայն Ճգունս 'ի կրօնից անտի հրամայեալս, և ներեսցին քեզ վայելք՝ ոչ արգելեալք: Ճգնիս դու. գնալ ընդ լերինս հանգոյն Մարիամու. զի առանց Ճգանց և մեռելուԹեան չկք փրկուԹիւն. իսկ

զակն քո՝ որ գայթակղեցուցանէ զքեզ. կրնս զնաչ եդեալ յուս քո. խորտակիս զկամս, որ բռնակալէ ի քեզ. պատուհասիս զմարմինդ, որ առաւելագանց սիրելի է քեզ. ըմպես զբաժակն, զոր պարտ է քեզ ճաշակել առ ի կալ ընդ աջմէ Քրիստոսի:

Զեն ինչ զարմանք՝ զի զեղծանի և ի մասինս յայսմիկ աշխարհ. ամենայն ինչ մոլորութիւն է ի նմա և սուտ. յամենայն ժամանակի տիրէ ի նմա անողջախոհ դատաստան զերաց, որ հայեին ի փրկութիւն: Այլ այն է զարմանալի՝ զի և ի բարեկրօնս ևս գտանէ կուսակիցս այս մոլորութիւն. և մարթ է ասել՝ զի և ընտրեալք անկանէին ատ ի խաբս, եթէ ոչ պահպանէր զնոսա Աստուած:

Այս կամ այն ոք կեայ միամտութեամբ ընդ համբաւ բարեպաշտութեան իւրոյ, յետ նշանաւոր դարձին, և է իսկ զերծ յառաջնոյն անկարգութեանց. սակայն տակաւին եռանդուն, ցասկոտ, ունայնասէր, բեւեռեալ ընդ երկիր, վասն կենցաղ՝ զախտաւորութիւն ընդ բարեգործութեան ընդգելուչել, զդաղկութիւն ընդ եռանդեան, զընորհս ընդ անձնասիրութեան, զսուրբ խորհուրդս ընդ դարձադարձ ի մեզս:

Այս ոք կամ այն ի տիկնոջ համարի հրաժարեալ յաշխարհէ ի խաբէութեանց նորա. սակայն յամբոխէ ևեթ և ի չիոթից նորին է հրաժարեալ. ի բաց կայ ի հռչակաւոր հանդիսից, այլ երբեմն հանապազ ի տակաւաւոր և յաղնուագոյն ակումբս. ոչ ևս տայ զանձն յանարժան քաղաքաժողովս, այլ ի խումբս ընտրելոց վայելչ յամենայն զբօսանս կենակցութեան՝ առանց ախորժելոյ ընդ անպատեհս. ոչ զակատ ի խաղս, այլ և ոչ զդուշանայ ի վատնելոյ և ի կորուսանելոյ ժամանակ. ոչ խնդրէ անտուրբ հնարիւք սիրելի լինել, այլ և ոչ խորշի ի հաճոյ ընծայեցուցանելոյ զանձն. և համառօտիւ՝ անուն իսկ յոռութեան խառնվի զառաքինութիւն իւր, այլ թերևս անուն ևեթ նորին:

Այլ ոք դարձեալ՝ կարծէ այժմէն զերկինս գրաւեալ, որ հաղիւ կարի թուէլ յառաքինութիւնս իւր զուզղիչ ոք հոգևոր առ ի ցոյց, և խոստովանութիւնս ինչ ըստ օրինի, և զանուն իւր գրեալ յամենայն ժողովս երկիւղածաց քաղաքին:

Սիւս այլ ոք ի կանանց համարի զանձն հակայագայլ յառաջ խաղացեալ յասպարիզի արդարութեան, ըստ հաճոյս իւր ընթացեալ. երբէք երբէք բուռն հարեալ մերթ յողբմածութիւն, է զի ի խստակրօնութիւն, և մերթ յառանձնութիւն. զմասունս կենաց իւրոց գոգ ի ս տուեալ Աստուծոյ, իսկ զբոլորն աշխարհի: Թուի ինն, Տէր, զի օրէնք քո սուրբք՝ երկրպագելիք յերկինս և յերկրի՝ իցեն յերկեղածիկ և դիւրափոփոխք, և մարթ իցէ յապաւել զայնոսիկ և յաւելուլ ըստ հաճոյս, յարմարել բնաւորութեան և տիոց և պայմանի կենաց: Իւրաքանչիւր ոք յօրինէ իւր Աւետարան ուրոյն, գտանել ի նմա զգաղտնիս տկարութեանց իւրոց: Այո՛ եղբարք, հոգի կրօնից անծանօթ է և այնոցիկ, որք համարին ըստ օրինաց նորին կեալ. զիչտամբանս, զոր փրկիչն մեր արար երբեմն աշակերտաց իւրոյ, մարթ է առնել արդ առաւելագունից ի հաւատացելոց. Ու գիտէ որ, հոգւոյ էր:

Օրինակ Կուսին խրատեացէ զմեզ. հաւատարմութիւն իւր առ Աստուած՝ ուսուցէ մեզ: Ոչ զվիշտս ինչ կենաց խնդրէ ի մինչ Տէր, և ոչ զարծարծումն ինչ առժամայն եռանդեան, այլ բովանդակ զսիրտ մեր, այլ զամենայն ներգնա մեր, այլ զամենայն գործս մեր. և առանց երկարելոյ՝ զհատարեալ միաբանութիւն ընդ Աւետարանին, զոր պարտ է մեզ ունել ի կանոն կենաց մերոց ատ, զի նա դատելոց է զմեզ անդ: Հայտ, եղբարք, լինօք հաւատարիմք առ Աստուած, որպէս զի լեցի մեզ յուսալ յողորմութիւն իւր. տեսէք քանի՛ օրհնութիւնք եկին զկետ հաւատարմութեան Կուսին. Բանն Աստուած

սկիզբն արար փրկութեան մերոյ. սրբեաց զկարապետան իւր չև ծնեալ. խայտաց մանուկն յորովայնի մօր իւրոյ. մարգարէացաւ մայր նորա Եղիսաբեթ. և Կայս ցայն վայր լուիկ, զմեծամեծս՝ զոր արար ՚ի նմա Տէր, յայտնէր ՚ի սուրբ հիացման՝ մեծացուցանելով զչքնորութիւն և զողորմութիւն Բարձրելոյն:

Ե՞րբ լինի ինձ, Տէր, ըստ օրինակի նորին հատանել անցանել ընդ մահաբեր լերինս, որ բաժանեն զիս ՚ի քէն, և կարել հանդոյն նմին մեծացուցանել զաքանչելիս ընորհաց քոց: Ամաչեմ ընդ գաղջութիւն իմ և ընդ անփոյթ կեանս, որ ՚ի դերև առնեն զշնոն իմ մերձենալոյ առ քեզ. այն ինչ ընկճեալ զմի ՚ի կրկնս, անկանիմ ընդ բեռամբ անձին՝ տկարացեալ նովին իսկ յաղթութեամբ, և ՚ի քարշ ածիմ ՚ի միւսմէն: Պարտասեալ ՚ի մարանչէ- ղոյ ընդ ես հանապազ, միաբանիմ ընդ անձնասիրութեան իմոյմ. և առ ՚ի հանդարտել յերեսաց կրկնս, զմեզս ևեթ ծանուցանս զանամ նոցա, ներեալ զոյնն ամենայն: Եւ այս իսկ խորշումն ՚ի ծանուցից լցէ շնորհաց քոց պարգև: Ո՛ տայր ինձ թէ յիշատակ անկարդ հաճոյից կորնչէր ընդ հաճոյս, և կարէի յաղթել ինձ յանողորմ դարձադարձ նորին՝ որ ՚ի մեզս իսկ ծանուցանս զիս զառաջանէ, և տայ ինձ խաղաղութեամբ կեալ ՚ի մեզս: Զգիտեմ թէ տկարութիւն իմ ժուժկալեսցէ ՚ի վտանգի. չգիտեմ թէ ամենայն առաջադրութիւնք իմ առաքինականք չէլանիցեն յայնժամ ՚ի դերև: Զի ոչ զմեզս առեմ ես, այլ զխաղաղութիւն իմ խնդրեմ. ահ, եթէ շնորհք քո էին՝ որք ՚ի սուրբ առելութիւնն յայն զիս շարժէին, առէի զամենայն իսկ՝ որ անհաճոյ են քեզ, ոչ լինէր ինձ մոռանալ կամաք անկանել հանապազօր ընդդէմ հաւատոյ մերոյ՝ որ հաստոյր հարուածս ածէն սիրոյդ, և ոչ առեպ հարցմունս առնել՝ թէ էի՞ն ծանուցք այս ինչ կամ այն մեզք. շատ համարէի դիտել զի էին այնոքիկ քեզ հաճոյ: Ոչ ոչ, դարձեալ խոստո-

վանիմ, ոչ զանմեղութիւն խնդրեմ ես, այլ ՚ի խռովութենէ սրտի խորշիմ. լցիս ՚ի սուտ և ՚ի վտանգաւոր խաղաղութենէ աստի մի լինի ինձ անցանել ՚ի խռովութիւնն յաւիտենական, մերժեալ մշանջենապէս ՚ի ճշմարիտն խաղաղութենէ, յոր սուրբքդ քո վայելեն յերանութեան. որոյմ և զմեզ արժանի արասցէ Քրիստոս Աստուած մեր. եղիցի եղիցի:

ՄԱՍԻԼԻՈՆԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՓԼԵՐՄՈՆԻ

Ի ՏԵԱՌՆ ԸՆԴ ԱՌԱՋ

Եւ իբրև լցան աւուրք սրբութեան նորա ըստ օրինացն Մովսիսի, ածին զՅիսուս Երուսաղէմ յանդիման առնել Տեառն։

Ղուկ. Բ. 22։

Զմեծի առաքինութեան, հնազանդելոյ կամացն Աստուծոյ, ընծայէ մեզ այսօր սուրբ Կոյսն զօրինակ՝ի խորհրդեանս, զոր առաջադրէ եկեղեցի բարեպաշտութեան հաստատելոյ։ Թէպէտ և ամենայն իսկ կեանք սրբոյ Կուսին եղև համակամութիւն յարատեւ ընդ Աստուծոյ, հպատակութիւն յամենայնի խորհրդոց և կամաց նորա՝ի վերայ իւր, այլ զայս պատրաստութիւնն սրտի առաւել է տեսանել՝ի նուիրման՝ զոր առնէ այսօր յընծայել զորդի իւր՝ի տաճարին, և պատարագն՝ որով կայսմ խորհրդեան նուիրէ կամացն Աստուծոյ զմիտս և զխորհուրդս իւր՝ է առաւել կատարեալ և վեհանձնական. և այս է գլխաւոր առաքինութիւնն, զոր առաջի կայ ինձ ընծայել ձեզ յօրինակ նմանութեան։

Այս համակամութիւն ընդ Աստուծոյ է, որ պա-

պատուական առնէ զնուէրս մեր, արժանաւորս վարձուց կացուցանէ զձգումնս մեր, ի բաց բառնայ զդառնութիւնն ի վշտաց, և զթոյնս յաչողութեանց, որ զօրացուցանէ զվհատութիւն, կարգաւորէ զոյս, արծարծանէ զեռանդն նախանձու, քաջալերէ զտառապութիւն. և միանգամայն ասացեալ՝ պահպանէ զամենայն առաքինութիւնս, և զթերութիւնս իսկ վարէ յօգուտ: Սա ինքն աղդէ ի մեզ խորհուրդս բարիս, յաչողէ զգործս մեր, կացուցանէ զմեզ տեարս պատահարաց, սրբագործէ զամենայն պայմանս կենաց, տայ կատարել զպարտս մեր, պինդ ունի զհպատակութիւն ժողովրդոց, զղօրութիւն ինքնակալութեանց, զմեծութիւն իշխանաց և զհաւատարմութիւն իշխանաւորաց, զանհաւասարութիւն հանգամանաց կենաց, զյարմարութիւն բոլորից քաղաքական կարգաց, և տայ իւրաքանչիւր ումեք հայել աննախանձ ի բախտ այլոց, և խորհել միայն ի կատարումն և ի սրբութիւն պարտուց պայմանին իւրում:

Սա է, տէր արքայ, որ տայ Թագաւորաց իշխել բարեպաշտութեամբ և արդարութեամբ, ընկճել զամբարտաւանութիւն ի յաչողուածս, և ամրեք զդառնութիւն արիածից, տայ նոցա երկրպագել կամաց այնորիկ, որ է գերագոյն իշխեցող ամենայն պատահարաց, և աղբիւր նոցին:

Ուսո՛ւ է ապա, եղբարք իմ, զի զառաքինութիւնս զայս՝ այսպէս կարևոր և սիրելի՝ դուն ուրեք է տեսանել ի հաւատացեալս. ուսո՛ւ է՝ զի յայսքան յեղափոխութիւնս մարդկային երաց այնպէս կենցաղավարիմք, որպէս թէ չգուցէ ի վերայ մեր էն գերաբուն անօրէն ամենայնի, որպէս թէ դէպք միայն իցեն Աստուած տիեզերաց, որպէս թէ մեք ինքնին իցեմք արարիչք բարեբաստութեան և թշուառութեան կենաց մերոց: Թողեք ինձ ապա, զի առ ի տալ ձեզ յօրինակ զհնազանդութիւն Կուսին, խօսեցայց զկարևոր առաքինութենէս. և քանզի մեծութիւն աւագութիւն և աշխուժականութիւն առաւելագունիցդ են դէպք մեծամեծք յաչխարհի, ուսուցից վերաբերել զայնոսիկ ի պատճառս անդր իբրեանց, և զԱստուած միայն խոստովանեալ ընդ տիեզերս անօրէն յաչողութեանց և արկածից:

Այսոցիկ նախ՝ որ իցեն պատճառք աներևոյթք այսր տամբութեան մերոյ ի կամացն Աստուծոյ, և երկրորդ՝ որ իցեն օգուտք ի հնազանդութենէ կամաց նորա սրբոց: Այս ինքն, ուսո՛ւ յառաջ գայ՝ զի չկամիմք մեք որ ինչ Աստուած կամի, և ուսո՛ւ այնքան քաղցրութիւն և սիրելութիւն ի կամել մեր որ ինչ Աստուած կամի: Խնդրեսցուք օգնութիւն ի Տեառնէ բարեխօսութեամբ սրբոյ Կուսին: Ողջոյն ՚եզ Մարիամ:

ՄԱՍՆ ՈՒԱՋԻՆ

Գլխաւոր պատճառք տպատամբութեան մերոյ ի կամացն Աստուծոյ են, նախ՝ հպարտութիւն մտաց, որ միշտ զդործս Աստուծոյ կոչէ յատեան իւր, կամի խելամուտ լինել այնոցիկ՝ փոխանակ երկրպագելոյ, և ժպրհի դատապարտել զամենայն՝ որում ոչ զօրէ հասու լինել: Երկրորդ՝ անձնասիրութիւն չարաչար, որ տայ մեզ զամենայն ինչ վերաբերել յանձինս մեր, որպէս թէ մեք միայն էաք յաչխարհի, և ամենայն ինչ վասն մեր էր ստեղծեալ. որպէս զի որ ինչ ոչ բովանդակի ի տեսութիւնս մեր և ի կիրս, չարժէ զմեզ յապստամբութիւն: Եւ երրորդ՝ սուտ իմն առաքինութիւն, որ պատճառաբանէ խնդրելոյ զԱստուած՝ խնդրէ զինքն, և փոխանակ միշտ ընդ այնմ իզձս անտես բարւոյ իրիք, զոր ոչ խնդրէ ի մէնջ Աստուած, և ընդ պարտուց՝ զոր սուրբ կամք իւր օրինադրէն մեզ: Արդ զայսոսիկ Տիրամայրն իրաւ զմեզ այսօր նուիրել կամացն Աստուծոյ:

Նախ՝ հպատուհիւն մատց. քանի՛ երկեցաս, քանի՛ դժուարութիւնս, ասէ սուրբն Բեռնարդոս, էիարէր սուրբն Կոյսն ածել յաղատուհիւն իւր յաստուածածադիր օրինաց անտի գալոյ ի տաճարն վասն սրբութեան, և քանի՛ պատճառս գեղեցիկս: Ոչ ինչ անմաքուր արատաւորեալ էր զմայրութիւն նորա, այլ մանաւանդ յաւելեալ մայրութեամբն ի սրբութիւն. պարտ էր ինչ սրբել այնմ, որոյ չէր ինչ ձգեալ յանձն իւր արատ, և փրկանաւորել անարդ նուիրօք զոյն՝ որ եկեալն էր ի փրկել զամենայն մարդիկ ի գերութենէ սատանայի և մեղաց: Սակայն հնազանդեցաւ, և նուիրեալ զմիտս իւր յաւիտենական և միշտ արդար պատճառաց խմաստութեանն Աստուծոյ, ուստոյ մեզ՝ զի Աստուծոյ է կամել, և արարածոյ հնազանդել, և հրամանաց նորա ներքոյ անկանել:

Իսկ մեք, եղբարք, պահանջեմք միշտ համարա՛ի նմանել զգործոյ իւրոց. արարածք հպարտք եկակոչ առնեմք արարչին մերում՝ դատել ընդ նմա. խմաստնագոյնս քան զինքն իչխեմք համարել զմեզ. զձանապարհսնորա՛ի փրկութիւն ազգի մարդկան և զյաւիտենական խորհուրդս իւր՛ի վերայ իւրաքանչիւրոցս սպառանեմք. զաղկաղկ միտս մեր դնեմք՛ի կշիռ ընդ անգունդս խմաստութեան նորա և յաւիտենական արդարութեան:

Ձձանապարհս նորա, ասեմ, ՛ի փրկութիւն ազգի մարդկան: Աւաղ, ո՛չ լսեմք հանապազօր յաշխարհի սպառանս անմիտս զձանապարհացն Աստուծոյ. համարս պահանջեն անդադար զանհասանելի խմաստութենէ խորհրդոց նորա, և զխորոց նախախնամութեան իւրոյ, թէ ընդէր Թողու զամբաւ բազմութիւն անհաւատից՛ի վերայ երկրի. ընդէր ոչ ամենեքեան հասանեն փրկութեան. ընդէր այսպէս գժուարին արարեալ է զփրկութիւն. էր աղագաւ այսպէս ակար ստեղծեալ է զմարդիկ. վասն էր ոչ յայտնագոյնս խօսեցեալ զբազմագոյն

իրաց, որոց պարտ է մեզ հաւատալ. առ ինչ Թոյլ տայ պատահարաց բազմաց, մեծասկարաց հաւատոյ և փառաց եկեղեցւոյ. և այլ ևս խնդիրք անսպառք, յորս Թուի մարդ խաղալ ընդ Աստուծոյ. սորուկ անարդ համար պահանջէ յամենիշխան Տեառնէ, անօթ կաւեղէն բողոքէ ընդդէմ ստեղծչին Թէ ընդէր այսպէս արարեր զիս. որդն երկրաքարշ, զոր անդունդ ամբաւք բաժանեն Աստուծոյ, իշխէ ամբառնալ զաչս յերկինս՝ առ՛ի փափոխել որ ինչ անցք անցանեն անդ, առ՛ի տալ խորհուրդս արարչին, Թելադրել իմաստութեան նորա այլ տեսութիւնս. ընդ վայր հարկանէ զկարգս կրօնից, այլ՝ փոխանակէ գեղեցկակերպս և գովելիս, իշխէ յեղաշրջել զյօրինուածն մեծահաւոյզ՝ որ է նպատակ ամենայն խորհրդոյն Աստուծոյ, և փոխանակել զընորս մտաց իւրոց, զխառնակութիւն և զխաւար:

Եթէ իշխանաց իսկ՛ի յանձանձանս իրաց հասարակաց, և՛ի բաղմապատիկ զբօսութիւնս՝ որ շարժեն զբոլոր մասունս լայնածաւալ ինքնակալութեան, են գաղտնիք ինչ՝ որոց էիարեմք լինել խելամուտ, կամիմք զի էցեն և Աստուծոյ գաղտնիք՛ի յաւիտենական կարգաւորութիւնս փրկութեան և բախտի իւրաքանչիւր մարդկան՝ արարածոց իւրոց: Եթէ տեսչութիւն պետութեան իրիք պահանջէ գաղտնիս և հնարս անծանօթս՝ որ յաճախ խռովէն զմեզ, զի ոչ դիտեմք զպատճառս այնոցիկ և զծածկեալ՛ի նասս օգտութիւնս, կամիցիմք զի վարչութեան տիեզերաց և ընդհանուր տեսչութեան մարդկան և գործոց՛ի սկզբանէ աշխարհի մինչև՛ի վախճան էցեն ինչ գաղտնիք և մթութիւնք, որոց չանցանիցեն քան զտիար միտս մեր պատճառք յաւիտենականք: Եւ եթէ պարտ իցէ, ըստ սուրբ գրոց, պատուել զխորհուրդս արքայից՛ի տեսչութիւն ժողովրդոց, և մի՛ի խնդիրս մնասիս անկանել զընծայից նոցա, զորոց անդիտանամք զպատճառս, էիցէ պարտ զարքայից արքային

պատուել զգաղտնիս ՚ի տեսուԹիւն մարդկայնոց իրաց. և չգտանիցիմք յանդգնուԹիւն ՚ի խառնել զիանաքիմաց տեսուԹիւնս մեր ՚ի խորհուրդս Աստուծոյ յաւիտենականս, որոց պատճառք խորինք ՚ի նմա ևԹէ են ծածկեալ, և ձանաչելիք միայն որչափ ինչ ինքն կամիցի յայտնել մեզ։

Երկիր պագցուք գաղտնեացն Աստուծոյ, եղբարք իմ. ևԹէ որ ինչ ՚ի գործոց նորա ձանաչելիք՝ այսչափ աստուածահրաչք Թուիլն մեզ և սքանչելիք, չիցէ մեզ իմաստասիրել՝ զի և անծանօԹքն մեզ լցեն նոյնպիսիք. ևԹէ այսքան է իմաստուն ՚ի յայտնի գործս իւր, զիաՓրդ ոչ նոյնպիսի եցէ և ՚ի գաղտնիս. ևԹէ յօրինուած աշխարհիս՝ զոր տեսանեմք՝ այսպէս լի է յարմարուԹեամբ և գերահանճար իմաստուԹեամբ, ՓրպէՏ անտեսուԹիւն կրօնիցէ զոր չկարեմք տեսանել, հրաշակերտն ՚ի խորհուրդս իւր, կարիցէ լինել անյարմարաւոր և անկարգ, և ևԹէ չափով և կշռով արարեալ է զերևելիքս՝ որ կորընչելոց են, ՓրպէՏ կարէր առնել խառն ՚ի խուռն զաներևոյԹս՝ որ կալոց են ընդ իւր անվախձան։

Ասացի գարձեալ զյաւիտենական խորհուրդս Աստուծոյ ՚ի վերայ իւրաքանչիւրոցս կենաց պայմանի. զի ոչ միայն ստգտանեմք զգնացս նորա յաւիտենականս վասն աղգի մարդկան, այլ և վասն մեր իւրաքանչիւր։ Խոզոքեմք ընդդէմ նախախնամուԹեան նորա՝ ԹէՀ ընդՓր կացոյց զմեզ յայսմ կամ յայնմ կայի, ուր տկարուԹեան մերում կան առաջի ժայռք անհրաժեշտք. տհաճիմք վասն տալոյ նորա մեզ պայման անմիաբանելի ընդ պարտս՝ զոր ՚ի վերայ մեր դնէ. տրտնջամք՝ զի արքունիք, զի գինք, զի պաշտօն, յորս մեծուԹիւն մեր և աղնուականուԹիւն զմեզ կաշկանդէ, հեռացուցանեն զմեզ ՚ի փըրկուԹենէ, և առնեն մեզ զայն գոգես անկարելի. ԹուիլՔ մեզ՝ զի յայլում իմիք կայի փրկեաք ՚ի սոսկական կեանս՝ հեռի ՚ի ծանուցից փորձուԹեանց. յեղափոխել կամիմք

ջաւիտենական սահման նախախնամուԹեան յայլ իմն ապահովագոյն ըստ հաճոյս մեր, քան զայն՝ զոր իմաստուԹիւն իւր երկրպագելի սահմանեաց մեզ։

Ոչ խորհիմք՝ զի Աստուած տայ զչնորհս ըստ պայմանի կենաց, զի ուր կացուցանէ նա զմեզ՝ ոչ միայն չէանեն մեզ ժայռք ընդ առաջ, այլ անդ գտանեմք զօճանս փրկուԹեան. զի առաւելագոյնք ՚ի վտանգաց և ՚ի փորձուԹեանց՝ զորոց տրտնջեմք, յառաջ գան ՚ի կրից մերոց քան ՚ի կայից։ Ոչ խորհիմք, զի տկարուԹիւն իսկ մեր, որ տայ գտանել մեզ վտանգս յաչխարհի և յարբունիս, յառաձնուԹեան ևս տայ զչնորհսիկ գտանել. զի ՚ի մեզ ինքեանս բերեմք զպատճառս մեղայ մերոց և աղետից. և զի չէ պարտ խնդրել զապահովուԹիւն մեր արտաքոյ և յայլում պայմանի կենաց, այլ ՚ի զգուշուԹեան՝ զոր պարտ է մեզ ունել ՚ի վերայ անձանց մերոց։ Ոչ խորհիմք՝ զի յորմէ և իցէ պայմանի կենաց՝ է վտանգ. զի սուրբք ամենայն ուրեք, և յարբունիս և յանապատի ամենայն ճգամբք ապահովեցին զփրկուԹիւն իւրեանց. զի մոլորուԹիւն է կարծել՝ ԹէՀ իցէ ուրեք յերկրի տապնաշ ձրի առանց ծանուցից վաստակոց զփրկուԹիւն. զի ցնորք մտաց մերոց ոչ խոստանան մեզ ապահովուԹիւն ՚ի պայմանի կենաց, ուր չկարեմք կալ՝ բայց միայն առ ՚ի կեալ անխռով՝ ՚ի զառանցանս մեր. զի անձնասիրուԹիւն ըմբռնէ զմեզ յար ՚ի խաբս, և առ ամենքեցուց զմոլորուԹիւն մեր՝ տայ ստգտանել զպայման կենաց մերոց, որպէս զի մի զանձինս ստգտանիցեմք։

Զի՞ ևս երկարեմ, ոչ խորհիմք՝ զի ևԹէ ծանրագոյն են վտանգք ՚ի բարձրուԹեան, յորում ծնեալս եմք, քան րնկիք ևս զորս կարեմք առնել անդ՝ առաւելագոյնք են և երևելիք. զի ևԹէ յաճախագոյնք են վտանգք անկման, են ևս առաւելագոյն դէպք վաստակոց և առաքինուԹեան. զի հրապոյրք և տեսարանք մեծամեծք՝ որ շուրջ պատեն զմեզ՝ ոչ այնչափ որոգայԹք են, քան ԹէՀ

խրատք· զի արքունիք ուր պայման կենաց մերոց տայ մեզ կեալ, ընծայէ մեզ հանապազ դէպս խելամուտ լինելոյ պատրանաց նորա, և զդոյշ կալոյ· զի տաղտկութիւնք իւր պարսպեն զսիրտ ի վտանգաց, և դառնութիւնք իւր նշաւակեն զբերկրութիւնս, զի անհաստատութիւնք նորա և յեղափոխութիւնք ցրտացուցանեն զակընկալութիւնս· զի ունայնութիւն նորա և տաղտուկ իւրոց զբօսանաց կոչեն զմեծ ի լքեալսն և ի հաստատագոյն կենացաղ· և գրժանք և ստութիւն բարեկամութեանց նորա տան մեզ խնդրել զբարեկամութիւն Աստուծոյ մշտնջենաւոր և հաւատարիմ· և առանց յերկարելոյ, գտանեմք ի չարիս իսկ անդ զդարման նոցին, զի խմաստութիւնն աստուածային հոգացեալ է սքանչելի ինն անտեսութեամբ զկերկութիւն ազգի մարդկան, զի որ և է պայման կենաց ունի զվոխարէնս վտանգաց, և գոգցես զապահովութիւն, և զի նոքին իսկ վէրքն բերեն յինքեանս զսպեղանի բժշկութեանն։

Տէր Աստուած մեր, դու այդպէս երկայնամիտ, դու այդպէս բազումողորմ ես գտաւուր գործոց մերոց· իսկ մեք քոյոցդ բազմիմք գառն գտաւուրք, կոչեմք անդադար զքեզ յաւուրս, ուր դու զքոյդ յապաղես· մեք հանապազ պահանջեմք համար զերկրպագելի կարգաւորութեանց քոց· իսկ դու յամես ի պահանջել զահագին համարն՝ զոր պարտ է մեզ տալ զնորհրդոց և զգնացից մերոց։ Ջինչ առնել էր մարդոյ, Տէր իմ, եթէ նոյնպէս վարէիր դու ընդ նմա, որպէս վարի նա ընդ քեզ. եթէ կամէիր մեզապարտ առնել զնա, որպէս Թուխ Թէ կամի առնել նա զքեզ. եթէ հայհոյէր ի Թեոդոսիանոս նորա նովին խիստ ակամբ, որով ինքն հայհոյէ ի աքանչելիս քո։ Այս առաջին պատճառք ապստամբութեան մերոյ ընդդէմ կամացն Աստուծոյ, հպարտութիւն բանականութեան։ Իսկ երկրորդ՝ չարաչար և անկարգ անձնասիրութիւն. և այս է միւս այլ նուէրը համակամութեան ընդ

Աստուծոյ, զորոյ տայ մեզ սուրբ Կոյսն այսօր զօրինակ։ Եթէ ըստ մարդկային ևէթ խորհրդոց վարէր նա, էին նմա ամենայն պատճառք ազատ կալոյ յօրինաց անտի Աստուծոյ հարցն իւրոց· իրաւունք աստուածամայրութեանն, աքանչելիք ծննդեանն, ամօթ իսկ աղքատութեանն, և փանաքութիւն նուիրացն, թուէին կասեցուցանել զսիրտ նորա ի հնազանդութենէն՝ զոր կամէր Աստուած, այլ ոչ լուաւ նա ձայնի մարմնոյ և արեան. խորհեցաւ՝ զի առաջին նուէրը, զոր խնդրի ի մէնջ Աստուած, է նուէր անձին. և բաղում այն է՝ զի այն միայն է նուէր աստուածահաճոյ, որ ծանրագոյնն է մեզ։

Եւ ահա, տեսէք եղբարք, ուսոյ յառաջ գայ դարձեալ գժկամակութիւնն, զոր գտանեն կամք Աստուծոյ ի սրտի մերում։ Զի որովհետև զամենայն ինչ վերաբերեմք առ մեզ միայն, մանաւանդ մեծամեծաց է այս ախտ, և ծառայեցուցանեմք մեզ զամենայն՝ որ ինչ չորրէ է զմեզ, որպէս թէ ամենայն ինչ վասն մեր միայն եցէ ստեղծեալ, որովհետև ոչ ինչ փոյթ է մեզ զանցից՝ որ անցանեն յաշխարհի, բայց միայն ըստ հայեցմանն նոցա ի մեզ, և համաւօտիւ՝ այնպէս կենցաղավարիմք, որպէս թէ մեք միայն էաք յաշխարհի, և աշխարհ ամենայն լեալ էր վասն մեր միայն, կամիմք զի ի մեզ միայն պարապեսցի Աստուած, զի ըստ խորհրդոց անձնասիրութեան մերոյ անօրինեսցէ զամենայն, զի վասն մեր գործեսցէ զամենայն, զի զամենայն՝ ինչ յօգուտ մեր միայն կարգեսցէ, և զամենայն ինչ յաշխարհի աստ վասն մեր միայն պատրաստեսցէ, և փոխանակ լինելոյ անօրէն սիեզերաց և Աստուած ամենայն արարածոց՝ լինի միայն Աստուած ըղձից մերոց և հաճոյից, այսր աղագաւ մեք՝ որ հանդերձ ամենայն իշխանութեամբ մերով և բարձրութեամբ և աղնուականութեամբ եմք որպէս կէտ մի աներևոյթ ի մէջ լայնատարած տիեզերաց, կամիմք կազմածոյս այսմիկ մեծի չարժել ըստ ըղձից մերոց, ամենայն պատահարաց յարմարել

տեսութեանց մերոց, արեգական եւ լանեւ եւ մոռանել վասն մեր միայն. կամիմք լինել ուշ նպատակի ամենայն խորհրդոցն Աստուծոյ, որպէս կացուցանեմք զմեզ միակ կէս ամենայն տեսութեանց մերոց եւ առաջարկութեանց ի վերայ երկրի:

Ասաւ է նախ՝ զի վիշտք ոչ ևս գոանեն զմեզ համակամն ընդ Աստուծոյ որպէս ի յաջողութեան, զպատահարս՝ ըստ հայեցողութեանն ևեթ ի մեզ գտեմք. վասն որոյ ընդ ամենայն ինչ՝ որ վայրիկ մի աղմկէ զհաճոյս մեր, կամ խռովէ զհպարտութիւն եւ զինասիրութիւն առաջարկութեանց մերոց եւ ակնկալութեանց, գառնանամք եւ գժկամակիմք. թեեւ ինչ արիած ընկճէ զմեզ, եւ արտնջամք զՏեառնէ. համարիմք թէ անիրաւիցի մեզ եւ խստանայցէ, մեք՝ որ ի բարձրութեան եւ յառաջութեան, յորում ծնեալ եմք, ոչ կրեմք գոգցես եւ ոչ ինչ. մեք՝ որք ընդ թեեւ ինչ վշտաց այնքան ունիմք փոխարէնս բաւական ի յագեցումն անձնասիրութեան մերոյ. մեք որ ոչ իսկ ճանաչեմք, որպէս Մարգարէն ասէ, զառատասիոն եւ զդառնութիւն՝ զորս կրեն այլք, եւ վայրկեանք մեր տխուրք՝ են վայրկեանք նոցա բարեբաստք: Ո՜հ, զի խիթալի մեզ այն է, եթէ ոչ խառնեսցէ Տէր դառնութիւն բաւական ընդ բերկրութիւնս՝ որ շուրջ են զմեզ, թէ գուցէ ներեսցէ մեզ լինել կարի երջանիկս ի վերայ երկրի, թէ գուցէ թողուցու մեզ վայելել յանխռով խաղաղութեան ի բարեմասնութիւնս՝ յորս ծնեալ եմք, եւ ոչ հաճեսցի այց առնել մեզ վշտիւք ըստ մեծի՝ողորմութեան իւրում: Պարտ է մեզ զպրոցեալ ի վերայ մեր համարել զԱստուած, եթէ ամենայն ինչ յաջողէ ըստ մեր, եւ հաճոյք մեր ոչ գտանիցեն արգելս, եթէ ամենայն ինչ զուարթադէմ ծիծաղեսցի յօժարութեանց մերոց, եթէ անձնասիրութիւն ևեթ մեր գոգցես անօրինեսցէ մեզ զամենայն: Քանի՛ երկիւղալի է մեզ յայնժամ, եղբարք իմ, զի որպէս ի ջոհս պատրաս-

տեալս ի զենուաճն հայի ի մեզ Տէր, ի դիրացուցեալս և ի զարդարեալս ծաղիամբք, վասն ածելոյ ընդ հուպ յողջակիզութիւն ի խարուկի:

Ասաի է գարձեալ՝ զի որովհետեւ յոյժ եմք անձնասէրք, և ոչ կարդեմք սահմանս ըղձից մերոց, ոչ շատանամք երբեք ընդ պայման կենաց մերոց, ընդ աստիճան բարձրութեան, և ընդ աւագութիւնս. միշտ թերի ինչ գտանեմք անյագ անձնասիրութեան մերոյ: Եթէ չունիմք զամենայն՝ որում ցանկամք, առ ոչ ինչ համարիմք զամենայն զոր ունիմք. հաշիմք և մաշիմք ի խորհուրդս մեր, ի պահանջմունս, յառաջարկութիւնս և ի դիտաւորութիւնս. չկարեմք վայելել խաղաղութեամբ և քրիստոնէաբար յոր ինչ աստուածախնամ տեսչութիւն տայ մեզ. խռովէ զմեզ որ ինչ թուի պակասել, առաւել քան զվայելս լուութեան բարեաց՝ զորս ժառանգեմք. ցորչափ մնայ տակաւին առաջի մեր ճանապարհ, ոչ շատանամք ընդ որ արարաքն. Աբբա Պաստանուբիան մը վերանայ հանապազ. որպէս ասէ Սալմոսերդան. հանգոյն նաւապետի՝ որ նաւարկէ ընդ անդունդս, ի հասանելն ցորվայր դիտեն աչք մեր ի հեռաստան, և ցորվայր յոյս մեր հասանէ, տեսանեմք ի նորոյ կիսաե անտի տեսութեան նորա նոր այլ քաղաքս և վայր անբաւ, որ գրգռեն զիղձս մեր. որչափ վերանամք՝ այնչափ առաւել տեսութիւն մեր ընդարձակի. և որչափ յառաջ անցանեմք, այնչափ և առաւել տեսանեմք առաջի մեր ճանապարհ. և ի հասանելն անդր՝ ոչ ևս է այն ըղձից մերոց կէս, այլ ճանապարհ առ այլ ուրեք հասանելոյ. տեղին ուր կամք՝ ոչ երբեք այն է ինդրեալն ի մէնջ. բախան զոր տայ մեզ Աստուած՝ ոչ երբեք է այն, որ մեզ է հաճոյ. հանճարեղք եմք առ ի թշուառացուցանել զմեզ. դաւակից լինիմք հանապազ ընդդէմ խաղաղութեան մերոյ. և առ ի աղաղակացուցանել զմեզ ի բաւոյ, որում ցանկացաք ընդերկար, շատ է զի նախախնամութիւնն ընդհատեսցէ մեզ զայն:

Աստ է դարձեալ՝ զի որովհետև անձնասիրութիւն մեր գրաւէ յինքն զսիրելըս, և համարիմք բաժին մեր ամենայն՝ որում ցանկամք, զաւագութիւնս և զփառս՝ յորոց վրիպիմք՝ համարիմք յափշտակեալս ի մենջ յանիրաւի և տուեալ այլոց: Ամենայն որ ինչ փայլէ ի վեր և առընթեր, շլացուցանէ զմեզ և խոցէ, նախանձոտ աչօք տեսանեմք զբարձրանալ եղբարցդ մերոց, յաջողութիւնք նոցա խռովէն զմեզ, զբախտ նոցա թշուառութիւն մեզ համարիմք, բարեբախտութիւնն նոցա հեղուն ի սիրտս մեր Թոյն՝ որ ծաւալէ դառնութիւն յամենայն կեանս մեր. գովութիւնք՝ զորս նոքա ընդունին՝ նախատինք Թուին մեզ և կորանք, զամենայն ինչ մեզ նպաստաւոր՝ չըջեմք ընդդէմ մեր. չկարեմք կամել զոր Աստուած կամի. ոչ շատ համարիմք զաղէտս մեր, այլ և զբարեբախտութիւն եղբարցդ մերոց չեզաչըջեմք մեզ ի Թշուառութիւն:

Եւ դարձեալ աստ է՝ զի որովհետև մեզ համարիմք պահեալ զնմաստութիւն, որ ինչ ոչ ըստ մտաց և ըստ տեսութեանց մերոց է ի կարգս իրաց աշխարհի՝ սաստկանեմք և դառնապարտեմք. ցանկալի էր մեզ՝ զի աւադութիւնք և պատիւք բաշխէին ըստ հաճոյից մերոց, զի տեսութիւնք մեր և խորհուրդք անօրինէին զբախտ հասարակաց, զի չնորհք ըստ գատողութեան մերում չնորհէին, և չանճանճանիք իրաց հասարակաց ըստ մտաց մերոց ուղղէին: Եպերեմք հանապազ զընտրութիւն տեարց մերոց. ոչ գտանեմք զոք արժանի աւադութեանն՝ ուր կայ. ոչ յարգեմք ըստ արժանւոյն զնմանեսութիւնն Աստուծոյ յարտաքին կարգս աշխարհի, և ոչ զկամս իւր սուրբս ի կամս և ի հաճոյս իշխանաց, յորոց ի ձեռս չիք այլ ինչ իշխանութիւն և զօրութիւն՝ բայց միայն լինելոյ բարձրագոյն պաշտօնեայք նախախնամութեան: Զկամիմք զոր Աստուած կամի, գտանեմք անիրաւութիւն, կիրս, և անհոգեմութիւն ի բաշխումն աւադու-

թեանց և չնորհաց. մարթ իսկ է՝ զի անիրաւեսցին մարդիկ, և ոչ արդարութեամբ արասցեն զընտրութիւնս. այլ Աստուած յամենայնի է արդար, և զսխալանս նոցա ի կիր արկանէ առ ի չնուռ զյաւիտենական խորհուրդս նախախնամութեան իւրոյ ի վերայ աղգաց և ինքնակալութեանց:

Քանի՛ մեծ է աշխարհ, եղբարք իմ, քանի՛ մեծագործ. որպիսի կարգ և խմաստութիւն և մեծագործութիւն ընծայէ աչաց մերոց վարչութիւն Թագաւորութեանց և ինքնակալութեանց, յորմ ամ զմտաւ ածեմք զԱստուած աներևոյթ վերատեսուչ աշխարհի, որ անօրինէ զամենայն ծագաց ի ծագս չափով կշռով և Թուով, առանց հրամանի նորա չանկանի մազ մի ի գլխոյ, ըստ կամաց նորա լինի ամենայն. որ զպատճառս պատահարաց հեռագունից նախատեսանէ, որ բովանդակէ ի կամս իւր զամենայն իսկ զդիպուածս, որ տայ աշխարհի իշխանս և Թագաւորս ըստ խորհրդոց արդարութեան և ողորմութեան իւրոյ ի վերայ ժողովրդոց. որ տայ խաղաղութիւն, կամ Թողացուցանէ պատերազմունս ըստ խորհրդոց խմաստութեան իւրոյ ի վերայ ընտրելոց իւրոց և եկեղեցւոյ. որ տայ արքայից պաշտօնեայս խմաստունս կամ զէղծս, Համանս կամ Ներոնեայս, առ ի պատժել զմեզս ժողովրդոց և կամ առ ի հաստատել զհաստատս ծառայից իւրոց. որ տայ յաջողութիւն կամ արկածս որպէս առաւել օգուտ իցէ ի կատարումն իւրոյ անտեսութեան. որ վարէ զընթացս մարդկային կրից, և անքննելի երկայնմտութեամբ ծառայեցուցանէ խորհրդոց ողորմութեան իւրոյ զչարութիւն իսկ մարդկան:

Ըստ այսմ տեսութեան նկատեալ աշխարհ, ընդ աչարչին՝ որ վարէ զայն, քանի՛ լի է կարգօք, յարմարաւոր ներդաշնակութեամբ և մեծագործութեամբ, տեսարան արժանաւոր հաւատոց: Իսկ եթէ բաժանես զայն Աս-

տուծոյ, և նկատես ինքնուրոյն, եթէ տեսանես ՚ի նմա զկիրս Աւետ մարդկայինս՝ որք Թուին շարժել զաչխարհ, եթէ ոչ ևս նկատես անդ զյաւիտենական կամս աստուածայինս՝ որ հոգին է նոցա անեղեայթ և շարժիչ ամենայնի, աւաղ, վիհ խոն գտանես և տեսարան խառնակութեան և խռովութեան, ուր ոչ ինչ ՚ի տեղոջ իւրում է, ուր ամպարիշտն վայելէ ՚ի վարձս առաքինութեան, և արդարոյ բաժին արհամարհանք են և պատիժք յոռութեան. ուր կիրք Աւետ են խորհրդականք. ուր մարդիկ կցորդին ընդ միմեանս շահախնդրութեամբ միայն՝ որով և բաժանին. ուր Թուի՝ դիպուածոց սահմանել զանցս մեծամեծս. ուր յաջողութիւնք դուն ուրեք են ցցյք և վարձք առաքինութեան. ուր փառասիրութիւն և յանդգնութիւն ամբառնան ՚ի բարձրագոյն աստիճանս՝ որոց երկիւղածութիւն է արժանի, և յորոց մերժին ՚ի բաց վաստակ և արժանաւորութիւն. ուր ոչ երևի ինչ բարեկարգութիւն, զի տեսանի միայն անկարգութիւն շարժմանց՝ զորոց ոչ է գիտել զպատճառս և զպէտս։

Ակսպիսի է աշխարհ բաժանեալ Աստուծոյ, և ըստ մերումս տեսութեան. զի ոչ տեսանեմք մեք անդ զգերբնութիւնն իմաստութիւնն, որ գոգոյս իմն խաղայ ընդ սիեզերս, կործանելով զպետութիւնս և զնիքնակալութիւնս, և այլս փոխանակ յարուցանէ յաւերակաց, յար փոփոխելով զանուն և զբախտ մարդկան, և Թողուլով զամենայն ընդ երկնաւ անհատատ և ՚ի մշտնջենաւոր խռովութեան, առ ՚ի իրատել զմեզ՝ զի յինքն միայն յարեսցուք, որ ոչ անցանէ, և միայ յաւիտեան անփոփոխելի։

Յաձախ ևս զգեմ ունիմք Աստուծոյ, պատճառանօք՝ որպէս Թէ խնդրելով զնա. և այս երբորդ պատճառ է հակառակելոյ մերոյ կամացն Աստուծոյ, սուտ առաքինութիւնն և յետին վանդ՝ յորմէ զգուշանալ մեզ օրինակ իւրով իրատէ Տէրամայրն։ Ասլաքէն եթէ անսայր նա նախանձուն իւրում ՚ի փառս Միածնին, և Թէ հայեր յեղանակ աստուածային ծննդեանն, և ՚ի պարտս զգուշութեան՝ զի մի հնազանդութեամբ օրինացն սրբութեան՝ Թուիցի խափան արկանել արգասեաց պաշտամանն իւրոյ, հաստատելով զանհատատութիւն ազգին իւրոյ, և զկարծիս՝ որպէս Թէ Աստուածորդին խչ որդի Յովսեփայ և Մարիամու, եթէ անսայր նա երկիւղին և եթէ՝ որ յառաջ գայր յօրինաստեղծութենէ անտի, պարտ էր նմա գոգոյս հրաժարել ՚ի հասարակաց օրինաց, և ոչ երթալ ՚ի տաճար անդր՝ տալ օրդոյ իւրում նշմարանս իմն մեզոց, որպէս մի յորդւոց Յուդայ կարծեցուցանելով զնա։ Այլ ինքն ոչ վատահացաւ ՚ի նախանձ՝ որ ոչ ըստ աստուածային օրինաց էր, ոչ կամեցաւ այլազգ զիրկութիւն ազգի մարդկան և զիշատս Աստուածորդւոյն, այլ որպէս Աստուած կամէր. և ոչ ինչ Թուէր նմա աներկիւղ, ևս և ՚ի մասին առաքինութեան, բայց միայն որ ըստ կամացն Աստուծոյ էր։

Այո, եղբարք, չիք ինչ բարի վասն մեր, բայց որ ինչ Աստուած կամի. ամենայն բարեպաշտութիւն, որ չնչէ հաստատեալ ՚ի մշտնջենաւոր համակամութեան ընդ Աստուծոյ, է առաքինութիւն սուտ. է անձնասիրութիւն դատ և վանգաւոր, քան աստուածասիրութիւն։ Սմին իրի պակասէ ՚ի մեզ գոգոյս միշտ բարեպաշտութիւն, ոչ կամիմք դնալ առ Աստուած ընդ ճանապարհ՝ զոր ինքն պատրաստէ մեզ, և կացուցանեմք զառաքինութիւն՝ ոչ ՚ի կամել զոր ինքն կամի, այլ ՚ի հեաւեել և ՚ի լսել կամաց մերոց։

Քանզի պարտք պայմանի կենաց մերոց անհաճոյ է մեզ, փոխանակ այնոցիկ առնեմք ըստ կամ՝ որ ինչ ոչ խնդրէ ՚ի մեզնէ Աստուած։ Իսկ՝ օր կատեալ զոգիս սուրբ հարսանեաց, աղօթել ախորժէ. մտադիւր ՚ի գործս ո-

ղորմութեան պարապէ, անցուցանէ զօրն ողջոյն յաւանձնութեան և յընթերցումն սուրբ գրոց անձանձիր, սիրէ սփոփիլ զԵկեղեցաւս. այլ չէ ինչ նմա հաճոյ հնազանդութիւն և փոյթ ի հաճել զայր իւր, հեզութիւն փոխադարձ, հպատակութիւն որ կցորդէ զոգիս, և զոր Աստեղեան մեծաւ խնամով պատուիրէ կանանց հաւատացելոց, զԿնջումն՝ որ համակարիս առնէ զամուսինս, և յորդորէ ի յարգ և ի գութ առ միմեանս, և առաջնին երից հոգ՝ որ բարեկարգէ զընտանիս, պահէ զհաղաղութիւն, խափանէ զանկարգութիւնս և զդայթակղութիւն տարաձայնութեանց, և բնակեցուցանէ զԱստուած ի մէջ երկիւղած աղգատոհմին: Սիրեմք որ ինչ ոչ խնդրէ ի մէնջ Աստուած և որ ինչ կամ Աստուած՝ ոչ է մեզ հաճոյ. և բաղում այն է, զի երկիւղածութիւն հաւատարիմ կնոջ՝ փոխանակ լինելոյ աղբիւր խաղաղութեան, քաղցրութեան, մխիթարութեան բարեպաշտ ընտանեաց, և ածելոյ զայրն անկրօն ի զգաստութիւն, ուծացուցանէ զնա և դառնացուցանէ, թերացեալ յակնածութենէ և ի հաճոյից նորա, և լինի պատճառ հակառակութեան և տարաձայնութեան, և զառաքինութիւն՝ որոյ պատուղ է խաղաղութիւն, առնէ խիթալի որպէս ծնուցիչ դառնութեանց և խռովութեանց ի մէջ ընտանեաց:

Երկրորդ՝ եթէ Տէր Թողու զմեզ ընդերկար ի հիւանդութեան, ասաի համարիմք զտաղտկութիւն մեր և զթերութիւն ի ծառայութեան Աստուծոյ. կարծեմք զի ի հաստատէն յառողջութեան կարկեցեմք ընուլ զամենայն պարտս բարեպաշտութեան, որոց անկարօղ գտանիմք ի հիւանդութեան. ոչ խորհիմք՝ զի բարեպաշտութիւն է հնազանդել Աստուծոյ, յօգուտսուրբ ի կիր արկանել զակարութիւնն՝ յորում Թողու նա զմեզ, է աղօթել, է մեռուցանել զանձն, է պարապել ի գործս ողորմութեան. զի ի սմա բովանդակի ամենայն, զի լաւ և քան զմեզ գիտէ Աստուած որ ինչ ի մեզ է մեզ, զի ոչ մեզ է անկ ընտրել զձանապարհ մեր, այլ ի համակամութեան ընդ Աստուծոյ է ամենայն կատարելութիւն հաւատոց, և ապահովութիւն հաւատացելոյ:

Երրորդ՝ անհամբերութեամբ տանիմք թերութեանց մերոց, և բեռն եմք անձանց. պակասութիւնք, յորս գթեմք զօրհնասպաս, խռովեն զանձնասիրութիւն մեր, և տաղտկալի առնեն մեզ զառաքինութիւն. ցանկամք չօնել զինչ ի մեզ տգեղանելի, կեալ հաճք և հաւանք զմինչ, դրուատել զմեզ գաղտ վասն առաքինութեանց մերոց, և վայելել ի հաճոյական վկայութիւն խղճի մերոց. Թերութիւնք բառնան ի մէնջ զնաղաղութիւն, և թուլացուցանեն զմեզ ի ճանապարհի Տեառն. զի խռովեն զհանգիստ մեր բոլորովին մարդկային, և խոնարհեցուցանեն զծածուկ հպարտութիւն, որ հետազօտ ի ներքս ի մեզ զընական հաճութիւն. չգիտեմք նկատել զայնոսիկ ըստ աստուածային կարգաւորութեան, և քաղել անտի ղօգուտն առաջարկեալ յԱստուծոյ: Կամի Աստուած՝ զի ահիւ և դողութեամբ գործեսցուք զփրկութիւն մեր, իսկ մեք կամիմք ամենայն ապահովութեամբ գործել զայն. կամի Աստուած հաւատովք առաջնորդել մեզ, իսկ մեք կամիմք զնալ առ նա լուսով բանին. կամի Աստուած՝ զի լցեմք անստոյգ՝ սիրոյ լցեմք արժանի թէ առելութեան, իսկ մեք յետ թերեւ ինչ ձգանց ապաշխարութեան և բարի գործոց՝ կամիմք լինել աներկեւեան որպէս հաշտուն եղեալ ընդ մեզ զԱստուած. կամի նա՝ զի կեցցուք միշտ յինքն միայն հաստատեալ, իսկ մեք խնդրեմք նեցուկ ինչ մարմնեղէն ի մեզ. կամի Աստուած՝ զի Թողցուք ի ձեռս իւր զբախտ մեր, իսկ մեք խնդրեմք ի ձեռս մեր ունել զայն. միանգամայն ասացից, կամի Աստուած՝ զի փրկութիւն մեր կախեալ կայցէ զինքեանէ, իսկ մեք կամիմք՝ զի զմինջ միայն կախեցի:

Չորրորդ՝ եթէ մեզաւորք իշխանութիւն առեալ ի

վերայ իրաց հասարակաց, խափան արկանեն բարւոյ մերումն նախանձու, յարուցանեն հակառակութիւնս ընդդէմ գործոց պիտանեաց բարեպաշտութեան, ոչ ևս պահեմք զջափ եղբայրսիրութեան ընդ նոսա. իրաւունս համարիմք յարձակել բանիւք ընդդէմ չար գիտաւորութեան նոցա, հոլանել զխաչս նոցա, ցուցանել զնոսա թշնամիս հասարակաց, ամենայն բարեաց, և ամենայն արդարութեան. պատճառանօք ողբալոյ զկուրութիւն նոցա, անձամբ զանձինս կուրացուցանեմք. և փոխանակ ըռնելեացն խնդրելոյ ի Տեառնէ փոխել զսիրտս նոցա, և Աստուած ապաստան առնելոյ զօգուտ եկեղեցւոյ, զի ինքն գիտէ պաշտպանել նմա ընդդէմ չարութեան և բռնութեան մարդկան, կարծեմք զի պաշտպանութիւն կրօնիցդ տայ մեզ իշխանութիւն անցանել ըստ օրէնս իսկ կրօնից:

Եւ հինգերորդ՝ անկարգութիւնք այլոց, հաւասարակացդ մերոց և տերանց, ընդ որս պարտ է մեզ կեալ, անտանելի թուին մեզ, և ձախողակի առաքինասիրութեամբ իշխեմք դատել զնոսա, չարահամբաւել և զայրացուցանել. տրտնջիմք զիշուառութենէ մերմէ, զի զօդիս պարուց և ընկերութեան պարտ է մեզ կենալ կից լինել ընդ սոսա՝ որ կեան հեթանոսաբար, առանց կրօնից և երկիւղածութեան. քաղցր թուի մեզ կեալ ընդ անձինս հաւատացեալս համախորհուրդս ընդ մեզ. և զայրացմամբ և դառնութեամբ մերով առելի առնեմք նոցա ընդ մեզ և զկրօնս: Սոգտանք մեր դառնինք անօգուտս առնեն զօրինակս մեր բարիս. կարծեն նոքա զի և առաքինութիւն որպէս զմեզ խնամ իցէ և գժպհի, անգութ և լի դառնութեամբ յանդգնութեան. որով ոչ միայն չյորդորեմք զնոսա ի կրօնս համբերութեամբ, այլ և հեռացուցանեմք արհամարհութեամբ և իբր ոտնահար լինելով ախտից նոցա, փոխանակ կարեկից լինելոյ տկարութեանց նոցա հեզութեամբ և եղբայրսիրութեամբ:

Համակամութիւն ընդ Աստուծոյ առնէ մեզ, եղբարք իմ, եթէ օրէն իցէ ինձ ասել այսպէս, պատկառելս զմեղաւորս, մոռնանէ նա զմեզ ի խորհուրդս աստուածային խնամատարութեան ի վերայ նոցա, որ գիտէ առնել զնոսա պիտանի ի փրկութիւն ընտրելոց, և ածել զնոսա յաճախ յաւելաչխարութիւն և ի փրկութիւն ընդ նոյն այն ճանապարհ անկարգութեան իւրեանց: Ըստ այսմ տեսանէ զնոսա առաքինութիւն ի ձեռին Աստուծոյ. համբերէ նոցա սիրով, զի Աստուած և երկայնամտէ նոցա. սիրէ զնոսա, զի մարթ է նոցա բարեկամանալ ընդ Աստուծոյ, և զի են պիտանի խորհրդոց աստուածախնամատեսչութեան. ակն ունի հասանելոյ ժամանակի չնորհաց վասն նոցա, երկրպագէ յաւիտենական կարգաւորութեան՝ որ դնէ սահման կրից մարդկան, որպէս բռնութեան ալեաց ծովու: Կամէ զոր կամի Աստուած կամ թողու վասն մեր, անմեկնելի է յառաքինութենէ. պարտ է մեզ վշտանալ ի մեղաց, այլ սիրել միշտ զմեղաւորս:

Ըստ այսմ օրինակի չիք ինչ՝ որ առաւել ազդէ ի մեզ հեզութիւն, սէր և գութ առ մարդիկ, քան նկատել ի նոսա միշտ զկամս Աստուծոյ: Առելի են նոքա և անձանց՝ ցորչափ ի մեզս կան, չիք երկբայել ընդ այս, այլ ի կարգաւորութեանն Աստուծոյ արժանի են միշտ սիրոյ մերոյ և ակնածութեան. ապաստաւորեն նոքա ի կատարումն խորհրդոցն Աստուծոյ. իցեն թերևս և սահմանեալ ի մտանել անդր յաւուրս միւս: Վասն որոյ պարտ է մեզ հայել վշտագին ի յառաքինութիւնս նոցա, այլ համբերութեամբ. յանդիմանել զնոսա՝ եթէ իցեն ընդ ձեռամբ մերով, այլ համբերել նոցա սիրով, ապաստել դարձի նոցա եռանդեամբ, երկայնամտել անխռով, և ոչ համարել առաքինութիւն զկորուստն ի մեզաւորաց, այլ զցանկալ ի սրտէ ապաշխարութեան նոցա:

Այսոքիկ են երեքին պատճառք վտարանդութեան

մերոյ ՝ի կամացն Աստուծոյ, և երբեակ նուէրքը՝ զորոց տայ մեզ այսօր սուրբ Կոյսն զօրինակ. այլ յետ ցուցանելոյ զարդելը՝ որ խափանեն ՝ի մեզ զհամակամութիւն ընդ Աստուծոյ, պարտ է ինձ ցուցանել և զօգուտս և զխնդութարութիւնս՝ որք օգնեն մեզ հնազանդել կամաց նորա:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Երբեակ աղբիւրք, բերրիք աղետից, կազմեն զըՀշուառութիւն և զամենայն անձկութիւնս մարդկային կենաց. մեռոտ նախատեսութիւնք ապագայից, յուզմունք սրտի բազմապատիկ զվերձակայից, և անօգուտ արտմութիւնք զանցելոց: Հանդերձեալք խոռվեն զմեզ երկիւղիւ և յուսով. մերձակայք յուզեն զսիրտ մեր վշոք և արկածիւք. և անցեալք տանջեն զմեզ, յանդիման առնելով գժպհի լիշատակաւ զչարիս, զորս պարտ էր Ժամանակին առնել անյիշատակ: Այսոքիկ են պատճառք Հշուառութեան ՝ի վերայ երկրի, որոց ոչ ըստ հաւատոց կեան, և ոչ հնազանդին կամացն Աստուծոյ:

Արդ հնազանդութիւն կամացն Աստուծոյ տայ մեզ ապահով ապագայից անխռով, տեսանել խաղաղութեամբ զվերձակայն, և յիշել զանցեալն առ ՝ի յօգուտ. և յաՄենայնի յայսոսիկ գտանել ՀԱստուած, մշտնջենաւոր համակամութեամբ ընդ նմա, զխաղաղութիւն և զմխիթարութիւն, զոր մեզաւորն չկարէ գտանել երբեք յախտս իւր և յանձին:

Այսպէս նախ՝ զի հնազանդութիւն կամացն Աստուծոյ տայ մեզ ապահով ապագայից անխռով, որպէս եան Մարիամու այսօր ՝ի տաճարին: Բանի՛ աղմուկ ոչ յուզեաց ՝ի սուրբ սրտի նորա գուշակութիւն ծերունւոյն

Սիմէոնի վասն հանդերձելոց անցից Աստուածորդւոյն. զկուցեանէր նմա՝ զի սուր ցաւոց անցանելոց էր ընդ մայրենի սիրտ նորա. զի Աստուածորդին լինելոց էր նշանակ հեթից անօրինաց, և ՝ի նշան հակառակութեան Ժողովրդեան իւրոյ, ՝ի դէպրուճն և ՝ի կանգնուճն բազմաց: Քանի՛ խռան երկիւղի և վշտաց և կասկածանաց էր պարտ խռովել զնազաղութիւն ոգւոյ նորա. սակայն նա ընկէց ՝ի Տէր, ըստ Մարգարէին, զամենայն հոգս իւր և զանձկութիւնս. տեսանէր նա զՀանգերձեալսն ՝ի կարգի և ՚ի հեթ իմաստուն և անյեղլի աստուածային և յաւիտենական կամաց, կանուխ երկրպագութեամբ խորհրդոց Հօրն երկնաւորի ՝ի վերայ Աստուածորդւոյն. և յանձն էառ զամենայն առանց հետաքննելոյ դիտել ինչ, Թողեալ անխռով խաղաղութեամբ ՀԱստուած միայն որ ինչ լինէն հայեր, զի էր հնազանդութիւն իւր բոլորանուէր:

Այո՛, եղբարք, հոգք ապագայից կազմեն զԹոյնս դառնագոյնս մարդկային կենաց, և Թշուառ են մարդիկ, զի ոչ գիտեն կալ ՝ի սահմանի մերձակայից իրաց: Վաղվաղեն զվիշտս իւրեանց և զսաստկացս հոգովք. հետաքրքրեն զապագայս առ ՝ի լինել Թշուառ, որպէս Թէ ոչ բաւիցեն մերձակայք ՝ի խռովել զնոսա. ստեղծանեն իւրեանց ցնորս ահարկուս, որպէս Թէ չիցեն բաւական աղէտք իրականք. տանջին անդադար վասն վաղուին, որպէս Թէ չիցէ շատ աւուրն չար իւր. ոչ խորհին առաւել քան զայս, բայց առ ՝ի խռովել առաւել. չեն հեռահայեացք, բայց առ ՝ի տեսանել զիւրեանց աղէտս. չեն խմաստնագոյնք, բայց յառաջագոյն երկիւղ և ՚ի տագնապ. չեն առաւել նախատեսք, բայց առ ՝ի լինել Թշուառագոյնք և տագնապալք առաւել քան զանխոհեմս և զխօթամիտս: Ի նշանոյ ասի կարէք ձանաչել զձեզ, եղբարք իմ. զի զինչ են կեանք արբունեաց, բայց մտայուղութիւն մշտնջենաւոր զապառնեաց, և խռո-

վութիւն տաժանաւոր էրկիւղի, նախահօդ ղդուչու-
թեանց և ակնկալեաց: Երկիւղի, զի ամենայն պատա-
հարք ընծայեն մեզ նորանոր էրկիւղ. ամբարձումն նա-
խանձորդի յաւելու մեզ կասկածանս չարեաց, ընորհք
Թշնամւոյ ցուցանէ մեզ 'ի հեռուստ զկորուստ մեր.
գէմք իշխանի, ոչ որպէս յառաջն քաղցրահայեաց, տայ
մեզ դուշակիչ մոռացօնս և կործանումն: Նախահօդ
ղդուչութիւնք. հոգւամբ հանապազ 'ի խնդիր ընորհաց՝
որք խուսափին 'ի մէնջ, և խոյս տալ 'ի գառնութեանց
և 'ի վշաց՝ որ սպառնան մեզ: Եւ ակնկալիք փառաւոր
ապառնեաց՝ որ հաճոյ են մեզ, այլ առ 'ի հասանել
այնց՝ պարտ է մեզ փոխանակել զհանգիստ և զամենայն
հաճոյս մերձակայս. բարեբաստութիւն մեր է 'ի ցնորս
ևեթ մոռաց, որ խոստանայ մեզ զկեան. իսկ ապաստաւո-
կութիւնք և վիշտք 'ի սրտի մերում, որ զդայ զկնոսիկ
և տանջի յայնցանէ:

Այլ որ հնազանդն է կամացն Աստուծոյ, ոչ կրէ
զյուզմունս զայսոսիկ, զահ և զերկիւղ և զհոգս, որք
տագնապեն զմարդիկ. գիտէ զի սահմանեալ է ապագայն
'ի խորհուրդս յաւիտենականս աստուածախնամ տես-
չութեան. զի եթէ ամենայն հոգք մեր և տագնապք չկա-
րեն փոխել և զհերոյ 'ի վարսից զդէմն, առաւել ևս զան-
յեղլի կամս նորա և զկարգադրութիւն. զի չէք ինչ վտանգ
'ի վատահելոյ 'ի նա յամենայնի՝ որ դալոցն է. զի մխի-
թարութիւն խակ մեծ է գիտել՝ թէ է Աստուած յամե-
նայնի՝ որ հայի 'ի մեզ, և մեծ ևս միխիթարութիւն՝ զի
սուրբ գիրք խրատեն զմեզ 'ի նա միայն ընկենուլ զհոգս
մեր, և ինքն յանձն առնու խնամել զապագայս մեր, և
մեզ ոչ այլ ինչ հրամայէ՝ բայց հաւատովք և սրբու-
թեամբ վարել մերձակայիւքս:

Իբր ոչ եթէ կամին կրօնք ընդ անգործութիւն մեր
և ընդ յանդգնութիւն, որպէս թէ առ 'ի լինել 'ի կամ
Աստուծոյ ապաստան՝ պարտ իցէ մեզ 'ի բաց թողուլ

զամենայն փոյթ և խնամ, և արհամարհել զնախահօդ
ղդուչութիւն. այլ հաւատացեալն ապաւինի Աստուած,
և ոչ թէ փորձէ զինս. ճգնի՝ որպէս թէ զձգանց իւրոց
կախեալ կացցէ ամենայն, և խաղաղութեամբ կայ ինայ
պատահարաց, զի 'ամենայն ինչ ըստ կամացն Աստուծոյ
պատահէ. գիտէ՝ զի անկ է մեզ զամենայն հնարս հայ-
թայթել, այլ գիտէ ևս հաւատովք՝ զի 'ի Տեառնէ միայ-
նոյ է յաջողութիւն. ընտրէ խոհեմութեամբ զհնարս,
այլ միամիտ հնազանդութեամբ մնայ էլից իրաց. և հա-
մառօտիւ ասացեալ, խոհեմութիւն է առաքինութիւն
հաստատակաց արդարոյ և մեղաւորի. այլ խաղաղութիւն
և անդորրութիւն սրտի՝ արդարոյ միայն: Հաստատակաց
ասեմ, այլ զանուն ևեթ խոհեմութեան. զի քանի՛ այլ-
ազգ է խոհեմութիւն քրիստոնէական հնազանդ կա-
մացն Աստուծոյ 'ի մարդկային խոհեմութենէ. Առա-
քեալն Յակովբոս ուսուցանէ մեզ զայս:

Խոհեմութիւն արդարոյ, նախ՝ որպէս ասէ նա
ինքն, սուբբ է. ոչ ճանաչէ նա այլ հնարս օրինաւորս,
բայց միայն զորս ներէ խիղճ մտաց, և ընդ որս հաւանին
կրօնք. ոչ երբեք լինին նմա մեղք 'ի ճանապարհ հաստա-
նելոյ 'ի կէտ իւր, և ամենայն խոհեմութիւն՝ որ ոչ կարէ
կալ ընդ փրկութեան, Թուի նմա ծայր յիմարութեան:
Իսկ խոհեմութիւն մեղաւորի է պլշէ և ապականեալ-
մանէ զխիղճ մտաց առ 'ի հասանել գիտաւորութեան
իւրում, առ ոչ ինչ գրէ զմեղս և զմոլար գնացս, եթէ
միայն ան նմա յաջողութիւն. խնդրէ յաջող ելս կորըս-
տեամբ խակ հոգւոյն. և ամենայն ինչ՝ որ կարէ լինել նմա
պիտանի, Թուի նմա անմեղ:

Խոհեմութիւն արդարոյ է դարձեալ՝ հէգ և խաղաղ-
արար. զանձք և հնարք իւր են միշտ հանդարտք, զի ըստ
կամացն Աստուծոյ են. ոչ խնդրէ նա այլ ինչ ելս, բայց
զոր Աստուած կամի. և 'ի նախահօդ ղդուչութիւնս իւր
ջանայ առաւել հնազանդել Աստուածոյ՝ որ խնդրէ զայնս

ոիկ յիւրմէ, քան հաճել զանձն: Իսկ մեղաւորին հնարք և ղդուշութիւնք միշտ են անհանգարտք, զի չեն ըստ կամացն Աստուծոյ. զբարեբաստութիւն իւր հաստատէ նա ոչ 'ի հրամանս Աստուծոյ, այլ յերկս հնարիցն. խընդրէ նա զնաղաղութիւն երկից իրացն, և ոչ գհնազանդութեան. խոհեմութիւն իսկ իւր է աղբիւր վշտաց իւրոց և անձկութեանց:

Երրորդ՝ խոհեմութիւն արդարոյ է հէք: Ծորշի նա 'ի փառասէր խորհրդոց. տեսութիւնք իւր համեմատք են իւրում պայմանին. գիտէ չափ դնել ըղձից իւրոց. խորհի առաւել օգտակար լինել, քան բարձրանալ. հեզութիւն իւր է գանձարան, ուստի ընդունի զնաղաղութիւն և զապահովութիւն անմեղութեան իւրոյ: Իսկ խոհեմութիւն մեղաւորին է անդոհ. նորանոր հնարս հնարի միշտ, զի միշտ 'ի նորանոր խորհուրդս մտաբերէ, ըղձից նորա ոչ ևս են սահմանք. որ ինչ և չողոմ զնա՝ 'ի դէպ Թուի նմա. բարձրագոյնք 'ի կայից բազմավոանդք՝ ոչ երկեցուցանեն զնա. վոանդք որ ամբառնան զնա՝ ոչ ևս են վոանդք. ձախողութիւն հնարից իւրոց է միայն վոանդ՝ յորմէ երկնչի, առ ոչ ինչ գրկ և զկորուսութիւն իւր գնել 'ի կշիռ, եթէ միայն յապահովել կարիցէ զմեծութիւն:

Չորրորդ՝ խոհեմութիւն արդարոյ է հլու և դիւրահաւան: Ոչ վստահի նա 'ի խորհուրդս իւր, առաւել յուսայ յօդնականութիւն երկնից քան յամենայն հնարս մարդկային խոհեմութեան. և ոչ ինչ 'ի պարտուց անվոյթ արարեալ, 'ի Տեառնէ միայնոյ ակն ունի ամենայնի: Իսկ մեղաւորին խոհեմութիւն է յանձնառաստան. 'ի բաւականութիւն ևեթ հնարից իւրոց ապաւինի, վըստահի յիմաստութիւն իւր, 'ի զանից իւրոց սպասէ յաջողութեան, և գործէ ինքնին միայնակ՝ որպէս թէ չգուցէ Աստուած տեսուչ մարդկանոց երից:

Հինգերորդ՝ խոհեմութիւն արդարոյ է անխիճ. ոչ

ինդրէ զապահովութիւն իւր՝ կալով յար 'ի կասկածի զայլոց. դժուարաւ հաւատայ չարեաց, լաւ համարի անկանել յորոգայթս նոցա՝ քան դատել յանդգնաբար զդիտաւորութիւն նոցա և զնորհուրդս: Իսկ խոհեմութիւն մեղաւորին դանէ զապահովութիւն իւր 'ի կասկածանս և յանվստահութեան զայլոց. և զի ապահաստել է սիրտ իւր, ամենայն ինչ Թուի նմա ապականութիւն և կեղծաւորութիւն յայլս, և իբրև 'ի թշնամիս իւր հայի 'ի նոսա: Կասկածէ չարիս՝ ուր ոչ տեսանէ. համարի զի առ 'ի դատել անվրէպ՝ պարտ իցէ կասկածիլ միշտ չարիս զայլոց. և ամենայն խոհեմութիւն իւր բովանդակի 'ի վարկանել 'ի մարդիկ՝ որոց ինքն ընդունակ է չարեաց:

Վեցերորդ՝ խոհեմութիւն արդարոյ է առանց ինձ-ծաւրութեան: Ոչ համարի երբէք ձարտարութիւն զչարաբուէստ հնարս. և զի ոչ կամի խաբել զոք, չունի պէտս կեղծաւորելոյ. ամենայն ձարտարութիւն նորա է յանբծութեան սրտի և յանկեղծութեան: Իսկ մեղաւորին խոհեմութիւն է կեղծաւորութիւն չարատես. չըթունէք նորա ընդդիմաբանեն միշտ սրտին. դէմք իւր է միշտ հակառակ զգայմանցն. համարի զանձն ձարտարագոյն ըստ չափոյ խաբէութեանն. ամենայն կեանք նորա է նուաստութիւն և նենգութիւն. խոհեմութիւն նորա է միշտ տաժանաւոր, զի հարկ է նմա հանապազ կեղծաւորել:

Կնիք բանիս՝ խոհեմութիւն արդարոյ է էի աղբմաբեմբ և պզտիկ բարեաց. յաւելուն նա 'ի մարդկային հնարս զգործս առաքինութեան և զնպաստս աղօթից. ապահովէ զերս իրաց առատաձեռնութեամբք և վստահովք ողորմութեան, և գտանէ 'ի պարտս կրօնից զգնաւոր օճան և նեցուկ մեծութեան իւրոյ: Իսկ մեղաւորն համարի խափան ամբառնալոյ իւրոյ զերկիւղածութիւն. խորչի 'ի կարգաց կրօնից, որպէս 'ի հակառակաց բախ-

ան իւրոյ. և եթէ երբեք ՚ի վերին երկնս դայ զառաքելոնէն Թեան արդարոյ, և յաւելու. Պատուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ, որ առնեն գխաղաղութիւն: Այլ խոհեմութիւն աշխարհիս, որ չէ ՚ի վերուստ՝ այլ յաշխարհանութենէ մեզաց, և հաստատեալ է ՚ի յոռութիւնս, ոչ այլ ինչ է՝ բայց խռովութիւն յարատև երկիւղի և ըղձից և անձկութեանց. և զի յառաջ գայ յախտից, չկարէ խաղաղագոյն քան զախտս լինել. Ուր է խմաստնութիւնս այս իջեալ ՚ի վերուստ, այլ երկրաւոր ընտոր և դիւական:

Երկրորդ աղբիւր մարդկային անձկութեանց՝ են գէպք մերձակայք, և որ ինչ անցք անցանեն հանապազօր առաջի աչաց մերոց: Ոչ ինչ գոգցես պատահել ըստ ըղձից մերոց. որ ինչ հաճոյ է մեզ, խոյս տայ, որ ինչ ըղձալի՝ փախչի ՚ի մէնջ, և որ ինչ խնթալի՝ հասանէ մեզ: Զեմք երբեք ըստ ամենայնի բարեբաստք. եթէ ծիծաղի մեզ բախտ, լքանէ զմեզ առողջութիւն. եթէ վայելեմք յառողջութեան, պակասէ մեզ ճոխութիւն. եթէ ընծրհք իշխանին ամբաւական զմեզ, նախանձ արքունեաց աղաղաւ զանազան մեր, և ընկենու յաւագութենէ. եթէ նախանձ խնայէ ՚ի մեզ, և կարեմք վաստակել ՚ի վարկ հասարակաց, իշխանն անտես առնէ զմեզ: Միով բանիւ՝ չէր հանգամանս և իցեմք, պակասէ ինչ մեզ միշտ ՚ի բարեբաստութիւն. և զարն այն է, զի մի ինչ ՚ի վերոյ յաղթէ բերուց հաճոյից. և որ պակասէն, թէպէտև դոյզն ինչ իցէ, դառնացուցանէ միշտ զայլ ամենայն մասունս բարեբաստութեան:

Այլ արդարն գոհանէ, որպէս սուրբ Կոյան, ՚ի բոլորանուէր հնազանդութեան կամացն Աստուծոյ օգնութիւն ընդդէմ ամենայն անձկութեանց մերձակայից:

Անհասանելի էին Կուսին ամենայն խորհուրդք Աստուծոյ ՚ի վերոյ իւր, նուաստանալ Որդւոյն Աստուծոյ, հանդերձեալն մեծութիւն որ աւետէրն իւր. սուրն՝ որ անցանելոց էր ընդ սիրտ իւր, և ամենայն ազգաց այնուհետև երանել նմա. արհամարհանք չուրջ պատեալ, և անցք մեծամեծք՝ որ ՚ի վերոյ կային. այլ կամքն Աստուծոյ էր լուծուն ամենայն տարակուսանաց իւրոց, և մխիթարութիւն մեծ իւրոյն անձկութեանց:

Այո՛, եղբարք, որ մխիթարէն զմեզ ՚ի գժուարագոյն գէպս՝ ուր Աստուած կացուցանէ զմեզ, է նախ կամք նորա ամենակալ՝ որում չէք ինչ գժուարին, որ իշխէ ամենայն պատահարաց, և ՚ի քթթել ակն կարէ վանձան առնել ամենայն նեղութեանց մերոց, յորմէ գտանեմք յամենայնի օգնութիւն, որ ասէ՝ և լինի ամենայն: Մարդիկ, որոց լինիմքս անձնատուր, ոչ կարեն զերծուցանել զմեզ ՚ի տառապանաց և ՚ի վտանգաց՝ յորս արկանեն զմեզ. տեսանեմք հանապազօր զկործանումն աշխարհասիրաց ընդ պաշտպանս իւրեանց, և ընդ կցորդս ըստ մարմնոյ և արեան, յորս յենուն մնոտի վստահութեամբ, հանդոյն այնոցիկ՝ ասէ Մարգարէն, որք յենուն յորմ տկար կաւելոյն հակեալ մերձ ՚ի կործանումն, և վաղ կամ անագան ձմլին և թաղին ընդ փլատակաւ նորին, որպէս սոյն ՌԻՒԲԷՆ: Ի բազմապատիկ գէպս մարդկի ամենայն իշխանութեամբ իւրեանց ոչ կարեն յարդարել զբարեբաստութիւն մեր, գէթ առաւել քան զիւրեանցն, զի են ըստմանեայ բարեբաստք, և ոչ է մեզ յուսալ՝ զի արասցեն լաւագոյն քան զիւրեանցն զպայման կենաց մերոց, և կարասցեն տալ մեզ՝ որ ինչ չկարեն տալ անձանց:

Այլ մխիթարութիւն մեծ հաւատացելոյ՝ որ համակամ է ընդ Աստուծոյ, այն է՝ զի կարէ ասել ցանձն իւր. Կարող է Աստուած օգնել ինձ, չիք ինձ վտանգ ՚ի յանձն առնելոց նմա զամենայն. գիտէ նա ընդ զամ-

նայն զպէտս իմ. որ ինչ չէ հնարաւոր առ մարդիկ՝ դիւրին է կարողութեան նորա. կամի զի և յանյոյս յուսացուք 'ի նա. և որչափ ընդունայն իցէ մեզ օգնութիւն 'ի մարդկանէ, այնչափ առաւել օգնէ մեզ, առ 'ի խրատել զի չինքն յուսացուք, և մի' 'ի մարդիկ:

Երկրորդ՝ զի ամենիմաստ կամացն Աստուծոյ նեըքոյ արկանեմք զանձինս, որոյ յաւիտենականք են պատճառք 'ի պատահարս՝ զորս անօրինէ. որ տեսանէ զօգուտ մեր անտի՝ ուր կացուցանէ զմեզ. որ չառնէ ինչ վայրապար, և գիտէ նախ քան զպատահարս՝ զերս նոցին: Աւաղ. մարթ է մեզ լինել 'ի վարանս զհանդամանաց, յորս մեք մեզէն դնեմք զանձինս, զի ոչ ճանաչեմք զանձինս մեր ըստ բաւականին՝ առ 'ի դատել որ ինչ 'ի դէպ իցէ մեզ. և բազում այն է, զի յընտրութեան անդ՝ ընդ մարմնաւոր քան ընդ հոգևոր օգուտ մեր խորհրդակցիմք. այլ որ միթերաբէն զհոգի հաւատացեալ հնազանդ կամացն Աստուծոյ, է իմաստութիւն այնորիկ՝ յոր վստահի: Ասէ նա առէպ ցանձն իւր. Գիտէ Աստուած վասն որոյ իրաց 'ի հանդամանս յայսոսիկ զիս կացուցանէ. և թէպէտ անծանօթք են ինձ պատճառքն, այլ ոչ այսու՝ նըշանակ երկրպագելիք. ոչ է ինձ պարտ ըստ սակաւ և անձուկ մտաց իմոց չափել զանհասանելի խորհուրդս իւր. չգիտեմ ես՝ ուր յանկի ճանապարհն՝ ընդ որ ածէ զիս. այլ քանզի ձեռն նորա առաջնորդէ ինձ, պարտ է ինձ գնալ ընդ այն աներկիւղ. ածէ նա յաշխարհ յերկիր աւետեաց ընդ շրջանս տաժանաւորս, ընդ անջրդի անապատս, և գրեթէ միշտ ծածկէ 'ի մէնջ զերս ճանապարհին, առ 'ի տալ մեզ շահել զարժանաւոր վստահս հնազանդութեան և վստահութեան 'ի նա:

Եւ գարձեալ՝ զի ոչ միայն Աստուծոյ ամենակալի և ամենիմաստոյ յանձն առնեմք զմեզ, այլ և ամենաբարւոյ ողորմածի և բարեգութ հօր, որ սիրէ զմեզ, և կամի զփրկութիւն մեր: Մարդիկ, բազում այն է՝ զի

պատճառանօք բարեբարելոյ խնդրեն ինձասել մեզ. չեմք նոցա սիրելի, եթէ չիցեմք իւրք նոցա օգտակարք. և կամին ծառայեցուցանել զմեզ 'ի բարեբաստութիւն իւրեանց, քան առնել բարեբաստիկս զմեզ: Այլ Աստուած զփրկութիւն մեր միայն խնդրէ. որ ինչ և կամ վասն մեր, յօգուտ մեր կամի. միայն օգուտ մեր յաւիտենական ուղղէ զդնացս նորա ընդ մեզ. եթէ հարկանէ զմեզ, առ 'ի փրկել զմեզ հարկանէ. և եթէ խնայէ 'ի մեզ, առ 'ի փրկել զմեզ խնայէ. եթէ խոնարհեցուցանէ զմեզ, ոչ այլ ինչ դիտէ՝ բայց զփրկութիւն մեր. և եթէ բարձրացուցանէ, փրկութիւն մեր շարժէ զնա յայն. յորմէ և տեղւոջ կացուցանէ զմեզ, է միշտ հայր՝ որ խնամէ զմեզ, է բարեկամ՝ որ օգնէ մեզ, է պաշտպան՝ որ հովանի լինի մեզ, է առաջնորդ՝ որ գնայ առաջի մեր, ցուցանել մեզ ճանապարհ: Աւաղ, եղբարք, համարիմք մեք զմեզ աներկևանս 'ի դնել զօգուտ մեր և զբախտ 'ի ձեռս հաւատարիմ բարեկամի՝ զորոյ 'ի բազում ամաց առեալ իցէ մեր զփորձ. վստահիմք 'ի նա որպէս յանձինս մեր, և ոչ զպատճառս կամիմք գիտել զգործելոյ նորա այսպէս կամ այնպէս վասն մեր, հաճիմք ընդ ամենայն՝ զոր առնէ, հաստատեմք զայն, և օգուտ մեր զայն համարիմք: Այսպիսի է միթերաբութիւն հաւատացելոյ, որ դնէ զբախտ իւր 'ի ձեռին Աստուծոյ. ոչ քննէ զվասնէրն կացուցանելոյ զինքն հայրենի բարեգթութեան նորա յայս կամ յայն հանդամանս. շատ համարի գիտել զի Աստուած է՝ որոյ խորհուրդք 'ի բարութիւն և յողորմութիւն ստեղծուածոյ իւրոյ են միշտ, զի հայր է՝ որ զփրկութիւն որդւոյ իւրոյ խնդրէ, զի բարեկամ հաւատարիմ է և բարեգութ, և յամենայնի խնդրէ զօգուտ սիրելոյն: Եւ զինչ քան զայս ցանկալի կայցէ, եղբարք սիրելիք. եթէ կրօնից չէր իսկ այլ ինչ առաւելութիւն, ոչ սպաթէն բարեբաստագոյն և իմաստնագոյն էր այս ընտրութիւն արգարոյ և հաւատացելոյ 'ի վերայ երկրի:

Իսկ դառն յիշատակ անցելոյն է երրորդ և վերջին աղբիւր անձկութեանց մարդոյ. չիարենք մեք յիշատակել զդժնդակ անցս կենաց մերոց, առանց դարձի դառնութեան նոցա ՚ի մեզ. կորուստք անցեալք տանջեն տակաւին զոգիս մեր ընդունայն մտածութեամբք հնարելոց, որովք կարէաք խնայել զմեզ յայնցանէ. սգոտանեմք զմեզ հանապազ, զի մեզէն եղաք պատճառք թշուառութեանս մերոյ. եպերեմք զանձինս մեր, զի զգուշութեամբ իւիք մարթ էր մեզ զերծանել յայնքան տառապանաց և յարտասուաց. յաւելումք զաղէտս մեր՝ տալով զայնոսիկ անխոհեմութեան մերում, մտածեմք տարաժամ զհնարս՝ որովք կարէաք դիւրաւ զառաջս չարեացն ունել. իսկ առ ազդողագոյն և զգալոյ զվիշտ անկման մերոյ. և փոխանակ նկատելոյ յայնմ զինամատուութիւն և զկամս Աստուծոյ՝ որ այնպէս անօրինեցին, և որով պարտ էր մեզ մտանալ զվիշտ մեր, նկատեմք ՚ի նմա զսխալանս մեր՝ որ յաւելումն զմորմոք, և մշանջենաւորեն զցաւս մեր:

Արդ և յայսմ մասին հնազանդութիւն սրբոյ Կուսին օրինակ է մեզ: Ոչ այլ ինչ տեսանէր նա, բայց զԱստուած յամենայն անցս կենաց իւրոց, յաւետման հրեշտակին, ՚ի սքանչելիս ծննդեանն, ՚ի հաւատս հովուաց, յերկրպագութեան մոգուց: Եւ Մարիամ, ասէ սուրբ Աւետարանիչն, զամենայն պէսպիսի պահէր, և խելամուտ լինէր ՚ի սրտի իւրում: Անհակառակութիւն և մարդկային բարեսիրտն Աննայի և ծերունւոյն Սիմէոնի յուշ առնէին նմա զամենայն, որ ինչ ցայնժամ մեծամեծս արարեալ էր Աստուծոյ ընդ նմա և ընդ մանկանն. ոչ տեսանէր յայնոսիկ մարդկային ինչ, այլ աստուածային զամենայն. և ոչ կարելով երկբայել՝ զի ձեռն ևեթ Բարձրելոյն էր յամենայնի, ՚ի միտ առնոյր՝ զի ՚ի նմանէ էր առաջնորդեալ իւր ՚ի տաճար անդր, և յանձն առնոյր զնուէրն և զհնազանդութիւնն զոր խնդրէր նա յիւրմէ:

Այս է ահա, եղբարք իմ, մեծն այն գիտութիւն հաւատոց. պարտ է անցելոյն լինել մեզ ՚ի խրատ հանապազորդ, ուսանել անտի զանտեսութիւն և զերկրպագելն կամս Աստուծոյ ՚ի վերայ մեր, և յիշել հանապազ որ ինչ առաջի աչաց մերոց անցք անցին, մանաւանդ յարքունիս՝ ուր կեամք, և որ թաւալ լինի է մարդկային յեղափոխութեանց յեղակարծից, սոսկալի և անակնկալ մահուց, աղետալի պատահարաց, յայրողութեանց և արկածից պետութեանս, զամբարձումն և զանկումն այնոցիկ՝ որ զառաջին բարձս ունէին. և զի՝ գիտեմ, զայնքան յեղմունս ՚ի շնորհս, ՚ի բախտս, ՚ի զօրութիւնս յանկումն և ՚ի կանգնումն ազգատոհմից: Պարտ էր մեզ, ասեմ, յուշ ածել զայս ամենայն, առ ՚ի նկատել յայնոսիկ զնմատուութիւնն Աստուծոյ՝ որ խաղայ ընդ կիրս մարդկան, որ ամբառնայ և կործանէ ՚ի վայրկենի՝ առ ՚ի ցուցանել մեզ զանցաւորացս եղծականութիւն, և զի ամենայն խմաստութիւն մարդկային ոչ կարէ պահել զմեզ և ՚ի դոյզն ինչ արկածից, և չկարէ կալ խորհուրդ ընդդեմ աստուածային խորհրդոց:

Սակայն յիշատակ անցելոցն ոչ միայն չնորատէ զմեզ, այլ և մոլորեցուցանէ, և զարթուցանէ ՚ի մեզ անիրաւ կիրս: Յիշեմք զկործանումն այնոցիկ՝ զորս տեսաք գէր ՚ի վերոյ ամենեցուն, և տնօրէնն իրաց հասարակաց. և յիշատակս այս փոխանակ լուծանելոյ զպատրանս վստահելոց ՚ի նոսա, և ՚ի գերև ելանելոյ նոցա ՚ի վայրկենի, և փոխանակ խրատելոյ զմեզ՝ զի յաջողութիւնք առաջմանակեաք ոչ ինչ են, եթէ ոչ քրիստոնէապար վարուն նոցին անմահացուսցէ զնոսա, գրգռէ ՚ի մեզ զփառասիրութիւն խափանօք՝ զորս իշխանութիւն նոցա հզօր արկ ընդդեմ բախտի մերում, քան հաստատէ զհաւատս մեր անհաստատութեամբն՝ որ ՚ի քթթել ական կործանեաց զայն: Կինք բանիս, ոչ ուրեք երբէք տեսանեմք մեք զԱստուած. ամենայն ինչ անցանէ անտես լինի, ամենայն

ինչ առաջի աչաց մերոց կործանի. աչխարհ նոր յառնէ յանդգաստից 'ի վերայ աւերակաց առաջնոյն, զոր 'ի մուտս մեր անդր տեսաք. նոր արքունիք երևին 'ի տեղի այնորիկ՝ զոր առաջին ամք մեր տեսին, նոր աւագանի եղանէ 'ի Թաւոր, նոր տեսարանք զոր հանապազ դրաւճեն զաչխարհ, ուր գրեթէ զմեզ միայն գտանեմք օտարս 'ի մէջ մարդկան՝ զորոց տեսաք զծնունդ, մեկուսի յայնցանէ՝ ընդ որս ձգեցաք զկեանս: Ամենայն ինչ խուսէ 'ի միջի, ամենայն ինչ սահի սրընթաց, անկանի յոչինչ. և 'ի մէջ այսքանեաց մշտնջենաւոր յեղափոխութեանց, ուր Աստուած միայն կայ անփոփոխ, և երևի մեծ, ուր Աստուած միայն յեղաշրջեալ անդադար զերեսս տիեզերաց՝ կայ մնայ միշտ նոյն, արժանի մերոցս մեծարանաց, յոժանամբ մեք զնա, ոչ ամբառնամբ զմիտս մեր առ նա. պինդ կամք 'ի կիսաւեր աչխարհի, և զմտաւ ածեմք 'ի ցնորս՝ որ ինչ մասն նորին խոյս ետ 'ի միջի, և տամք գոյութիւն անկեան. յիշատակ առաջնոց ամաց մերոց ապականեն տակաւին զսիրտս մեր վաւաշ և անարժան խորհրդովք. գարձուցանեմք 'ի լոյս զաւուրս մեր անցեալս՝ ըստ մեղանչական մասին. կարի սուղ Թուին կեանք մեր առ 'ի Թշնամանել զԱստուած, դառնամք անդադար կեալ 'ի պատկերս նորին՝ որք նորոգեն զանօրէնութիւնս մեր անցեալս, նմա՝ զի կեամք վերակեն ցաղ առ 'ի մեղանչել, և ոչ վայրկեան մի առ 'ի գործել զառաքինութիւն: Այսպէս ապականի զմեզ անցեալն և խոտորեցուցանէ, փոխանակ ցուցանելոյ զպատրանս մեր և իրատեսել զմեզ: Տեսանեմք միայն 'ի նմա զմարդկային յեղափոխութիւնս, և ոչ 'ի վեր ևս ելանեմք, կեամք որպէս Թէ դէպք զսիեզերս վարիցեն, և չիցեն այլ ինչ պատճառք պատահարաց:

Աւաղ, եղբարք. նահապետք, որ այնպէս երկայնակեացք էին 'ի վերայ երկրի, պարապէին միշտ 'ի խորհել 'ի մեծամեծ անցս երկայն ասպարիզի կենաց իւրեանց 'ի սքանչելիս Աստուծոյ, և 'ի կարգս երկրպագելի կամաց նորա. յեղյեղին 'ի մոլ զայլ և այլ ճանապարհս, ընդ որս խմաստութիւն իւր առաջնորդեալ էր նոցա. զարմանային ընդ անճառելի անտեսութիւն նախախնամութեան նորա, որ էր նոցա 'ի մատեան՝ յորում ուսանէին միշտ զմեծութիւն նորա և զողորմութիւն 'ի վերայ արարածոց. և այն էր քաղցրագոյն մխիթարութիւն իւրեանց 'ի պանդխտութեան. տեսանէին ամենայն ուրեք զԱստուած, աներևոյթն՝ էր նոցա երևելի յամենայն պատահարս և յանցս զարմանալիս կենաց իւրեանց. ոչ այլ ինչ տեսանէին ընդ տիեզերս՝ բայց զԱստուած, ամենս արարեալ զմարդիկ՝ որովք խմաստութիւն իւր վարէր 'ի ընտրել զպաշտելի խորհուրդս իւր:

Այս է ահա, եղբարք իմ, գիտութիւնն մեծ՝ զոր ուսուցանեն մեզ գիրք սուրբք: Ցայլ պատմութիւնս աւանդեալս 'ի մարդկանէ է տեսանել զգործս մարդկայինս. մարդիկ անդ կանգնեն յաղթութիւնս, առնուն զքաղաքս, նուաճեն զպետութիւնս, ընկենուն յաթոռոյ զթագաւորս, յառնեն ինքեանք 'ի գերագոյն իշխանութիւն. ոչ ուրեք է տեսանել անդ զԱստուած. մարդիկ միայն են անդ արարօղք: Այլ 'ի պատմութեան սուրբ գրոց Աստուած միայն է՝ որ առնէ զամենայն. Աստուած միայն է՝ որ տայ իշխել թագաւորաց, նստուցանէ զնոսա յաթոռ կամ ընկենու յաթոռոյ. Աստուած միայն ձակատի անդ ընդդէմ Թշնամեաց, կործանէ զքաղաքս, կարգէ զպետութիւնս և զինքնակալութիւնս, շնորհէ զնաղաղութիւն, և յարուցանէ պատերազմ: Աստուած միայն տեսանի յաստուածային պատմութեան. և եթէ այսպէս օրէն եցէ ասել, ինքն միայն է 'ի Թատեր անդ գիւցազն. արքայք և աչխարհակալք երևին և եթ անդ որպէս պաշտօնեայք կամաց նորա սրբոց. և համառօտիւ՝ գիրք աստուածայինք 'ի վեր առնուն զքօղ նախախնամութեան Աստուծոյ, որ ծածկի յայլ անցս՝

զորս պատմագիրք մեր ասանգեն, և յայս յանգիման երևի 'ի սուրբ գիրս. անդ միայն Հոգին Աստուծոյ ասանդէ երկրի որ ինչ պարտ է մեզ ուսանել 'ի պատմութենս ասանդեալս 'ի մարգկանէ, առ 'ի ընդ հատատուվք զթերին զորով հոգին մարգկեղէն զանց առնէ, և նկատել զբազմապատիկ յեղափոխութիւնս՝ որք խառնվեցին զմիեղերս, որպէս պատմութիւն խորհրդոց և կամացն Աստուծոյ 'ի վերայ մարգկան:

Զայսոսիկ ընդունի խրատս հոգի հաւատացեալ յիշատակաւ անցելոյն. և այս է մի 'ի մեծամեծ ուրախութեանց արգարոց յերկինս, տեսանել յայս յանգիման զզմայլելի կարգաւորութիւն կամացն Աստուծոյ յամենայն դէպս անցելոց կենաց իւրեանց. առեղծանի յայն ժամ առակն, և 'ի միտ առնուն որպէս յերկրի աստ ամենայն ինչ 'ի փրկութիւն իւրեանց էր կարգեալ, որով բարութեամբ և երկրպագելի իմաստութեամբ ծառայեցուցանէր Աստուած զամենայն 'ի սրբութիւն ընտրելոց իւրոց, նմա որ ինչ անցք և անցանէին 'ի վերայ երկրի, զամենայն պատմութիւն այնր ժամանակի, զբարեպաշտութիւն կամ զանկարգութիւն իշխանաց, զյաղթութիւն և զպարտութիւն պատերազմաց, զբարեբաստութիւն և զթշուառութիւն հասարակաց: Տեսցեն նոքա որպէս այս ամենայն, աներևոյթ և զարմանալի կարգօք՝ որ պայծառասցին նոցա յայնժամ, օգնէին 'ի լուսաւին արգարոց, և որպէս ամենայն ինչ՝ ևս և անկմունք նոցա՝ 'ի փրկութիւն իւրեանց էին կարգեալ:

Իսկ ընդհակառակն յուսահատեալ ապշութիւն մեղաւորաց լինցի տեսանել, զի 'ի ժամանակի իսկ՝ յորում կարծէին կեալ ազատք 'ի ընծայ և անաստուածք յաշխարհի, էին 'ի ձեռին իմաստութեանն Աստուծոյ, որ մեղօք իսկ նոցա վարէր 'ի կատարումն յաւիտենական խորհրդոց իւրոց. զի 'ի կարծելն կեալ անձանց ևեթ՝ էին 'ի ձեռին Աստուծոյ գործիք պիտանիք 'ի

սրբութիւն արդարոց. զի ամենայն գործք նոցա հոգեկաւորք՝ էին պիտանիք խորհրդոցն Աստուծոյ, այլ ինքեանց անպիտանք. զի տեսարանք մեծամեծք՝ զորս ընծայեցին աշխարհի, և որք գոլեալ փայփայէին զոչնչասիրութիւնն նոցա, ոչ ինչ օգնէին նոցա. և զի վասն արգարոց միայն կեցին նոքա, և ինքեանց միայն չէր ինչ մասն 'ի մեծամեծ անցիս, որոց էին նոքա գլխաւոր գործանք, և առնէին աշխարհաքարող զանուն իւրեանց 'ի վեպս: Առանց յերկարելոյ. հոգեկ մեծ երթայր զնոքանէ ընդ տիեզերս, և ոչ ինչ օգուտ էր նոցա անտի, այլ Աստուած փառաւորէր անդ. որպէս մրրիկ որոտընդոստ տեսարան մեծ ընծայէ երկրի, և յայնմ առնէ մարգկան զմեծութիւն և զզօրութիւն Աստուծոյ, այլ ինքն ձայն է ընդունայն, և ոչ թողու զհետ իւր, բայց զապականութիւն նիւթոյն՝ յորմէ յառաջ գայ:

Այս իմաստասիրութիւն խրատէ զմարգիկ 'ի հնազանդութիւն մշտնջենաւոր աստուածային կամացն. զի եթէ հնազանդին և եթէ ոչ, սակայն է հաւաստի՝ զի գործեացեն միշտ ընդ ձեռամբ Աստուծոյ, զի ոչ կարասցեն առնել ինչ, եթէ ոչ թողուցու նոցա գերագոյն անօրէնն ամենայնի. զի ոչ հասանեն 'ի նպատակ խորհրդոյ իւրեանց, բայց ցոր վայր ներէ նոցա իմաստութիւն իւր երկրպագելի. զի ոչ կարեն խուսել 'ի կարգաց տեսչութեան նորա, և 'ի գառնալ իւրեանց ընդդէմ՝ ոչ կարեն փոփոխել ինչ 'ի պատահմանց, բայց միայն յաճախեն զմեղս իւրեանց:

Զայս առաւելութիւն գտանէ հաւատացեալն համակամութեամբն ընդ Աստուծոյ: Դարձիք, եղբարք, յո և կամիք. էիք 'ի կենցաղումն այլ կէտ անշարժ, այլ միխթարութիւն հաստատուն, բայց հպատակել կամացն Աստուծոյ, չկամել այլ ինչ քան զկամս Աստուծոյ. այս են գաղտնիք մեծ քրիստոնէական բարեպաշտութեան, պատուականագոյն բարեմասնութիւն հաւատոց, և բար-

ձրագոյն գիտուԹիւն հաւատացելոյ: Առանց այսորիկ զլինչ են կեանք մարդկային, բայց ծով մրրկեալ ահագին, յորում անդադար ալեկոծիմք, և ամենայն վայրկեան փոխէ զդէմս մեր, և նորանոր աղմուկս ածէ զմեզ: Եւ զլինչ են մարդիկ, բայց սխուր խաղալիկք խօլական կրից, և անդադար յեղափոխուԹեան պատահարաց. յարեալք ապականուԹեամբ սրտի յիրս մերձակայս՝ յարաշարժք ընդ նոսին՝ են իբրև զպատկերս, զորս չղջէ անիւ երազաշարժ, և չիք նոցա հաստատուԹիւն, վայրկեան իւրաքանչիւր տայ նոցա դէմս այլևայլ. սատանին ըստ հաճոյս յողդողդ իրաց մարդկայնոց, կամին յար զկայ առնուլ յարարածս, և յար ստիպէին մեկնել 'ի նոցունց. կարծեն միշտ հասեալ 'ի վայր հանգստեան, և հարկ լինի նոցա միշտ անդրէն սկիզբն առնել ընԹացից. պարտասեալք 'ի ծփմանէ՝ յափշտակին անդադար 'ի մրրկէ. չիք որ զնոսա կայկայէ, չիք որ սփոփէ, չիք վչտացն փոխարէն, չիք որ զտառապանս նոցա ամոքէ. ոչ աշխարհ որ այնոցիկ է առԹիւ, ոչ խիղճ մտաց՝ որ առաւել գառնացուցանէ զկսն, և ոչ հրաման Աստուծոյ, որում զդէմ ուրնին: Ըմպեն զդինին գառնուԹեան մինչև ցմրրուր. 'ի զուր յեղյեղեն զկսն բաժակէ 'ի բաժակ, ասէ Մարգարէն, սփոփել զանձինս յախտէ յախտ զառածմամբ, սփոփել զկորուստ սիրելւոյն՝ այլով սիրելուԹեամբ, զանկումն 'ի հնորհաց՝ այլովք ակնկալեօք. ամենայն ուրեք զհետ գնայ նոցա գառնուԹիւն. փոխեն զդէմս, այլ ոչ զպատուհաս. Բաթաէ 'ի յեռին Տէառն, գինի էի անապակ արիեալ, և խանարհէցայց յայսմանէ յայս. ապայն մրուր նորա ոչ պատռեցի:

Աստուած մեծ, ընդէր ապա չէիցէ հոգի իմ հնազանդ կամաց քոց. լցեա դու Թերևս այր մի խնամ, զի լցէ վտանգ լինել 'ի քէզ ապաստան. որ երկիւղ լցէ ինձ, Տէր, 'ի Թողուլ իմում 'ի քէզ միայն զամենայն ինչ զիմ: Աւա՛ղ. ցորչափ կամեցայ ես ինքն լինել բախ-

տին իմոյ տնօրէն, յամԹէ եղէ 'ի խորհուրդս իմ. դէպք ոչ յաջողեցին ըստ ըղձից իմոց և ձգանց. ելք իրացն յաւելին ինձ հանապազ նորանոր վիշտս և տագնապ. 'ի խնդրել իմում առաւ ապաստանի, փորձի ինձ վնաս գահավիժուԹեան. որ ինչ համարէի ինձ նեցուկ՝ լինէր ինձ 'ի կործանումն. կործանէիր, Տէր իմ, զինուածն՝ զոր ամբառնայի. կամիր ուսուցանել ինձ՝ զի եԹէ ոչ դու կանգնես զտուն, 'ի նանիր վաստակին շինօղք նորա, և եԹէ ոչ ձեռն քո ունիցի զնա կանգուն. 'ի վերայ կայ նմա աղետալի փաերած: Գանի՛ ապահովագոյն է, Տէր իմ, Թողուլ 'ի քեզ զամենայն, կամ չառնել ինչ անհրամանի 'ի քէն: Ի քանի՛ անձկուԹեանց լինէի զերծ, եԹէ պարտուցս իմոց այսոցիկ պատկառ կայի. բաւական իմ լինէր համանման, այլ ոչ նոյն վիշտք իմ և տառապանք. գտանէի 'ի հպատակուԹեան կամաց քոց սրբոց զնաղաղուԹիւն, զոր ոչ երբեք գտի յաշխարհի և 'ի սրտի իսկ իմում, և ընդունէի ապա զփոխարէնն՝ զոր խոստանաս սիրելեաց քոց՝ որ ոչ այլում իմիք ցանկան 'ի վերայ երկրի՝ այլ 'ի նուիրել զկամս քո յաւիտենական. Եղիցի եղիցի:

ՄԱՍԻԼԻՈՆԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՓԼԵՐՄՈՆԻ

ԴԱՐՁԵԱԼ

Ի ՏԵԱՌՆ ԸՆԴ ԱՌԱՋ

Քաղաքս կարևոր պատրաստութեանց՝ ի նուիրումն անձին նորոգութեամբ կենաց առ Աստուած։

Եւ իբրև լցան աւուրք սրբութեան նորա ըստ օրինացն Մովսիսէ, առին զՅիսուս Երուսաղէմ յանդիման առնել Տեառն։

Ղուկ. Բ. 22։

Փրկիչն մեր երևի այսօր՝ ի տաճարին, ոչ առ՝ի ընդ միայն զօրէնս նուիրելոյ Տեառն զամենայն անդրանիկս, այլև առ՝ի տալ կատարումն օրինակին Հմմարտութեան. ոչ միայն առ՝ի հնազանդել պատուիրանին՝ որ չէր վասն իւր, այլ առ՝ի յայտնել զնորհուրդ արարողութեանն, որ լինէր ևւեթ հայերս։ Առ ինչ, եղբարք իմ, հրամայէր Աստուած նուիրել իւր զանդրանիկս մարդկան և անասնոց, և որպէս թէ վերկանաւորել նուիրմամբ անդրանկացս զկեանս և զծառայութիւն այլոցն ամենեցուն. առ ինչ զերախտապրիս պաղոց երկրի պահէին Տեառն օրէնք

մովսիսականք. ոչ ապաքէն տէր էր նա ամենայն որդւոց և ամենայն արարոց մարդկան. միթէ նուաճ պարտ էր նոցա մատուցանել նմա զերեկորին քան զառաւօտեանն պատարագ. առ ինչ ապա այսքան առակք օրինակի: — Քանզի Քրիստոս, անդրանիկն՝ի մեջ եղբարց իւրոց, մատչէլոց էր յաւուր միւմ՝ի նուէր՝ վասն ազատելոյ զամենեսեան՝ի գերապարտութենէ Ադամայ. քանզի Քրիստոս, պատուականագոյն պտուղն երկրի, ըստ Սաղմոսերգուին, ընծայելոց էր՝ի տաճարին՝ առ՝ի սրբել պատարագաւն իւրով զհամաբոլոր բնութիւն, և ընդհակ մարդոյ իրաւունս վայելելոյ՝ի բերս երկրի, որոց չափաւոր վարումն զրկեալ էր զնա յիրաւանց անտի:

Օրինակ միայն էին ապա այն ամենայն հանդերձեալն, և վասն այսորիկ ոչ դադարէին մարգարէքն ազդել մեզ, զի առաւել լինելոց էին փառք նորոյ տաճարին քան զառաջնոյն. ոչ ևս ամպք լուսաւորութ առ՝ի ծածկել զսրբարանն իջանէին յերկինից, այլ առ՝ի ցոլել զԱրդարութիւն, ոչ ևս հրեշտակ Տեառն՝ի խորոց քաւարանին յայտնէր զկամս Աստուծոյ Ժողովրդեան, այլ ինքն տէր տաճարին գայր ուսուցանել մարդկան զյաւիտենական ճշմարտութիւնս՝ի փրկութիւն: Ոչ ևս արքայք և աշխարհակալք, ձգեալք՝ի մեծվայելչութենէ և յանուանէ տեղւոյն սրբութեան գային երկրպագել Տեառն զօրութեանց, և ընդ զսեղանն մեծագործ նուիրօք, այլ խչհանն խաղաղութեան, թագաւորն յաւիտենից անմահ, յաղթողն Ցուդայ՝ գայր աւար առնուլ զհեթանոսս, և նուիրել Հոր իւրում զանոյշ յաղթութեան իւրոյ: Ոչ ևս ծուխք խնկոց ամբառնային վսեմականք յաթոռն երկնաւոր, այլ աղօթք և պաղատանք Փրկչին՝ միշտ լսելիք առ լաւութեանն. ոչ ևս արիւն զոհից բիւրաւորաց թանային զսեղանն, այլ նուէր արեան այնորիկ՝ որ ազատեացն զհայել. և ոչ անգրանիկք նուիրեալք՝ի հրէական ժողովրդենէ, և փրկանաւորեալք որպէս անզօրք՝ի սրբել

զմեզս, այլ եկեղեցի Քրիստոսի՝ յանձին Մարիամու, նուիրեբ զդէլոս իւր և զանդրանիկ, զերախայրն այնոցիկ՝ որ հանգչէին՝ի գոգն Աբրահամու, առ՝ի լինել նուէր սուրբ և անարատ՝ ոչ ունելով խորշ և բիծ, կազմեալ և պատրաստեալ Տեառն որպէս կոյս մի սուրբ՝ միայն արժանի մատնելոյ ընդ նմա՝ի սրբութենան յաւիտենական:

Արդ քանզի այս առաջին պաշտօն է՝ զոր Փրկիչն մեր հրապարակաւ մատուցանէ Հօր իւրում, կամի անշուշտ ուսուցանել մեզ ասա զպատրաստութիւնս՝ որովք պարտ է մեզ մատչել առ՝ի նուիրել նմա զանձինս մեր նորոգութեամբ կենաց: Նկատեսցուք զկարևոր հանգամանս խորհրդոյս, և գտանեմք՝ի սմա հոգի նուիրման՝ի Քրիստոս՝ որ նուիրէ Հօր զանձն իւր, և հոգի հաւատարմութեան՝ի Մարիամ՝ որ մատուցանէ զնա՝ի նուէր: Այսոքիկ են կրկին պատրաստութիւնք՝ որ առնեն անկեղծ և յարատև զգարձ, և զնուէրն սրտի մերոյ աստուածահաճոյ. հոգի նուիրման՝ որ ոչ պահէ ինչ իւր՝ի նուիրելն զանձն, և հոգի հաւատարմութեան՝ որ ոչ թերանայ իւրից՝ի մատուցման: Խնդրեսցուք և այլն:

Ողջոյն ՚ի Մարիամ:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Նախկին պաշտօն, զոր սուրբ հոգին Քրիստոսի՝ ՚ի մանուկ իւրում յաշխարհ՝ մատոյց արդարութեան և և մեծութեան Հօր իւրոյ, եղև նուիրումն անձին՝ ըստ Աւետելոյն. և արդանդ Կուսին եղև որպէս առաջին տաճար, ուր պատարագն սուրբ զենաւ նախ: Արդ այս աներևոյթ նուէր մատուցաւ առանց արարողութեան. այլ պարտ էր պատարագին երևել՝ի վերայ սեղանոյ,

փրկանացն՝ որով գնեցաւ՝ ածիլ ՚ի տաճարն, ընծայիլ նմա ՚ի գերիս քահանայապետի հնոյ Ոսխային, սրբոց կա-նանց դառնալ և յայսմ լերին միւս այլ Գողգոթայ, և սրբոյ Կուսին կալ առընթեր պատարագին, և ընդունել կանուխ զանցս սրոյն ընդ սիրտ իւր. միով բանիւ՝ ստուեր-բաբերել յառաջադոյն յանգիման Հօրն երկնաւորի ա-մենայն հանգամանաց խաչին և մեծի պատարագին: Թուի ինն այնպէս, զի յառաջ քան զհասանել այնր ժա-մու՝ փութայր Փրկիչն մեր ՚ի տաճար անդր, ընծայել զնախագիծ պատկեր արիւնահեղ զեմանին, որպէս նախ քան զմարմնանալն՝ որպէս ասէ Տերտուղիանոս՝ ախոր-ժէր երևիլ նահապետաց զգալի տեսլեամբ, իբր առ ՚ի ընուլ զցանկութիւն մարդասիրութեան իւրոյ ճաշակօքս այսոքիւք և նշանակօք մարմնաւորութեանն. որպէս և յառաջ քան զմեռանելն ՚ի խաչն, ցանկացաւ նուիրել Հօր իւրում կանխաւ զպատկեր մեծի պատարագին իբր առ ՚ի ընուլ զնշէս, որով փութայրն մկրտել մկրտութեամբ արեան, և փառաւորել զնա մահուամբն իւրով:

Բայց Թէպէտ և պատկեր էր ասա Գողգոթայ, սա-կայն իրականէր նուիրումն՝ ասէ սուրբն Բեռնարդոս. և է այս առաջին հանգամանք՝ զոր ընծայեմք յօրինակ, իրականութիւն նուիրման: Զայլս յանդրանկաց՝ որք ընծայէին ՚ի գերիս քահանայապետին, ածէին ՚ի տաճար անդր առաւել առ ՚ի փրկանաւորել քան առ ՚ի նուիրել Տեառն. երևոյթ ինն էր այն նուիրանաց քան նուէր, զոհք առ ՚ի հանդէս՝ որ ոչ զհնուին երբեք, այլ փոխա-նակէր անդէն անասուն անարդ փոխանակ նոցին, և ին-քեանք զկերպարանս ևեթ և զհանդերձանս զոհից բե-րէին:

Իսկ Փրկիչն մեր ՚ի մտանելն այսօր ՚ի տաճար անդր, տուեալ ՚ի գերիս քահանայապետին, և եդեալ ՚ի վերայ սեղանոյն, ասէր առ Հայր. Ահաւասիկ կամ, զոհք օրի-նակիք էին քեզ արժանի. այլ հաստատեցեր ինձ մար-

մին. պատուէր մահուն, զոր ետուրն ինձ, է եառանդն ցանկութեան սրտի իմոյ: Եւ ՚ի ժամ անտի յանձն է-առ կրել կանխաւ, որ ինչ ապա կրելոց էր առ սէր Հօր իւրոյ: Անդստին յանգիման եղեն նմա ամենայն ճգունք հանդերձեալք պաշտաման իւրոյ, խոնարհութիւն ծած-կեալ կենացն ՚ի Նազարէթ, տաժանաւոր ուղևորու-թիւնք հասարակաց կենացն, անպաղութիւն սքանչէ-լեացն և վարդապետութեան իւրոյ, զոսպարութիւնք քահանայից և փարիսեցւոց, նախատինք մեն միոյ ՚ի չար-չարանացն. տեսանէր անդստին զարկն ՚ի տաճարին՝ ուստի ղգինս մահուն իւրոյ տալոց էին, և ՚ի խառն անդ-քս հանայից՝ որ չուրջ կան զսեղանոյն նկատէր զչարս այնոցիկ, որք յաւուր միում հոլմնելոց էին առ ՚ի դա-տել զինքն չարագործ. արդէն ընդ փողոցս Երուսաղէմի ՚ի գերիս մերն տարեալ, լսէ զժողովրդեանն յուղելոց աղաղակ սոսկալի ՚ի խնդիր մահուն իւրոյ. այժմն տե-սանէ զուրկն օրհասական, ուր հեռք արեան իւրոյ տպա-ւորելոց էին, և ընդ որ՝ խաչ ՚ի յուս և փշուք պսա-կեալ՝ ելանելոց էր ՚ի տեղին Գագաթան. և Թէպէտ չէ ՚ի ձեռս Թշնամեացն մատնեալ՝ սէր իւր սկսանի զնուէրն, զոր մոլեգնութիւն նոցա կատարելոց էր ՚ի վերայ խա-չին:

Խորհուրդ առաջին. պարտ էր արդարութեանն Աստու-ծոյ պահանջել ՚ի մէնջ զնուիրումն կենաց մերոց, զի ա-մենայն մեղաւոր անարժան է կենաց, և դատաւորք մեք որդիք մահու ՚ի լինելն որդիք մեղաց. բայց ողորմու-թիւնն Աստուծոյ փոխանակեաց ընդ այնմ զայս պա-տուհաս, և հանապազորդ նուիրումն կենաց և զգայու-թեանց եղեն օրինք մահու եդեալ ՚ի վերայ ամենայն ո-մանք հաւատացելոյ: Զայս օրինս ընկալաք մեք ամենե-քեան ՚ի սուրբ աւազանին, ՚ի նուիրել մերում Տեառն ՚ի տաճարին. հրամայեցաք մատուցանել և մեք զայս զոհ, առ ՚ի զերծանել ՚ի հասարակաց անիծից, և ունել իրա-

ւունս խառնելոյ 'ի Ժողովուրդն Աստուծոյ. անդ զվկայութիւն հաւատոյ ամենեքին յանձն առաք, զվկայութիւն, ասէ սուրբն Կիպրիանոս, որ ոչ սպասէ բռնաւորաց և տանջանաց, այլ 'ի խաղաղութեան կրծնից գտանէ հանապազորդ բռնադատութեամբ ախտից խաղաղութիւն իմն գառնագոյն և վշտալից քան զհուսալութիւնս հալածանաց և տանջանաց։ Զվկայութիւնն մեծ՝ զոր պարտ է ամենեցուն մեզ մատուցանել քրիստոսական հաւատոյ, խոստովանելով զՔրմարտութիւն խոստմանցն Քրիստոսի հանապազորդ նուիրմամբ զգայութեանց և ախտից, և յայս միտս ամենայն հաւատացեալ է վկայ, այս ինքն մարտիրոս Քրիստոսի, որպէս ասէ. Ե՞ էէ՛է ՝ի՝ Վա՛յ։

Ա՛յսպիսի է, Եղբարք իմ, կեանք քրիստոնէի, կեանք հրաժարական և նուիրական. սակայն առաւելագոյնք 'ի դարձելոց առ Աստուած՝ կարծեն ծառայել նմա, յանձն առեալ երևել արտաքոյ աշխարհի բարեպաշտագոյնք, զգուշագոյնս բերել 'ի կենակցութիւն, ոչ ևս խորշել 'ի լաւացս, մեկնել երբեք երբեք յառանձնութիւն, ոչ ևս ամօթ համարել զպարապուն 'ի գործս ողորմութեան, ընտրել իւրեանց զոք առաջնորդ հոգևոր, ոչ 'ի սպառ հեռի կալ 'ի սուրբ խորհրդոց։ Ա՛յլ եթէ ոչ 'ի չափու ուշիմս զիտառասիրութիւն, զսիրելութիւն, զզգայութիւնս, զցասումն, զնախանձ, զունայնասիրութիւն, նուիրեա զանձն քո Տեառն՝ որպէս Իսրայէլ զանդրանիկս իւրաքանչիւր զքեզ 'ի գերիս քահանայապետին առ ոտս սեղանոյն, այլ ոչ լինիս բաժին Տեառն. փոխանակ անձին նուիրեա անարգ անասուն, ցուցանես գործս արտաքինս, երևոյթս բարեպաշտութեան, և համարիս՝ Թէ հաճի Աստուած ընդ փոխանակութիւնդ, և ընդունի փոխանակ սրտի քո և անձինդ՝ նուէրդ օտար։

Սակայն բազմագոյնք 'ի դարձելոց այսպիսիք էն, մանաւանդ յարքունիս. հանապազորդեն յախտաւորու-

թիւն, Թէպէտ և ոչ նոյնպէս երևելի, այլ խնկութեամբ նոյնպիսի։ Նուիրեն Աստուծոյ զանձինս, այլ հոգեմտութենէ՝ եռանդունք և վտանգաւորք՝ ոչ թուլանան 'ի նոսա, այլ նախանձ և գրգռութիւն և հակառակութիւն բարձաձգութեան, կցորդութիւնք մարդկայինք, ոչ ևս ներքին կալ անկարելիք. այլ մեծարանք, բարեկամութիւն մեծամեծաց, պատիւք քաղաքականք, ծափաձայն գրուատիք, և մանաւանդ ընդհարձ առ մեծին, ոչ կորուսանեն զյարգ 'ի սրտի նոցա, Թերևս մտեալ իսկ ի՛ցէ յառաջագրութիւն նորոգ կենաց իւրեանց։ Նուիրեմք զանձինս Տեառն, այլ զբաւարեպաշտութիւն առնեմք մեզ 'ի քաղցր և 'ի խաղաղ կենցաղ, զերծ միայն 'ի հոգոց և յանձգութեանց մեծամեծ ախտից, անխորհք 'ի յուզմունս և 'ի հաճոյս, բերելով յանձին անհոգութիւն քան առաքինութիւն. 'ի կենցաղ ամիսոփեալ 'ի շքեղանս ինչ պարապմանց, Թէպէտև անմեղս, այլ դիւրինս և խաղաղականս, 'ի կենցաղ բնական ամենևին, և յաճախ անգործ, յորում ոչ զլանամք զգայութեանց՝ բայց միայն զծայրայեղ զառանցանս, և ուր հրաժեշտ յամբոխ և 'ի մեծամեծ խրախճանաց առաւել տեղի տայ պարապելոյ 'ի խնամս և 'ի փափկութիւն մարմնոյ և առողջութեան։ Նուիրիմք Տեառն, այլ Թէպէտ և զգաստացեալք մեղանչական կցորդութեան, չև ևս խղեմք զմահաբեր կապանս, տածեմք տակաւին զախուր մնացուած ախտից՝ զորս կարծեմք չիջեալ 'ի մեզ այնու, զի ոչ ևս զառածանեն զմեզ 'ի ծանուն. ախորժեմք տակաւին տեսանել զանձինս և զվայրս՝ որ ոչ գոն ուրեք եղեն մեզ պատճառք կործանման. հանգոյն Հաբելի ոչ ևս յայտնի պատուհասիւ զԹերափս, այլ ոչ իշխեմք խորտակել զայնոսիկ և անհետ առնել յաչաց։ Եւ զի՛ երկարեմ. նուիրիմք Տեառն, այլ որ ինչ հաճոյն էր մեզ՝ հաճոյ է տալ կաւին, չև ևս զոհեմք ինչ. չատ համարիմք զերծանել զմորթ զոհին, փոխել զարտաքոյս, մերկանալ զորոբո-

բիա և զսիզձ կերպարանս, այլ Թողուլ զներքինն. ոչ զենուամբ զղօհն՝ որպէս օրէնք հրամայեն, և սուսեր հաւատոյ չառնէ անդ բաժանումն ինչ ցասարեր. Մորթէսցեն զաղջակերդն, և անդամ անդամ յօշեսցեն զնա:

Այլ քանզի ոչ դադարեմք 'ի սրբոց պաշտամանց, քանզի զգուշանամք 'ի ծանուննց մեղաց, քանզի գնամք գրեթէ ընդ նոյն ճանապարհ արդարոց, ոչ ինչ ընդհատ համարիմք յարդարոց. չիք ասա կեղծաւորութիւն, այլ մոլար միամտութիւն: Ի սկզբան դարձին մերոց, հարեալք արդի յիշատակաւ անկարգութեանց մերոց, և ապաշխարանաց՝ զորս արդարութիւնն Աստուծոյ պահանջէ 'ի մեզ, 'ի միտ առնումբ՝ զի չև ևս արարեալ եր մեր փոխարէն, և ամօթով լիմն լսէաք կոչելոյ զմեզ այլոց՝ ծառայս Քրիստոսի. և յորժամ աշխարհ, կարի յոյժ երբեմն պատրաստական 'ի կոչել սուրբս և առաքինիս 'ի տեսանելն թեթև ինչ փոխոխումն 'ի մեզաւորս, յորժամ ասեմ չձանաչէր զմեզ աշխարհ, չճանաչէաք և ոչ մեք զմեզ. այլ տակաւ յանզգաստից ընդելացաք ընդ հանգամանս մեր. կերպարան արդարութեան ծածկեաց 'ի մեզ զներքին Թշուառութիւն մեր, գովութիւնք այլոց զկարծեցեալ առաքինութենէ մերմէ՝ համոզեցին զմեզ համարել զմեզ ճշմարիտ, և զի առաւել ինչ ոչ պահանջէր 'ի մեզ Աստուած. և այլոց աչօք նկատեալ միշտ զմեզ, յաջողեցաք համարել զմեզ՝ որ ինչ չեմքս բնաւ. և առանց մատուցանելոյ ինչ Աստուծոյ նուէր ինչ իրական և ցաւեցուցիչ զգայութեանց մերոց, յօժարութեանց, անհնազանդութեանց, հանգստեան, հակակրութեան, դաղտնածածուկ առելութեան, հպարտութեան և փառասիրութեան, համարիմք զմեզ աստուածանուէրս, հրաժարեալս յաշխարհէ, և որպէս թէ մատուցեալ Աստուծոյ զնուէրն՝ զոր խնդրէ 'ի մեզ:

Ոչ այլ ինչ է բարեպաշտութիւն, եղբարք իմ, բայց նուիրումն սրտի մերոյ. այլ էէ բաւական՝ զի նուէրն

այն իցէ իրական, պարտ է և՝ զի իցէ ամբողջ, որ է երկրորդ հանգամանք: Քրիստոս, որպէս սուրբն Բեռնարդոս ասէ, մատոյց այսօր Հօր իւրում զամենայն անուանս իւր փառաւորեալս, զպատիս և զանմեղութիւն իսկ իւր, ոչ 'ի բաց էառ ինչ, վասն ուսուցանելոյ մեզ, ասէ նոյն ինքն սուրբ վարդապետն, զի յամբողջ նուիրման է արժանաւորութիւն:

Իսկ մեք կամիմք գառնալ առ Աստուած, և նորոգել զվարս մեր. այլ ոչ կամիմք միահաղոյն տալ աշխարհի պահարզան. կարծեմք զի անդէն և անդ զամենայն ինչ միանգամայն յանձն առեալ, չկարիցեմք յաջողել. այլ պարտ իցէ մեզ չհեզ զանձինս տակաւ 'ի մասին ինչ՝ չև զայլոց մատանց բռնն հարեալ, և զի չիցէ անհաճոյ Տեառն, զի տակաւք 'ի սկզբան անդ գոլով՝ ներեսցուք ինչ ինչ տկարութեանս մերում, և զիարձ առեալ ընդդեմ անզօր թշնամեաց՝ կարասցուք ապա յաղթել հզօրաց. որպէս Դաւիթ նախ ընդ արջն և ընդ առիւծս մարտուցեալ՝ իշխեաց ապա յարձակել 'ի Գողիաթ: Ըստ այսմ օրինակի հրաժարեմք նախ 'ի զսկատեղոյ 'ի խաղս, այլ չև ևս կամիմք Թողուլ 'ի բաց զՀաճոյս. խզեմք զկապ իրիք 'ի մեզաց, այլ ոչ յանձն առնումբ Թողուլ անդէն զսեասրանս 'ի բաց, և զվտանգաւոր կենակցութիւնս, զկցորդութիւնս անօգուտս և կեղտարածս, զինամս առաւելազանց զարդարանաց: Աստմբ ցմեզ, զի ամենայնի է դէպ ժամանակ, զի պարտ է յանզգաստից սովրեցուցանել զայլս և սովրիլ, երկնչիմք 'ի Հեպոյ, և զսկարութիւն կոչեմք խոհեմութիւն: Սակայն սկիզբն այսպիսի կարի զգուշաւոր, ոչ յաջողէ, և ոչ տեւէ ընդ երկար. զի ոչ իբրև զգործս մարդկայինս է դարձ առ Աստուած. սա էէ ինչ, եթէ չիցէ անթերի. և էէ է սկսեալ, եթէ իցէ դեռևս թերի. ամենայն սխալք մի ինչ կալմեն 'ի հոգւոջ, զոր ճգնիս ընդդեմ մեծ միոյ ուրոյն, հատանես զգլուխս վիշապ օձին անապատս անդրէն 'ի ծնունդ. ընորհք աս-

տուածայինք ոչ ճանաչէն ՚ի մէն միւմ ուրոյն յաղթութիւն:

Է իսկ և բարեպաշտութեան յառաջադիմութիւն, և օրըստօրէ կատարելագործութիւն. քառասնամեայ աշխատութեան եղեն պէտք առ ՚ի կանգնել և ՚ի կատարումն ածել զպարիսպս և զտաճար սրբոյ քաղաքին Երուսաղեմի յօրինակ հոգւոյ հաւատացելոյ. այլ զաշխարհ և զամենայն ինչ մեղանչական պարտ է անդէն և անդ առնել բնաջինջ ՚ի սրտի մերում. և զամենայն, որ չիարէ կալ ընդ քրիստոնէական կեանս, պարտ է միանգամայն առնել անհետ. ընդ հնչել աստուածային ձայնի ՚ի սիրտ, պարտ է եղեռնաւորին երկիւղի համակործան առ ոտս Տեառն անկանել, և ոչ իմիք ՚ի հետոց նորա մնալ՝ բայց աւերակացն:

Կարէր ապաքէն, եղբայրք իմ, Փրկիչն մեր ՚ի գալն այսօր մատուցանել Հօր իւրում զանձն ՚ի նուէր առաջի սրբոյ սեղանոյն, որպէս աչեր տաճարին փայլեցուցանել նշոյլ ինչ ՚ի ճառագայթից փառաց և զօրութեան իւրոյ, որպէս ՚ի հալածել անտի զապականիչս տան Հօր իւրոյ. այլ ամենայն իսկ բաժին վիրաւորեալ զսէր նորա: Ջանայապետ է յաւիտենից նորոյ Ուխտիս, իւր միայն են իրաւունքն մատնելոյ ՚ի ձեմարիտ սրբութիւնն, և հրաժարեալ ՚ի փառաւորեալ իշխանութենէն անտի՝ գալով առնուալ երաւունս մատնելոյ յօրինակ նորին ՚ի տաճար անդր. Փրկիչ է Սիոնի, և փրկի որպէս զմի ՚ի սովորականացն նուիրեաց. օրհնագիր է Ժողովրդոց, և գայ հնազանդել օրհնաց՝ որոց ինքն է լոյսն. և աղատիչն, այնքանիցս նախաձայնեալ, յանձն առնու աղատիլ երբէք զայլս ՚ի գերութենէ հասարակաց՝ նուիրմամբ անարգ անանց, և մատուցանէ Հօր իւրում զայն ամենայն առնուանս փառաց՝ որովք Հայր ինքնին փառաւորեալ էր ընդ նմա:

Այլ յայսմ մասին առաւել է դժուարին գտանել

զոք, որ ոչ ՚ի բաց առնուցու ինչ, և բոլորանուէր ընծայեսցէ Աստուծոյ ՚ի սրտէ զամենայն պատիւս անոտիս, որ ամբառնան զնա յաչս մարդկան: Այդ իսկ՝ ուր զերծեալ ոք ՚ի խաբէութենանց աշխարհի, գառնայ ՚ի մոլորութենէ ախտից առ Աստուած, ոչ ՚ի միտ առնու զուարձայնութիւն և զանհրաժարելի յարուցումն իւր յաւագութիւն և յաշխուժականութիւն. կամ՝ զի մեծարանաց առնուանքն այնոքիկ մոցեն, որպէս բանիս կարդ է ասել, յոր ինչ և առնէ վասն Աստուծոյ: Եթէ նուիրէ ինչ տերունեան տաճարին, դրոշմէ փառաւորեալ անուան իւրոյ և իշխանութեան անմահացուսցէ զիշատակն. եթէ կանգնէ ապաստանս ողորմածութեան, կամ՝ զի լոյսն արձակէ աշխարհաքարող բարերարին մեծութեան. և նշանակէ ուսոյցութեան նախընծայէ միշտ երևին տեսողաց ՚ի սրբազան գործս անդ: Աչսպիսի է ուսոյնասիրութիւն, մանաւանդ մեծամեծաց. չեն ինչ նոցա հաճոյ սպասք սննդեանք. գործք կրօնականք, որ հաւատարեն զմեզ ընդ խաւն, չեն նոցա ախորժելի. պարտ է՝ զի որ ինչ և առնեմքս վասն Տեառն, բերցեն զինիք մեր որ ինչ եմքս. մատնեմք ՚ի գործս ողորմութեան, այլ կամիմք և անդ լինել առաջինք ՚ի պատիւ. խոնարհիմք մինչև ՚ի գործս անարգագոյնս եղբայրսիրութեան, այլ խոնարհիմք փառասիրութեամբ, և ՚ի խոնարհութեան իսկ անդ ցուցանեմք զմեծութիւն մեր. գոհանիմք յառանձին տեղիս նուիրեալս յանարգ գործս ողորմածութեան, այլ անդ ևս յայտ առնեմք զմեզ ուսոյն պատասխրութեամբ. և Թուի ինն այնպէս, զի չկամիմք գնել զանձինս մեր ՚ի վտանգ խոնարհութեան, առանց պատրաստելոյ մեզ փոխարէն գոլութեան:

Անծանօթ է արդ խոնարհութիւնն այն Հարտար, ըղոյ սուրբք՝ մեծապատիւք յաչխարհի՝ Թողն զբնականաւ: Գանի՛ ուրախութիւն էր նոցա կարել գողանալ զանձինս յաչաց հասարակաց, և մերկացեալ առ ժամա-

նակ մի զմեծութիւն իւրեանց՝ գնալ անծանօթք առ ի սփոփել զեղբարս, կամ լինել նշաւակ նախատանաց, կամ փառաւորել զԱստուած ի գործս աննշանս կրօնից. որպիսի՛ ճարտարութիւն սուրբ առ ի գտանել պարապ այսպիսի բարեբաստիկ: Յայնժամ համարէին նոքա զանձինս իսկապէս աւագս. ի վայրկեանս այսպիսիս խոնարհութեան սուրբ հաճութեամբ հայէին յանձինս, գտանելով յիւրեանս զպատուորագոյն նշանակս նմանութեան Տեառն իւրեանց, կապուեալ այսօր յամենայն փառաց առաջի Հօր իւրոյ, և խառնեալ հասարակաց արարողութեամբ ընդ այլ անգրանիկս Իսրայելի. յայնժամ թեթեւացեալ ի բեռանէ մեծութեան, գնային առաւելագոյն եռանդեամբ ընդ արդարութեան ճանապարհն, և առատագոյնս հաղորդէր ընդ նոսա Աստուած, և ճաշակէին զքաղցրութիւն նորա անըմբռնելի մարդկեղէն մտաց: Ա. յսպէս Մովսէս ի մերկանալ զփառացն անուն որդէ դուստրն Փարաւոնի, և ի գալ յանապատ որպէս այր մի աննշան և անծանօթ՝ արածել զխաշինս Յոթորայ, յայնժամ երևեցաւ նմա Աստուած ի մորենւոջն, և եհեղ ի սիրտ նորա մխիթարութիւն անճառ, որ փոխարինէրն տոկոսեաք զփառան եգիպտական, զոր նուիրեաց նախատանացն Փրկիտոսի:

Բայց Փրկիչն մեր նուիրէ այսօր Հօր իւրում ոչ միայն զամենայն փառաց անուանս իւր, որպէս զի մի իւիք լինցի նուէր իւր Թերի, այլ և զանմեղութիւն իւր մատուցանէ նմա ի նուէր: Երևի ի տաճարին որպէս մեղաւոր, փրկանաւորի որպէս գերի և որդի բարկութեան, յանձն առնու զամենայն ամօթ մեղաց՝ յորմէ ամենևին է ազատ. իսկ մեք ի նուէրս, զորս խնդրէ ի մէնջ Աստուած, կամիմք միշտ պահել զանմեղութեան և զլաւութեան մերոյ՝ զոր կորուսաք՝ զանուն ընդունայն:

Դու երկնչես՝ զի ի հատուցանել քո զինչս անիրաւութեամբ ստացեալս՝ յայտնեսցի զօշաքաղութիւն քո

անյայտ. այլ խաբիս. զի համբաւ քո, զոր համարիս ցարդ ի մասինդ յայդմիկ անարատ, ի բազմաց հետէ բամբասի համարձակ՝ զի այդ ամենայն սպասք չքեղք, այդ ամենայն ապարանք հոյակապք, այդ ամենայն առանձին ճոխութիւնք լեցեն կողոպուտաք որբոց և այրեաց, և զի քո կանգնեալ լցեն զբախտ քո ի վերայ թշուառութեան հասարակաց, և զի չէր քեզ մարթ զայսողութիւն այդպիսի վազ ընդ փոյթ ստանալ արդարութեամբ. աչխարհ իսկ թշնամանս իւր համարի զչարչարութիւն քո զայդ, և ցասմամբ լինի և արհամարհանօք հայի ի քէդ: Որպէս զի գնացեք քո զղջականք ի յայտ եկեալ՝ ոչ ինչ ձեռասեցեք ինչ անուան քումմ, այլ մանաւանդ չիք քեզ այլ հնար ստանալոյ անդրէն զհամբաւ քո կորուսեալ: Դու պատճառիս՝ զի ի հատանել քո թթուաբար զայս ինչ կամ զայն կցորդութիւն, յայտնեսցի՝ զի չէր այն անմիջ. այլ գիտեա, զի վազ իսկ բամբասի հրապարակաւ՝ յամախել քո յայն, զոր դու անյայտ վարկանիս. ի գայթակղութիւն հասարակաց է այդ, և դու զանձն քո խաբես՝ կարծելով զայն գաղանի. լաւորեարն հեծէ ընդ այդ. աչխարհ, ոչ միայն չանէ զայդ անբասիր, այլ և անդր ևս քան զճշմարտութիւն թերևս անցանէ. զի զառանցանք իւր յայսմ մասին ի չարամտութենէ յառաջ գան քան ի լաւութենէ. և յանկարծակի հատուածն կցորդութեան՝ ոչ ևս լեցի քեզ հաչակ երկիւղալի, այլ գնացք կարևոր ևս պատուոյ քումմ և փրկութեան: Որպէս Աւետիս զի պահանջէր ի Սամուէլէ զդուշութիւն և մեծարանս հրապարակաւ, առ ի պահել զպատիւ և զհամբաւ իւր առաջի ժողովրդեան, ուր մեք իւր վազ իսկ հաչակեալ էին Իսրայելի. և ուր զաստուածային օրինաց են խնդիրք՝ ոչ է օրէն երկընչել ի կարի իսկ կորանաց, որ կարևոր են ի փրկութիւն:

Եւ դարձեալ՝ նուէր Փրկտոսի է բոլորովին կամա-

ւոր, որ են վերջին հանգամանք. և է այս առաւել քան զօրէնս, զի ոչ բովանդակի յօրէնս անդ, այլ՝ սէր ևեթ նուիրողին. և գործ փրկութեան աշխարհի՝ որ՝ ի Հօրէ իւրմէ յանձնեալ էր նմա, կարէր առնուլ կատարումն՝ առանց յաւելլոյ՝ ի նախատինս և՝ ի վատահս, որ առաջի կային նմա, և զայս նախընծայ կորանս:

Այլ կամէր նա ընուլ զամենայն արդարութիւն, և ուսուցանել մեզ, զի որ զգաստացեալ՝ ի զառածանաց աշխարհի՝ նուիրի Աստուծոյ, չկարէ զլանալ անձին առաւելազանցութիւնս սուրբս, և ոչ մոռաբերէ մոանել ընդ Տեառն՝ ի համար, առ՝ ի գիտել Ճշդիւ որ ինչ պարտի նմա, և ոչ գտանէ ինչ կարի առ՝ ի մորմոք և յեռանդն ղղջման իւրոյ. և քաջ հեռի՝ ի գաղջութենէ նախանձու՝ որ խնդրէ միշտ զհարկ անհրաժեշտ պարտուց առ՝ ի կատարել, պէտ առնէ անձին՝ որ ինչ եռանդն սուրբ ազդէ՝ ի նա:

Այլ արդ ո՞ր գտանիցին անձինք այսպիսիք: Ի շարժել զրբ շնորհաց գառնալ առ Աստուած, առաջին խընդիր այն է՝ յամենայն օրինաց ծառայելոյ նմա հետազօտել զքաղցրագոյնն և զթեթևագոյնն անճնասիրութեան: Ոչ միայն չընդգրկէ ոք Ճգնիւս առաւել քան զպարտ, այլ և քննէ ցո՞ր վայր մարթ իցէ նմա մղել զղնչումն առ՝ ի կարելոյ կալ չհզերս պարտուց՝ ի վանգաւորս. և յօրինէ իւր զնահագիծ իմն առաքինութեան, յոր մտանէ աշխարհ գոգցես հաւասար Աւետարանին. քաջ՝ ի բաց՝ ի կացուցանելոյ առաջի իւր զլուսս յօրինակ նմանութեան, յայտ առնէ անդամին՝ չկամել զհետ նոցա մինչև՝ ի ծայրս հասանել, և ծաղր կալ առանձնաւորութեամբք և արտաղութեամբք առաւելազանց բարեպաշտութեան. հեռի՝ ի խնդրելոյ յօրինակս նոցա՝ որոց ինչ պարտ է նմանել, խնդրի յորոց ինչ պարտ է խորշել. և կամի լինել Աստուծոյ, եպերելով զայնոսիկ որ ծառայեն նմա: Ըստ այսմ օրինակի նուիրէ ևեթ Աստուծոյ

ծոյ որ ինչ ոչ կարէ զլանալ նմա, և վարի ընդ նմա ոչ որպէս ընդ հօր զայրացելոյ՝ առ՝ ի գուէթ ածել զնա, այլ որպէս ընդ Թշնամւոյ՝ որուսմ տայ ակամայ, որ ինչ պահանջի:

Այո, եղբարք իմ, ոչ է սիրել զԱստուած՝ յորժամ չափ դնեմք սիրելոյ զնա. ոչ է զղջալ ընդ մեզս, յորժամ կանիեմք՝ ի խնդիր ամաքելոյ զապաշխարանս. կեղակարծ է դարձ, յորժամ սկիզբն առնեմք դնելոյ նմա պայմանս. ոչ է յեղափոխեալ սիրտ, որ պարապէ տակաւին՝ ի հաշուել զառաջին քայլս յեղափոխութեան իւրոյ: Սկիզբն ապաշխարութեան ոչ է մարթ՝ թէ իցէ թոյլ և ճիշդ. յայնժամ սիրտ ապաշխարողին, ոչ կարելով զդոյեա բերել լուծեան առաջնոյ աստուածային ազդեցութեանց, խնդրէ ափոփել ևեթ զմորմոք իւր. ոչ երբէք այնպէս առատահոս լինանեն արտասուք որպէս յայնժամ. ոչ երբէք այնպէս եռանդուն է զիղջ: Զո՞ր աղմուկ ոչ նեղդրծանեն շնորհք՝ ի սիրտ ճշմարիտ ապաշխարողի, ընդ ողբալի կեանս իւր. զո՞ր ցաւումն սուրբ ընդգէմ անկարգութեան առաջնոց գնացից, և ընդ գայթակղութիւն անցելոց կենացն. զո՞ր պատճառս չունիցի նա ածել ընդդէմ՝ ՝ի կամել մեր չափաւորել զեռանդն իւր, և սփոփել զդառնութիւն ցաւոցն. զո՞ր երկիւղ չգտանելոյ՝ ի Տեառնէ զամենայն ներել թողութեան, զոր խոստացաւ նմա. զո՞ր խղճմ փոխարինելոյ կորստեան ժամանակին՝ ի զառանցանս աշխարհի, յօգուտ՝ ի կիր արկանելոյ զինչ արիս կեանս իւր, և մի՛ ևս կորուսանելոյ չաչաց զանգին շնորհն՝ որ կոչեցին զնա՝ ի Ճանաչութիւն և՝ ի սէր Ճշմարտութեան. զո՞ր նախանձ սուրբ ընդ եղբարս իւր բարեբախտս, կանխեալս՝ ի նուիրել զանձինս իւրեանց Աստուծոյ. և քանի՞ սիրալի թուի նմա չամչնալ իւր՝ ի սիրել զմիայն արժանաւորն սիրոյ. զո՞ր եռանդն խնդրելոյ վրէժ՝ ի մարմնոյ իւրմէ զնոհերայն՝ որովք աղտեղեցաւ, և վարելոյ՝ ի ծառայութիւն Աստուծոյ զանգամն՝ որ ծառայեցին մեղաց:

Այսպիսիք են գարձք՝ որ ապա ոչ Թուրլանան, որ ոչ այլափոխին : Այլ պատանին, պատմեալ ՚ի սուրբ Աւետարանի, որ կոչեցեալ ՚ի Ֆրիստոսէ, սկսանի հարցանել եթէ պաթա կայ իւր հրաժարել յամենայնէ առ ՚ի գնալ զհետ նորա, և միւսն այն՝ որ յանձն առեալ հետևել նմա, պահէ անձին զերաւունս գնալոյ Թաղել զհայր իւր, և բնաւ ամենայն գարձք ամրքեալք և անկատարք, և ամենայն իսկ նուիրեալք՝ յորս խառնի մեղք ընդդէմ հրամանի օրինաց, մերժին ՚ի Տեառնէ. և առ ՚ի լինել նոցա աստուածահաճոյ, պարտ է՝ զի ձեմարիտ զհնուսն սրբեսցէ զնոսա, զի ամբողջութիւն կատարեալ գործեսցէ, և զի եռանդն և զեղումն եռանդեան՝ ատցէ այնոցիկ լուծեն, և ՚ի հոտ անուշից արասցէ ելանել նոցա յաթոռ մեծվայելչութեանն Աստուծոյ. Այս օրէն է պահն: Այլ որպէս առ պակասութեան հանգամանացս այսոցիկ՝ առաւելագոյնք ՚ի գարձից չեն ՚ի սրտէ, այսպէս և առ ՚ի չգոյէ հաւատարմութեան չեն յարատևք. զայս ևս Տիրամայրն օրինակաւ իւրով ուսուցանէ մեզ:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Թերութեանց հաւատարմութեան սովորագունից, յորս անկանիմք ՚ի ճանապարհի փրկութեան՝ զոր խընդրէ ՚ի մէնջ Աստուած, են աղբիւրք խոհեմութիւն մարդկեղէն՝ միշտ հանձարեղ ՚ի սոգտանել զառաջադրութիւնս ընորհաց ՚ի վերայ հոգւոյ մերոյ, կամ բարձրամտութիւն և գաղանածածուկ ինն ինքնահաւանութիւն՝ որ ՚ի պարգևս իսկ սրբոյ Հոգւոյն գնեն արգելս առաքինութեան, և կամ գարձեալ վհատութիւն վտանգաւոր՝ որ ՚ի սպառնալիս չարեաց գիւրալուր է յոյժ խորհրդոց իւրոց, և զպարտս իւր ըստ ակարութեան իւրում չափէ:

Արդ հաւատարմութիւն Մարիամու յայսմ խորհրդեան ընծայէ մեզ կանոնս մեծամեծս առ ՚ի խորչել յերից վտանգաց աստի. հնութեամբ իւրով ոչ պատճառաբանէ, խոնարհութեամբ իւրով ոչ բարձրամտէ, և արիութեամբ իւրով՝ ոչ լքանի: Հետևել ինձ պատրաստ եմ ըստ այսմ կարգի ՚ի լուր, ընդհետևով ինձ մտադրութիւն:

Հլուծեամբ իւրով ոչ պատճառաբանէ. զի զինչ էր մարթ սրբոյ Կուսին խորհել ՚ի միտս իւր, առ ՚ի հրաժարել յօրինաց անտի սրբութեան: Եթէ պատճառք պատուոյ անձին չբաւէին ՚ի համոզել զնա, կարէր իսկ անփոյթ առնել զվաստաց Աստուածորդւոյն, և խառն ընդ այլս ՚ի մարց արկանել զանձն ընդ ամաչեցուցիչ արարողութեամբն. էր այն խառնել և զԱստուածորդին ընդ այլ տղայս Իսրայէլի. օրէն էր նմա խոնարհել հրապարակաւ ՚ի պատուոյ աստուածամայրութեանն՝ առանց կապտելոյ յԱստուածորդւոյն զիառս անսկզբնական ծննդեանն, և տալոյ անդստին ՚ի հեռուստ պատճառս անհաւատութեան և հայհոյութեան թշնամեաց իւրոց:

Այլ սուրբ Կոյսն յառաձնութեան իւրում ՚ի Նազարէթ ուսեալ էր՝ զի պարզ է ընորհաց տեսութիւն, և զճանապարհացն Աստուծոյ կարի իմաստասիրել՝ է լոյս ինն առաւելագանց, որ շլացուցանէ և ձգէ ՚ի մոլորութիւն, զի կեանք հաւատոյ չէ առանց վթութեան և անհաստութեան՝ առ ՚ի չքառնալ յարդարոյ զվաստակ հնութեան, և զի գարձեալ զանն գայթակղական պարտ է խլել ՚ի բաց, որպէս զի մի՛ կարի հեռի դիտեսցէ ՚ի ճանապարհս՝ ուր ընորհք Աստուծոյ կոչեն զմեզ: Հնազանդի նա պարզմտութեամբ, երկրպագէ ըստ աստուածային կարգաց՝ խորհրդոյն Աստուծոյ յաւիտենականաց, և գնացից՝ որ Թուրլին անտեղութիւնս անհրաժեշտս ընծայել մտաց:

Այլ քանի՛ սակաւք են հետևողք օրինակի Կուսին,

ևս և յայնոսիկ՝ որք յարդարոց համարին են, և բարեպաշտութեամբ կեան: Այո՛, եղբարք իմ, գրեթէ միշտ պատճառանս խնդրեմք ազատ լինելոյ ի սրբոց օրինաց, որ են ի փառս Աստուծոյ, և գիտեմք զգաղտնիս յանձանց իսկ պատրուակելոյ զձերութիւնս ընդ անուամբ բարեպաշտութեան: Հրաժարել հրաժարեաք ի բաղում իրաց՝ որպէս խնդրեն ի մէնջ աստուածային օրէնք. այլ ոչ կամիմք որպէս թէ առեալ առնել զկրօնս առանձնաւորութեամբք, զորս ծաղր առնէ աշխարհ: Ըղձալի էր մեզ առնել ինչ ինչ՝ զորս պարտ է մեզ առնել վասն անսագիտ լինելոյ ի խղճէ մտաց, այլ որպէս թէ երկնչիմք յանպատեհութենէ ինչ՝ որ թուին մեզ վտանգաւորք քան զչարիս, զորս հասանէ մեզ անտես առնել. ներողագոյնք կամիմք լինել անիրաւութենէ կրելոյ, այլ զսրբազան կարգին՝ զոր բերեմք յանձին՝ պարտ է մեզ պահել զպատիւ. էր մեզ համբերել զպարտութեան անտրտունջ, այլ երբ թէ գործն Աստուծոյ կրիցէ այնուիկ ձևաս, և եթէ ոչ նշանակեսցի զպարտօղն՝ դիւրահատանութիւն հասարակաց մոլորեցուց, և խանգարեսցին գործք ողորմութեան. մարթ էր մեզ եղբայրսիրութեամբ և քրիստոնէական հեզութեամբ վարել ընդ այս ինչ մատենագիր, այլ նախանձ Աշմարտութեան ոչ ներէ զարդար չափաւորութիւն, և չէ պարտ ընդդէմ մոլորութեան քաղցրացուցանել և փոխել զբարբառ, զոր և ոչ Առաքեալն արար ի գրէն երբեմն ընդդէմ անկարգութեան միոյ յեկեղեցեաց հաւատացելոց, այլ հնչեցուցանել զիոզ՝ որպէս քահանայք ի հին օրէնս արարին ընդդէմ Երիքովի: Այսպէս կրօնք իսկ յաճախ լինին ապաստան և նեցուկ անիրաւ ախտից:

Թողցուք Աստուծոյ, եղբարք իմ, զնմանս փառաց իւրոց, պաշտպանեսցուք Աշմարտութեան՝ զինեալք եղբայրսիրութեամբ, պատերազմեսցուք ընդդէմ մոլորութեան՝ հոգւով հեզութեան և քաղցրութեան,

որով միայն գան մոլորեալք յուղղութիւն. գարմանեսցուք զվէրս՝ առանց դառնացուցանելոյ զվիրաւորն, մի յաւելցուք ի դայթակղութիւն մոլորութեանց զդայթակղութիւն կրից մարանէլոյ ընդ նոսա, և մի օրինաց անցուածեամբ խնդրեսցուք զփառս Աստուծոյ, այլ կատարեսցուք զօրէնս՝ որ յայտ յանդիման կան: Անտեղութիւնք կեղակարծք, զորս Թուխ մեզ նշմարել ի հեռուստ, մի խափանեսցեն զմեզ. հոգք այդոքիկ նմաւեն անկ, որ հրամայէ մեզ հնազանդել. և քանզի այդ պատճառք չեղեն բաւական օրէնսդրին փոխելոյ զօրէնս իւր, ոչ է պարտ այնց և ոչ զհաստատութիւն հնազանդութեան մերոյ այլայլել:

Բայց դո՛ր որ այդչափ Թուխս նախանձաւոր փառացն Աստուծոյ և աստուածային իրաց, և Թերևս խառնես ընդ կրօնական զգացմունս զեռանդն բոլորովին մարդկային զփառաց անձին, գիտեցիս, ուր գտանէ Աստուած զփառս իւր: Դու որ համարիս զայն ի հոչակաւոր գործ ինչ բարեպաշտական, յամեթ և ի բարեհամբաւութիւն Թշնամեաց կրօնից, խաբիս. զի է այն ի լրութեան արդարոյ զպարտեալդ. տաժանաւոր բարեգործութիւնք առաւել մեծ են յաչս Աստուծոյ, և առաւել արժանաւորք փառաց քան զմեծահանդէս փառաւորութիւնս առաքինութեանց: Թերևս խորհեալ ձեք զգաստացեալք ի չարեաց, հաւատարիմք և եռանդնոտք, առաւել փառաւորէին զԱստուած առ գետս բաբելացւոց առանձին հեծութեամբք, սուրբ և սրբատեառնդն ըղձիւք, տխուր օրհներգութեամբք, զորս վերառաքէին հանապազ առ Աստուած հարցն իւրեանց, և համբերութեամբ՝ որով կրէին զխիստ գերութիւն և զլուծ անթվփատից, քան սպառսպուռ կործանմամբ Թշնամեաց Իսրայէլի, քան յաղթանակաւ վերատին կանգնելոյ Երուսաղէմի, քան մեծագործութեամբ տաճարին և զտից նորա. զի ոչ միշտ մեծարոյ առնելով զա-

ռաքինութիւն, այլ բազում այն է՝ զի կրթելով արդա-
րոյ յարհամարհանս, փառաւորի Աստուած:

Մի՛ւս ևս խրատ, զոր տայ մեզ աստանօր հլուիչն Տէրամբն, այն է՝ զի ամբարձեալ ՚ի գերագոյն ծայր չնորհաց, միացեալ ընդ Աստուածոյ գերազանց պարգեւօք սուրբք Հոգւոյն, ոչ անարժան համարի իւր զհասարակ արարողութիւն պաշտաման, չինգրէ այլ ճանապարհ բարձրագոյն, առաւել հոգեւոր և կատարելագոյն: Ւանդի այս վտանգ է երկիւղի բարեպաշտութեան, համարել յաճախ ջերմեռանդութիւն խմաստնագոյն և ընտրելագոյն Թողուլ ՚ի ռամիկն պարզամիտ և անուս զարուաքին և զհասարակ պաշտամունս կրօնից՝ ՚ի բարեպաշտութենէ հասարակաց հաստատեալս, որոց նպատ-
զութիւն Թուի նմա սահմանեալ առ բազմութիւն ոգէտ, որպէս թէ լուսաւորեալ հաւատոց օրէն իցէ զանց զնոքօք առնել. և անտես արարեալ զզգալիս և զմարմնաւորս՝ որք որպէս թէ ոչ ինչ օգնիցեն, գործել ըստ հոգւոյ՝ որ ամենայնի է օգտակար: Վասն որոյ Թո-
զումք ՚ի բաց բազում սովորութիւնս սուրբս և արտա-
քինս՝ որ ՚ի սկզբան գարձի մերոյ ածէին օծութիւն իմն նեղքին ՚ի սիրտս մեր, և պինդ ունէին զհաւատարմու-
թիւն գեռակիրթ բարեպաշտութեան մերոյ, և համա-
րիմք՝ զի իցէ ճանապարհ իմն այլ բարձրագոյն. սակայն ՚ի Թողուլ զսովորութիւնս զայսոսիկ, անկանիմք ՚ի գաղջութիւն և ՚ի ցամաքութիւն. ոչ ևս զգամք զմիե-
թարութիւնս սուրբս՝ որ են վարձք և նեցուկք առաքի-
նութեան. և անփոյթ արարեալ զգործս ըստ սոսկ ան-
օգուտ կարծեցեալս, անփոյթ լինիմք տակաւ և կարւո-
րացն. և գտանիմք մարմնաւորք ամենևին՝ ՚ի կամէն գնալ ըստ հոգւոյ:

Զի ամենայն ինչ, եղբարք իմ, օգնէ ճշմարիտ բարե-
պաշտութեան, ամենայն ինչ զարթուցանէ ՚ի մեզ զհա-
ւատս, ամենայն ինչ արծարծանէ զսէր, ամենայն ինչ

հաստատէ զյոյս. չէք ինչ անօգուտ բարեպաշտութեան, բայց գործք անեռանդն. պարզագոյնք ՚ի բարեգործու-
թեանց Թուին նմա այնպէս բարձրագոյն առաջի Աստու-
ծոյ, որպէս հոգիահրաշ հիացմունք սերովբէից, եթէ նոքա կցորդեալ ընդ սիրոյ և ընդ եռանդեան: Կատարե-
լութիւն առաքինութեան ոչ է հաստատեալ ՚ի վեմու-
թեան պարտուց՝ զորս կատարեմք, այլ ՚ի մեծութեան հաւատոց՝ որ և զհասարակ գործս աղնուացուցանէ: Բազում այն է՝ զի չհամարիմք զմեզ յառաջադիմեալ վասն չպարապելոյ ՚ի բարձրագոյն գործս, յընթերցմունս հոգևորս և ՚ի կատարելագոյն հրահանգս կրօնից. այլ եթէ գու ՚ի բարձրագոյն կարգս յայնոսիկ ածես զթե-
րութիւնս տկարաց և անկատարից, գտանես հանգոյն երեցունց առաքելոցն եղեալ ՚ի թաւօր առ ՚ի նկատել զվիառս Քրիստոսի, այլ բերես տակաւին յանձին որպէս զնոսին զախորժակս մարմնոյ և արեան, և խորհիս առ-
նել քեզ յերկրի տաղաւար և քաղաք մնայուն:

Դարձեալ և խնդրեմ ես զքեզ, զի բարեխօսես առ Աստուած, զի երբեք երկեալ կարասցէ՝ զի լուսաւորեալ սուրբ Կոյն ՚ի բարձանց, գիտեր զամենայն կարգս պաշտաման Աստուածորդւոյն, այն՝ որ յայտնեաց զսքանչելիս նորա վեմաբար յերդ իւր հոգիչունչ, և լուսաւորութիւն իւր էր համեմատ չնորհաց և արժանաւորութեան իւրում: Սակայն կամ ընդունել խրատ ՚ի Սիմէոնէ, ոչ ամօթ համարի տեղեկանալ ՚ի սրբոյ ծերունւոյն զկարգ պաշ-
տաման իւրոյ և զԱստուածորդւոյն. Թուի ՚ի նմանէ ուսանիլ՝ որ ինչ ՚ի Հոգւոյն սրբոյ և ՚ի լուսեղէնէ չնոր-
հաց ուսեալ էր. ոչ փութայ պատմել նմա և ինքն զմե-
ծամեծս՝ զոր արարեալ էր Տէառն ընդ իւր, և որ ինչ յայտնեալ էր նմա հրեշտակն յառանձնութեան նորա ՚ի Նազարէթ. այլ որպէս Թէ յօրհնութենէ ծերուն-
ւոյն ՚ի միտ առեալ զնորհուրդս Աստուծոյ ՚ի վերայ մանկանն՝ զորս ցոյն վայր անդիմանայր, լսեր զբանս

նորա՝ ասէ սուրբ Աբեսաբանիէն, յարդուարեամբ և հիաց-
մամբ. Ես էին հայր և մայր նորա զարմացեալ ի վերայ բանիցն,
որ խօսէին ցնմանէ. և Մարիամ զամենայն գբանս պահէր,
և խելամտոպ լինէր ի սրտի իւրում:

Արդ չէք ինչ առաւել գժուարագիւտ, ևս և բա-
րեպաշտ, քան զայս խոհական զգուշութիւն ծածկելոյ
զընորհս անձին, և յայտնելոյ զայլոցն: Ցառնախ բարձ-
րամտեալ ընդ նշոյլս ինչ լուսոյ՝ զոր համարիմք ընկալեալ
ի հոգւոյ ընթերցուածոց ընտրելոց, կամիմք ուսուցա-
նել զամենայն՝ առանց գիտութեան, առաքինորդել՝ ա-
ռանց կոչման, ձեռներէց լինել՝ առանց հանճարոյ, և
սահմանել զամենայն՝ առանց իշխանութեան: Հաղիւ
թուի մեզ գտանել զոք գիտուն, որ կարասցէ առաքինո-
դել մեզ. ստորնագոյն թուի մեզ ամենայն քան զկար-
ծիս, զոր բերեմք զմէնջ. պարտ է Պօղոսեանց իմանել
յերկինից, և նոքա ևս ոչ բաւականապէս խօսին զնմա-
տութիւնն կատարելոց, զմիամտութիւն, զօծումն և զև-
ութիւն Հոգւոյն Աստուծոյ. ոչ թուին առաւել քան
զհանճարս սահմանեալս ի փրկութիւն հոգւոց հասա-
րակաց. խնդրեմք վասն մեր զայնպիսի ոք՝ որոյ այլազգ
իմն իցէ ընտրութիւն, լուսաւորութիւն գերաշխարհիկ,
ձիրք երևելիք, և առաւել ինչ քան զգիտութիւն սրբոց.
է տեսանել զանձնասիրութիւն և յընտրութեան իսկ անձին,
յորմէ կամիմք ուսանել զնոնարհութիւն քրիստոնէա-
կան:

Ցառնախ ևս ի սուրբ պաշտամունս, հանդոյն հա-
ւատացելոցն Կորնթոսի, բերեմք նախանձ յարտաքին
ընորհս. ամենայն ինչ, որ փայլէ քան զմեզ, վիրաւորէ
զաչս մեր. ամենայն, որ աներևոյթ առնէ կամ նսեմա-
ցուցանէ զմեզ, դժպհի է մեզ. և այն իսկ, զի անտրգանօք
մերովք առաւել փառաւորի Քրիստոս. սպառանեմք և
զանհասութիւն աստուածայնոյն ի ձիրս, զորս բաշխէ
եղբարց մերոց. ի պաշտամունս ևեթ երևելիս բերեմք

եւանգն, Թողեալ այլոց զօգտակարագոյնս ժողովըր-
դեան. ի վաստակ տերունեան շինուածոյն՝ խորհիմք յան-
երևոյթ և ի տաժանաւոր ջանից՝ որ պատրաստեն ևեթ
լռելեայն զհանդերձանս գործոյն, Թողեալ այլոց զիսաս
յաջողութեան նոցին երևելիս և զամենայն պատիւ նո-
ցին, վերջացեալք ի նմանութենէ Պաւղի՝ որ շատ համա-
րեցաւ անձին մերձել անհնարին վաստակով զատաղձս
տաճարին, և եթող որդւոյ իւրում Սողոմոնի զնմահ
փառս կառուցման նորին, և զամենայն պատիւ գերահրա-
շակ գործոյն: Սակայն յոյժ է երկիւղալի՝ յորժամ փա-
ռասիրութիւն և ընդունայն հաճութիւն խառնին ընդ
հանճար և ընդ ձիրս արտաքինս Հոգւոյն սրբոյ. է ժանգ
լինի՝ որ ապականէ և կորուսանէ զարգասիս և զվայելս.
գու ուռոգանիս, այլ Աստուած ոչ աճեցուցանէ. գու
վաստակիս, այլ սերմանես հողմոյ. ոչ օրհնէ Աստուած
զգործն, որ ոչ ընդ ձեռամբ իւրով գործէ. և լինիս գու
մեղապարտ վասն ընորհացն՝ զոր ընկալար, և վասն ար-
գասեացն՝ զոր կցորդէ Աստուած ընդ սուրբ վարուն
նոցին:

Եւ գարձեալ ոչ լքանի արիութիւն Կուսին. գու-
շակի նմա սուրն ցաւոց, որ անցանելոց էր ընդ անձն
նորա, և զի Աստուածորդին իւր՝ զոր նուիրեր՝ լինելոց
էր նշաւակ նեռից հակառակութեան և չարախօսու-
թեան. ոչ յանդիման լինին մտաց նորա, բայց պատկերք
սխուրք և պակուցանօղք. ոչ ընծային նմա ի տեսիլ,
բայց միայն աղէտք՝ որոց խորհուրդ ևեթ տայ հառաչել
գորովոյ սրտին. սակայն առ այսպիսի գառն գոյժս նուի-
րեր նա արիաբար հաւատս և հնազանդութիւն: Դուստր
Աբրահամու նմանի հաւատարմութեան նորա և արիու-
թեան. տեսանէ այժմէն զլեառնն սուրբ, զնարոյկն
մահու կանգնեալ, զՀմայրիան Իսահակ պատրաստ ի
զենուճն, առանց մայրենի սիրոյն արգելոյ զբազուկն՝ որ
կշռէ ի նա զհարուածն: Միաբանի նա ընդ խորհուրդս

Աստուածոյ 'ի վերայ որդւոյն, 'ի միասին ընդ նմա հնա-
զանդելով, ընկալեալ 'ի նմանէ զամենայն զօրութիւն. և
որպէս մատուցանեն երկոքին զնոյն պատարագ, նոյն
հնազանդութիւն գոգցես կատարէ և սրբէ զպատա-
րագն:

Արդ յայտ մասին է, ուր սահաւք հետևին օրինակի
Կուսին: Բարեպաշտութիւն ոչ միշտ խլէ 'ի սրտէ ծնող-
ացս ջերմեռանդն խակ հաւատացելոց զզգալի սէր որդ-
ւոց, ևս և զառաւելագանց. ոչ միշտ նուիրէն նոքա հան-
գոյն Տիրամօրն, որ ինչ է նոցա լաւագոյն, և ոչ Թերևս
զոր խնդրէ 'ի նոցանէ Աստուած: Եթէ նշմարեն յուժք
յորդւոցն զառաջինն ցոյցս հանճարոյ՝ որ տայ յաչխուս-
Թիւն յաչխարհի, եթէ Թուի նոցա յարմարագոյն քան
զայլս 'ի պահել զպատիւ անուան ազգատոհմին և զարդ
հասարակաց, համարին զնա նուիրեալ և սահմանեալ
աշխարհի 'ի ծնէ. ոչ ևս են Տեառն երաւունք 'ի վերայ
նորա. 'ի զուր նշանք բազումք սուրբ կոչման երևին 'ի
նմա, 'ի նանիր լղձք հրաժարելոյ յաշխարհէ և առանձ-
նութեան՝ զոր ընդրկք ներգործեն անդստին 'ի սրտի նո-
րա. անտես առնեն զխորհուրդս Աստուածոյ 'ի վերայ նորա:
Ի զուր է նմա լաւ համարել հանգոյն Մովսեսի զնախա-
տինս վասն Քրիստոսի քան զգանձս եգիպտացւոց, և
ծածկել իսկ Թերևս յաչաց նոցա՝ առ 'ի խոսել յանա-
պատ. հակառակին կամացն Աստուածոյ. զսրբագոյն 'ի
նմա չարժմանս ընդրկայ՝ համարին Թեթևութիւնս ման-
կութեան. չև ևս բաւական համարին զնա ընտրութեան
պայմանի կենաց. առաջի առնեն նմա զկեանս աշխարհի,
ոչ յայտնապէս խոտորեցուցանել զնա կամելով 'ի գովե-
լի առաքինութենէն, այլ պատճառանօք փորձելոյ զկո-
չումն նորա, Թէ արդեօք և տալոյ կորուսանել զայն.
կամին զի ծանիցէ նախ զաշխարհ, և ապա սիրելոյ նորա
զայն. Թողուն զարգանալ մտաց նորա, Թառամել անմե-
ղութեանն, զօրանալ ախտից. պարա համարին տալ նմա

առնուլ զձաշակ հաճոյից՝ իբր առ 'ի փորձ հաստատու-
Թեան մտաց նորա, դնեն զնա 'ի վտանգս ապականու-
Թեան սրտի. և ըստ օրինակին Նոյի, այլ յոյժ այլազգ
դիտաւորութեամբ, արձակեն յաշխարհ յերկիր հեղե-
ղաւ մեղայ ապականեալ՝ զմեքսուր աղաւնին, առ 'ի
փորձել՝ Թէ կարիցէ զկայ առնուլ անդ, մինչև զկայ առ-
նու անդ, և ոչ ևս դառնայ յապաւէն անդր սուրբ
սէր կոչեցեալն էր 'ի Տեառնէ:

Իբր ոչ եթէ կամիցիմ այսու եպերել զզգուշու-
Թիւն քրիստոնէական խոհեմութեան, այլ եպերեմ
զնոսի պատճառանս մարմնոյ և արեան: Զի 'ի գտանել
ձեր զնոյն լղձս առանձնութեան յայնոսիկ յորդւոց ձե-
րոց, որք ըստ կարգի ծննդեան իւրեանց կամ ըստ Թերու-
Թեան հանճարոյ անյարմարք իցեն աշխարհի, և յաղթե-
լոյ զունայն անհնկալութիւնս ձեր, ևք գոլ այդչափ գը-
ժուարինք և զգուշաւորք. արկանէք այդչափ հնարս 'ի
գործ առ 'ի փորձել՝ Թէ 'ի բարւոյ հոգւոյ չարժին. ար-
կանէք զկոչումն նոցա 'ի փորձս այդպիսիս վտանգաւորս:
Աւաղ, առանց կասկածանաց զսիոյ նոցա և զմանկու-
Թենէ, զեղծանիք նոքօք. առանց ցուցանելոյ նոցա
զգժպատեհս յանգուգն ընտրութեան, ազդէք գուք
զայն 'ի նոսա. առանց տալոյ նոցա ճանաչել զաշխարհն
բերկրութիւնս առ 'ի փորձ կոչման նոցա, երկցագոյն
խնամս 'ի վար արկանէք առ 'ի հեռացուցանել զնոսա
յայնցանէ, և երկիւղալիս նոցա զայնս նկարագրել. փո-
խանակ առաջի առնելոյ նոցա անխտիր զաշխարհ և
զհրաժեշտս, զետեղէք զնոսա 'ի դիրս՝ որ տան նոցա 'ի
միտ առնուլ որ ինչ ոչ իշխէք ասել նոցա համարձակ.
այնպիսի զգաստութիւն նոցա պատրաստէք, զի
ածցէ զնոսա 'ի կէտն ուշ եդեալ 'ի ձէնջ: Պատճառանօք
հեռացուցանելոյ զնոսա 'ի վտանգս, կանխէք գողա-
նալ զաշխարհ յաչաց նոցա, կասկածելով՝ զի սիրելի
յոյժ Թուեսցի նոցա այն. ոչ 'ի քարշ ածէք զնոսա որ-

պէս զոհս ողորմելիս 'ի սեղան, այլ Թերևս ցուցանէք նոցա ապաւէն ցանկալի զմիայնարան, խիստ և անիրաւ գնացիւք՝ տալով նոցա կրել վիշտս 'ի ձէնջ: Եւ դալք այնուհետև պատմել մեզ, զի էք բարեբաստք 'ի ղետեղիլ զընտանիս ձեր. այո՛, էք դուք բարեբաստք, այլ ևցե՞ն և որդիք ձեր այդպիսիք. և կարիցէք բարեբաստութիւն ձեզ համարել զձշուառութիւն որդւոց ձերոց, և զանգըթութիւն ձեր՝ որով զենուք զնոսա կռոց փառասիրութեան ձերոյ:

Եւ ոչ այսչափ միայն. այլ զնախատինս ընտանեաց ձերոց հանէք բաժին Տեառն. զանօթս խոտանս՝ զորս ոչ համարիք արժանիս կալոյ 'ի տան ձերում, ընտրէք յանօթս պատուոյ տաճարին Աստուծոյ կենդանւոյ. զանառաջ քաղինս՝ 'ի բաց թողեալս որպէս անպատկանաւոր 'ի չինուած անտուրբ բախտի ձերոյ, պահէք 'ի վէմս անկեան և 'ի սիւնս տան Տեառն: Ա՜հ, եղբարք, միթէ առաքինութիւն հոգւոց, արուեստս արուեստից, նուաճ հանճարոյ իցէ կարօտ քան զնոսոսի պարապմունս և զունայնութիւնս աշխարհի. միթէ բացատրութիւն խորհրդոց հաւատոյ, պաշտպանութիւն ճշմարտութեան և վարդապետութեան կրօնից, հրահանգք ժողովրդոց, անտեսութիւն ընտրեալ եկեղեցւոյ, պարտք այսպիսիք վեսեմք, Թողո՞ւ իցեն անհանճարիւք, դուշնաքեայ և հասարակ մարդկանց. միթէ զօրութիւն զդեմ ունելոյ մտքորութեան, լոյս և բարձրութիւն մտաց ճանաչելոյ զչին և հերքելոյ, նախանձաւորութիւն ընդդեմ աշխարհի և զեղծմանց նորա և վարդապետութեանց, սրբութիւն ուղղելոյ զինս, լուսաթիւն աստուածային հոգւոյ՝ առ 'ի շարժել զինս, ճարտարախօսութիւն սուրբ՝ առ 'ի խելամուտ առնել զինս, անվեհեր արիութիւն՝ առ 'ի չնայել 'ի նա, վեհանձնութիւն՝ առ 'ի կալ գեր 'ի վերոյ ապառնալեաց և խոստմանց նորա, իցե՞ն այսոքիկ գործք հասարակք և նըւաստք. և պա՞րտ իցէ առ այսպիսի բարձրագոյն պաշտա-

մունս ծնանել Թշուառագոյն քան 'ի զբօսանս աշխարհի և 'ի զբաղմունս մանկականս, որ են նորա կարեւորագոյն պարապմունք:

Սակայն դուք ինքնին պահանջէք 'ի մէնջ զհանգամանս գերազանցս, սակաւուց պահեալս. կամիք՝ զի վարք մեր իցեն անսոգտանելիք, փայլել մեզ սրբութեամբ կենաց որպէս զաստեղս 'ի խաւարի և 'ի հասարակաց ապականութեան աշխարհի. կամիք՝ զի լուծցուք զերկբայութիւնս ձեր, ուղղեսցուք զսխալանս, օգնեսցուք տկարութեան ձերում, սփոփեսցուք զվիշտս ձեր. կամիք՝ զի իցեմք աւանդապահք վարդապետութեան և ճշմարտութեան, պատգամաւորք 'ի վերայ երկրի՝ պատրաստք միշտ 'ի տալ պատասխանի զհաւատոց, խոնարհեցուցանել զբարձրութիւնս՝ որ ամբառնան ընդդեմ գիտութեան Աստուծոյ: Եւ դուք էք գարձեալ, եղբարք սիրելիք, որ զմեզ ետուք եկեղեցւոյ, 'ի ձեռաց ձերոց ընկալաւ զմեզ Աստուած. և եթէ ձեր չէր նուիրեալ նմա զանպիտանս և զպակասաւորս, ո՞րպէս գտանիցէք 'ի մեզ՝ որ ինչ գերաշխարհիկ է և գերազանց 'ի վերայ երկրի:

Դուք էք ապա որ զանկարգութիւն կամ զտգիտութիւն նուիրելոյ Աստուծոյ, անձանց առնէք սովորագոյն և հաճոյագոյն նշաւակ ծաղրու և սադրանաց ձերոց. արդ չիցե՞ն այսոքիկ փառասիրութեան և անարգ շահախնդրութեան ձերոյ արգասիք, զորս համարիք այդպէս արժանաւորս ծաղրու. ո՛չ ապաքէն ձեռք ձեր զջաքաղք կացուցին 'ի բագնի զկուռս զայդոսիկ արհամարհս, որոց լինիք ոանհար: Եթէ չէին յեկեղեցւոջ ծնօղք արծաթասէրք, փառասէրք, անիրաւք, երևէ՞ն այսքան պաշտօնեայք. աշխարհասէրք, գայթակղելիք և ոգեաք: Եթէ Տէր ինքնին ընտրէր զնոսա, լինէ՞ն այսպէս անարժանք նմին, և ապաստանիք սուրբք ծածկէ՞ն այսքան դառնութիւնս՝ տկարութիւնս և տրտունջս: Ո՛չ, ոչըչ՛էք մնասանդ 'ի վերայ անկարգութեանց՝ որոց դուք

միայն էք պատճառք, և զորս արդարութիւնն Աստուծոյ ձեզ յաւուր միում համարեսցի՝ ի մեզս. ծածկեցէք մանաւանդ ընդ քօղով լռութեան զվէրս, զորս դուք ինքնին ետուք եկեղեցւոյ. դարձուցէք ընդդէմ անձանց զսքանչացեան ձեր, զորս գայթակղութիւնք սրբարանին՝ ի ձեզ դարձուցանեն վասն անիրաւ ընտրութեան որդւոց ձերոց. զի յանցանք մեր՝ են միշտ ձերոցն պատիժք համարապիսք:

Իսկ զինչ բարեբաստագոյն կայցէ ձեզ, քան նուիրել Աստուծոյ զընտրեալսդոյնս յորդւոց ձերոց, և տալ եկեղեցւոյ պաշտօնեայս գիտունս, հզօրս բանիւ և գործով, որ դարձուցանիցեն զմեզաւորս, սփոփիեսցեն զսրդարս, քաջալերեսցեն զտկարս, որք կացցեն որպէս Փրկիչն մեր այսօր՝ ի կանդնումն բազմաց, ի փառս Աստուածութեան, ի լոյս աղգաց և ազանց, ի մխիթարութիւն եկեղեցւոյ, ի պատսպարան եղբարց իւրեանց: Եւ ի խնդրել ևս Տեառն ի ձէնջ, որպէս երբեմն յԱբրահամէ, և այսօր ի Կուսէն, զմիայն Աստուածածնէ խոստացեալ բարեաց, զմիայն յաջորդ փառաց և անուան ձերոյ, ո՛չ ապաքէն լինելոր ձեզ՝ ի նոր ինչ շնորհ: Ապականելոց էր զնա աշխարհ, իսկ Աստուած պահէ զնա՝ ի ծածկոյթ խորանի իւրոյ. հասանելոր ձեզ Թերևս լինել հայր եղիւք՝ անիծապարտ որդւոց և թոռանց, և լեալ ձեզ յոյս բարեխօսութիւն տեսանելոյ՝ ի նոսա զընտրեալ ոք՝ զոր հաստուացէ ձեզ Փրկիչնոս յերկինս. և Թերևս նուիրեալ Աստուածոյ, և քահանայական զգեցեալ շնորհ ընկալցի նա զբեռն հառաչանս ձեր՝ ի վերայ երկրի, և լեալ ձեզ հրեշտակ պահապան՝ ի մահու, քաջալերեսցէ զձեզ՝ ի վերջին յայնմ պահու յորդորմամբք սուրբ հաւատոց, և յեաին գեղովք հոգեվարաց. Թերևս խնայարհեցուցանիցէք ընդ սրբազան ձեռամբ նորա զգլուխս ձեր նուաղեալ, և լեալ նա ձեզ միջնորդ հաշտութեան. և որպէս նահապետին ծերունւոյ՝ ի վախճանելն իւրում կայր առ

ընթեր որդի իւր Յովսէփ՝ ամբարձեալ յիշխանութիւն Եգիպտոսի, հանգոյն նմին լեալ ձեզ միխիթարութիւն երկիր պագանելոյ հովուական գաւազանի նորա, սրբոյ նշանի իշխանութեան իւրոյ. Եւ երիվր եպագ՝ ի ծագ գաւազանի իւրոյ: Ո՛հ, զինչ օգուտ է ձեզ թողուլ յերկրի ժառանգս անուան ձերոյ՝ ի ննջել ձերում՝ ի հող գերեզմանի: Զեն մեր ճշմարիտ ժառանգք, ասէ սուրբն Ամբրոսիոս, բայց որք զհետ մեր եկեսցեն յերկինս. այնոքիկ յաղագս մերոց, զորս արդարութիւնն աստուածային բաժանեսցէ՝ ի սրբոյ իւրոյ՝ ի հուրն յաւիտենից, լեալ մեզ որպէս չեղեալք, ասէ սուրբ Հոգին. Ծնեալ և որպէս ըստ ոչ ծնեալ: Եւ լեալ մեզ համարել՝ ի թիւս որդւոց մերոց զայնոսիկ միայն, որք իցեն ընդ մեզ՝ ի վերինն Երուսաղէմ միացեալք անլուծանելի զօգիւս սիրոյ. Քանզի ճշմարիտ Իսրայէլ այնոքիկ են, ասէ, որ ոչ չերիւբն իցեն Իսրայէլ:

Այսոքիկ մխիթարութիւնք են ժամանակաւորք, որովք Աստուած վարձատրէ յայսմ ևս աշխարհի զպատարագ ձեր. այլ կոչմունքն այնոքիկ՝ ի հեռուստ հնարաւորեալք, յորդորեալք, թելադրեալք, հրամայեալք, և յաղահութենէ բռնազբօսեալ պատարագք, բազումք այն է՝ զի յաճախեն յաչխարհի աստ հոգս և վիշտս ընտանեաց, չիջուցանեն զփառս տանն, գօսացուցանեն զաճեցուն արմատս յաջորդութեան, կորուսանեն զնուն և զսերունդ ազգատոհմի անկարգութեամբ միոյն ժանտի՝ որում զոհեն զեղբարսն, և են աղբիւր դառն աղետից և խայտառակութեան: Որդիքս այսոքիկ, զորս մարմին և արիւն կացուցանէ՝ ի բեմի, անարգեն զպաշտօն իւրեանց, լինին՝ ի նախատինս եկեղեցւոյ. և զինչ ևս ասացից՝ է՝ զի և խարդաւանին՝ ի վիճ, թօթափեն զլուծ, կորուսանեն զհաւատս՝ ի կորուսանէն զամթե և զանմեղութիւն: Եթէ օգուտ եկեղեցւոյ և փրկութիւն ձեր չիցեն բաւական՝ ի զարհուրեցուցանել զձեզ յայսպիսեաց

ողբալի և անգութ զեղծմանէ, կասեցուսցէ զձեզ գո-
նեա օգուտ անձին, և ինամ պատուոյ ձերոյ և ա-
նուան. մանաւանդ ընդ իշխանութեամբ այնորիկ՝ որ
այսպիսի երկիւղածն է յընտրութիւն հպատակաց ի-
րոց՝ ի կացուցանել զնոսա՝ ի սրբարանի, առանց ակն-
ածութեան երեսաց, փառաւորեալ անուանց, ազ-
նուականութեան, վաստակոց ընծայելոց պետութեան,
և այլ ամենայն ազգի ազգի արժանեաց, եթէ չիցեն
կցորդ այնոցիկ՝ գիտութիւն և հանճար և բարեպաշտու-
թիւն. և որ կարի զգուշաւորն է չտալ եկեղեցւոյ պաշ-
տօնեայս անընդունելիս, և որոց չիցէ անձամբ զանձինս
նուիրեալ նմա:

Զայսոսիկ խրատս՝ի լոյս ածէն հաւատք յայսմ խոր-
հրդեան. նուիրեսցուք ապա զանձինս մեր Աստու-
ծոյ ընդ Փրկչին մերում, բայց նուիրեսցուք բոլորապը-
տուղ. նուէրըք թեթևք, դարձք անկատարք, են երբեմն
առաւել վտանգաւորք քան զմեղս ծանուցս. հնազան-
դեսցուք, որպէս սուրբ Կոյն, խորհրդոց Աստուծոյ
՝ի վերայ մեր. պինդ կացցուք որպէս զնա՝ ի ճանապար-
հի, ուր շնորհք Աստուծոյ մուծանեն զմեզ. մի խոտո-
րեսցուք տարապարա աւենչանօք՝ որ խոսեն սուրբ
պատճառանօք՝ ի կամաց աստուածահնամ տեսչութեան
՝ի վերայ մեր. կացցուք ընդ ձեռամբն Աստուծոյ, և յա-
ւելցուք՝ ի նուէր սրտից՝ մերոց զհաւատարմութիւն՝ որ
նորոգէ յարաժամ զնուէր մեր, որ տարածանէ զայն՝ ի
վերայ ամենայնի՝ զոր խնդրէ՝ ի մէնջ Աստուած, և որ
պահպանէ մինչև՝ ի տատ զգանձն արդարութեան, զո-
րոյ լեցի մեզ դառնել յերկինս զլրումն: Եղեցի եղեցի:

ՄԱՍԻԼԻՈՆԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՓԼԵՐՄՈՆԻ

Ի ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՏԻՐԱՄՕՐՆ

Պատմեա ինձ, զոր սիրեաց անձն
իմ, ուր հովուես, ուր հանգուցա-
նես՝ ի միջօրէի:

Երգ Երգոց. Ա. 6:

Այսպէս բարբառի հոգի հաւատացեալ՝ ի վերայ
երկրի. հեռի՝ ի փեսայէն իւրմէ, զոր ամենքմահկանացու
կենաց գողանան յաչաց նորա, ոչ գտանելով ինչ ասա՝ ի
խոնարհ՝ առ՝ ի սփոփել զբաժանումն իւր, բաց՝ ի յոյ-
սոյ կատարածի բաժանմանն ընդ հուպ, և հառաչելով
հանապազ անձկանօք այնմ վայրկենի՝ որ բացցէ զերկինս
և տացէ նմա տեսանել զփեսայն անմահ, և զերկարաւ-
թիւն և զդառնութիւն պանդխտութեան իւրոյ՝ ի կիր
արկեալ յաճումն սիրոյ և՝ ի վաստակս հաւատոյ և
համբերութեան, աղաղակէ անդադար. Ցոյց ինձ, սի-
րելեալդ իմ, ուր հանդչիս, ուր հովուես:

Այլ զգայութիւնք դիւրապատիրք խառնեն միշտ
յերկրի ասա և ընդ սէր անապակ ոչ սակաւ խղճս ան-
հրաժեշտս՝ որ թուլացուցանեն զտենչ անանց բարեաց,
և ըստ առաքելական բանին՝ թէպէտ և ոչ արգելուն
զմեզ՝ ի ցանկալոյ զգենուլ զանմահութիւն, այլ առանց

մերկանալոյ 'ի մահկանացուէն՝ զոր սիրեմք տակաւին. Ու ֆոմա մերկանալ, այլ զայն 'ի վերայ այլոր զգենուլ: Վասն որոյ մարթ է ասել, զի այս բոլորովին հրաժարուածն 'ի կենաց և 'ի կենցաղականաց, այս արհամարհիւն ընդ երկարութիւն պանդխտութեան, և այս բերկրութիւն 'ի տեսիլ մահու, և երանելի ազատութեան 'ի մարմնոյ, 'ի Մարիամ Աւետ եղև կատարեալ. նա միայն 'ի սմին աւուր, յորում ծանիկ եկեղեցի զելս նորա յերկրէ և զվերափոխել յերկինս, արժանապէս որպէս Աշմարիտ հարան կարիցէ արձակել զայս բարբառ սիրալիր. Պոպէա ինչ, ըզր պէրեայ անյն իմ, ո՞ր հովեաս, ո՞ր հանգոցանես 'ի դիջեէ. այս լինքն 'ի լուսաւոր արուսս յաւիտենականս:

Զի արդարև դառնութիւն և խոնարհութիւն մահկանացու կենաց նորա գտանէ այսօր 'ի մահուն իւրում և յերանաւէտ վերափոխման զմխիթարութիւն և ըզփառս: Աչխարհս այս, որպէս լեալ էր որդւոյ նորա սիրելւոյ, եղև և իւր՝ վայր անարգանաց և վշտաց. և զի եկեաց նա 'ի ցաւս, 'ի բաց մերկացեալ 'ի բնաւից փառաւորեալ անուանց իւրոց, անծանօթ ըստ ամենայն ձրից, խառն 'ի խուռն այլոց ամենեցուն մարց յուգայեանց, պարտ էր՝ զի փառք որդւոյ իւրոյ ընկալցին 'ի նմա հատուցումն, և զի հանդոյն միշտ որդւոյ իւրում աքանչելեօք մահուան իւրոյ պայծառացցի մարդութիւն կենաց նորա:

Աւրդ զայսօրիկ մխիթարութիւնս և զփառս մահուան սրբոյ Կուսին առաջի կայ մեզ այսօր բացատրել, յորս բովանդակի խորհուրդ եկեղեցւոյ՝ առաջադրեալ բարեպաշտութեան հաւատացելոց: Մխիթարութիւնք մահուն փոխանակին ընդ դառնութեանցն, որովք վշտացաւ սուրբ հոգի նորա 'ի կենանս իւր. և փառք մահուն փոխարինին անարգանացն՝ յորս եկեաց նա յերկրի: Աչյս է առաջարկութիւն բովանդակ ճառիս. բարեխոսութեան նորա կարօտիմք, ընդունել առ այս ըզյս 'ի Հոգւոյն սրբոյ: Ողջոյն ձեզ:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Զդառնութիւնս, զորս սուրբ Կոյսն կրեաց 'ի կեանս իւր, մարթ է բովանդակել յերիս յայսոսիկ. որք որպէս ալաքք երրակի հարին զսիրտ նորա, և կատարեցին զպատարագ ցաւոց նորա և վշտաց. այսինքն դառնութիւն լքման, դառնութիւն երկնաւոր նախանձու, և դառնութիւն ըղձից: Աւրդ երեցուն դառնութեանցս այսոցիկ փոխարէն ընկալաւ նա 'ի մահուն իւրում զբոլոր քաղցրութիւնս, որ յանդիման առնեն մեզ զգլխաւոր հանգամանս այսր խորհրդոյ. քաղցրութիւն զօրութեան և արիութեան, քաղցրութիւն խաղաղութեան և բերկրութեան, և քաղցրութիւն ժառանգութեան և վայելից: Մատիցուք 'ի մանրամասն այսոցիկ տեսութիւն, ընդրկիւ մտադրութեան ձերոյ:

Դառնութիւն լքման կոչեմ զայն, զոր կրեաց Կոյսն 'ի կարծեցեալ խաւարութենէն՝ որով թուէր միածնին վարել ընդ գութ և ընդ սուրբ խնամ իւր: Ոչ ուրեք տեսանեմք գգուել Քրիստոսի զմայրենի փոյթ Կուսին, որպէս թուէրն պահանջել ծնեալսէր գորովոյ նորա, և որդիական սիրոյ իւրոյ: Երկոտասանամենի ծածկեալ 'ի տաճարին, արհամարհէր լիմն զտագնապ մօրն առ ահի կորուսանելոյ զորդին. ոչ միայն ոչ 'ի գութ շարժեալ ընդ հոգ և ընդ տառապանս սիրոյ մօրն, այլ և 'ի դէմս ածէր նմա զՀայրն երկնաւոր, որպէս թէ մոռացեալ՝ զի էր իւր մայր և 'ի յերկրի: Եւ 'ի հարսանիսն Կանայ, որպէս թէ ոչ կամելով՝ զի կոչնականք համարէին զմայր իւր հաղորդ փառաց աքանչելագործութեան իւրոյ, յայտ առնէր՝ զի էր ինչ նորա ընդ իւր. Ջի կայ իմ ե ժ. կին ժ. և զի Հօր իւրում էր սահմանել զժամ և զժա-

մանակ յայտնելոյ զանձն աքանչելեօք, 'ի նմանէ ևեթ ուսնելով զիշխանութիւն աքանչելագործելոյ: Եւ դարձեալ յերանել կանանց Երուսաղեմի որովայնին՝ որ կրեացն զնա, Թուէր ինն բառնալ 'ի մօրէ իւրմէ զգովութիւնն իսկ 'ի հրեշտակէն ընկալեալ, և զայնոսիկ միայն յայտ առնէր երանելիս 'ի վերայ երկրի, որք զբանն Աստուծոյ լսեն և առնեն: Եւ այլ երբեմն յաղդ առնել ոմանց՝ զի մայր իւր և եղբարք կային արտաքոյ, և ինային նմա անձկանօք, ետ պատասխանի՝ զի մայր իւր և եղբարք այնոքիկ էին, որք զկամս Հօր իւրոյ երկնաւորի առնէին: Եւ համառօտիւ՝ ամենայն ուրեք Թուէ տուրբ Կոյսն 'ի մտացօնս, և ուր ուրեք յիշէն զնա Աւետարանիչք 'ի պատմութեան որդւոյ նորա, զկերպարանս իջ որդւոյն առ մայր իւր 'ի նեղքս ածեն:

Այսպէս վարեր Աստուած ընդ Կուսին, տայր նմա կրել միշտ լքուն և խաղութիւն յերեսաց որդւոյն, և ածէր զնա յար ընդ խիստ և ընդ դժուարին ճանապարհ, առ 'ի կացուցանել զնա օրինակ այնոցիկ՝ զորս 'ի փորձ մատուցանէ առանց տալոյ նոցա սիրտ 'ի պահպանութիւն պատուիրանաց իւրոց, լքեալ զնոսա յանձկութիւնս և 'ի տաղտկութիւնս տխուր և գառն առաքինութեան. զի առաջի կայր նմա ուսուցանել այլոց, զի ճանապարհ լքման, դժուարին և տաժանաւոր զգայութեանց և բնութեան, այն է արժանաւոր և շահաւէտ ըստ հաւատոց, զի այն է կուռ ճանապարհ սրբոց և կատարելոց, զի անխորժ զգալի է նեցուկ տկարութեան՝ քան պատուղ առաքինութեան, զի հաւատք միայն խոստանայն Աստուծոյ պարտին օգնել հաւատացելոյ, զի զհետ երթալ Փրկչին վասն քաղցր սիրտ ածոց լծոյ նորա՝ է ընթանալ զհետ անձին, զի դրոշմ հաւատոց է յանկալ վշտակրութեան, զի ժամանակ կենցաղոյս՝ է ժամանակ զրկանաց և ոչ սիրտանաց, զի Աստուած յերկրի ասա՝ է Աստուած ծածկեալ, և զի ըստ չափոյ միաւորութեան հաւատացեալ հոգւոյ ընդ իւր 'ի ձեռն կենդանի և եռանդուն հաւատոյ՝ առաւել զրկէ զնա 'ի զգալի սիրտանաց, առ 'ի գժուարակիր և առնել նմա զպանդխտութիւն նորա, և առ 'ի բորբոքել 'ի նմա օր ըստ օրէ և քան զևս զտենչ յաւերժից հայրենեաց, ուր սիրտ մեր լցեալ Աստուծով՝ որ երանաւետ զմեզ, ոչ և սխորժեսցէ ինչ՝ բաց յանկշռելի բարւոյն, և ուր ճշմարտութիւն յայտ յանդիման երևեալ՝ լինցի յաւէժաբար սիրելի, զի տեսցուք զնա միտ որպէս և էն:

Ջանզի հաւատք, յորում կեամքս, պահանջէն 'ի մէնջ՝ ոչ միայն հնազանդութիւն մտաց առ ճշմարտութիւնս, որ չև և ցուցեալ են մեզ բացայայտ և պայծառ լուսով, այլ և յարուսն սրտի յաներևոյթ և 'ի յաւիտենական բարիս՝ որոց գեղ չև և ծանօթ է մեզ զգալի առ խորհակօք և հաճոյիւք: Ապա ուրեմն կրկին զրկումն էական բովանդակեն հաւատք, զրկումն լուսոյ և հաճոյից. պարտ է մեզ հաւատալ աներևութից, և սիրել՝ որ ինչ գոգցես չև և զգամք: Ի հայրենիս է մեզ տեսանել միտ ղէմարտութիւն, և զգալ միտ՝ զի է սիրելի. այլ պարտ է մեզ արժանաւորս լինել այնմ երանութեան, նուիրելով անդադար զայս մտաց մերոց լուսոյ և ճշմարտութեանց՝ զորս ոչ տեսանեմք, և զզգալի հաճոյս՝ որ շուրջ կան զմեզ՝ փոխանակելով ընդ աներևոյթ հաճոյից, որ միայն են արժանաւորք սրտից մերոց, չև և մեզ զգալիք:

Իբր ոչ եթէ չկանխիցէ երբեմն Տէր հնարհել սրգարոց և ընտրելոց անձանց և յաչխարհի ասա զձաշակ անձառելի պարգևաց, զորս պատրաստեալ է նոցա յերկինս: Է զի տայ նոցա լոյս անսովոր, և յայտնէ որպէս Պօղոսի զգալոնիս և զխորհուրդս՝ զորս չէ պարտ մարդոյ խօսել. և է զի հեղու 'ի նոսա առատապէս նեղքին

և անպատում հրճուանս, զորոց սկիզբ մարդկան չէ երբէք առեալ զիմօրճ. և ոչ կարելով նոցա բերել զլուծ Թիւն Աստուծոյն ամենայն մխիթարութեանց՝ որ ընծայեսցի, սոխակն իսկ ինքրեալ 'ի նմանէ՝ արգելուլ զվերումն պարգևացն կամ ամփոփել: Այլ ընդհակառակ այսքիկ արտաքոյ են ճանապարհի հաւատոյ, և պատրուաքիւն ևս երկիւղալի է յայսոսիկ. զարս մեր, և որք յառաջ քան զմեզ գեռևս անցեալք, եւտուն զայսորիկ տխուր օրինակս: Առանձնաւորութիւնք 'ի բարեպաշտութեան՝ զեղծանին յաճախ 'ի ցնորս. ոչ ամենայն հոգի է յԱստուծոյ. լոյս անսովոր, կարծեցեալ յաճախ երկնառաք, է փայլուձն խաբուսիկ՝ զոր եռանդն եւ բևեռակայութեան և միտք մոլորեալ յառաջ ածեն, և զոր գաղտնածածուկ են անափառութիւն սրբազանէ. Պրիսկիլլեանք եղեն մեզ 'ի խրատ՝ մի վստահել 'ի ճանապարհ, որ փոխանակ ածելոյ 'ի կատարելութիւն, գահավիժէ զմեզ: Ախորժ զգալն և լուծլն յաճախ է զգայուն մարդկային 'ի բնական գործոյ յառաջ եկեալ, որ գործէ զբաղձանս՝ առանց ուղղելոյ զառաքինութիւն. և ուր կարծէ ոք լցեալ զանձն Աստուծով, է լի անձնասիրութեամբ: Ճանապարհ զրկմանց է միշտ անվտանգ, զի է սովորաբար ըստ հաւատոյ. վասն որոյ ոչ միայն չէ պարտ վհատել 'ի տաղտկանաց՝ զորս կրէ ոք 'ի հոգևոր ճանապարհի, և չհամարել անհաճոյ Աստուծոյ զպաշտամունս մեր այնու՝ զի չեն մեզ հաճոյ, այլ և պարտ է մեզ վստահել՝ զի ըստ չափոյ ծանրութեան, զոր կրեմք 'ի կատարել զպարտս մեր, առաւել գտանին այնոքիկ արժանաւորք առաջի Աստուծոյ, և զի տաղտկութիւնն ինքնին, որ ածէ մեզ վիշտ և տրտմութիւն 'ի կատարումն առաքինութեանց, ապահովագոյնս յօրինէ զայնոսիկ և գերազանցս:

Այսպիսի է լքումն, զոր սուրբք Կայն կրեաց 'ի վերայ երկրի. պարտ էր ապա՝ զի առաջին մխիթարու-

թիւն նորա լինէր տեսանել զիբրիստոս առընթեր 'ի մահուն, օգնելով իւր յայնմ յետին ժամու 'ի վերջնում մարտին. որպէս զի Կայն Մարիամ 'ի գերկս նորա նուիրեսցէ զկեանս իւր, որպէս զի միածին որդին լինէր իւր հրեշտակ զօրացուցիչ, և փութայր ցուցանել նմա զանձն՝ որ անժուժելի անձկանօք ցանկայր միանալ ընդ իւր, այնչափ առաւել՝ որչափ զի յառաջագոյն գողա-նայր գոգցես միշտ զանձն 'ի նմանէ 'ի վերայ երկրի:

Երկրորդ դառնութիւն նկատեմ 'ի կեանս սրբոյ Կուսին զդառնութիւն աստուածային նախանձուց: Որպիսի՛ ցաւովք տեսանէր նա զբաղձելագործութիւնս միածնին և զբանս և զամենայն պաշտօն առաքելութեան նորա 'ի հրէապատանի լեալ 'ի գերև. զորոգայթս՝ զոր գպիրք և փարիսեցիք լարէին անմեղութեան նորա, զլքումն յաշակերտաց իսկ իւրոց, զմահ նորա անգութ և թշնամանալից, զապերախտութիւն և զխստասրտութիւն ժողովրդեան՝ որ մերժէրն զնա, զամենայն խոտոր-մունս Աստուծոյ առ հարս նոցա և զամենայն խնամս Տեառն 'ի վերայ Երուսաղեմի յանկեալ 'ի նախատինս և 'ի կորուստ նորա: Աղէտք եղբարց իւրոց ըստ մարմնոյ՝ էին սրբոյ Կուսին հանապազորդ խորհուրդք տրտմութեան. նուիրեր նա անդադար վասն նոցա զառաքինութիւնս հարց նոցա Աբրահամեանց և Դաւթեանց և զմարգարէից, առ 'ի ցածուցանել զցասումն Աստուծոյ, և քաղցրացուցանել զնա յիշատակաւ հաւատարիմ նախնեաց նոցա 'ի վերայ եղեռնաւոր Թոռանցն: Այսպէս յանդիման առնէն մեզ բանք Աւետարանին զՏիրամայրն, մնայոյղ պարապեալ 'ի խորհել զաղէտս Երուսաղեմի, և զաստուածատաւտ սպառնալիս 'ի վերայ նենգաւոր քաղաքին:

Պարտ էր՝ զի ուսուսցէ սուրբ Կայն հաւատացեալց, և մանաւանդ այնոցիկ՝ զորս ապատան սուրբ ծածկէ 'ի վտանգաց կենցաղոյս, խորհել առեպ առաջի սրբոյ

սեղանոյ զվիշտս և զվիշտս եկեղեցւոյ, հեծել ՚ի վերայ դայթակղութեանց՝ որ անարգեն զպատիւ նորա, թա-
խանձել ընդրկս յերկինից վասն եղբարց խրատուց ըստ
մարմնոյ, զորս ուղղաք հաճոյից և փորձութեանց աշխար-
հի վարեն, և որք ՚ի խոր մոռացօնս երկնաւորաց կենցա-
ղավարեն:

Մին ՚ի գլխաւոր պատճառաց, որով սուրբք Կարգա-
պետն Ջերմեռանդն կուսանացս՝ որք լսեն ինձ ասա[1],
կանգնեաց զկուսաստանս զայսոսիկ՝ ուր բուրեն նոքա
արդ ՚ի շինութիւն բոլանդակ եկեղեցւոյ զհոտ անոյշ
Քրիստոսի, այս էր. Ժողովել ընդ նովին օրինաք սիրոյ և
հրաժարական կենաց, անձինս անմեղս, որք ծածկեալ
ընդ հովանեաւ խորանի սրբութեան՝ կարասցեն հեծել
իբրև աղաւնի, ՚ի վերայ չարեաց՝ որ նեղեն զեկեղեցի, և
խնդրել վասն նորա հանապազ ՚ի Տեառնէ հովիւս ժիրս
յառաջնորդութիւն, վարդապետս գիտունս ՚ի պաշտպա-
նութիւն, երիցունս անստգիտաս և նախանձաւորս ՚ի շի-
նութիւն, իշխանս կրօնասէրս ՚ի հովանաւորութիւն և
յընդարձակութիւն նորին. խնդրել ՚ի Տեառնէ զբար-
ձումն հերձուածոց և մոլորութեանց, զդաղեմանակ
ճշմարտութեան, զդադարումն վիճից և խռովութեանց,
զհաստատութիւն խաղաղութեան և սիրոյ. խնդրել լոյս
և հղօր օգնականութիւն վասն պաշտօնէից աստուա-
ծային բանին, որ վաստակեն ՚ի գործ Տեառն և ՚ի դարձ
մեղաւորաց զարատուղի գնացելոց, որպէս զի լցին հա-
նապազ որպէս բարեխօսք հաւատացելոց, պարիսպք ընդ
դէմ հինից եկեղեցւոյ, զոհք քաւութեան մեղաց այլոց,
և արտասուօք և ճգնութեամբք ՚ի մենարանի կրեսցեն
յանձինս զապաշխարութիւն մեղաց եղբարց իւրեանց:
Այս նախանձ վառեաց Աստուծոյ, յառաջադիմութեան

[1] Ի կուսաստանի Սալեզեան կուսանաց, ուր էր և դշխոյն Անգ-
ղիոյ:

՚ի հաւատս և ՚ի բարեպաշտութիւն, այս իղձ դարձի մե-
ղաւորաց և տարածման արքայութեան Քրիստոսի ՚ի
վերայ երկրի, է չունչ ինձ և հոգի և որպէս նկարա-
դրօշմ սրբոյ կարգիս այսորիկ: Այլք նուիրեն ՚ի սուրբ
խաւութիւնս, և ՚ի հանապազորդ մեռուցմունս մարմնոյ·
այլ աստ նուիրեն սոքա զանձինս ՚ի հեծութիւնս աղո-
թից, և ՚ի վիշտս նախանձու բարեաց և եղբայրսիրու-
թեան:

Եւ ահա այս գառնութիւն նախանձու և վշտաց
գրաւեր զսիրտ Կուսին յամենայն կեանս իւր. ոչ ինչ
փոյթ էր նմա զփառաց անձին, զերեւութենէ շնորհաց և
ըստ և արժանեաց, ցոլջափ տեսանէր և լսէր զՀոգի
Հոգէ անուան սրգոյ իւրոյ յիւրմէ կամ ժողովրդենէ,
զմերժուման առաքելութեան նորա, զբանչելիս նորա ՚ի
խաբէութիւն համարեալ, զաշակերտս նորա հալածեալ,
և անհրաժեշտ կորուստ Իսրայէլի պատրաստեալ. զի
սէր կատարեալ ոչ ինչ հոգայ զանձնէ առ սիրելեաւն:
Այսպիսի ճանաչէք, հարսունք Քրիստոսի, զհաւատս և
զերեւանդն նախանձու բարեպաշտ արքայուհւոյս[1] որ օ-
րինակաւ իւրով յորդորէ զձեզ ասա. զի մոլորութիւն
և անհաւատութիւն ժողովրդոց իւրոց առաւել վշտալի
է նմա քան զվատարանչութիւն նոցա և քան զմերժուման
իւր ՚ի նոցանէ. հեծէ նա առաւել ընդ կորուստ հաւա-
տոց նոցա, քան ընդ կորուստ թագաւորութեան իւրոյ:

Պարտ էր ապա այսմ գառնութեան և վշտաց աս-
տուածային նախանձու, որով Կայսն Մարիամ յամե-
նայն կեանս իւր տառապէր, փոխել ՚ի մահուն ՚ի մխի-
թարութիւն խաղաղութեան և խնդութեան: Յայն-
ժամ փարատեցան ՚ի նմանէ ամպք մահկանացու կե-
նացն. և սուրբ հոգի նորա մտեալ ՚ի լոյն անմատոյց
խորհրդոյն Աստուծոյ, եաես յայտ յանդիման զխորին

[1] Դշխոյին Անգղիոյ:

և զերկրպագելի պատճառս աստուածային խնամոց Թեան յամենայն անցս կենաց իւրոց, որովք եռանդն նախանձու իւրոյ և գորով սրտին կրեր այնքան արտմուԹիւն։ Եւես զբարուԹիւնս յառաջ եկեալս ՚ի նախատանաց միածնի իւրոյ, և ՚ի խնամատարուԹենէ Հրեից։ Եւես զՄեծամեծ արգասիս, զորս սուրբ եկեղեցի ընդունի յամենայն ազգաց և ՚ի ԹագաւորուԹիւնս, մանաւանդ զնոսա ՚ի հոգի մկրտուԹեան և ապրստամբուԹեան, վասն ապահովուԹեան և սրբուԹեան իւրոյ։ Տեսանէ՛ զի տարածուԹիւն հերձուածոյ և մոլորուԹեան, որ այնքան դառն էր եռանդեան նախանձու իւրոյ և բարեպաշտուԹեան, օգնէին առ ՚ի հաստատել զհաւատս արդարոյ ոմանց՝ որ կային ՚ի մէջ ապականուԹեան զերծք ՚ի ժահից անտի։ զի չարակրուԹիւնք, ընդ որս հեծեր եկեղեցի, յաւելուին զփառս նորա և զյաղԹանակ։ և զի զարձեալ ուր Թուէին իղձք սրտի իւրոյ անլսելի լեալ ՚ի Տեառնէ, ընդ որ Տէր զայնոսիկ առաւելագոյն փառաւք կրծնէց, և պիտոյիւք փրկուԹեան հոգւոյ իւրոյ։

Ա՛ւաղ, եղբարք իմ, տեսանեմք մեք արդ յորժամ մԹան կեան արդարք, տեսանեմք զհրաժեշտ նոցա յաշխարհէ և ՚ի չփոԹից նոցա, ՚ի պահանջանաց, յակնկալուԹենաց, և յամենայնէ, որ զարԹուցանէ զկիրս մարդկայինս։ համարիմք զկեանս նոցա նուաստ, անօգուտ, անգործ. զնոցա գործս ողորմուԹեան, և զսուրբ պատմուԹիւնս՝ զորս պէտ առնեն անձանց, համարիմք որպէս բարեպաշտ անձկուԹիւնս՝ զորս եռանդն կամ պարզմտուԹիւն նախանձու նոցա սրբազանէ։ Այլ յայնմ ՚ի յետին պահու, որ ինչ մեծագործուԹիւնս և գործեալ իցէ մեր ըստ աչխարհի՝ երևեսցի մեզ խոչական և մանկական. գործք մեծամեծք՝ յաչս մարդկան զարմանալիք, ձեռնարկուԹիւնք՝ գաղտնեօք և խնամատուԹեամբ ածեալք ՚ի կատարումն, յաղԹուԹիւնք և յաջողու-

անդրժելի ունել ընդ իւր հաւատարմուԹիւն, էին օՃանք՝ որովք սրբեր Աստուած զբարեպաշտուԹիւն նորա. զի արկածք գժնդակք ՚ի կործանել զաղդ նորա՝ Թուէին և կրծնէցն իսկ իւրոց աղետաբերք, էին Ճանապարհք անվըհկած և գաղանիք՝ ընդ որս կամեցեալ էր Աստուած սրբել զնա. և զի զարձեալ արդարուԹիւն աստուածային ոչ ինայեր յազգս և ՚ի ԹագաւորուԹիւնս, մանաւանդ զնոսա ՚ի հոգի մկրտուԹեան և ապրստամբուԹեան, վասն ապահովուԹեան և սրբուԹեան իւրոյ։ Տեսանէ՛ զի տարածուԹիւն հերձուածոյ և մոլորուԹեան, որ այնքան դառն էր եռանդեան նախանձու իւրոյ և բարեպաշտուԹեան, օգնէին առ ՚ի հաստատել զհաւատս արդարոյ ոմանց՝ որ կային ՚ի մէջ ապականուԹեան զերծք ՚ի ժահից անտի. զի չարակրուԹիւնք, ընդ որս հեծեր եկեղեցի, յաւելուին զփառս նորա և զյաղԹանակ. և զի զարձեալ ուր Թուէին իղձք սրտի իւրոյ անլսելի լեալ ՚ի Տեառնէ, ընդ որ Տէր զայնոսիկ առաւելագոյն փառաւք կրծնէց, և պիտոյիւք փրկուԹեան հոգւոյ իւրոյ։

Ա՛ւաղ, եղբարք իմ, տեսանեմք մեք արդ յորժամ մԹան կեան արդարք, տեսանեմք զհրաժեշտ նոցա յաշխարհէ և ՚ի չփոԹից նոցա, ՚ի պահանջանաց, յակնկալուԹենաց, և յամենայնէ, որ զարԹուցանէ զկիրս մարդկայինս. համարիմք զկեանս նոցա նուաստ, անօգուտ, անգործ. զնոցա գործս ողորմուԹեան, և զսուրբ պատմուԹիւնս՝ զորս պէտ առնեն անձանց, համարիմք որպէս բարեպաշտ անձկուԹիւնս՝ զորս եռանդն կամ պարզմտուԹիւն նախանձու նոցա սրբազանէ։ Այլ յայնմ ՚ի յետին պահու, որ ինչ մեծագործուԹիւնս և գործեալ իցէ մեր ըստ աչխարհի՝ երևեսցի մեզ խոչական և մանկական. գործք մեծամեծք՝ յաչս մարդկան զարմանալիք, ձեռնարկուԹիւնք՝ գաղտնեօք և խնամատուԹեամբ ածեալք ՚ի կատարումն, յաղԹուԹիւնք և յաջողու-

Թիւնք, հանճարք գերահրաշք՝ որ տան մեզ պայծառա-
նալ ի վեպս, այս ամենայն լեցին յաչս մեր յայնժամ
որպէս թատերաց խաղք, և տղայոց զբօսանք: Ամենայն
կեանք մեր թուէացին մեզ որպէս մանկութիւն ժլանջե-
նաւոր, որ ինչ կրեցաք վասն աշխարհի, որ ինչ փոյթ
կալաք մտոտի համբաւոյ, որ ինչ ձիգն գործեցաք ժա-
մանելոյ յայն, որ ինչ ի հաճոյս այլոց յանձնառուԹիւն
և կորանք ծանրակիրք, որ ինչ մեծարանք տեարց՝ ըզք
առ ոչ ինչ զմեզ համարէին, յայսմ ամենայնէ չմնայ
մեզ այլ ինչ, բայց միայն անօգուտ զեղջ կորստեան նո-
ցա: Տեսցուք զի ամենայն խղճք մեր և ջանք էին վասն
ցնորից, զի ընթանայաք խօլաբար զհետ ծխոյ ցնգելոյ.
և զի լցումն խակ ըղձից մերոց քան զամենայն աղէտս մեր
առաւել էր աղէտաբեր: Ասացուք յայնժամ յանձինս
մեր. Պա՞րտ էր այնչափ աշխատել վասն չտառնալոյ և ոչ
ինչ, ասա՛, պա՞րտ էր մեզ վարել կենցաղ այնպիսի տա-
ժանաւոր, առ ի գտանել յետոյ ասպ զվիշտ ըմբռնելոյ
ի պատրանս, և նմանելոյ այնոցիկ՝ որ ի զուր վաստա-
կին գնալ ընդ ուղի անել, և ոչ ճանաչեն զմոլորել իւ-
րեանց՝ բայց ի սպառել զօրութեան իւրեանց, և յոր-
ժամ ոչ ևս է նոցա ժամանակ ուղղելոյ զընացս: Ընդ-
ոչ ի պիտանեգոյն ինչ ի կիր արկանեաք զձիգն և զտա-
ռապանս. չնորհս գտանել առաջի աշխարհի այնչափ ի
բացեայ էր ի մէնջ, որչափ հետամուտ այնմ լինէաք.
զչնորհս երկնից և ղյաւիտենական բարիս չատ խակ էր
բաղձալ առ ի գտանել:

Իսկ յետին գառնութիւն կենաց սրբոյ Կուսին ի
վերայ երկրի, եղև գառնութիւն ըղձից. մանաւանդ
յետ մեկնելոյ միածնին իւրոյ յերկրէ ապուխ. ամենայն
տենչ սրտի իւրոյ զհետ նորա էլ յօթևանս անմահու-
թեան. համարէր այնուհետև զմահկանացու կեանս
աքսոր երկայն և տխուր: Զրկեալ ի միայնոյ սիրելւոյն,
ամենայն իղձք իւր և խորհուրդք, սիրտ իւր և միտք

էին յերկինս. նժդեհ ի վերայ երկրի, անտես յաչաց
մարդկան, անծանօթ աշխարհի, հառաչէր անդադար
զհետ փեսային. Ո՞ր հովեաս, ո՞ր հանգուցանէս, պոռչէ ինչ՝
ըզ սիրեցոյ անյն իմ: Հեծեծէր անդադար ըստ Մարգարէին
ընդ յերկարել պանդխտութեան իւրոյ, և ասէր հա-
նապազ. Եւբէ եղիցի երեսացոյց երեսացդ Աստուծոյ. մեռեալ էր
աշխարհի, միացեալ ընդ որդւոյն յամենայն անձնէ և ի
զօրութենէ սրտի, որ միշտ յերկինս էր՝ կցեալ ևեթ
ընդ երկիր. և որպէս թէ հերձեալ եռանդեամբ ըղձիցն
որ ամբառնային զնա ի վեր յերկինս առ Տէր, և ծան-
րութեամբ մարմնոյն՝ որ արգելոյր զնա տակաւին ի
վայր ի յերկիր, մեռանէր հանապազ սիրով և տրտմու-
թեամբ. բռնութիւն տենչանաց նորա, որ էր կատարե-
լագոյն յառաքելնութիւնս իւր, էր սաստկագոյն ի դառ-
նութիւնս նորա:

Ոչ զգամք մեք ցոր վայր կարէ հասանել բռնութիւն
այսր անձկութեան, զի բազում կապանօք կցեալ եմք
ընդ երկիր, յարեալք յերս՝ որ շուրջ են զմեզ, յաչ-
խարհ, յինչս, ի մերձաւորս, ի բարեկամս, ի պաճուճս,
ի մեծութիւնս, և յանձինս մեր. ոչ զգամք որ ինչ կրէ
հոգի՝ որ ոչ սիրէ ինչ յաչխարհի, որ Աստուած միայն
կեայ, և որում հարկ է կեալ հեռի ի նմանէ յայսմ
արտաստաց և ի փորձութեանց վայրի, միշտ ի վտանգի
կորուսանելոյ զնա, և ոչ երբեք աներկեւան ժառանգե-
ալ զնա: Տաղտկութիւնք կենցաղոյս են տաղտկութիւնք
կրից մերոց, են թախիծք մեղայ մերոց նեղքինք, են
ժպգոհութիւնք աշխարհի որ պատրէ զմեզ, են յափ-
շտակութիւնք յամենայն արարածոց՝ որովք զեղծանիմք, և անձ-
նասիրութիւն: Ծանր է մեզ չգտանել ինչ յաչխար-
հի՝ որ կարասցէ առնել զմեզ երջանիկս, և կամիմք ի
զգալնս յայսոսիկ՝ որ շուրջ զմեզ են՝ հանգիպել իմիք,
յորոմ սիրտ մեր կարասցէ հանգչել, և որ բաւեսցէ
ի հանդարտել ըզսիրտ մեր և լիացուցանել:

Այնչինք եւկ նուիրեալք Աստուծոյ դուն ուրեք զգան տրտմութիւն ընդ աքսորս ընդ այս, և ընդ հեռաւորութիւն յերեսաց Աստուծոյ: Զգամք զբեռն խաչին, զոր պարտ է մեզ կրել որպէս աշակերտք խաչելեցելոյն. զգամք զարտմութիւն և զդառնութիւն առաքինութեան. այլ ոչ զգամք զղջումն մեր յանապատում բարեաց՝ զոր պատրաստեալ է Աստուած սիրելեաց իւրոց. ոչ զգամք զնաւար մտաց մերոց անկելոց ի պատուոյ, պաշարելոց ի զգայութիւնս, որք ոչ ևս տեսանեն՝ բայց խառն ի խառն և աղօտ զլոյս յաւիտենական Աշմարտութեան, յորում հաստատեալ է ամենայն երջանկութիւն իւրեանց և մեծութիւն. զգամք հեթ զակարութիւն կամաց, որ ստեղծեալն է առ ի վայելել զԱստուած, և որում պարտ է բուռն առնել միշտ անձին՝ առ ի զգուշանալ ի տարապարտ սիրոյ արարածոց, և առ ի սիրել զնէն գերաբուն: Եւ համառօտ ասացեալ, ոչ զգամք զհակառակութիւն ըղձից ընդ օրէնս՝ որ են յանդամս մեր, ընդ օրէնս Հոգւոյն. զհակառակութիւն՝ որ զգերութիւն մարմնոյ կացուցանէ անարգ և անբերելի հոգւոյ հաւատացելոյ: Պատճառք այսքիկ մեծամեծք արտասուաց և տրտմութեան սրբոց ի վերայ երկրի, որք կազմեն իսկապէս զէութիւն կենաց հաւատացելոյ, հեռի են ի սպառ ի բարեպաշտութենէ մերմէ. վասն զի ընդ կերպարանօք առաքինութեան սիրաք մեր տակաւին բևեռեալ են ընդ երկիր: Ինքը այլ հոգք գրաւեն զմեզ, բիւր յարմունք անոտիք բաժանեն զսիրտս մեր, և տկարացուցանեն զսէր՝ զոր պարտիմք առ Աստուած. բիւր մոլորութիւնք, որ ծնանին ի տկարութենէ հաւատոյ մերոյ, տան մեզ կորուսանել յաչաց զյաւիտենական Աշմարտութիւնս: Եւ դառնագոյն այն է՝ զի աստուածսիրութիւն հեղձեալ ի մէջ տարապարտ սիրելութեանց, իղձք յաւերժական բարեաց չնչեալ ի սպառ ի մէջ զգալի հաճոյից՝ որ գրա-

ւեն զմեզ և չինքեանս յանկուցանեն, կորուսանեմք յանգիստս զնորհս Աստուծոյ: Համարիմք զմեզ կենդանի, այլ մեռեալ եմք առաջի Աստուծոյ՝ առանց գիտելոյ ընդ ո՞ր ի հոգի մեր եմուտ մահ:

Այլ սուրբ հոգին Մարիամու ոչ գտանէր ինչ յանձին, բայց զնորհացն Աստուծոյ արգասիս. ոչ այլ ինչ իղձ, բայց վասն երկնից. ոչ չարժումն, բայց առ Աստուած. ոչ խնդութիւն, բայց ի յոյս տեսանելոյ զսիրելին: Գերամաքուր անձն նորա, որոյ սիրտ չէր զբաղեալ հանգոյն մերումս ի բիւր իրս անոտիս և տարապարտս, այլ ամփոփեալ բոլորովին ի սէր Աստուծոյ, զգայր բովանդակ զամայութիւնն՝ զոր աղէկ ի սիրտ սէր սաստիկ ի բաժանել իւրում ի սիրելոյն: Վասն որոյ մահ կատարած էր հառաչանաց իւրոց, մխիթարութիւն գորովանաց, և լրումն ամենայն ըղձից: Գտանէ նա որ ինչ գոգցես կորուսեալ էր. գնայ միանալ ընդ միածնի որդւոյ իւրում զոր չարութիւն մարգկան, կամ մանաւանդ Հօրն երկնաւորի սատ բաժանեալ էր յիւրմէ. ոչ ևս ինչ մնայ սիրոյ նորա ցանկալի, ընդունի զերջանկութիւն իւր լի բովանդակ: Ոչ սպասէ մարմին նորա ընդ իշխանութեամբ մահու կատարեալ ազատութեան. կանխէ նմա երջանիկն վայրկեան, սահմանեալ վասն այլոց արդարոց յաւուր յայտնութեան. երթայ տեսանել մարմնով զՓրկիչ իւր, զպտուղ որովայնի իւրոյ սրբոյ: Որպիսի՞ ինչ եղև յայնժամ ցնծութիւն անպատմելի այսր միաւորութեան ընդերկար ցանկացելոյ. և ո՞ կարիցէ յանդիման առնել աստ բանիւ զհրճուանս սրտի Տիրամօր ի տեսիլ միածնի որդւոյ իւրոյ անմահի և փառաւորելոյ, երկրպագելոյ ի գաստս հրեշտակաց և սրբոց, և ի տեսիլ անբովանդակելի գանձուց աստուածութեան նորա և փառաց. զի անդ են գաղտնիքն՝ զոր ակն ոչ տեսաւ, և ոչ լեզու մարդկեղէն կարող է պատմել:

Որ ինչ աստի պարտ է մեզ առնուլ ՚ի միտ, եղբարք սիրեցեալք, այս է՝ զի մահ մխիթարութիւն է արդարոյ։ Բաժանէ զնա մահ յայնմանէ, որ չէր նմա սիրելի. յաշխարհէ, որ տաղտկալի էր նմա, և լի որոգայթիւք. յաշխարհէ, ուր կեցեալ էր նա միշտ որպէս նժդեհ. ՚ի մարմնոյ, զոր ատեայր, ընդ որում մարտնչէր, զոր ՚ի խաչ հանէր, և որ լեալ էր նմա առիթ փորձութեանց, և աղբիւր վշտաց։ Բաժանէ զնա և յամենայն արարածոց, որք ՚ի ընուէն զպէտս նորա՝ յաշխատէին զայնս, և ծանրացուցանէին զգերութիւն նորա։ Գոհանայ ընդ արհամարհել իւր զբարիս՝ որ խուսեն ՚ի նմանէ. ընդ չդնել զյոյս իւր ՚ի մարդիկ՝ որք ոչ ևս կարեն օգնել ինքեան, ընդ չառնել իւր քաղաք մնայուն յերկրի՝ որ կորնչի, և ընդ պատրաստել իւր յայլ ինն կեանս՝ որոյ ոչ երբեք փոխին հանգամանք։ Չասանէ ապա ՚ի վայրկեանն երանելի, որ ածէ զնա առ արարիչ իւր՝ յոր միշտ յուսացեալ էր. ՚ի վայրկեան անդր՝ որ վախճան առնէ իւրում տաղտկալի մեռելոյն բազմավտանգ և եղերական կենաց, և սկիզբն ղուարթագին տունջեան յաւիտենից։

Այո՛, եղբարք իմ, այս են ստոյգ գաղտնիք քաղցրացուցանելոյ և սփոփելի գործելոյ մեզ զմահ, կանխել անյաւտել զմեզ յամենայնէ՝ զոր կարէ նա բառնալ ՚ի մէնջ, լուծանել հանապազօր զմի մի ՚ի կապից, զորս կարէ նա խորտակել, սովորել կեալ ընդ Աստուծոյ միայնոյ ՚ի մէջ ամենայն արարածոց՝ որ շուրջ կան զմեզ. քանզի մահ ոչ այլ ինչ է, բայց միայնութիւն յաւիտենական՝ հոգւոյ ընդ Աստուծոյ։ Մեղաւորն յոյժ առաւել մեռանի մահուընս քան զարդարն. զի մեռանի առ ամենայն՝ որ շուրջ զնովաւ կան, զի կտրւածք է ընդ ամենայնի։ Քանի կապանս հասանի նմա խզել նոյնչափ կրէ մահուընս. մեռանի առ մարմին իւր, զոր միշտ պաշտէր. մեռանի առ գոյս իւր և աւագութիւնս, զորոց միայն հոգայր անձկանօք. մեռանի առ գրգանս՝ որոց էրն գէրի,

առ ակնկալութիւնս՝ յորս յենոյր. առ հոյակապ ապարանս՝ յորս կարծէր բնակել յաւիտեան, և առ արարածս գրեթէ առ հասարակ՝ որ սպասաւորէին ախտից նորա։ Որպիսի՛ կեղեքումն սրտի յորժամ հասանի նմա խզել միանգամայն զայս ամենայն տարապարտ կապանս ընդ երկիր. կրէ նա մահուընս բիւր ՚ի միում. այս ամենայն հրաժեշտ ածեն նմա մէն մի մահ, գալով չափ բանի Մարգարէին. Մահ ղեւտացւին լոյ է և գառնակսկիծ։

Երանի՛ ապա հոգւոյ, որ հանգոյն Մարիամու վաղ մեռեալ ամենայնի, ոչ կրէ ինչ յայնժամ. բերկրի ընդ նուիրել իւր վաղ փեսային իւրում զամենայն, և որ վաղ բնակեալ սրտիւն յերկինս՝ ոչ ինչ թողու յերկրի, բայց միայն զօրինակ սրբութեան վարուցն, և զյիշատակ պատուական մահուն։ Մահ սրբոյ Կուսին ոչ միայն եղև լի միխիթարութեամբք, որ քաղցրացուցին զդառնութիւնս կենաց նորա, այլ և լի փառօք՝ փոխանակ արհամարհանացն՝ զորս կրեաց ՚ի վերայ երկրի։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Որչափ առաւել կամի Աստուած ամբառնալ զոք ՚ի բարձր աստիճան շնորհաց, լուսոյ, և արժանապատուութեան, առաւել խոնարհեցուցանէ զնա և նուաստացուցանէ յաչս մարդկան. որպէս թէ առ նախանձաւորութեան՝ զի մի պայծառասցին ծառայք իւր այլով իւիք փառօք բաց յիւրմէն. կամի իմն մերկանալ նոցա ՚ի մեծութենէ՝ զոր տայ աչխարհ, առ ՚ի կացուցանել զնոսա արժանաւորագոյնս Ճշմարիտն մեծութեան, որ է պատուոյ միայն արդարութեան և սրբութեան։

Նուաստութիւն Մարիամու ՚ի վերայ երկրի է ապացոյց այսր Ճշմարտութեան. և քանզի խորհուրդք Աս-

տուծոյ 'ի վերայ նորա պատրաստէին նմա զծայր բարձրութեան՝ յոր մարթ է արարածոյ լսոյդ հասանել, ճանապարհ՝ ընդ որ ամբարձաւ նա՝ եղև ճանապարհ խոնարհութեան և նուաստութեան: Արդ երիս ազգս խոնարհութեան նկատեմ 'ի կեանս սրբոյ Կուսին. խոնարհութիւն զրկանաց, խոնարհութիւն հպատակութեան, և խոնարհութիւն ամենայն և արհամարհանաց. և յաւելեալ՝ զի վերափոխումն նորա յերկինս՝ հատուցանէ նմա այսօր երրեակ փառաւորութիւնս համեմատս խոնարհութեան մահկանացու կենաց նորա. փառաւորութիւն բարձրութեան և գերազանցութեան, փառաւորութիւն կարողութեան և իշխանութեան, և փառաւորութիւն յարգութեան և պաշտամանն: Հաճելոյնք երկայնամտել 'ի լուր:

Ի հետազօտել զկեանս սրբոյ Կուսին՝ գտանեմք 'ի նմա կարգ եւն անընդհատ անշուք և նուաստացուցիչ զրկանաց. առաջին ազգ խոնարհութեան նորա: Զեր ուրուք ցայնժլայր ընկալեալ յերկինից հանգոյն նմին երանելոյն փառաւորեալ և վսեմական անուանց. ծնեալ էր նա յազգէ Դաւթի. ընտրեալ առանձնական կանխեցին 'ի նմա քան զնորհս ծննդեան. էր նա կոյս և մայր, և վեհափառ աստուածամայրութիւն ամբառնայր զնա գեր 'ի վերոյ քան զամենայն փառս աղնուականութեան և ընտրեալ հաց. և սակայն ոչ ինչ 'ի չքեղ անուանց աստի յայտնեցաւ 'ի նմա ցորչափ եկեաց նա 'ի վերայ երկրի: Աղնուականութիւն նորա էր մթացեալ միշտ 'ի չքաւորութենէ, և գերազանցութիւն ընտրեալ ընդ պարզ և ընդ հասարակ կենաց, բարձրութիւն արժանապատուութեան և հրաշափառ աստուածամայրութիւն գոգցես անտես լեալ առ երևելոյ Որդւոյն Աստուծոյ 'ի նմանութիւն մարդկան. զի ազգն հրեական համարէր զնա որպէս մայր Յիսուսի նազովրեցւոյ, և անխոհեր 'ի մարդ յուդայեանց: Եթող նա զմարդիկ յանգիտութեան մե-

ծամեծացն՝ զոր արար ընդ նմա Աստուած, էիղև նմա փոյթ լուծանելոյ զպատրանս նոցա՝ յայտնելով զքանչելիսն Աստուծոյ. համբեր զնկելոյ յամենայն մեծութենէ իւրմէ, այս ինքն 'ի մեծագոյն փառաց՝ զոր մարթ է լսել արարածոյ ունել, և խնդութեամբ հրաժարեաց յայսպիսւոյ մեծութենէ. ոչ էր 'ի շրթանց նորա և բան մի, և ոչ նշմարանս երբեր յանձին, 'ի մանուածութիւն գաղանեաց խոնարհութեան իւրոյ. և ընդ այս զրկումն իւր հաճեալ, ցանկայր ևեթ յայտնելոյ փառաց միածնին, և հաստատելոյ ա՛րքայութեան նորա յերկրի:

Այսպիսեաք հանապազորդ մեռելութեամբք իմաստութիւնն Աստուծոյ պատրաստէր զերկնակրօն հոգի Կուսին 'ի փառս, ուր այսօր ամբարձաւ: Ամենայն ձիգն նորա լեալ էր ծածկել զփառս իւր յաչս մարդկան, և խառնել ընդ այլ մարս իսրայելեան ազին. վասն որոյ և Աստուած կամեցաւ փառաւորել զնա 'ի մահուն, և մեծարել առանձինն իմն անհաղորդական շնորհիւ, որ գոյուց 'ի գարս լինել աստուածամայրութեան նորա առհաւատչեայ: Մարմին նորա սուրբ և գերամաքուր, որպէս զորդւոյն միածնի, ոչ եւս զապականութիւն. զօրութիւն Հոգւոյն արար զնա 'ի մեռեալս ազատ. բացան երկինք ընդունել զնա որպէս զքրիստոս յաղթականաւ և փառաւք. էլ նա 'ի գերեզմանէն չուրջ պատեալ լուսով, գնալ Ժառանգել զփառս ընդ աջմէ որդւոյն նովին մարմնովն՝ զոր տուեալ էր նմա առ 'ի բանալ զերկինս ազգի մարդկան. եկաց նա գեր 'ի վերոյ քան զամենայն իշխանութիւնս և զպետութիւնս: Նա էր տապանակն Իսրայելի, ասէ սուրբ Սաղեզացին, որ առ ժամանակ մի կացեալ յանապատի ընդ վրանաւ, աննշան և ոչ ըստ արժանի իւրոցն փառաց, մուծաւ ապա մեծահանդէս փառաք 'ի Երմարիան Դաւթի յերուսաղէմն վերին: Թուէր իմն ոչ բաւանդակ յարուցեալ Քրիստոսի զմարմին իւր, այլ զման ինչ նորին Թողեալ յանձին մոր

իւրոյ յապականութիւն, եթէ ոչ հաղորդակից առնէր զնա փառաց յարութեան իւրոյ: Էր ինչ արժան՝ զի մայր ընդ իշխանութեամբ մահու մարմին մեր նորին՝ որ յարութիւն է և կեանք ազգի մարդկան. էր իսկ արժան՝ զի մարմինն այն, յորմէ կազմեալ էր ղՀն՝ի բացուածն դրանցն երկնից, ոչ ինքն նախ մտանէր ընդ այն, զի մարմինն այն՝ գերահրաշ ընդորհիւ պահեալ յանդրաժեշտ արատոյ որդւոց Ադամայ՝ հաղորդ լինէր անիծից նոցա, և ճարակ որդանց և փտութեան, զի մարմինն այն՝ որ լեալ էր՝ի վերայ երկրի սրբարան կենդանի Բանին մարմնացելոյ, չլինէր ընկալեալ՝ի սրբարանն յաւիտենական: Արդ առ՝ի փառաւորել զմահ նորա և զհրաշալի յարութիւն, և առ՝ի ընդել զիշձս բարեպաշտութեան հաւատացելոց, սուրբ եկեղեցի՝ի վաղ ժամանակաց սահմանեաց զայս տօնախմբութիւն: Ահա մրցանակն, պատրաստեալ՝ի մեծվայելչութենէն Աստուծոյ, փոխանակ զրկանաց խոնարհութեան Կուսին. վասն համբերութեանն նորա ինդամիտ՝ զի անգիտանայցեն մարդիկ մինչև ցմահ իւր որ ինչ ընդհանց Հզօրին արարեալ էր ընդ նմա մեծամեծս, պայծառացոյց զնա Քրիստոս ընդորհիւ՝ զոր սրբազան աւանդութիւն արար պաշտելի յեկեղեցւոջ, և բարեպաշտութիւն հարց մերոց հաստոյց առ մեզ իբր անմահ առհաւատչեայ կրօնասիրութեան նոցա և մեծարանաց առ սուրբ Կոյսն:

Իսկ մեք, եղբարք սիրեցեալք, քաջ՝ի բաց՝ի համբերելոյ մտադիւր այսպիսեաց զրկանաց՝ որք անծանօթ առնեն առաջի մարդկան որ ինչ եմք, աւաղ, ամենայն ջանիւք ինդրեմք ցուցանել զմեզ, և ամենայն կեանք մեր է ճիշդն ունայնասիրութեան՝ որ ցուցանէ զմեզ միշտ ըստ մասին, որով համարիմք զմեզ մեծարոյ և հաճոյ: Իշարժել իսկ մերում յԱստուծոյ և՝ի զգաստանալ՝ի զարհուրանաց՝ի քրիստոնէական կեանս, կամիմք զի կալցի տակաւին աշխարհ զիշատակ Թշուառ ճարտարութեան մերոյ և ընդունայն բարեմտմտութեանց, զորս Թողումք՝ի բաց՝ի հրաժարելն՝ի նմանէ: Ախորժելի է մեզ՝ զի գովեսցի հանապազ հրաժարումն մեր, և զի համարեսցի մեզ՝ի պարծանս՝ զոր մեք իսկ գաւիմք արժանի արհամարհանաց՝ի վեր քան զայլս համարիմք զանձինս մեր, որպէս աւելի ինչ տուեալ Աստուծոյ. որպէս Թէ որչափ առաւել Թուէաք ծնեալ վասն աշխարհի և գրգանաց նորա ոչ առաւելագոյն և աղդողագոյն ընդորհայ կարօտեաք՝ առ՝ի գարշել յայնցանէ. որպէս Թէ ողորմութիւնն Աստուծոյ՝ի վերայ մեր՝ յապերախտութիւն ածէր զմեզ և՝ի մոռացումն Թշուառութեան մերոյ: Ըստ այսմ օրինակի որ ինչ պատճառք լեալ էին անկմանց և աղետից մերոց, լինին մեզ յաճախ՝ի բարեպաշտութեան իսկ պատճառք արտասուելի ունայնութեան, և որում պարտ էր առնել զմեզ առաւել անգոսնելի յաչս մեր, բազում այն է՝ զի արհամարհելի առնէ մեզ զեղբարս մեր: Եւ այսպէս կամիմք հաղորդս լինել ընդորհայ աշխարհի և փառաց, միանգամայն և պարծանաց առաքինութեան. կամիմք զի գովեսցին՝ի մեզ աքանչելիք իսկ ընդորհայ, և հանճար ունայնասիրութեան. ոչ միայն չըծածկեմք ըստ օրինակի Կուսին յաչս մարդկան որ ինչ եմք, այլ և խնդրեմք զի տեսցեն՝ի մեզ այլք որ ինչ գժպհի լեալ է մեզ:

Այո՛, եղբարք իմ, յոյժ է գժուարին կամել ուրուք անկեղծութեամբ՝ զի անտես արասցին մարդիկ որ ինչ արգոյ առնէ զնա՝ի միտս նոցա. ՝ի նախատինս համարի իւր զայն. ցանկալի է նմա՝ զի ընծերսցին ամենեքեան գոգես՝ի ձակատ իւր գրոչմեալ զհանճար և զառաքինութիւն, զաւագութիւն և զպնուականութիւն իւր. և՝ի սուրբ իսկ մենաստանի՝ ուր առ ոտս սեղանոյ արկանէ զկողոպուտս աշխարհի և զփառաց նորա, յաճախ՝ի բաց առնու ահեակ՝ զոր պղծէ նուիրեալ զնաւփառութիւն. երևեցուցանէ տակաւին ընդ

նոեմ քոզով զննոտի շուք աշխարհի և զոհմի. Ձեմի դարձեալ ընդ տիզմ անարդ, զոր առ ոտն կոխեաց, խնդրե գտանել՝ ի վայրի խոնարհութեան պատիւս՝ զորս յաշխարհի արհամարհեաց, և՝ ի սրբարանի անդ երկնաւոր փեսային՝ անուանս փառաց խնդրե այլս քան զհարսին։

Եթէ դուն ուրեք է գտանել կցորդ ընդ հաւատոց զայս խոնարհութիւն զրկանաց, զորոյ սուրբ Կոյսն էտ մեզ զօրինակ, դժուարագոյն ևս է տանել արիութեամբ զնուաստութիւն և զհպատակութիւն, յորոյմ՝ եկեաց նա միշտ։ Միշտ հնազանդ՝ ի վերայ երկրի, յամենայն հանգամանս մահկանացու կենաց իւրոց, միշտ մեծաբեաց զՀանապարհ հպատակութեան՝ ընդ որ ընորհք աստուածայինք առաջնորդէին նմա. մերթ հնազանդ Յովսեփայ յամենայնի, մերթ պատկառ կացեալ կամաց և երկնաւոր անօրէնութեան կենաց որդւոյ իւրոյ, և մերթ յանձն լեալ սիրելւոյ աշակերտին՝ համարելով զնա տէր գործոց իւրոց, և անօրէն գնացից. և մերթ դարձեալ յետ մահու միածնին հետևօղ աշակերտաց նորա որպէս զմի՝ ի կանանց հաւատացելոց, ոչ յերբ ինչ երևեալ, և ոչ անձին ինչ ընծայեալ, ոչ կամելով հաղորդ լինել առաքելոց՝ ի տեսչութիւն նորածին եկեղեցւոյ, այլ հնազանդելով օրինադրութեանց և իշխանութեան նոցա, և ոչ՝ ի սուրբ Ժողովի նոցա գերագահութիւն ինչ ցուցանելով. այլ ամենայն ինչ անցանէր առանց յիշատակի նորին, առանց ինչ ուրեք ցուցանելոյ նորա իշխանութիւն. վարէր նա երբև զմի ոք՝ ի գաւերաց եկեղեցւոյ, այն որ մայր և պաշտպանն էր նորին։ Եւ կարի իսկ քաջ, սուրբ Կոյսն լի ամենայն աստուածայինն պարգեւօք և լուսով դիտութեան, զգեցեալ արժանապատուութիւն վեհմտոյն որքան է Հնար լոկ արարածոյ, ամրագոյն պատսպարան նորածին եկեղեցւոյ յետ մահու միածնին, եթող առաքելոց զամենայն խը-

նամն տեսչութեան այնորիկ, և միայն համարեցաւ իւր փառս՝ յառաջ քան զամենեսին հնազանդել կցորդս դրութեանց նոցա։ Խրատ մեծ առ՝ ի նուաճել զանդգնութիւն և զսուզմունս մտաց հաւատացելոց, որք առանց իսկ այսոցիկ գերազանց պարգեւաց և լուսոյ՝ չառնուն յանձն հետևել խոնարհ հնազանդութեան սրբոյ Կուսին։

Չէ ինչ մեզ ծանր հնազանդել եկեղեցւոյ, զի այս հնազանդութիւն ոչ խոցէ զսիրտ մեր, ոչ զհպարտութիւն, ոչ զբնբոմունս մեր, ոչ զփառասիրութիւն և ոչ զձևսխութիւն. այլ որ խոցէն զմեզ՝ այն է, կալ ընդ այնոքիւք զորս ատորև քան զմեզ համարիմք, այն է կրել զբեռն իշխանութեան՝ որ թռուի մեզ յանարժան ձեռս յանձնեալ։ Զանխուսելի հպատակութիւն մեր ամենեքեան համարհելով՝ ի սրտե զայնոսիկ, ընդ որովք հարկ է մեզ կալ, և՝ ի բարձրութենէ նոցա ամենեքեան զվրէժ մեր ատգտանելով զնոսա. ամբարտաւանութիւն մեր սակս պեալ՝ ի հնազանդել նոցա, սփոփի ընդ վայր հարկանելով զնոսա. հրամանք նոցա սրեն զմիտս մեր՝ ի գտանել թերութիւնս՝ ի նոսա. և գուն ուրեք մեծաւորք մեր և իշխանք տիրեն սրտից որպէս՝ ի վերայ անձանց մերոց։

Ոչ ինչ ընդհատ և երկրորդ դրոշմն փառաց, յոր սուրբ Կոյսն ամբարձաւ այսօր փոխանակ հպատակութեանն՝ զոր այնչափ սիրեաց, է իշխանութիւն և տէրութիւն։ Ժառանգէ նա այսօր յերկինս ընդ աջմէ միածնին զիշխանութիւնն, զոր ոչ կամեցաւ վարել յերկրի. մտանէ յամենայն երանութիւն իւր. կայ՝ ի ձեռանէ Քրիստոսի միջնորդ հաւատացելոց, խաղովակ շնորհաց, յոյս և հաստատութիւն եկեղեցւոյ, ապաստան մեղաւորաց, պաշտպան արդարոց, անճարիցն ճար ազգաց և պետութեանց, դշխոյ երկնի և երկրի։ Այո՛, եղբարք իմ, իշխանութեան Կուսին չէք այլ ինչ ջափ, բայց սիրոյ որդւոյն

առ նա. իշխանակից իւր ունի զնա որդին, և բաշխող
չնորհաց իւրոց. կամի զի առ նա դիմեսցուք, եթէ կա-
միք ընդունել յինքենէ որ ինչ խնդրեմք. և չէք ինչ այն-
պէս օտար ի հաւատոց, որպէս կարծել փառս Քրիստոսի
զնուազուծն փառաց սրբոց մոր իւրոյ: Զի Քրիստոս փա-
ռաւորեմք ի նմա, զպարգևս Քրիստոսի մեծացուցանեմք
ի մեծացուցանել զանձառելի չնորհս Կուսին. առ զո-
րութիւնն Քրիստոսի կարդամք, ի կարդալն առ մայր
նորա. զի և սուրբն Կոյսն և մեք, նովաւ եմք որ ինչ
եմք. և յոյսն մեր, զոր ունիմք ի Կոյսն, հաստատեալ
է ի սքանչելիսն՝ զոր Աստուածորդին իւր կամի գործել
ի ձեռն նորա:

Սակայն չէ բաւական, եղբարք իմ, ապաւինել ևեթ
ի սուրբ Կոյսն, և սպաս ինչ մեծարանաց մատուցանել
նմա յապահովութիւն փրկութեան մերոյ. զի յաւիտե-
նական փրկութիւն է վարձ պատուիրանապահութեան:
Որ ոք սիրէ զաշխարհ, որ ոք տայ զանձն ի ցանկու-
թիւնս մարմնոյ, որ ոք ոչ ընկճէ զախտս իւր մեղանչա-
կանս, ի զուր պարծի լինել պաշտօնեայ Կուսին, ոչ ճա-
նաչէ զնա Կոյսն, համարի զնա թշնամի որդւոյ իւրոյ, ա-
տեայ զնստահութիւնն զոյն լինէն որպէս թշնամանս
կրօնից, և փառաց Աստուածորդւոյն: Օգնական է սուրբ
Կոյսն և բարեխօս այնոցիկ ի մեղաւորաց, որք կամին
դառնալ ի մեղաց իւրեանց. այլ երագէ զպատուհաս այ-
նոցիկ, որք ի բարեխօսութիւն իւր յանդուգն յուսա-
յեալ՝ պատճառս առնուն հանապազորդելոյ այնուիկ ի
մեղս: Զի եթէ Քրիստոս ինքնին ոչ ընդունի ի մայր իւր
և յեղբարս, բայց միայն զայնոսիկ՝ որք առնեն զկամս
Հօր իւրոյ երկնաւորի, կամիցի՞ երբեք սուրբ Կոյսն ըն-
դունել յորդիս իւր զայնոսիկ՝ որք զպատուիրանսքն Աս-
տուծոյ զանցանեն: Եթէ Քրիստոս ընդդէմ գրուատեաց
կանանցն Յուդայ վերանութիւն մեր իւրոյ ոչ համարե-
ցաւ ի կրել նորա զինքն ի սուրբ արդանդի իւրում, այլ

ի հաւատարմութեան նորա ի լսել զբանն Աստուծոյ և
ի պահել զայն, կարիցեմք մեք երանելիս զմեզ համարել
վասն կրելոյ մերոյ զանձամբ նշանակս ինչ սրբազանս
զպաշտաման Կուսին, առանց սիրոյն Քրիստոսի և ճըշ-
մարտութեան բանից նորա ի սիրտս մեր գրոշմելոյ. ոչ
ապաքէն գտանիցէ այսուիկ սուրբ Կոյսն պաշտպան ախ-
տից, զորս որդին իւր գատապարտէ: Կործանիցէ ուրեմն
իշխանութիւն Կուսին զգործ Աւետարանին, և բանայր
մարդկան այլ ևս ճանապարհ փրկութեան օտար ի ճա-
նապարհէն՝ զոր հորդեաց նոցա Փրկիչն: Պատրանք մեծ,
և պաշտաման սրբոյ Կուսին՝ յոր յորդորէ մեզ սուրբ
եկեղեցի՝ զեղծումն ի սպառ, առ ի կարելոյ մեղանչել
աներկիւղ, կարծելով գտանել ի մահու ջնորհս ղջման
և թողութեան մեզաց վստահութեամբ ևեթ ի Կոյսն՝
յետ հանապազորդելոյ ի մեղս և ի յոռութիւնս ախ-
տից: Աւաղ, եղբարք իմ. յոյս մեր և յինքն ի Քրիստոս,
որ է կեանք մեր և փրկութիւն, լեցի ընդունայն՝ եթէ
ոչ որպէս քրիստոնեայք կենցաղավարեսցուք. լեցի ապա
հզօրագոյն վստահութիւն մեր ի Մարիամ, առ ի հա-
ստուցանել զմեզ ի փրկութիւն՝ թէպէտ և ընդ ճանա-
պարհս ախտից և աշխարհի գնայցեմք: Եթէ ոչ ամենե-
քեան՝ որ ասիցեն առ Քրիստոս Տէր Տէր, մտցեն յարքա-
յութիւնն երկնից, ո՛րպէս ապա որոց կարդայցեն ևեթ
զԿոյսն՝ Տէրութիւն Պատուին և Յայս, լեցի ժառանգել զփառս՝
զոր օրինապահաց խոստացաւ Քրիստոս: Եթէ ոչ ամե-
նեքեան՝ որք քարոզեցին յաշխարհի զփառս Քրիստոսի,
որք յանուն նորա մարգարէացան, որք զվարդապետու-
թիւն նորա ուսուցին, և որք զարքայութիւն նորա ըն-
դարձակեցին, համարեսցին ընդ հաւատարիմ պաշտօ-
նեայս Նորա, և ընկալցին զպսակն արդարութեան, եթէ
ոչ սրբութիւն վարուց իցէ պաշտաման նոցա կցորդ,
ո՛րպէս ապա իցէ կարծել, զի քարոզք փառաց Կուսին և
նախանձաւորք ևեթ ի յաւելուլ զչուք և զպայծառու-

թիւն ածնից նորա, և ի յաճախել նուէրս ի սեղանս նորա, համարեացին ընդ ծառայս հաւատարիմս՝ որոց խոստացեալ է Տէր զվարձս արդարոց, եթէ անմեղու-թիւն կենայց նոցա և ամբծուութիւն սրտի ոչ սրբեացէ զսպաս պաշտամանց նոցա: Ոչ, մի լինիր, եղբարք իմ: սուրբ եկեղեցի մեծարէ միշտ զմարիամ որպէս օգնական տարուբերեան մերում, և ոչ որպէս պատսպարան ախտից. որպէս լցուցիչ կարօտութեան մերոյ, և ոչ որպէս պաշտպան մեղաց: Ոչ իւրս համարի նա, բայց միայն զպաշտօնեայս Քրիստոսի. ոչ հայի նա ի սպասս՝ որ ընծային նմա. այլ ի սրբութիւն և ի հաւատարմութիւն սրտի ընծայողացն. ոչ սիրէ նա ի պաշտօնեայս իւր, բայց զանմեղութիւն գՀաւատս զսէր և զամենայն առաքինութիւնս, որ հաճոյ գնա լինքն ընծայեցուցին յաչս Աստուծոյ: Այսպէս կարողութիւն և իշխանութիւն պահէն այսօր յերկինս զնոնարհութիւն և զպատակութիւն, որով եկեաց նա միշտ ի վերայ երկրի:

Իսկ յետին նուաստութիւն Կուսին ի մահկանացու կեանս իւր եղև արհամարհանաց և ամենոյ: Կասկածելի եղեալ Յովսեփայ, համբեր լռութեամբ ընդ այսպիսի նուաստացուցիչ և տխրալի կասկած նորա. երկբայագէր ի սրտէ հրամանացն Աստուծոյ, և առանց յայտնելոյ Յովսեփայ զնորհուրդն անճառելի ներդործեալ յարգանդի իւրում, ի Տէր ապաստան առնէր յայտնել զանմեղութիւն աղախնոյ իւրոյ. կցորդեր զնուաստութիւն իւր զայս ընդ այնմ, զոր Բանն մարմին եղեալ՝ սկսաւանէր կրել յամենամաքուր արգանդի իւրում. խոնարհեր Կոյս սուրբ հանգոյն նմին բերել առ վայր մի յանձին ընմանութիւն մեզաց, մատուցանել զանմեղութիւն իւր ի նուէրս գաղտնի և երկրպագելի խմաստութեանն Աստուծոյ, և ցնծալ իսկ անդստին ընդ արգասիս՝ զոր յառաջ ածելոց էր Աստուած ի լրումն յաւիտենական խորհրդոյ իւրոյ ի խոնարհութենէ և յարհամարհանաց անտի:

Այս պատրաստութիւն էր Կուսին, և վասն այսորիկ զՀին մահուն յաջորդեցին փառք և պատիւ և պաշտօն, որ են խոնարհութեան նորա գրոշմ յետին: Ամենայն աղքք և ազինք լսեան զպաքանչելիս, զոր արար Տէր ի նմա. ամենայն ուրեք, ուր փառացն Քրիստոսի եղեն երկրպագուք, ծանուցան և փառք Մարիամու և պաշտեցան, և ընդ վերանալ նորա յերկրէ, ուխտս մատուցին նմա արք առաքելականք: Դարձն այնոքիկ երջանիկք և պանծալիք հաւատոյ՝ եղեն առաջին աւանդապահք մեծարանաց հաւատացելոց առ Կոյսն սուրբ, և նորա ծնեալ եկեղեցւոյ հարկ եղև անդստին սահմանել սպաս օրինաւոր դէմսոյն երկնից. զի անդէն յարեան ի մէջ հաւատացելոց արք տգէտք և անպաշտք, որք ի գերազանցութենէ փառաց և արժանապատուութեան նորին չցացեալք, և զբարեպաշտութիւն ի անպաշտութիւն և ի կռապաշտութիւն յեղափոխեալ, մատուցանէին նմա ղոհս, և զանհաղորդական պաշտօն աստուածային: Եւ ապա ըստ տարածանել հաւատոյ՝ և պաշտօն Կուսին հաստատեցաւ ի վերայ երկրի. և որչափ եկեղեցի՝ օգնեալ յինքնակալաց՝ եռեւս զշուք և զպայծառութիւն սրբութեան խորհրդոցն, նոյնչափ և պաշտաման Կուսին յաւելաւ շուք և հանդէս: Ի շուր երևեցան յայնժամ անձինք անխաղաղասերք և հպարտք, որք իշխեցին հակառակել հրաշափառ աստուածամայրութեան Կուսին: Հայհոյութիւնք նոցա զարթուցին զբարեպաշտութիւն հաւատացելոց. ամենայն ուրեք կանգնեցան սեղանք և տաճարք հոյակապք՝ նուիրեալք յանուն և ի պաշտպանութիւն Կուսին, ի փառս որդւոյ նորին: Կրօնք ազգաց յարուցին յիշատակարանս ի պատիւ նորա ընդդէմ գաղտնածածուկ հնարից Թշնամեաց նորա. գումարեցան ժողովք առ ի պահել նմա զվէհափառ իրաւունսն, և աւանդել յետնոց վճռովք իւրեանց առհաւատչեայս պաշտելիս մեծարանաց իւրեանց և զՀարց առ Տիրամայրն. և մըր-

բուԹիւն, որպէս միշտն պատահէ, պայծառացոյց զՀրեշմարտուԹիւն:

Զինչ եա յաւելից. քաղաքք և պետուԹիւնք մտին ընդ հզօր պաշտպանուԹեամբ նորա, եղբայրուԹիւնք սուրբք միաբանեալք յանուն նորա՝ նուիրեցան առնոյն ուրեք՝ի պաշտօն նորա. պատուհասք հասարակաց դադարեցին ուխտիւք և աղօԹիւք առ նա մատուցելովք. քաղաքք մեր և գաւառք, հարեալք գաւազանաւ աստուածատաց ցասման, տեսին զայն անկեալ բարեխօսուԹեամբ նորին. և մի՝ի Թագաւորաց մերոց, որոյ արգասուԹեամբն և ողորմածուԹեամբ սիրելի միշտ լեալ մեզ անուն, վասն յաւերժացուցանելոյ զնիշատակ բարերարուԹեան նորա մեծի, մատոյց հանդիսիւ դչխոյին երկնից՝ի նուէր զաշխարհ իւր զերծ պահեալ՝ի հարուածոյ, որ Թուէր սպառնալ նմա սպառսպուռ կործանումն:

Անդէնա անգամ յառաջ քան զաղետալի հերձուածն, ոք արար զնա երկիր խռովուԹեան և մոլորուԹեան, երևելի եկաց կրօնիւք առ սուրբ Կոյսն. արքայք նորա ունէին զՏիրամայրն՝ի պաշտպան պետուԹեան իւրեանց. արքագոյնք՝ի Հովուաց նոցա եղեն նախանձաւորք պաշտամանն, զոր ընկալեալ էր նոցա աւանդ սուրբ յառաքելագործ երիցանց, որք յաւուրս մեծի քահանայապետին Գրիգորի եկին հաստատել՝ի հռչակաւոր կղզւոջ անդ զՀաւատս Քրիստոսի՝ի վերայ աւերակաց կռապաշտուԹեան: Եւ եկեղեցին այն պայծառացեալ ընդ հուպ գիտուԹեամբ, ոչ միայն ոչ եղկացոյց զնա, խանձ իւր՝ի պաշտօն Կուսին, այլ և յաւել զայն եռանդեամբ և հանդիսիւք. բարեպաշտուԹիւն նորա առաւելաւ գիտուԹեամբն: ԱմբարտաւանուԹիւն և յոռուԹիւնք եղծին որ ինչ խոնարհ և լուսաւոր հաւատոյ էր չնեալ. և երբարձ Տէր զՀոգի իւր սուրբ յանհաւատացեալ եկեղեցւոյ անտի, և մատեաց զնա՝ի հոգի ստուԹեան և ապստամբուԹեան. այլ ոչ առանց ողորմուԹեան զնա պատուհասելոյ: Կամեցաւ պատուհասել զնա, այլ ոչ մերժել և կորուսանել. պահեաց տակաւին՝ի միջի նորա տակաւաւոր խորայեալցիս հաւատարիմս, զորս ժանտախտն համաձարակ ոչ ապականեաց, և որք ոչ կրկնեցին ծուխր բահաղող: Սերմն սուրբ, զոր բարուԹիւնն Աստուծոյ պահէ տակաւին՝ի մէջ քաղաքանէոյն վտարանդելոյ, պղտոբերևացեալ՝ի ժամանակի իւրում, և ոչ Թողուցու զփորձ առնուլ զՍոդոմայ և զԳոմորայ: Եւ տակաւին մի՝ի դչխոյից նորա մեծ, փոխանակեալ զԹագ ընդ հաստատուԹեան հաւատոց իւրոց, և առաւել այնու եղեալ երևելի քան ծննդեամբն և մեծամեծ բարեմասնուԹեամբք՝որ եդին զայն՝ի գլուխս նորա, գտանէ առ ոտս սրբոյ Կուսին զքաղցր մխիԹարուԹիւն վշտաց իւրոց, յանձն առնէ նմա հանապազ զպետուԹիւնն զայն ապականեալ՝ի հերձուածոյ, և զԺողովուրդն՝ զոր հոգի ապստամբուԹեան անբաժանելի՝ի հերձուածոյ՝ եհար չքացուԹեամբ: Եւ յաձախ չարժեալ՝ի գութ առ ոտս սրբոյ սեղանոյ, օգնէ՝ի գարձ ժողովրդեան իւրոյ, և՝ի կանգնուն ԹագաւորուԹեանն տարապարտ ապականելոյ, սրտեռանդն հեծուԹեամբք՝ զորս հեղու անդադար անտես՝ի սրբարանի անդ, առաւել քան զոր հզօր պետուԹիւնք երկրի իմաստուԹեամբ խորհրդոց և զօրուԹեամբ զինուց կարիցեն օգնել:

Ահաւասիկ, եղբարք իմ, յո՛ր լուսն փառաց ածին խոնարհուԹիւնք անցաւորք զսուրբ Կոյսն. և գրեԹէ միշտ այսպիսի են կեանք արգասլոց՝ի վերայ երկրի: Դար իւրաքանչիւր ընծայէ մեզ զայսորիկ օրինակ. և Թագաւոր՝ առաջի աչաց մերոց կործանեալ յաԹոռոյ[1], և յամենայն կեանս իւր բամբասեալ յանզգամաց, այն որ ետես զՀաւատս իւր պարսաւեալ որպէս տկարամտուԹիւն, զեռանդն կրօնից իւրոց որպէս անխոհեմուԹիւն,

1 Յակոբ Բ. արքայ Անգլից:

և որպէս ձայնատուբը աղէտից իւրոց համարեալ, ընդ-
ունի յետ մահուն զիրաւունս իւր՝ի վերայ յարդի և
մեծարանաց ամենեցուն, և ձգէ յանձն պատիւ բիւրա-
պատիկ մեծ քան զփառս՝ որ շուրջ զդահոյիւքն պատէին:
Իսկ յափշտակողին, որ անիրաւութեամբք ամբարձեալ՝
կապտեաց զանմեղն, և հալածեաց զժառանգն օրինաւոր՝
առ՝ի կալ՝ի տեղի նորա, և զգենուլ զկողոպուտս նո-
ցին, աւաղ, թաղեսցին ընդ նմա փառք իւր՝ի շիրմի.
մահ նորա ածցէ՝ի յայտ զամօթ կենաց նորին: Ցայն-
ժամ թուեմբն ընդդիմարգել զօրութեան և յաղթու-
թեան բանից հասարակաց՝ի բաց բարձեալ, ինդրեսցի
վլուխ՝ի յիշատակէ նորին փոխանակ ստայօդ գովու-
թեանց՝ որ բունի ընծայէին նմա. յայնժամ պատճառք
մեծամեծք երկիւղի և ահինակալութեան ոչ ևս զօրեսցեն,
պատառեսցի քօղն՝ որ ծածկէր զևս ամօթալի հանգա-
մանս կենաց նորա. նշաւակեսցի վասն էրն գաղանածա-
ծուկ փառաւորեալ գործոց նորա, զօրս մարդահաճու-
թիւն այնքան մեծացուցանէր, և խայտառակեսցի ան-
արժանութիւն և նուաստութիւն նոցա: Նկատեսցին՝ի
մտոյ առաքինութիւնքն գիւցազնականք, որոց հաւասք
միամիտք ըստ հասարակաց գովութեանց ընծայէին. և
տեսցին՝ի նոսա առ ոտն կոխեալ սրբազնագոյն իրաւունք
բնութեան և ընկերութեան. կապտեսցին յայնժամ՝ի
նմանէ փառքն խժականք և անիրաւք, յորս վայելէր.
հաւատացին նմա նախատինք և դրժանք եղեռնութեանցն,
զօրս հնարէր ծածկել և յանձնէ: Փոխանակ հաւասարելոյ
ընդ գիւցազունս՝ զնորթացելոյ՝ի բնութենէ ընկալցի
զանուն, և համարեսցի մի՝ի մարդկանէ՝ զօրս Ահաբեանն
կոչէ անկրօնս աննուէրս և անմիտս: Փառք նորա ան-
իրաւք լինին առժամայնք, իսկ նախատինք դարուց՝ի դարս
յարատեւք. ոչ ծանիցեն զնա լեալինք, բայց եղեռնու-
թեամբքն, բայց կոխան առնելովք նորա զգուեթ որդիա-
կան առաքի թագաւորաց և աղգաց, որք վատութեամբ

դրուատեօք կացին՝ի զինի յափշտակութեան նորա,
բայց գաւաճանութեամբն՝ որով ընկեց յաթոռոյ զՀայր
և զթագաւոր արդար, առ՝ի կալ՝ի տեղի նորա: Պատ-
մութիւն, հաւատարիմ աւանդապահ ճշմարտութեան,
պահեսցէ մինչև՝ի սպառ զանուն նորա ամօթով. և աս-
տիճանն՝ յոր ամբարձաւ ընդդէմ օրինաց պատուոյ և
բաւութեան, ածցէ զնա՝ի տեսարան տիեզերաց, յաւեր-
ժացուցանել զիշատակ փառամոլութեան նորա և զնա-
խատանաց՝ի վերայ երկրի:

Զինչ աստ մարթ եցէ ինձ յաւելուլ ձեզ՝ի խրատ,
եղբարք սիրեցեալք,՝ի վախճան ներբողենի մահուան և
վերափոխման Կուսին, բայց դնել զայն ընդդէմ ելից մե-
ղաւորի՝ի կենաց: Ա՛յր, վախճան առնէ մահ ամենայն
փառաց մարդոյ՝ որ մոռանայ զԱստուած՝ի կեանս իւր.
յափշտակէ՝ի նմանէ զամենայն, կապտէ զնա յամենայնէ,
՝ի չիք դարձուցանէ զամենայն՝ որով էրն յաչս մարդկան
մեծ. Թողու զնա միայնակ անզօր անօգնական և անճար
՝ի ձեռս Աստուծոյ ահաւորի: Բազմութիւն բարեկամաց,
մարդահաճոյից, հպատակաց և սուրհանդ, ոչ ևս կարեն
օգնել նմա. որպէս որք որ տեսանէին կոծեալ զնք՝ի
մէջ ալեաց, և ոչ կարէին ձեռն տալ նմա, այլ արտա-
սուել միայն և ուխտս՝ի զուր վասն կենաց նորա մա-
տուցանել: Այսպէս մեղաւորն ընդ մահու մաքառելով՝
կարկառէ զձեռս առ ամենայն արարածս, որ խոյս տան
՝ի նմանէ: Այնցեալն Թուխ նմա վայրկեան մի փախստա-
կան, երևեալ և ապականեալ. ապագայն վիհ անհուն,
անյատակ և անել՝ուր գնայ կորնչել միշտ խորասոյզ,
անատոյգ զնչելոյն. աչիւքն, զոր համարէր մշտատես, ոչ ևս
այլ ինչ Թուխ նմա, բայց ցնորք ցնդական. յաւիտենա-
կանութիւն՝ զոր եղջերուաքաղ համարէր, արհաւիրս
յայնժամ արկանէ՝ի նա, և չօշափէ ահա զայն: Որ ինչ
իսկականք Թուխին նմա իրք և հաստատունք, նանրանան.
որ ինչ անիր և ցնորական, երևին իրականք. աղէտ իւր

տան նմա լոյս, այլ ոչ ընծայեն նոր ինչ յօժարութիւն և սիրտ նոր. մեռանի նա լուծեալ զպատրանս, այլ մեռանի անփոփոխ. մեռանի յուսահատ և անզեղջ:

Իսկ արդարն, երանի՛, նովին աչօք տեսանէ յայն-ժամ զաշխարհ և զյաւիտենականութիւն, որովք միշտ տեսանէր. ոչ ինչ յեղափոխի նմա, ոչ ինչ առնու վախճան յայնմ յեսին վայրկենի, բայց վճռակրութիւն և մեռելութիւն. և զերծ յամենայն կապից աշխարհի և ուռնայնութեան, ճոխացեալ գործովք բարեաց, զօրացեալ հաւատովք խոստացելոցն բարութեանց, կազմ և պատրաստ ՚ի մուտս երկնից, փակէ զաչս իւր անտրտում առ մնոտիս՝ զորս չէր նորա տեսեալ անվիշտ, վերաթևէ առ արարիչ իւր, առ որ միշտ ըղձիւքն հառաչէր, և մտանէ խաղաղութեամբ և յուսով ՚ի յաւիտենականութիւն երանաւէտ. եղիցի եղիցի:

ՀՕՐՆ ՊՈՒՐՏԱԼՈՒԻ

ՅԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԻԻՆ ՏԻՐԱՄՕՐՆ

Յակոբ ծնաւ զՅովսէփ՝ զայրն
Մարիամու, յորմէ ծնաւ Յիսուս՝
որ անուանեցաւ Քրիստոս:
Մատթ. Ա. 16:

Տէր արքայ, ահա համառօտիւ բարձրագոյն ներբող սրբոյ Կուսին, զորոյ այսօր կատարեմք զտօն: Յորմէ ծնաւ Յիսուս: Քանզի այս բան, ոչ միայն զվհատաւորութիւն՝ այլ և զսրբութիւն յղութեան Կուսին յայտ առնէ. վասն այսորիկ սուրբն Օգոստինոս, ուր զսկզբնական մեղաց բանք էջեն՝ հարկ համարի ՚ի պատիւ Քրիստոսի ՚ի բաց առնուլ միշտ զնոյն սուրբ, և ընդ երկեայս իսկ զայնմանէ ոչ հանդուրժէ: Եւ պատճառքն, զոր յաւելու, յայտնագոյն զբան նորա կացուցանեն, զի ասէ՝ Գիտեմք զի նոյն սուրբ այնպիսի ընկալաւ ընորհս, զի յաղթահարեաց զմեղս ՚ի սպառ, և արժանի եղև ծնանել զՔրիստոս, զամենեցին անմեղն: Վկայութիւն մեծ, որով ամենայն քարոզք հանին մինչև ցայսօր վարին ՚ի հաւատոյս սրբութեան Կուսին. վասն այսորիկ և Հարք Տրիդենտեան ժողովոյն ՚ի վճռել զինդիր սկզբնական մեղաց յայտ արարին, զի ոչ իմանային ՚ի վճռի անդ

զերանուհի և զանարատ Կոյսն Մարիամ: Արդ եթէ սուրբք Ժողովին ոչ կամեցաւ առնուլ զՏէրամայրն խաւն 'ի խուռն ընդ այլ մարդիկ 'ի միասին 'ի հասարակաց օրէնսն, ո՞ յանդգնեսցի արկանել զնա ընդ նովին օրինաց: Վասն որոյ եկեղեցի 'ի Հոգւոյն սրբոյ լուսաւորեալ՝ սահմանեաց զոմն յղուԹեան կուսին, առ 'ի կայտ առնել զառանձին և զգերահրաշ ընորհս սրբուԹեան Տիրամօրն անգստին 'ի յղուԹենէ: Եւ ինձ արդ անկ է, սիրելի ունկնդիրք, սպասաւորել այսմ խորհրդոյ սուրբ եկեղեցւոյ, և ցուցանել ձեզ՝ զի խորհուրդս այս անպղտաբեր յերեման 'ի շինուԹիւն բարուց, ոչ միայն զփառս կուսին բովանդակէ, այլ և պատուղ մեծ բերէ վասն մեր: Ցայս իսկ ձգնեցայց, որպէս տեսանիցէք յառաջիկայս. այլ կարօտիմ, սուրբ Կոյս, հզօր օգնականուԹեան և լուսաւորուԹեան մտաց, զորս յուսամ քեզ 'ի ընորհացն Աստուծոյ ընդունել: Ողջոյն ՝եզ:

Սկիզբն առնեմ ձառիս խնամոյիւք՝ որ ինձ Թուի արժանի ամենայն մոգրուԹեան, և յորում պարտ համարիմ զկայ առնուլ, զի մատուցանէ ինձ նիւԹ պատառ 'ի հրահանգս և 'ի բարեկարգուԹիւն վարուց 'ի խորհրդեանս՝ զոր ոճոխմբեմք: Քանզի համարիմ՝ զի խորհուրդս այս տալով մեզ պատճառս համեմատելոյ ընդ յղուԹեան Կուսին զմեր, երիս իրս ուսուցանէ մեզ, յորս է հաստատագոյն և օգտակարագոյն գիտուԹիւն քրիստոնէի, որ է ձանաչումն անձին: Աւեմ իսկ երիս իրս՝ յորս կարևոր է մեզ խնամել, և զորս ոչ է մարԹ չգիտել մեզ՝ առանց անգիտանալոյ զՔրիստն կրօնիցս մերոց, այսինքն ձանաչել որ ինչ եմքս առանց ընորհացն Աստուծոյ, որ ինչ եմքս ընորհքն Աստուծոյ, և որ ինչ պարտիմքս ընորհացն Աստուծոյ: Եւ յորժամ ընորհս ասեմ, իմանամ զայն՝ զոր աստուածաբանք կոչեն ոչ բառ· և որ պատուականագոյնն է 'ի մեզ քան զամենայն պարգև Աստուծոյ. զի սովաւ արդարանամք մեղաւորքս, և

Թշնամիքս Աստուծոյ լինիմք աստուածորդիք: Իսմանամ զբնակաւոր 'ի մեզ ընորհս, զոր հեղոյս Աստուած 'ի հոգիս մեր 'ի ձեռն մկրտուԹեան, և զոր կարեմ ընդ սրբոյն Երրորդութեայ սահմանել՝ խորհուրդ հոգևոր յղուԹեան և վերածնուԹեան մերոյ, կամ ապաշխարուԹեան՝ որ ընդ զտեղի մկրտուԹեան յարդարուԹիւն մեր: Համարիմ ասեմ, զի խորհուրդ յղուԹեան կուսին քաջ կշռեալ և խորագոյնս խելամտեալ՝ տայ մեզ հասուս լինել երից երացս. զինչ եմք առանց աստուածային ընորհացս, այս ինքն ապականուԹիւն 'ի սպառ բնուԹեանս մերոյ 'ի ձեռն մեղաց. զինչ եմք ընորհօքն Աստուծոյ, այսինքն գերազանցուԹիւն սրբուԹեանս մերոյ 'ի ձեռն մկրտուԹեան. և զինչ պարտիմք ընորհացն Աստուծոյ, այսինքն զանս և զգուշուԹիւն պահպանելոյ զայն 'ի մեզ և յարգելոյ:

Մինա գնել աղաչեմ առաքարկուԹեանս. Մարիամ ընորհօք անարատ յղուԹեանն յաղթող մեզաց սպառսպուռ՝ կայտ առնէ մեզ 'ի հակառակէն զաղէտս, յորս խարդաւանեցին զմեզ մեղք. այս լեցի առաջին մասն ձառիս: Մարիամ սրբուԹեամբ յղուԹեանն քաջայայտ առնէ համեմատաբար զերջանկուԹիւնն, յոր ընորհիւ որդեգրուԹեան ամբառնամք. և այս լեցի երկրորդ մասն ձառիս: Մարիամ հաւատարիմ առ ընորհս անարատ յղուԹեան իւրոյ՝ կայտ առնէ օրինակաւ իւրով զանհրաժեշտ պարտս մեր պահպանելոյ և յարգելոյ զընորհս, որով եմք առաջի Աստուծոյ որ ինչ եմքս. և այս լեցի երրորդ մասն ձառիս: Արդ գիտուԹիւն այսր ամենայնի՝ տայ մեզ զկատարեալ և զլուսաւոր ձանաչումն անձին: Քանզի այսուհետև ձանաչեմք զստոյգ ԹշուառուԹիւն մեր, զՀաստատուն երջանկուԹիւն, և զկարևորագոյն պարտս մեր: Զայս ահա կոչեմ մարդ. նա աւանիկ, որպէս Ժողովոյն ասէ. Այս է մարդն ամենեին: Զստոյգ ԹշուառուԹիւն մեր ասեմ, վասն ողբալոյ առաջի Աստուծոյ՝ հո-

գեղով սուրբ ապաշխարութեան, զնաստատուն երջանկութիւն մեր, վասն օրհնելոյ զԱստուած, և գոհանալոյ զնմանէ՝ հոգւով խոնարհութեան և վստահութեամբ ՚ի նա. և զկարևորագոյն պարտս մեր, առ ՚ի կատարել զայնոսիկ առաջի Աստուծոյ՝ հոգւով և ըստ օրինաց քրիստոնէական խոհականութեան: Այսքիկ են մասունք ճառիս, որոց ուշիւ միտ դնել աղաչեմ:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ոչ օտարացուցիչ ինչ բանս, այլ ստոյգ հաւաստիս ասէի ձեզ ՚ի հաստատել խմբի, զի ընդհակ անարատ յղութեան Կուսին՝ յալեանականն ՚ի վերայ մեղաց՝ քաջայայտ տայ մեզ ճանաչել զերչուառութիւնն, յոր արկին զմեզ մեղք, և զի ՚ի խելամտել որ ինչ եմք ածանց ընդհանուր Աստուծոյ՝ շատ է մեզ խոկալ ՚ի սերկեւեան խորհուրդ: Անհատական հաւաստիք բանիցս. Մարիամ անդստին ՚ի յղութենէ յարդանդի մօրն, առանձին ընդհանրացն Աստուծոյ, գտաւ գերագոյն, կատարեալագոյն և երջանկագոյն քան զամենայն արարածս: Գերագոյն, զի էր նա յարքունի զարմի Յուդայ, և որպէս Թոռնեայ Թոռնէից Դաւթի՝ յոգունս ՚ի նախնիս իւր Թոռեր Թագաւորս և իշխանս: Կատարեալագոյն, զի էր անդստին հրաշակերտ ամենակարողութեանն Աստուծոյ, և նորաքանչ ձրիւքն՝ որովք գեր ՚ի վերոյ կալոց էր ՚ի կանայս, էր անհամեմատ ՚ի կարգի բնութեան: Եւ երջանկագոյն, զի էր յղացեալ առ ՚ի լինել մայր Աստուծոյ, և տալ Փրկիչ աշխարհի: Զիք հաւաստի ինչ քան զայս, ո՛ հաւատացեալք: Այլ ո՛վ խորք խորհրդոյն Աստուածոյ· այս ամենայն առանց ընդհանուր Աստուծոյ, զորոց Մարիամ ընկալաւ զերախայրիս ՚ի յղութեան իւրում, ոչ միայն

էէին ինչ արժանիք առաջի Աստուծոյ, այլ և ոչ հանդերձ ամենայն բարեմասնութեամբքն կարէին առնել աստուածահաճոյ զանձն նորա, զայս ուսուցանեն մեզ հաւաստք: Արդ զինչ ասիւ չէիցէ մեզ պարտ խմաստասիրել՝ առ ՚ի միտ առնուլ որ ինչ ներգործեն ՚ի մեզ անէնք մեղաց, և ցո՛ր վայր սերին աղէտք մահաւորք սկզբան մերոյ: Ոչ, սիրելք ունկնդիրք, Աստուած՝ որոյ գատումն է անսխալ, և որ միայն ճանաչէ զիւրաքանչիւր ուրուք արժանիս, ոչ յայնուհանդերձ Մարիամու Հայեցաւ, ոչ ՚ի բարեմասնութիւնս՝ որովք երկինք անգամին սկսեալ էին ճոխացուցանել զնա առատապէս, և ոչ յայն իսկ՝ զի Տէրն տերանց ծնանելոց էր ՚ի նմանէ: Շատ էր այս առ ՚ի փառաւոր առնել զպղծութիւն նորա, այլ ոչ բաւէր առ ՚ի կացուցանել զկոյսն ըստ սրտին Աստուծոյ: Վասն որոյ Աստուած ոչ ըստ այսոցիկ, այլ ըստ շնորհացն՝ որով զգեցոյց զնա և կացոյց զերծ ՚ի մեղաց, հաճեցաւ ընդ նա, և հայեցաւ ՚ի նա որպէս ՚ի դուստր իւր սիրելի: Ինչ յուշի կալարուք զայս հոդեւոր մտածութիւն սրբոյ Ոսկեբերանին, կարևոր կոյժ իմաստից ճառիս. զի է ճշմարտութիւն այնպիսի հաստատուն, զի և ՚ի հարց և ՚ի նախնեաց Կուսին օրինաւոր զանգ, ամպարիշտք և կռապաշտք, թէպէտ և նախնիք Մարիամու և նորին իսկ Փրկչատոսի, սակայն անարգեցան յԱստուծոյ: Եւ յաւելու նոյն ինքն սուրբ Ոսկեբերան, զի կամեցաւ Աստուած ցուցանել այսուիկ ՚ի նախահաւրս իսկ որդւոյ իւրոյ, զի որ ոչ բերէ յանձին զվինիք սրբութեան՝ էէ իւր արժանի, և զի որ բերէ յանձին զվէրք ապականութեան մեղաց, որչափ և արդոյ իցէ ըստ աշխարհի՝ անարգ է յաչս իւր: Զկոյս առցուք աստ, հաւատացեալք, և առաջի աչաց ունելով միշտ զսուրբ Կոյսն, ՚ի միտ առցուք անտի որ ինչ մեքս եմք:

Ամենեքին յղացաք ՚ի մեղս, հաւատք ուսուցանեն մեզ զայս, և փորձ ևս զգալի առնէ մեզ զսյն: Ահա աղ-

բիւր աղեսից մերոց, զոր մեք համարիմք գիտել. այլ ես ցուցից ձեզ քանի՛ աղօտ ինչ ցայս վայր եցե գիտութիւն մեր· լուարուք ինձ և խելամուտ լինիցիք: Աստուած, լուսաւորեալք 'ի հաւատոց, խոստովանիմք ընդ Առաքելոյն՝ զի անգամն 'ի յղութենէ էմէ ոչ էր բարւոքն. և չիք ոք՝ որ չիցէ պատրաստ ասել ընդ Դաւթի· Անօրէնութեամբ յղացաւ, և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ: Ախտիւ աղօթիւք յորժամ հոգւով ապաշխարութեան բերեմք 'ի մեզ զկնիս սուրբ Մարգարէին: Եւ ոչ այսչափ միայն. այլ և յղացեալք 'ի մեզ՝ գիտեմք զի 'ի ներքոյ անկեալ կամք անկարգութեանց՝ որ 'ի մեզաց անտի յառաջ գան արգասիք դառնութեան. այսինքն գիտեմք զի սկզբնականն այն մեզք ձգեաց զհետ իւր 'ի մեզ հեղեղս չարեաց, և զի երկոքումբք մահացու վիրօք ոգիտութեան և ցանկութեան՝ ծաւալեաց զթոյնս չարութեան իւրոյ յամենայն զօրութիւնս հոգւոյ մերոյ, և չէթող 'ի մեզ մանն առողջ. զի եղև հոգիս մեր ընդունակ թանձրագոյն մոլորութեանց, և կամք մեր գոգցես մանեցաւ 'ի կիրս բաղձուիլն ամօթալիս, և երևակայութիւնս մեր եղև բոյն և աղբիւր ցնորից, և զգայարանք մեր եղեն գրուանք և գործարանք անժուժկալութեան, զի ծնանիմք լի տկարութեամբ, յողդողդք և ինքնահաւանք, գերիք բնաւորութեան մերոյ և կրից, հպատակք ըղձից մերոց: Ոչ անգիտանամք՝ զի անտի զհետ գայ 'ի մեզ դժուարութիւն զբարիս գործելոյ, յօժարութիւն և բերմունս 'ի չարիս, դժկամակութիւն 'ի կատարել զպարտս մեր, պատրաստութիւն 'ի թօթափիլ զբեռն օրինաւորագոյն պաշտաձից, անսիրելութիւն Հնմարտութեան՝ որ կըշտամբէ և ուղղէ զմեզ, սէր շողոմից՝ որ խաբեն և ապականեն զմեզ, տաղտկութիւն յառաքինութենէ, և չարաթոյն հրապոյրք ախտից. անտի անբռնել պատերազմին ներքին՝ զոր զգամք 'ի մեզ, և ընդդիմամարտութիւն մարմնոյն ընդ բանին, բանին իսկ դաղտ ապստամբու-

թիւն ընդդէմ Աստուծոյ, և այլանդակ յամառութիւն 'ի կամել միշտ որ ինչ արգելուն օրէնք, վասն զի արգելուն. և չկամել որ ինչ հրամայեն, վասն զի հրամայեն· 'ի սիրել որ ինչ ինքնին իսկ չիցէ սիրելի. և յատել յանիրաւի յամառեալ՝ որ ինչ հրամայի մեզ սիրել, և որ ինքնին իսկ է սիրելի: Ցեղաչքնութիւն այլանդակ, ասէ սուրբն Օգոստինոս. այլ նովին իսկ այլանդակութեամբն յայտնի ապացոյց մեղացն, զոր ձգեմք 'ի մեզ անդստին 'ի ծնէ:

Ահաւասիկ, միւսանգամ ասացից, որ ինչ զգամքս 'ի մեզ, և համարիմք աղետաւոր արգասիս յղութեան մերոյ 'ի մեզս: Արդ ասիցէք ցիս, թէ գիտէ և ընդունել զայս ամենայն չիցէ՞ բաւական 'ի Քանաչումն անձին: Ոչ, սիրելի ուսնդիւրք, յարգասիս սկզբնական մեզաց, զորմէ խօսիմ, է և աղիտագոյն ինչ՝ զոր սերկեանս խորհուրդ տայ մեզ 'ի միտ առնուլ: Ցայս վայր զվերին երեսս թշուառութեան մերոյ տեսաք. այլ միտ դիք, ահա խորք նորին, ահա ծայր, ահա այլանդակութիւն, ահա զառածանք, ահա չարութիւն, ահա ապականութիւն, և ահա ըստ Մարգարէին պղծութիւն անէրծին: Քանի՛ չարիք, աղաչեմ զձեզ՝ ուշիւ հետևել ընդ ասելիսն՝ որք հետզհետէ սպառնական, առ 'ի միտ առնուլ Քրիստոս զմասունս ապականութեանն՝ ընդ որոմ պարտ է մեզ մարանչել, և ընորհօք Տեառն մերոյ նկուն առնել 'ի մեզ: Սկայց բացատրել:

Խորք թշուառութեան մերոյ է, զի գիտելով զթշուառութիւն մեր նախատալից՝ ոչ խոնարհիմք, և հանդերձ ամենայն ամօթալի աղետիւքս տակաւին խրոխտանամք· և թէպէտ կոյրք եմք և տկարք, աղքատք և հեքք, սակայն մեծարեմք զանձինս, ուր պարտ էր մեզ խոնարհել՝ թէպէտ և էաք առաւուածք երկրի որպէս որդիք Ադամայ ժառանգաւորք բախտի նորին, զի եմք մերկացեալք և անկեալք յամենայն փառաց անմեղութեան, և սակայն

ոչ ինչ ընդհատ գոհք եմք ընդ մեզ և ինքնահաւանք, անձնասէրք և անձնասլաշտք: Մարիամ հանդերձ լինու- թեամբ ընորհաց եղև խոնարհ, իսկ մեք ոչընչացեալքս մեղօք, տակաւին եմք հպարտք: Այո՛ եղբարք, ահա ան- կարգութիւնն՝ զոր կարեմք ամենեքեան կշտամբել 'ի մեզ. տգիտութիւն բազում ընդ բազում յանդգնու- թեան, տկարութիւն յեսին ընդ ողորմելի մնապար- ծութեան, կարօտութիւն յուսահատելի 'ի ստոյգ և 'ի հաստատուն արժանեաց ընդ փքացման սրտի, որ միայն ըստ գրոց շատ է ածելոյ 'ի վերայ մեր զաստուածամատ բարկութիւն: Զի ո՞ այլ առաւել է արժանի բարկու- թեանն Աստուծոյ քան զապիկար ամբարտաւան: Արդ ո՞ 'ի մեզ, որ քաջ զանձն ճանաչէ, ոչ խոստովան լինի՝ զի իբրև մեղաւոր գտանի անիծապարտ. Զաղօթս հպարտ ապեղոյ անկն ես:

Ծայր Թշուառութեանս մերոյ, որ այսպիսի գոլով ողբալի՝ ոչ ողբամք զայն: Սուրբք և ընտրեալք Աստու- ծոյ հեծեծին ընդ այն. և մեք ոչ չարժիմք յողբս սուրբն Պօղոս դառնացեալ սրտիւ վշտանայ ընդ այն, իսկ մեք կամք անզգայք: Վա՛յ ինձ Տէր, աղաղակէր սուրբ նահա- պետն Յովբ, Ընդէ՞ր եդեր զիս ընդդէմ քեզ, և եղեմ ինձ բեռն: Ա՞յսպէս ինչ խօսիցի աշխարհասէրն, այ՞սպէս խորհիցի: Օ՜ն անդր. անզգայ աղեաց իւրոց՝ կրկ խաղաղութեամբ զհակառակութիւնն իւր ընդ Աստուծոյ, և զբեռն անձին: Եթէ հեծեծ ընդ լծով կրկին, ոչ վասն այնորիկ են հե- ծութիւնք իւր՝ զի աստուածընդդէմ են կիրք իւր, այլ զի խռովեն զհանգիստ անձին, այլ զի յամխեն նմա վիշտս մահառիթ, այլ զի բազում այն է՝ զի չկարէ հաճել զնոսա: Իսկ զի գերեն զնա ընդ օրինօք մեղաց, ոչ ինչ փոյթ է նմա: Գերի է ցանկութեան՝ որ տիրէ նմա, այլ գերի յօժարակամ, զի կամի հպատակել նմա. զգայ 'ի սրտի իւրմ վտարանջելոյ 'ի Տեառնէ, և իղձն այնորիկ անդադարք և վտանգաւորք. ոչ միայն չհարե-

կէն զնա, այլ և ոչ անհանգիստ զնա առնեն. ցորչափ հասանէ ըղձից իւրոց, հաւանի կեալ ընդ իշխանու- թեամբ մարմնոյ, անձնատուր 'ի մեղս: Քանիք 'ի մեղա- ւորաց աշխարհի ոչ գտանիցեն 'ի նկարագիրս յայս ըզ- պատակեր իւրեանց: Անցցոյզ յառաջ:

Ա՜յլանդակութիւն Թշուառութեանս մերոյ. զի փո- խանակ ողբալոյ զայն, ինքնակամ կուրութեամբ երա- նեմք զանձինս, և պարծիմք իսկ նովաւ: Զի ո՞ 'ի փառա- սիրաց ոչ հրաձուի 'ի սրտէ ընդ խորհուրդս, ընդ առա- ջարկութիւնս և ընդ յաջողուածս փառասիրութեան իւրոյ. ո՞ յարծաթասէր մեծատանց 'ի գտանելն պարապ ոչ մտադիւր բերի 'ի կծծութիւն և 'ի զօշաքաղութիւն. ո՞'ի զգայասիրաց ոչ կացուցանէ զերջանկութիւն իւր յամենալի հեշտութիւնս. ո՞ յոխակալաց ոչ յաղթա- նակ իւր համարի զվրէժխնդրութիւն: Կիրք, զորս Ա- ռաքեալն ողբայր գառնագին, լինին մեզ 'ի հրաձանս 'ի մոռանալ մեր զԱստուած. կրօնից և լուսոյ իսկ բանին վեր 'ի վայր տապալմամբ 'ի մեզ՝ ախտքս այսոքիկ աս- տուածանան, և զհնս նոցին անդադար մատուցանեմք. հնազանդիմք նոցա կուրօրէն. և ոչ շատացեալ ընդ հնա- զանդութիւն մեր՝ կամիմք զի և այլք հնազանդեսցին, և տիրացուացեն զնոսա, և զնոյն ախտս ախտանայցեն, առ 'ի հաճոյ լինել մեզ. եպերել նոցա զայնոսիկ՝ Թշնա- մանք Թուրին մեզ: Որչափ սաստիկ էցեն 'ի մեզ և յոր- դաբորբ ախտքս այսոքիկ, այնչափ առաւել գժկամա- կիմք ընդ հակառակել այլոց. որչափ առաւել էցեն ա- մեհապարտք, նոյնչափ ևս առաւել վրէժխնդիր եմք պատուոյ նոցա՝ զի մի անարգեսցին: Ո՜չ այսպիսի է աշ- խարհս. և եթէ էցէ 'ի մեզ կայծ ինն քրիստոնէու- թեան, չէցէ՛ մեզ պարտ սոսկալ ընդ այս: Այլ է ինչ առաւել ևս քան զայս:

Զառածանք Թշուառութեանս մերոյ, զի զեղծանիմք իսկ նովաւ, մինչև անբասիր առնել մեզ այնու զմեզս

մեր, և վարել նովաւ ընդդէմ Աստուծոյ։ Դաւիթ խոնարհեալ խնդրեր ՚ի Տեառնէ բժշկել ՚ի կրից ասի որպէս ՚ի չարեաց· Ողորմեա ինձ Տէր, զի հիւանդ եմ ես, բժշկեա զանձն իմ։ Իսկ մեք պատճառս պատճառեմք նոքօք առ ՚ի ծածկել զանկարդուԹիւնս մեր, և արդարացուցանել զմեզ այնոս՝ զի տակաւ եմք և ՚ի մեղս յղացեալ, պահանջեմք զի մի համարեսցի Տէր ՚ի մեղս զյանցանս մեր, անտես արասցէ, և մի դատեսցի արդարուԹեամբ։ Որպէս տեղեկագոյնք քան զինքն արդարուԹեան դատաստանի՝ պահանջեմք, զի վասն տկարուԹեանս մերոյ՝ զոր գիտէ, նուազ լինիցի նմա իրաւունք դատապարտելոյ և պատուհասելոյ զմեզ։ և ՚ի պահանջանաց ասի զառածանիմք ՚ի խորհել և ՚ի հաւատալ զնոյն։ Աստուած, որ ըստ պատգամաց սուրբ գրոց է վրէժխնդիր մեղաց անողոքելի, ԹուՀի մեզ այնուհետեւ վասն տկար ա բարածոցս խոստ և սասեիկ, կամ մանաւանդ ըստ հաճոյից մերոց և զգայուԹեանց համարիմք զնա մարդասիրագոյն և ներողագոյն յօժարուԹեանցս մերոց, և նուազ հակառակ անկարգուԹեանց· զի ասեմք, որ արարն զմեզ՝ գիտելով յիմմէ խմբէք արար, ոչ պահանջեսցէ ՚ի մէնջ սրբուԹիւն այն՝ պիսի կատարեալ։ Ո՞չ ապաքէն այսպէս խմաստասիրէ ամպարշտուԹիւն հանապազ· այս է ահա, զոր կոչեմ զառածանս ԹշուառուԹեան մերոյ։

Եւ չարուԹիւն ԹշուառուԹեանս մերոյ է, զի մեք քէն յորում յղացեալս եմք, մահաբեր ինն բնուԹեամբ՝ որ յատուկ է նմա, ապականէ ՚ի մեզ որ ինչ յԱստուծոյ է, և որ ինչ ընկալեալ եմք ՚ի նմանէ, հանճար, կորով մարմնոյ, աջողակուԹիւն, առողջուԹիւն, աղնուականուԹիւն, գեղ, պարգեւս բնուԹեան՝ այսինքն արարչին, յաջողուԹիւն, պատիւ, աւագուԹիւն, ձիրս բանական՝ այսինքն նախախնամուԹեան· և այս ամենայն ՚ի ԹշուառուԹենէ մերմէ ՚ի մեղս՝ լինին մեզ առիթ և գործիք և աղբիւր մեղաց։ Այս է՝ որ տաղնապէ զայր քրիստոնեայ· այլ զպայտարն և երկրաքարշ չզդայ և չըմբռնէ զայս· ներեցէք ինձ բացատրել ձեզ զայսոսիկ, և զհաստատուն ՚ի ձէնջ ինքեանց ցուցանել։ Ի կարգի բնուԹեան որչափ բարեբաստիկք լեալ ըստ աչխարհի, այնչափ առաւել պարտ էր ձեզ հնազանդել Աստուծոյ, և դոհանալ զնմանէ։ Այլ քանզի մեզաց տասլլեալ է ՚ի ձեզ զգեղեցիկ կարգն, որչափ առաւել ընդ զձեզ Աստուած բարեօք, ԹուՀ ինն այնպէս՝ զի այնչափ առաւել յապերախտուԹիւն և յապստամբուԹիւն ծընեալ էիցէք։ Շնորհք իսկ իւր և պարգեւք յոտնեցուցանեն զձեզ, յաջողուԹիւն ապականէ զձեզ, պատիւ փքացուցանէ, մեծուԹիւնք ՚ի զեղխուԹիւն զառածանեն զձեզ, առողջուԹիւն ՚ի մոռացօնս անէ զզգուշուԹիւն կենաց։ ԵԹէ Աստուած ՚ի հակառակէն կամիցի ստիպել զձեզ ՚ի գարձ, գեղք՝ զոր ՚ի կիր արկանիք՝ փոխին ձեզ ՚ի Թոյն, ձախորդուԹիւնք գրգռեն զձեզ, կորանք յօտահատ առնեն, կարօտուԹիւն (զի ո՛ւր ուրեք չիցէ այն, և ո՛ր պայման կենաց իցէ անկարօտ) կարօտուԹիւն արկանէ զձեզ յանիրաւուԹիւն, և հիւանդուԹիւն ՚ի վհատուԹիւն և ՚ի տաղտկուԹիւն։ Որում պարտ էր ածել զձեզ ՚ի սրբուԹիւն, խոտացուցանէ զսիրտ ձեր· և որում պարտ էր ածել զձեզ ՚ի գարձ և մերձեցուցանել առ Աստուած, հեռացուցանէ զձեզ ՚ի նմանէ։ Այսքան է ՀՀմարիտ, զի մեզաց զգեցուցեալ ինն է կամ մանաւանդ ապականեալ ՚ի ձեզ զպարգեւս Աստուծոյ, և հինն ՚ի վեր կործանեալ զգործն աստուածային։ Մաքրեցէք յաւելուլ ինչ յայս վայս· այո՛, սիրելի ունկնդիրք, և զոր յաւելումն՝ առանց համեմատուԹեան առաւելագոյն ողբոց է արժանի։

ԱպականուԹիւն ԹշուառուԹեանս մերոյ, զի ոչ չատացեալ լինել որգիք բարկուԹեան ՚ի բնուԹենէ, կամիմք և ընտրուԹեամբ լինել այնպիսիք։ Մեղանչել յայլոսն, և ծնանիլ անխուսելի հարկաւ Թշնամիք Աս-

տուծոյ սկզբնական մեղաց, անէծք են հասարակաց՝ յո-
բում գրաւեալք, ողբամք զանկումն մեր. այլ 'ի սրտէ
իւրմէ ողբ մեր եթէ յաւելումբ ևս լինել Թշնամիք Աստու-
ծոյ ազատ կամաց: Արդ գիտէք իսկ դուք աշնարհասերք,
առ որս բարբառիմ, գիտէք ցոր վայր 'ի մասինս յայս-
միկ հառանէ ցոփութիւն աշխարհի, և մինչև ցոր ծայ-
բայեղ զառածանս դուք ինքնին հասուցանէք զայն:
Ցղանալ 'ի մեզս է Թշուառութիւն ամենեցուն իսկ որ-
գւոց Ադամայ, այլ կեալ համարձակ 'ի մեղս, այլ հաճել
ընդ մեղս, այլ պարծել ընդ մեղս, այլ խստանալ 'ի մեղս,
այլ հանապազորդել յամառութեամբ 'ի մեղս, այլ
յանդգնել աներկիւղ 'ի մերձաւոր վտանգ մեռանելոյ 'ի
մեղս, այլ կամել արդեամբք մեռանել 'ի մեղս, է առան-
ձինն իմն աղէտ՝ այլ աղէտ սոսկալի ապականելոյ անթիւ
ոգւոց, զորս ուղիւք աշխարհի ածեն 'ի քարշ, և Տէր տացէ՝
զի չիցէ ոք յայնպիսեաց 'ի միջի ձերում, որ ինձդ լսէք:
Ցովք ինդրեր յԱստուծոյ զկորուստ աւուրն յորում էր
յղացեալ, ցանկայր զգարձ աւուրն այնորիկ 'ի խաւար,
և արեւուս մի լուսաւորել զօրն զայն, և մի' համարել այնմ
յաւուրս. և յիրաւի իսկ, ասէ սուրբն Օգոստինոս, զի
էր օրն այն աղետաւոր, յորում սկսանէր լինել մեղաւոր,
և ակամայ գոլ Թշնամի Աստուծոյ: Իսկ ցովին զի՞նչ. —
ներհակիւքն ամենևին 'ի գեղեցկանսիրէ աւուրս կենաց
իւրոց համարի զաւուրս, յորս հառաչակ և անխոնջ
անկղնուացաւ 'ի պղծութիւն, զաւուրն Թշուառս՝ զորս
անցոյց 'ի մեղանս, զաւուրս՝ յորս առ 'ի յագեցուցա-
նել զանաս իւր՝ 'ի բաց եկաց յԱստուծոյ. զաւուրս՝
որ Թէպէտ և լի են արհաւրօք, սակայն զգայասէր հեշ-
տախտութեան նորա յանդիման լինին որպէս ախորժե-
լիք, և պահէ նա անմոռաց զվիշտսն նոցին, և գարձի
լիք, և պահէ նա անմոռաց զվիշտսն նոցին, և գարձի
վան ոչ ևս գառնալոյ նոցին: Այլ առանց իսկ զայսպի-
սեաց ոմանց խոսելոյ, և առանց իսկ գոլոյ այսպիսիք,

սիրելի ունկնդիրք, սոգիւտ ամենապարտ՝ զոր պարտ
է մեզ այսօր գտանել 'ի մեզ՝ այս է, զի 'ի սկզբնական
մեղս՝ զոր այլոյ ուրուք կամաք ձգեցաք յանձինս՝ յա-
ւելումբ կամակար բիւրս այլ, այնչափ առաւել արժա-
նիս պատուհասի առաջի Աստուծոյ, որչափ զի յաճախ
գործեմք խորհրդով, և զորս չկարեմք համարել այլոյմ
ումեք բայ 'ի մէնջ: Մեղք, որ ոչ անգիտութեամբ և
ոչ 'ի յանկարծաձիգ կրից՝ այլ մտածեալ չարութեամբ
գործին, առաւել ևս հակառակ են սրբութեանն Աս-
տուծոյ, և առաւել յոյժ Թշնամանեն զԱստուած:
Մեղք՝ յորոց դիւրին է մեզ խորշել, և ընդ որովք ան-
կանիմք՝ առ ոչ ինչ գրեթէ զանկումն մեր. մեղք՝ զորոց
խնդրեմք զպատեհ, և 'ի փորձութիւնս նոցին գեգերիմք,
ոչ երկնչելմք գիմել 'ի վտանգս նոցին, և այս ամենայն
հանգամանաւք բերեն զդրոշմ անկման 'ի ընորհացն Աս-
տուծոյ. զի չիք յայնժամ տարակոյս Թէ եմք որդիք բար-
կութեան, ոչ ևս այնուհետև 'ի բնութենէ և 'ի հարկէ՝
այլ 'ի կամաց մերոց եղեալ այնպիսիք: Կարացի՞ արդեօք
բացատրել զապականութիւն Թշուառութեան մերոյ.
մի' գտաբեսցուք պեղել զանգնդախորս նորին, և միտ
դիք որ ինչ տակաւին մնայ ինձ ասել զայսմանէ:

Պղծութիւն աւերածին այն է, զի փոխանակ ընորհացն՝
որ անապատ պահէաց զպղտութիւն Մարիամու, և սպառ-
նալուս լի բովանդակ յաղթանակեաց 'ի վերայ սկզբնա-
կան մեղաց յանձին Մարիամու, մեք ընդհակառակն
ընորհաց մկրտութեան՝ որ ջնջէ 'ի մեզ զայն, յեսին ան-
կարգութեամբ՝ զոր ոչ է մարթ այլոյմ խիք համարել,
այլ յոռութեան և եթէ սրտի մերոյ, յորս ցանեմք՝ իշ-
խեմ ասել՝ 'ի մէջ քրիստոնէից անդադար նորանոր սկըզ-
բնական մեղս, չարագոյնս քան զառաջինն, որոց միասա-
կարագոյնս են մեզ արգասիք: Զի՞նչ էգեն նորանորքս
այսոքիկ սկզբնական մեղք: — Մեղք գործեցեալք 'ի
մէնջ, որք մաճաբեր սերընդեամբ յայլս ածանցեալ ծա-

ւալին: Կոչեմ սկզբնական մեղս զմեղս գայթակղու-
թեան, որոց ընդդէմ Որդին Աստուծոյ չանձն նըղ-
ւվից արձակէ յԱւետարանին: Սկզբնական մեղս կոչեմ
զմեղս ծնօղաց՝ որ չնչեն յորդիս իւրեանց ժառանգու-
թեամբ զթշնամութիւն և զվրէժխնդրութիւն. և ըզ-
մեղս մօր՝ որ 'ի մոռացօնս արկեալ զքրիստոնէութիւն,
զեղծուցանէ զդուստր իւր ունայնութեամբ և աշխար-
հասիրութեամբ: Սկզբնական մեղս կոչեմ զառանու-
տեարց առ ընտանիս, զաւարց՝ որք չար ևս քան զանհա-
ւատս ցոփութեանց իւրեանց առնեն հաղորդս պաշտօ-
նեայս. զկնոջ՝ որ իշխանութեամբն իւրով զեղծեալ՝
խաթարէ զնիզդ մտաց օրիորդի հաւատացելոյ նմա 'ի
Տեառնէ, և կորուսանէ զնա, ստիպեալ 'ի գիտակցու-
թիւն և 'ի համախոհութիւն գաղտնի սիրելութեանց
իւրոց: Կոչեմ սկզբնական մեղս զաւադացն առ ժողո-
վուրդս առեալ գայթակղութիւնս, զերիցանց առ աչ-
խարհիկս, զմեծաւորաց առ հնազանդեալս: Յորմէ՞մ
մասին մեզք Ադամայ եղև ծանր յոյժ առաջի Աստու-
ծոյ.— այնու զի չէր նորա միայնոյ, այլ բազմաց, այնու
զի Ադամ պատուիրանազանցութեամբն իւրով գրաւեաց
զամենեսին զմեզ յաղէտս ստուգանութեան իւրոյ.
այնու զի էր գլուխ մեր, չկարէր մեղանչել առանց կա-
յսուցանելոյ և զմեզ ընդ մեղաւք: Նորհուրդ է այս հաւա-
տոցս մերոց՝ զոր դաւանեմք. այլ որ ինչ Թուի խոր-
հուրդ 'ի մեղս Ադամայ, քաջայայտ է և զգալի 'ի մեղս՝
զորս արդ յանգիման արարի: Չի զնոյն միշտ հաստա-
տեմ, զի աւերած թշուառութեանն մերոյ է ծաւալել
յայլս զանօրէնութիւնս մեր. ոչ չատ համարեալ լինել
մեզին մեղաւորս, խարդաւանել և զանմեղս ընդ մեզ,
առնել զնոսա մեղսակիցս անօրէնութեանց մերոց, և
արկանել ընդ նովին բեռամբ. լինել որպէս զԱդամ սկիզ-
բըն և աղբիւր դատապարտութեանն նոցա: Ո՛վ հաւատա-
ցեալք. չեմք՞ ինձ արդ ժամ բարեպատեհ աղաղակելոյ

ընդ Երեմիայի. Ո՞ դայր զգլուխ իմ ջուր, և զաչս իմ աղբիւր
արտասուաց, և լայի զօրէ և զգիւղէր զաղէտ զոյսոցիկ, ոչ միայն
զհետ եհեալս առաջին մեղացն, այլ զաղէտս առաւել
յոյժ ողբալիս քան զնոսին՝ զորոյ տխուր արգասեացն առ-
նումք զվորձ:

Դու միայն, ով փառաւորեալ Կոյս, պահեցար յա-
պականութենէ ասոյ և 'ի սկզբնական անիծից, դու
միայն 'ի յաղթեան քումդ երևեցար առաջի Աստու-
ծոյ սուրբ և անարատ. վասն այսորիկ գիմեմք առ քեզ,
և խնդրեմք զամենազօր օգնականութիւն քո: Չի ընդհա-
քըն, զոր ընկալար 'ի Տեառնէ զերծ ճնալոյ յաղիտից
ասոյ մերոց, անմարթ է թէ ոչ ածցէ զքեզ 'ի կարե-
կցութիւն: Դու մայր ես ողորմութեան, և ոչ կարես
լինել՝ բայց վասն մեր մեղաւորացս. փառաց քոց պատ-
ճառ չեղանակաւ իմն, աղէտք մեր եղեն. զի եթէ չէին
մեղաւորք, ոչ լինէր քեզ 'ի լոյս ածել զՓրկիչ նոցա,
որով և ոչ լինէիր աստուածամայր: Վասն որոյ լի վստա-
հութեամբ անկանիմք առաջի քո թշուառացեալ որդիք
մեր մեղուցելոյ և գտեալ զքեզ մայր սուրբ և բարե-
գութ, մատուցանեմք քեզ զոհաստս մեր և զպաղա-
տանս, առ քեզ հառաչեմք, և զօգնականութիւն քո
խնդրեմք առ 'ի գիտել խոնարհել վասն թշուառու-
թեանս մերոյ, ողբալ զայն, գթել չպարծել յայն, չզեղ-
ծանիլ նովաւ. մի յաւելուլ զայն, ճանաչել ոչ միայն
որ ինչ եմքս մեք առանց չնորհաց, այլ և որ ինչ եղերդ
դու չնորհօք և որ ինչ էաքս մեք չնորհօք: Զոր առա-
ջի կայ մեզ, հաւատացեալ ժողովուրդք, տեսանել յեր-
կրորդումն մասին:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Վճիռ է սուրբ Եկեղեցւոյ, զոր պարտ է մեզ ունել ի կանոն, զի յետ Քրիստոսի Մարիամ եղև գլուխ ընտրելոց· քաջայայտ ևս է՝ զի նախկին արդասիք ընտրութեան նորա, կամ նախասահմանութեան, եղեն առանձինն շնորհք, յորում ասացի հաստատեալ զարտունութիւն անարատ յղութեան նորա: Շնորհք գերազոյն, զոր մեք կարէը նա անդստին կարի իրաւամբք ասել· Որ ինչ եմ, և որ ինչ լինելոց եմ, զօրութեամբ կանխաժաման շնորհացս եմ. Շնորհօք Աստուծոյ եմ զինչ ևս եղեմ: Շնորհք արգասաւոր, որով անդստին յայնմ վայրկենի՝ կարէը յաւելուլ ընդ Աւրաքելոցն. Եւ ընդհուպ նորա՝ որ յիս, ընդառնայն ինչ ոչ եղէն: Եւ յիրաւի· ո՛ հաւատացեալք, շնորհքն այն ի Մարիամ եղև օծութիւն իմն երկնային, որով ելից զնա Աստուած ի նմին վայրկենի յղութեան նորա: Եւ առ ինչ· — առ ի սրբազանել զանձն նորա, և ամբառնալ զարգ ամենայն գործոց նորա: Յուշի կալարուք զերկոսին զայսոսիկ խորհուրդս: Սրբազանել զանձն նորա կատարելապէս և առաւելութեամբ, որչափ հնար է սուկ արարածոյ ունել սրբութիւն յետ Աստուծոյ. և ամբառնալ զարգ ամենայն գործոց կենաց նորա, այսինքն զամենայն գործս նորա առնել պատուականս առաջի Աստուծոյ, և արժանիս Աստուծոյ: Կրկին սքանչելի արգասիք, զորս զանազանեմ. և որք երկոքունքեք հետևանօքն՝ զորս զհետ բերից, համեմատելով միշտ զյղութիւն Տիրամօրն ընդ մերս, տացեն ճանաչել մեզ զերջանկութիւնն յոր ամբառնայ զմեզ ի ձեռն սկզբունքի շնորհք որդեգրութեանս մերոյ:

Շնորհք՝ որ սրբեցին զանձն Մարիամու, սրբեցին

զպէս արժան էր արարածոյ՝ զոր յօրինէը Աստուած սիրապէս և սահմանէը ի մայր Որդւոյ իւրոյ: Զի յերջանիկ վայրկենի անդ Մարիամ լի Հոգւով սրբով, կարէը ասել Ճահագոյն ևաքան զԵսայի, Յուրգանդէ խօսեայ զիս և յորովայնէ մօր իմոյ կարդայ զանուն իմ: Այո, յայնմ վայրկենի Բանն Աստուած յիշեաց զփառաւորեալ, զսրբազան և զպաշտելի անունն, զոր կրելոց էր Մարիամ. և զի կամէր ծնանել ի նմանէ, փոխանակ ասելոյ զպէս ցԵսայի· Ծառայ իմ ես դու, և ի քէն ֆառաւորեցայց, ասաց ցՄարիամ: Ընտրեցի զքեզ ի մայր իմ, և զպէս մայր իմ յղանաս այսօր. և վասն այսորիկ ոչ միայն փառաւորեցայց ի քեզ, այլ և այժմէն իսկ փառաւորիմ: Այսինքն անդստին ի վայրկենէ անտի Բանն Աստուած, նկատեալ զառաջնիկայ մարգեղութիւն իւր, փառս իւր և պարտ համարեցաւ՝ սրբել զՄարիամ, ճոխացուցանել զնա շնորհօք իւրովք, և ընդ գերազանցագոյն բարեմասնութեամբք: Ի յիշել ևեթ զի ի նմանէ ընդ հուպ ծնանելոց էր, գորով որդիական ի մտացօնս ևս նմա արկանել զընդհանուր օրէնս անաչառ արգարութեան իւրոյ. և ի բաց էառ զնա ի հասարակաց որդւոց Ադամայ, տալ նմա արտունութիւն, զանազանել զնա և պատուել՝ սրբազանեալ զերախայրիս լինելութեան նորա օծութեամբ սրբութեան, որով լցոյց զնա. և եթէ այսպէս օրէն իցէ ասել, որպէս ընդ հուպ հանդերձեալ որդի նորա կանխեաց մեծարել իմն զմայրութիւն նորա առաջնիկայ. Յուշվայնէ մօր իմոյ կարդայ զանուն իմ:

Եւ ոչ այսչափ միայն, այլ որպէս ասացի՝ շնորհք յղութեան Մարիամու, ընդ սրբութեան նորա, եղև նմա և աղբիւր արժանեաց անսպառելի, նոսիբականս և գերագոյն ընծայելով զամենայն գործս կենաց նորա: Ոչինչ ընդհատ արժանի է և այս ձերմակ մտադրութեան: Քանզի ըստ կանոնաց իսկ և օրինաց աստուածաբանութեան յայտ է, զի Տիրամայրն յամենայն կեանս իւր ջա-

բար ինչ, որ չեցեն վաստակք և արժանիք ՚ի սկզբնական
շնորհաց աստի յառաջ եկեալք. այլ նմին խորք անսպառե-
լի գանձուց ողորմութեանն Աստուծոյ: Ո՛վ խոր ՚ի ճոխու-
թիան և իմաստութեան և գիտութիանն Աստուծոյ: Այ ՚ի գիւր-
իմաց առնել ձեզ որ ինչ ասելոցս եմ, ածից օրինակ ինձ
ղեալն: Յուշ ածէք, սիրելի ունկնդիրք, զհատն փոքրիկ
աւետարանական, որ արկեալ յերկիր և բուսեալ ա-
ճեաց տակաւ, և եղև ծառ մեծ. չիք ինչ, որ Ճշդրտագոյն
զնմաստս մտաց իմոց բացատրեսցէ: Աղերսագեալ միան-
գամ հատս այս, ընձիւղէ, յառնէ ՚ի վեր, և տակաւ ՚ի
բարձրանալն արձակէ ոստս, ծածկի տերևովք, զարդարի
ծաղկամբք, և պտղաբերէ. այլ այս ամենայն առնու գո-
յութիւն և կեանս ՚ի նմանէ: Զի յարմատոյ հատոյն այ-
նորիկ և բարձրագոյն խոկ ուղիշք ծառոյն ընդունին
զհիւթ, որ տածէ զնոսա, համապիւռս ծաւալեալ պահէ
զդալարութիւն տաղարթուցն, գեղազարդէ զծաղկունս,
և տայ պտղոցն համ ՚ի Ճաշակ: Ըստ այսմ օրինակի՝ շը-
նորհք, զոր ընկալաւ Մարիամ ՚ի յղութեան, եղև որ-
պէս բողբոջ աստուածատունկ ՚ի սրտին, և զօրութիւն
նորա ծաւալեցաւ յամենայն ՚ի գործս նորա: Այնինչ
որ ինչ և արար Մարիամ, եղև սուրբ և մեծարգի առաջի
Աստուծոյ. և ընդէր. — վասն զի ամենայն գործք նորա
յառաջ գային ՚ի սկզբնական սրբութենէն՝ որ էին ՚ի
նմա, և տայր յարդ և արժանիս ամենայնի: Արդ զինչ էր
սկզբնական այն սրբութիւն. — շնորհք յղութեան նո-
րա: Ոչ ժխտեմ՝ զի շնորհքն այն արմատ և եթե էր գերա-
զանց պարգևացն, որովք երկինք լցին զնա յետ այնորիկ,
և որք ամբարձին յայն կատարելագործութիւն երկնաբերձ:
Այլ քանզի սուրբ էր արմատն, սուրբք և ոստքն լինէին.
Եթէ սիւքեն սուրբ է, ապա և ոսպն: Եւ զինչ ոստքն իցեն. —
առաքինութիւնք զորս կոյսն անզուգական առաքինա-
նայր, բարեգործութիւնք՝ զորս առնէր, պարտք՝ զորս
կատարէր, պաշտօն՝ զոր մատուցանէր Աստուծոյ, գործք

եղբայրսիրութեան՝ յորս պարապէր, խոնարհութիւն՝
զոր ամենայն զգուշութեամբ յանձին բերէր: Զի ոչ վայ-
բապար ինչ գուշակութիւն է, այլ Աչմարտութիւն հաս-
տատուն, զի այս ամենայն սրբագործէր ՚ի նմա շնորհօք
սրբութեանն՝ զոր ընկալաւ ՚ի յղութեան. և շնորհքս
այս պահեալ ՚ի նմանէ անկորուստ, եղև ՚ի նմա խմորն ա-
ւետարանական, խմորն սուրբ՝ որոյ օրհնութիւն և զօրու-
թիւն յամենայն ՚ի կեանս նորա ծաւալեցաւ:

Արդ աստի գարձ արարեալ ՚ի մեզ, ո՛ հաւատա-
ցեալք, դիւրաւ կարեմք զհետ բերել որ ինչ եմքս ՚ի ձեռն
շնորհաց և շնորհօք: Քանզի սկզբնութիւն՝ որ է ըստ սըր-
բոց Հարց, որպէս ասացի, խորհուրդ հոգևոր յղութեան
մերոյ, և ապաշխարութիւն՝ որ սրբէ զմեզ, տան մեզ
զշնորհս, որ թեպետև խոնարհագոյն յոյժ քան զՄարիա-
մն, սակայն ներգործէ ՚ի մեզ համեմատաբար զնոյն ար-
գասիս. զի ընդունելիք զշնորհս՝ որ սրբէ զանձինս մեր, և
ամբառնայ մինչև ՚ի պատիւ որդեգրութեան Աստուծոյ,
և սիրէ յամենայն գործս մեր յարդ այնպիսի՝ զի լինին
արժանաւորք Աստուծոյ և կենացն յաւիտենից՝ զոր ժա-
ռանգելոց եմք յԱստուած: Ի՞ւ այլ ևս իրք յորդորիցիմք,
եթէ ոչ յորդորիմք երկոքումբքս այսոքիւք գերազանց
պարգևօք: Շնորհօքն՝ որ սրբէ զմեզ, որդիք Աստուծոյ
եմք: Զայս մեզ բացայայտ ասացեալ Առաքեալն, որ ա-
ռաւել քան զամենայն առաքելակիցս իւր կարէր ուսու-
ցանել մեզ, զի գաղանիքս այս յայտնեցան նմա յանկանել
նորա զյանձնջօքն Յիսուսի, սիրելին նմա քան զայլս յառա-
քելոց: Սա ծանոյց մեզ վաւերաբար զայս փառաւորեալ
անուն որդեգրութեան, և ուսուցեալ մեզ որ ինչ եմքս,
յաւել ՚ի սկիզբն Աւետարանին իւրոյ՝ զի կարեմք ամենե-
քեան լինել որդիք Աստուծոյ. Եւ որ ընկալան զնա՝ եւ նորա
էշխանութիւն որդիս Աստուծոյ լինել: Արդ մատն հաւատոյ է
այս, հապէս յարակից ունակական շնորհացն՝ զորմէ
խօսիմ: Եթէ գիտեաք մեք յարգել զշնորհս զայս, եթէ

մեղք ոչ կուբացուցանէին զմեզ՝ մինչև անտեսանելի առնել մեզ զմեծութիւն մեր, զնորհս ևեթ զայս համարեաք մեզ՝ի վեր քան զամենայն փառս. այս ևեթ խորհուրդ զմիտս մեր դրաւեր, այս ևեթ հզօրեղապես շարժէր զմեզ. քան զամենայն ինչ զպատիւս զայս որդեգրութեան մերոյ մեծարէաք, աննուաղելի ունէաք զայն՝ի գնացս մեր, ՝ի վեր քան զամենայն փառս աշխարհի համարէաք զայն, և ստէպ՝ի խորս սրտից մերոց իջանէաք՝ խնդամտել՝ի սուրբ խորհուրդս յայս: Ո՛եմ ես առաջի Աստուծոյ, և յաչս Աստուծոյ. ցորչափ կամ՝ի զնորհս իւր՝ ունիմ իշխանութիւն կոչելոյ զնա ինձ հայր, և ինքն Աստուած գոլով՝ կամի ունել զիս յորդի իւր: Ահա է զնորհքն՝ զոր մեծ համարի նա յիս, և սովաւ օրէն է ինձ պարծել և վստահել՝ի նա. այլ ամենայն մեծարանաց անուանք աղիւսականութեան և ճոխութեան՝ ըստ աշխարհի պանծալիք, մնոտիք են և կորստականք և ինաս ականք: Սնոտիք, զի չկարեն իւրովի կացուցանել զմեզ աստուածահաճոյս. կորստականք, զի կորնչին մահուամբ հետ ընդ հետ և չքանան. ինաս ականքն, զի՝ի վտանգ արկանեն զմիրկութիւն մեր. քանզի դիւրին է զեղծանել նոքօք, և դժուարին չզեղծանել, և ոչ այլուամ իմիք մարթէ ակն ունել նոքօք, բայց խստագոյն և սաստկագոյն դատաստանին Աստուծոյ: Ահա ուրեմն ամենայն վստահութիւն իմ պարտի լինել՝ի պատուական անուանս յայս որդի Աստուծոյ. և եղկելիք էք, սիրելի ունկնդիրք, եթէ երբեք զայս ձեր՝ի մեծութիւն ևեթ մարդկային հաստատիցէք: Իբր ոչ եթէ պահանջիցեմ այսուհի՝ զի հրաժարիս ջիք՝ի բարեմասնութենից, ևս և յարտաքնոց և՝ի ժամանակիւ՝ զորս ընկալեալ էք Աստուծոյ՝ի ծնէ. այլ մեծութիւն ըստ աշխարհի, զոր տեսանեմք սրբազանեալ զնորհօքն Աստուծոյ՝ի Մարիամ, այլ ինձն ազգէ ինձ խորհուրդ: Քանզի Աստուած ոչ արհամարհեաց՝ի Մարիամ զմեծութիւն ազգի, զոր և եհեղեցի Թուի մեծարել՝ի

ևմա այսօր. կամեցաւ՝ զի իցէ Մարիամ մեծազգի յարքունական արենէ. ընդ՝ը. — առ՝ի պայծառացուցանել, ասէ սուրբ Ոսկեբերան, զզօրութիւն զնորհացս իւրոց, և առ՝ի տալ մեծամեծաց աշխարհի զայս մխիթարութիւն՝ի կարգի իւրեանց, զի մեծութիւն ոչ միայն կարէ կալ՝ի միասին ընդ գերագոյն սրբութեան, այլ և զի՝ի ճահ ևս պատահէ սրբութիւն ընդ մեծութեան, առ՝ի ցուցանել ըստ խորհրդոց աստուածախնամ տեսչութեան, զի կարեն մեծամեծք բերել յանձինս իւրեանց անխառն զմեծութիւն ընդ սրբութեան, ոչ զի մեծք են՝ այլ զի են սուրբք, և զի ըստ չափոյ մեծութեան իւրեանց՝ առաւել ևս կարեն փառաւորել զԱստուած, եթէ իցեն սուրբք:

Խրատ աստուածային, զոր տայ նոցա այսօր սուրբ Հոգին՝ առաջի առնելով զազգաբանութիւն Աստուածամօրն, որպէս գերազանցագոյն ընդ ամենայն տիեզերս: Այլ այս իրաւ՝ որ հայի՝ի մեծամեծս, սակաւուց է պատկանաւոր. ինձ ինձ պարտ է խօսել անխիթր առ ամենեսեան. զի չէք ոք յարդարոյ՝ի վերայ երկրի, յորմէ կարդ և իցէ, որոյ չիցեն իրաւունք ասելոյ որպէս քրիստոնեայ. Ես յԱստուծոյ եմ ծնեալ, և զնորհք՝ որ զիս սրբեցին՝ բնութեանն Աստուծոյ արարին զիս հաղորդակից: Զայս իւրաքանչիւր ոք՝ի մէնջ կարէ և պարտի խորհել այսպէս առանց վստահելոյ յանձն, եթէ չանայցէ կալ՝ի զնորհս Աստուծոյ. վասն զի ինքն Աստուած՝ի ձեռն Առաքելապետին պարզապէս յայտ առնէ զայս. Զի նոքիմբ աստուածընկէն բնութենէն լինիցիք հաղորդակիցք: Որչափ և նուաղեալ իցեն՝ի մեզ հաւատաք, եթէ զայս այսպէս խորհիցիմք և ըստ այմ գործիցեմք, ոչ ևս այլոյ իրիք պէտք իցեն մեզ առ արծարծանելոյ՝ի մեզ զայն: Տեսէք՝ եղբարք, ասէր առաքեալն Յովհաննէս առ՝ի յորդորել զնախնի հաւատացեալս, ընդ՝ը և ևս չասիցեմ ձեզ արդ զնոյն. Տեսէք, եղբարք, որպիսի սէր ընծրհեաց մեզ Հայր, զի որ-

ţէ֊ Աստուածոյ խոչոցոփ, և էմ֊։ Այլ տեսէք ևս, յաւելցոյր Առաքեալն, չիցէ և ինձ պարտ յաւելուլ. տեսէք զի՞ր սէր և եռանդն և ընդհատպարտ գոհութիւնն ոչ փոխարէն պահանջիցէ՝ի մէնջ այսպիսի սէր Աստուածոյ. տեսէք յորպիսի՛ սրբութիւն վարուց ոչ յորդորիցէ զձեզ. տեսէք զի՞ր պարտս ոչ ածիցէ ձեզ սրբելոյ զանձինս ձեր հոգւով և ՃշմարտութԻեամբ, զի մի՛ անարժան գտանիցիք որդեգրութեան ընդհկին՝ որ տայ ձեզ զԱստուած՝ի հայր. տեսէք թէ իցէ՞ կարի ինչ պահանջել, եթէ կամի՝ զի մի՛ ևս իցէք մարմնասէրք, այլ կեցջիք ըստ հոգւոյ. տեսէք թէ ամենայն կատարելութիւն՝ բովանդակեալ՝ի քրիստոնէական կրօնս՝ իցէ՞ ինչ առաւելագնոյ վասն լինելոյ որդի Աստուծոյ։ Ո՛վ Տէր, աղաղակեր քահանայապետն սուրբ Լևոն, արժանի՞ իցեմք կրելոյ զանուն այսպիսի դեղեցիկ, եթէ անպատիւ առնիցեմք զայն՝ մոռացեալ զաղնուականութիւն ծննդեան մերոյ, և ամենալի ախտից ծառայեսցուք. չիցէ՞ մեզ պարտ հրաժարել՝ի սպառ՝ի պատուոյ որդեգրութեան, եթէ գնայցեմք տակաւին ընդ գեհն ապականութեան աշխարհի։ Որդիք գոլով Աստուծոյ՝ հպատակել ամենայն մարդկային տկարութեանց, նեղքոյ անկանել ախտից, և լինել անձնատուր յանկարդ ցանկութիւնս, չիցէ՞ հրեշ այլանդակ՝ի կարգի ընդհկաց։ Սակայն, սիրելի՛ ունկնդիրք, այս իսկ է՝ ընդ որ յոդունց յաչխարհասիրաց պարտ է ամաչել, և յուսամ՛ զի հոգւով սուրբ զղջութեան իւրաքանչիւր ոք՝ի սրտէ ծանիցէ առաջի Աստուծոյ զանիրաւութիւն իւր՝ի մասինս յայսմիկ, և լայցէ։ Անցցուք յառաջ։

Զօրութեամբ ընդհկացն՝ որ սրբէ զմեզ որդիս Աստուծոյ, լինիմք ժառանգք Աստուծոյ և ժառանգակիցք Քրիստոսի յարքայութեանն Աստուծոյ, ըստ Առաքելոյն. ԵՒԷ որդիք, ապա և ժառանգք. ժառանգք Աստուծոյ, և ժառանգակիցք Քրիստոսի։ Ժառանգք Աստուծոյ, ասէ սուրբն Օգոստինոս, զի ոչ խոստացաւ մեզ Աստուած այլ ժառանգութիւն, բայց ստանալ զինքն։ Արդ ընդհկն սրբարար այդ մեզ զայս ժառանգութիւն երկնային. և Աստուած, բարեգութ և առատաձեռն քան զամենայն հարս, ոչ է մարթ թէ զլացցի մեզ զայն՝ ցորչափ իցեն՝ի մեզ ընդհկք իւր, և մեք իցեմք ընդ նմա ընդհկք։ Եւ ժառանգակիցք Քրիստոսի. զի լինիմք մեք ընդհանուկք ոչ միայն ստանալոյ, այլ և արժանի լինելոյ արքայութեանն Աստուծոյ. և արժանի լինելոյ ըստ այնչափ գլխոց, որչափ գործս բարիս քրիստոնէաբար գործեցեմք։ Քանզի հաւատոք ուսուցանեն մեզ՝ զի ամենայն գործք մեր վերառեալ ընդհկօք, սրբեալ և որպէս թէ աստուածացեալ, համարին մեզ՝՛ի վաստակս արժանիս փառաց, զի մեն մի յայնցանէ իրաւունս իմն տան մեզ ստանալոյ զայն փառս, զի դուշաքէից յայնցանէ և անարգագոյն կարծեցելոյ՝ է սրբութիւն իմն համեմատ այնմ փառաց, և բաժանի ևս ջոյց մատուցելոյ վասն Աստուծոյ անկ է արդարութեամբ և առ՝՛ի վարձ աստիճան իմն այնր փառաց. և զի ըստ այսմ՝ կանիք արդարոյ լինին անընդհատ վաստակք արժանաւորք, զորս աստատին ըստ Առաքելոյն գանձէ Աստուած, առ՝՛ի լինել այնոցիկ վարձահատոյց՝՛ի յաւիտեան։ Զիք երկբայել զայսմանէ. այլ՝՛ի հակառակն ևս զբանս մեր շրջելաւ կարէք իմաստասիրել քանի՛ մեծ է կորուստ մեզաւորին անկելոյ՝՛ի ընդհկաց. զի ոչ ինչ ընդհատ մասն է հաւատոց, զի առանց ընդհկաց այն ամենայն բարեգործութիւնք են գործք մեռեալք՝ որ ոչ արժեն ինչ առաջի Աստուծոյ, և չիարեն ընդունել զվարձս ընդհկելոյն Աստուծոյ։ Իբր ոչ եթէ՝՛ի թշնամութեան մեզաց, թէպէտև զսկեալք յանձնական ընդհկաց, չկարեցեմք գործել գործս գովելիս և առաքինս, գործս սուրբս և գերբնականս, և պիտանիս իսկ՝՛ի փրկութիւն, զի գէթ օգնեն այնոքիկ և պատրաստեն զմեզ դառնալ առ Աստուած, այլ թերի լինէր ինձ հրամանքն զձեզ՝՛ի կրթնս ձեր, եթէ ոչ ազդ առնէի՝ զի այս

ամենայն գործք, Թէպէտ և սուրբք, Թէպէտ և գերբնականք, Թէպէտ և պիտանիք, արտաքոյ հնորհացն Աստուծոյ չեն արժանաւորք երկնից, և զի Աստուած առ ոչ ինչ գրե զայնոսիկ վասն յաւիտենական կենաց. և փոխանակ զի սրբեալք ի հնորհացն Աստուծոյ՝ դանձեն մեզ փառս, զուրկք ի հնորհաց անտի՝ չկարեն ածել զմեզ յարքայութիւն, զոր Աստուած՝ արդարն դատաւոր՝ պատրաստեալ է սիրելեաց իւրոց: Արդ վկայ է ինձ տեսանել քրիստոնեայս, անզգայս այսպիսեաց կարևոր ճշմարտութեանց. քրիստոնեայս՝ որոց չէ ինչ փոյթ կորուսանել զհնորհս, և կորուսանեն զայն անխոհով և առանց արտմութեան, որով յայտ առնեն զթերահաւատութիւն իւրեանց, Թէ արդեօք և զաղտնի անհաւատութիւն: Ո՛վ մարդ, կնքէ սուրբն Լևոն զայրացեալ ընդդայթակղութիւնն՝ զոր ողբամ, և յապուշ հարեալ ընդ այսպիսի պլանդակ կուրութիւն. ո՛վ մարդ, ո՛ ոք և իցես, ծանիր զպատիւ քո. և սրբեալ արդ ի հնորհաց՝ որ զքեզ աստուածեղէն բնութեանն առնէ հաղորդակից, մի՛ ևս անկանիր յառաջին անարգութիւն քո: Վասն որոյ պարտ է մեզ, սիրելի ունկնդիրք, ուշ դնել օրինակին Մարիամու, և ի նմանէ ուսանել որ ինչ պարտիմք առ հնորհն Աստուծոյ. և այս է վերջին մասն ճառիս:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ճշմարտութիւն է աներկբայելի, ո՛ հաւատացեալք, զի յետ Քրիստոսի՝ չկարեմք գերազանցագոյն քան զմայր նորա Մարիամ ունել մեզ զոք յօրինակ կենաց: Յաւելում ի վերայ այսորիկ և զառանձին օրինակ Մարիամու ի յարգել զհնորհս՝ զոր ընկալաւ ի յղութեան իւրում. օրինակ ամենահասար՝ զոր առաջի դնէ մեզ

Աստուած, առ ի ցուցանել՝ Թէ օրպէս պարտ իցէ մեզ ի կիր արկանել զհնորհս, որով ի սուրբ աւազանին սրբեցաք: Զայս յայտնապէս տեսանիցէք համեմատութեամբ երկոցունց հնորհացս, կամ մանաւանդ ընդդիմութեամբն՝ զոր նկատեմ ընդ Մարիամ և ընդ մեզ ըստ մասին հաւատարմութեան առ հնորհս: Ընդդիմութիւն՝ որ յամենն առնէ զմեզ, և հրահանգէ, և մեզ Թողուլ զհետ բերել կանոնս հաստատունս և ապահովս քրիստոնէական վարուց:

Մինա դիք աղաչեմ. Մարիամ զերծ յամենայն ախտից, և հաստատեալ ի հնորհս անդստին ի յղութենէ, սակայն խուսէր յաշխարհէ և ի հրապուրանաց նորա. Մարիամ, Թէպէտ և յղացեալ ամենայն հնորհօք անմեղութեան, սակայն կեայր խստակրօն՝ ամենայն ճգամբք ապաշխարողի. Մարիամ, Թէպէտ և լցեալ հոգւով սրբով անդստին ի յղութենէ, սակայն ոչ դագարէր ի վաստակելոյ, և առանց սահման հատանելոյ սրբութեան իւրում՝ յառաջ խաղայր անդադար յառաքինութիւնս և ի վաստակս աստուածահաճոյս: Զինչ ասեմ պարտ է մեզ խմաստասիրել վասն մեր. զի Թէպէտ և սրբեալք միրտութեամբ, և վերածնեալք և արդարացեալք հնորհօք ի ձեռն ապաշխարութեան, այլ հնորհօք՝ որ չէ ի մեզ անկորուստ, և ոչ լի բովանդակ որպէս զՄարիամն. հնորհօք, որոյ այլ է բոլորովին նկարագիր: Այս ինքն հնորհօք, որ Թէպէտ և ամենազօր՝ այլ կայ ի վերանգի յողդողդ և տկար բնութեանս մերոյ. որ Թէպէտ և սրբարար, այլ զի էջ հնորհք անմեղութեան, ոչ ազատ առնէ զմեզ ի պարտեաց ողբալոյ և ապաշխարելոյ. որ Թէպէտ և առատապէղ, սակայն տակաւին Թողու ի մեզ վայր ունայն յարժանեաց՝ զոր կամի Աստուած զի լցցուք վաստակովք և բարեգործութեամբք: Սակայն հանդերձ աննմանութեամբս այսոցիկ յամառիմք և ղպայութեանցս ևեթ մերոց հաւատս ընդ

ծայեմք, հետևելով օրինաց և կարգաց՝ հակառակաց բոլորովին այնոցիկ՝ որովք վարէրն Մարիամ, ակարքս և նեղքոյ անկեալք ամենայն անկարդութեանց ապականեալ բնութեան, արկանեմք զանձինս յանդգնաբար ՚ի վտանգաւորագոյն փորձանս աշխարհի: Թէպէտև ՚ի մեղս և յանօրէնութիւնս յղացեալք՝ կամիմք կեալ ՚ի փափկութեան և ՚ի հաճոյս. թէպէտ և ունայնք ՚ի վաստակոց և յառաքինութեանց՝ արդելուամբ զՆորհն Աստուծոյ, և անդործ առնեմք զայն աշխարհական և մնոտի կենցաղավարութեամբ: Զուսանիմք երբէք կեալ ըստ կարգաց կատարեալ խնամոտութեան, որ կոչէ զմեղաւորքս ըստ Աւետարանին ՚ի զգուշութիւն՝ որով վարին արդարք: Մանրթ էր Աստուծոյ յորդորել զմեզ յայն աղդողագոյնս և հզօրագոյն պատճառաք քան զայսոսիկ, որ բնականապէս զհետ գան խորհրդոյ սերկեան ծնիս:

Ոչ ինչ են զարմանք՝ զի Մարիամ ընդհաղարդեալ ՚ի յղութենէ, ոչ երբէք կորոյս զՆորհն զոր ընկալաւ Աստուծոյ. և ոչ միայն անկորուստ կալաւ զայն, այլ և ոչ զփայլ նորա աղօտացոյց թեթև ինչ մեղաք: Այսպէս ըստ վկայութեան և վճռոյ արիգենտեան Ժողովոյն կալաւ միշտ եկեղեցի սուրբ. և ոչ այս ինձ զարմանս ածէ. այլ հիացեալ զարմանամ ընդ զգուշութիւնն, ընդ փոյթ և ընդ հոգ, որով պահեաց նա զՆորհն՝ զոր ոչ ունէը կորուսանել, և զոր չկարէը խակ կորուսանել. և այնու զգուշութեամբ պահէը զայն, որպէս թէ ամենայն վտանգք նմա առաջի կային. մեկնեալ յաշխարհէ ՚ի մանուկ տիոց, զատուցեալ ՚ի կենակցութենէ և յամենայն կցորգութենէ աշխարհի, նուիրեալ Աստուծոյ զերախայրիս կենաց իւրոց հանդիսական և մշտնջենաւոր հրաժարմամբ յաշխարհէ, և այնպէս հեռացեալ ՚ի մարդկանէ, զի և ՚ի տեսիլ հրեշտակի միոյ խռովեցաւ վասն մարդկեղէն կերպարանաք երևելոյ նորա. այս է ահա, որ ՚ի հիացման կացուցանէ զիս: Զի Նորհք յղութեանն

Մարիամու էին անվամանդ յապականութենէ աշխարհի, էին Նորհք հաստատուն՝ զոր ամենայն անօրէնութիւն աշխարհի ոչ կարէը պղծել, և ոչ աստանեցուցանել. և աստուածաբանութիւն, որ ուսուցանէ մեզ՝ զի մայրն Աստուծոյ ոչ մեղաւ երբէք, յայտ առնէ և՝ զի էր անմեղանչելի Նորհօքն Աստուծոյ, որպէս Քրիստոս էր ՚ի քնութենէ. զի անդամին ՚ի յղութենէ հաստատեաց զնա Աստուած ՚ի սրբութեան: Աշխարհ ամենայն անօրէնութեամբ իւրով չկարէը ածել ինչ նմա վտանգ. յոր գնպս և գտանէը նա, կարէը գնալ համարձակ. և Նորհք՝ զոր կրէը յանձին՝ ոչ կարէին ընդունել արատ յամենայն ապականութենէ և ՚ի գայթակղութենէ աշխարհի, որպէս ոչ է մարթ ճառագայթից արեգական՝ որ ծագէն ՚ի տիղմ և ընկղմին անդր, ընդունել անաւ աղտ: Այս է՝ որ զգնացս Դչխոյին կուսանաց կացուցանէ մեզ այս օր օրինակ, և օրինակ իւր անհնարին ընդգիմութեամբն ընդ ինքն և ընդ մեզ՝ յազթահարէ զմեզ և յամենթ առնէ առաջի Աստուծոյ: Զի ահա այս է, ո՛ հատատացեալք, հիմն հաստատութեան իմոյ բանիս. Մարիամ զօրութեամբ յղութեանն անայլայլելի ունէը Նորհս, և ըստ բացատրութեան աստուածաբանից՝ անկորուստ. սակայն նա կենցաղավարէը ընդ նեղ և անձուկ ճանապարհն և յերկիւղին Աստուծոյ. խակ մեք, որ ակարքս եմք, գնեմք զանձինս մեր յանդգնաբար յամենայն վտանգս: Կրեմք ըստ առաքելական բանին զՆորհսդան գանձ յամանս խեցեղինս, և ոչ ինչ երկնչիմք. ածեմք զայն ընդ ճանապարհ լայրծուտ, ՚ի թանձր խաւարի, ՚ի մէջ ժայռից և վախից, հալածեալք յամբոխ թշնամեաց մերոց դիւաց որ խնդրեն բառնալ զայն ՚ի մէնջ, և ոչ ինչ յայսցանէ առնէ զմեզ զգոյշս և պատրաստս: Զգիտեմ թէ բացատրեցի՞ շատ, և չկարեցի՞մ այլ ևս յամել ՚ի համեմատութեանս յայսմիկ: Մարիամ, որ սկզբնական Նորհօքն էր զերծ յամենայն ակարութենէ մեղաց, սակայն նախան-

ձու և սիրով կատարելոյ զպարտս իւր քորչէր յամե-
նայն վտանգից մեղաց. իսկ մեք ակաղքս բազում այն
է՝ զի ՚ի վտանգս յայսոսիկ գիմեալ յանդգնաբար ան-
կանիմք ՚ի մեղս, և կամք ինամք ՚ի նոսին յամառեալ:
Մարիամ, որում ՚ի յղութեան տուեալ էր Աստուած
պատսպարան ամուր ընդդէմ աշխարհի, սակայն հրա-
ժարէ բոլորովին յաշխարհէ. իսկ մեք, որ յաճախ
զփորձ առեալ գիտեմք՝ զի ապականիչ է վտան մեր աշ-
խարհ, փոխանակ խորչելոյ ՚ի նմանէ՝ սիրեմք զնա, հա-
ճիմք ընդ նա, ոգեխառնիմք ընդ նմա, յարկչիմք ՚ի նա,
և ՚ի վերայ օրինաւոր կցորդութեանց՝ զորս հարկ է
մեզ ըստ պայմանի մերում ունել ընդ նմա՝ յաւելումք
նորանոր կցորդութիւնս հանապազ, կամաւորս և մե-
ղանչականս:

Արդ աստ է տեսանել զյանդգնութիւն մեր, որով
կամիմք զի Աստուած հրաշագործեսցէ վասն մեր անդա-
դար: Մինչդամ ևեթ արար Աստուած պահանջէիս ՚ի
Մարիամ ՚ի պահել զնա անարատ, իսկ մեք կամիմք՝ զի
մի դադարեսցէ առնել նորանորս առ ՚ի պահել զմեզ
որպէս զերիս մանկունսն ՚ի հնոցին Բաբելոնի, ՚ի մէջ
բոցոյ՝ զոր ամենայն ուրեք բորբոքէ ոգին պղծութեան.
կամիմք զի պահպանեսցէ զմեզ Աստուած ՚ի բիւր դեպս՝
յորս հետաքրքրութիւն ածէ զմեզ, յորս ունայնասի-
րութիւն մղէ, յարեն զմեզ ախտք, և փարիմք զնաքօք
ընդդէմ կամացն Աստուծոյ, և ուր հրեշտակային ևս
ընդհայց էր մարթ լինել յապահովի՝ կամիմք մեք մե-
ղուիս յողդողդ ընդհարիս լինել հզօրք, և ունել լի բո-
վանդակ զզօրութիւն ընդհացն՝ զոր ընկալաւ Մարիամ
՚ի յղութեան. և յոր ոչն իշխեաց նա լուծութեամբ ընդ-
հայն, իշխեմք մեք ՚ի տխուր թշուառութեան՝ յոր հա-
տուցին զմեզ մեղք: Այլ այս զառանցանք, ո՛ հաւատա-
ցեալք, և այս պահանջումն ոչ այլ ինչ է՝ բայց կամաւոր
կուրութիւն, և անձամբ զանձինս մեր խաբել. զի եթէ

ոչ այսպէս էր, աւելորդ էր սրբոց ունել այնչափ զգու-
շութիւն առ ՚ի պահել զընդհայս անմեղութեան անվտանգ,
և ՚ի զուր Հոգին Աստուծոյ՝ որ ուղղէրն զնոսա՝ ազ-
դէր ՚ի նոսա առելութիւն աշխարհի, և ՚ի զուր նոյն
Հոգի առաջի դնէր մեզ զսրբութիւնն Մարիամու ՚ի նա-
խանձ նմանութեան՝ եթէ առանց հրաժարելոյ յապա-
կանութենէ աշխարհի, և առանց պատերազմելոյ ընդ-
դէմ աշխարհի, դիւրին էր մեզ կալ յաշխարհի, և պա-
հել զանձինս ՚ի ընդհայս: Ոչ, էն այսպէս: Շնորհք, որ
առնեն զմեզ բարեկամս և որդիս Աստուծոյ, է այնպէ-
սի՝ զի մարթ է մեզ կորուսանել զայն. վասն որոյ պարտ
է մեզ հակել զգուշութեամբ ՚ի պահպանութիւն նորին,
յանձն առեալ կորուսանել զայլ ամենայն ինչ վասն
նորա, զի այն է կեանք հոգւոյ մերոյ, և հաստատեալ՝
մի երբեք ՚ի վտանգի գնել զայն, զի ՚ի կորուսանելն
զայն՝ կորուսանեմք զամենայն: Նախանձի դևն ընդ այն,
վասն որոյ առաւելագոյն պարտ է մեզ արթուն կալ.
հզօր թշնամիք յարձակին յափշտակել զայն ՚ի մէնջ,
պարտ է մեզ պահպանել զայն. և քանզի այսպէս հա-
ճոյ եղև Աստուածոյ հարկ առնել մեզ կալ միշտ զէն ՚ի
ձեռին, պարտ է մեզ զհարկս զայս՝ որչափ և ծանր
իցէ մեզ՝ առնել մեզ ՚ի վաստակս առաքինութեան. այս
զմեզ սոխպեսցէ՝ ահիւ և դողութեամբ զփրկութիւն
մեր գործել, որպէս յորդորէ զմեզ Առաքեալն. և այս
տացէ մեզ հրաժարել ՚ի վտանգաւոր ակնթից. և երանի՛
մեզ, եթէ այսպէս կարիցեմք յապահովել զքանքարն
հաւատացեալ մեզ ՚ի Տեառնէ: Ոչ հրամայի մեզ հրա-
ժարել յամենայն կցորդութեանց աշխարհի. զի են
պարտք ինչ անհրաժեշտք, որք չեն անմիաբանելի ընդ
ընդհայս. այլ հրամայի հրաժարել յայնցանէ՝ որ յախ-
տից և ՚ի հաճոյից և ՚ի զգայասիրութենէ ևեթ յառաջ
գան. քանզի ընդհայք սրբարարք ոչ կարեն կալ ընդ նո-
սա ՚ի միասին: Ոչ հրամայի մեզ փախչել յաշխարհէ

ան[illegible]ակիր, այլ յաշխարհէ անտի՝ որ մոլորեցուցանէ զմեզ, և մոլորեցուցանէ միշտ, զի անդ Թագաւորին մեղք, և մերժեալ է անտի եղբայրսիրութիւն, յաշխարհի անդ գոգցես հանապազ յածին չարախօսութիւնք. անդ ցոփութիւն ոչ միայն ախորժ ընծայէ՝ այլ համբի համեստութիւն. յաշխարհէ անտի ոչ երբեք է ելանել արտաքս՝ առանց խռովելոյ խղճի մտաց, կամ ծանրաբեռնելոյ մեղօք. և ուղևևց աշխարհին այնորիկ քաջ զդամք՝ զի չկարեմք զդէմ ունել:

Ահա զլխաւոր և կարևոր ճշմարտութիւն, զոր օրինակաւն իւրով ուսուցանէ մեզ Մարիամ. և ձեզ անկ է, ո՛ հաւատացեալ տիկնայք՝ զորոց պայծառացոյց նա զազգ, սարսափել զօրինակ նորա յանձինս ձեր: Զի օրինակին Մարիամու ձեզ է առաւելապէս. և յորժամ սուրբքն Աթբոսիոս խօսէր առ հաւատացեալ կանայս իւրոյ ժամանակին, զայս առաջի գնէր նոցա կանոն. Հայեցարուք՝ ի Մարիամ, չէք ինչ՝ ի վարս նորա՝ որ չիցէ ձեզ՝ ի խրատ. տեսէք որպիսի զգուշութեամբ և քանի պարկեշտութեամբ ընկալաւ զայցելութիւն հրեշտակին, և ուսանիցէք՝ որպէս պարտ իցէ ձեզ վարել ընդ մեզաւոր մարդկան: Հրեշտակ էր նա, այլ՝ ի մարդկային կերպարանս. վասն այսորիկ երաւունք էին Մարիամու և պարտ իսկ խռովել: Պաշտօնեայ էր նա Աստուծոյ, այլ գիտէր Մարիամ զի հարսին նուիրելոյ Աստուծոյ չէր պարտ և առ պաշտօնեայս նորա համարձակել: Հպատակեալ էր Մարիամ՝ ի ընորհս, և Տէր ընդ նմա էր, այլ էր ընդ նմա՝ որպէս յաւելուած նոյն սուրբ վարդապետ, զի ոչ կարէր նա կալ աներկիւղ՝ բայց ընդ Տեառն, և չէր հաստատեալ՝ ի ընորհս՝ բայց զի ոչ վստահէր յանձն: Ահա օրինակ, և օրինակ մեծ, ըստ որում դասեցոյց և զձեզ Աստուած. այլ ինձ ցանկալի է, զի դուք ինքնին բաղդատեսջիք զձեզ ընդ օրինակին Մարիամու. զի այժուիկ, ըստ համեմատութեան ձերոյ ընդ օրինակիդ, և

ըստ փուքթոյն՝ ի նմանութիւն նորին, եղիցին գնացք ձեր՝ որպէս խնդրէ Աւաքեաքն, անարատք և անբասիբք. այսուիկ և պատիւ ձեր, զոր պարտապան էք պահել առաջի Աստուծոյ և մարդկան, լինի յապահովի՝ ի լեղուաց չարախօսաց, և գեր՝ ի վերոյ անցանիցեք սուգտանաց, և աչխարհ ակն ածիցէ՝ ի ձէնջ: Սովաւ գադարեսցին և անզգուշութիւնք բաղումք՝ որ են պայթակղութիւնք վարուց ձերոց, համարձակութիւնք՝ զորս և աչխարհ ապականեալ ոչ ներէ ձեզ, և խօսակցութիւնք բաղումք ցոփականք՝ որ յանկին յամպարշտութիւն: Սովաւ և վայելչութիւնք զգուշաւորք և խիստք քաղցրացին ձեզ՝ ի վարս, որչափ թուէին ձեզ նեղիչք և ծանունք. սովաւ բարեկարգութիւն ձեր յամենայնի զանկարգութիւն, և բարեպաշտութիւն ձեր եղիցի հաստատուն. զի զինչ է բարեպաշտութիւն առանց այսր բարեկարգութեան, բայց կեղծիք՝ զորս մերժէ Աստուած, և ծաղր առնեն մարդիկ: Եւ համառօտ ասացից. ըստ օրինակին Մարիամու կենցաղավարեալ, սրբեսջիք յանձինս ձեր զքրիստոնէական կրօնս. զի որպէս բաղումանգամ ասացի, տիկնայք, համարձակիմ ասել միւսանգամ, զի՝ ի ձեզ, և գրեթէ միայն՝ ի ձեզ հաստատեալ է բարեկարգութիւն և սրբութիւն քրիստոսական կրօնից. ՝ի խիղճ մտաց ձերոց բողոքեմ, և առ խելամուտ առնել զձեզ այսմ ճշմարտութեան՝ ոչ խնդրեմ վկայս բաց՝ ի ձէնջ:

Բայց Մարիամ, ոչ երբեք և ոչ դոյզն ինչ մեզաք առաւել զնորհս յղութեան իւրոյ, չէր պարտ ըստ հաստարակաց օրինաց, զի եցէ ազատ՝ ի խաւութենից ապաշխարութեան: Զիք երկբայել՝ զի այս անկ էր պայմանի իւրում. սակայն խնդրեաց նա վայելել յայն. — ոչ երբեք: Մայր գոլով որդւոյ այնպիսւոյ, որ ամենևին անմեղ՝ եկաւորէր յաշխարհ առ՝ ի լինել զոհ վասն մեղաց ամենեցուն, կամեցաւ հաղորդակից լինել զոհին նո-

ըս: Մայր որդւոյ, որ ինքն իսկ անմեղութիւն գոլով՝ գայր ապաշխարել մահուամբ խըռով ղմեզս մեր, մայր այնորիկ՝ պարտ անձին վարկաւ և վաստակ արժանաւոր՝ ապաշխարակից լինել, և կրել ընդ նմա յանձին զմեղս մարդկան, և ողբալ զայնոսիկ. և վիշաք՝ զորս կրեաց վասն այնոցիկ, գալով չափ բանի ծերունւոյն Սիմէոնի, անցին որպէս սուսեր ընդ անձն նորա: Թէպէտ և սուրբ էր և լի շնորհօք, անցոյց զաւուրս իւր՝ ի խիստ ապաշխարութեան, որում գժուարին է մեզ հասու լինել. այլ գժուարահաս ևս այն է, զի մեղաւորք ծանրաբեռնեալք եղերամբք, ընդ հակառակն ամենևին կամին վայելել՝ ի քաղցրութիւնս կենաց: Զի այս է ահա անկարգութիւն մեր. անկեալք՝ ի շնորհաց անմեղութեան՝ խնդրեմք ունել զամենայն առաւելութիւնս նորա. յղացեալք՝ ի մեղ՝ ոչ կամիմք կրել զպատիժս մեղաց, և ոչ զգեղն նորա ընդունել: Առաւելութիւնք անմեղութեան են հանգիստ, խաղաղութիւն, հաճութիւն և բերկրութիւն. բերկրութիւն ասեմ անապակ առանց աղետից և գառնութեան: Արդ չեմք այս, զոր խնդրեմք մեք այնքան խնամովք և ըղձիւք. և եթէ լսեմք խորհրդոց մերոց և գործոց, ոչ թուի թէ յիրաւանց անկ իցեն մեզ այսոքիկ: Ընդ հակառակն աշխատութիւն, հլատակութիւն, կորանք, նեղութիւն, արտասուք, և ըստ Առաքելոյն՝ արդար հատուցումն և խոպան մեղաց, չեմք մեզ քան զամենայն ինչ խորչելի. յիմմէ՞ խնդել առաւել խընդրեմք մեք լինել զերծ. քարոզել իսկ վարս այսպիսի ոչ թշնամանք թուին: Ապաշխարութիւն, ըստ ուսուցանելոյ Ժողովոյ, է որպէս լուսին և վերստին ստացումն շնորհաց անմեղութեան. իսկ մեք, թէպէտև անկեալք յանմեղութենէ, ոչ կամիմք ապաշխարել: Եւ եթէ Աստուած կամի ինքնին տալ մեզ ապաշխարանս, տըրտմընջեմք. եթէ ապաշխարութիւնս այս եկեալ յարակից պայմանի կենաց մերոց, առնեմք մեք զայն մեզ անպա-

տան. զապաշխարութիւն, որում մարթէր լինել մեզ փրկաւէտ, կրեմք բանի. այս է ահա թշուառութիւն մեր, սիրելի ունկնդիրք: Ո՞ւր եկեալ գտանել առաւել նիւթ և պատճառս ապաշխարութեան քան յարքունիս. այլ ո՞ւր գարձեալ եկեալ գտանել չքաւորութիւն քրիստոնէական ապաշխարութեան քան յարքունիս: Ուր յաճախեն մեղք, անդ ողբալի յեղաշրջութեամբ կարգաց գտանի նուազեալ ճշմարիտ ապաշխարութիւն, և տիրէ անդ ընդարձակագոյնս գոռոզութիւն մտաց, մեղկութիւն զգայութեանց, և անձնասիրութիւն:

Վախճան արարից միւս ևս հակադրութեամբ ընդ մեզ և ընդ Մարիամ: Թէպէտև շնորհք յղութեան նորա էր բազմազեղ և գոգցես անչափ, սակայն ոչ զկայ էառնա անդ, այլ զամենայն գուն ընդ ամենայն կեանս իւր գործեաց՝ յաւելուլ զշնորհսն, վաստակ՝ ի վաստակս յարեալ հանապազ, և սրբութիւն՝ ի սրբութիւն. իսկ մեք, հանդերձ այսքան պակասութեամբ շնորհաց՝ ի մեզ՝ չունիմք ինչ փոյթ առ՝ ի ընուլ զթերին. հաճ և գոհ եմք ընդ որ եմքս. և են իսկ՝ որ ասեն, ոչ աւելի ինչ քան զայս պէտք են առն աշխարհականի, չատ է գրանիվ այսքան: Եւ ո՞ իցեմք մեք, որ սահմանս կամիմք հաստանել շնորհացն Աստուծոյ: Եթէ կամ Աստուած զապաստատութիւն մեր, եթէ խնդրէ՝ ի մէնջ առաւելագոյն կատարելութիւն, ընդէր իցէ մեզ էշնազանդել կամաց նորա, և ընդէր կամիցիմք ամփոփել զձեռն նորա և զողորմութիւն, վերջացեալ՝ ի հաւատարմութենէ առ շնորհս նորա: Աւաղ, ո՛ հաւատացեալք, կալ՝ ի շնորհս Աստուծոյ է առ՝ ի ստացուած երկնային փառացն՝ ի կեանս յայս կամ պարտ է աճել, և կամ ցամաքել. Յայս սակս ասէր Առաքելապետն առ նախնին հաւատացեալս. Ունէիք շնորհս և գիտութիւնս Տեառն մերոյ և Քրիստոսի Յիսուսի Քրիստոսի. առանց այսորիկ լինելիք՝ ի ձանձրացս հի կորստեան: Անկանիցի յասպետաց հոսպիտալութենէ: Արդ

վան հաճելոյ ըստ այմ օրինակի՝ պարտ է գործել որպէս զՄարիամ. ոչ կալաւ նա անգործ զչնորհս, միշտ գործունեայ, միշտ եռանդնոտ, և միշտ ՚ի բարեգործու-թիւն և յեղբայրսիրութիւն պարապեալ: Իսկ դուզ ըմբ բարիս գործես, յորմ պարտս եղբայրսիրութեան առաղքատս պարապիս. եթէ իցէ վասն քո հնար ինչ անվրէպ առ ՚ի հանապազորդել ՚ի չնորհս Աստուածոյ ՚ի մէջ աշխարհի՝ ուր կաս, այս է: Զի որպէս կարի իմաստու-թեամբ սուրբն Բեռնարդոս ազդ առնէ, որչափ և քա-նայցես՝ էիարես պահել զնոնարհութիւն ՚ի ղեղնու-թեան, ղղդաստութիւն ՚ի փափկութեան, զբարեպաշ-տութիւն ՚ի թեին աճել զաւագութեան և ՚ի զբօսանս աշխարհականս. այլ ՚ի խրախոյս սրտի քո յայտ առնեմ զի ՚ի խնամարկել և յօգնել աղքատաց՝ ՚ի տեսիլ աղե-սից նոցա ՚ի բաց գիցես զփափկութիւնս քո, ՚ի սպա-սաւորել նոցա՝ Թողցես ՚ի բաց զուշայնասիրութիւնս քո, և ջեռուսցես զդաղջութիւն քո և զցրտութիւն եռանդեան՝ սրբութեամբ հրահանգաց այսոցիկ. և այսպէս ՚ի վտանգս խակ քումդ պայմանի կենաց՝ պահ-պանեսցես զչնորհս Աստուածոյ ՚ի քեզ, ՚ի կիր արկանե-լով զայն: Եւ առ ինչ օգնեսցէ, սիրելի ունկնդիրք, ստանալ զչնորհս զայս անգին, և ոչ յարգել զայն:

Այսպէս Մարիամ յարգեաց զչնորհս, այսպէս և մեք պարտիմք յարգել: Տերտուղիանոս ՚ի ճառէն զվերս-կաւէտ անվստահութենէ, զոր պարտ է մեզ ունել զան-ձանց մերոց՝ առ ՚ի պահել զմեզ ՚ի մեղաց, գեղեցիկ խին ասէ՝ զի երկիւղ մեր յայնժամ է պատկառանք և պա-տիւ, զոր խոնարհութեամբ և երկիւղածութեամբ ըն-ծայէ մարդ Աստուածոյ՝ վասն տկարութեան իւրոյ. Եւ-նիւղ մարդոյ՝ պոռի Աստուածոյ: Զի արդարև չիք առաւել ինչ պատիւ Աստուածոյ քան զայս երկիւղ և զգուշու-թիւն, ոչ միայն չմեղանչելոյ Աստուած, այլ և ոչ ար-հանելոյ զանձն համակար ՚ի թեթև ինչ վտանգ կորու-

ստանելոյ զչնորհս նորա: Եւ նոյն ինքն Տերտուղիանոս առաւել ևս բացատրելով զիմաստ բանին օրինակաւ մե-ղաւորաց, որոց Թողեալ զանկարգութիւնս և զաղե-տալի վտանգս՝ յորս կային, հրաժարեն ՚ի սպառ յայն-ցանէ սրտի մտաք, հանգոյն փրկելոց ՚ի նաւակոծու-թենէ՝ որք հրաժարական ողջոյն անդարձ տան ծովու, ՚ի վերայ ածէ՝ զի մեղաւորքն այնոքիկ պատուէն զբա-րերարութիւնն Աստուածոյ և զչնորհս գարձի իւրեանց, յուշ ածեալ զվտանգն մեծ՝ յորմէ զերծան. Զբարերարու-թիւնն Աստուածոյ, որով ֆրկեցան, յիշատակս վտանգին պատուէն: Ցաւելցուք ըստ օրինակին Մարիամու յարգել զչնորհսն, ոչ միայն պահելով զոյն ՚ի մեզ, այլ և հալատակելով աղաչութեանց նորա, և օր ըստ օրէ աճեցուցանելով զոյն ՚ի մեզ, պատրաստ ունելով զսիրտս մեր առ աղա-չումն նորին:

Այսօր սուրբ առաջադրութեամբ, ով փառաւո-րեալ Մայր Աստուածոյ մերոյ, մատուցանեմք քեզ զա-ղօթս մեր. և ես առանձինն, որպէս քարող աւետարա-նին, իշխեմ մատուցանել զիմս, զի ՚ի վերայ ամենայն ունկնդրաց իմոց սփռեսցես զհովանի պաշտպանութեան քո: [1]

1 Աստանօր Հայրն Պուրտալու պատուասիրէ ներբողենիւ զարքայորդին զդուքսն Պուրկունի, և գնորհաւորն նորա, որ էին յեկեղեցւոջ անդ ընդ արքայի, և մաղթէ ՚ի վերայ նոցա յերկնից զամենայն օրհնութիւնս. որ զի արտաքոյ է բնաբանիս, Թողաւ ՚ի բաց:

ՀՕՐՆ ՊՈՒՐՏԱԼՈՒԻ

ՅԱՒԵՏՈՒՄՆ ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ

Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն.
Ահաւասիկ կամ աղախին Տեառն,
եղիցի ինձ ըստ բանի քում:
Ղ-Ի. Ա. 38:

Տէր արքայ, զպատասխանուդ աստի Մարիամու կա-
խեալ կայր կատարումն փառաւորելոյ խորհրդոյս, զոր
ծանեմք այսօր: Հաւանութիւնս այս ի կարգի աստուա-
ծային յաւիտենական վճռոց՝ էր մի ի պայմանաց, որ
խնդրեին ի մարգեղութիւն Բանին Աստուծոյ. և ահա,
ախրելի ունկնդիրք, գվնաւորագոյն ի պարտուց մերոց
զոր ունիմք առ Թագուհին կուսանաց: Քանզի, որպէս
ուսուցանեն մեզ հաւատք, ի ձեռն նորա տուաւ մեզ
Քրիստոս, և նմա եմք շնորհապարտք վասն փրկչին մերոյ
Աստուծոյ. զի ինձանէ Որդւոյն Աստուծոյ ի ծոցոյ Հօր
յարգանդ մաքուր սրբոյ Կուսին, և վասն փրկչոյ ըզ-
մարդիկ եղանիլ մարդ, եղև ի վայրկենին՝ յորում Կոյսն
տուրբ ասաց և վասն զի ասաց, Ահաւասիկ կամ աղախին
Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում: Մի ապա բաժանեսցուք ի
Ճառիս յայսմիկ զՄայրն Յորդւոյն, և զՈրդին ի Մօրէն.
և մի բաժանեսցուք զնեբրող Մարիամու ի պաշտելի և
յանհատանելի խորհրդոյ Բանին Աստուծոյ. այլ ջանաս-
ցուք ի միոչէն և ի միասէն առնուլ խրատս մեզ ի չի-

նուԹիւն: Սուրբն Օգոստինոս ասէր, զի առ՝ի խօսել արժանապէս և առ՝ի յօգուտ զմարմնաւորութենէ Բանին յորովայնի սրբոյ Կուսին, պարտ էր մարմնանալ բանից՝ի շրթունս քարոզչաց, և պաշտօնէից Աւետարանին ուշնել զերեանդն առաքելոյն Պօղոսի, կարելոյ ասել առ ուննկդիրս իւր՝ որպէս նայն ասէր· Որդեակ՛ս իմ, զոր դաբձեալ վէրսին երինեմ, դնել նմբեսոյ Քրիստոս՝ի յիւղ: Այս շնորհ կարևոր էր ինձ այսօր. պարտ էր ինձ ըստ օրինակի վարդապետին հեԹանոսաց վաստակել, զի նահատակեսցի Քրիստոս՝ի հոգիս ձեր, և երկնեսջիք հոգևորապէս զԲանն Աստուծոյ՝ի խօսել իմովք առ ձեզ զմարմնաւորութենէ Քրիստոսի իսկապէս և դոյզնապէս: Կարօտիմք առ այս՝ լուսաւորելոյ՝ի Հոգւոյն սրբոյ՝ որ եկն՝ի կոյս Մարիամ, և պարտ է մեզ նորին սրբոյ Կուսին ամենազօր բարեխօսութեամբն խնդրել և ընդունել զնա:

Ողջոյն ձեզ:

Վարդապետութիւն է ամենայն Հարց եկեղեցւոյ՝ զի Մարիամ, Թէպէտ և էիարեր իսկապէս արժանի լինել մարմնաւորութեան Բանին Աստուծոյ յիւրմէ, սակայն կարաց համահամուԹեամբն ընդ խորհուրդս Աստուծոյ՝ սպասաւորել՝ի կատարումն անճառելի խորհրդոյն· զի՝ի հասանել պահու կատարմանն՝ գոսաւ նա պատրաստ հոգւով և առաքինուԹեամբք, որք արարին զնա ոչ միայն արժանի, այլ և արժանագոյն և միայն արժանաւոր լինելոյ մայր Փրկչին: Վասն այսորիկ լցեալ էր զնա Աստուած այնչափ շնորհօք, վասն այսորիկ պահեալ էր զնա յամենայն մեղաց, վասն այսորիկ՝ի տղայ ասոց մեհնեալ էր նա յաշխարհէ, վասն այսորիկ յընծայելն՝ի տաճար՝ նուիրեալ էր զանձն Աստուծոյ. վասն զի անդբսոյն սահմանեալ էր լինել տաճար կենդանի և սրբոյ բան Աստուծոյ: Կարևորագոյն է գիտել մանաւանդ ըզպատրաստուԹիւնս Կուսին, և յոր ինչ առաւելապէս հայեցաւ Աստուած՝ի նմա; առ՝ի հաղորդ առնել զնա

խորհրդոյս այսմիկ, և ամբառնալ զնա յաստուածամայրուԹիւն: Կէսք համարին վասն խորին խոնարհուԹեանն, վասն ամենահատար հնազանդուԹեանն և հպատակելոյ աստուածային հրամանաց, գոեալ նորա ընդ առաջի Աստուծոյ: Այլք ընծայեն զշնորհս զայս, կամ մանաւանդ զիառս՝ զոր ընկալաւ Աստուծոյ հրեշտակային մաքրուԹեանն, որով վաղ իսկ կուսուԹեամբն հարմնացեալ էր Աստուծոյ: Կցորդեսցուք, ո՛ հաւատացեալք, զերկուսեան՝ի միասին, և ասասցուք ընդ սրբոյն Բեռնարդեայ, զի Կոյսն անհամեմատ ընկալաւ ըզԲանն Աստուած յարգանդի և վասն խոնարհուԹեան իւրոյ և վասն կուսուԹեան, զի ասէ· Կուսութիւնեմբն հաճոյ եղէ, խոնարհութիւնեմբն յղացար: Ընդունիմ զնմանատս զայս այնչափ առաւել մտադիւր, որչափ զի Թուի ինձ հատուցեալ՝ի բնաբանն իմ: Փանդի քաջայայտ է, զի մերձաւորագոյն պատրաստուԹիւն Կուսին՝ի մարդեղուԹիւն Բանին եղև հաւանուԹիւն նորա ընդ բան հրեշտակին, Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քումմ: Արդ այս հաւանուԹիւն բովանդակէ յինքեան և զնմանութիւն խոնարհուԹիւն, և զայայտնագիման ուխտ կուսուԹեան. զի՝ի խոստովանել զանձն աղախին Տեառն, խոնարհեր առաջի նորա. և չընդունելն պայմանաւ զիառս աստուածամայրուԹեան ըստ բանի հրեշտակին, այս ինքն՝ի ձեռն Հոգւոյն սրբոյ, չայտ առնէր՝ զի ոչ միայն էր կոյս, այլ և զի կամեր լինել միշտ կոյս: Վասն որոյ յերաւի է ասել՝ զի յղացաւ նա զՏէրն փառաց և խոնարհուԹեամբ սրտի և սրբուԹեամբ մարմնոյ: ԽոնարհուԹեամբ սրտի՝ որ՝ի կարգէ սոսկ դասեր ամբարձ զնա յաստուածամայրուԹիւն, որ լիցի առաջին մասն Ճառիս. և սրբուԹեամբ մարմնոյ՝ որով ըստ բանի սրբոյն Ամբրոսիոսի, եղև երանելի՝ տալով ի՛ջանել Որդւոյն Աստուծոյ յերկիր, որ լիցի երկրորդ մասն Ճառիս: Խընդրեմ զի հաճեսջիք ուշիւ լինել ունկնդիր:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Որչափ և կատարեալ էցեն յինքեանս այլ առաքինութիւնք, և որչափ արժանաւորք, սակայն խոնարհութիւնն է ասէ սուրբն Օգոստինոս, որ ապ մարդոյ զառաջինն և գկարևոր պատրաստութիւն հաղորդակցութեան ընդ Աստուծոյ· քանզի որպէս քաջայայտ է, յաւելուածնա ինքն, յընդունելութիւն շնորհացն և պարգևացն Աստուծոյ՝ պարտ է գէթ ունայն գոլ յանձնէ· Աստուած ամենակարող, իշխեմ ասել, ոչ գտանէ տեղի ի սիրտ լի անձամբ իւրով· այս ինքն ի սիրտ ապականեալ անձնասիրութեամբ և մնոսի ինքնահաւանութեամբ: Վասն որոյ խոնարհութեան է սեփական՝ պատրաստել զայս խմանալի և փրկաւէտ ունայն, որ յաջողէ մուտացմամբ անձին, հրաժարմամբ յանձնէ, և ուրանալով զանձըն· վասն որոյ խոնարհութիւն է՝ որ արժանի առնէ զմեզ ժառանգելոյ զԱստուած, և պատրաստէ անօթս ընդունելութեան առ ի տանել զպարգևս Աստուծոյ, և համայն ապացեալ՝ ընդունակս անպատում հեղման շնորհացն և Հոգւոյն Աստուծոյ ի մեզ· յայսմ հաստատեալ է առաւելս խորհուրդ: Զի ահա, սիրելի ունկնդիրք, այսպէս յարեմ զսացեալքս ի նոյն խորհուրդ:

Կամէր Աստուած հաղորդել ընդ մարդկան, այլ սքանչելի լեաւ օրինակաւ ի վեր քան զամենայն միտս, այս ինքն անհասանելի օրինակաւ մարդեղութեան Բանին: Պարզագոյն և, և յայտնագոյն բացատրեցից· կամէր Աստուած՝ զի Բանն և Որդի Բարձրելոյն գայցէ յաշխարհ զգեցեալ մարմին, և եղեալ մարդ իբրև զմեզ, յար և նման առեալ զմերս բաց ի մեղաց: Խնդրեր առ այս կայս մի, որ իբրև մայր լեցի գործակից ի կատարումն խորհրդոյն· կայս մի ըստ սրտի Իւրում, յորում գոցէ զնոնարհութիւն կարևոր անհրաժարելի, առ ի յարդարել զնա տաճար կենդանի՝ յորում բնակելոց էր Լոյսն աստուածութեանն զամիսս ինն լի: Եւ ի հաստատել պահոս կատարման խորհրդոյն սահմանելոյ՝ հայեցաւ ի Մարիամ, և Մարիամ միայն ի մէջ կանանց Թուեցաւ նմա այնպիսի խոնարհ, որպէս ինդրէրն: Վասն այսորիկ, ասէ սուրբն Օգոստինոս, ընտրեաց զնա ի վեր քան զայլս ամենեսին, և ճոխացոյց զնա բարձրագունիւք քան զամենայն շնորհս՝ յղանալոյ զԱստուածորդին· զի էր նա առանց ամենայն երկբայութեան և հակառակութեան խոնարհագոյն յաղախնայս Աստուծոյ: Ահա համառօտիւ խորհուրդն, զոր ծանաքմբեմք· այլ ի չինութիւն ձեր և իմ ներբերցէք ինձ առաւել ևս պարզել զայն:

Յորժամ ընտրեաց Աստուած զՄարիամ յաստուածամայրութիւն, ոչ հայեցաւ, ոմ հաւատացեալք, ոչ ի մեծութիւն աղգի նորա, ոչ ի հանճար, ոչ ի կատարելութիւնս մարմնոյ, և ոչ յայլ բարեմասնութիւնս, զորս առատապէս շնորհեալ էր նմա՝ արարիչ գոլով: Զի արդարև Մարիամ ըստ աչխարհի ևս էր կատարելագոյն քան զամենայն արարածս: Սերեալ յազգէ Դաւթի և ի յոդունց այլոց Թագաւորաց նախահարց իւրոց, ժառանգէր զամենեցուն նոցա զվիաս. և զարդարեալ բնական կատարելութեամբք շնորհելովք նմա Աստուծոյ՝ էր նա, որպէս սուրբն Բեռնարդոս ասէ, հրաշակերտ արարչին յարարածս ամենայն դարուց, և ոչ մի ոք ի գոսեբաց իսրայելի կարէր համեմատել ընդ նմա ըստ պարառութեան ևս արտաքին մեծապայծառ շնորհաց՝ որովք ճոխացեալն էր· զի զնմանէ մարթ էր ասել ըստ նկարագրին· Բազում դստերք ոգոյան գնեցուին, բազում արարին զբուին, բայց դու առաւել եղեր ևանցուցեր զամենեսեան: Սակայն ոչ ինչ յայսցանէ էած զԱստուած յընտրել զՄարիամ յաստուածամայրութիւն, առ ի տալ փրկիչ աշ-

խարհի: Աւասցից առաւել ինչ և արժանագոյն խնդրոյ մտաւորեան ձերոյ. ոչ ընտրեաց Աստուած զՄարիամ, և ոչ նախագասեաց զնա ի հրաշափառն մայրութիւն, ոչ բազմութիւն և ոչ ըստ մասին, արժանաւորութիւն սրբութեան նորա. զի առ ի լինել մայր Աստուծոյ պարտ էր նմա լինել սուրբ, այլ որ և է սրբութիւն չբաւէր առ այն. պիտոյ էր սրբութիւն իմն նորանշան, առ ի պատրաստել զՄարիամ ի մայրութիւն Աստուծոյ մարդացելոյ, այսինքն Աստուծոյ՝ որ զանձն ունայնացուցանէր, լինել որդի նորա: Արդ նշանս այս նոր՝ էր խոնարհութիւն. և եթէ չէր խոնարհութիւն սիրոյ յառաքինութիւնս Կուսին, թէպէտ և էին նորա ամենայն արժանիք և հրեշտակային սրբութիւն, ոչ ընտրէր զնա Աստուած: Ի՞նչ ապա ի մէջ ամենայն կուսից եղև նա նշանաւոր առաջի մեծվայելչութեանն Աստուծոյ. — ինքն մեզ ուսուցանէ զայն, այս ինքն նուաստ զանձն համարելով՝ և խոստովան լինելով զնուաստութիւն իւր: Արդ խոստովանութիւնս այս եղև կենդանի ինն և սքանչելագործ յայտնութիւն խոնարհութեան իւրոյ. Զի հայեցաւ ի խոնարհութիւնն աղախնոյ իւրոյ: Այո՛, ասէր նա յօրհնեալ գութեան իւրում, որ ըստ սրբոյն Ամբրոսիոսի՝ եղև որպէս հիացումն ինն խոնարհութեան, այլ փառաւորելոյ խոնարհութեան. Զի ահա յայսմ հեռի երանելոյն ինչ ամենայն ապտ, որպէս և եմ իսկ երանելի. Զի աւրս ինչ ինձ ծածկեցաւ հզօրն, և ընդհէր. — զի ոչ անարժան համարեցաւ զնուաստութիւն աղախնոյ իւրոյ, այլ հաճեցաւ ընդ խոնարհամտութիւն իմ: Այս ձգեաց յիս, ոչ միայն զօրհնութիւնս նորա և զընտրութս, այլ և զանձն նորա և զաստուածութիւն. խոստովանիմ բարձրաձայն, որպէս զի ամենայն արդարք օգտեալ ասեմ՝ գիտասցեն զի ընդ խոնարհս հեռի հաղորդի Աստուած, խոնարհութիւն հեռի մերձեցուցանէ առ մեզ զԱստուած, և զմեզ առ նա: Եւ չէն ինչ զարմանք, զի այսպէս արար Աստուած ընդ Մարիամ.

մու. քանզի որպէս սուրբն Բեռնարդոս իմաստասիրէ, Աստուծոյ՝ որ ցայնվայր խոնարհէր, մինչև առնուլ մարմին, պարտ էր ունել հաճութիւն անբաւ ընդ խոնարհութիւն. այնմ՝ որ ի բարձրութեան իսկ վառաց իւրոյ հաճի ընդ այս առաքինութիւն, և վասն բարձրութեան իւրոյ յօժարի ընդ խոնարհս. Բայց է Տէր, և վհոնարհս փեռնէ: Ի՞մ իմիք պարտ էր ակն ունել ի նմանէ՝ որ պատրաստէրն խոնարհել եղանիլ մարդ, այլ զի փառս իւր համարեսցի յղանալ յարգանդի խոնարհագոյնն յարարածս իւր, և կամիցի մտանել յաչխարհ խոնարհութեամբ, որ եղև իւր գլխաւոր և գերագոյն հրաւիրակ:

Զինչ արդ չքնաղ և գերազանց եգիտ ի խոնարհութիւնն Մարիամու, և ընդէր խոնարհութիւնն Մարիամու այնչափ հաճոյ և արժանաւոր թուեցաւ Աստուածորդւոյն: Ո՜հ, հաւատացեալք, զի եգիտ ի Մարիամ խոնարհութիւն այնպիսի, որպիսի չէր ուրեք երբեք երևեալ յերկրի, և ոչ երևեսցի. խոնարհութիւն ի միասին ընդ լրումն արժանեաց, որ էր առաջին ի հանգամանաց. զի խոնարհել առանց արժանեաց, ասէ սուրբ Ոսկեբերան, հարկ իսկ է. խոնարհել մասամբ արժանեաց, է գովելի. այլ խոնարհել հանդերձ ամենայն արժանեօք, է սքանչելիք իմն. և էր կարևոր սքանչելիքս այս վասն մարդեղութեան Բանին: Արդ այս սքանչելիք յայտնի երևէին ի Մարիամ. զի միտ դիք աղաչեմ. հրեշտակն կոչէ զնա լի շնորհօք, Ուրախ լեր Բերկրեալ, Տէր ընդ քեզ. իսկ նա դաւանի զանձն աղախին Տեառն. Ահաւասիկ ես աղախին Տեառն: Եթէ Մարիամ չէր ինչ աւելի քան զաղախին, կամ եթէ լի լեր էր շնորհօք, չլինէր երբեք մայր Աստուծոյ. խոնարհութիւն սրբոյ Ոսկեբերանին գերազանց: Բայց զի աղախին էր և մայր, և լի գոլով շնորհօք՝ կոչէր զանձն աղախին Տեառն, արար Աստուած զաղախինն Մայր:

Ա՛հաւասիկ և աւելի ինչ քան զայս, խոնարհու-
թիւն ընդ լուսեղեան փառաց· միւս այլ ՚ի հանգամա-
նաց: Լինել խոնարհ ՚ի նուաստութեան, յաւելու Ա-
կեբերան, լինել խոնարհ յաննշան և յանարգ պայմանի,
եցէ՛ թէ շատ՝ առաքինութիւն ինչ հասարակ և սովո-
րական· այլ լինել խոնարհ, որպէս Մարիամ ՚ի ծայր
բարձրութեան, այս իսկ է առաքինութիւն գերազանց,
որով սքանչելի եղև Մարիամ, ոչ միայն մարդկան և հրեշ-
տակաց, այլ ինքեա՛ս ասէ՝ և Աստուծոյ: Զի ընդէ՞ր եցէ
ինձ չիշխել ասելոյ, զի որ զարմացան ընդ հաւատս հա-
րիւրապետին և քանանուհւոյն, առաւել ևս զարմա-
նայր ընդ այսպիսի խոնարհութիւն Կուսին: Մանր ևս
նկատեսցուք· հրեշտակ առաքի առ Մարիամ. և թէ-
պէտ հրեշտակ Աստուծոյ, խօսի առ նա մեծարանօք·
չայա առնէ նմա՝ զի օրհնեալ է քան զամենայն կանայս,
և գտեալ շնորհս յԱստուծոյ· զի յղասցի որդի, և դիցէ
անուն նմա Յիսուս· զի լցցի Հոգւով սրբով· զի լինի մե-
ծաւոյ որովայնի նորա սուրբ ըստ առաւելազանցու-
թեան, և Որդի Աստուծոյ· զի տացէ նմա Տէր զաթոռն
Դաւթի՝ թագաւորել յաւիտեան, և զի այս ամենայն ՚ի
ձեռն իւր կատարեսցի: Զինչ այլ մեծագոյն կարէր աւե-
տել նմա· ո՛ր իրաւունք չէին նմա ունելոյ զանձնէ բարձր
կարծիս, մանաւանդ դիտելով զի չէին այնոքիկ մար-
դահաճութեան բանք, զի ՚ի չըմեծաց հրեշտակապետին
ընդունէր զայս ամենայն գովութիւնս ՚ի դիմաց Աստու-
ծոյ: Սակայն առ այս ամենայն զայս աւետ ետ պատաս-
խանի անկեղծութեամբ, զոր ունայնասիրի ոմանք և թէ-
թևամտի մարթ էր կեղծեօք տալ և ճարտարանօք· Ահա
աղախին Տեառն: Դու ինձ զմայրութենէդ Տեառն
խօսիս և զիշխանութենէդ, այլ ես ընդ ձեռամբ նորին եմ,
ներքոյ անկեալ հրամանաց իւրոց ամենեւին, և նուիրեալ
նմա յազատնութիւն՝ յորմէ ոչ յեռանեցայց երբեք· Ահա
աղախին Տեառն:

Ա՛հաւասիկ, ո՛ հաւատացեալք, որ ինչ զարմացոյց
ղերկինս. և ներեցէք ինձ ասել, որ ինչ եւ Որդւոյն Ա-
ստուծոյ կինքել զնորհուրդն սահմանեալ ՚ի յաւիտենից՝
ելանել ՚ի ծոցոյ Հօր, և իջանել յաթոռոյ փառաց իւ-
րոց մինչև ՚ի խորս չքնութեան մերոյ: Զի աստուածօր կա-
տարի բան Սաղմոսերգուին· Խոչ վխրս կոչեան: Խոնարհի
Մարիամ առաջի Աստուծոյ, և Բանն Աստուած զանձն
ունայնացուցանէ յարգանդի նորա· խորք խոնարհու-
թեան Կուսին կարգան զանդնդալիսը խորս ունայնանա-
լոյ Աստուածորդւոյն· զի այսպէս միայն համարեցաւ
Առաքեալն կարել արժանաւոյս բացատրել զնորհուրդ
մարդեղութեան Որդւոյն Աստուծոյ· Որ ՚ի ձերպարան Ա-
ստուծոյ էր, զանձն ունայնացոյց՝ վերպարան ծառայի առեալ:
Քանզի Աստուածոյ մարդանալ՝ գէր ՚ի վերոյ անցանել քան
զամենայն խորս խոնարհութեան, զոր միաք մեր պատ-
կերին և զոր պատկերել կարեն· առ ՚ի հասանել անդր,
պարտ է աստուածային յայտնութեան հասանել մեզ
յօգնութիւն· որպէս զի միաք մեր զօրացեալ կենդանի
լուսով հաւատոյ՝ կացցէ մեզ ՚ի թիկունս, և ամբարձցէ
զմեզ ՚ի վեր քան զմեզ, առ ՚ի տալ մեզ ըմբռնել զինչ
է Աստուած եղեալ մարդ: Արդ ահա այսպէս ըմբռնեմք
զայն բառիս ևեթ, որ առաւել նշանակէ քան զոր ինչ
աստուածաբանք առհասարակ և Հաւրք ջանացան ասել
մեզ զայնմանէ: Հոգին սուրբ Թելեադրեաց զայն. եղև
մարդ, այսինքն Աստուած գոլով՝ առանց ստուերածս
ինչ ածելոյ աստուածութեան իւրում, եղև որպէս թէ
ոչինչ. Զանյն ունայնացոյց:

Յայսմ աստուածային ոչընչէ, զի այսպէս ասացից,
եղեալ եմք. և ՚ի զօրութենէ այսր հրաշալի ունայնու-
թեանն Աստուծոյ եմք մեք, դուք և ես, որ ինչ եմքս ՚ի
կարգի շնորհաց: Որպէս ոչինչն առաջին՝ որ կոչի ոչինչ
արարչութեան՝ եղև սկիզբն ամենայն էից՝ որ գոն ՚ի բը-
նութեան, հարկ եղև Աստուծոյ՝ և յերկրորդէ ասի

ոչընչէ՝ որ է ոչինչն խոնարհութեան և մարդեղութեան
Բանին, 'ի գոյ ածել զամենայն էակս 'ի գերբնական կար-
գի, լմա զամենայն ընորհս, զամենայն առաքինութիւնս,
զամենայն վաստակս արժանաւորս, զամենայն հոգևոր
ազգեցութիւնս և պարգևս երկնաւորս՝ որ օգնեն 'ի փըր-
կութիւն և 'ի սրբութիւն մարդկան· յոչընչէ ասի Ա-
ստուածոյ մարդացելոյ ողորմութիւնն աստուածային արար
զսուրբս, զնախասահմանեալս, և զընտրեալս, որպէս ա-
մենակալ ըօրութիւն իւր արար 'ի նախկին ոչընչէ զեր-
կինս և զաստեղս: Առանց այսորիկ կայաք մնայաք 'ի յա-
վիտենական ոչընչի թշուառութեան և մեղաց մերոց:
Աստուած միայն կարէր հանել զմեզ անտի, և չէգիտ
այլ հնարս հանելոյ, բայց ունայնացուցանելով զերկըր-
պագելն անձն իւր· Զայն ունայնացոյց: Ունայնութիւն
Աստուածոյ իմոյ, աղաղակէ սուրբն Բեռնարդոս, օգտա-
կարագոյն ինձ քան զմեծութիւն իւր և զկարողու-
թիւն· կամ մանաւանդ ունայնութիւն արգասաւորա-
գոյն, ճոխագոյն, առատագոյն քան զգանձս աստուա-
ծայինս· վասն զի ամենայն գանձք բարութեան իւրոյ և
սիրոյ բովանդակին 'ի նմա, և անտի հեղեալ են յիս ա-
մենայն բարիք՝ զորս ընկալեալ եմ յԱստուածոյ, և զորս
ընկալցոյց: Ունայնութիւն՝ որով կեամն և ընորհապարտ
եմ ամենայն երջանկութեան իմոյ· ունայնութիւն՝ որ
ցուցանելով ինձ զՁերն իմ յայս վիհ խոնարհութեան՝
յորում տեսանեմ այսօր, զարմանալի ևս առնէ ինձ զնա
և սիրելագոյն, քան եթէ տեսանէի զնա փառաւորեալ
'ի սուրբս իւր, և 'ի լուսութեան փառաց աստուածու-
թեանն միայնոյ· Որչափ վասն իմ անարգելոյ, այնչափ ինձ սիրելա-
գոյն: Այսպիսի էին մտածութիւնք սրբոյն Բեռնարդոսի
'ի վերայ խորհրդոյս, յոր խոկալ և խելամուտ լինէր:

Այլ յառաջ ևս անցցուք, և վասն օգտակարագոյն
ևս առնելոյ մեզ զնորհուրդս զայս 'ի մեզ ինքեանս
դարձցուք· մտցուք 'ի միտս Քրիստոսի, մտցուք 'ի միտս

Մարիամու· այս ինքն զնոյն խորհեսցուք ըստ խրատու
Առաքելոյն, զոր խորհէին Յիսուս և Մարիամ 'ի պահու
անդ մարդեղութեան· Զայն խորհեսցի ընտ պանչիւ ոտ 'ի յինչ,
որ և 'ի Քրիստոս Յիսուս: Զի ահա, սիրելի ունկնդիրք, որ
ինչ վարդապետեմ մեզ մարդեղութիւն Փրկչին մերոյ·
հոգի խոնարհութեան, գործ խոնարհութեան, գերա-
զանց գիտութիւն խոնարհութեան, և արժանաւոր վաս-
տակս խոնարհութեան: Չէթանոսք, ասէր սուրբն Է-
րոնիմոս, չեղեն խոնարհք, և չկարէին իսկ լինել՝ բայց
մտօք· իսկ մեք հաւատացեալքս պարտիմք լինել և մտօք
և կրօնիւք: Հրեից չէին պէտք խոնարհութեան, բայց
միայն առ 'ի հնազանդել Աստուծոյ՝ որ երևէր նոցա միշտ
մեծ և ահաւոր, և պարտ էր նոցա դողալ առաջի նորա·
իսկ մեք քրիստոնեայքս պարտիմք խոնարհել առ 'ի ծա-
ռայել Աստուծոյ՝ որ զանձն փոքրկացոյց, և պարտ է
մեզ նմանիլ նմա: Որպէս խորք խոնարհութեանն Մա-
րիամու կարդացին միւս այլ խորս, այս ինքն զխոնար-
հութիւն Աստուածորդւոյն, պարտ է զի և խորք խո-
նարհութեան Որդւոյն Աստուծոյ կարդացեն երրորդ
ին 'ի մեզ, որպէս զի սրբեսցուք զանձինս մեր գործովք
քրիստոնէական խոնարհութեան, կցորդել կամաւոր
ունայնութեամբ 'ի մեծահրաշ ունայնացուցին Բանին
Աստուծոյ, որպէս զի յերկաքանչիւրոցն լիցի մի· զի որ-
պէս ուսուցանեն մեզ հաւատք, առանց այսորիկ չկա-
րեմք հասանել փրկութեան· քանզի մանն է հաւատոյ՝
զի ունայնացուցին Բանին մարմնացելոյ ամբառնայ զմե-
ծոյս արժանիս, և զի մերս պարտի լինել արգասիք և որ-
պէս լուսութիւն և կատարումն ունայնացման Բանին մար-
մնացելոյ: Ասացիլ առանց այլաբանութեան, և պար-
զագոյնս բացատրեցից:

Բազում անգամ եղեն մեզ բանք զկատարութեանն
անկարգութենէ, զվատչութիւնէր ախտին՝ զոր մարթ է կո-
չել սկզբնական մեղս 'ի մարդում, զի գէթ 'ի սկզբնա-

կան մեղաց անտի եկն յառաջ, և է իսկ ցարդ ընդհանուր սկիզբն ամենայն անկարգութեանց աշխարհի: Արարան ձեզ Հառք ամբողջք զայնմանէ, և թերևս ոչ դուն ուրեք խնամուա եղերուք՝ զի տիրել ախտիս այսորիկ մի է 'ի նշանաց երևելեաց դատապարտութեան: Այլ ոչ ինչ սասցաւ ձեզ զչխաւոր մանէն, եթէ համեմատէք զսասցեալքս ընդ որս առաջի կայ ինձ արդ ասել: Մոռացարուք զայլ ամենայն պատճառս, որ 'ի մէջ ածան առ 'ի տալ ձեզ սոսկումն 'ի մեղաց ասել. առ ոչ ինչ համարեցարուք որ ինչ լուսցդ զանիրաւութենէ հպարտութեան, զանարժանութենն նորա, զունայնութենէ, զողորմելի այլանդակութեանց, զամօթալի խելայեղութեանց, զծանձրամիտ կուրութենէ, զանհանդուրժելի յանդգնութեանց, զծաղրելի խրոխտանաց, զվատ և ատելի նախանձաւորութենէ: Էին իսկ այսոքիկ պատճառք հզօրք և ստիպողականք, այլ մարդկայինք. պարտ էր ածել պատճառս իմն 'ի քրիստոնէական կրօնիդ սրբութենէ, և յորմէ չէիցէ մեզ մարթ խուսափել՝ առանց անկանելոյ 'ի հաւասոց: Արդ այս պատճառ կցորդ է 'ի հրաշափառ խորհուրդն մարդեղութեան: Զի Աստուած՝ որպիսի առաջի առնէ մեզ եկեղեցիս 'ի սերկեւանս խորհրդեան, Աստուած՝ կամաւ և ընտրութեամբ զգեցեալ զկերպարանս ծառայի, Աստուած՝ 'ի փրկութիւն և 'ի նորոգութիւն մարդկան յանձն առեալ զձշոտաւութիւնս նոցա, Աստուած՝ մարմին եղեալ առ 'ի բժշկել, որպէս սուրբն Օգոստինոս ասէ, զեղեռնաւոր փքացումն մտաց մերոց, այս է՝ որ յամօթ արասցէ յաւիտեան զանաս զայս, որում դիմամարտիմ. այս է՝ որ յամօթ արասցէ զայն և անպատասխանի. այս է՝ որ յամօթ արասցէ զայն յամենայն դասս քրիստոնէից. այս է՝ որ յամօթ արասցէ զայն, խելամուտ արարեալ մեզ անտեղութեանն՝ որ գոգցես այնչափ է անհասանելի, որպէս զխորհուրդն՝ որ նշաւակէ զայն: Զի չէիցէ այլանդակագոյն անտեղութիւն

կարդալ փրկիչ մեր զԱստուած, զոր դաւանեմք խոնարհութեամբն իւրով եղեալ մեզ փրկիչ, և 'ի կարգալն զնա՝ կրել հպարտութիւն 'ի սրտի. գոհանալ զնմանէ վասն խոնարհելոյ նորա 'ի փրկութիւն մեր, և ջանալ ամբառնալ զմեզ. հաստատել զամենայն վստահութիւն մեր 'ի նա, զի ուսնայնացոյց զանձն առ 'ի գրաւաթափ առնել զմեզ, և հնարել ջանալ առ 'ի լինել իմն, և եթէ իցէ մարթ՝ լինել ամենայն ինչ ըստ աշխարհի: Զիցէ այս ընդ վայր հարկանել յեղանակաւ իմն զմարգեղութիւն Աստուածորդւոյն:

Պարտ է լինել խոնարհ, ո՛ հաւատացեալք: Զասեմ թէ առանց այսորիկ անհնար է բերել յանձին առաքինութիւն ինչ հաստատուն. չասեմ թէ խոնարհութիւն, ըստ խոստովանելոյ իսկ աշխարհի, իցէ հիմն արժանաւոր վաստակոց. չասեմ թէ առանց խոնարհութեան 'ի ղօսր յուսալ հասանել կարծեցեալ փառաց աշխարհի, զոր խնդրէք. չասեմ թէ առանց խոնարհութեան ոչ գտանէք զհանգստութիւն և զհանգիստ անձանց ձերոց. զնոյն և իմաստասէր ոք կարիցէ ասել. և որչափ և անժխտելի իցէ 'ի մասինս յայսմիկ վարդապետութիւն իւր բարոյական, երկբայիմ զի ոչ պատկառ կացցէ այնմ: Այլ ես ասեմ ձեզ, զի պարտ է գոլ խոնարհ՝ առ 'ի լինել քրիստոնեայ, և զի առանց խոնարհութեան չարժէն ինչ կրօնք և ոչ քրիստոնէութիւն. զի առանց խոնարհութեան՝ ոչ մարդեղութիւն տեղի գտանէր, և ոչ Աստուած մարգացեալ: Եթէ ունիցիք հաւատս, կարիցէք գոլ անզգայ ձշմարտութեանն այսմիկ. սակայն դիտեմ զի ձշմարտութիւնս այս այսպէս ոգեշահ, չիցէ ախորժելի ունկնդրաց իմոց. և դիտեմ ցաւովք սրտի, զի խոնարհութիւն՝ զոր քարոզեմ՝ է իմաստութիւնն այն ծածկեալ, զոր Առաքեալն քաջ սահմանեաց յասելն՝ Զոր ոչ ոք իշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ: Այլ ես յայս սակս քարոզեմ ձեզ զայն, զի ընդդէմ կամաց իշխանին

յաւիտենից՝ յայտնեսցի բարձրաբարոյ, ուր Թանձրագոյն ոգեխռովութեամբ է անճանօթ, և համարձակագոյնս գիմամարտեալ. որպէս զի մի՛ և Ճշմարտեսցի՝ ոչ ուրուք յիշեհանաց աշխարհիս այսորիկ Ճանաչել զայն, որպէս զի յաբքունից իսկ ընկալցի վկայութիւն սրբելոյ զայնոսիկ՝ որ հաւատան այնմ, և արդարացուսցէ զԱստուած ընդդէմ այնոցիկ՝ որ ոչն հաւատան. զի պարտ է, ո՛ հաւատացեալք, Ճշմարտութեանս այսմիկ երկոքունքք և մասամբք յաղթանակել ընդդէմ մոլորութեան։ Գոհանամ զքէն Տէր, զի են տակաւին անձինք՝ յորս յաղթանակէ՛ ի սպառ Ճշմարտութիւնս այս, և չէ համառօտեալ ձեռն քո. և զի յաւագանին՝ առ որ խօսիմ՝ են տակաւին խոնարհք սրտիւ, որոց ցուցանես զՃանապարհս քո։ Սոքա են ընտրեալք քո, Տէր, զոր դու ևեթ Ճանաչես. եթէ տակաւք էին Թուով, այն ըստ խորոց խորհրդոց քոց է, որոց երկրպագեմք. այլ ո՛րպէս և իցէ, գոյ ինձ տեղի ախոփանաց այսօր, զի ոչ ևս վասն հասարակաց իցէ և անխտիր վՃիռ Աւաքելոյն. և ես՝ Թէպէտ և անարժան իմով պաշտամանս՝ տակաւին բարեբախտ քան զինս գտանիմ ՚ի քարոզել զնմաստութիւն խոնարհութեան քոյնոյ՝ զի քարոզեմ զայն ՚ի լուր աւագաց աշխարհի, որք ոչ միայն Ճանաչեն զայն՝ այլ և պաշտեն, և խոստովան լինին ընդ ես՝ զի պարտ անհրաժեշտ է ինքեանց ՚ի վար արկանել զայն։

Ասեցէք ցիս, ո՛ հաւատացեալք, Թէ ո՞րպէս մարթ իցէ զնոնարհութիւն ընդ մեծութեան ձգել միաւորած։ Այլ այդ բաղբաղալք են, զոր աշխարհ յամենայն ժամանակի առարկեաց ընդդէմ Ճշմարտութեանն. և ես տամ պատասխանի, Թէ ո՞րպէս մարթ իցէ երկբայել իսկ զայդմանէ յետ անժխտելի ապացուցի և մեծահրաշ օրինակի, զոր ես մեզ Աստուած մարդեղութեամբ Որդւոյ իւրոյ։ Հարցանեմք դուք ցիս Թէ իցէ՞ հնար լինել մեծ և խոնարհ միանգամայն. այլ Որդին Աստուծոյ եղև խոնարհ՝ գոլով Աստուած, և Մարիամ եղև խոնարհ քան զամենայն արարածս՝ գոլով մայր Աստուծոյ։ Զի՞նչ ապա, յաւելու Ոսկեբերան, միթէ մեծութիւնք մարդկայինք իցե՞ն ինչ փառաւորագոյնք քան զաստուածմայրութիւն, և զաստուածութիւն իսկ։ Արդ եթէ աստուածութիւն և աստուածամայրութիւն կացին՚ի միասին ընդ խոնարհութեան ՚ի Յիսուս և ՚ի Մարիամ, յանդգնեցեալ ասեմ՝ Թէ իցէ ինչ մեծագոյն ՚ի վերայ երկրի, ընդ որում խոնարհութիւն չկարիցէ կալ։ Այո՛, և կարի իսկ քաջ մարթ է լինել խոնարհ ՚ի մեծութեան, որպէս և մարթ է լինել հպարտ ՚ի նուաստութեան։ Ոչ է հնար դոլ խոնարհ, և զաւագութեան թեկն ածել, պարծել ընդ աւագութիւն, և զամենայն գուն գործել առ ՚ի հասանել յաւագութիւն. այլ է հնար լինել խոնարհ և մեծ, զի մարթ է ըստ հրամանին Աստուծոյ լինել մեծ, և հրամանն Աստուծոյ ամենայն իւիք օգնիլ առ ՚ի կալ մընալ ՚ի խոնարհութեան։

Այս է ահա, ով սիրելի ունկնդիրք, զոր ես կոչեմ չնորհս կոչման, գոլ որ կայքդ յաչխարհ ՚ի պատուաւոր կայս, և աստուածախնամ տեսչութեան ամբարձեալ է զձեզ ՚ի վեր քան զհասարակաց պայման, ահա եթէ կամիք Ճանաչել զառաւելութիւնն յոր վայելէք, գտանել ՚ի խոնարհութեան զնորհուրդս զայս՝ որ յորդորէ զձեզ ՚ի սրբել զպայման ձեր, և ՚ի գտանել ՚ի պայմանի ձեր զոր ևս օգնութիւն առ ՚ի կայուցանել զնոնարհութիւն ձեր սրբագոյն և պատուականագոյն առաջի Աստուծոյ։ Ահա յայսմ է չնորհք Աստուծոյ առ ձեզ, զի տուեալ է ձեզ կարողութիւն լինելոյ խոնարհ հանդերձ արժանաւոր վաստակովք, և լինել մեծ առանց երկեք վտանգի։ Մի՛ ևս դիք, ազաչեմ, գաղտնեաց ողբմութեան իւրոյ. եթէ Թողեալ էր զձեզ Աստուած յապականութեան մեղաց, և ՚ի կամս ձեր, մեծութիւնդ այդ ձեր լինէր ողբալի, լինէր ձեզ ՚ի կորուստ, կուրացուցանէր զձեզ,

լինէր աղբիւր եղեռնութեանց, և յանկէր 'ի գառա-
պարտութիւն ձեր. իսկ եթէ ընդ հակառակն տայր ձեզ
Աստուած ծնանել 'ի փուշոջ և յանարգագոյն կեանս,
խոնարհութիւն ձեր լինէր սովորաբար բնական, անկա-
րողութիւն ամբառնալոյ 'ի վեր, կամ նուաստութիւն
սրտի՝ անարժան կոչելոյ խոնարհութիւն: Զինչ ապա
արար Աստուած. առանձինն իմն խնամով պահեաց զըզ-
ձեզ յերկոցունց և 'ի վտանգաց. ետ ձեզ աղնուա-
կանութիւն և պաշտօն և աւագութիւն, որպէս զի եթէ
խոնարհութեամբ և քրիստոնէապար վարեսջիք նոքօք,
լեցին ձեզ յառաքինութիւն. յաւել ձեզ և զքրիստո-
նէական խոնարհութիւն, որպէս զի աղնուականու-
թիւնդ այդ և պաշտօն և աւագութիւն մի խոտորեսցին
'ի մեծութիւն աշխարհային գաղջելի յայս Աստուծոյ:
Մեծութիւն միայն առանձին տայր ձեզ արդեօք երկըն-
չել, և խոնարհութիւն միայն ինքնուրոյն՝ ըստ իմաստից
ըզր ասացի՝ չկարէր ապահովել զձեզ. մին մատնէր զձեզ
'ի փորձութիւնս գրեթէ անյաղթելիս. միւսն՝ առանց
իսկ կերպարանաց բարւոյ լինէր կեղակարծ և երկդիմի.
աջակցութիւն երկոցունցն պարտի լինել ձեզ 'ի սիո-
փումն. զի խոնարհութիւն 'ի վտանգի մեծութեան՝ է
անվըսեմ գործ չնորհաց, և վաստակ արժանաւոր՝ յոր
կարէք վստահել. և մեծութիւն սրբեալ խոնարհու-
թեամբ, ոչ միայն ոչ ևս է որոգայթ, այլ և ինքն իսկ
եղանի փրկաւէտ: Զո՞ր սպաս ոչ կարէցէք նուաւ մա-
տուցանել Աստուծոյ, 'ի քանի՞ բարեգործութիւնս չկա-
րէցէք զայն 'ի կիր արկանել վասն Աստուծոյ. զո՞ր հարկ
ոչ ածիցէ ձեզ այն՝ լինելոյ իւրաքանչիւր ըստ իւրում
կարի՝ պաշտօնեայս և արս Աստուծոյ: Այդ մեծութիւն
հպատակ Աստուծոյ, 'ի վար արկեալ վասն Աստուծոյ,
ունայնացեալ բարեպաշտ խոնարհութեամբ առաջի Աս-
տուծոյ, զո՞ր տրիտուր փառաց ոչ ածիցէ, և զո՞ր դիւ-
րութիւն ոչ յաւելցէ ձեզ լինելոյ սուրբս, հանդերձ

ամենայնիւ որ ինչ էքդ: Ապաքէն գառաւոր արդար է
Աստուած, ասէ Առաքելապետն, որ ոչ ակն առնու է-
րեսաց, և ոչ խարէ ընդ մեծն և ընդ փոքր, Զի ու է պիտ-
ուրիւն առաջի Աստուծոյ. այլ պարտ է ասել՝ զի Աս-
տուած իբրև արդար գառաւոր, յեղանակաւ իմն առա-
ւել հատարի իւր պատիւ զբարեպաշտութիւն մեծամե-
ծաց քան զհասարակածին մարդկան. և ընդէր. — զի
բարեպաշտութիւն մեծամեծաց, գոլով անկեղծ և ճըշ-
մարիտ, հաստատագոյն ունի հիմն զխոնարհութիւն:
Արդ Աստուած, տիրապէս խօսելով, գառի զմեզ ըստ
առաւել և ըստ նուազ խոնարհութեան մերոյ. և եթէ
առաքինութեանց մերոց համեմատաբար առ մեզ էցէ
ինչ խոիր առաջի Աստուծոյ, ըստ չափոյ ևեթ խոնար-
հութեան մերոյ է: Այս է զոր ասէի ձեզ, զի Աստուած
արար զձեզ որ ինչ էքդ, և վասն այսորիկ պարտ է ձեզ
սիրել զխոնարհութիւն. մի համարիք զայն որպէս առա-
քինութիւն իմն դժպհի, որ զրկէ զձեզ յիրաւանց և 'ի
մեծութենէ, այլ որպէս առաքինութիւն իմն պատուա-
կան՝ որ սրբէ զմեծութիւն ձեր, և առնէ զայն արժանա-
ւոր առաջի Աստուծոյ: Ո՛վ խոնարհութիւն սուրբ, դու
յղացար զԲանն Աստուած, կամ մանաւանդ քեզ կոյսն
Մարիամ յղացաւ զնա յարգանդի, և քեզ պարտ է մեզ
ընդունել զնա յանձինս մեր: Տեսցուք արդ որպէս Մա-
րիամ հնազանդութեամբն իւրով եղև գործակից յղութեան
Աստուածորդւոյն, որ է երկրորդ մասն Ճառիս:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Յուցեալ էր Աստուծոյ յառաջագոյն, ո՛ հաւատա-
ցեալք, և հաւատացագոյն քան զամենայն նշանս խոստա-
ցեալ էր աշխարհի առհաւատչեայ լըման մեծի խորհըր-

դոյ փրկուԹեան մերոյ, ըստ Եսայեայ, յղանալ Կուսի և ծնանել որդի, ՄԱԼՈՒՄ կոյս, և որդւոյն գոլ Աստուած, ոչ օտար ՚ի մէնջ, այլ գեր ՚ի վերոյ քան զմեզ որպէս Աստուած, այլ Աստուած խոնարհեալ մինչև առ մեզ. և ԹէպԹա Աստուած, այլ կցորդեալ իսկապէս ընդ մեզ: Զի զայս նշանակէ անունն նորա Էմմանուէլ, որպէս յաւելոյր Աւետարանիչն. Ահա կոյս յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ Թարգմանի՝ Ընդ մեզ Աստուած: Այս սքանչելիք էին արդարև ՚ի վեր քան զամենայն օրէնս բնուԹեան. սակայն և յեղանակաւ էին պահէին զպատշաճս բնուԹեան. զի որպէս սուբըն ԲԹեռնարդեայ իմաստասիրէ, ԹԷԹ պարտ էր Աստուծոյ ՚ի մարդանալն ունել իւր մայր, էր ըստ պատշաճի փառաց իւրոց, վասն որոյ և հարկ էին լինել մօր իւրոյ կոյս. և ԹԷԹ կուսին անլուր և գերահրաշ աքանչելեօք պարտ էր ծնանել որդի ՄԱԼՈՒՄ կոյս, պատշաճ էր նմա և իւր հարկ անհրաժեշտ՝ զի որդին այն իցէ Աստուած: Պարտ էր Բանին Աստուծոյ ըստ անչափ մարդասիրուԹեան իւրոյ մեկնել ՚ի ծոցոյ Հօր, և ԹԷԹ օրէն իցէ ասել, յիւրմէ իսկ, զի լինի նմա կարելի ծնանել ըստ մարմնոյ այլ եդեալ զայս, որ այն իսկ է կոչեցեալն ՚ի մէնջ մարդեղուԹիւն, չէր մարԹ Բանին Աստուծոյ այլազգ ծնանել ըստ մարմնոյ՝ բայց ՚ի կուսէ: Եւ ընդ ՚ի. — զի այլ ամենայն եղանակ յղուԹեան և ծննդեան ստուերածս ածէր պայծառուԹեան և փառաց աստուածուԹեան իւրոյ:

Այս մտածուԹիւն սրբոյն ԲԹեռնարդոսի չգիտեմ որպիսի ինչ բերէ յինքեան վեհմուԹիւն. և ԹԷԹ սուղ ինչ ընդլայնեսջիք զայն, լցցէ վմիտս ձեր բարձր խմաստիւք կրօնից: Այլ առանց ինչ նուազելոյ զվեհմուԹիւն այսր մտածուԹեան՝ պարտ է յաւելուլ ինչ առաւել զգալի և կարևորագոյն յուղղուԹիւն վարուց մերոյ: Եւ զայս, ԹուԹ ինձ, սրբոյ Հոգւոյն աքանչելապէս նա-

խախնամեալ եղանակաւ կատարման խորհրդոյս. զոր ԹԷԹ քաջ քննիցէք, ազդեսցէ ՚ի ձեզ զամենայն յարգուԹիւն և մեծարանս և զսէր արժանաւոր առ գերազանց առաքինուԹիւնն՝ զորմէ արդ առաջի կայ ինձ խօսել, և է մաքրուԹիւնն քրիստոնէական: Ահաւասիկ, սիրելի ունկնդիրք, հաստատագոյն և գործովագոյն խրատ առայս. քաջ միտ դիք բանիդ Աւետարանին:

Աստուած յիւրմէ ամբաւ ողորմուԹենէ չարժեալ, առաքէ հրեշտակ ՚ի յերկիր, ոչ միայն աւետել, այլ և հաստատաւել զուարԹս նոր՝ զոր պատրաստէր գնել ընդ մարդկան: Եւ առ ո՞ առաքէ զհրեշտակ իւր. — առ կոյս մի. Առաքեցաւ հրեշտակ յԱստուծոյ առ կոյս: Արդ գիտէք, և է մտածուԹիւն սրբոյն ԲԹեռնարդեայ ՚ի վերայ երից անուանցս, կամ մանաւանդ անձանց, այս ինքն Հրեշտակապետին, Աստուծոյ, և Կուսին, զի Աստուած՝ որ է աղբիւր սրբուԹեան՝ ծնանի զՈրդի իւր ՚ի յաւիտենից, ամենասուրբ և գերամաքուր սրբուԹեամբ. վասն որոյ սուրբն Գրիգոր Նազիանզացի՝ ՚ի խօսելն զՀօրէն երկնաւորէ՝ կոչէ զինա կոյս ըստ առաւելազանցուԹեան, և առաջին կոյս: Գիտէք և՝ զի հրեշտակք հոգիք են սուրբք անհիւԹականք ամենևին, և զի այնոքիկ՝ որք կացին ՇԱՅՑԻՆ յարդարուԹեան և ՚ի սկզբնական սրբուԹեան, յորում ստեղծեալ էր զնոսա Աստուած, իմա զերանելի հրեշտակս, վայելէն միշտ յանարատ սրբուԹեան առաջի Աստուծոյ: Եւ գիտէք դարձեալ՝ զի կուսանք, ԹէպԹեև ՚ի մահկանացու մարմնի, ուխտիւն սուրբ կուսուԹեան, են որպէս հրեշտակք ՚ի վերայ երկրի. են էրբ ՀրեշտակՀ ՀԵՐԻՒՆ: Արդ Աստուած՝ որ առաքէ զհրեշտակապետն, հրեշտակապետն՝ որ առաքի, և Մարիամ՝ առ որ առաքի, զանաշանեալք բնուԹեամբ, այլ կատարեալք սրբուԹեամբ ըստ իւրաքանչիւր բնուԹեան, միաբանին առ այս խորհուրդ: Եւ զինչ ասեմ զՀետ բերեմ. — զայն՝ զի սուրբ Հոգին ԹուԹ չայտ առնել մեզ, զի Աստուած

գոլով յինքենէ հապէս սրբութիւն, պարտ էր՝ զի կամ սրբութիւն հրեշտակային և կամ հուսական, կամ մանաւանդ երկոքեան ՚ի միասին յօրինէին ընդ Աստուած և ընդ մարդիկ զայս անձառելի և երկրպագելի միաւորութիւն՝ որ կատարեցաւ ՚ի Բանն մարմին եղեալ: Եւ յառաջ ևս ածեալ զբանս իւր սուրբն Բեռնարդոս, ասէ. Ո՞ր յերկուց աստի սրբութեանց, հրեշտակայինն թէ հուսական, առաւել եղև մանկիկ յայսմ խորհրդեան, և զո՞ր յերկոցունց առաւել մեծարեաց Աստուած: Ո՛հ, պատասխանի տայ սուրբ վարդապետն, ինչո՞ւ երկբայել ընդ այն՝ յետ օրինակին, զոր Աստուած փառաց տայ մեզ այսօր զայնմանէ, այս ինքն յետ բարձր գերազանցութեան՝ զոր տայ այսօր հուսական մաքրութեան քան հրեշտակայնոյն: Ասիցէք. յորո՞մ մասին ինչ գերազանցութիւնս այս. — ահաւասիկ. Բանն Աստուած ՚ի խորհուրդն մարգեղութեան ընտրէ զկոյսն ՚ի մայր, և առաքէ առ նա զհրեշտակապետն պատգամաւոր. ուրեմն այնչափ է Կոյսն ՚ի վեր քան զհրեշտակն, որչափ անուն մօր՝ զոր ընկալաւ՝ քան զպաշտօնեայն և սպասաւորի. և օրէն է ինձ աստ ասել ըստ բանից Առաքելոյն. Այնչափ առաւել եղեալ ֆան վերեցաւոյ, որչափ լաս Նս ֆան պնոսա անան ֆառանգեաց:

Աստուած որ մերձ ահա կայր եղանիկ մարդ, հարկ արար հրեշտակապետին խոնարհիլ առաջի Կուսին, և ինքն իսկ՝ Աստուած գոլով, կամեցեալ կանխել մեծարել զնա իբրև զհանդերձեալ մայր իւր, սկսանի յեղանակաւ ինն հպատակել նմա. զի ՚ի կարևորագոյնն յայն գործ ինդրէ զհաւանութիւնն նորա: Մի՛ ինչ զարմանք թուիցեն, յաւելու սուրբն Բեռնարդոս. զի մաքրութեան Կուսին էին արդարև այնքան արժանիք, զի պատուական և արժանաւոր քան զհրեշտակս զնա կացուցանէին առաջի Աստուծոյ: Հրեշտակապետն, որ ողջունէրն զՄարիամ, սուրբ էր ապաքէն. այլ ո՞րպէս. — ՚ի բնութենէ

և առաւելութեամբ երանութեան և փառաց. իսկ Մարիամ ընտրութեամբ, ուխտիւ և կրօնիւք: Կուսութիւն Մարիամու էր օրպէս պատարագ հանապազորդ՝ զոր մատուցանէր Աստուծոյ. էր ողջակէզ մարմնոյ իւրոյ, զոր ջենոյր որպէս ջոհ կենդանի և հաճոյ Աստուծոյ. էր նուիրումն անձին, որ լինելոց էր տաճար և բնակարան Աստուծոյ իւրոյ: Տեսեք քանի զգուշութեամբ և խոհականութեամբ պահպանէր զդանձ կուսութեանն. զարմացարուք ընդ անյողդողդ հաստատութիւնն՝ ըստ ՚ի պահել զայն անկորուստ: Կրկին պարտք կուսանաց քրիստոնէից, որոց կամ Աստուած՝ զի լիցի Մարիամ օրինակ ՚ի սերկեան աւուր: Լուարուք ինձ, և ուսարուք: Երևի նմա հրեշտակապետն, նա խոովի. և այն ինչ սկսանի հրեշտակապետն խօսել առ նա, երկնչի նա, և յուզին ՚ի միտս նորա խորհուրդք. Ե՛ն նա ընդ բանն խոովեցաւ, և խորհէր ընդ [illegible] որպիսի՞ ինչ իցէ ողջոյն այս: Եթէ էր Մարիամ օրպէս զաշխարհասէրս, որք ըստ մարմնոյ ևեթ են կուսանք, և ոչ հոգեպէս, այցելութիւնս այս՝ զոր ընդունէր նա՝ չածէր նմա զարմանս, և գովութիւնք՝ զորս լսէր, փոխանակ խոովելոյ զնա, հաճոյ թուէին նմա: Այլ ուրեմն կուսութեան նորա, վասն որոյ ոչ էր սովոր խօսել ընդ ումեք առանձինն, բայց միայն ընդ Աստուծոյ, օրէնք՝ զոր եդեալ էր անձին, և պահէր միշտ, խուսեալոյ ՚ի կենակցութենէ, և հրաժարեալոյ ՚ի բարուց և ՚ի սովորութենից աշխարհի, ձիշդ և խիստ կարգ կենաց, զգուշութիւն չպակասելոյ ՚ի գոյն իսկ պատշաճից, գնացք անստգիւտ յերեսաց խստագոյն պարսաւագիտաց, պատկառանք և պարկեշտութիւն եղեալ նմա առաւել քան զգնութիւն, և կարծիք ՚ի միտս նորա հաստատեալ՝ զի գովութիւնք տուեալք առ տկար բնութիւնն և մտագիւր ընկալեալք, և գովութիւնք իսկ ակամայ և անխոով լուեալք, են չարաթոյնք ապականիչք և մահաբերք, այս ամենայն յուզէ ՚ի նա

խռովութիւն այնպիսի՝ զի ոչ ամօթ համարի երևեցուցանել զայն յանձին, զի այս խռովութիւն նկարագրոյմ է կուսի հաւատարմի առ Աստուած: Այս է խոհեմութիւն նորա և զգուշութիւն. յաւել՝ի սոյն և զանդրդուելի հաստատութիւն նորա. յայտ առնէ նմա հրեշտակապետն զի ծնանելոց էր որդի՝ Թագաւոր յաւիտենական, սուրբ սրբոց, որդի Բարձրելոյն, վիրկիւ աշխարհի. իսկ նա հարցանէ՝ Թէ ՛ոպիսի էր այն հնարաւոր, զի ինքն կոյս էր, և կոյս նուիրեալ Աստուծոյ ուխտիւ. և յաւխտէ անտի ոչ աստուածամայրութիւն, և ոչ գլխոյութիւն երկնի և երկրի կարելին տալ նմա հրաժարել. Զի՞րդ լինիցի ինչ այդ, ասէ ցայնմ գիտեմ: Ո՛վ Մարիամ, գոչէ աստանօր սուրբն Օգոստինոս, վասն այդորիկ է հնարաւոր, վասն զի դու ոչ լինիս հասու՝ Թէ զինչ՞րդ լինիցի քեզ այդ: ԵԹէ հասու լինիցիր դու այդմ որպէս զայլս, ոչ կարիցիր լինել առաջի Աստուծոյ՝ որպիսի ինքն կամիր Թէ էիր: Չարիք էր զի կուսութիւն քո յայնմ պահու առնէր զքեզ որպէս Թէ Թերահաւատ, հարիք էր զի առաքելութիւնն այն լինելոյ քեզ մայր Տեառն քո՝ ապիկար զքեզ ՛ի սկզբան և խռովէր, որպէս զի լինիցիր արժանի աստուածամայրութեան:

Զի արդարև հրաժարել նորա յաստուածամայրութենէ քան ՛ի կուսութենէ, ուստի կուսութեան՝ յորում եկաց հաստատուն, և անսասանելի ՛ի բանից իսկ հրեշտակապետին՝ որ խոստանայր նմա լինել մայր Աստուծոյ, որպէս սուրբն Ղերոնիմոս հաստատէ, հաճոյ Թուեցաւ Աստուծոյ ՛ի Մարիամ, և այսուհիկ Մարիամ քան զամենայն կուսանս պատուեալ ընտրեցաւ Աստուծոյ: Արդ զի՞նչ ասասի զհետ գայ վասն ձեր, ո՛ հաւատացեալք. — քաջալերութիւն այնպիսի, որ Թուեսցի ձեզ զարմանալի: Գիտէք իսկ դուք ուստի յառաջ եկն ջրհեղեղն սիեղերական, որ ծածկեաց զամենայն երկիր: Աստուած ՛ի բարկութեան իւրում վասն ապա-

կանութեան ազգի մարդկան երդուեալ էր բառնալ զկոտիւ իւր ՛ի մարդկանէ մարմին եղելոց. Մի՛ ճաւոյն ոգի իմ ՛ի մարդկանդ յայտնի վասն լինելոյ դուցա մարմին: Այլ այսօր, որպէս սուրբն Օգոստինոս խմաստասիրէ, կոչէ Աստուած ձեռս, եԹէ այսպէս օրէն իցէ ասել, զգաստակիք իւր. և այլով ինն երդմամբ, ընդ հակառակն յերկնման՝ այլ կարի իսկ միաբան առաջնումն, վճռէ՝ զի Հոգի իւր սուրբ հեղցի ՛ի Մարիամ, և ՛ի նմանէ ծաւալեսցի յամենայն մարդիկ: Եւ ընդ՛ը. — զի յանձին Մարիամու գադարեաց մարդ ՛ի լինելոյ մարմին. իմա՝ զի Մարիամ էր կոյս, և կոյս ուխտիւ՝ որ ամբարձեալ զնա գեր ՛ի վերոյ մարդկան, կացուցանէր զնա ընդունակ բարձրագոյն շնորհացն Աստուծոյ և լինելոյ Հոգւոյն սրբոյ. Հոգին սուրբ եկեսցէ ՛ի քեզ՝ ի ստեղծման աշխարհի Հոգի Աստուծոյ էր պարզաբար հաղորդել ՛ի մարդ վասն գոլոյ նորա անմեղ և չէ ևս մեղուցեալ. իսկ ՛ի մարդեղութեան՝ նոյն Հոգի ըստ բանի սուրբ գրոց եկն ՛ի Մարիամ, այլ առաւելութեամբ և առատութեամբ, և զեղմամբ պարգևաց և շնորհաց առանց չափոյ, վասն կուսական մաքրութեան նորա:

Եւ ոչ այսչափ միայն. կամի Աստուած՝ զի Մարիամ վասն կուսութեանն, ոչ միայն լցցի Հոգւով սրբով, այլ և զի կուսութեամն ետ հրաժեշտ անգարձ մարմնոյ և արեան, նոյն ինքն Աստուած ՛ի ձեռն կուսին եղ ընդ մարմնոյ մերում դաշն յաւիտենական, կամ մանաւանդ եղև մարմին. զի սովին բառիւ վարի Աւետարանիչն ՛ի բացատրել զսքանչելիս մարդեղութեան Բանին Աստուծոյ. Եւ Բանն մարմին եղև: Եւ ոչ չատ համարեցաւ սուրբ Աւաքեաղն ասել՝ Բանն մարմին եղև, ասել՝ միացաւ ընդ բանաւոր բնութեան, ասել՝ զի Հաւ Հոգի անմահ, այլ յեղանակաւ լինն համառօտեաց զայս ամենայն խորհուրդ յերանելի որդեգրութենէն, յոր Բանն Աստուած ամբարձ զմարմին մեր յարգանդի Կուսին. Եւ Բանն մարմին

էր: Ո՛վ Տէր, կարելի՛ ինչ է՝ զի կուսութեան լեալ իցէ այսքան կարողութիւն ՚ի վերայ քո, և զի ամենամեծդ Աստուած և ամենևին կատարեալ և ամենասուրբ, վասն այնորիկ լեալ իցէ մարմին: Այո՛, ո՛ հաւատացեալք, զայս այսպէս ուսուցանեն մեզ հաւատք. Աստուածորդին մարդեղութեամբն իւրով աղնուացոյց զմարդ յանձին իւրում, մանաւանդ զմարմին մարդկեղէն՝ հրաշալի փառ կցորդութեամբք, ՚ի ձեռն մարմնաւորութեան, ՚ի մէջ իւր և մեր: Զի ըստ մարմնոյ է եղբայր մեր, ըստ մարմնոյ եմք ընդ նմա մարմին մի, ըստ մարմնոյ է ինքն դլուխ մեր, և մեք անդամք իւր. Ո՞ է գէթ էրէ մարդի՛ չէր անդամ է՞ն Քրիստոսի, ասէ Առաքեալն, և յաւելու. Ո՞չ գիտէք, եղբարք, և անգիտանալ իսկ կարեցէք, զի որով հաձեցաւ Աստուած նման մեղումն առնուլ մարմին, մարմինք մեր հրաշալի փոփոխմամբ՝ զի այսպէս ասացից՝ ոչ ևս են մարմինք մեր, այլ Քրիստոսի. ո՞չ ընդ առաջին հրահանգս քրիստոնէութեան ուսարուք՝ զի միացեալ ընդ Քրիստոսի, և զի մարմին Քրիստոսի էք. Այլ դո՛ր մարմին Քրիստոսի է, և անդամ յանդամոց նորա: Այսուհետև պարտ իցէ զարմանալ՝ զի իրաւունս իւր համարի Աստուած քեալն պահանջել ՚ի քրիստոնէից սրբութիւն վարուց, և զի առաւել քան զամենայն ինչ այն իցէ նմա ցանկալի՝ զի սրբեսցեն քրիստոնեայք զմարմինս իւրեանց: Ըստ այսցիկ հրահանգաց հաւատոյ, ղորս բացատրեցեալ, կարի՛ ինչ պահանջիցէ Աստուածն. կցորդեալք այսպէս ընդ Քրիստոսի, չիցեմք պարտականք լինել մաքուրք և սուրբք. և զի մարմինք մեր են մարմին Քրիստոսի, իչխիցեմք դժկամակել ընդ խնամս և ընդ բարեկարգութիւն՝ ընդ որովք արկանէն զմեզ կրօնք մեր, որպէս թէ իցէ այս առաւելագոյնց կատարելութիւն: Կամիցիմք լինել չէի, ոչ եղբարք միայն՝ այլ և մարմին Աստուածորդւոյն, և զի սուրբ միաւորութեանս այսորիկ չիցեն այլ ինչ արգասիք՝ բայց ամբառնալ զայն ՚ի պատիւ այսպիսի գեր-

ամբարձ, առ ՚ի լինել անարժան այնմ ՚ի յաւիտեան: Ցետ այսր ամենայնի օտարացուցիչ տակաւին թուիցի մեզ, զի Հարք եկեղեցւոյ՝ ՚ի Ճառէն զանմաքրութենէ՝ որ ապականէ արդ զքրիստոնէութիւն, սոսկայցեն յայնմանէ. զի մեղք այս՝ անարգելով զմարմին մեր՝ անարգէ զմարմին Քրիստոսի: Արժա՛ն իցէ մեզ զարմանալ, զի մեղք այս վասն մարմնաւորութեան Լեթ Բանին Աստուծոյ՝ երևեալ իցէ նոցա ծանրագոյն յոյժ քան զլինելն ընդդէմ աստուածային օրինաց, և զի սուրբք եկեղեցի անդասին ՚ի սկզբանէ խիստ և աստիկ լեալ իցէ ՚ի պատուհասել զայն, հաստատեալ զի ՚ի պատուհասէն զայն՝ խնդրեր զվրէժ Թշնամանաց փեսային իւրոյ Քրիստոսի: Առաւել էր ներելի, ասէ Տերտուղիանոս, յառաջքան զմարմնաւորութիւնն Քրիստոսի, ապականել մարդոյ և աղտեղել զմարմին իւր եղեռնութեամբք. զի չէ էր ընկալեալ զփառս միաւորութեան ընդ Աստուծոյ, չէ էր լեալ մարմնակից Բանին Աստուծոյ. չէ էր ընկալեալ զօծութիւն Հոգւոյն, որով ունէր միանալ իսկապէս ընդ Աստուծոյ: Այլ յորմէհետէ Որդին Աստուծոյ աղնուացոյց զայն, և գերահրաշ սքանչելութեամբ արար մարմին իւր զայն, յորմէհետէ մարմինս այս եղև Քրիստոսի, յորմէհետէ մարմինս այս յանձին նորա եղև կերպարանափոխ, ա՛հ եղբարք իմ, կնքէր նա, մի՛ ևս համարեսցուք պարզապէս մեղս տկարութեան զանկարգութիւնս զայսոսիկ. Թէպէտ և մարմին է, մի՛ ևս անբասիր արասցուք զդիւրագայթութիւն իւր. զի տկարութիւնն այն և դիւրագայթութիւն Թշնամանք են մարդեղութեան Աստուծոյ մերոյ: Ո՛չ զարմանամ, ո՛ հաւատացեալք, զի այսպէս խօսի Տերտուղիանոս. զի անցանէ նա երբեմն ըստ չափ ՚ի հրահանգս բարոյականին, և առաւանայ ՚ի բանս իւր. այլ ՚ի մասինս յայսմիկ ՚ի ստորև մնայ Աշմարտութեան. զի չասէ ինչ՝ որով մերձ մտիցէ բանից Առաքելոյն: Զի սուրբն Պօղոս, յետ հաստատելոյ զի ՚ի ձեռն խորհրդոյ

մարդեղութեան ամենայն մարգիկ, և ոչ միով պակաս, եղեալ են անդամք Քրիստոսի, ոչ ևս երկբայել յառաջ ածել ասել զսուրբ կինէն բանիցն, յորմէ պարտ է ա- մենայն մարմնաւորեցեալ անձին զդողանի հարկանել, զի ասէ. Աչք առեալ զնդամս Քրիստոսի, առնիցեմ անդամս պոռնկի: Եթէ այլ ոք էր, և ոչ սուրբն Պօղոս՝ որ այսպէս խօսէր, ոչ կարէաք հաստատ լինել բանիցն. և պատկառանաք, որով պաճուճեմք ի մէջ անկարգութեանց և հեղեղաց ապա- կանութեան բարուց յորում կեամբս, դարչնի առ- նէին մեզ զՔրիստոնեայս այսքան կարևորս. այլ եթէ հոգի հաւատոց չարժէ զմեզ և ապաքինորդ մեզ, զոր արհա- մարհս ոչ ազգեսցէ ի մեզ այս կինէք բանից, զոր սոսկումն ոչ ածիցէ ի մեզանց՝ զորս հերքեմ: Եւ եթէ գերի լեալ եմք այնմ, զոր ցաստումն չկոչեմ մեզ պարտ ընդդէմ մեր բերել. Աւետ զնդամս Քրիստոսի, առնիցեմ անդամս պոռնկի: Այս աւետ մտածութիւն չկոչէ յաղթահարիչ մտաց քան զամենայն քարոզութիւնս, և եթէ կոչ ի մեզ դոյզն ինչ նշխար կրօնից, կոչէն ինչ մեզ պէտք այլոց իրիք առ ի պահել զմեզ ի բռնութենէ անմաքուր ախտից:

Այսիցէք՝ թէ ուրեմն մարդեղութեամբ Բանին Աս- տուծոյ՝ մեզք մեր գարշելի և ատելեաց և աննեղելի, քան զոր կինն ի բնէ: Այո՛, պատասխանի տայ սուրբ Ոսկեբերանն, զհետ գայ այդ, և պարտի գալ զհետ. և եմք մեք յետ խորհրդոյս եղեռնաւորագոյնք, քան եթէ կացեալ ձնա- ցեալ էաք յառաջին ապականութեանս մերում. անժըխ- տելի և կարի իսկ ճշմարիտ է: Այսպա ուրեմն մարդեղու- թիւն Աստուածորդւոյն զնաւակիս լինի մեզ յանկանել մերում ի մեզս անժուժկալութեան: Զայս գիրք սուրբք հաստատեն: Աւաղ, ո՛ հաւատացեալք, և կոչէն ի միջի ձերում այնպիսի ապաշնորհք, և այնպիսի անզգայք և բախտեայն Աստուածոյ, մինչև ցանկալ զնա Աստուծոյ չէր այնչափ զինքեանս պատուական. կարիցէ ամպարշտութիւն նոցա ցայնակայր հասանել, զի եթէ էր նոցա ընտիր առ-

նել ընդ մին և ընդ միւս, թերևս հրաժարէին ի փառաց լինելոյ Քրիստոսի՝ եթէ միայն մարթ էր նոցա յագեցու- ցանել անպատուհաս զանկարգ ցանկութիւնս իւրեանց, և զերծանել ի պարտուց բարեկարգ կենաց, զոր խոր- հուրդս այս գնէ ի վերայ նոցա: Այլ ոչ ի կամս նոցա է, և ոչ մեր, այսմ այսպէս լինելոյ. ոչ ևս ի կամս Քրիստոսի է դագարել ի լինելոյ որ ինչ է վասն մեր. լեցուք անկարգք որչափ և կամիմք, այլ լեցուք միշտ եղ- բարք իւր ըստ մարմնոյ, մինչև ի գժոխս իսկ՝ եթէ դա- տապարտեացուք յԱստուծոյ, բերցուք յանձինս զդրոշմ նորա, և անկարգութիւնք մարմնոյ զհետ իւրեանց ձգ- գեսցեն յաւիտեան ընդդէմ կամաց մերոց զյաւելուած դատապարտութեան մերոյ:

Թերևս անկարգութիւնքս այսոքիկ վաղ իսկ չկոչ- ցեալ էցեն ի նոսա, վասն որոյ խօսիմն, զվառեալ լոյս հաւատոյ, և աղօտ լիմն հաւատան ի մարդեղութիւն Աստուածորդւոյն. զի՝ որպէս մարթ էցէ հաւատալ յայն, և հանապազորդել ի պղծութիւնս: Սակայն կամ հաւատամք յայն, և կամ ոչ. եթէ կեամք ի պղծու- թիւնս, պատնեմք մեզ զխորհուրդս զայս՝ որ ըստ գերա- զանցութեան է խորհուրդ փրկութեան մերոյ՝ խոր- հուրդ դատապարտութեան. իսկ եթէ ոչ հաւատամք, արդէն հատեալ է վճիռ մեր, այժմէն դատապարտեալ եմք. Որ ոչ հաւատայ ի նա, արդէն իսկ դատապարտեալ է: Եթէ հաւատամք, զանձինս դատիմք, և մեզէն զմեզ դատա- պարտեմք: Եթէ ոչ հաւատամք, չկոչ փրկիչ վասն մեր. իսկ եթէ հաւատամք, դոյ իսկ, այլ յամօթ մեր: Յուշ լիցի մեզ, ո՛ հաւատացեալք, զի Աստուածորդին մարդա- ցեալ, ըստ պատգամաց Ծերունւոյն Սիմէոնի, է ի դա- տապարտութիւն ոմանց, և այլոց ի յարութիւն. Ահա սա կայ ի գլորումն և ի կանգնումն բազմաց: Մարդացաւ առ ի փրկել զմեզ. այլ եթէ զեղծանիցեմք չնորհօք նորա, մար- դեղութիւն իւր լիցի մեզ ի կորուստ: Արդ եթէ նա մե-

պաւորաց ոմանց լինելոց է՝ի կորուստ, որպէս սուրբ Աւետարանն հաստատէ, յորմէ վերայ պարտ է համարել թէ անկցին անէծքս այս, բայց՝ի վերայ քրիստոնէից ոմանց պղծոց և հեշտասիրաց անզեղջից յամառելոց՝ի մեղս։ Ո՛վ Տէր, մի՛ Թողուր՝ զի պատգամս այս աղետաւոր արդիւնասցի՝ի մեզ, և վաստակք մահկանացու կենաց քոց՝ որք ըստ ամբաւ ողորմութեան քո սահմանեալ են՝ի փրկութիւն մեր՝ լինին՝ի յաւիտենական գատապարտութիւն մեր, պատուհասիւ ահաւոր արդարութեան քո։ Եւ դու, ամենասուրբ և անարատ Կոյս, հըզօր բարեխօս մեր և մայր, զի ես մայր Քրիստոսի՝ զոր ետուր մեզ Փրկիչ, զոր կրեցեր՝ի կուսական արգանդի քում, զեկեալն՝ի փրկութիւն մեր, հաս մեզ յօգնութիւն առ՝ի վայելել մեզ՝ի բազմազեղ արգասիս վաստակոց նորա. որպէս զի՝ի ձեռն շնորհաց, որոց լինքն է աղբիւր միածին որդի քո, և դու լինքն ես բաշխող, կարասցուք հասանել՝ի յաւիտենական երանութիւնն, ուր ուրմ արժանի արասցէ զմեզ և այլն։

ՀՕՐՆ ՊՈՒՐՏԱԼՈՒԻ

ԴԱՐՁԵԱԼ

ՅԱԿՆՏՈՒՄՆ ՍՐԲՈՑ ԿՈՒՍԻՆ

Եւ Բանն մարմին եղև, և բնակեաց՝ի մեզ։

Յհ. Ա. 14։

Տէր ալքայ, խորհուրդ, զոր տօնեմք այսօր, է խորհուրդ մեծ՝ յոր հաստատեալ է բովանդակ քրիստոնէական կրօնք, զորմէ Աւաքեան այնպիսի բարձր բանիւք բարբառի, և կոչէ զայն ըստ գերազանցութեան խորհուրդ մեծ բարութեան և մարդասիրութեանն Աստուծոյ. Եւ յայնի իսկ մէնջ է խորհուրդն ապաւինութեան, որ երեւեցաւ մարմնով՝ Բանն մարմին եղև. ահաւասիկ, ասէ սուրբն Օգոստինոս, որ լինչ անհաւատալին Թուէր. այլ էր ևս լինչ առաւել անհաւատալի, զի խորհուրդս այս Թէպէտ և անհաւատալի՝ սակայն լինի հաւատարիմ աշխարհի. և այս ևս եւ՚ի գլուխս։ Ձերկուց աստի անհաւատալն երից՝ այն որ առաւել էր անհաւատալի, գադարեաց՝ի լինելոյ այնպիսի, և եղև ոչ միայն հաւատարիմ, այլ և հաւատալի. քանզի քաջայայտ է՝ զի խորհուրդ մարդեղութեանն Աստուծոյ քարոզեցաւ հեթանոսաց, և զի հա-

ատաց աշխարհ. Խորհուրդն ապաստաձպաշտութեան փարոշէ-
ցաւ ՚ի հեթանոսս, հաւատարիմ եղեալ յաւիտեան: Յաւել զայս Ա-
ռաքելոյն՝ նախատացուածն էր, որ դեռևս սկսանէր
գալ յարգիւնս. իսկ մեք տեսանեմք զայն լիով կատա-
րեալ: Աչխարհ եղեալ քրիստոնեայ՝ հաւատաց ՚ի մար-
մնացեալն Աստուած, հրաշագործելովն Աստուծոյ, և
մեք տեսանեմք զայն. ՚ի Տեառնէ եղեւ այս, ըստ Սաղմո-
սերգուին, և է սքանչելի յաչս մեր: Արդ խելամուտ եղեալ
մեր առաւել անհաւատալոյն, ընդէ՞ր իցէ մեզ չհաւա-
տալ այնմ՝ որ նուազ է չհաւատալի: Զայս այսպէս ի-
մաստասիրէ սուրբն Օգոստինոս. և ոչ այսչափ միայն,
այլ Բանն մարմին եղև, եւ բնակեաց ՚ի մեզ: Ընդէ՞ր. — առ
՚ի հրահանգել զմեզ օրինակաւ իւրով, և առ ՚ի սրբել
վարգապետութեամբն: Ահաւասիկ, ասէ սուրբ Առա-
քեալն, մի ՚ի գլխաւոր կիսից մարգեղութեան. Քանզի
երեքեցաւ ընդին Աստուծոյ էրնէ ամենայն մարդիկ, որ երթային
գնել: Լուարուք արդ, սիրելք ունկնդիրք. Բանն անակնկալ
մարդացեալ, նա ինքն է՝ որ ինև խօսի արդ առ ձեզ. և
առ ՚ի մատուցանել նմա ըստ արժանւոյն զայս սուրբ
ապաստարութիւն, կարօտիմ լուսաւորութեան և շնոր-
հաց սուրբ Հոգւոյն, որով լցաւ սուրբ Կոյսն. խնդրես-
ցուք զայն բարեխօսութեամբ նորին՝ ասելով ընդ հրեշ-
տակին Ողջոյն ձեզ Մարիամ:

Սուրբ Աւետարանիչն, առ ՚ի տալ ճշդիւս զհիմաս
սերկեան խորհրդոյս, ոչ վայրապար բովանդակեաց
զայն յերիս յայսոսիկ հոգեշունչ բառս. Բանն մարմին եղև:
Սուրբ Առաքեալն արդեւղոյր երբեմն պաշտօնեից եկե-
ղեցւոյ, մի վարգապետել առ հաւատացեալս զազգա-
կցութեանց՝ խնդիրս անօգուտս համարելով զայնոսիկ,
զի ոչ առ այլ ինչ օգնէին՝ բայց ՚ի գրգռել վէճս, և ոչ
՚ի շինութիւն բարուց: Զայս այսպէս գրէր առ Տիմո-
թէոս. այլ ոչ նոյն բանք են, ո՛ հաւատացեալք, զազ-
գակցութենէ Բանին ընդ մարմնոյ, և մարմնոյ ընդ Բա-

նին, զորմէ աստանօր առաջի կայ ինձ ճառել. զի սուրբ
է ազգակցութիւնս այս, և կարևոր է ձեզ ճանաչել
զայս, և ոչ օրէն է ձեզ անգիտանալ զայն. ազգակցու-
թիւն յոր պարտ է ձեզ խնամոել և հաւատալ. ազ-
գակցութի՛ւն՝ որ ուսուցանէ ձեզ գերահրաշ կանոնս
յաղաղութիւն վարուց: Արդ երիս կանոնս գտանեմ
յերկրպագելի խորհրդեանս մարդեղութեան, և են այ-
սոքիկ. ազգակցութիւն Կուսին ընդ մարմնոյ՝ հայեց-
մամբ առ Քրիստոս. ազգակցութիւն Բանին ընդ մարմնոյ՝
հայեցմամբ առ սուրբ Կոյսն մայր իւր. և ազգակցու-
թիւն Բանին ընդ մարմնոյ՝ հայեցմամբ առ մեզ, որ եղ-
բարք իւր եղաք: Ազգակցութի՛ւնք, զորս առաջի առնեմ
ձեզ, կարի՞ յոյժ կարևորք են առ ՚ի շարժել զսիրտս
ձեր, առ ՚ի յորդորել ՚ի գործ, առ ՚ի սրբել զձեզ, և
առ ՚ի յարգարել կատարեալ քրիստոնեայս, եթէ կա-
միցէք զօգուտ ձեր հայթայթել: Եւ որպէս զի կարիցէք
քաղ ՚ի միտ առնուլ, զանազանեմ ասպիճանս յերեսին
յայսոսիկ ազգակցութիւնս, որ ամբառնան զմարմին
մարդկեղէն յանձին Քրիստոսի մինչև ՚ի գերակայու-
թիւն աստուածայնին. յանձինն Մարիամայ՝ մինչև ՚ի
վսեմ բարձրութիւն աստուածամայրութեան. և յան-
ձինս մեր՝ մինչև ՚ի պատիւ որդեդրութեան Աստուծոյ: Ըստ
այսմ օրինակի, պահելով զարժանին համեմատութիւն
Քրիստոսի ընդ Մարիամայ, և Մարիամայ ընդ մեզ, այս
խորհուրդ մարդեղութեան Բանին ցուցանէ մեզ այսօր
երիս մեծամեծ սքանչելիս: Քրիստոս Աստուած և մարդ,
եղիցի առաջին մասն ճառիս. Մարիամ Աստուածամայր,
երկրորդ մասն. իսկ մեք, որք ոմանք և իցեմք, մաս-
նաւանդ եթէ իցեմք ՚ի շնորհս, և արժանաւորք լինելոյ որ-
դիք Աստուծոյ, երրորդ մասն: Տեսանիցեք երիս հե-
տեւեալս գործնականս՝ զորս յայսցանէ զհետ բերից, որք
ոչ միայն հաստատեսցեն զձեզ ՚ի հաւատս, այլ և ուսուս-
ցեն ձեզ ընդ արժանապէս զսրբազնագոյն պարտս
քրիստոնէութեան:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ճշմարտիւ ուրեմն ամբարձաւ, ո՛ հաւատացեալք, մարմին մարդկեղէն յանձին Քրիստոսի մինչև յաստուածապետութիւն, և զայս իմանայր սուրբ Հոգին ազդել առելով. Բանն մարմին եղև: Հետազօտել թէ ո՞րպէս և ընդէր եղեն սքանչելիքս, հաւատար է եղծանելոյ զայն, ասէ սուրբն Օգոստինոս. հաւատի գոլով՝ զի մարդեղութիւն Բանին ոչ ևս լինէր գործ Աստուծոյ ըստ գերազանցութեան, եթէ էր որպէսն գիտելի. և ոչ ևս լինէր գերահրաշ, եթէ ՚ի կարգի բնութեան և շնորհաց գոնէր երբեք օրինակ նորին: Ուստովանիմ զի Մարիամ ՚ի պահու յայտարարութեան հեշտակապետին, եհարց. Ջիա՞րդ լիներ ինչ այդ: Այլ սուրբն Ոսկեբերան բարւոք ազդ առնէ, զի հարցուածն այն յառաջ գայր ՚ի խորին և ՚ի պատկառելի զարմանաց, և ոչ ՚ի յանդուգն և յունայն հետաքրքրութենէ. և զի դարձեալ կամէր Կոյսն գիտել՝ թէ Աշմարտիւ յերկնից էր պատգամն: Ոչ թերահաւատութեան էր հարցուածն, այլ զգուշութեան և սքրտեռանդն սիրոյ կուսութեան՝ զոր ուխտիւ յանձն առեալ էր:

Որպէս ինչ և իցէ, ահա սքանչելիքն՝ զոր սերկեան ոճոն առաջի առնէ մեզ, և զորմէ առաջի կայ ինձ ճառել: Ի յանցանս ինձ համարիմ, և թերանալ ՚ի պարտուց պաշտամանս, եթէ ոչ ջանացայց առաւել քան զամենայն ինչ բացատրել այսօր զայս գլխաւոր մասն հաւատոց. զի այս են սքանչելիքն՝ զոր յայտնեն մեզ հաւատք. Աստուած մարգացեալ, Աստուած և մարդ, մինչև կարել մեզ ասել յատուկ և բնական իմաստիւ մարմնացեալ զԱստուած. Եւ Բանն մարմին եղև: Ուստի զհետ գայ հարկաւ, զի մարմին մարդոյ յանձին Քրիստոսի՝ է Աշմարտապէս մարմին Աստուծոյ, և զի յերանելի վայրկենին՝ յորում յղացաւ մարմինն այն կուսական, թէպէտ և մարմին՝ գոլաւ օծեալ յԱստուծոյ, և բնակեաց ՚ի նմա ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս, ըստ Առաքելոյն. և զի միացաւ ընդ Բանին Աստուծոյ անբաժանելի, ոչ ունելով՝ ըստ լեզուի աստուածաբանից՝ այլ գոյաւորութիւն՝ բայց միայն զԲանին Աստուծոյ: Զի յընդունելն զգոյութիւն՝ ժառանգեաց անդէն զամենայն վառս Աստուծոյ, և Որդին Աստուծոյ կալցի զայն ընդ ամենայն յաւիտեանս ՚ի մարմին իւր, սրբեալ յիւրմէ և կազմեալ: Զի այսպէս խօսեցան զայնմանէ Հարք բակ. և պատգութեան իսկ եկեղեցւոյ չէր արդեօք սիրացուցեալ զբանս նոցա, եթէ չէին նուազ քան զզօրութիւն և զազդուութիւն բանի Աւետարանչին՝ Բանն մարմին եղև: Յայնժամ, ասէ սուրբն Ամբրոսիոս, յղացաւ Կոյս, և Բանն մարմին եղև, ՚ի մարմինն էիւր Աստուած: Կարծէր նա յայտնագոյն քան զայս բացատրել. այլ քանզի աշ Աշմարտութիւն այսպիսի կարևոր՝ ոչ է մարթ ըստ ալիճան բառականին ածել վկայութիւնս ՚ի հաստատութիւն, յաւելցուք և զսրբոյն Օգոստինեայ, զի ասէ. Մարմնաւին փնօրէնութիւն զԱստուած մարգացոյց, և մարդ աստուածացոյց: Բացատրութիւնք՝ որ խնդրէն բովանդակ ըզխոնարհ հպատակութիւն հաւատոց, և որ խիստ իմն Թուէին մեզ, եթէ ոչ հաստատեալ էին ՚ի հիմն անսասանելի՝ Եւ Բանն մարմին եղև:

Ասաւ զհետ գայ, սիրելի ունկնդիրք. (խնդրեմ ուշ ունել, և մի կարծել՝ զի մեծութիւն իրացն հանցէ զնա աստուղի, զի ըստ բարձրութեան իրացն Աշդագոյնս ջանամ խօսել.) ասաւ զհետ գայ, զի ՚ի Քրիստոս ընդ Բանն և ընդ մարմին չիք խոր, որ ինչ Աշմարիտ է ասել ըզմիոյն, վասն հաղորդութեան յատկութեանց՝ Աշմարիտ է ասել և զմիւսոյն. վասն որոյ՝ զի Քրիստոս էր մարկաւ, զի մարմին մարդոյ յանձին Քրիստոսի՝ է Աշմարտապէս մարմին Աստուծոյ, և զի յերանելի վայրկենին՝ յորում յղացաւ մարմինն այն կուսական, թէպէտ և մարմին՝ գոլաւ օծեալ յԱստուծոյ, և բնակեաց ՚ի նմա ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս, ըստ Առաքելոյն. և զի միացաւ ընդ Բանին Աստուծոյ անբաժանելի, ոչ ունելով՝ ըստ լեզուի աստուածաբանից՝ այլ գոյաւորութիւն՝ բայց միայն զԲանին Աստուծոյ: Զի յընդունելն զգոյութիւն՝ ժառանգեաց անդէն զամենայն վառս Աստուծոյ, և Որդին Աստուծոյ կալցի զայն ընդ ամենայն յաւիտեանս ՚ի մարմին իւր, սրբեալ յիւրմէ և կազմեալ: Զի այսպէս խօսեցան զայնմանէ Հարք բակ. և պատգութեան իսկ եկեղեցւոյ չէր արդեօք սիրացուցեալ զբանս նոցա, եթէ չէին նուազ քան զզօրութիւն և զազդուութիւն բանի Աւետարանչին՝ Բանն մարմին եղև: Յայնժամ, ասէ սուրբն Ամբրոսիոս, յղացաւ Կոյս, և Բանն մարմին եղև, ՚ի մարմինն էիւր Աստուած: Կարծէր նա յայտնագոյն քան զայս բացատրել. այլ քանզի աշ Աշմարտութիւն այսպիսի կարևոր՝ ոչ է մարթ ըստ ալիճան բառականին ածել վկայութիւնս ՚ի հաստատութիւն, յաւելցուք և զսրբոյն Օգոստինեայ, զի ասէ. Մարմնաւին փնօրէնութիւն զԱստուած մարգացոյց, և մարդ աստուածացոյց: Բացատրութիւնք՝ որ խնդրէն բովանդակ ըզխոնարհ հպատակութիւն հաւատոց, և որ խիստ իմն Թուէին մեզ, եթէ ոչ հաստատեալ էին ՚ի հիմն անսասանելի՝ Եւ Բանն մարմին եղև:

մինն չարչարելի և մահկանացու, ասեմք աներկիւղ 'ի հայհոյելոյ, զի բանն Աստուծոյ չարչարեցաւ և մեռաւ վասն մեր· և զի գարձեալ բանն Աստուծոյ հաւասար Աստուծոյ է, ասեմք անսագիտաբար՝ զի մարմին Քրիստոսի նստաւ ընդ աջմէ Աստուծոյ: Եւ Թէպէտ քան զամենայն ծայրս հակառակ միմեանց են խաչ և աթոռ Աստուծոյ, ոչ լինչ գժուարիմք ընծայել մարդկային մարմնոյն չարչարեցելոյ զբարձրութիւն աթոռոյն Աստուծոյ, քան զոր ընծայեմքն բանին Աստուծոյ՝ որ է ձառագայթ փառացն Աստուծոյ՝ զանարգութիւն և զնախատինսն խաչին: Եւ ընդէր· — զի այս ամենայն զհետ գան ասացելոցմն· Եւ բանն մարմին եղև:

Ձչմարիտ գժուարահաւատալի է խորհուրդս այս, որպէս խոստովան եղէ ձեզ· այլ ասա է՝ ուր պարտ է մեզ գերել զմիտս մեր: Եւ քանզի հաճեցաւ Աստուած ունայնացուցանել 'ի խորհրդեանս յայսմիկ զնեծվայելչութիւն փառաց իւրոց, մի հրաժարեսցուք խոնարհել՝ ներքոյ արկանել հաւատոց զբանականութիւն մեր· խոնարհութիւն կարևոր· զի որպէս սուրբն Օգոստինոս ասէ, զմարմնաւորութեան բանին Աստուծոյ զորպէսն ոչ գիտեմ, այլ ոչ է ինձ օրէն անգիտանալ զմարմնանալ նորա, և առնուլ նման իմումն՝ մարմին: Այս ուրեմն փոխանակ անկանելոյ 'ի ինդիր անօգուտ և 'ի վէր քան զամենայն զօրութիւն մտաց իմոց, փոխանակ կամելոյ խելամուտս լինել անհասանելի գաղտնեաց մարդեղութեանն Աստուծոյ, ուր և զնս լինչն չճանաչեմ, պարտ է ինձ օրհնել բերբիցս զամբաւ ողորմութիւն Աստուծոյ իմոյ, զի ոչ միայն էջ 'ի փառաց իւրոց վասն իմ և եղև մարդ երբէք զնս, այլ և զի յայտնեաց ինձ և ետ աւետել զնորհրդութիւն փրկութեան իմոյ: Զի կարեմ հասանել փրկութեան առանց հասու լինելոյ խորհրդոյ մարդեղութեան, այլ փրկիլ ոչ կարեմ առանց հաւատալոյ յայն· այս ինչն մարթ է ինձ հասանել փրկութեան ա-

ռանց գիտելոյ որով՛վ զօրութեամբ և որո՛վ եղանակաւ բանն Աստուծոյ ամբարձ զմարմին մարդոյ յայսպիսի աղնուական ազգակցութիւն, սակայն փրկիլ ոչ կարեմ առանց գիտելոյ զհրաշալի ազգակցութիւնս զայս ելեալ յանձին Քրիստոսի, գոլով 'ի միում անձին նորա Աստուած Ճշմարիտ, և Ճշմարիտ մարդ:

Վասն այսորիկ բազումք 'ի չարափառաց ոչ ընկալան զայս Ճշմարտութիւն, և Աստուած առ 'ի հաստատել զայս՝ Թուլ ետ զի յարձակեսցին ընդդէմ 'ի բազում կողմանց: Կէսք ուրացան զաստուածութիւնն Քրիստոսի, ոչ ընդունելով՝ զի եցէ յղացեալ 'ի Մարիամայ Հոգւովն Սրբով, ըստ Աւետարանին՝ Հոգին Սուրբ էիջանէ 'ի վեր· և զի եցէ սուրբն ամենևին, որպէս հընշակապետն ասէր՝ Ոչ ծնանելոյն է 'ի վէն՝ Սուրբ է· զի յղացեալ եցէ 'ի կոյս մօրէ և 'ի միշտ կուսէ հանդերձ մայրութեամբն, և զի եկեալ եցէ յաշխարհ 'ի փրկութիւն մարդկան· որովք է Աստուած անժխտելի· զի որպէս խմաստասիրեն սուրբն Ամբրոսիոս, Օգոստինոս, Կիւրեղ և Բեռնարդոս, Աստուծոյ եւթ մարթ է լինել ինքնին սուրբ, ծնանել 'ի կուսէ՝ անկորուստ պահելով նորա զկուսութիւն, և փրկել զաշխարհ՝ զոր ստեղծն:

Այլք ուրացան ընդ հակառակն զմարդկութիւնն Քրիստոսի, մերթ ասելով նմա մարմին առ աչօք երևութական, մերթ անհոգի և առանց մտաց, և մերթ մարմին կատարեալ՝ այլ յերկնային նիւթոյ կազմեալ, և ոչ 'ի Կուսէն գոյացութենէ: Մոլորութիւնք՝ զորս Չարք եհղեցւոյ, ընդ որս Տէրտուլիանոս, սուրբն Աթանաս, և սուրբ քահանայապետն Լևոն հերքեցին վկայութեամբք սուրբ գրոց, և անժխտելի ապացուցիւք: Զի ասէին. եթէ Քրիստոս առաջօք էառ մարմին, որպէս գնեաց զմեզ արեամբ իւրով· եթէ էառ մարմին անհոգի, որպէս մարթ էր ասել եղեալ զնա մարդ· և եթէ ոչ էր

մարդ, որպէս կարէր հատուցանել զպարտս մարդկան. եթէ մարմին իւր չէր կազմեալ 'ի գոյացութենէ Կուսին, որպէս Եղիսաբեթ կարէր կոչել զնա մայր Տեառն իւրոյ. Ո՞ւստի է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն ինձ առ իս. և որպէս կարէր հրեշտակն ասել՝ Որ ծնանելոցն է 'ի ձեզ՝ սուրբ է:

Եւ այլք բազումք, կնքեն սուրբն Օգոստինոս, մոլորեցան ոչ միայն ըստ աստուածծութեանն Քրիստոսի, այլ և ըստ մարդկութեան. իբր ոչ եթէ ուրանալով զմին կամ զմիւս, այլ զերկոցունցն միութիւն ներգործեալ 'ի Հոգւոյն սրբոյ անբաժանելի 'ի յաւիտեան: Զի կէաք թէպէտև ընկալան 'ի Քրիստոս զՀմարիտ աստուածծութիւն, և զՀմարիտ մարդկութիւն, այլ որպէս մոլորեցոյց է բնաւորութիւն՝ ծայրայեղ միշտ զառածանել, կէաք համարէին՝ միացեալ 'ի մարդեղութեան զԱստուած և զմարդ ըստ կամաց և եթէ, ըստ մտաց և ըստ կցորդութեան, ըստ որդեգրութեան, ըստ յօժարութեան, ըստ փառակցութեան, և ոչ ըստ իրական և գոյացական միութեան: Իսկ այլք այնպէս չփոթեին ընդ միմեանս զաստուածծութիւն և զմարդկութիւն, զի բաց 'ի միութենէ անձին, համարէին 'ի Քրիստոս և զմիութիւն բնութեան: Մոլորութիւն չանթահարեալ նղովիւք 'ի սուրբ եկեղեցւոյ 'ի հռչակաւոր ժողովս, որոց վճիռք աշխարհաքարոզք են մեզ կանոնք, և ուսուցանեն՝ զի Բանն Աստուծոյ 'ի մարդեղութեան՝ միացաւ իսկապէս և գոյացապէս ընդ մարդկայինս մարմին, և զի սովին միութեամբ յանձն էառ զամենայն կիրս մարդոյ բաց 'ի մեղաց, և մարդ եղև հանգերձ ամենայն աստուածծային մեծութեամբքն. և զի է տակաւին 'ի մէջ երկոցունցն բնութեանց՝ որ կացուցանեն զերկրպագելի անձն Քրիստոսի, այսինքն աստուածծային և մարդկային բնութեանց զանազանութիւն էական՝ առանց չփոթելոյ նոցա ընդ միմեանս, և առանց միոյն 'ի միսն ընկղմելոյ, որպէս բարբառին մոլորեալք: Ա՛յս է, ո՛ հաւատացեալք, ճշդիւ

գտակաւ ուղղափառ վարդապետութիւն զնորհրդոյ մարդեղութեան. և զայս նախ պարտ էր ինձ ուսուցանել ձեզ:

Ա՛յլ մի աստ զկայ առցուք. այլ 'ի գործնականն մատիցուք և 'ի բարոյական մասն այսր առաջին ճշմարտութեան, և յօգուտ 'ի կիր առցուք զոմն զայս՝ 'ի պատրաստութիւն Զատկիս՝ որ առաջի կայ մեզ, և խորհուրդ մարդեղութեան Բանին լիցի մեզ 'ի քաջ պատրաստութիւն առ 'ի ընդալ զպատուիրանն մեծ հաղորդութեան: Զի յայսմ հաստատեալ է պատուիրանս այս սուրբ՝ որ պարտ 'ի վերայ մեր դնէ փորձելոյ զանձինս մեր յառաջ քան զընդունելութիւն մարմնոյն Քրիստոսի, զի մաքուր խղճիւ հաղորդեսցուք, և այնու պատրաստութեամբ, զի թէպէտև չկարենք հաւասարեալ սիրոյ արժանիք, թէպէտ և խցեմք մեզաւորք, կարասցուք ասել ընդ Աւաքեղեան՝ Ոչ ինչ գիտեմ զանչին խոյ. խիղճ մտաց ոչ ստգտանէ զիս զծանր ինչ և զմահաւշափ մեղաց: Հարցանիցեք՝ թէ ընդէր Աւաքեան համարի եղեռն մեծ զանարժան հաղորդութիւն. և զարմանայցէք՝ զի վաւել առաքելական նախանձու, որով լիւն էր, արձակէ նղովս ահագինս այնոցիկ՝ որք 'ի մահաւշափ մեղս ձաչակեն զՀոգի կենաց, և զի 'ի գատաստան անձանց և 'ի գատապարտութիւն իւրեանց համարի ճաչակել նոցա զայն, զի առ սեղանակապուտս ունի զնոսա, և զի ըստ այմ բանի նորա, և 'ի ժամանակի անդ ապականութեան՝ խորհել խակ հաղորդել անարժանութեամբ սուկումն էր հաւատացելոց, ևս և սրբոց և կատարելոց: Ա՛յլ մի, սիրելի ունկնդիրք իմ, մի զարմանայք: Զի աճեալ զմուաւ որ ինչ ասացի ձեզ, և որ ինչ ուսուցանեն մեզ հաւատք մարդեղութեան Աստուածորդւոյն, չէք ինչ յայսոսիկ գժուարահաս: Ի հաւատալ միանգամ զի հացս այս՝ զորմէ խօսի Աւաքեան՝ է մարմին Քրիստոսի և Քրիստոս ինքնին, հաստատեմ առանց երկբայ գժուա-

րուքեան զնդովն՝ զորս արձակէ ընդդէմ անխոհիր ձա-
շակողաց զհացն զայն երկնաւոր· զի որչափ և աչագինք
լցեն, առ՝ ի գոանել զայնոսիկ արդար՝ շատ է ինձ յա-
րել յիս զխորհուրդ մարդեղութեանն Աստուծոյ, և ա-
սել ցանձն իմ· Մարմինս այս՝ զոր ձաշակեմ՝ ի խորհուրդ-
գեանս՝ է մարմին Աստուծոյ, զոր անսուրբ առնեմ ձա-
շակելով՝ ի մեղս· ՝ի ձեռն մարդեղութեան միացեալ է
այն ընդ միում յաստուածային անձանց, և անարժան
հաղորդութեամբս միացուցանեմ զանմեռսասուրբն ընդ
հոգի իմ եղեռնաւորս և թշնամի Աստուծոյ: Այս ևս-
Յայտ առնէ ինձ զվանէրն գծատապարտելոյ Առաքե-
լոյն խաթիս զսեղանակապուտս, որ մատչին՝ ի սեղան
Փրկչին՝ առանց ուշնելոյ զհանդերձ հարսանեաց, իմա
զշնորհսն Աստուծոյ· և չիք պատուհաս՝ որ ոչ թուէսցի
ինձ թեթև քան զարժանին այնպիսւոյ սեղանակապ-
տութեան:

Զինչ ապա պարտ իցէ ասել զհաւատացելոյ՝ որ
հանդերձէ առնել զտօն Զատկին, և ընդունել զմարմին
Փրկչին: Լուարուք ինձ, ո՛ աշխարհիկք, և յուշի կալա-
րուք զվարատս զայս: Պարտ է ձեզ, ըստ համեմատու-
թեան՝ զոր արժան է պահել, ասել ցնա որ ինչ հրեշ-
տակապետն ասէր ցԿոյան· Զի որ ծնանելոցն է՝ ի դէն՝ սուրբ է,
և որդի Աստուծոյ կոչեսցի: Զգայ լեր, եղբայր սիրելի, զի
ընդ սեւակաւ հացիդ՝ սուրբն սրբոց Որդին Աստուծոյ
է, նոյն ինքն՝ ծնեալն՝ ի Կուսէն, նոյն ինքն՝ զոր հրեշ-
տակապետն այնպիսեօք բարձր բանիւք սուրբ Կուսին,
զնա ինքն ընդունելոց ես: Մատիր՝ ի խորս սրտի քո, և
բաղդատեա զքեզ ընդ Մարիամու· զի և դու հանդեր-
ձեալ ես տանել՝ ի քեզ զնոյն Տէր, սէս թէ լցես՝ ի
նմին պատրաստութեան· ընկալցի հանդոյն նմին զՀոգին
սուրբ· սէս մի գուցէ ոգի ապականութեան աշխարհի
գեռ ևս սիրէ՝ ի քեզ· զի ոչ ինչ նուազ և քեզ առաջի
կայ լինել, որպէս Մարիամ, տաճար անձնաւոր, ուր

Բանն մարմնացեալ հաձի բնակել՝ ի քեզ· Եւ բանն մարմին
եղև, և բնակեաց՝ ի մեզ:

Ո՛վ հաւատացեալք, զոր քննութիւն ոչ արար ան-
ձին Մարիամ նախ քան զհաւանել առաջարկութեան
հրեշտակին· երբև գիտաց՝ զի հասեալ էր ժամն, յորում
Բանն Աստուած հանդերձ լըսութեամբ աստուածու-
թեանն լինելոց էր մարմնանալ՝ ի նմանէ, որով խո-
նարհութեամբ ոչ ընկալաւ զփառս՝ զոր ընդհէր նմա
Աստուած, և զողորմութիւնս՝ որով ընդյոր գնա: Որով
մաքրութեամբ, որով հնազանդութեամբ, որով հաւա-
տով, և որով սիրով ոչ ընկալաւ՝ ի ծոց իւր կուսական
զԱստուածն մարդացեալ· քանի՞ գերահրաշ առաքինու-
թեամբք ոչ պատրաստեաց զանձն՝ ի գործակցութիւն
անճառելի խորհրդոյն: Արդ այսպիսի է, սիրելի ուն կըն-
դիւք, օրինակն գերազանց, ըստ որում պարտ է մեզ
պատրաստել զանձինս: Մարիամ սուրբ էր և անարատ
անդստին՝ ի յղութենէ· և յետ յղութեանն ըստ ածել
հասակին՝ յաւել միշտ՝ ի սրբութիւն: Զև ողջունեալ
զնա հրեշտակապետին՝ լի էր նա շնորհօք· այլ այս չեղև
բաւական, այլ ինքն Հոգին սուրբ՝ ըստ Աւետարանին՝
եկն՝ ի նա, և սրբեաց զնա վերստին առատագոյն շնոր-
հօք: Եւ յետ այսր իսկ սրբութեան, ոչ համարեցաւ
սուրբն Ամբրոսիոս նուաղութիւն փառաց Մարիամու
ասել առ Փրկիչն· Ե՞ՙ կուսին որովայնէ ոչ խորչեցար:

Մատիցուք առ սուրբ հաղորդութիւնն սովին
խորհրդով, և ոչ ևս լիցի մեզ մատչել թուլութեամբ և
անհոգութեամբ: Մի ևս մատիցուք անեռանդն գաղջու-
թեամբ, զոր ոչ է մարթ ողբալ արժանապէս· մի ևս
մեկնեսցուք անտի ցուրտք և անզգայք, և որ առաւել
ողբալին է, անկատարք քան զոր էաքն յառաջագոյն:
Երկցագոյն և կարևոր հոգ մեր լիցի պատրաստել զան-
ձինս առ սուրբ խորհուրդն· լիցի առաւելագոյն խղճ մեր
օգտել նովաւ, իսկ զեղծանիլ նովաւ լիցի մահուչափ եր-
կիւղ մեր:

Մաաիցուք ՚ի սուրբ սեղանն սկրաբորբոք սրաիւ, որպէս առիւծք՝ ըստ Ոսկեբերանին՝ հրաշունչք ՚ի սիրոյ, որպէս արծուիք՝ ըստ սրբոյն Օգոստինեայ՝ բարձրաթռիչք ՚ի յերկրէ երկնային խորհրդովք: Ընկալցուք անդ զՏէրն փառաց նովին հոգւովք որով կոյսն Մարիամ ընկալաւ, օրինակ նորա լեալ մեզ կանոն: Այլ զհետ բերել խորհուրդս վեր ՚ի վերոյ գեղեցիկս, որք ընդ կերպարանաւք մեծարանաց Կուսին՝ հեռացուցանեն զմեզ ՚ի հաղորդութենէ մարմնոյն Քրիստոսի. հասատել զկարևոր պատրաստութիւնս յաստիճանս սրբութեան՝ ուր ոչ ոք հասանել կարէ. պահանջել առ ՚ի հաղորդութիւն զկատարելութիւն Կուսին. և համառօտիւ՝ պարտս յանձն առնուլ նմանելոյ Կուսին, են հակառակ գիտաւորութեանն Քրիստոսի, արգելք անյաղթելիք սրբոյ հաղորդութեան: Յայսոսիկ յանկի նրբութիւն անվարդութեան, և այս է խօթամիտ որոգայթն լարեալ ձեզ, յորմէ խոհական և լուսաւորեալ բարեպաշտութիւն ձեր գիտասցէ քաշ զգուշանալ: Ընդհակառակն ՚ի կարևորութենէ սուրբ հաղորդութեան ՚ի միտ առնուլ զկարևորութիւն սրբելոյ զանձինս, ջանալ պարապով ՚ի նոյն, և զամենայն գուն գործել առ այն, այսոքիկ են՝ որովք փառաւորեմք զխորհուրդ մարդեղութեանն Քրիստոսի: Աղգակցութիւն մարմնոյ մերոյ ընդ Բանին, առաջին սքանչելիք՝ զոր տեսաք ՚ի մարմնացեալն Աստուած, անցցուք արդ յերկրորդն՝ տեսանել զկոյսն լեալ Աստուածամայրս, որ լինի երկրորդ մասն ճառիս:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Հարկ էր, ո հաւատացեալք, զի առ ՚ի լոյս ածել զԱստուած մարմնացեալ՝ գոյր արարած մի նախասահմանեալ ՚ի մայր Աստուծոյ ըստ մարմնոյ, և ահա այս է՝ զոր ես կոչեմ աղգակցութիւն մարմնոյ ընդ Բանին յանձին Մարիամայ. աղգակցութիւն՝ զոր ոչ կամեցաւ մոլորութիւն ընդունել ՚ի Կուսին, որպէս և ոչ զաստուածութիւն և զմարդկութիւն ՚ի Քրիստոս. սակայն աղգակցութիւն՝ զոր ՅՀմարիա հաւատացեալք բարձրաձայն ընկալան, և յամենայն ժամանակի գաւանեցին: Պարապեցէք նախ ՚ի միտ առնուլ զվարդապետութիւնն, և ապա տեսցուք զփառս՝ որ անտի յորդէ ՚ի Մարիամ, և զշահ՝ զոր ընդունիմք մեք անտի:

Կոյս մի մայր Աստուծոյ, և մայր Աստուծոյ ըստ մարմնոյ, այս է որ եհար զսուտ երկիւղածութիւն հերետիկոսաց, մանաւանդ հերետիկոսապետին Նեստորի պատրիարքին Կոստանդնուպոլսի: Սա չարժեալ ՚ի հոգւոյ ամբարտաւանութեան, և զեղծեալ զօրութեամբ խչխանութեանն, յանդգնեցաւ հակառակել աստուածամայրութեան Կուսին. և առ այս չեթող հնարս՝ զոր չէառ ՚ի կիր, և ոչ կեղծիս՝ որովք ոչ զեղծաւ առ ՚ի ծածկել, կամ մեղմել զչարամտութիւն մոլորութեան իւրոյ: Զի ըստ վկայութեան Հարց՝ զոյլ ամենայն փառաւորեալ անուանս, զոր մարթ է խորհիլ զԿուսէն, տայր նմա. բայց յայնմանէ, զորմէ միայն էր խնդիրն: Խոստովանէր՝ զի էր նա մայր Սրբոյն սրբոց, զի էր մայր Փրկչին մարդկան, այնու զի ընկալաւ և տարաւ զԲանն Աստուծոյ ՚ի կուսականն արգանդի, մինչև յանձն էառասել զնա մայր ուրուք, որ ըստ խմաստից ինչ էր Ա-

տուած, զի էր միացեալ առանձինն Լիմն օրինակաւ ընդ Աստուծոյ· այլ զի Կայան Ձմմարտիւ՝ առանց ամէնիմաստ ինչ մտաց՝ լեալ էգե մայր Աստուծոյ, անհնարին եղև հաւանեցուցանել զանհաւատ և զյամառեալ միտս նոցա: Եւ զինչ արար եկեղեցի սուրբ. — մերժեաց զաննայն ներբաբանութիւնս նորա. և որչափ նա յամառէր ընդդէմ Աստուածամայր անուան, այնչափ առաւել պինդ կալաւ զայն սուրբ եկեղեցի:

Թուէր վեր 'ի վերոյ զբառէ միջէ խնդիրն, զի բառս Լեւթ ապուածածին էր պատճառ ամենայն վիճիցն. այլ քանզի Ձմմարտիւ, որպէս իմաստութեամբ ասէ սուրբ քահանայապետն Լևոն, Ճանապարհն՝ որ ածէ 'ի կեանս՝ նեղ է և անձուկ, ոչ միայն վասն պահպանութեան պատուիրանաց, այլ մանաւանդ վասն նեղբոյ արկանելոյ զմիտս ամենայն ուղղափառ վարդապետութեանց հաւատոյ, պաշտպան եկաց սուրբ եկեղեցի ամենայն զօրութեամբ և նախաձեռ՝ միտս այսմիկ բառիւ: Գուշմարեաց Ժողովս, արձակեաց չանթիս նզովից, բանագրեաց եպիսկոպոսունս, և ոչ 'ի գերակայս ասել Ճանաւ ինայեալ, նզովեաց զնոսա, և ընկէց յաթոռոյ: Ընդէր. — զի բառս Լեւթ այս ապուածածին բովանդակէ յինքեան զնորհուրդ մարդեղութեան Բանին. և այսու եղև գլխաւոր մասն հաւատոց՝ զի էր Մարիամ ըստ բնականագոյն իմաստից բառին ապուածամայր: Իբր ոչ եթէ նոր ինչ էր հաւատալ այսուհիկ, զի ըստ սրբոյն Կիւրղի. աւանդութիւն 'ի սկզբանէ հետէ հաստատեր զայն, և 'ի բազմաց հետէ Ուրացողն Յուլիանոս կշտամբ

փառացն և զՄարիամ »: Մտածութիւն բարձր, այլ ի բարձրութեան անդ իւրում ցուցանէ բովանդակ գիտառութիւն խորհրդոյս: Ո՛հ, եղբարք իմ, ասէր Աւագքեալն, ծուռնր կրկնեմ առաջի Հօր Քրիստոսի տեառն իմոյ, յորմէ ամենայն հայրութիւնք իջանեն յերկինս և յերկրի: Այսպէս Աւաքեալն ասէր. և չկարիցեմ յաւելուլ և ես՝ զի երկրպագեմ առաջի Հօրն ամենակալի, ընդունելով զնա հաւակ ամենայն հայրութեանց, այլ և պատճառ աստուածամայրութեան՝ զոր փառաւորեմ ի Կուսին. զի որպիսի՛ սքանչելիք եղեն խորհուրդս այս, և ո՞ կարէր ներգործել զայս՝ բայց միայն Աստուած. կուսութիւն և մայրութիւն միանգամայն, Կոյս՝ որ յղանայ ի ժամանակի զնոյն ինքն զՈրդին Աստուծոյ ծնեալ յԱստուծոյ Հօրէ նախ քան զամենայն յաւիտեանս. Մայր, ասէ սուրբն Օգոստինոս, եղեալ հնազանդութեամբ ևեթ մտաց, որպէս Հայր յերկրպագելի Երրորդութեան է Հայր ճանաչելով ևեթ ամբաւ կատարելութեանց իւրոց: Ո՞ երբէք յառաջ քան զՄարիամ լուաւ երբէք այսպիսի ինչ. և եթէ ոչ հաւատաք ուսուցանէին մեզ զայս, ո՞ երբէք կարէր հաւատալ՝ զի աթարած հանդերձեալ էր յաւուր միում յեղանակաւ ինն տալ ջոյութիւն արարչին իւրում, և արարչէն ընդունել յեղանակաւ ինն զգայութիւն և զպահպանութիւն յաթարածոյ իւրմէ: Ո՞ կարէր հաւատալ, զի հանդերձեալ էր Մարիամ տալ Աստուածոյ՝ որ ինչ չէր նորա յաւաջագոյն, և Աստուած հանդերձեալ էր ընդունել նոր ինն կեանս ի Մարեմայ: Ո՞ կարէր հաւատալ, զի ինանն Աստուածոյ՝ որով ամենայն ինչ եղեն՝ հանդերձեալ էր լինել ի կուսէ, և կոյսն այն գոգցես ունել երաւունս ի վերայ լինելութեան նորա: Ներեցէք ինձ, ո՛ հաւատացեալք, զայս ամենայն ձեզ բանիւ, զորս Հարք նախ քան զիս առին ի կիր. զի ձախողակի ինն լինէր զգուշութիւն՝ չխօսել որպէս նորայն խօսեցան, և լռել զայ-

Վասն որոյ ոչ երկնչիմք՝ Թէ կասկածելի լիցին հաւատք մեր. զի զնոյն պատճառս երկրորդելով՝ հարցանեմ. Ո՞ր գտանի ոք յերիցանց՝ որոյ ի սուրբ խորհուրդս ասացեալ իցէ երբէք. Քեզ Տիրամօրդ զպատարագս մատուցանեմ: Պատարագեմք այնմ, որ նախասահմանեաց զԿոյսն, որ մաքրաշարդեաց զնա և փառաւորեաց. Թէպէտև անժխտելի է աստուածամայրութիւն նորա, սակայն ոչ համարիմք և ոչ մեծարեմք զնա որպէս Աստուած, այլ որպէս արարած, որոյ ամենայն երջանկութիւն այն է՝ զի եղև հաւատարիմ միշտ առ Աստուած, խոնարհ առաջի Աստուծոյ, և առանձին լիմն ընտրեալ յԱստուծոյ:

Բայց առանց աստուածարելոյ զՏիրամայրն, իցէ՞ ինչ մեծութիւն համեմատելի ընդ նորայն. գուն գործեցից, սիրելի ունկնդիրք, տալ աղօտ ինչ գայնմանէ նկարագիր. այլ յուշ լիցի որ ինչ սուրբն Բեռնարդոս ասէ, զի և ոչ ինքն Տիրամայրն կարաց համարձակ ի վերայ կալ այնմ, և բացատրել զայն, ահա բանք նորին. Յանդգնիմ ասել՝ ոչ և ոչ Մարիամ կարաց բացատրել զայն: Վասն որոյ մի ինչ զարմանայիք, եթէ որ ինչ ասելոցս եմ զայնմանէ՝ յոյժ քան զնա ի սակաւ գտանի:

Նկատեմ զՏիրամայրն ընդ կրկին տեսութեամբք, առ Աստուած և առ մեզ. Մարիամ եղանի մայր Աստուծոյ, առաջին տեսութիւն. Մարիամ եղեալ մայր Աստուծոյ, և նովին իսկ բարեխօս վասն մեր և որպէս մայր մարդկան, երկրորդ տեսութիւն: Արդ տեսցուք, որչափ է մեզ կարելի, որպիսի փառք ի միջէն և ի միւսմ զեղանին ի Մարիամ, և քանի մեծութիւն ի նոսա բովանդակի:

Մարիամ մայր Աստուծոյ. լուր ով մարդ, աղաղակէ սուրբն Անսելմոս, միտ դիր և զարմացիր: « Հօրն երկնաւորի էր միակ Որդի համագոյակից. այլ ոչ կամեցաւ զի իւր ևեթ լիցի նա որդի, այլ հաղորդս արար

սոսիկ մեծահրաշ գովուԹիւնս, զորս ազգէր ՚ի նոսա աստուածպաշտուԹիւն, և նոյն պարտի առնել մեզ ջանասիրապէս պաշտելիս:

Աւետել հրաշալի Թուի ինձ այն, յաւետիս արքեպիսկոպոսն Հռաւենայ, զի Բանն Աստուծոյ՝ որ յերկինս ոչ է ընդ հրամանաւ Հօրն երկնաւորի յորմէ ծնեալն է, կամեցաւ լինել յերկրի ընդ հրամանաւ մօրն՝ յորմէ մարմնացաւ: Զինչ է՝ զոր ասեմն, սիրելի ունկնդիրք, Բանին Աստուծոյ լինել ընդ հրամանաւ ՚որպէս մարԹ ևցէ կալ ընդ աստուածային մեծավայելչուԹեան. այլ պարտ է ասել զայս, զի ՚ի հետ գայ մայրուԹեանն Մարիամու: Եւ որով ճանաչեմ զնա մայր Աստուծոյ, ոչ միայն կարեմ, այլ և պարտիմ ընդունել՝ զի Աստուած եղեալ մարդ հաճեցաւ լինել ընդ նովաւ, պատուեալ զնա, և մատուցանել նմա զօրինաւորն հնազանդուԹիւն. եղև ընդ իշխանուԹեամբ նորա, որպէս սուրբ Աւետարանն յայտ առնէ. Եւ էր նոցա հնազանդ. յորում գրեԹէ բովանդակի որ ինչ գիտեմքն զմահկանացու կենաց Փրկչին մինչև ՚ի քարոզուԹիւն նորա: Այլ հարցանէ գարձեալ սուրբն Բեռնարդոս. Մա՞րդ էր ԹէՀ Աստուած, որ հնազանդէրն Մարիամու.— և պատասխանի առնէ. Աստուած և մարդ միանգամայն, և յաւելու. Արդ ընդ ո՞ր առաւել զարմանայք. ընդ հնազանդուԹիւնն որդւոյն, ԹէՀ ընդ մօրն իշխանուԹիւն. զի ահա աքանչելիք երկու ՚ի միասին: Աքանչելիք խոնարհուԹեան՝ Աստուծոյ լինել ընդ իշխանուԹեամբ կնոջ, և աքանչելիք մեծուԹեան՝ կնոջ հրամայել Աստուծոյ:

Մի և արդ զարմացօրք, զի հրեշտակապետ այսօր իջանէ յերկնից ողջունել զՄարիամ, և խոնարհի առաջի նորա, կոչէ զնա լի ընդ որհնեալ, և բարձր առնէ զնա քան զամենայն կանայս: Մի և՝ զարմացօրք ընդ բանս Գաբրիէլեայ, զի ոչ ինչ յամենայն արարածս է հաւասար Մարիամու, և ոչ ՚ի կշիռ համեմատուԹեան

ընդ նմա: Եւ մանաւանդ մի երկմտեսցուք ընդ հզօր կարողուԹիւն Մարիամու, և ընդ գուԹ գործոյ նորա ՚ի վերայ մեր. և ոչ և յամեալ ՚ի նկատել զհրաշափառ մայրուԹիւն նորա հայեցմամբ առ Աստուած, նկատեսցուք զայն արդ հայեցմամբ առ մարդիկ, և քանասցուք քաղել անտի զառաձեռն պատրաստս օգտուԹիւնս:

Մարիամ մայր եղեալ Աստուծոյ, նովին իսկ եղև և մայր մեր, պաշտպան մարդկան, գործակից փրկուԹեան մերոյ. և մայր և պաշտպան և գործակից ամենակարող վանն մեր: Մի և դիք, աղաչեմ. մայր մեր, զի ամենայն մարդիկ ոչ միայն եղբարք են՝ այլ և անդամք Քրիստոսի, զոր տարաւ յարգանդի. պաշտպան մարդկան, զի վասն նոցա ընտրեցաւ ՚ի մայր Քրիստոսի, և ըստ այմ՝ նոքա եղեն պատճառ բարձրուԹեան իւրոյ. գործակից փրկուԹեան մարդկան, զի ինքն ծնաւ զՓրկիչն՝ որ գայր առ ՚ի գնել զաղգ մարդկան, և ետ նմա զարիւնն՝ որ լինելոց էր գինք փրկուԹեան մերոյ: Յաւելի ասել զնա մայր ամենազօր, պաշտպան ամենազօր, և ամենազօր գործակից փրկուԹեան մերոյ. զի որպէս մայր ունի առ նմա զայսոսիկ առանձինն շնորհս:

Այսօր է ասա՝ յորում Մարիամ տարածանէ զգիրկս իւր, ընդունել զմեզ յորդիս իւր. և սովին խորհրդով պարտ է մեզ բերել յանձին զեռանդն և զկրօնս, զոր ցուցին հաւատացեալք Եփեսոսի յընդունել զլՀնա սրբոյ տիեզերական ժողովոյն ՚ի փառս Կուսին, յոր ապաւինեալն էին: Երևելի էին դէպքն, և երանի՛ ԹէՀ հերետիկոսք ժամանակիս քաջ մտադիր լինէին առ ՚ի միտ առնուլ որպիսի՛ ինչ կարծիք էին հաւատացելոց յառաջ քան զերկոտասան և աւելի գարս զԿուսէն, և որպիսի պարտ է և մեզ լինել: Վկայէ մեզ պատմուԹիւն, զի յաւուր՝ յորում հաստատեցաւ էր վէՀ աստուածամայրուԹեան Կուսին, ամենայն ժողովուրդն զեղեալ ՚ի փողոցս և ՚ի հրապարակս՝ կային

ղՀոչակաւոր եկեղեցեաւ Տիրամօրն, ուր էին Հարք ժողովոյն գումարեալ, և 'ի պահուն՝ յորում վճիռն հրատարակեցաւ, և լսելի եղև՝ զի հաստատեալ էր Մարիամ յարդար ժառանգութեան փառաց աստուածամայրութեան իւրոյ, հնչեաց ընդ ամենայն քաղաքն աղաղակ և ձայն ցնծութեան. և Հարք յելանելն 'ի տաճարէ անտի՝ լցան օրհնաբանութեամբք, և ածան յաղթանակաւ, և օդք լուսաւորեցան ջահիւք. և ոչ մի ինչ պակասեաց 'ի հանդէս հասարակաց ցնծութեանն և 'ի պայծառութիւն յաղթանակի փառաց Տիրամօրն: Ո՛հ, հաւատացեալք, արդարև ժողովուրդն այն հաւատարիմ ցանկայր փառաց նորա, և առնէր զամենայն հոգւով կրօնիւ, այլ 'ի փառաւորելն ընա՝ հայթայթէր և զօգուտ իւր. զի վստահ էր յօգնականութիւն Աստուածամօրն, և գիտէր որ ինչ անտի զհետ գայնի իւր բարիք: Ջնոյն եւանդն բերցուք և մեք յանձինս, զնոյն գնացս կալցուք. յայսմ մեծի աւուր, յորում յայտնեցին երկինք զաստուածամայրութիւն Մարիամու, պատուեսցուք զնա ըստ արժանւոյն, նուիրեսցուք նմա առաջի սուրբ սեղանոյ ուխտ անլուծանելի հաւատարմութեան, և նորոգեսցուք զնոստուածն խոնարհ և սրբատեւանդն մեծարանաց: Խորհեսցուք և 'ի մեզ, և առ 'ի սաիպել զնա 'ի բարեխոսութիւն վասն մեր՝ առաջի գիցուք նմա զկարեւոր ազգակցութիւնն, որ կայորդե զնա ընդ մեզ, և զմեզ ընդ նմա:

Աստացուք նմա մերթ որ ինչ բեռիլուացիք ասէին ցՅուդիթ. Դուռ բաբչուռիան երուսաղէմ, դուռ ցնծութիան իսրայէլ, դուռ պարծանք ազգիս մերոյ. այսինքն փառք և երջանկութիւն սրբոյ եկեղեցւոյ. Օրհնեալ եղիջիր դուռ յաներանաչելի Աստուծոյ մինչ յաւիտեան: Վասն այսորիկ խոնարհեալ առաջի քո՝ մատուցանեմք քեզ գովութիւնս, որ քեզ վայելեն, վասն այսորիկ օրհնաբանեմք զքեզ, և ամենայն դարք օրհնեսցեն զքեզ: Եւ մերթ յաւելցուք,

որ ինչ խոհականն և աստուածային նախանձու վառեալն Մուրթաք ասէր ցեսթեր, առ 'ի յորդորել զնա 'ի պաշտպանութենէն հրէից՝ որոց մերձ 'ի վերայ կայր կոչեալ, և յայտ առնէր նմա՝ զի Աստուած բարձրացոյց զնա յաթոռ թագաւորութեան վասն ազգին բարութեան քան անձին. Ե- ՞ խէ գիտէք երբ ա- այս 'ի ձեռանէ յայսմ ետգաւորէցեր: Ոչ երկնչիմք ասել զայս, փառաւորեալ մայր. քանզի գիտեմք՝ զի առ այս ընտրեաց զքեզ Աստուած 'ի մէջ ամենայն կանանց, զի զքեզ յայդքան իշխանութենէն վասն մեր բարձրացոյց. և այս է որ ասէ մեզ վստահութեամբ գիմել առ քեզ յամենայն ժամանակս կենաց մերոց և յամենայն 'ի դէպս: Ախալջի արասցուք զամենայն պէտս մեր, պաղատեսցուք զբարեխոսութիւն քո, և դու լուիցես աղօթից մերոց, և մատուսցես զյիսուսիկ որդւոյ քումմիածնի, խառնեալ ընդ մաղթանս քո, և իջուսցես 'ի վերայ մեր զշնորհս Աստուծոյ:

Մի երկբայեսցուք, սիրելի ունկնդիրք, և քանզի ունիմք այսպիսի բարեխոս առ Աստուած, ուսցուք յօգուտ 'ի կիր առնուլ զնա. Հանապազ լսէք 'ի բեմից զնստուածն Աստուածոյ, լսէք ահարկուս և սոսկալիս, և բարւոք է. ինձ իսկ պարտ է ապաւորել խորագոյնս 'ի ձեզ զիրկաւէտ երկիւղն քրիստոնէական: Այլ անդ ևեթ զկայ առնուլ, զաստուածաստաստ սպառնալիս միայն լսելի առնել, ցուցանել ևեթ զդժուարութիւնս և զնոչ և զնուճ՝ որ 'ի ձանապարհի փրկութեան ելանեն ընդ առաջ, և յանդիման առնել ձեզ զձանապարհն զայն որպէս փշալից և դոգցես անգնալի, և առաւելագանց իմն՝ որ ոչ օգնէ յուղղութիւն, այլ լքուցանէ և ածէ 'ի վհատութիւն: Ապա պարտ է ինձ յահաբեկելն՝ քաջալերել ևս զձեզ, յընդձեռն զյանդգնութիւն՝ զօրացուցանել և զնստահութիւն. պարտ է ինձ ծանուցանել ձեզ և զհնարս, զորս ողոր-

մուԹիւնն Աստուծոյ պատրաստեալ է ձեզ, և զնպատուսն՝ զոր հոգացեալ է վասն ձեր: Պարտ է ինձ սփոփել զձեզ, քաջալերել և սրտապնդել: Արդ եԹէ իցէ՞ինչ խորհուրդ՝ որ ածիցէ զայսոսիկ ցանկալի արգասիս, այս իսկ է, զի Աստուած մարդասէր ոչ միայն զմարդեղութեանն Քրիստոսի զնորհուրդ՝ այլ և զաստուածամայրութեան Կուսին սահմանեալ է վասն մարդկան, յանձանձել զնոսա, օգնել նոցա ամենայն զօրութեամբն, և լինել նոցա բարեխօս և ապաւէն:

Ասեցէք՝ Թէ վստահութիւնս այս՝ի պաշտպանութիւն Կուսին կարիցէ հաստատել զանկարգութիւնս՝ի մէջ, և նուաղել զեռանդն ապաշխարութեան: Այլ ես տամ պատասխանի, զի եԹէ վստահութիւնն այն իցէ՞ Հնմարիտ վստահութիւն, քաջ՝ի բաց՝ի ցրտացուցանելոյ զեռանդն՝ առաւել և արծարծանէ զայն. փորձեցէք և տեսջիք, զի ջերմեռանդութեամբ առ ամենասուրբ Կոյն՝ ուսանիցիք առել զմեզս, զդայցէք խոչընդումն՝ի մեզաց և աչալուրջ զգուշութիւն՝ի վանդացմեզաց, քանզի ցէք քաւել զայնոսիկ խստակրօն ապաշխարութեամբ, լուսաւորեսցէ զձեզ լոյս կենդանի՝ տեսանել զայլանդակութիւն մեզաց, և խորազգաց խեղճմուԹիւն չարժեսցէ զձեզ երկնչել յահագին հեռանալոյ նոցա, և փախչել յայնցանէ. և բիւր ազդմունք սրտի և շնորհք հրաւիրեսցեն զձեզ՝ի սրբութիւն: Այսոքիկ են արգասիք սովորականք հաստատուն և երկիւղած վստահութեան՝ի պաշտպանութիւն Տիրամօր: Քանիք յարգարոյ պահեցան նուաս և յարատևեցին. քանիք՝ի մեղաւորաց զգաստացան և փրկեցան: Դարձեալ ասեմ. քանիք յարգարոյ պահեցան և կացին հաստատուն. արգարք յողդողդք յանմեղութեան և յարգարութեան, արգարք՝ նեղեալք՝ի փորձութեանց, հալածեալք յախտից, և՝ի մարմն՝ գրեթէ պարտեալք յաշխարհէ, և մերձ կային՝ի կործանումն, եԹէ ոչ

ուրբ Կոյն՝ի մեծի վտանգին հաստանէր նոցա յօգնութիւն. իբր ոչ եԹէ անձամբ, այլ յաղԹող շնորհօք՝ զոր բարեխօսութեամբ իւրով ընկալաւ վասն նոցա, և պահեաց զնոսա: Քանիք՝ի մեղաւորաց զգաստացան և փրկեցան, որք՝ի բազում ամաց կային մեղաւորք, ուշ նակացեալք՝ի մեղս, որոց ոչ էս գոգցես գոյր տեղի փրկութեան, և ծանրաբեռնեալք՝ի մեղաց՝ սկսանէին յուսահատել յողորմութենէն Աստուծոյ: Այլ յիշեցուք զի Մարիամ է մայր մեղաւորաց, որ ինչ ոչ իշխէին խնդրել իւրովի վստն անձանց, խնդրեցին նուաս, և ընդունեան լսել: Յերջանիկ պահու փոխեցին զնոսա շնորհք, և՝ի մեղաւորաց արգարս զնոսա և սուրբս կացուցին: Աքանչելիք՝ զորս ասպ բիւրիցս խոստովանեցան. պարտ էր յօրինակս յայսոսիկ պատկառ կալ, և մի՝ի դէպս գոն ուրեք պատահելոս դիմել, և զհետ բերել անիրաւ հեռանալոյ: Անյապիսի է անիրաւութիւն մեր. զի Թերևս գտանիցին ոմանք, նուիրեալք առ աչս՝ի ծառայութիւն Կուսին, որք արգեամբք ոչ բարւոք կենցաղավարին. արդ յառանձնական օրինակէ սոցա իրաւունք Թուին ոմանց իմաստասիրել ընդհանուր ընդդէմ պաշտաման սրբոյ Կուսին. ոչ ածեալ զմտաս, զի էր և է այս այլոց բիւրաւորաց՝ի գարձ յուղղութիւն և՝ի սրբութիւն: Ո՜հ, սիրելի ունկնդիրք, ի ժամանակի յորում վտանգք են այսքան յաճախաւորք, և պէտք այսքան ստիպողականք, մի՞ զլկեսցուք անձամբ զանձինս՝ի նպաստից՝ որ շնորհեալ են մեզ յԱստուծոյ: Ի սեղանոյ ասեմ, իշխեմ ասել, և՝ի տապանակէ՝ ուր կայ Քրիստոս, առնէ և մեզ ըստ համեմատութեան՝ զոր արարն՝ի խաչէն ընդ սրբեալն աշակերտն ասելով. Ահա մայր քո: Եւ՝ի վայրկենէ անտի աշակերտն այն՝ որ սիրէրն զՅիսուս՝ կալաւ զնա՝ի մայր իւր: Եւ յայնմ ժամանակէ առ աչսէրն գնա առ իւր: Այսպէս և մեզ պարտ է առ մայր մեր ունել զՏիրամայրն. և երանի՛ մեզ՝ եԹէ հաձեսցի ընդունել զմեզ՝ի

Թիւս որդւոց իւրոց: Ծանիցուք ընդ հուպ զի ոչ 'ի զուբ կոչի նա մայր ազգի մարդկան, եթէ և մեք ոչ 'ի զուբ կոչեցեալք որդիք Կուսին: Այլ աստ տեսցուք՝ զի օրպէս խուրհուրդս այս ամբառնայ զմեզ 'ի փառս որդւոց Աստուծոյ, որ է երրորդ բարեմասնութիւն, զոր շնորհէ մեզ աղաչակցութիւն Բանին Աստուծոյ ընդ մարմնոյ. և լցցի այս վերջին մասն Ճառիս:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Մոլորութիւն էր հեթանոսաց, և մոլորութիւն թանձրամիտ և յանդգնական, համարել զինքեանս որդիս աստուածոց, զի գնային նոքա զնախահարս իւրեանց 'ի Թիւս աստուածոց: Այլ օրպէս սուրբն Օգոստինոս խմաստասիրէ, մոլորութիւնս այս Թէպետև խօթամիտ՝ ազդէր 'ի նոսա խմաստս բարձունս. զի այսուիկ վստահացեալ 'ի մեծութիւն կամ 'ի կարծեցեալ աստուածութիւն նախահարց իւրեանց՝ ձեռնարկէին 'ի գժուարբինս և 'ի գիւցազնական արուեստիւնս քաջայանդուգն համարձակութեամբ, և առաւելագոյն յաջողութեամբ զայնոսիկ 'ի գլուխ տանէին: Զիցէ՞ մարթ ասել զի 'ի խաւարն անդ հեթանոսութեան լեալ էցէ նշոյլ ինչ կամ սկիզբն քրիստոնէութեան, և զի աստուածախնամ տեսչութիւն որ 'ի մոլորութենէն ևս մարդկան գիտէ հանել բարիս՝ սկսեալ էցէ անգստին պատրաստել զաշխարհ 'ի Ճշմարիտ կրօնս: Եւ կարի իսկ քաջ, ասէ Նոյն սուրբ Հայրապետն. էր ըստ կարգի նախասահմանութեան և փրկութեան մարդկան, խելամուտ լինել մարդոյ յաւուր միում զի է աղաչակից Աստուծոյ. և վասն այսորիկ կամեցաւ Աստուած 'ի ձեռն ամենակարող չնորհացն, զի այս խելամտութիւն չէցէ սուտ և յանգըգնական: Ամբարտաւանութիւն էր այս 'ի հեթանոսական: Այլ խորհուրդն՝ զոր ոտնախմբեմք, զամբարտաւանութիւնն զայն յեղաշրջեաց մեզ 'ի սուրբ և 'ի պաշտելի Ճշմարտութիւն: Նոքա հպարտանային համարելով զանձինս սերունդ աստուածոց. իսկ մեք եթէ համբրիցիմք զանձինս լինել իմն, անծանօթք անձանց գտանիմք, անարգեմք զանձինս և ընդ վայր հարկանեմք: Լուիցուք սիրելոյ աշակերտին. Թէպէտ և յայլսմ Ճառի բացատրեցի զնոյն վկայութիւն առ 'ի հաստատել զնոյն Ճշմարտութիւն, ներեցէք ինձ երկրորդել զայն ասս, և վերստին լուսաբանել: Լուիցուք ասեմ սիրելւոյ աշակերտին, և առանց ինչ տանջանելոյ քրիստոնէական խոնարհութեան, ուսցուք 'ի նմանէ Ճանաչել զստոյգ աղնուականութիւն մեր, զի ասէ. Տեսէք՝ որպիսի սէր ընծրհեաց մեզ Հայր, զի որդիք Աստուծոյ կոչեցուք, և եմք: Արդարև սուրբն Յովհաննէս խօսէր առ հաւատացեալս Քրիստոսի, որ ընկալան զնա. այլ որ ինչ առ նոսա առանձինն ասէր, և անկ էր նոցա մանաւանդ, օրէն է ինձ ասել հասարակաց, հանրական խմացուածով, և յարել զայն յամենայն մարդիկ: Զի ըստ բանի նորին սիրելւոյ Առաքելոյն, ամենեցուն տուաւ իշխանութիւն լինել որդիս Աստուծոյ, առանց խտրութեան արժանեաց, առանց զանազանութեան պայմանի և սեռի, մեծի և փոքու, աղքատի և մեծատան, իշխանի և իշխանաւորի. Եպ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոյ հաւատացեն յանուն նորա:

Արդ ինձ թուի, զի որդիութիւնս այս՝ այսու եղանակաւ հաստատեալ՝ բնաւորապէս յառաջ գայ 'ի խորհրդոյ մարդեղութեան, և է երրորդ արգասիք ազգակցութեան Բանին ընդ մարմնոյ. Եւ Բանն մարմն եղև: Քանզի չէր մարթ Բանին Աստուծոյ զգենուլ զմեզ մարմին՝ առանց կարևոր ազգակցութեան ընդ մարդկան. և յայնմ վայրկենի՝ յորում այնպէս միացոյց զմեզ ընդ իւր, մինչև մի մարմին լինել մեզ ընդ նմա, ոչ ևս 'ի

յափշտակութիւն համարի մեզ ասել յաւուրկ և իրա-
կան նշանակութեամբ՝ զի եմք որդիք Աստուծոյ. Շնորհեաց
ձեզ Հայր, զի որդիք Աստուծոյ կոչեսջիք, և եմք: Սակայն մտօք
ասէ Կլեմէս ալեքսանդրացի՝ ի խօսել զնորհրդոյ մարդ-
եղութեան. զի յայտ առնելով զամբաւ շնորհս, զորս
անտի ընդունիմք, ՝ի կիր արկանել զայս ազգիս բաց-
տրութիւն, զի Աստուած մարդեղութեամբն արար
զմարդիկ որպէս թէ աստուածս: Իբր ոչ եթէ էցեմք
որդիք Աստուծոյ նովին կատարելութեամբք Աստուած-
որդւոյն, զի նա բնութեամբ է որդի, իսկ մեք որդե-
դրութեամբ. այլ որդեդրութիւնս այս ոչ շատ իսկ աղ-
նուացուցանէ զմեզ. կարէր Աստուած ամենակարող ա-
ռաւել բարձրացուցանել զմեզ, քան զայս պանծալի, որում մարթ էր մեզ յու-
սալ. զի Ուր յաբէնէ և ուր ՝ի կամսյ մարմոյ, և ուր ՝ի կամսյ առն
ամբարձաք յայս կէտ բարձրութեան. այսպիսի ինչ
խորհել ցուցանէր՝ զգիտութիւն մեր, որով ոչ զընա-
ւորական անարդութիւն մարդոյ ճանաչեմք, և ոչ զբար-
ձրութիւն պատուոյն՝ որով հաճեցաւ Աստուած վա-
ռաւորել զմեզ: Այլ այս ամենայն փառք հոգևոր ծնընդ-
եան մերոյ է ՝ի կամացն Աստուծոյ և ՝ի նախասահ-
մանութենէ, յընտրութենէ և ՝ի շնորհացն Աստուծոյ:
Զի առ ՝ի կալ միշտ ՝ի սերկեանս խորհուրդ, եթէ որ-
դիք եմք Աստուծոյ՝ Քրիստոսիս եմք, որ միացոյց յան-
ձին զմարդկութիւնն ընդ աստուածութեան. Ե- Բանն
մարին եղև: Ըստ այսմ, ասէ սուրբն Ոսկեբերան, միածին
Որդին Աստուծոյ եղև որդի մարդոյ, որպէս զի որդիք
մարդկան լինիցին որդիք Աստուծոյ: Եւ մի հարցանիցէ,
յաւելու սուրբն Օգոստինոս, թէ ո՞րպէս կարելի էր
մարդկան ծնանիլ յԱստուծոյ, ուր կարաց Աստուած և
կամեցաւ լինել որդի մարդոյ:

Տեսէք դարձեալ յո՞ր ծայր մարդասիրութիւնն
Աստուծոյ եհաս. Տեսէք որպիսի սէր ընդհանուր զի Հայր· այլ

տեսէք ևս՝ որպիսի հեռևանք անտի յառաջ գան. տեսէք
քանի՞ շնորհապարտք էք Աստուծոյ որպէս որդիք Աս-
տուծոյ, և քանի՞ ինչ պարտիք անձանց. քանի՞ ինչ դար-
ձեալ Աստուծոյ՝ որ ներկ Հայր ձեր կոչել զինքն, զի և
է իսկ. և քանի՞ ինչ պարտիք ձեզ. զի ՝ի կոչել զանձինս
որդիս Աստուծոյ, պարտ է ձեզ անհնազանդել ոչնչի
զպատիւ աշխուժականութեանդ, և մի խորթանալ: Կէաք
կրկին, որ տան մեզ կարևոր և հաստատուն պատճառս
անարատ քաղաքավարութեան:

Որ ինչ պարտիքն Աստուծոյ. զի որովհետև ՝ի չէուն
խորհրդոյս և ՝ի ձեռն աղաչկութեան Բանին ընդ մերս
մարմնոյ՝ ունիմք զնոյն Հայր զԲանին մարմնացելոյ, ա-
սեմ զի և պարտիմք առաջի նմին Հօր ամենակալի ունել
ըստ համեմատութեան զնոյն գնացս Աստուածորդւոյն
և զնոյն խորհուրդս, այս ինքն զի պարտիմք ունել զնոյն
հնազանդութիւն հրամանացն Աստուծոյ, և զնոյն նա-
խանձ փառաց նորա: Զի Որդին Աստուծոյ մարմին
զգենու այսօր ՝ի սուրբ արգանդի Կուսին որպէս զվերս,
ասէ Առաքեալն, առ ՝ի հնազանդել Հօր իւրում, առ ՝ի
միաբանել ընդ կամս Հօրն, և առ ՝ի կատարել զեր-
կրպագելի խորհուրդս նորա. և խոնարհի մինչև ունայ-
նացուցանել զանձն, առ ՝ի փառաւորել զՀայր իւր, և
առ ՝ի հատուցանել բովանդակ զպատիւն յափշտակեալ
՝ի նմանէ: Ահա օրինակ մեր՝ ներքոյ արկանելոյ զմեզ կա-
մացն Աստուծոյ, պահելոյ հաւատարմութեամբ անլու-
ծանելի զօրէնս Աստուծոյ, փառաւորելոյ զԱստուած
արժանի քաղաքավարութեամբ: Ա՛յսու օրինակաւ ճա-
նաչեմք զնա մեզ ՝ի հայր. առանց այսօրիկ զինչ օգուտ
իցէ մեզ ասել հանապազօր՝ Հայր մեր որ յերկինս, եթէ
հեստեմք նմա, եթէ ժխտեմք զհայրութիւն նորա գոր-
ծովք, և վարիմք ընդ նմա որպէս Թշնամիք: Զի՞նչ օգուտ
իցէ ասել՝ Սուրբ եղիցի անուն քո, ծանիցի և պաշտեսցի
ընդ տիեզերս, եթէ մեք հայհոյեմք զայն, և այլոց ևս

տամբ հայհոյել· զի ըստ բարբառոյ սուրբ գրոյ՝ հայհոյել զանուն Տեառն՝ է անարգել զնա անառակութեամբք և անկարգութեամբ. և տալ հայհոյել զայն այլոց, վասն որոյ Առաքեալն կշտամբէր զՀրեայս. Վասն ձեր անուն Աստուծոյ հայհոյի· է գայթակղեցուցանել զնոսա բանիւք, խոտորեցուցանել զնոսա օրինակօք չարեաց մերոց, և ապականել հրապուրանօք: Զինչ օգուտ ևս ասել՝ Եղեցին կամք քո. եթէ ոչ կատարեմք մեք զկամս նորա, եթէ լուծանեմք զօրէնս նորա, եթէ սրտանջեմք զնա խախտամուտենէ նորա ընդդէմ խոստմանց և սպառնալեաց իւրոց, ընդդէմ յայտնի հրամանաց և արգելմանց, հեռևել ախտից և հաձել զնոսա յամենայնի: Գիտեմ զի առ պահել զպատուիրանս Աստուծոյ անարատ, և ՚ի տալ Աստուծոյ սրբութեամբ վարուց զխառս՝ զոր կամի ՚ի մէնջ, ոչ է գիւրին. այլ ևս՛ ձեզ այնչափ դժուարին, ո՛ հաւատացեալք, որչափ դժուարին եղև Աստուածորդւոյն՝ զոր առաքեաց Հայրն երկնաւոր, և որ ՚ի կատարումն կամաց Հօրն իջեալ յաթոռոյ մեծվայել չուքեան իւրոյ՝ եկն բնակել ՚ի մեզ, առ ՚ի փոխարինել Թշնամանացն՝ զոր արարաք Հօր իւրում, խոնարհեալ ՚ի մարդկային, և մինչև ՚ի ծառայի և ՚ի մեղաւորի կերպարանս: Ա՛հ, եղբարք իմ, ՚ի միտ առցուք, եթէ կարեմք, զի հնազանդութեամբ նորա քանի՛ առաւել սրբազանք եղեն իրաւունք Հօրն՝ որ ստեղծ զմեզ, և նորաստեղծէ այսօր՝ որդեգրելով զմեզ ՚ի Թիւս որդւոց իւրոց: Ի միտ առցուք, ոնձայնացմամբ Աստուածորդւոյն՝ քանի՛ բարձրացան փառքն Աստուծոյ ստեղծողին բնաւից ելից յանէից, և կրկնակի ստեղծողին մերոյ՝ ըստ բնութեան և ըստ շնորհաց. և ասել կշռադատեսցուք՝ զինչ էր վասն մարդոյ, մանաւանդ քրիստոնէի, ժխտել առ աբարչապետն զհնազանդութիւնն և զսպաս՝ զոր ըստ բազում այնչափ գլխոց պարսի նմա: Դատեսցուք զինչ է լինել նորա, և Թշնամանել զնա. կամելով Թօթափել

զլուծ այսպիսւոյ անժխտելի և օրինաւոր հպատակութեան: Դատեսցուք զինչ է լքանել զնա և հակառակ կալ կամաց նորա, յամառել ընդդէմ պատուիրանաց նորա, մինչդեռ սպառ հարկանեմք աշխարհի, մինչդեռ ոչ ինչ ՚ի պահանջանաց աշխարհի պակաս առնեմք, մինչդեռ յամենայն ինչ ձեռնարկեմք և համբերեմք ամենայնի վասն աշխարհի: Եթէ տէր եմ, եթէ հայր եմ, ասէր երբեմն ցժողովուրդ իւր, ո՞ր է պատիւն իմ. Եթէ հայր եմ, ո՞ր է խոհն իմ. և եթէ տէր եմ, ո՞ր է պաշինն իմ: Արդ զգանգատն՝ զոր առնէր առ ժողովուրդ իւր, կարէ յիրաւի և առնել մեզ ահագին սպառնալեօք. զի եթէ ոչ պատուեմք զնա արդ որպէս հայր, երկիցուք ՚ի նմանէ յաւուր միում որպէս ՚ի տեառնէ. զի եթէ արդ ոչ հնազանդիմք օրինաց նորա, յաւուր միում ներքոյ անկցուք պատժոց նորա. եթէ արդ ՚ի կեանս յայս ոչ փառաւորեմք զնա որպէս Աստուած քաւիչ, յաւիտենական դատապարտութեան մեր յետ մահու փառաւորեսցէ զնա որպէս Աստուած վրէժխնդիր: Զի այս է ահագին փոփոխումն՝ որում պարտ է մեզ մնալ յերեսաց հօր Թշնամանելոյ յանիրաւի, և իրաւապէս զայրացելոյ:

Յաւելում ՚ի կնիք բանիցս: Թողեալ արդ ՚ի բաց որ ինչ պարտիք առ Աստուած վասն ներելոյ նորա ձեզ կոչել զնա հայր ձեր, որպէս է իսկ իրօք, տեսէք արդ և որ ինչ առ ձեզ ինքեանս պարտիք, որք կարէիք կոչել զձեզ որդիս Աստուծոյ, և պարտ է ձեզ՝ անխոտաղելի ունել զայդպիսի աշխատականութիւն, և մի խորթացուցանել: Ի ըստ աշխարհի խակ և ըստ մարդկային իմաստասիրութեան մեծախոհութիւն ինն բանաւոր, որ առանց արհամարհելոյ զոք՝ ազդէ ՚ի ձեզ խմաստս աշխատանս և արժանիս ազգատոհմի և արեան ձերում. կարեմ և յաւելուլ՝ զի ըստ կրօնից խակ մերոց, և ըստ աւետարանական կարգաց է արիութիւն ինն սուրբ և քրիստոնէական, որ առանց տալոյ մեզ մեծամտել՝ ա-

առաջն առնէ մեզ միշտ զնկարագիրը մեր, և ստիպէ ըստ այնմ զգործս մեր յարդարել: Վասն այսորիկ Առաքե-լապետն առաջն առնէր հաւատացելոց, զի էին Ժողո-վուրդ ընտրեալ և աղնուական, ազգ սուրբ վերառեալ 'ի պատիւ քահանայութեան և թագաւորական քահա-նայութեան. Այլ դուք ազգ էք ընտիր, ռեգաւորութիւն, քահա-նայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական: Նոյնպէս և Ա-ռաքեալն հեթանոսաց յիշեցուցանէր եփեսացոց՝ զի էին որդիք լուսոյ, և անտի զհետ բերէր՝ զի պարտ էր նոցա որպէս զորդիս լուսոյ քաղաքավարել. Իբրեւ զորդիս լուսոյ գնացէք:

Այս է, ո՛ հաւատացեալք, զոր և ես վասն ձեր խնամատարիմ. էք դուք որդիք Աստուծոյ, և պարտ իցէ որդւոյ Աստուծոյ խորհել և գործել որպէս զորդիս աշ-խարհի. կայցէ երբեք անտեղի լինչ քան զայս, եղեռնական և դատապարտելի: Որդիք Աստուծոյ լցեալք խնամատիւք աշխարհի, և ապականեալ աշխարհի, որք պատուէն միայն՝ որ լինչ աշխարհ համարի պատուական, որք սիրեն միայն՝ որ լինչ աշխարհ սիրելի ընծայեցուցանէ նոցա, և երկնչեն միայն և խորշին՝ յորոց աշխարհ ոտն նոցա երկըն-չէ և դարձէ: Որդիք Աստուծոյ ներքոյ անկեալք ամե-նայն ախտից աշխարհի, և բոլորովին ապականեալ աշ-խարհի, օխակալք, նախանձոտք, բարկացողք, մոլեգ-նոտք, զրպարտողք, մատնիչք, փառամոլք, ամբարտա-ւանք և գոռողք, զօշաքաղք, կնամարդիք, զեղծք, և մատնեալք 'ի ցանկութիւնս մարմնոյ յետս ամօթալիս: Վայ՛ էր այս որդւոյ Աստուծոյ, որք՝ի պատու ազգ իցէ ձա-նաչել զնոսա. մանաւանդ չիցէ՞ նոցա ամօթ, չիցէ՞ նախա-տինք այս ամենայն: Եթէ 'ի պատուաւորաց ոք յաշխար-հի, վասն աւագութեան կամ աղնուատոհմութեան, գործեալ ինչ իցէ վատթարութիւն, ածէ զնա ամենայն անջնջելի. որոյ աչք հային 'ի նա այլք, և որոյ աչք հայիցի ինքն յանձն իւր, 'ի խաղաղել կրկին նկատեալ

զվատթարութիւնն՝ որ ընդ ինա ամօթով: Արդ նուաճ եղէ ամօթալի ծնելոց յԱստուծոյ, որդեգրելոց 'ի նմանէ, որդւոց Աստուծոյ, ծառայանալ զգայութեանց, լինել գերի ախտից, մատնել ընդ լծով անասնական ցան-կութեանց մարմնոյ, զառածանել յամենայն անիրաւու-թիւնս՝ յոր հրապուրեն անյագ ագահութիւն, տածել 'ի սրտի զոխ ծածկեալ և հնացեալ, երկնել 'ի մոխ ան-օրէն խորհուրդս մատնելոյ զերեսաս, և հեռանել՝ չասեմ կրօնից՝ այլ և բնական արգաւորութեան, հաւատարմու-թեան, և լուսոյ բանին: Առ այս արդեօք էին միածին Որդին Աստուծոյ յաշխարհ, կազմել իւր այսպիսի ժո-ղովուրդ. առ այս կամեցաւ բնակել ընդ մարդկան: Ո՞չ առ 'ի կազմել իւր ժողովուրդ կատարեալ, զերծ յա-պականութենէ աշխարհի. ժողովուրդ ազատ 'ի թշուառ ցանկութեանց, որովք մեղք մտին յաշխարհ և տիրեն օր ըստ օրէ. ժողովուրդ քրիստոնէից, ոչ եթէ անուամբ միայն՝ այլ և արդեամբք և գործովք. Պարտական Տէառն ժողովուրդ հպազեալ:

Բացցուք ապա, եղբարք իմ, բացցուք զաչս հաւա-տոց, և նկատեալ աչօք հաւատոյ զաղնուականութիւն մեր սրբեալ ազգակցութեամբն Աստուծոյ, մի՛ ևս անկ-ցուք յառաջին մոլորութիւնս մեր: Մի՛ զփառաւորեալ մեծութիւն մեր դարձուացուք 'ի պիտակ անուն, որ լի-ցի մեզ յանարգութիւն՝ եթէ գործովք աղարտեմք զայն: Եթէ իշխեի առ այսքան աւագ որեար՝ որ լսեն ինձ՝ ա-սել, թէ աղարտեն զմեծութիւն իւրեանց և զաղնուա-տոհմութիւն, զնախահաւրս և զաստիճան իւրեանց, առ-նուն 'ի նախատինս զբանս իմ, և կարի ծանուն եք թուէին նոցա: Մի՛ այլազգ թուէսցին մեզ կշտամբանքն՝ զոր մարթէ ասնել մեզ, զի անարժանս զմեզ կացուցանեմք գեղեցկագունին քան զամենայն փառաւորեալ անուանս, յորմէ որդիք Աստուծոյ: Բանդ յաւիտենական և համագոյ քումդ Հօր, Աստուած հաւատոյ նմին, և

մարդ իբրև զմեզ, դու ստացար մեզ զգեղեցիկ անուն զայս, և քեզ վերացաք յայս բարձրութիւն, մի թողուր անկանել մեզ յանուսանէ ատել. և մանաւանդ մի թո- ղուր մեզ կորուսանել զարգասիս առատաղեղ փրկա- նաց, որոց դու ինքն եղեր գինք: Եւ դու Կոյս սուրբ, քանզի յարգանդի քումմէ սկսաւ այսօր մեծս այս խոր- հուրդ, օգնեա մեզ առ 'ի ընդ որ ինչ 'ի հաւատոյդ մոլթենէ և 'ի փուճոյ մերմէ խնդրի 'ի լիուլի կատա- րումն նորին. որպէս զի կեցեալք որպէս որդիք Աստու- ծոյ, հաղորդս լիցուք փառաց ընտրելոցն Աստուծոյ, ո- րում արժանի արասցէ զմեզ, և այլն:

ՀՕՐՆ ՊՈՒՐՏԱԼՈՒԻ

Ի ՏԵԱՌՆ ԸՆԴ ԱՒՕՋ

Իւ իբրև լցան աւուրք սրբու- թեան նորա ըստ օրինացն Մով- սիսի, ածին զնա Յերուսաղէմ յանդիման առնել Տեառն:

Ղուկ. Բ. 22:

Տէր արքայ, մանուկս այս՝ որ ածաւ այսօր Յերու- սաղէմ՝ է Որդին Աստուծոյ, հաւատոյ Հօր. և որ ածէն զնա՝ է Մարիամ մայր նորա, ամենասուրբն 'ի կանայս, և ամենևին ընտրհօք: Իսկ պատճառք ածելոյ նորա զԱս- տուածորդին Յերուսաղէմ, է յանդիման առնել զնա Աստուծոյ 'ի տաճարին: Սուրբ Աւետարանիչն զկայ ա- ռեալ, յաւելու ինչ՝ զոր պարտ է քաջ նկատել. ազգ առնէ՝ զի այն ամենայն ըստ օրինաց կատարէր. Ըստ ասա- ցելոյ յօրէնս Տեառն: Որպէս թէ ոչ Մարիամ, և ոչ Քրիս- տոս, ոչ կարէին ըստ պատշաճի երևել առաջի Աստու- ծոյ՝ առանց պահպանութեան օրինացն. և որպէս թէ պատարագ նոցա՝ թէպէտ և աստուածային՝ ոչ լինէր աստուածահաճոյ, եթէ ոչ ըստ օրինաց կատարէր. և որպէս թէ գործ փրկութեան մերոյ կախէր զկատարմա- նէ օրինացն: Եւ զինչ իցեն խմաստք բանիս: Այս խոր- հուրդ է, ո՛ հաւատացեալք, զորմէ առաջի կայ ինձ ճա-

ուել, և որում պատկառ կացից առ 'ի հրահանգս և 'ի
ընուրթիւն ձեր: Այս հնազանդութիւն օրինաց Տեառն,
այս հնազանդութիւն յանգիման առնելոյ Տեառն զԱս-
տուած փրկիչ, և սրբութիւն մեր Կուսի, քարոզեն մեզ
բարձրաձայն զայս առաքինութիւն անծանօթ, այսքան
հարկաւոր· և զայս կարևոր պատճառս մատուցանէ Ճա-
ռիս սերկեանս տօնախմբութիւն: Հոգիդ սուրբ Աստու-
ծոյ, որ սրբեցեր զՄարիամ 'ի ձեռն պահպանութեան
օրինաց, և ածեր զնա 'ի տաճարն մատուցանել զպատա-
րագն՝ հրամայեալ յօրինաց, լցո և զմեզ նովին խոհա-
տիւք՝ որովք երջանիկ հոգի իւր լցեալ էր յայնժամ:
ընորհեա և մեզ խոհատս բարձունս զսուրբ և զպաշտելի
օրինաց Տեառն: Խնդալմուտ արա զմեզ՝ զի առանց օրի-
նացս այսոցիկ չենք այլ ինչ 'ի մեզ, բայց ապականութիւն
և անկարգութիւն· որպէս զի յանցանել ըստ օրէնս Աս-
տուծոյ՝ գտանիմք անընդունակք ամենայն բարեաց, և
հակամէտք յամենայն չարիս: Այսքան մեզք՝ որ գործին
հանապազօր, զորս կարեմ կոչել ապականութիւնս և
արհաւիրս մերոյ յաւիտենից, են յայտնի ապացոյցք· այլ
Թերևս խստութիւն սրտից մերոց առնէր զայնոսիկ ան-
զօր ամենևին, եթէ չնորհաց քոց լցս ոչ օգնէր մտաց
մերոց: Խօսիմ առաջի Թագաւորի, մեծագունի ընդ աշ-
խարհ· զորոյ ոչ ինչ երկեպիմ զկրծնից, և ոչ երկնչիմ
խօսել առաջի նորա համարձակ, զի վասն օրինացն Աս-
տուծոյ խօսիմ: Ոչ ըստ առաքինոցն Եսթերայ խնդրեմ
'ի քէն, Աստուած իմ, զի բանք իմ հաճոյասցին նմա·
քանզի ոչ ինչ երկեպիմ, զի 'ի ճառել զգերազանցու-
թենէ օրինաց քոց, ոչ միայն հաճոյ եղէց նմա, այլ և
հաւանեցուցից զնա և չարժեցից զսիրտ նորա: Սակայն
կարօտ եմ օգնականութեան քո, և առ 'ի գտանել զայն
'ի քէն՝ դիմեմ առ սուրբ Կոյսն. Ողջոյն ՚էՆ Մարիամ:

Յողդողդ են միտք մարդկային, ոչ կան հաստատուն
'ի նոյն խորհուրդս, այլ բազում այն է՝ զի և հակառակ

խրեանց խորհին, և ըստ այլ և այլ դիպաց՝ յորս գտա-
նին՝ փոխին 'ի ներհակ կարծիս: Ճշմարտի այս 'ի բա-
զում իրս, այլ մանաւանդ յայսմ՝ զորմէ առեալս եմ
ճառել, այս ինքն զհնազանդութենէ և զհպատակութե-
նէ աստուածային օրինաց: Զի գտանեմ երկուս այլ և
այլ օրէնս 'ի մարդկի, հակառակս այսմ հնազանդու-
թեան, հանդոյնս գոգսես այնոցիկ, զորոց Առաքեալն
ասէ. Գտանեմ ծածուկ խին օրէնս յանձին՝ որ հակա-
ռակ կայ օրինացն Աստուծոյ, և գերէ զնս օրինաց մե-
ղաց: Այսոքիկ կրկին օրէնք, ըստ գեղեցիկ խմաստասի-
րութեան սրբոյն Ամբրոսեայ, են ամբարտաւանութիւն
մարդոյ և վատութիւն: Ամբարտաւանութիւն, որ ասէ
մարդոյ մոռանալ զպարտս իւր առ Աստուած. և վա-
տութիւն, որ ոչ ներէ նմա տեսանել զոր կարէ, և յոր
ինչ ձեռնհաս է առնել օգնականութեամբն Աստուծոյ:
Ամբարտաւանութիւն մարդոյ, որ առնէ զնա սահակ և
ցոփ· և վատութիւն նորա, որ առնէ զնա երկչոտ: Ամ-
բարտաւանութիւն, որ ազդէ 'ի նա աստուածընդդէմ
խակ ըմբռստութիւն· և վատութիւն, որ ընդդէմ պար-
տուց իւրոց արկանէ զնա 'ի լքումն· երկաքանչիւր խակ
առ 'ի տալ նմա լուծանել զգերազգին օրէնս՝ զոր եդ 'ի
վերայ նորա Աստուած, և որոյ պահպանութիւն՝ թէ-
պէտ և սիրելի, 'ի խստութիւն նորա՝ լինի նմա դժպրհի և
առելի: Արդ առաջի կայ ինձ, ո հաւատացեալք, պատե-
րազմել այսօր ընդդէմ անկարգութեանցս· և քանզի օ-
րինապահութիւն հաստատեալ է 'ի խորհել հաւաստա-
բանէս յերկոցունց ասակ ծայրայեղ խստութեանց, խո-
նարհութեամբ զանձն 'ի ներքոյ արկանելով հրամանի
օրինաց, և արիութեամբ քանալով յաղթել գժուարու-
թեանց 'ի կատարումն նոցին, խորհիմ գրոշմել նախ խո-
րագոյնս 'ի միտս ձեր և 'ի աչերս զերկուս զայսոսիկ
պարտս, և առ այս դնել առաջի աչաց ձերոց զՀնազան-
դութիւնն, զոր Տիրամայրն կատարեաց այսօր: Զի առանց

օտար Էլանելոյ 'ի սերկեան խորհրդոյս՝ տեսանիցէք յան-
ձին սրբոյ Կուսին, որ մատուցանէ զորդի իւր 'ի պատա-
րագ, զօրինակ ամենախոնարհ հնազանդութեան, արիա-
կան և զերահրաշ հնազանդութեան. ամենախոնարհ
հնազանդութեան՝ որ յամենի առնէ զամբարտաւանու-
թիւն մեր, և արիական հնազանդութեան՝ որ դատա-
պարտէ զվատութիւն մեր: Մխ դիք. Մարիամ 'ի սեր-
կեան արարողութեան ընդ զօրինս Տեառն. և օրէնքս
այս, որպէս սուրբ Աւետարանն ազդ առնէ մեզ, խիստ
էր յոյժ վասն Կուսին: Յօրինապահութենէ նորա 'ի միտ
առնուամ զամբարտաւանութիւն մեր ամենապարտ. այս
լեալ առաջին մասն Ճառիս. և 'ի կոխելոյ նորա զամենայն
դժուարութիւնս 'ի կատարումն օրինաց՝ 'ի միտ առնուամ
զվատութիւն մեր, և այս լեալ երկրորդ մասն. զայսոսիկ
երկոսին կէտս առնուամ պարզել լսասիրութեան ձե-
ռամ:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Կրկին օրինակաւ, ո՛ հաւատացեալք, ոանհար լի-
նիմք մեք աստուածային օրինաց. մի՝ զոր կոչեմ ապըս-
տամբութիւն սրտի, յորժամ առանց ինչ պատճառս
պատճառելոյ՝ յայտ առնեմք զապստամբութիւն սր-
դեամբք, ասելով 'ի սրտէ որպէս զհրեշտակն ապստամբ.
Ոչ ծառայեցից: Ծանր է ինձ կեալ 'ի գերութեան. թո՛ղ՝
հրամայեսցէ Աստուած զոր կամի, ոչ հպատակեցից օ-
րինաց նորա: Իսկ միւսն՝ զոր համարիմ ձեռաւակարագոյն
մոլորութիւն մտաց, յորժամ անձամբ զանձինս խաբե-
լով խնդրեմք պատճառանս, և յարմարելով զկիրս մտաց
մերոց՝ ազատ կացուցանեմք զմեզ 'ի պարտուց օրինաց:
Այդ խորհուրդ ոմնիս յամենի առնէ բարձրաբարոյ զեր-

կոսին ևս հնարս ամբարտաւանութեան. և այս է, որ-
պէս տեսանիցէք անդէն յընծայման Տեառն 'ի տաճարին,
և 'ի սրբութեան Տիրամօր:

Թէպէտ և ծնեալք ընդ իշխանութեամբ և հպա-
տակք Աստուծոյ, սակայն բերիմք յապստամբութիւն
ընդդէմ ամենիշխան տէրութեան նորա. և այս է սկիզբն
ապականութեան մարդոյ: Նկատեալ զմարդ առանձինն,
ըստ այլ և այլ կարգաց՝ յորս բաժանի աշխարհ, այս են
մահացու մեղք սուագայ՝ զի ինքնիշխանս համարին զան-
ձինս, որպէս թէ օրէնք աստուածայինք չիցեն վասն իւ-
րեանց. որպէս թէ Աստուած յօրինադրելն՝ 'ի բաց ա-
ռեալ իցէ զինքեանս, և որպէս թէ չէր պարտ ինքնակա-
լութեանն Աստուծոյ տալ նոցա օրէնս և օրէնսդիր, որ-
պէս զի ըստ Սաղմոսերգուին ուսցին թէ մարդիկ են.
Կաց՝ Տէր, օրէնսդիր 'ի վերայ նոցա, և ծանիցեն հեթանոս ըն-
մարդիկ են: Ընդարձակեսցուք զօրինս զայս, և ահա այս
են հասարակաբար մեղք անօրինաց և խառնաշփոցից,
որոց յաճախ, մինչև 'ի մահին իսկ և յանհնար պայմանի,
է սիրտ ստահակ առ Աստուած, որպէս զայնոցիկ՝ որք 'ի
բարձրագոյն աւազութիւնս աշխարհի կան. զի որ ինչ
ցոփութիւն և ամպարշտութիւն գործէ 'ի կէսս, 'ի նոյն
զայլն զառածանէ զեղծումն իշխանութեան և մեծու-
թեան: Իսկ Մարիամ հնազանդեալ օրինացն Մովսիսի,
և սրբեալ 'ի տաճարին յամենի առնէ զպնացս մեր: Զի
նա արքայազն և մայր Աստուծոյ էր, և որպէս Աստուա-
ծամայր 'ի վերայ օրէնսդրին իսկ ունէր իշխանութիւն,
վասն որոյ էին նմա ամենայն իրաւունք ազատութեան
չիշխանութենէ, զորս մարթ իցէ ունել սուկ արարա-
ծոյ ընդ իշխանութեամբն Աստուծոյ: Ճշմարիտ է ամե-
նայն. այլ արդարապէս կամեցաւ Աստուած զի հնազան-
դեացի նա օրինաց, առ 'ի կործանել օրինակաւ իւրով
զամենայն ինքնօրինութիւն եղկանաւոր՝ զոր մեք սեփա-
կանեմք, և առ 'ի դատապարտել զանկարգութիւնս մեր

յաղթահարիչ և անժխտելի ապացուցիւս: Զի եթէ 'ի սկզբնաւորութիւն փրկութեան մերոյ, որպ խորհուրդ պաշտելի յայտնի այսօր առաջի աչաց մերոց, մայրն Աստուծոյ՝ հանդերձ աստուածամայրութեամբն՝ ոչ հրաժարեր 'ի հնազանդելոյ, որմէ երեսօք կարիցեմք մեք արդարացուցանել առաջի Աստուծոյ զանիրաւութիւն և զյանդգնութիւն անհնազանդութեանց մերոց: Մարիամ առաւել և ինչ քան զայս արար. զի ոչ զանձն միայն արկ ընդ օրինաց, այլ և զԱստուածորդին. զոր ան համեմատ 'ի վեր քան զինքն գոլով, ազատ և ամենիշխան, կամեցաւ 'ի ձեռն իւր ներքոյ արկանել զանձն օրինաց, և եթ պատճառս Աստուծոյ կարի յոյժ առաւել զօրաւորս առ 'ի դատապարտել և յամօթ առնել զոգին ամբարտաւանութեան, որ առնէ զմեզ օրինազանցս: Պարզապոյնս ասացից. Մարիամ ներքոյ արկանէ օրինաց զինքն իսկ զմեծութիւն, զինքն իսկ զկարողութիւն, զինքն իսկ զազատութիւն յօրինաց և զամենակալ տէրութիւն: Այսքիկ են կրկին պանչելիք, զորս երկինք ցուցանեն մեզ ածնիւս. դշխոյ՝ որ հնազանդի օրինաց, և արկանէ զԱստուած ընդ օրինաց. Աստուած՝ որ հնազանդի, և ընծայի 'ի հնազանդ մօրէ, առ ինչ. — Ո՛հ, սիրելի ունկնդիրք, խնամեցարուք: Դուք՝ որ 'ի բարձրագոյն աստիճանս կայք, և դուք՝ որ 'ի յետին կայս, նշանաւորք և անշնչանք, մեծամեծք և փոքրունք, մեծատունք և աղքատք, զի ամենեցուն եմ պարտական, լուարուք ինձ. զի 'ի կարևորագոյն ճշմարտութեանց պարզեցի ձեզ, և ըստ համեմատութեան պայմանաց ձերոց՝ հանդերձիմ արդ զգալի և առնել ձեզ զայն:

Ընդէր Աստուածորդին հնազանդի օրինաց: — Առ 'ի խրատել զձեզ, մեծամեծք աշխարհի, յանհրաժարելի պարտս ձեր կալոյ 'ի կատարեալ հնազանդութեան աստուածայնոյն օրինաց: Զիոյհ Թերեւս քաջ հասու լեալ ձեր այսմ, և հակառակ լուսոյ բանին և կրօնից կարծիցէք

Թերեւս թէ խստութիւն աստուածային օրինաց չիցէ վասն ձեր որպէս հասարակածին մարդկան. այլ սթափեցարուք այսօր 'ի մտահաճութենէ այսր, և առ այս՝ մտիք մօք 'ի տաճար անդր Երուսաղէմ: Զի տեսանիցէք անդ զհակառակն անտասանելի հաստատեալ. և եթէ վայրկի մի պարապիցէք 'ի նկատել զնորհուրդ աւուրս, խելամուտ լինիք՝ զի օրէնք աստուածայինք առաւել և հայեն 'ի ձեզ քան յայլ մարդիկ, թէպէտ և վասն ամենեցուն անխախիտ սահմանեալ: Հարցանիցեք թէ էր պաշտօն. — յաղագս երից իրաց, յորս պարտ է ձեզ խոկալ զամենայն աւուրս կենաց ձերոց: Մի՝ զի ըստ չափոյ պաշտօնականութեան իշխանութեան ձերոյ պարտիք մատուցանել Աստուծոյ զպաշտօնն, որ վայել է նմա երբեւ օրէնսգրի. որպէս է անժխտելի՝ զի Քրիստոս հնազանդելով օրինաց, ինքն միայն մատոյց գերագոյն իշխանութեանն Աստուծոյ զարժանին պատիւ: Պատճառ պանչելի առ 'ի ստիպել զձեզ յօրինապահութիւն անթերի, զաւագսդ և զկզօրս: Աւաւելագոյնս փառաւորի Աստուած 'ի պահել ձեր զօրէնս իւր, և 'ի ձեզ է մատուցանել նմա զայս փառս, որ առաւել քան զայլ ամենայն ինչ ծուրբ առնէ զանուն նորա, վասն որոյ և Աստուած առաւել վրէժխնդիր է այնմ: Երկրորդ՝ զի Աստուած ոչ առ այլ ինչ մեծացոյց զձեզ յաշխարհի, բայց առ 'ի փառաւորել զնա այսու օրինակաւ. մի կարծէք՝ թէ կէսք 'ի մարդկանէ պատուով կամ գոյիւք իցեն ձոխացեալ, առ 'ի կարել առաւել քան զայլս կատարել զկամս իւրեանց, և կեալ ինքնօրէնս: Ոչ այդպէս է Աստուած, որոյ ամենակարողութիւն անբաժանելի է յիմաստութենէ և 'ի սրբութենէ իւրմէ, չիարէր առ այդ կարգել զայլ և այլ անհաւասար կարգս մարդկան: Թագաւորք են, որք ըստ սուրբ գրոց են որպէս աստուածք 'ի վերայ երկրի, ոչ առ այլ ինչ իշխեն՝ բայց առ 'ի ծառայել Տեառն. Ե- Ռագաւորայ ծառայել Տեառն: Այս է կարգ աս-

տուածախնամ տեսչութեան, այս և լինելութեան. զի որ մերձաւորագոյն է Աստուծոյ, անմիջոց ծառայութեամբն և առաւելագոյն հպատակութեամբն սահմանի: Եւ ընդհէր չիցէ այս կարգ, ուր Քրիստոս ինքնին՝ դլուխ նախասահմանելոց՝ առ՝ի ներքոյ կալ այսմ կարգի նախասահմանեցաւ: Յինչ հաստատեալ է բովանդակ խորհուրդ մարդկութեան իւրոյ. — Առաքեալն սուղ ինչ բանիւ յայս առնէ մեզ զայն, զորոյ տեսանելիք մեք այսօր զկատարումն. Աթոռ՝քով Աստուած զերդի էր՝ որ եղեալ՝ի ինոջէ, և եմոթ ընդ օրինօք: Այսպէս զկերպարան երկին տայ Առաքեալն, առ այս Որդին Աստուծոյ առաքեցաւ. առանց այսորիկ՝ ինքն Աստուած չառնոյր մարմին, և առանց այսորիկ ոչ լինէր Աստուած և Մարդ: Զարմանալիք թերևս ընդ այս. այլ առաւել յոյժ զարմանայիցէք, եթէ յաւելուցուս, զի առանց այսր՝ ոչ լինէր յաչխարհի ոչ կարդ, ոչ պատիւ, ոչ աւագութիւն, ոչ մեծութիւն, այլ թողոյր զձեզ Աստուած յանէութեան. զի ոչ առ այլ ինչ՝ի չգոյէ ածէ զձեզ՝ի գոյ, բայց զի զօրէնս իւր պահիցէք, և նախանձաւորք այնոցիկ լինիցիք: Առաւել ևս ինչ ասեմ, և լիցի երրորդն պատճառ: Զի Աստուած՝ի կացուցանելն զձեզ՝ի վեր քան զայլս՝ի մարդկանէ, կամէր առաջի դնել աչխարհի օրինակս սրբոյ օրինապահութեան, զորմէ բանքս են, որպէս Քրիստոս և Մարիամ էջգան՝ի տաճարն Տեառն առ՝ի լինել օրինակ անարատ հաւատարմութեան և կատարեալ օրինապահութեան. այս ինքն, որպէս սուրբն Գրիգոր քահանայապետ ասէ. Կամի Աստուած՝ զի փոքունք՝ի մեծամեծաց ուսցին ըզհնազանդութիւն, և մեծամեծք համարեսցին զանձինս՝ի մասինս յայսմիկ որպէս կանոնս, որոց փոքունք մի վերջանայցեն նմանել:

Այս մատուցանել ինձ արդ պատեհ խոսկոյ առ ձեզ, եղբարք սիրեցեալք, առ ձեզ, որոց փրկութիւն այնչափ առաւել ցանկալի է ինձ, և պատուական հոգիք՝ձեր,

որչափ զի անհաղորդք՝ի բարեմասնութեանց աչխարհի, նուաղ դառնիք հաղորդք անկարգութեանց նորա և սպականութեան. առ ձեզ, որոց ետ Աստուած ծնանել յանշնչան պայմանի, որոց բախտ, կամ լաւ ևս՝ կոչումն, Թուի սահմանեալ լինել ընդ իշխանութեամբ և հնազանդել: Ահա ինչ մայր Աստուծոյ, և՝ի ձեռն նորա Աստուած մարդացեալ, մանին ընդ օրինօք: — Վասն երից այլոց պատճառաց՝ որ հային՝ի ձեզ, և զորս խնդրեմ անմոռաց ուշել՝ի մտի. այս է առ սփոփել զձեզ, առ՝ի հրահանգել, և առ՝ի յամօթ առնել: Ահա՝ի սփոփել, զի՝ի կարգիդ՝ յորում էք՝ մանն և բաժին ձեր է հպատակել և լեթ. որ է կարգն ընտրեալ՝ի Քրիստոսէ, որ լաւագոյն համարեցաւ առնուլ զկերպարանս ծառայի՝ քան զՏեառն, և կալ ընդ օրինօք՝ քան օրինադրել. առ՝ի քաջալերել զձեզ սովին խորհրդով, զի որ բարձրագոյնք քան զձեզ են յաչխարհի, են ընդ օրինօքն Աստուծոյ որպէս զձեզ, և դառնալոց են իբրև զձեզ, և ոչ լիցի նոցա խուսել յատեանէ անտի՝ ուր ամենայն ինչ սահմանելոց է ըստ աստուածային օրինացս. այս է մխիթարութիւն ձեր: Իսկ երկրորդ՝ առ՝ի հրահանգել զձեզ, թէ որով օրինակաւ պարտ է ձեզ հնազանդել, այսինքն մարդկան վասն Աստուծոյ, և Աստուծոյ յանձինս մարդկան. զի հնազանդութիւն ձեր մի զկայ առցէ՝ի մարդկէ՝ այլ առ Աստուած վերանայցէ, որպէս առ կէս իւր և առ գլխաւոր ուշ նպատակի. Հնազանդ լերուք տէրանց ձերոց... իբրև Տեառն, և ոչ իբրև մարդկան: Զի համարիցիք զմարդկէ, որոց հնազանդիք, որպէս պատկերս Աստուծոյ. զի յարգիցէք զօրէնս նոցա որպէս բղխեալս յաստուածային օրինաց. զի ընկալիք զհրամանս նոցա որպէս զկամս Աստուծոյ յայտնեալս, ածեալ զմտաւ՝ զի առանց այսորիկ՝ հնազանդութիւն ձեր լիցի ծառայական որպէս զհեթանոսացն, հնազանդութիւն անարդ առաջի Աստուծոյ և առ ոչ ինչ համարեալ, որ ոչ պտղաբեր լիցի ձեզ. զի

ոչ առնէք զայն ըստ աստուածային օրինակին՝ որ ցուցաւ մեզ այսօր յընծայման Աստուծոյ Փրկչին մերոյ ի տաճարին, և ի սրբութեան մօր Կուսի. այս ի հրաման ձեր: Իսկ առ ի յամենի առնել զանիրաւ գժկամակութիւն ձեր հպատակելոյ Աստուծոյ, և կալոյ ընդ լծով օրինաց, ուր այնքան հլութեամբ՝ կամ գէթ խոնարհութեամբ՝ վաստակս ձեզ համարիք կալ ընդ իշխանութեամբ մարդկան, բաղդատեցեք զձեզ ընդ ձեզ, սիրելի եղբարք իմ: Վշտանամ արդարև և հառաչեմ. զի ոչ իշխէք ստուգանալ մարդկան, և ոչ կամիք հնազանդել Աստուծոյ. հլու էք առ մարդիկ, և հեստք առ Աստուած. օրէնք մարդկայինք սանձահարէն զձեզ ի պարտս ձեր, և դրժէք համարձակ օրինացն Աստուծոյ: Աւաքեաքն ասէր ցեփհեսացիս. Հնազանդ լերուք պերանոյ յերկրի մարճաւորաց ոչպէս Քրիստոսի. եթէ օրէն էր ինձ լսելզպատուհէր Աւաքեալին, ասէի ես մտադիւրս. Հնազանդ լերուք Քրիստոսի, որպէս հնազանդիք տերանց ձերոց մարմնաւորաց. այս է՝ զոր ամենեքին համարիմ ձեզ: Տեսէք որպիսի հնարաւոր հարկ է ինձ ըղձանալ ձեզ, զի գէթ հանգիտապատիւ առնէիք զԱստուած ընդ տերս ձեր մարմնաւորս, և չատանալ՝ զի զնոյն հնազանդութիւն ունիցիք առ Աստուած, պատրաստ, խոնարհ, և հաւատարիմ, զոր պահանջէն ի ձէնջ մարդիկ, և ընծայէք գուք նոցա անթերի:

Գիտեմ, սիրելի ունկնդիրք, զի հպատակել աստուածային օրինաց ծանր թուի քեզ և նուաստացուցիչ. գիտեմ զի խնուս զաչս մտաց քոց՝ մինչև կարծել զայն հաւասար բնական ազատութեան քո, որում եսդ նախանձաւոր, և ոչ խորհս զայն յանկարդ սիրոյ ազատութեան և ի հոգւոյ ապականութեան: Այլ տգիտութիւն քո այդ ի մասինս յայսմիկ յառաջ գայ ի վեր ի վերոյ հայելոյ ի խորհուրդ օրինապահութեանն Քրիստոսի և Տիրամօր: Զի եթէ ասիցեմ, թէ հնազանդութիւն օրի-

նաց, քաջ ի բաց ի նուաստացուցանելոյ զմարդ՝ ձչմարիտ փառս գործէ նմա, թէ ըստ ջափոյ օրինապահութեանն՝ բարեբաստագոյն գոյանի մարդ և ազատագոյն և աւելի անձին. թէ յայսմ իսկ է ընտրութիւն օրինացն Աստուծոյ ի մարդկանոյ, զի ուր ազատութիւն ի մարդկային օրինաց համարի առաւելութիւն պատուոյ, առաւելութիւն մեծ շնորհացն Աստուծոյ, ըստ սրբոյն Օգոստինեայ, է չիարել ի բաց կալ յաստուածային օրինաց, թէ Դաւիթ՝ թէպէտ և թագաւոր՝ հասու եղեալ կարևոր գաղանեացս, համարէր երանութիւն պատկառ կալ օրինացն Աստուծոյ, և պարապէր հանապազ ի խոկալ յօրէնս Տեառն, և ի պահպանութեան նոցին գոյանէր հանգիստ. Յաղաղութիւն բազում է սիրողաց, այսպէս ըստ նոցա. զայս ամենայն ձչմարտութիւնս պատճառ և հաւատք բանի արդեօք կարասցեն հաւանեցուցանել զձեզ. այլ ես ոչ առաւել ինչ առնեմ առ ի չալեթահարել զմիտս ձեր, բայց յանդիման առնել ձեզ ըստ Սուրբն սրբոյ սրբեալ հնազանդութեամբն՝ զոր մատոյց օրինաց, զանգրանիկն ամենայն արարածոց մտեալ ընդ օրինօք, զՓրկիչն ըստ գերազանցութեան՝ որ կամի ըստ բանից օրինացն՝ զի գնեսցի. և յորժամ առաջի առնեմ ձեզ զմարիամ, հանդերձ ամենայն փառօք աստուածամայրութեանն, լցեալ խնդութեամբ, զի ըստ օրինակի Աստուածորդւոյն հպատակէր օրինաց: Ո՛չ ապաքէն խորագոյնս աղբեսցէ այս ի միտս ձեր և ի սիրտս, քան զամենայն ձառս աստուածաբանականս:

Արդ այսուհետև, ո հաւատացեալք, զնեա երթայք տակաւին մնոտի խմաստակութեանց աչխարհի, և հաստատեցէք զերջանկութիւն կենցաղոյս ի թչուառ ինքնօրինութիւն, անաբիծութիւն, յեղեռնաւոր ազատութիւն յանգգնելոյ յամենայն ինչ ընդդէմ օրինաց, ի մոռացօնս պարտուց մինչև յանաստուածութիւն, կամ ի համարել զԱստուած համահաւ պղծութեանց ձերոց,

մինչև չկամել զնա ձանաչել, մինչև ասել ընդ ամպարշտին Փարաւոնին. Ո՞վ է նա, որոմ լսեայց ձայնի նորա: Ո՞վ է Աստուածն այն, որով սպառնայք ինձ անդադար, և ընդ օրինօք նորա ստիպէք զիս կալ. ո՞ է դա՝ որ կարիցէ պարտս ՚ի վերայ իմ դնել բռնադատելոյ զկիրս իմ և զիրձս և ըզխորհուրդս: Մինչև կերպարանել զԱստուած պաշտպան պղծութեանց, և ասել ընդ անմտին. Եթէ կայցէ իսկ Աստուած, իցէ՞ որպիսի յանդիման առնեն մեզ զնա. զիա՞րիցէ նա զամենայն, իցէ՞ նմա զամենայնէ մեծ ինչ փոյթ, իցէ՞ այնչափ գիւրացաստումն, իցէ՞ այնչափ խիստ ՚ի դատել, և ահագին ՚ի վրէժխնդրութիւն. Ասացէ՛ն՝ վիճդ գիպոյ Աստուած, կամ գոյցէ՞ արդեօք գիպոխիւն առ ՚ի բաչխրելն: Ահա բարբառ է մեղաւորի առեցողի օրինաց, և այսր յանկի հոգի աշխարհի. ոչ անդէն և անդ, այլ անվրէպ յառաջ խաղացմամբ յաճախութեան մեղաց լինի սովորութիւն, եթէ ոչ խօսելոյ այսպէս՝ գէթ խորհելոյ և գործելոյ: Ի յաճախել օրինազանցութեան՝ տկարանայ երկիւղ Աստուծոյ, զօրանայ ապականութիւն և լինի յաղթող. և զինի դարձադարձի ՚ի մեղս և յօրինազանցութիւն՝ հասանի թշուառութիւնն այն սոսկալի, յորում ոանհար եղեալ Աստուծոյ մեղաւորն ասէ. Մեղայ, և ինչ եղէ ինէ: Ասաի է և ՚ի մեղս անդ հանդարտութիւն մեղաւորին. ասի ամբարտաւանութիւնն, որով պաշտպան կայ ախտին, և ասի յամառութիւնն՝ որ լծուին է չարեացն: Ի բաց ընկենու անխոցիւր զամենայն աստուածային օրէնս՝ որ նեղէն զնա. և եթէ պահէ ինչ յայնցանէ, ոչ որպէս օրէնս Աստուծոյ պահէ, այլ զի հաստատեալ է այն յօրինաց աշխարհի, և զի աշխարհական օրէնք բռնադատեն զնա ՚ի պահպանութիւն: Ի սկզբան անդ պատրուակէ զօրինազանցութիւնն ՚ի վերին երեսս, այլ ապա հոլանէ զայն, ոչ բռնազբօսէ զանձն, ոչ ևս զգուշանայ, և երանէ՛ թէ մի պարծեսցի նա յամպարշտութիւնս և ՚ի զառածանս իւր: Ահա է՛ զոր

սուրբք և ծառայք Աստուծոյ ողբային յոյժ և ողբան հանապազ, ՚ի վերայ այսորիկ հեղուն հեղեղս արտասուաց. Վասի՛ զարդ իջին յալայ իմոյ, ասէ Սաղմոսերգուն. և Տրմաւնիան կալաւ զիս ՚ի մեղաւորացդ, և այժ ևս ողբիմ զբնին: Ահա էր որ ստիպէր զմարգարէս երևեալ յարքունիս, գիմադրել Թուխմա ուղխից ամպարշտութեան զնախանձ օրինացն Աստուծոյ: Ահաւասիկ, ո՛ հաւատացեալք, նոյն պաշտօն յանձն է և ինձ, և յայս առաքեալ եմ ՚ի քարոզել խմբով այլոյր զբանն Աստուծոյ, շատ համարիմ ասել առ այնոսիկ՝ որ ոչ քրիստոնէաբար կեան. Թըշուառք էք, զի Թողէք զօրէնս Աստուծոյ, և այս լինի ձեզ ՚ի կորուստ: Ահա զի առ աւադս աշխարհի խօսիմ, պարտ է՞ինձ ահագին ևս կշտամբանս ընդ Մալաքիայ մարգարէի առնել նոցա. Իսկ դուք խոտորեցարուք ՚ի ճանապարհէ, և պիղատոսդէք զբազումս օրինօք: Ոչ միայն դուք Թողէք զօրէնս Աստուծոյ ձերոյ, այլ բազմաց ևս տկարաց եղերուք ՚ի դայթակղութիւն, որոց չէք զօրութիւն ժուժկալելոյ առաջի օրինակի ձերոյ: Ահա այս օտար հանէ զնա յառաջարկութենէս, դարձցուք անդրէն ՚ի կարգ բանիցս:

Ոչ միայն ընդդէմ օրինացն Աստուծոյ յառնեմք՝ ապստամբութեամբ սրտի, այլ և խարդաւանիմք ՚ի վնհ կուրութեամբ մտաց. այս ինքն զի անկանիմք ՚ի մոլորութիւնս, զի խնդրեմք պատճառանս և բաղբաղայս՝ առ ՚ի թօթափել ՚ի մէնջ զբեռն օրինացն Աստուծոյ, զի ըստ զգայութեանց մերոց խորհելով, և օրէնս մեզ ըստ հաճոյից սահմանելով, ամբեմք զնաստութիւն աստուածայնոյն օրինաց, զի առ ՚ի հասանել ըղձից մերոց՝ մեկնեմք որպէս Թուխմ մեզ զպարտս օրինացն Աստուծոյ, և հրապուրեալք ՚ի հնարից անձնասիրութեան՝ որ տիրէ ՚ի մեզ, միաբանեմք զօրէնս Աստուծոյ ընդ շահասիրութիւն մեր, ընդ տեսութիւնս, ընդ յօժարութիւնս և ընդ կիրս, փոխանակ միաբանելոյ զայս ամենայն ընդ խըստութեան աստուածային օրինաց: Արդ ահա և աստ

Մարիամ, և ինքն իսկ Քրիստոս, սրբութեամբ օրինակի իւրեանց յայտնի ցուցանէն մեզ զվտանգն և զանկարգութիւն այսպիսի ընտանեաց. և ասէս. — Երկոքեան ևս կատարելով զօրէնս, յորոց աղաչաք էին բողոքովին, զօրէնս՝ որ ինքնին իսկ աղատս կացուցանէր զնոսա, և ըստ իմաստից իսկ բառիցն՝ ոչ մի ինչ պարտս ածէր զնոքօք:

Ոչ, եղբարք իմ, ասէր սուրբն Օգոստինոս, թէպէտ զհոգի օրինացն նկատեալ և թէ զնկարագիրս, ոչ Մարիամ և ոչ Քրիստոս մեր, ոչ անկանէին ընդ օրինաքն: Զի Մարիամ չէր կարօտ սրբութեան, և ոչ Քրիստոս մեր՝ որ սրբեալ էր Աստուծոյ գերազանցագոյն օրինակաւ քան զամենայն արարողութիւնս հրէականս: Մնայր նոցա կամել զնրաւունս իւրեանց առնուլ՝ զի կին, զի և օրէնք Մովսիսի ազատ կացուցանէին զնոսա: Այլ Աստուած, յաւետու սուրբն Օգոստինոս, ըստ սքանչելի կարգաց նախախնամութեան իւրոյ, ոչ կամեցաւ՝ զի կրօնք մեր, զորոյ Յիսուս և Մարիամ արկանէին յայնժամ զհիմունս, սկսցի թողութեամբ օրինաց: Զի թողութիւնս այս՝ թէպէտ և օրինաւոր՝ կարէր տեղի տալ պատճառանաց թուլութեան, և մարթ էր անձնասիրութեան մերոյ զեղծանել նովաւ: Վասն որոյ առ՝ զի բառնալ զամենայն պատճառանս, քրիստոնէութիւն՝ որ հանդերձեալն էր լինել օրինակ անսգոտանելի սրբութեան՝ սկիզբն կալաւ կամաւոր և ձրի հնազանդութեամբ, որ քնաջինջ առնէ զամենայն սադրանս մնոտի ճարտարմտութեան ընդդէմ սուրբ կրօնիցն. հնազանդութեամբ որ դատապարտէ՝ զի սպառ զզեղծուցիչ ազատութիւնս, զոյս հայհոյութեամբ մեզ, և զառանձնաւորութիւնս առելիս՝ զոյս սեպհականութեամբ, զիախուտս՝ զի հատարակաց օրինաց՝ զոյս պատրուակիւք թարմատար կարևորութեանցք, զճարտարմտութիւնս անոտիս և խարխուլս, զկարծիս յանդգնութեան և ընդարձակս, զհաւանա-

կանութիւնս ցնորականս, զպատ՝ զի պատ և զնրբին ասացուածս՝ որովք այլայլեմք զանպատակ օրէնս, որպէս զի թէպէտ և ձիշդ նմանաբար օրինացն լիցեն՝ ոչ առաւել ինչ քան զոր կամիմքս և որպէս կամիմք՝ ածեն մեզ պարտս: Զի հզօր է օրինակ Աստուածորդւոյն և երանուհւոյ Մօրն առ՝ զի նշաւակել մեզ զայս ամենայն, և զերծուցանել զմեզ՝ զի խաբէութենէ նոցին:

Ըստ այսմ խորհրդոյ երկնաւոր վարդապետն մեր Քրիստոս, զի հրաւանգել զաշակերտսն՝ յայտ առնէր նոցա ստէպ որ ինչ այսօր խոնարհութեամբն իւրով աղդողացոյն յոյժ և դիւրիմաց ձայնիւ քարոզէ. Ուշ ելէք ընծանել զբէնս, այլ ընդ: Որպէս թէ խրիթայր, ասէ սուրբն Ոսկեբերան, զի իբրև Մեսիա և օրինադիր նորոյ ուխտի՝ տեղի տայցէ նոցա կարծելոյ այնպէս, որ մարթէր վնասակար լինել նոցա. վասն որոյ ասէր. Ոչ եկի յեղծանել, այլ՝ի լնուլ զբէնս. բարբառ աստուածազգեցիկ, որ վակէ զբերան մեր: Վասն այսորիկ երկրպագելի Քրիստոս մեր այնպէս զգուշանայր՝ի պահպանութիւն ամենայն օրինաց գրելոց՝ի ձեռն Մովսիսի, զի երթայր ամի ամի ըստ օրինաց Յերուսաղէմ կատարել զՀաւիկն, և ոչ դոյզն ինչ յայնցանէ առնէր թերի. Յովհ ժ, որ նշանակէց ժ է, ուր անդրէն յօրինացն՝ դինլ ամենայն եղէցի: Որով ընկճէր՝ի մեզ զժպիրս յանդգնութիւն ընդդիմամարտելոյ օրինաց, և տայր մեզ՝ի միտ առնուլ զանիրաւութիւն գնացից մերոց, որով ակամայ մատուցանեմք հնազանդութիւն աստուածայնոց օրինաց, հնազանդութիւն շահախնդիր, հնազանդութիւն անկատար, հարցփորձ առնելով՝ թէ արդեօք պարտականք եցեմք խաչել յայն, արդեօք անպայման իցէ պատուէրն այն, արդեօք կարևոր՝ի փրկութիւն: Հարցփորձք խաբեբայք, որ ածեն զմեզ՝ի վտանգ յաւիտենական դատապարտութեան. զի յաճախ ընդ պարտս օրինաց և ընդ իրատս, քայլ մի ևեթ է խոր, և եթէ ընդ վտանգս

յայս գնամք՝ յերկերս վախից միշտ դեգերիմք: Պարձեալ հաստատէր զմեզ այնուիկ փրկիչն մեր ՚ի կանոնս յայս կարևոր, զի պարտ է մեզ միշտ զկողմն աստուածային օրինաց ունել ընդդէմ մեր. զի ուր խնդիրք եցեն զօրի- նացն Աստուծոյ, պարտիմք միշտ խնթալ՝ թէ գուցե խա- բեցեմք զանձինս մեր, և յարդարիցեմք մեզ մոլորական խիղճ մտաց. զի ՚ի սահմանել ՚ի բիւր դէպս՝ ցոր վայր ընդարձակին օրէնք աստուածայինք, ոչ է մեզ արժան ըստ աչառարկի օրինաց դատել, զի յամենայնի՝ որ հային յօրէնս Աստուծոյ՝ անուն իսկ ազատութեան պարտի դողացուցանել զմեզ, և պարտ է մեզ խորշել յայնմանէ ամենայն նախանձու՝ զոր աղդին կրօնք հաստատուն և անյողդողդ: Զի ՚ի սոյն խրատէ զմեզ, ո՛ հաւատացեալք, ընծայուին Աստուածորդւոյն և սրբութիւն դշխոյին կուսանաց ՚ի տաճարին:

Գիտեմ դարձեալ, զի եթէ իւրաքանչիւր ոք ՚ի մէնջ կամիցի լսել անձին, չիցէ ոք՝ որ ոչ համարեսցի իւր իրաւունս ազատ լինելոյ ՚ի պահպանութենէ օրի- նացն Աստուծոյ, և և ՚ի կարևորագունից: Ինչուք ՚ի մասունս. օրինակ լիցի՝ գիտեմ զի օրէնք, որ արգելուն զյափշտակութիւն ընչից այլոց, և հրամայեն զհատու- ցումն, բառնան ՚ի միջոյ՝ ըստ քաղաքավարութեան՝ որ ոչ երկմտէ տալ վճիռ ՚ի նպաստ փառասիրութեան և ագահութեան: Գիտեմ զի օրէնք, որ արգելուն զվնաս- խնդրութիւն, ոչ և ունկնիցեն տեղի՝ եթէ իրաւունս իւր համարեսցի ոք կոչել արդարութիւն զկարի իսկ յայնմանէ քրիստոնէութիւն, և ամենայն ոք յամառեսցի պահանջել անթերի զպարտական հատուցումն անիրա- ւութեանցն կրելոց: Գիտեմ զի օրէնք, որ զմերձաւոր վտանգս մեզաց՝ խնդրեալս կամ ոչ բարձեալս ՚ի բաց՝ դատին որպէս զմեզ կատարեալս. այլ եթէ ամենայն ոք կամիցի լինել հաւատարիմ՝ թէ անհնար իցէ իւր լուծանել զկարծեցեալ պարտս կցորդութեան իւրոյ,

կամ թէ վտահ իցէ ՚ի զօրութիւն իւր և յարդի հան- գամանս, ոչ ևս կացցեն օրէնք այն, այլ պաճուճապա- տանք նոցին: Գիտեմ զի օրէնք պահոց և ծոմապահոց, զորս հրամայէ սուրբ եկեղեցի, դարձցի յեղկերուաքաղ՝ եթէ իւրաքանչիւր ոք, դերի եղեալ քաջղջուքեան՝ ըզ- փափկութիւն իւր խնդրեսցէ, կամ մանաւանդ զմեզ- կութիւն: Եւ զի՛ երկարեմ. յայտ է՝ զի ըստ հոգւոյ աշ- խարհի, որ է հոգի անկարգութեան, թօթափեսցուք զլուծ զհստատունից և զկարևորագոյն պարտուց մերոց: Այլ ո՞ր առաջնորդեն այս գնացք, իմ իմիք կարիցեմք ասել սպասել. իցէ՞ն արդեօք իրք մեր ընդ այնպիսւոմ, զոր կարիցեմք խաբել, կամ լինել նմա ակնածելի: Որ սահմանեացն զօրէնս ըստ տեսութեան անչափ իմաս- տութեան իւրոյ, և ոչ ապար զմեզ իւր խորհրդակից ՚ի սահմանելն զայնոսիկ, հարցցի՛ զմեզ արդ զայնցանէ, անտեսեսցի՛ զայնոսիկ ըստ խորհրդոց մերոց, լուիցի՛ վճռոց մերոց, յորժամ եկեսցէ ՚ի գատել զմեզ: Եթէ Յիսուս և Մարիամ խորհէին իբրև զմեզ, խորհուրդս այս հնազանդութեան իւրեանց՝ զոր բացատրեցի ձեզ, և որ հզօր զօրաւիգն է մեզ ՚ի փրկութիւն, գա՞յր ՚ի կատարումն:

Տէր, աղաղակէր արքայ Մարգարէն, և է այս կնիք զոր պարտիմք դնել բանիցս ընդ նմա. Տէր, երանելի են ամբիծք ՚ի ճանապարհի, և այք գնան յօրէնս Տեառն: Երանի՛ որք խնդրեն զճանապարհս զայս ուղիղ սրտիւ, և որք գատանեն զայն՝ գնան ընդ այն անխոտորելի: Զի դու, Տէր, այսպէս սահմանեցեր, և արժան այսպէս էր, զի պահէին օրէնք քո զգուշութեամբ. ապա թէ ոչ, ոչ ևս լինէին քո, ոչ ևս լինէին աստուածայինք՝ որպէս է նոցա գրեալ սեպ- հական, եթէ օրէն էր անցանել զնոքօք, և մեկնել զնոսա ըստ հաճոյս ախտից մերոց: Կամիցի՛ք, ո՛ հաւատացեալք, զբովանդակութիւն ամենայն ասացելոցս. ահա ՚ի սուզ ինչ յայսոսիկ բանս սուրբն Օգոստինոս աղնուագոյն և

աղդոդագդն քան զնս զնմասս իմ բացասրէ· ՁՄարխամ 'ի վեր փան ղբրենս արարեալ էին ընդ·ս, ընդ որինօք եղ վնս Նոաբհոնրնեան: Շնորհք անմեղութեան նորա և աստուածամայրութեան խնդրելին լինել նմա ազատ յօրինաց· խոնարհութիւն սրտի իւրոյ էա նմա նախամեծար առնել զհնազանդութիւն և զհպատակութիւն: Իակ զմեզ և շնորհք և խոնարհութիւն խրատեն նոյնպէս 'ի հպատակութիւն. և ընդդէր·— զի որ 'ի մեզ են շնորհք, շնորհք ապաչխարութեան են, վասն որոյ և խոնարհութեան: Ա.յլ ամբարտաւանութիւն մեր՝ երկոցունն ևս ընդդէմ դառնայ, և թէպէտ կրկնակի եցեմք ընդ օրինօք, որպէս մարդ և որպէս մեղաւոր, ամբարտաւանութիւն յարուցանէ զմեզ ընդդէմ Ա.ստուծոյ: Մարխամու խոնարհ հնազանդութեամբ արկանել զանձն ներքոյ օրինաց՝ յամօթ առնէ զամբարտաւանութիւն մեր· իակ կոխել նորա զամենայն գժուարութիւնս օրինապահութեան ա բխական հնազանդութեամբ՝ դատապարտ զվատութիւն մեր, որպէս տեսցուք յերկրորդումն մասին:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ըստ հաւատոց օրէնք աստուածայինք, թէպէտև կատարեալք, ոչ միայն չէն անհնարինք, այլ և ոչ այնպէս 'ի վեր քան զկար մեր, զի կարելեմք տրանջել երանութեամբք զգժուարութենէ նոցին, և պատճառանօք անբաւիր առնել զվատութիւն մեր և զօրինազանցութիւն. Զի պատուիրանք այս, զոր ես պատուիրեմ ձեզ այսօր, ոչ ծանրաբեռն ինչ է, և ոչ հեռի 'ի ձեզ. ոչ յերկինս, ըե ասիցես՝ ո՞վ եւ լինիցէ և առնուցու և լսիցուք և արասցուք: Պատուիրանքս այսոքիկ, ասէր Ա.ստուած ցիսրայելացիս, ոչ 'ի վեր են քան զկար ձեր, և ոչ աւելի քան զպատման ձեր, զի կա-

րելիք ասել՝ ո՞ կարելիցէ կատարել զայնոսիկ: Եւ ոչ 'ի պահպանութենն նոցին պարտ է ձեզ անցանել ընդ ծով, ոչ ընդ անապատս և ընդ ամպս, զի չէ հեռի 'ի ձենջ. Եւ ոչ յայնկոյս ծովու է՝ ըե ասիցես՝ ո՞վ անցանիցէ յայնկոյս ծովու և առնուցու: Ա.յլ են, յաւելուս Տէր, 'ի ձեռին քումն, 'ի բերանի և 'ի սրտի· 'ի սրտի, զի է սիրելի· 'ի բերանի, զի խոստովան լինիցիս՝ թէ յոյժ է արդար· և 'ի ձեռին, զի օգնէ քեզ հզօր նպաստիւք, առ 'ի կատարել զայնոսիկ գիւրաւ· Մերձ է բանն ասս փեղ յոյժ, 'ի բերան փո, 'ի սրտի փոմ, և 'ի յեռս փո է առնել զնս: Ա.յսպէս բարեաւեր Տէր 'ի ձեռն Մովսիսի 'ի հրաւարակել զօրէնս· սակայն գիտեմք՝ էին ահաւորք, էին և խստագոյնք և ծառայականք· զինչ ասէր, որպէս խմաստասիրէ սուրբն Օգոստինոս, և զինչ ոչ կարէր ասել, եթէ կայր 'ի հրաւարակել զաւետարանական օրէնս, որ են օրէնք շնորհաց, օրէնք սիրոյ և օրէնք ազատութեան:

Ա.յլ մեք, ո հաւատացեալք, հաստատեմք օրէնս ամենևին հակառակս, և առ 'ի պաշտպանել մեզ յերեսաց ամբաստանութեանց՝ զորս սուրբ և պաշտելի օրէնք աստուածայինք արասցեն յաւուր միում զմեզ, և այժմէն իակ առնեն առաջի Ա.ստուածոյ, ամբաստանեմք զնոսին իակ օրէնս աստուածայինս, որպէս ոչ համեմատս ակարութեան մերում: Համարիմք զայնոսիկ այնպիսի խիստս, զի ոչ ոք կարիցէ կատարել զայնս. և փոքրոգութեամբ, զորոյ զհամար յօրինաց անտի խնդրել արժան համարիմք, ասեմք անդադար ընդ Իսրայէլացիսն օրինազանցս. Ո՞վ եանիդե յերկինս. ո՞ երբեք կարասցէ յայն վսեմ բարձրութենն սրբութեան հասանել: Եւ համառօտիւ՝ այնպէս զանձինս խաբեմք, զի օրէնքն այն վասն կարի յոյժ պահանջանացն՝ գեր 'ի վեր եցեն քան զկար մեր: Եւ ընդդէր, միտ դիք.— զի մեզ պարտս 'ի վերայ գնեն հրաժարել 'ի բիւր գեղս յերաց, որ քան զամենայն ինչ ցանկալի են մեզ· զի արդեաւն զիղձս ինչ դորո-

վագոյնս սրտից մերոց, և հրամայեն հեղձուցանել զայնս
'ի մեզ· զի զսկեն զմեզ 'ի բերկրութեանց ինչ և 'ի քաղ-
ցրութեանց կենցաղոյս՝ յորս բերիմք· զի խափանեն
զմեզ 'ի փառաց ինչ աշխարհի՝ որ սիրելի են մեզ, և
ստիպեն զմեզ յանձն՝ երևել առաջի մարդկան ներ-
քևեալս յոյժ: Այսոքիկ են՝ որ խստագոյնք քան զկար
մեր թուին մեզ 'ի քրիստոսական օրէնս· որոց համա-
րիմք՝ զի տկարութիւն մեր, օգնեալ ևս 'ի ջնորհաց,
չկարիցէ ձեռնհաս լինել: — Այլ հայեցուք այսօր 'ի
Մարիամ, ուսցուք 'ի նմանէ, և յամենի լիցուք· զի
ահա խրատք կարևորք, զորս կարեմք 'ի միտ առնուլ 'ի
գնացից նորա, և զորս պարտ է մեզ հանել 'ի ձակատ
վատ իմաստից՝ որք յետս զմեզ ընկրկեն: Խրատք՝ որ
զգալի առնեն մեզ զերիս գլխաւոր հանգամանս այսր
խորհրդոյ· և են պատարագն՝ որով ընծայէ Աստուծոյ
սուրբ Կոյսն զպատուականագոյնն և զսիրելագոյնն բարին
իւր, զորդին միածին· պատարագն՝ որով ընծայէ զամե-
նայն քաղցրութիւն կենաց իւրոց, յանձն առեալ զսուր
ցաւոցն՝ զոր ծերունին Սիմէոն գուշակեաց, զի անցա-
նելոց էր ընդ անձն նորա· և մանաւանդ պատարագն՝
որով նուիրեաց զպատիւ իւր, յանձն առեալ երևել որ-
պէս զայլ կանայս անսուրբ և մեղաւոր, որ էին անմեղ
և գերամաքուր: Ո՛հ, հաւատացեալք, ընդէ՞ր պակաս
յիս եռանդն սրբոց առաքելոց՝ առ 'ի զգացուցանել
ձեզ ազդողագոյն և տպաւորագոյն զչքնորհութիւն մեծի
օրինակիս:

Խրատ առաջին· միակ որդի է Մարիամու, և առ 'ի
հնազանդել օրինաց՝ յանձն առնու պատարագել զնա:
Զնա՝ զոր սիրէրն կաթոգին, զնա՝ զոր աքանչելեաքն էր
յղացեալ, զնա՝ յորում էին ամենայն դանձք իւր, նուի-
րե զնա Երուսաղէմ 'ի տաճարին: Այլ նուիրե գերա-
հրաշ օրինակաւ, բոլորանուէր, առանց իրիք պայմանի·
դիտելով զհրամանս խիստս՝ զորս սահմանեալ էին եր-

կինք, և որք կատարելոց էին յանձին Աստուածորդւոյն
պղպայեցելոյ· յանձն առեալ անգամին՝ զմտաչէլ որ-
գոյն պատարագ և պարտ բաշխել վասն փրկութեան
մարդկան, և կրել առ այն ցամենայն վիշտս սրտի, և 'ի
վերջին ձիգն արիական և խստամբեր հնազանդութեան՝
կամել զի որդի իւր այն ոչ ևս լեցի իւր, բայց վշտալի և
անհրաժարելի պայմանաւ տեսանելոյ զնա զենեալ 'ի վե-
րայ խաչին· այսչափ ծանրագնի եղև Կուսին ընուլ զո-
րէնս: Արդ այսքանո՞յ և մեզ պարտի լինել, սիրելի ուն-
կընդիրք· յիրաւի վասն օրինապահութեան պարտ է մեզ
երբեմն նուիրել զսիրելագոյն ինչ մեր· այլ խոստովան
լիցուք անկեղծութեամբ, և մի խաբեսցուք զանձինս·
այն որ սիրելագոյն է մեզ, իցէ՞ այնչափ մեծ առ 'ի զօրել
առաջի Աստուծոյ: Որչափ և սիրելի իցէ մեզ, եթէ հա-
կառակի օրինացն Աստուծոյ, ո՞չ այն է՝ որ խռովէ զմեզ,
ո՞չ այն է՝ որ խոտորեցուցանէ զմեզ, ո՞չ այն է՝ որ ապա-
կանէ զմեզ, որ անուանարկ առնէ, և որ դատապարտ
զմեզ: Եթէ օրինք Աստուծոյ խափանեն զայսպիսի ձեռ-
նակարք չարիս, իցէ՞ն մեզ պատճառք արանձնելոյ· և զսուրբ
բռնութիւնն զայն, որով ստիպեն զմեզ օրինք առ այս-
պիսի փրկաւէտ հրաժեշտ, կարիցեմք համարել առա-
քելազանց խստութիւն: Միտ դիք, աղաչեմ· արժան է
նմանատասիրել ինչ աստ պարագրով: Ի սուրբ հանգիստ
աստ, հրամայէ մեզ Աստուած որպէս Մարիամու, կամ
եթէ կամիք՝ Աբրահամու. Աբ դա՝ ղրդիդէ դա սերէնի, զոր
սերեցեր, պիտակ. և հանցես զդա անդ յողջակէզ: Մատո ինձ
'ի նուէր զանդրանիկ քո, այս ինքն զայդ կերտ՝ որ սիրե
սրտի քումմ: Խիստ թուի մեզ այս· բայց զաչս 'ի մեզ
դարձուցեալ, ստիպիմք խոստովան լինել՝ զի կիրքն այն
սիրացեալ սրտի մերում, է՝ օրինակ նոյն, սէր ամենայնի՝
որ անուանարկ առնէ զմեզ, գերութիւն զգայական՝ որ
հաւատարկ զմեզ անբանից, օրինք մեզաց՝ որ գերե զմեզ,
և բռնակալէ 'ի վերայ մեր: Բայց միանգամայն հարկ

է մեզ խոստովանել՝ զի սէրն այն, զոր ախտանամբ, է
դիւթուԹիւն ինն մոայ և կախարդուԹիւն սրտի, աղ-
բիւր մոլորուԹեանց, և անկարգուԹիւն ըղձից և գոր-
ծոց: Բայց միանգամայն ուսանիմք ՚ի փորձոյ, զի ախտն
այն տիրացեալ ՚ի մեզ՝ ոչ այլ ինչ ածէ արգասիս պատ-
րաստագոյն և բնաւորագոյն, բայց ընդ զՀոգի մեր վըշ-
տօք և նախանձու, տանջանօք խղճի և յուսահատու-
Թեամբ. զի ցորչափ սէրն այն տիրէ ՚ի մեզ, չունիցիմք
երբէք խաղաղուԹիւն՝ ոչ ընդ Աստուծոյ, և ոչ ընդ մեզ.
զի խիղճ մոայ մերոյ և լոյս բանին և հաւատք մեր յա-
րիցեն միշտ հակառակ նմին. զի գիցէ նա զմեզ նշաւակ
սոգոտանաց աշխարհի, և աշխարհ՝ ԹեպէտԵ և ապակա-
նեալ՝ կանխեսցէ գատաստանաւ իւրով զգատաստանն
Աստուծոյ ահագին, յորմէ պարտ է մեզ դողալ: Եւ հա-
մառօտիւ՝ ՚ի միա առնումք, զի սէրն այն՝ հանդերձ իւ-
րովքն կարծեցեալ քաղցրուԹեամբք, անգամին ՚ի վայր-
կենի՝ յորում լինիմք նմա անձնատուր, է որպէս դև ինն
հարեալ ՚ի մեզ՝ որ բռնի տայ մեզ կալ որպէս ԹԷ ՚ի
դժոխս: Արդ քանզի այս այսպէս է, որ իրաւունք իցեն
մեզ բողոքելոյ ընդդէմ աստուածային օրինաց, և՝ ՚ի հրա-
մայել մեզ Աստուծոյ՝ ԹԷ զերծիր, ո հաւատացեալ, ՚ի
դժոխոց այսի, ազատ լեր ՚ի գերուԹենէդ, խլեա
զսխտդ զայդ ՚ի սրտէդ, կարե՞մք ասել՝ Տէր, կարի ինն
պահանջեա յինէն:

Ա՜հ, եղբարք իմ, յաւելու Ոսկեբերան, եԹէ Աս-
տուած վարէր ընդ մեզ ամենայն իշխանուԹեամբն, և
առանց հայելոյ յառաւել կամ ՚ի նուազ դժուարու-
ԹիւնՆ նուիրմանՆ՝ զոր պարտ իցէ մեզ առնել, չափելով
ևԷթ զերան ըստ կանոնի՝ որ անկ է նմա, հրամայէր մեզ
նուիրել իւր և զյօժարուԹիւնս մեր անմեղս և օրինա-
ւորս. եԹէ ասէր ուժք՝ ԷՀ ՚ի մեծուԹենէ այսի, ո-
րով մեծարիս յաշխարհի. և այլուստ՝ ԹԷ հրաժարեա ՚ի
գոյից, զորս արգարուԹեամբ ստացեալ է քո. միուստ՝

ԹԷ մուտս զորդիդ, յորում է ամենայն յոյս ազգատոհ-
միդ. միւսուստ՝ ԹԷ հայս զղօղ կցորդուԹեան, ԹեպէտԵ և
շնամեսս, ընդ բարեկամիդ՝ որ ՚ի սփոփումն է քեզ և ՚ի
քաղցրուԹիւն կենաց քոց. եԹէ Աստուած, ասեմ, այս-
պէս հրամայէր, ոՀ պարտ էր մեզ պատրաստս լինել առ
ամենայն՝ առ ՚ի մեծարել ևԷթ զօրէնս նորա: Զբարեկա-
մուԹիւն, զմեծուԹիւն, զշահ օգտի և զաղգատոհմ
պարտ էր ԹողուԼ ՚ի բաց. և ընդէր. — Զի ուր օրէնք
հրամայեն, մանաւանդ աստուածայինք, ասէ Տէրտու-
լիանոս, զիշխանուԹիւն հրամանատուին չէ և չէ պարտ
դնել ՚ի կշիռ ընդ խոնարհուԹեան հնազանդելոյն: Ասէ
Աստուած, սիրել ունկնդիրք, յոյժ այլազգ վարի ընդ
մեզ. և զիջմամբ ինն՝ ըստ իւրուստն արժանի, չէտ երբէք
օրէնն՝ որ չիցէ մեզ օգտակար: Զի՞նչ հրամայէ նա մեզ.
Նուիրեա ինձ, ո հաւատացեալ, որ ինչ ինասակար է
քեզ, որ ինչ կորուսանէ զքեզ, որ ինչ դատապարտ.
զայլ ամենայն ինչ ԹողուՄ ՚ի կամս քո: Վայելչիցիր ՚ի
դոյս, զորս ետու քեզ. այլ մերժեա ՚ի քէն զերկնաս-
ւորդ զայդ սէր՝ որ յանկի ՚ի դատապարտուԹիւն քո.
կալ զինս ՚ի վեր քան զայդ՝ զոր ՚ի սրտի քումՄ տածես՝
ԹշնամուԹիւն, որ ՚ի բաց հանէ զքեզ ՚ի ճանապարհէ
փրկուԹեան. Թո՛ղ ՚ի բաց զայդ մեղս՝ յոր սովորեալդ
ես, և որ տայ քեզ աղեաւիւքն և դառնուԹեամբ՝ ընդ
որս խառն է, լուծանել զվըկԺ հաճոյիցդ և ախորժա-
նաց: Ահա այսպէս վարի ընդ մեզ Աստուած. և չիցե՞մք
անպատասխանի, եԹէ իշխեմք տակաւին պատճառել՝
Թէ լուծ օրինաց նորա իցէ ծանր և խիստ:

Խիստ է հրաժարել ՚ի սիրելագունից երաց. այլ ես
համարիմ զնաստուԹիւնս զայս ՚ի կամաց մերոց, զի չկա-
միմք ամբաւել զայն մեծամեծ և զօրաւոր յորդորմամբք
որովք սուրբ Կոյսն ընծայեաց զԱստուածորդին: Զի որ-
պէս ասէ սուրբն Բեռնարդոս, որ ինչ արարն սրբոյ Կու-
սին, չասեմ տանելն՝ այլ սիրելի զկատարումն այսր օրի-

նաց, եւ՛ ածէ՛ նորա զմտաւ՝ զի ընծայելով զԱստուածորդին՝ պատարագէր զնա Աստուծոյ, անցուցանէր զաստուածաստաստ բարկութիւնն, մատուցանէր Աստուծոյ հնորհակալս ըստ արժանեաց ամբաւ հնորհացն Աստուծոյ առ ինքն, և խղուցանէր ի վերայ մեր զհնորհս Աստուծոյ: Ախտքիկ խրախուսեցեալն զսիրտ նորա, և եհաւն նմա յաղթել մայրենի գորովոյ՝ որ ընդդէմ դառնայր և խափանէր զպատարագն: Արդ ոյր ինչ մեզ՝ զի ոչ և մեք նովին մտածութեամբ գործեմք, և ի դէպս ինչ պատուիրանապահութեան հակառակ բնութեանս մերում՝ որ դժկամակի ընդ պատուիրանն, ոչ քաջալերիմք նովին խորհրդովք: Արդարև որ ինչ պահանջի յինէն, և զոր պարտ է ինձ նուիրել, է միակ սիրելին իմ. այլ նովին եւս նուիրեմ Աստուծոյ՝ որում միայ յինէն. այլ նովին եւս կայտ առնեմ՝ զի կամիմ գոհանալ զնմանէ վասն հնորհացն և պարգեւաց, զորս ետ ինձ առատապէս. այլ նովին եւս անցուցանեմ զարգար ցասումն իւր յինէն. այլ նովին եւս, թէպէտև և մեղաւոր, չարժեմ զգթութիւն նորա ի վերայ իմ. այլ նովին եւս հաչտ առնեմ զԱստուած ընդ իս, խնամոյ նորա արժանի լինիմ, չարժեմ զնա յողորմութիւն: Եւ փոխանակ զի սխտս այս եղև ինձ ցարդ առիթ անկարգութեանց, լինցի ինձ առաջի Աստուծոյ՝ ի վաստակ՝ ի նուիրել իմում զայն Աստուծոյ: Եթէ ի միտս մեր ունիցիմք զայս առնային, ոչ պատուիրան Թուխասցի մեզ խիստ. իսկ եթէ անփոյթ առնելով մեր զայսոսիկ՝ լինին մեզ օրինք ծանրաբեռն, չիցէ մեզ պարտ անձանց և եթէ գնել մեզ: Դժուարին է ընծայել բոլորանուէր զոր սիրեմքս. այլ ես ասեմ, զի առնեմք զայն զօրհանապազ՝ առ՝ ի հնազանդել օրինաց աշխարհի. զի առ՝ ի կատարել զօրէնս ինչ աշխարհի՝ զի՞նչ ոչ՝ ի բաց Թողումք, լիամի՞տ եմեք ոչ հրաժարեմք: Ասիցեք՝ Թէ օրինք աշխարհականք ոչ հրամայեն մինչև նուիրել և զսիրտ. այլ ոչ սովին իսկ, ասէ տուրբն Ամբրոսիոս, խստագոյնք իցեն. զի հրամայեն նուիրել զամենայն, բնագատաբեալ զսիրտ մեր գժկամակ և հակառակող, սակ օրինքն ասստուածայինք ոչ հրամայեն ինչ առանց պատրաստելոյ զսիրտ մեր, և սիրելի առնելոյ զժուարութիւն:

Երկրորդ խրատ. առ՝ ի պահել զօրէնս Աստուծոյ, պարտ է մեզ հրաժարել՝ ի քաղցրութենէ ինչ կենցաղոյս. զի օրէսաի և յօժարութեամբ ունել զկենս՝ ի կարգի, խնդրեմք՝ ի բարեկարգութեան անդ գտանել քաղցրութիւն ինչ կենցաղական. և բաղում այն է՝ զի զքաղցրութիւնն զայն խնդրեմք՝ ի կեալն՝ ի կարգի. և մի՝ ի ակնարկութենէ բարեպաշտութեան այն է, տաղտկանալ՝ ի կարգաց՝ ի չգտանելն անդ զքաղցրութիւն: Ասյլ սուրբ Հոյն ուսուցանէ մեզ այսօր, պատրաստ կալ՝ ի վտանգէ ատել: Ինքն առ՝ ի ընուզ զօրէնս Տեառն նուիրեաց զամենայն ուրախութիւն սրտի իւրոյ. գիտեր զի յընծայել զԱստուածորդին՝ յորդելոյ էին ցաւք՝ ի սիրտ իւր. տեսանէր՝ ի դուշակութեան Ծերունւոյն Սիմէոնի զսուրն՝ որ ընդ անձն իւր անցանելոց էր, և լսէր ըզպատգամ երկնից՝ որ ազդ առնէր այնուիկ զսկիզբն մարտիրոսութեան իւրոյ: Ասյլ չէզև ինչ նմա փոյթ. եռանդն նախանձու և օրինաց տսիպէր զնա: Մտանէ՝ ի տաճարն, յանդիման լինի Ծերունւոյն, տայ՝ ի գիրկս նորա զԱստուածորդին, և մարգարէական բանիւս՝ եընդ ֆո իակ անչն ասղջե ասոբ, ընդունի զհաստոյր հարուածն: Զի մի կարծէք՝ Թէ զհարուածոյն այնուիկ զօրութիւն ոչ զգայց անդսաին, այլ՝ ի Գողգոթա միայն՝ ի կալ իւրում առընթեր խաչելոյ միածնին. զամենայն որ ինչ կրեցոյն էր անդ՝ յայնմ իսկ օրէ սկսաւ կրել, և յայնմ իսկ օրէ կարէր ասել նա՝ զի կայր առ խաչին: Ասյլ ընդէր՝ ի հնազանդել օրինաց՝ պարտ էր նմա զայս դառնակսկիծ չարչարանս կրել: — Ա՛հ, հաւատացեալք, զի նախասահմանեալ էր նմա՝ ուսուցանել մեզ զայս

Ճշմարտութիւն մեծ, զի ուր զաստուածային օրինաց իցեն բանք, ոչ է պարտ խնայել ոչ ի քաղցրութիւն, և ոչ ի կեանս. և ահա հաւաստիք նորին. զի եթէ պարտ էր նմա զայնպիսի սուրբ և անապակ ուրախութիւն իւր նուիրել, ոչ է օրէն՝ ասէ սուրբն Բեռնարդոս՝ զի մեք խնայեսցուք ի մերոն, որ են անոտիք և աշխարհայինք, որ ցնդեն զմիտս մեր, և տան մեզ կորուսանել զՀոգի Աստուծոյ: Եւ եթէ մայրն Աստուծոյ, որ ըստ գերազանցութեան էր երանեալ ի կանայս, յանձն էառ ի հնազանդելն օրինաց այնչափ լինչ վչտակրել, ոչ է մեզ օրէն դժկամակել ընդ վիշտս լինչ՝ որոց հարկ լինի մեզ համբերել ի պահպանութիւն օրինաց:

Այլ ասիցէք՝ Թէ ո՞րպէս մարթ իցէ վարել այնպիսի տխուր և տաղտկալի կեանս. զի այս իսկ է գեղեցիկ պատրուակ, ընդ որով ծածկի վատութիւն յոգւոյն աշխարհասիրաց, յորժամ խնդրի ի նոցանէ անթերի օրինապահութիւն. ո՞րպէս մարթ իցէ զայնպիսի վարել կենցաղ: — Այլ, սիրելի ունկնդիր, ո՞րպէս առնիս դու հանապազօր չարախտավատ պատուոց կցորդութեան ընդ աշխարհի. ո՞րպէս կրես զայնոսիկ ծառայաբար, և յանձն առնուս կատարել զկամս և զՀաճոյս միոյ ուրուք, առ որում խնդրես ունել շնորհս. ո՞րպէս համբերես այնոցիկ՝ յորժամ փառասիրութիւն կամ ցանկութիւն հրամայէ քեզ: Եթէ դնոյիր դու ըստ հոգւոյ հաւատոց, ասէի թէ շնորհք՝ որ են ամենազօր՝ գիտասցեն ամբարել զաղաղակութիւնդ, յորմէ երկնչիս: Եթէ ճանաչէիր դու զպարգեւս Աստուծոյ, խոստովան լինէիր՝ զի սուղ և վաղանցիկ բերկրութիւնք դ, յորոց հրաժարիս վասն Աստուծոյ, փոխարինին հաստատագոյն մխիթարութեամբք՝ որ քաջ զընդարձակութիւն սրտի քո լնուն: Եւ եթէ առանց իսկ ընդ այլ խորհուրդս յածելոյ՝ կամէիր յուշ ածել զանցեալ անկարգութիւնս կենաց քոց, երանելի զանձն համարէիր ի տաղտկութեանդ յայդմիկ և ի հրա-

ժեշտ յաշխարհական բերկրութեանց գտանելով պատրաստ յասպնջականութիւն. և ասպնջականութիւնդ այդ, Թէպէտ և անտեսս և ի ծածուկ, գերազանցեր քան զամենայն երևելի ասպնջականութիւնս՝ զորս յաճախ Թելադրէ ունայնութիւն քան կրօնք: Իցէ այն որպէս և է, այլ ես ասեմ՝ զի չէ արժան ի պարտս կարևորս, որպէս ի պահպանութիւն օրինացն Աստուծոյ, ածել պատճառանս այսպիսի մտոտիս, որպէս է կարծեցեալդ տաղտկութիւն՝ որ քեզ Թուի կցորդ ընդ օրինապահութեան:

Երրորդ և վերջին խրատ. սուրբ Կայն առ ի հնազանդել օրինաց՝ նուիրեաց և զպատիւ անձին. զի վասն սրբութեան երևելով ի տաճարին, Թուէր որպէս զմի յայլոց կանանց: Այսպէս կուսութեանն իւրոյ պայծառութիւն ստուերանայր, կուսութեանն՝ որում այնպէս նախանձաւոր լեալ էր և ի խորհուրդ մարդեղութեան. կուսութեանն՝ որոյ փառք էին փայլել և արտաքոյ, և ոչ արտ լինչ դոյզն երևեցուցանել: Յանձն առնոյր կորուսանել զվարկ կուսութեան իւրոյ. և իշխեմ ասել՝ զի գժուարըմբռնը քան զամենայն խոնարհութիւն էր այս, փայլել առաջի Աստուծոյ մաքուր որպէս զարեգական, և երևել յաչս մարդկան անմաքուր: Սակայն այսպիսի էր նուէրը սրբագունին ի կուսանս, զոր նուիրեաց վասն օրինապահութեան: Արդ օրէնքս այս Աստուծոյ, սիրելի ունկնդիրք, ոչ լինչ յայսպիսեաց ասեն նուաստութեանց հրամայեն մեզ. կամին զի երևեսցուք որ լինչ եմք. զի հպատակեալ իսկապէս ամենիշխան տէրութեանն Աստուծոյ, մի ամաչեսցուք ծառայել նմա ըստ կամաց իւրոց, և մատուցանել նմա զպատ՝ զոր պարտիմք. մանաւանդ զի մեզաւորք գոլով Ճշմարտապէս և անսուրբք՝ ոչ պարտիմք ամօթ համարել մեզ զգործս ապաշխարութեան, կարևորս ի սրբել զմեզ, ի հաշտեցուցանել ընդ Աստուծոյ, և ի հատուցանել

զպարտս մեր արդարութիւն նորա։ Այլ մեք զինչ. բո-
լորովին ընդ հակառակն՝ կամիմք կալ մնալ մեղաւորք,
և երևեալ արդարք։ Սուրբ Կոյսն շատ համարի պահել
անեղական զգանձ կուսութեան, և ոչ ինչ փոյթ է նմա
զարտաքին երևմանէ. իսկ դուք բաղում այն է՝ զի ան-
փոյթ զկարևոր մասամբն արարեալ՝ զվերին երեսն
խնդրէք պահպանել։ ո՛չ ապաքէն օրինապահութիւնդ
ձեր այդ վասն սուտ պատուոյ աշխարհի է յայնժամ։
Իսկ ՚ի քանի՛ յայլ դէպս օրէնքս այսոքիկ պաշտելիք
առ ոտն կոխին։ Այ ՚ի հասանել յաւադութիւն և ունել
զայն անկորուստ՝ լուծանին ամենայն օրէնք արդարու-
թեան, ընկճի տկարն, խաբի պարզամիտն, հնարք բիւրք
չարարուեստք գործին ընդդէմ հաւատարիմ և նախան-
ձորդաց. վարկ, ճարտարութիւն, չարախօսութիւն, և
զրպարտութիւն ընդդէմ նոցա ՚ի կիր արկեալ՝ ՚ի վերայ
աւերակաց նոցա կանգնի բախտ և մեծութիւն։ Եւ քան-
զի աւրէ կանոնս այս գատապարտելի՝ որ օրինաւոր աւ-
նէ զամենայն վասն թշնամանաց կրելոց, և զանչիշաչարու-
թիւն համարի անարգանս ընդդէմ հաստատուն և բա-
ցայայտ օրինաց՝ որ հրամայեն մեզ ներել, ոո՛ր զայրոյթ
ոչ մներեալ պահին ՚ի սիրտս, ոո՛ր խորհուրդ քինախընդ-
րութեան ոչ երևին ՚ի միտս, և յո՛ր վրէժս ոչ զառա-
ծանի չարայուշութիւն։ Ոչ կամի լսել բանից իրաւախո-
հութեան. պահանջէ փոխանակ թեթև ինչ թշնամանաց,
զոր ստուարացուցանէ մինչև ՚ի հրեշ լինի, հատուցմունս
անհնարինս. կամ լաւ և աս ասել, ոչ չատանայ մինչև ոչ
տեսցէ զկորուստ նորին՝ յորմէ համարի զանձն թշնա-
մանեալ։ Եւ քանզի երկնչի ՚ի ծաղր կալոյ, և ՚ի զանա-
զանել յայլոց՝ անկանի ՚ի վտանգ ծաղրու, թէպէտ և
գիտիցէ զօրէնս, և յօժարիցի պահել զայն, թողու
զանձն ՚ի հոսանս ուղիսի, և մղեալ յօրինակէ այլոց և ՚ի
մարգկային ակնածութենէ, փոխանակ փառս անձին
համարելոյ զծառայելն Աստուծոյ, անարգէ զնա և

Թշնամանէ։ Ո՛վ Տէր, արժան ուրեմն իցէ վասն ցնորից
պատուոյ՝ որ խոտորեցուցանէ զմեզ՝ մերժել զՔրիստոսն
քո, մասն լինել իրաւանց քոց, կործանել զամենայն
խորհուրդս քո, հակառակ կալ ամենայն կամաց քոց,
արհամարհել և առ ոտն կոխել զամենայն օրէնս քո։ Եւ
դուք, ով մարդ, մինչև ցե՞րբ ոչ ՚ի միտ առնուցուս՝ լինել
հաստատեալ է Քրիստոս մեծութիւն քո, զի է հպա-
տակել Տեառն տերանց, յարել ՚ի նա անմեկնելի, մեր-
ձենալ առ նա հանապազ, պատերազմել արիաբար վասն
նորա, մեծանալ յաչս նորա, արդեօ լինել առաքեալ իւր,
և արժանի ինամոց նորա. և ի՞նչ կարասցես զայս ամե-
նայն, բայց օրինապահութեամբ։

Այսմ՝ քաջ խելամուտ լեալ բարեպաշտութիւնդ
քո, տէր արքայ, փառս իւր համարի պաշտպան կալ օ-
րինաց Տեառն և վրէժխնդիր։ Ապաքէն մեծամեծս գոր-
ծել ՚ի պատերազմունս, կալ իրաւարար խաղաղու-
թեան, և բոլորովին Եւրոպայ շնորհել զայն հաճոյիւք
քեզ պայմանօք, հարկ առնել երկիւղիւ աւեթ անուան
քո ամենայն պետութեանց ընդունել զայնոսիկ, գերա-
զանցել քան զքեզ խափանելով ընթացս աշխարհա-
կալութեանց քոց, այս ամենայն վայելչին քեզ գովու-
թիւնք՝ յորս չիք ինչ մասն շողմից, և նախանձ իսկ
չկարէ զանաւ զայսոսիկ քեզ, և զորս թշնամիք ևս քո
ակամայ հրատարակեցին բարձրաբարոյ որպէս զմեզ,
մինչև համեստութեան քո ակսանել աշխատ լինել ՚ի
լուր։ Այլ են և այլ իմն փառք, այնչափ առաւել հաս-
տատուն՝ որչափ զի հաստատեալ է ՚ի արբագոյն ինչ-
փառք, զոր արբայդ երկնից քրիստոնեայ չկարէր սաս-
նալ՝ բայց նախանձու օրինաց Տեառն, և զոր պահէր
քեզ Աստուած ՚ի լուսին փառաց քոց։ Սուրբ հրո-
վարտակք, զորս քո վերհաստատութիւնդ ևս նորոգեալ
ընդդէմ մեծամոլութեան, և զկատարումն նոցին
պարտս կրօնից համարեցաւ, հրաժարելով՝ եթէ այն-

պէս օրէն ևցէ ինձ ասել՝ և յիշեանուէթենէ ներելոյ
զայն, յայտարարուէթիւնք՝ որ ելանեն հանապազօր
յարքունականդ խորհրդենէ, նպաստամատոյց եկեղե-
ցւոյ, և խոհականք առ ի փակել ամփոփել զկերձուած
ի սահմանս՝ զորս հրովարտակք նախորդաց քոց պարա-
գրեցին, առեանք հաստատեալք առ ի սաճմահարել
զցոփուէթիւն և զապականուէթիւն, են ապացոյցք ան-
ժխտելիք նախանձուն՝ որ է ի քեզ: Էլիր ի Գալղիա
հրեշք ծածկեալք. և յարոյց Աստուած զքո վեհափա-
ռուէթիւնդ առ ի հեղձուցանել և սատակել վնասս:
Սեղանակապուէթիւն, ամպարշտուէթիւն, մարգասպա-
նուէթիւն, աղետալի և անհրաժեշտ արգասիք յոռու-
թեան և անկարգուէթեան բարուց ծաւալէր յաշխարհ·
և քեզ է աշխարհ ընդհապարտ վասն սրբելոյ իւրոյ
յատկանուէթենէ անտի: Կարօտէր նա արքայի, քո
պէս հզօրի իմաստնոյ և կրօնասիրի, որ այսպէս պաշտ-
պան կացեալ լրաւանցն Աստուծոյ, զբրէնս նորա հա-
մարէր իւր, և նորոգէր զբարեկարգուէթիւն և զսներ-
կեանուէթիւն հաստարակաց: Անեղծ կալցիս, տէր ար-
քայ, զվաստակ ձեռինդ, յաւելցես յայն զիշխանու-
թիւն քո, և արքունականաւդ զօրուէթեամբ արասցես
զվերջին կատարումն նորին: Եղև երբեմն՝ զի անկրօնու-
թիւն, սեղանակապուէթիւն, երդմնազանցուէթիւն և
հայհոյուէթիւն տիրէին յարքունիս· այլ արդ անուանք
ատելիք են անդ այսոքիկ· փառք քո տարածեցին զնո-
սա: Եւ զի՞նչ չկարիցեն ընդդէմ այլոց և անկարգու-
թեանց, և զի՞նչ անփոյթ արասցեն առ ի բնաջինջ
առնել զնոսա: Ահա, տէր արքայ, որպէս մարթ է քեզ
լինել հատատարիմ օրինաց ամենատեառն, որ կացոյց
զքեզ թագաւոր և հաղորդս արար իշխանուէթեան իւրոյ
առ ի պաշտպանել նոցա: Այս է՝ որում ակն ունի նա
ի քէն· և ցորչափ հատատարիմ կայցես օրինաց նորա,
օրինիք նորա սուրբք, ըստ բանի Ծողովողին, Լիցին ձեզ հա-

տապրիմ· և առաջնորդեսցեն գնացից քոց, խորհրդակից
լեցին քեզ, և ուղղեսցեն զգործս քո· ածցեն ի վերայ
սրբազան անձին քո զամենայն օրհնուէթիւնս, և յետոյ
ապա արժանի արասցեն զքեզ անթառամ պսակին՝ զոր
մաղթեմ քեզ ի Տեառնէ:

ՀՕՐՆ ՊՈՒՐՏԱԼՈՒԻ

ԴԱՐՁԵԱԼ

Ի ՏԵԱՌՆ ԸՆԴ ԱՌԱՋ

---

*Եւ իբրեւ լցան աւուրք սրբու-
թեան նորա ըստ օրինացն Մով-
սիսի, առին զնա Երուսաղէմ
յանդիման առնել Տեառն։*

Ղուկ. Բ. 22։

Տէր արքայ, զայսոսիկ երկոսին խորհուրդս տօնէ այսօր Եկեղեցի, որք գոգցես իմն բաժանեն զայս մեծա-հանդէս տօնախմբութիւն. սրբութիւն Մարիամու և ընծայումն Քրիստոսի։ Խորհուրդք մեծամեծք, յորս նկատեմք զկրօնից մերոց՝ ոչ միայն զվեհմագոյն և զսքանչագոյն՝ այլ և զհոգեշահ և զդաստիարակագոյն մասունս։ Աստուածօրդին ընծայեալ Աստուծոյ, սուրբն սրբոց նուիրեալ Տեառն. քահանայապետն նորոյ ուխտիս պատարագեալ, և վիրկիչն աշխարհի՝ ինքն վիրանաւորեալ. կոյս սրբեալ, և մայր զորդի իւր զննեալ. որպիսի՛ սքանչելիք՝ ի կարգի չնորհաց։ Զայսոսիկ մարգարէին դուշակեալ էր յառաջագոյն, կամ մանաւանդ Աստուծոյն Իսրայէլի բերանով մարգարէին խոստացեալ էր հրեից. Ահա ես առաքեմ հրեշտակ իմ առաջի իմ (իմա զՅով-

հաննէս կարապետ յառաջընթաց Փրկչին), որ պատրաստեցէ ինձ ճանապարհ, աւետեսցէ զգալոստ իմ. և վաղվաղակի Օծեալն՝ որում սպասէք, հրեշտակին նորոյ ոտիւն, և Փրկիչն՝ զոր յայսքան երկայն ժամանակաց հետէ յոգնաթախանձ պաղատանօք խնդրէք, մտցէ ի տաճար իւր, և ընծայեսցի անդ որպէս գինք և փրկանք փրկութեան ձերոյ. Ահա ես առաքեմ զհրեշտակ իմ, և պէսպէս զճանապարհս իմ առաջի իմ. և յանկարծակի էիեսոյն ի փառաւոր իւր Տէրն՝ զոր դուք խնդրէք, և հրեշտակն ուխտին՝ զոր դուք կամիք: Մտանի նա անդր, ո՛ հաւատացեալք. ածի անդր այսօր, նուիրի անդ. մեզ արդ անկ է յօրինակէ նորա առնուլ խրատս յօգուտ հոգւոց մերոց, և ի նորոգութիւն կենաց. զի ոչ է մեզ օրէն զկայ առնուլ ի գրեին որպէս զՀրեայս, այլ պարտ է մեզ խորամուխ լինել ի հոգին. ոչ անօգուտ ի մնոտի տեսութիւն խորհրդոցս պարապել, այլ քրիստոնէապաշտ քաղել զամենայն պտուղս սրբութեան՝ զորս կարէն բերել ի սերտս մեր: Խնդրեսցուք առ այս օգնութիւն ի Տեառնէ բարեխօսութեամբ սրբոյ Կուսին. Ողջոյն ձեզ Մարիամ:

Ոչ վայրապար, ա՛ւ հաւատացեալք, ծերունին Սիմէոն ընկալեալ այսօր զՓրկիչն մեր ի գիրկս իւր, կոչէր զնա լոյս աշխարհի, և երկրպագէր նմա որպէս Օծելոյ՝ որ սահմանեալն էր ի լուսաւորել զամենայն ազգս երկրի. Լոյս ի յայտնութիւն հեղնոսաց: Զի կարեմ ասել՝ թէ առանձինն իմն խորհուրդ սերկեան ոճոիս է լուսաւորել զմիտս մեր, և տալ մեզ կրկին գիտութիւնս, որոց երկաքանչիւր բովանդակեն զամենայն գիտութիւն սրբոց: Մեկնեմ զնմանս բանիս, և համարիմ՝ զի յընծայման Աստուածորդւոյն ուսանիմք մեք ճանաչել զԱստուած, և զմեզ միանգամայն: Երկու ինչ յոյժ կարևոր, երկու ինչ՝ որոց տգէտ լեալ էր միշտ աշխարհ, երկու ինչ՝ յոր հաստատեալ էր կատարելութիւն և փրկութիւն և երջանկութիւն մարդկան, այլ

երկու ինչ, զոր Աստուածորդին միայն կարէր ուսուցանել մեզ բովանդակ: Մանեայց զնս Տէր, ասէր սուրբն Ագոստինոս, ծանեայց զքեզ առ ի սիրել, և ծանեայց զնս առ առել: Զայս եթէ գիտեմք, հրաժարեմ յայլ ամենայն գիտութենէ. և առանց գիտելոյ ասելն ինչ, հաւատամք գիտել զամենայն. Տէր, ծանեայց զիս, ծանեայց զիս: Աղդ Թուխ լինիմ, ո՛ հաւատացեալք, զի ի խորհուրդս յայս՝ զոր ստնեմք՝ առաւելապէս հայեին երկնքին գիտութիւնքս: Առ ի բացատրել զմիտս իմ, ցուցից ձեզ յերկոսին մատունս ձառիս, զի ոչ այլ ինչ խորհուրդ կարէ առաւել խմանալն առնել մեզ որ ինչ է Աստուած, և որ ինչ մարդ. զինչ է Աստուած, և զինչ պարտիմք նմա, և զինչ է մարդ, և որ ինչ պարտի նա անձին: Մանուկս այս՝ զոր ընծայէ Մարիամ ի տաճարին, և զորոյ ծերունին Սիմէոն յօրինէ զնեբրոզ, ուսուցանէ մեզ հաւատարապէս զերկոսին և զայսոսիկ գիտութիւնս. և կայ առաջի ամենայն ծոցվէրդոյ, ուսուցանել նոցա զերկոսին զայսոսիկ կարևոր մատունս, յորս հաստատեալ են բովանդակ կրօնք: Ուշ դիցուք՝ քաջ ի միտ առնուլ զայսոսիկ, և զօրացեալք ի յորդառատ լուսոյն՝ որով լցաւ ծերունին յընդունելն ի գիրկս իւր զՓրկիչն, լցցուք և մեք գիտութեամբն Աստուածոյ և մեր: Ընծայումն Քրիստոսի և նուիրումն առ Աստուած տացէ մեզ զգիտութիւն Աստուծոյ յառաջնում մասին ճառիս. զնուիրումն Քրիստոսի վասն մեր և սղջակիզումն տացէ մեզ զգիտութիւն մեր յերկրորդումն մասին: Զկարևորութիւն երբեք դուք ձեզէն ի միտ առնուք. սկսցուք:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ճանաչել զԱստուած յինքեան՝ պահել է վարա-
ւորութեան երանելեաց. Ճանաչել զինա՝ ի գործս իւր
և ըստ առ մեզ հայեցման՝ ընդհանք են հաւատոյ, որ սըր-
բագործէ յաչխարհի ատա զմարդիկ: Ճանաչել զԱս-
տուած որպէս դերագոյն Տէր, որպէս առաջին պատ-
ճառ և վերջին կէտ, որպէս էակ ըստ գերազանցու-
թեան՝ յորմէ են էքս առհասարակ, և կան, Ճանաչել
զինա որպէս աղբիւր ամենայն բարեաց, որ պահպանէ
ըստ գրոց և փրկէ և կենդանարարէ, յորմէ լինանեն ամե-
նայն ընդհանք և տուրք կատարեալք, Ճանաչել զինա որ-
պէս վերէժինդիր մեղաց, որպէս սուրբ սրբոց, որ գիտէ
պատուհասել զմեղս ցորչափ արժանի է պատուհասի,
և միանգամայն ատացեալ՝ Ճանաչել զինա ըստ ընդարձա-
կութեան երից այսոցիկ աստուածայինն ատորոգելեաց,
զորս մեք զանազանեմք՝ այլ են յինքեանս անզանազա-
նելիք, որ են Մեծութիւն, Բարութիւն և Արդարու-
թիւն, այսոքիկ են՝ ասէ սուրբն Թովմաս հրեշտակային
վարդապետն՝ այսոքիկ են՝ որ կոչին առ մեզ՝ ի կեանս
յայս գիտութիւն Աստուծոյ, զոր պարտ է հաւատա-
ցեալ ձանաչել հանապազ, եթէ կամ կատարել առաջի
Աստուծոյ զերեսին կարևորագոյն պարտս՝ զորս պա-
հանջէն՝ ի նմանէ կրօնք. պարտք հպատակութեան,
պարտք գոհութեան, և պարտք ապաշխարութեան՝ ի
մեղանչելն առ Աստուած: Արդ այսոքիկ են ձչգիւս, զորս
Փրկիչն մեր կամեցաւ տալ ատորել՝ ի սրտի մերում, ա-
ռաջի դնելով մեզ զերկրպագելն նուիրուսին իւր յե-
րուսաղէմ՝ ի տաճարին: Ամենայն մտագրութեան ձերոյ
արժանի է բանս:

Փրկիստոս որդի սրբոյ Կուսին նուիրի Աստուծոյ· և
առ ինչ· — առ՝ ի յարգել զանսահման աստուածպե-
տութիւնն· Սրբեա դու՝ ինչ պահնայն անդրանիկս՝ ի մարդոյ մին-
չև յանասուն, գանգի իմ է, ասէր Աստուած ցօրէնգիրն
Մովսէս: Քաջ միտ դիք, աղաչեմ, բառիցս այսոցիկ, որ
են գլխաւոր պատճառք ուծիս, և բովանդակեն համա-
ռօտիւ զհասատատուն և զգործուիլն հրահանգս, զորս
առաջի կայ լինել զհետ բերել: Ամենայն անդրանիկ լինէ
նուիրեսցի, զի ամենայն ինչ իմ է, և տէր եմ բոլոր բո-
վանդակ ամենայն էից, առանց ինչ՝ ի բաց հանելոյ: Ըստ
այսմ Աստուած զամենայն իրաւունս իւր՝ ի կիր ա-
ռեալ, և յայտ արարեալ որ ինչ էն, հրամայէր իսրայե-
լացւոց· և այս էր օրինացն պատճառ: Վասն որոյ մարք
ածէին՝ ի խորանն զսիրելագոյնն իւրեանց զանդրանիկն
որդի, զառաջին պատուղ որովայնի իւրեանց· և այսուհիկ
մատուցանէին պաշտօն ամենիշխանի տէրութեանն՝ զոր
վարէ Աստուած, և զոր ինքն միայն կարէ վարել ընդ
սահեղբս· Ես տէր Աստուածդ, և չէ այլ ոք: Այս էր, ասեմ,
հոգի այսր սուրբ և աստուածային օրինաց՝ զոր Մովսէս
հրատարակեաց, և որ յանկէր՝ ի մեծահանդէս խորհր-
դանուէնն՝ զի ամենայն ինչ Աստուծոյ է, և յԱս-
տուծոյ, և վասն Աստուծոյ· Աստուծոյ իբրև ամենա-
տեառն· յԱստուծոյ իբրև յարարչէ ամենայնի· և վասն
Աստուծոյ իբրև վերջին նպատակի· Ամենայն ինչ իմ է:
Պարտ էր և ընդհացս օրինի յայս առնել զայս արարո-
ղութիւն, և կատարելագործել· պարտ էր առ՝ ի յարգել
զաստուածպետութիւնն ըստ արժանւոյն՝ նուիրել զանդ-
րանիկն գեր՝ ի վերոյ արժանեօք քան զամենայն անդրա-
նիկս մինչև ցայնժամ նուիրեալս· և չէր ոք բաց՝ ի Քրիս-
տոսէ, որ ընծայեալ՝ ի Մարիամայ, և անձամբ զանձն
նուիրեալ, կարէր ըստ արժանւոյն և կատարելապէս
ընծայ զայս պարտս: Եւ ընդէր: — Սուրբն Ապեբեան
ածէ երկուս դերազանց պատճառս· մի՝ զի ըստ նախա-

սահմանուԹեանն 'ի յաւիտենից էր նա ըստ Աւաքեչոյն՝ անդրանիկ ամենայն արարածոց, անուն հրաշափառ և գեր 'ի վերոյ քան զամենայն անուն. և երկրորդ՝ զի գոլով Աստուած և մարդ միանգամայն, ընծայումն անձին նորա էր պաշտօն, ոչ միայն արժանի Աստուծոյ, այլ և համեմատ մեծավայելչուԹեանն Աստուծոյ. Ու յոխտակոնիան համբերեցաւ ալինելն հաւասար Աստուծոյ: Արդ լիա այսպէս. կամեր Աստուած՝ զի ընտանիք իւրաքանչիւր զանգրանիկն իւրեանց՝ իւր նուիրելին փոխանակ այլոցն որդւոց, որպէս պատանդ հպատակուԹեան՝ յորում պարտ էր կեալ ամենեցուն, զորոց զդէմս բերէր անդրանիկն որպէս գլուխ: Այլ անդրանիկ իւրաքանչիւր իւրումն ևԹետան էր գլուխ. իսկ օրէնքն՝ զորոց բանքս են, որդւոց Իսրայելի միայն պարտս 'ի վերայ գնելով, չափաւոր ինչ և սահմանեալ մատուցանէր պատիւ Աստուծոյ: Եւ զի՞նչ անօրինեաց Աստուած. ընտրեաց 'ի լըսման ժամանակի այր մի, գլուխ ամենայն մարդկան, որոյ նուիրումն լեալ իւր որպէս 'ի սպաս հասարակաց ամենայն աղգաց և ժողովրդոց: Այլ մի՝ որ զամենեսին զմէզ 'ի գէմս բերէ, և սպասաւորելով մէզ փոխանակ անդրանկի՝ կայ երաչխաւոր առաջի Աստուծոյ վասն իւր և վասն մեր, եԹէ միայն ոչ ժպրհիցիմք ուրանալ զնա, և ոչ յեաս կացցուք կուրաբար 'ի նմանէ: Այլ մի, ասէ Աւաքեաչն, յորում արարածք ամենայն համախուռմբ մատուցանեն այսօր Աստուծոյ զսպաս հպատակուԹեան, և որ հնազանդուԹեամբն իւրով արիանէ գարձեալ ընդ ակրուԹեամբն Աստուծոյ զամենեսեան՝ զորս մեզք 'ի բաց կացուցեալ էին 'ի նմանէ: Զայս տայ մեզ իմանալ Հոգին սուրբ սքանչելի բանիւ Աւաքեչոյն առ Եփեսացիս. Բռնվանդիւէ զամենայն Քրիստոսէ: Յայտ հաստատեալ են իրաւունք անդրանկուԹեանն Քրիստոսի 'ի վերայ ամենայն արարածոց. Անդրանիկ ամենայն արարածոց:

Եւ ոչ այսչափ միայն, այլ և ամենայն արարածք,

քանզի համանգամայն իսկ առեալ՝ չկարեն համեմատել ընդ Աստուածոյ, և որպէս Եսայի ասէ՝ ամենայն ազգք և աղինք առաջի նորա իբրև կաԹիլ մի 'ի դուլէ են, և որպէս հիւլեայ կամ ոչ ինչ, որչափ և ձիգն գործիցեն առ 'ի խոստովան լինել Աստուծոյ զկատարելուԹիւն իւրեանց, չկարեն յարգել զնա լիով, և 'ի պաշտամանն՝ զոր մատուցանեն՝ կայ և մնայ ԹերւոՒ ամբաւ, զոր ամենայն ողջակիզք և պատարագք չկարեն ընուլ, կարեւոր էր հաւասարակից ոք Աստուծոյ, որ գերահրաշ քան զամենայն սքանչելիս՝ ունելով զհաւասարուԹիւնն զայն, և խոնարհելով 'ի հնարաւորուԹիւն մատչելոյ 'ի զոհ, կարեր ասել ճշմարտիւ՝ զի մատուցանէ Աստուծոյ պատարագ գերազանց հաւասար նմին իսկ Աստուծոյ, և զի նեղբոյ արկանէր նմա յանձին իւրում ոչ ևս անարգ արարածս, ոչ ևս գերիս, այլ զարարիչ և զՏէր: Արդ զայս նուիրէր 'ի սերկեան աւուր մատոյց Աստուածորդին. Ընդ զոհս և ընդ պատարագս ոչ հաճեցար, ողջակիզեր և վասն մեղաց ոչ խնդրեցեր՝ յայնժամ ասացի՝ ես ահաւասիկ գամ: Ոչ կամեցար, Տէր իմ, զնուիրս ողջակիզաց, զոհ հին օրինաց ոչ ևս հաճոյ են քեզ, վասն այնորիկ ասացի՝ ԹէԹ ահաւասիկ գամ նուիրել զիս քեզ: Քանզի այս բանք սաղմոսերգուին ըստ գրոյն պատշաճին 'ի բերան Քրիչէն, և այսոքիկ յերուսաղէմ 'ի տաճարին հաւաստեաւ կատարեցան. զի անդ Աստուածորդին խափանեալ զհին ողջակէզս առ 'ի հաստատել զնորս, եկն անձամբ նուիրել զինքն Հօր, մատոյց նմա զանձն հանդիսիւ 'ի պատարագ, եմուտ 'ի սրբուԹիւնն, ոչ ևս արեամբ ցլուց և նոխազաց, ասէ Աւաքեաչն, այլ իւրով իսկ արեամբ: Այս ինքն պատուհաս զԱստուած, ոչ ևս այլովք նուիրօք, այլ իւրև և նուիրմամբ անձին. և այսու պատարագաւ եւս սրբեալեաց մինչև 'ի սպառ օրինակ կատարեալ ճշմարիտ պաշտամանն՝ որ վայելէ Աստուծոյ կենդանւոյ. Քանզի դիւ պատարագս կոպարեաց զրբեալսն 'ի չկենդանսորս: Արդ

ահա, սիրելն ունկնդիրը, որ ինչ սերկևանս խորհուրդ ազդէ ՚ի մեզ· ազդումն խորին և պատկառելի գերագոյն սէրուԹեանն Աստուծոյ, յարնչուԹիւն անդրաժանելի առ այս առաջինն պարտս կրօնից՝ որ է հնազանդուԹիւն և հպատակուԹիւն Աստուծոյ, պատրաստուԹիւն ՚ի նուիրել զմեզ Աստուծոյ, և ԹԷԹ իցէ կարելի՝ ծախել զանձինս մեր, հանդոյն Փրկչին, առ ՚ի ճանաչել զամենակալ սէրուԹիւնն Աստուծոյ:

Այդ ասեմ ՚ի միտ առեալ և դատեցարուբ՝ որպիսի անկարգուԹիւն իցէ մարդոյ, որ յորմէ կարգի և իցէ, ծնեալ ընդ իշխանուԹեամբ արարչին, սակայն որպէս անբաժանելի ինչ յէուԹենէ իւրմէ համարեալ զաղատուԹիւն, կամի կեալ ինքնօրէն անէրընչուԹիւն: ԱնէրընչուԹիւն եղեռնաւոր, ընդ որ փոխանակ ամաչելոյ՝ Թուի յաճախ պարծել յայն, և փառս անձին համարել զայն: ԱնէրընչուԹիւն, գլխաւոր մեղք մեծամեծաց աշխարհի, որոյ բնաւորուԹիւն սովորաբար է կեալ՝ որպէս Թէ վասն անձանց իցեն ծնեալ. և յեղաշրջուԹեամբ կարգաց վարելով յաշխարհի, կամ մանաւանդ վայելելով զաշխարհ՝ որպէս Թէ վասն իւրեանց ևԹԷ եղեալ, զամենայն ինչ վինչեանս վերաբերեն՝ փոխանակ վերաբերելոյ Աստուած: ԱնէրընչուԹիւն, որով և ոչ ՚ի գործս իւրեանց խնդրեն զկամս Աստուծոյ, օրէնք նորա չեն երբեք խափան անիրաւ խորհրդոց նոցա. խորագիտուԹիւն իւրեանց է միայն կանոն կարևորագունից գործոց նոցա, իսկ խելամտաց ոչ է լսելի, և ոչ գաղտ ինչ, բայց զղուշնաքեաց: ՇահախնդրուԹիւն նոցա ոչ կշռի երբեք ՚ի կշռորդս ահագին գատաստանին, ուր հանդերձեալ են կշռիլ ինքեանք իսկ, իբր այն Թէ շահք իւրեանց ազատագոյնք քան վինչեանս իցեն ՚ի գատաստանէ, իբր այն Թէ խորագիտուԹիւն իւրեանց կարիցէ զառաջս առնուլ օրինացն Աստուծոյ յաւիտենականաց· իբր այն Թէ խելամտաց վայն գոհհկաց ևԹԷ իցէ կապ,

իբր այն Թէ իցեն ոմանք ՚ի մարդկանէ, որք վասն աւազակուԹեան իւրեանց ազատք իցեն ՚ի սէրուԹենէ Աստուծոյ: ԱնէրընչուԹիւն, կցորդեալ յաճախ ընդ պատրանս և ընդ մոլորուԹիւնս, որպէս զի աշխարհասէրքն այնոքիկ ՚ի վերին երեսս գաւանեն զկրօնս, այլ ՚ի ծածուկ անկրօնք են: Ցոր վայր հաճոյ իցէ ինքեանց՝ ցայն վայր հպատակեն կրօնից, մեկնեն ըստ զգայուԹեանց իւրեանց զկրօնս և յարմարեն անտաւոր կրից իւրեանց· և փոխանակ ուղղելոյ նովաւ զիշառասիրուԹիւն, զնոչձըս, և զառեսուԹիւնս իւրեանց, ծառայեցուցանեն զայն տեսուԹեանց ըղձից և փառասիրուԹեան իւրեանց: ԱնէրընչուԹիւն, որ ՚ի կէս յառաջ գայ ՚ի մոռացմանէ ամենայն իսկ պարտուց իւրեանց, յայլս ՚ի ծայրայեղ անձնասիրուԹենէ· յոմանս ՚ի հոգւոյ ամբարտաւանուԹեան, յայլս ՚ի մրոյ անկրօնուԹեան և ամպարշտուԹեան· որ են քառեակ աղբերք անկարգուԹեանց հերքելիք: Մոռացումն ամենայն պարտուց, զի զբաղեալք և մխելք յաւղևից աշխարհի, փքացեալք ՚ի յաջողուԹեանց, ընկղմեալք ՚ի հաճոյս, ոչ ևս լիչեն՝ զի է իւրեանց տէր և օրէնսդիր և դատաւոր· որպէս զի և պատկառանք և երկիւղ Աստուծոյ բառնայ ՚ի նոցանէ՝ ըստ սիրել աշխարհի ՚ի նոսա, և ոչ մնայ ՚ի նոսա՝ բայց հաւատք մեռեալ, ապիկար ՚ի շարժել զնոսա, և մանաւանդ ունել հաւատարիմս ՚ի կատարեալ օրինապահուԹեան: Ծայրայեղ անձնասիրուԹիւն, զի ՚ի սիրել յոյժ զանձինս, ՚ի փայփայել, ՚ի խնդրել զինքեանս յամենայնի և ՚ի հաճել, կուռս լինի կանգնեն իւրեանց զանձինս, և հաճարին զինքեանս կէտ և նպատակ իւրեանց· և պատաղեալ միշտ զանձամբ ՚ի կեանս իւրեանց, միշտ պատարուելք ինքեամբք, պարապեալք հանապազ և ամփոփեալք յիւրեանս, անզգայք եղանին՝ ոչ միայն որոց ինչ արտաքոյ են ինքեանց, այլ և Աստուծոյ՝ որ արարն զնոսա, և որոյ ամենակալ սէրուԹիւնն Թուի լինն նոցա

նեղիչ և խռովիչ: Հոգի ամբարտաւանութեան, զի ըստ օրինակի հեթանոս արքային՝ զորմէ սուրբ գիրք պատմեն, ասեն ՝ի սրտի. Ո՞վ է Տէր, որոյ լուայց ձայնի նորա. զի արհամարհեն զսպառնալիս նորա, զի մերժին զընորհս և զաղաչեցութիւնս նորա, զի լուծանեն համարձակ զպատուիրանս և զօրէնս նորա, զի աստուածընդդէմ մարտընչեն, զի յամառին պնդին մինչև յանդգնել յապստամբութիւն, թէպէտ և ապգնապետալք միշտ ՝ի խղճէ: Մբռաւ անկրօնութեան և ամպարշտութեան, զի զառաջեալք ՝ի մոլորութիւնս և յանարգ զգայութիւնս, և կուրացեալ զառաջանէն մինչև ՝ի բարբանջել ըստ անմտին, թէ չկայ Աստուած, և գիտիցէ զամենայն, չկայ ինչ նմա փոյթ զկրաց, և տեսչութիւն այնպիսի խիստ՝ որպէս պատմեն, մինչև լինել մեզ ընդ ձեռամբ նորա. Ասացէ՛ն՝ ընդ պիծրդ գիրսդ Աստուածդ, կամ գոյցէ արդեօք գիրսն ընդ ՝ի հաւատացեալք, խարդախանէ զնոսա տակաւ հոգի աշխարհի:

Արդ ընդդէմ այսմ ամենայնի հաձեցաւ Աստուած իւրով ամբաւ ողորմութեամբն ցուցանել յանձին Որդոյ իւրոյ օրինակ զգալի, օրինակ չաղթահարիչ մտաց և անհակառակելի: Զի եթէ ՝ի կարգի աստուածայնի վճռոյ՝ որ ՝ի յայտ գան մեզ այսօր՝ Աստուածորդին յանդիման լինի Աստուծոյ ՝ի դէմս և ՝ի կերպարանս ծառայի, որմէ երեսաք կարեմք մեք կացուցանել զընդդիմական և զաղաչեցեալ աղաւաւթիւն մեր յԱստուծոյ: Պարտեալ ասեմ, ո՛ հաւատացեալք. որ ինչ հրաշափառ խորհուրդ ծնեալ քարոզէ մեզ, և գլխաւոր պտուղ՝ զոր պարտիմք քաղել ասի, է կատարեալ հպատակութիւն Աստուծոյ: Ես ոչ եմ իմ, այլ Աստուծոյ. ոչ պարտիմ ասել կեալ վասն իմ, այլ վասն Աստուծոյ. ուրեմն ամենայն խորհրդոյ իմոյ կեա պարտ է լինել ունել զԱստուած. ուրեմն պարտ է լինել ՝ի վեր քան զամենայն խորհուրդս իմ ունել զնա. պարտ է ասել զի կանոն ա-

մենայն գործոց իմոց իցէ Աստուած. ապա ոչ է լինել օրէն բաղձալ իմիք, բայց որ ինչ անշրջելի արգարութեանն Աստուծոյ սահմանք, թէպէտև անձուկք, բռվանգակեն. ուրեմն չէ լինել օրէն հաստատել ինչ ՝ի մոլ, և ոչ ՝ի գործ ինչ ձեռնարկել, չէ ՝ի փորձ աստուածային օրինաց մատուցեալ զայն. ուրեմն պարտ է լինել կալ պատրաստ ՝ի հրաժարել յամենայնէ՝ զոր եղեռնաւոր ազատութիւն, կամ յանդգնութիւն մարդկային, հրապուրեն առնել ընդդէմ հրամանացն Աստուծոյ. զի այս է, զոր ըստ գործնական մասին կոչեմք հպատակել Աստուծոյ: Պարտ է լինել կեալ վասն Աստուծոյ, ուրեմն չէ լինել օրէն ունել ոչ պայման ինչ կենաց շահաւոր, ոչ ընչեղութիւն, ոչ պատիւ, ոչ աւագութիւն, և ոչ մեծութիւն, բայց միայն վասն Աստուծոյ: Մեծութիւն վասն անձին իմոյ, պայման շահաւոր վասն իմ, իշխանութիւն, փաթթամութիւն վասն իմ, լեցին հրեշ ՝ի բնութեան, և որպէս կռապաշտութիւն գոյաւոր յիս, ընդ որ Տէրն իմ նախանձախնդիր փառաց իւրոց տհաճի, և որ կոչէ ՝ի վերայ իմ զվրէժխնդրութիւն նորա: Աստուծոյ եմ ես, և դմա առ ՝ի հպատակել ևեթ նմա. պարտ է լինել ապա ՝ի սերտ սրտէ և յամենայն զօրութենէ լինել պատրաստ առ ՝ի պատարագել զանձն իմ նմա. պարտ է լինել ապա ՝ի բիւր դէպս հրաժարել յանձնէ, և ըստ եղանակի աւետարանական բանին՝ կորուսանել զանձն իմ վասն նորա. ուրեմն ոչ է լինել օրէն խնայել ոչ ՝ի համբաւ իմ, ոչ ՝ի պատիւ, ոչ ՝ի հնօրհս, և ոչ յինչս, ուր բանք իցեն ՝ի տեառնակողմն կոյս յայտնելոյ զանձն: Զի այս է նուիրուեալ անձին, և ոչ կարեմ պլտղդ խոստովան լինել առ Աստուած՝ զի արարած նորին եմ: Վայ էր ինձ, եթէ վասն այլոյ ուրուք բայ յԱստուծոյ էի պատրաստ. և ընդէր.— զի չէք ոք՝ բայց միայն Աստուած, որուն պարտ է լինել հպատակել բոլորանուէր հպատակութեամբ, որոյ առհասատչեայ է

նուիրուամն անձին: Վայ որուամ կամիցի ումեք 'ի մահկա-
նացուաց այսպէս լինել անձնանուէր· զի չէք ոք մարդ
մահկանացու, որուամ անկ եղէ նուիրուամն այսպիսի,
կամ մանաւանդ չէիցէ եղեւն մատուցանել նմա նուէր
այսպիսի: Հարկ պատիւ և ծառայութիւն, ասէ Հոգին
սուրբ, մարդոյ· Աստուծոյ միայնոյ պատարագ ամենայնի՝
որ ինչ է 'ի մեզ, և մեր իսկ ինքեանն. զի ինքն է ըստ էու-
թեան, և մեք հպատակք նորին միշտ 'ի խորս էութեան
մերոյ:

Սովին հոգւով մատեաք արգելք յառաւօտուս 'ի
սուրբ սեղանն. իսկ եթէ 'ի նուիրման անձանց մերոյս-
զոր արարաք Աստուծոյ, պահեալ ինչ էիցէ մեր 'ի բաց,
ոչ 'ի պատիւ իւր համարի Աստուած զնուէր մեր, և ոչ
մեք ձանաչեմք զնա որ ինչ էն: Քանզի որչափ և կա-
րեսքն՝ իշխեցաք ամփոփել զերաւունս ամենակալ և
անյաղթելի սէրուութեանն, յոր յենուին օրինք նուիր-
մանն. Քանզի էմ է ամենայն. իսկ մեք սուտ համարեալ ըզ-
բան նորա, ասացաք, ոչ բերանով այլ՝ գործով, զի ոչ
ամենայն ինչ է իւր: Շահ մի ևեթ 'ի բաց առեալ, մի'ի
կրեայ խնայեալ, միակ լոյծ սրտի չև շինչուցեալ, չաս է 'ի
հանգոյն իմն Թլնամանն Աստուծոյ մերոյ: Որով-նուի-
րուամն մեր, Թէպէտև սրտեռանդն մեզ Թուեցեալ, գտաս
ոչ միայն Թերի և անկատար, այլ և ատելի նմա: Որով
գողոնս իմն գործեցաք գարշելի առաջի Աստուծոյ, և
յայտնապէս եպերեալ 'ի գլուս. Զի ես էմ Տէր, ոչ ոչեամ
ղաֆշտակուրեան յանիրաւութենէ (ըստ լս. 'ի զոհէ:)

Ահա, սիրելի ունկնդիրք, այս է գողոնն 'ի նուիրաց,
այս է յափշտակութիւնն՝ զորմէ բանքս են, այս է խո-
րել յիմիքն՝ զոր խնդրե 'ի մէնջ Աստուած ակրաբար,
և է նիւթ պատարագին՝ որուամ միայ 'ի մէնջ, և մեք 'ի
բաց բառնամք զայն, և խորհեմք յիւրաց անուն՝ որոց հա-
մարիմք զնա ակր: Անկարգութիւն, յորմէ պարտ էր
ձեզ և ինձ բացկ 'ի բաց խորշել, 'ի նուիրելն Տեառն

ընդ Մարիամու ընշմարիտ, Թէպէտև իմանալի, անդրա-
նիկն մեր օրինակեալ 'ի հին օրէնս, այս ինքն զայն՝ զոր
առաւել յոյժ և խանդաղատագոյնս սիրեմք, զտերա-
ցեալ 'ի մեզ կիրս, զսիրելագոյն ինչ մեզ՝ ընդ որուամ
անձկով եմք կապեալք, և զոր օրէն է ինձ կոչել ան-
դրանիկ սրտի մերոյ, զի զըներմագոյն գուշս յուշեն 'ի
նմա: Ի մատուցանել զնուէրն զայն Աստուծոյ մարթ էր
մեզ համարել մատուցեալ նմա զամենայն, և ոչ ևս խո-
րեալ ինչ 'ի սէրուութենէն՝ որուամ այնչափ է նախանձա-
խնդիր· Սրբեա ինչ զամենայն անդրանիկս, ջանդի իմ է ամենայն:
Ա՛յսպէս գուք, ով աշխարհասէրք, կարասջիք զՀոգին
Քրիստոսի ջգենուել, և օրինակի նորա զհետ երթեալ՝
ձանաչել ձեզ զԱստուած գերագոյն Տէր:

Մ՛իս այլ ինչ հանգամանս նուիրման, որով ոչ
ինչ նուազ փառաւորի Տէր, և զոր կարևոր է ձեզ քաջ
գիտել, այս է: Հրեայք նուիրէին Աստուծոյ զանդրա-
նիկս իւրեանց 'ի յիշատակ մեծի բարերարութեանն՝ զոր
ընկալեալ էին 'ի նմանէ, յորժամ ազատեալ կամելով ըզ-
նոսա 'ի գերութենէ Փարաւոնի, կորոյս 'ի միում գիշերի
զամենայն անդրանիկս եգիպտացւոց· Յաւուր, յորում հարն
զամենայն անդրանիկս յերկրին եգիպտոսոյ, սրբեցի ինձ զամենայն
անդրանիկս Իսրայէլի: Ա՛յս եղեն, ըստ աստուածային իսկ
պատգամաց: գլխաւոր պատճառք արարողութեանս այս-
միկ սահմանելոյ· և Քրիստոս կէտ և կատարած օրինաց՝
նուիրեցաւ այսօր որպէս անդրանիկ ազգի մարդկան 'ի
գոհութիւն ամբաւ հնորհաց Աստուծոյ առ մեզ, և 'ի
փոխարէն պարտեաց մերոց մեն միոյ առանձինն, զոր ոչ
ոք 'ի մէնջ կարող էր առնել, եթէ ոչ Աստուածորդւոյն
իւրով նուիրմամբն հայթայթեալ էր մեզ հնարս: Կա-
մեր Աստուած ծանուցանել ժողովրդեան իւրում զինքն,
ոչ միայն տուիչ ամենայն հոգևոր և գերբնական բա-
րեաց՝ որ հայեն 'ի փրկութիւն, այլ և պարգևատու ժա-
մանակիւ յաջողութեանց և հնորհաց՝ որք Թէպէտև

'ի տարին կարգի, այլ են նախախնամութեան իւրոյ զօրութիւնք: Կամէր զի Ժողովուրդ իւր աստուածապարգեւս ծանիցեն զայնոսիկ, վարեսցի նոքօք որպէս նորին պարգեւօք, և ընկալցի զայնոսիկ որպէս չնորհս երկնից և տուրս ի՛ջեալս յիւրմէ: Վասն այսորիկ է, ասէ տուրքն Հերոնիմոս, զի Աստուած 'ի տալ եբրայեցւոց զոյզ ինչ երևելի հովանաւորութեան իւրոյ, աղատելով զնոսա 'ի գերութենէ, կամ տալով նոցա յաղթութիւն 'ի վերայ թշնամեաց, հրամայէր ոճս կարգել 'ի յիշատակ, որպէս զի ըստ յաւելուլ 'ի բարեբաստութիւն 'ի միտ առցեն զհարկ աստուածպաշտութեան, և գարուց 'ի գարս և աղգէ յազգ ուսուսցեն հարք որդւոց իւրեանց՝ զի Աստուած Իսրայէլի վրկեաց զնոսա, պաշտպանեաց նոցա, և բարձրացոյց զնոսա, և զի որպէս աղբիւր բարութեանց էր հռչակել զայն և խոստովանել, նոյնպէս ծայր թշուառութեան իւրեանց՝ յորմէ պարտ էր նոցա երկնչել՝ չմոռանալ զայն կամ 'ի մոռացօնս արկանել: Եւ առ ինչ խնամքն այն էին յուշի կապելոյ նոցա զայն. մի կարծէք՝ թէ պէտք ինչ էին Աստուծոյ, կամ զի որպէս տէր աստուածպահանջ իրաւանց իւրոց՝ հաստատել էր և ոչ մի ինչ յորոց անկն էր իւր, կորուսանել: Այլ որպէս տուրքն Հերոնիմոս յաւելու, պահանջէր 'ի նոցանէ ըստ պարտս նոցա, նախահայեաց խնամովք. զի առանց այսոցիկ՝ բարիքն էս, զորս տայր նոցա, լինէին ձեռսակաւք. քանզի յաջողութեամբքն իսկ, որովք ընդրն զնոսա, կարէին զառածանել 'ի չարիս. զի 'ի լինել նոցա անփոյթ զայնմանէ, սկսանէր 'ի նոսա և բարուց և հաւատոյ ապականութիւն. և ապերախտութիւն, անբաժանելի հպորդութեամբն ընդ այնոսիկ, առնէր զնոսա ստահակս ամպարիշտս և անարգեալս յԱստուծոյ: Այսու խորհրդով հրամայեաց նոցա Աստուած, որպէս յաւելու նոյն վարդապետ, զպահպանութիւն տարեկանաց. սահմանեաց զոմն, կարգեաց արարողութիւնս և օրէնս: Սովին

խորհրդով էա և մեզ զՓրկիչն մեր և զՄիջնորդ յօրինակ նմանութեան, 'ի լուսն և 'ի կատարելութիւն գոհութեան մերոյ: Ինչ միտ դնել ազաչեմ երեցունց այսոցիկ բանիցս: Յօրինակ նմանութեան, որպէս թէ ասէր Փրկիչն մեր ցմեզ. Կամիս գու, ո՛ հաւատացեալ, չլինել ապաշնորհ, հայեաց յիս, և լեր ինձ նմանող. Զգոյշ լեր, որպէս ցուցից ես ձեզ օրինակ, արասցես: Նուիրեա զքեզ, որպէս ես զիս նուիրեցի. նովին հոգւով, որով ես զանձն իմ պատարագեցի: Ի լուսն գոհութեան մերոյ. զի որ ինչ թերին է 'ի չնորհակալիս մեր՝ զոր մատուցանեմք Աստուծոյ, ընդ առատապէս և լիուլի Աստուածորդին պատարագեալ: Եւ 'ի կատարելութիւն գոհութեան մերոյ, զի Աստուած միայն կարէր չնորհակալել ըստ բաւականին, և գոգցես իմն ըստ արդար համեմատութեան, վասն ամենայն պարտեաց մերոց առ Աստուած: Զկայ առցուք ասա, սիրելի ունկնդիրք, և ջանասցուք յօգուտ 'ի կիր արկանել զաստուածային խրատս:

Եւ ի՞նչ լսովանդակին. — յամօթ առնել 'ի մեզ զհոգի ապերախտութեան, որ փոխանակ Ճանաչելոյ ըզբարերարութիւնս Աստուծոյ, և ոչ խոստովանի՝ զի չըննորհք էին նորա. զի փոխանակ տալոյ նմա փառս, չկամի և ոչ յարգել զայնս. զի անձին ընծայէ զայնոսիկ. զի ընդդէմ նորին զինուորի նոքօք. զի սահակի և անափառի և խրոխտանայ նոքօք. ուստի և առաւել մոլի 'ի կիրս իւր, և ախտաւոր ևս գտանի: Զի զի՞նչ յամախագոյնս տեսանեմք յաշխարհի, բայց մարդիկ խորթացեալ 'ի բըննութենէ, որք և ոչ համարին այնպիսիք, և ոչ 'ի միտ առնուն՝ զի են այնպիսիք. մարդիկ՝ ոչ միայն փքացեալս, այլ և զեղծեալս յաչողութեամբք՝ որովք ընդ զնոսա Աստուած. մարդիկ՝ որք Թուին արհամարհել զԱստուած, ոչ առ այլ ինչ՝ բայց զի բարեբաստիկս զնոսա արարեալ է. և մարթ իսկ է ասել՝ զի բարեբաստութեամբն իցեն չարացեալ: Գանձս տեսանեմք, զի փոխանակ 'ի սիրել

անդր յաջողութեանց և բարեմասնութեանց կենաց իւ-
րեանց 'ի վեր ելանելոյ՝ կարծեն ունել իրաւունս պար-
ծելոյ յայնոսիկ, և ասելոյ յանձինս. Ջեռն մեր բարձր, և ու
Տէր արար զայս ամենայն: Ինձէն եղէ որ ինչ եմ. ես կանգ-
նեցի զտունն իմ. Ճարտարութեամբ իմով և վաստակօք
հասի ցայս վայր. այս ամենայն գործք ձեռաց իմոց են:
Ո՞ւր գտանիցի արդ մեծատուն ոք աչխարհասէր, որում
չկարէ մարթ նովին ցաւով և զայրացմամբ առնել զիշտամ-
բանս՝ զոր առնէր Մովսէս Հրեից. Յօրացաւ և անգութեաց
ջնէրեալին... գիւրացաւ, պտուղարացաւ, և լայնացաւ, և եհաղ զՏէր
Աստուած ողորմութ: Զկնի՞ն զոր 'ի վեր քան զամե-
նայն առեալ Աստուած, և զոր չկարեմք չատել և մեք:
Ըստ ամենայն օրինաց արդարութեան, որչափ ոք ձոխա-
գեալ կրկ բարեօք, այնչափ առաւել պարտ է նմա լինել
հաւատարիմ ջերմեռանդն և նախանձախնդիր աստուա-
ծային օրինաց. այլ ընդ հակառակն՝ որչափ ոք լցեալ կրկ
բարեօք, այնչափ ցուրտ է և անփոյթ աստուածպաշտու-
թեան, կամ լաւ ևս ասել՝ այնչափ առաւել է ամպա-
րիշտ և թշնամի Աստուծոյ:

Ո՛հ եղբարք իմ, դուէր սուրբն Բեռնարդոս. երանի՛
որ կայ միշտ յերկիւղի, և ոչ ինչ նուազ հոգայ վասն բա-
րեարութեանց և պարգեւաց ընկալելոց, քան վասն մե-
ղացն գործելոց: Եւ ընդէր կրկ երկիւղս այս և հոգ
վասն բարերարութեանցն Աստուծոյ. — ի միտ առիք,
զի բարերարութիւնք ընկալեալք յԱստուծոյ կարեն լի-
նել մեզ հաւաստեաւ պատճառք դատապարտութեան՝ի
վերջնում ատենի, որպէս մեղք գործեցեալք ընդդէմ
Աստուծոյ. և դարձեալ՝ զի մեղք մեր կարեն գէթ խո-
նարհեցուցանել զմեզ և 'ի դարձ ածել, 'ի նախասահ-
մանութիւն մեր սպասաւորելով. իսկ սպախտաւորու-
թիւն չնորհաց կուբացուցանէ զմեզ և խստացուցանէ,
և սաճէ զանապաշխարութիւն: Մի սպա զարմանայք,
եթէ երկարեմ զխրատս զայս. Թերևս Աստուած աղդե

ինձ զայս որպէս դիպողագոյն 'ի շարժել զձեզ, Թերևս
նախատեսանէ՛ զի նուազ այսմ զդէմ ունիցիք: Քանիք 'ի
մեզաւորաց անզգայք սպառնալեաց աստուածատատս
պատուհասից՝ դորովեցան 'ի յիշատակ երախտեացն Ա-
ստուծոյ. այսպէս վարեցաւ Աստուած ընդ Դաւթի. փո-
խանակ յանդիմանելոյ նմա զմեծութիւն յանցանացն,
եդ առաջի աչաց նորա զբազմութիւն ընդհացն՝ զոր
տուեալ էր նմա. զի ասէր ցնա բերանով Մարգարէին.
Ես զքեզ օծի Թագաւոր Իսրայէլի, ես զքեզ նստուցի
յաթոռ, ես փրկեցի զքեզ 'ի ձեռաց Սաւուղայ. և եթէ
այս ամենայն բարերարութիւնք Թերևս Թուին քեզ,
մեծամեծս ևս յաւելից. Եւ ես ասեմ ձեզ, յաւելից ևս
բանիւ աստի 'ի գուէթ շարժեցաւ Դաւիթ, ոչ կարաց
ժուժկալել առաջի քաղցր յանդիմանութեանն՝ զոր
առնէր նմա Աստուած. և որ մեզաւորն էր, 'ի միւսմ անդ
վայրկենի եղև արգար, եղև սուրբ, եղև այր ըստ սրտին
Աստուծոյ: Ա՛յլ ինչ ոչ յաւելցուն, ո հաւատացեալք.
եթ ձեզ Աստուած՝ որպէս Դաւթի՝ հոգի աղնուական.
և ընդդէմ յիշատակ այնքանեաց բարերարութեանցն,
որովք լցեալ է զձեզ, ոչ առնեն 'ի ձեզ զնոյն աղդեցու-
թիւն:

Եւ գարձեալ յայտնէ Աստուած այսօր զանձն վրէժ-
խնդիր ընդդէմ մեղաց. զի Քրիստոս երևի 'ի տաճարին
որպէս զոհ 'ի քաւութիւն մեղաց, և 'ի հաստուցումն
արդարութեան և սրբութեանն Աստուծոյ. հաստուցումն՝
որում 'ի բաղում գարուց հետէ ծնայր Աստուած, և
զոր Քրիստոսի միայնոյ պարտ էր սկսանել 'ի սերկեան
աւուր: Մնայր ասեմ Աստուած այսմ հաստուցման. զի
հարկ էր վրէժխնդրութեան, և թէպէտ բազմամղոմ,
այլ չէր պարտ նմա ողորմել մարդոյ մեզաւորի, եթէ ցա-
սումն նորա չէր ցածուցեալ պատարագաւ, որ գէթ
փառաւորեր զնա՝ որչափ մեզաց անարգեալն էր զնա:
Արդ ոչ ոք բաց յԱստուածորգւոյն կարէր այսպէս

զՀայր իւր փառաւորել. և վասն այսորիկ մատոյց նա
զանձն 'ի պատարագ: Եւ արդարև ասա և 'ի Թլփատու-
թեան իւրում երևեցաւ 'ի կերպարանս մեղաւորի, և
եբեր յանձին զդէմս մեղաւորաց: Մարիամ և Սիմէոն
յընծայէն զնա՝ մանուկն զնա գոգոյս արդարութեանն
Աստուծոյ որպէս թէ ասելով. Խնդրեա զվրէժ քո Տէր,
փառք քո պահանջեն զայն. և ահա որով մարթ է հա-
տուցանել բովանդակ զփառս, զոր յափշտակեաց 'ի
քէն ազգ մարդկան. հար զդա, և լուա յարեան Աս-
տուածորդւոյդ զամենայն Թշնամանս՝ զոր ընկալար 'ի
մարդկանէ: Եթէ չև ելեր հասեալ ժամանակն հարկանե-
լոյ զդա, 'ի ձեռս քո է միշտ զենլլն, և զենցի 'ի ժամուն՝
զոր խմաստութիւն քո սահմանեալ է, և յորում հաճոյ
լինի քեզ յայտ առնել զվրէժխնդրութիւն քո: Արդ ո՛
հաւատացեալք, ասացի ձեզ բազում անգամ, և չկարեմ
կրկնել ըստ արժան բաւականին, առ 'ի տալաւորել 'ի
միտս ձեր զայս ճշմարտութիւն, զի Թէպէտև այս նուի-
րումն Աստուածորդւոյն բաւական է 'ի ջնջել զամենայն
մեղս աշխարհի, այլ ոչ ազատ առնէ զձեզ 'ի պարտուց
ապաշխարութեան: Այլ ընդ հակառակն խրատէ զձեզ
և սաստիկ ուժգին յապաշխարութիւն, ցուցանելով ձեզ
որչափ առեալ Աստուած զմեզս, որչափ առելի են և
արժանի պատժոց մեզք. և որչափ պարտ է մեզ առել
զայն, և մեզէն պատուհասել: Մի խաբիցուք. ապաքէն
Աստուածորդին 'ի հաւիրել զինքն Հոր իւրում վասն մեր,
ընծայեաց նմա յերկրապագելի անձին իւրում ամբաւ
արժանիս, այլ առ ինչ. — որպէս զի գերազանցութիւն
արժանեաց իւրոց արժանաւոր գլաստակս մեր արասցէ,
և ոչ երբեք վասն ազատս կացուցանելոյ զմեզ 'ի վաս-
տակոց, և 'ի պարտուց սատնալոյ արժանիս: Մերքս ա-
ռանց իւրացն զօրեն ինչ ոչ. հատուցմունք մեր առանց
հատուցման՝ զոր մատոյց Աստուածորդին՝ արժէին ինչ
ոչ. այլ իւրքն ևս, Թէպէտև առատաձեռք և ամբաւք,

պակասեն 'ի կարևոր կցորդութենէն առ 'ի լինել մեզ
օգտակար, և առ 'ի հաղորդս առնել զմեզ սյնց: Պարտ
է ասպա՝ զի մերքս կցորդեացին իւրոցն. զի այսպէս սահ-
մանեաց Աստուած, և կարի իսկ իրաւապէս, զի պահան-
ջեսցէ 'ի մարդոյ մեղաւորէ՝ որպէս Աստուած արդար և
վրէժխնդիր՝ զՀատուցումն, որչափ կարող է մարդ առ-
նել: Իսկ մեք, սիրելի ունկնդիրք, այլազգ ամենևին գա-
տիմք և գատել կամիմք. և Թէպէտ չիցեմք յայտնապէս
չարաբարք, սակայն եմք իսկ գործովք և արդեամբք:
Պարզ ևս ասացից. մի 'ի մոլորութեանց արդի չարաբա-
ռաց է՝ զի չհամարին կարևոր զբարեգործութիւնս, մա-
նաւանդ զպատժական և զապաշխարանաց գործս. և Թէ-
պէտ հրաժարիմք մեք մօք 'ի վարդապետութենէ ասի,
սակայն հետևիմք այսմ 'ի դնացս մեր: Բարձրացուցա-
նեմք մտադիւր զարժանիս այսր նուիրման, որով Աս-
տուածորդին նուիրեցաւ 'ի ձեռն Կուսին Հոր իւրում
երկնաւորի 'ի տաճարին, և անդ զկայ առնուամբ՝ որպէս
Թէ խելամուտ լեալ՝ զի որ ինչ և յաւելուածովք յայն,
էցէ աւելի ինն քան զկարևորն: Վասն որոյ ոչ միայն չա-
պաշխարեմք, այլ և խնդրեմք զամենայն հանգիստ և դիւ-
րութիւն, և զամենայն ազգս ազգս հաճոյից. պարապեմք
'ի խաղս և յամենայն զուարճութիւնս աշխարհի. պաշ-
տեմք զմամոմին, և ոչ ինչ 'ի հաճոյից զլանամք զդայու-
թեանց: Իցէ այս ըստ օրինակին, զոր եցոյց մեզ Փրկիչ
տուս յընծայման իւրում. իցեն այսոքիկ խրատքն, զորս
տայ մեզ: Որպիսի՛ անկրաւ բաժանմամբ պահանջեմք Թո-
ղուլ 'ի նա զամենայն վշտակրութիւնս վասն փրկու-
թեան մերոյ, և զամենայն արդասիս վշտաց նորա մեզէն
վայելել: Զէ այս ձանաչել զԱստուած, ո՛ հաւատացեալք,
և ձանաչել զԱստուած վրէժխնդիր, այլ յանդուգն
յուսով ազատ կացուցանել զմեզ 'ի պարտեաց մերոց
առ նա, և կամել ձրի առանց ինչ վաստակոց հասանել
փրկութեան: Ծանիցուք զնա արդ յայսմ խորհրդեան,

և ուսցուք ասսի զՀանաչուսին և անձին, որպէս առաջի կայ մեզ յերկրորդումս մասին։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Կանոն հաստատուն էր առ հեթանոսս, և ունէին զայն որպէս գլխաւոր կէտ բարոյականին իւրեանց, զի Հանաչուսին անձին իցէ բովանդակութիւն ամենայն մասանց իմաստութեան և կատարելութեան։ Վասն ոյժ, ասէին իմաստունքն այնոքիկ ըստ աշխարհի, ազանց շնորհաց հաւատոց· զորոյ իմաստս քաջ 'ի կիր արկցեն յաւուր միում 'ի գաւառապարտութիւն հաւատացելոց· Ծանիր զքեզ, և խոնարհեացես։ Այդ եթէ իցես խոնարհ, երաշխաւորեմ քեզ, և վստահ լայդ եւեթ առաքինութիւնքդ, ոչ ինչ երկբայիմ զայլոցն։ Ծանիր զքեզ, յաւելուն նոքա, և որչափ և փայլեացես յաշխարհի, խոստովանեսցիս՝ զի գուշնաքեայ լինն ես, զի գոյզն ինչ ունչ ունուցանէ զքեզ, և գոյզն ինչ ընկճէ։ Ծանիր զքեզ, և գացես 'ի քեզ աղէտս՝ որ յամենի արասցեն զքեզ· ախտս՝ որ սոսկացուսցեն զքեզ, խօթամտութիւնս՝ որ շառագունանս ածցեն զքեզ, վատութիւնս՝ որոյ տեսութիւն եւեթ խոնարհեցուսցէ 'ի սպառ զամբարտաւանութիւն քո և զանձնասիրութիւն։ Ծանիր զքեզ, և գացես 'ի քեզ միտս լի մեղսութեամբք, կամս յողդողդ և յեզեզուկ, անտս մոլեգինս, և բաղում այն է՝ զի իշձս վատս և ամենապարտս։ Այս ամենայն խոնարհեցուսցէ զքեզ, այս ամենայն նշաւակեսցէ զպատրանս անոտ կարծեաց քոց զքէն, և սովաւ նկրտեսցիս 'ի վաստակս հաստատուն առաքինութեանց, լինիս արդար, համեստ, հեզ և ողորմած։ Եւ համառօտիւ՝ ծանիր զանձին ոչնչութիւն, և լինիս այլ կատարեալ։

Այսպէս իմաստասիրէին հեթանոսք, և յայս ապատան Կասիոդոր, քրիստոնեայ և բարեկրօն, իրաւունս համարէր կնքել՝ զի Հիմարիա մեծութիւն այն է, ճանաչել զանձին փոքրկութիւն։ Իսկ ես, սիրելի ունկնդիրք, առեալ զիրան յայլ իմն միտս, որ Թուի հակառակ՝ այլ հաւասարապէս հրահանգէ զմեզ և չինէ, համարիմ զի փոքրկութիւն՝ որով առաւել պարտիմք յամեթ լինել, և յաճախագոյն ևս կշտամբել զմեզ նոքաւ, այն է՝ զի չճանաչեմք բաւականապէս զմեծութիւն մեր։ Հաստատեմ զի մարդ, գոլով մեծ առաջի Աստուծոյ՝ որչափ փոքր է յինքեան, կատարելութիւն իւր և երջանկութիւն է նկատել միշտ զանձն յԱստուած, և մի երբէք յինքեանս. ամբառնալ միշտ առ Աստուած, և մի ինքնել յինքն. և եթէ իցէ հնար, 'ի մոռացօնս արկանել զանձն 'ի սպառ։ Եւ ընդէր։ — զի տեսութիւն անձին, ուրոյն յԱստուծոյ, արկանէ զնա 'ի յուսահատութիւն և 'ի տրտմութիւն, և կարի յոյժ գժուարին է քաջալերել զնա։ Այդ չեն ինձ կամք խորհուրդս այսպիսիս ստորինս արկանել 'ի միտս ձեր, և ոչ առաջի առնել ձեզ զպատճառս կորանաց, որ ըստ պատգամաց ուրուն 'ի մարգարէից 'ի ներքս 'ի մեզ են, այլ ընդ հակառակն՝ կամիմ, առանց ինչ տանեալոյ քրիստոնէական խոնարհութեան, և առ 'ի պատկառ կացուցանել զձեզ կարևորագոյն ձերոց պարտուց, յանդիման առնել ձեզ զգերազանցութիւն և զարժանապատուութիւն ձեր։ Գերազանցութիւն ցարդ անծանօթ ձեզ, և արժանապատուութիւն՝ բիւրից 'ի ձէնջ խառնավար արարեալ։ Կամիմ զերկաքանչիւրոցն ևս ղգացուցանել ձեզ զչարդ, և ըստ օրինակի մեծին Լևոնի սրբոյ քահանայապետին՝ զարթուցանել նոքաւ 'ի ձեզ զՀատատս, որպէս ասէ· Ծանիր, ով մարդ, որ ինչ արժես. ծանիր որ ինչ էագ։ Յերկուս չայսոսիկ բովանդակի ամենայն գործնական և փըրկաւէտ գիտութիւն անձանց մերոց· որ ինչ արժէքս,

և որ ինչ եմք: Որ ինչ արժեմքս առաջի Աստուծոյ, և որ ինչ եմքս ըստ կոչման մերում և ըստ նախասահմանեալն Աստուծոյ: Որ ինչ արժեմքս, թէպէտև մեղաւորք· և որ ինչ եմքս որպէս քրիստոնեայք: Արդ առ՝ի գիտել զայս՝ շատ է նկատել որ ինչ կատարի այսօր Յերուսաղէմ՝ի տաճարին, և ասա ևս կարօտիմ ձերումդ քաջ մտագրութեան:

Որ ինչ արժեմքս առաջի Աստուծոյ, կարեմք անգիտանալ զայն, ո՛ հաւատացեալք, ՝ի տեսանելն զՔրիստոս նուիրեալ վասն մեր, զՔրիստոս վասն մեր մատնեալ, ընկալեալ ՝ի փրկանս զՔրիստոս վասն մեր մատնեալ և ընդունելի լեալ ՝ի գինս փրկութեան մերոյ: Յարժէս իրաց առ մարդիկ մարթ է այսմ կանոնի սխալել, զի ոչ միշտ ճանաչեն մարդիկ զարդ իրաց, և խաբին յաճախ տալ բազում փոխանակ փոքուս· այլ առ Աստուած, որ է անսխալ, հզօր է և յաղթահարիչ մտաց իմաստասիրութիւն սրբոյն Օգոստինեայ՝ որ ասէ· Կամիս գիտել զբերալանցութիւն և զարժանիս այնորիկ՝ զոր գնեաց Քրիստոս· տես զինչ էառ՝ի գինս, և որով պայմանաւ գնեաց: Արդ զոր գնեացն՝ է հոգի քո, է փրկութիւն քո, է անձն քո· և առ՝ի գնել զայն՝ էառ զարիւն իւր, էառ զկեանս իւր, էառ զինքն գլխովին: Է ինչ տպա համեմատութիւն ընդ փրկութիւն քո, և ընդ արիւն Աստուածորդւոյն· ընդ հոգի քո և ընդ կեանս Աստուածորդւոյն· ընդ անձն քո, և ընդ անձն Աստուածորդւոյն: Թերևս չէր քո՝ի միտ առեալ զայս· այլ ահա ուսուցումն մեծ, զոր տայ քեզ Փրկիչն՝ նուիրումանն՝ի տաճարին: Զինչ է փրկութիւն մարդոյ·— Բարիք՝ որ վասն Աստուած, ըստ օրինաց իւրոյն իմաստութեան, ոչ ինայեաց Որդի իւր· բարիք՝ որ եգեալ՝ի կշիռ, և՝ի կշիռ աստուածային, ծանր գտաւ քան զարժանիս և զկեանս Աստուածորդւոյն· զի արդարև կեանք աստուածային, հանգերձ ամենայն կատարելութեամբքն և արժանեօք, նուիրեցաւ այսօր փոխանակ նորին:

Այս է ահա, ով աշխարհասէր, որ ինչ արժեցեր դու Աստուածոյ, և որ ինչ արժէ առաջի Աստուածոյ քո փրկութիւն քոյին: Միտ դիր, աղաչեմ· յորժամ խրատիմք՝ զի առ փրկութեան հոգւոյ մերոյ ամենայն բարիք աշխարհի, զորս մեք այսչափ յարդեմք և մեծարեմք, են ստուերք և ցնորք· յորժամ խրատիմք՝ զի միայն կարևոր փրկութիւն մեր է, զորոյ ստացուած և ժառանգութիւն կարիցեմք համարել շահ, և որ ինչ ոչ օգնէ առ այն՝ պարտ է մեզ համարել զայն կորուստ ըստ Առաքելոյն· Համարիմ խոկ պանծոյն վնաս· յորժամ խրատիմք՝ զի միայն փրկութիւն մեր այս մնայ յաւիտեան, իսկ այլ ամենայն ինչ է անցաւոր· յորժամ խրատիմք՝ զի սիրտ մեր յեղեղուկ և անհանդարտ չկարէ գտանել հանգիստ, բայց միայն՝ի փրկութեանս յայսմիկ· և զի ոչ ինչ յերեւելեացս կարէ հանդարտել զնա՝ թող թէ ընդ և յաղեցուցանել· յորժամ զայս ամենայն խրատս լսեմք, սակայնիմք յակամայս իսկ հաւանել· և թէպէտ գրաւեալ լիցեն միտք մեր՝ի ընդարձակ աշխարհի, խոստովանիմք՝ի սրտ՝ զի արդարև չեք այլ ինչ, բայ՝ի փրկութենէ մերմէ, արժանի համարելոյ ինչ, և արժանի մերոցս ջանից: Արդ այս ամենայն, որպէս Տերտուղիանոս խրատէ, են վկայութիւնք հոգւոյ բնականապէս հաւատացելոյ· և առ՝ի գտանել այսպէս՝ շատ է չլինել անմիտ· վասն զի և իմաստասէրք, որք հաւատային անմահութեան հոգւոյ, այսպէս գտանեցան, և այսպէս զայս պատուիրեանց համարեցան: Այլ երբեմն՝ի վկայութիւնս յայսոսիկ բնութեան յաւելուս զիւրան հաւատոք, և յանդիման առնէ մեզ զԱստուածորդին մատուցեալ վասն մեր՝ի պատարագ, խնդամուտս առնէ զմեզ, զի չէր մարթ փրկութեան մերոյ նուազագոյն արժէլ· զի եթէ ոչ Աստուած փառաց ընկալեալ լինէր (խղճեմ իսկ ասել) ՝ի փրկանս, ոչ այլ ինչ յաւելեր առ՝ի գնել զանարգագոյնն ոք ՝ի մեղաւորաց· զի պէտք եղեն Աստուածորդւոյն լինել վասն

այնորիկ բաղդատանօքը. և զի վասն այսր խորհրդոյ Դաւթի հոգւով մարգարէութեան կոչէը զԱստուած՝ ոչ ևս Աստուած երկնի և երկրի, այլ Աստուած փրկութեան իւրոյ. Տէր Աստուած էրկնաւոր ինչ. մինչև կարել առանց հայհոյութեան ասել՝ պարապեալ զԱստուած ի գործ փրկութեան մարդկան, որպէս թէ փառաւորեալն Աստուած՝ ոչ ևս իցէ որ ինչ էն, բայց վասն մարդոյ և փրկութեան նորա. զի վասն փրկութեան մարդոյ տայ զանձն, և տայ՝ որպէս յաւետեաց սուրբն Օգոստինոս, մինչև յանձն առնուլ ծախիլ յաւուր միում վասն նորա, և գոգցես իմն ոչէանալ: Որպէս զի վերադոյնս այս վարգապետ՝ խելամտեալ ի խորհուրդս մարգարէին՝ գոչէ ընդ նմա, Եղե ինձ ի էրկնաւոն: Այո, Տէր իմ, արարած քո եմ, և որպէս արարած քո՝ եղեալ եմ վասն քո. այլ իբրև տեսանեմ զքեզ մարմնացեալ և ի գիրկս Մարիամու յերկրպագելի քումդ ընծայման, Աստուած գոլով թուիս ինձ եղեալ վասն իմ, և ոչ խաբիմ. Եւ եղեր ինէ ի էրկնաւոն: Յորժամ հաւատաք հասեալ յօգնութիւն լուսոյ բանին՝ ընդ զմիտս մեր այսոքիւք կարևոր և յաղթահարիչ ճշմարտութեամբ, ոչ հաւատացեալք, եթէ փոքու իմն իցեմք քրիստոնեայք, զի՞նչ պարտիմք խորհել զփրկութենէ մերմէ՝ որոյ գերազանցութիւն, և գեր ի վերոյ քան զայլ ամենայն բարիս բարձրութիւն, այսու հաւաստեաւ յայտնի մեզ:

Արդ զի այս այսպէս է, և էկարելիք յերկուանալ, զի՞նչ պարտ իցէ մեզ խորհել զանձանց ի տեսանել ըզսոսկալի հակառակութիւնն ի մասինս յայսմիկ ընդ վարս մեր և ընդ հաւատս: Զի որպէս իցէ մեզ միաբանել ընդ հաւատս մեր զայսպիսի էմոյթ զփրկութենէ մերմէ, զայսպիսի արհամարհութիւն փրկութեան մերոյ, և զայսպիսի կամաւոր մոռացումն՝ յորում կեանք: Իցէ՞ ինչ այլ յաշխարհի առաւել քան զայս արհամարհեալ: Հարցանելիք երբեմն, ով Տէր, թէ զի՞նչ կարասցէ մարդ

տալ փրկանս ընդ հոգւոյ իւրում, եթէ երբէք կորուսցէ զայն. Զի՞նչ պաշէ մարդ էրկանս ընդ անչին իւրոմ. և ոչ ինչ զարմանամ ընդ հարցուած քոյին. զի յետ տալոյ քո զքեզ վասն մարդոյ, ո՞չ իսկ անհնարին կացուցեր խորհիլ այլ ինչ փրկանս՝ որում մարթ իցէ հատուցանել զկորուստ փրկութեան. Զի՞նչ պաշէ մարդ էրկանս ընդ անչին իւրոմ: Ով անձն իմ հէք և թշուառ. յետ գնելոյ զքեզ Աստուածորդւոյն արեամբ իւրով վասն էր իրիք ժամանակեայ օգտի և չտեսոյ արկանես այսուհետև զքեզ ի վտանգ կորստեան: Այլ աւաղ, չեմք ինձ պարտ փոխել աստ զդէմս բանիս, յաղուշ հարեալ ընդ նորանշան նախատինս քո, Տէր, աղերսաբերս մեզ՝ հարցանել թէ ընդ ի՞մ իմիք, և ես և անարգագունի, այր աշխարհասէր չեմք միշտ պատրաստ տալ զանձն իւր, վաճառել և մատնել զայն: Է՞ ինչ չահ օգտի, որ ոչ կուբացուցանիւ զնա. է՞ ինչ ի հաճոյից քմոյ՝ որ ոչ զնա զառածանիւ, է՞ ինչ ի ցնորից պատուոյ՝ որ ոչ տայ նմա յամառիլ, է՞ ինչ ի հրապուրանաց հեշտութեան՝ որ ոչ զնա կախարդէ, և ոչ ապականիւ զնա՝ մինչև կամիլ զդատապարտութիւն անձին: Ի գաւել զնա ըստ գործոյ իւրոց և ըստ գնայից, փրկութիւնն այն՝ այնչափ մեծագին համարեալ Աստուծոյ՝ թուի թէ ոչ զբաւն տեղին ունիցի ի միտս նորա ըստ մեծարանաց. սակայն հանապազօր անհասանելի իմն խելայեղութեամբ, և այլանգակագոյն յեղաշրջութեամբ կարգաց, ընդ իմ իմիք ոչ փոխանակէ զայն, որպէս թէ զհակառակին հաստատելով սերունեան բանին. Զի՞նչ ոչ տացէ մարդ փոխանակ հաճոյից անձին: Ճանիք ի հաւատացելոց, առաւել քան զնաւս անիծեալ և մերժեալ յերեսաց Աստուծոյ, կեան ի խաղաղութեան, յետ հրաժարելոյ վասն մնոյն հաճոյից իրաւանց անգրանկութեան իւրեանց, և ի ժառանգութենէ որգւոց Աստուծոյ. քանիք ի մեղաւորաց, սեղանակատուք որպէս զՅուդա, կամն առանց սոսկալոյ

զդաշնն նզովելի՝ զոր աշակերտն եղկելի եդ, և հանգոյն նմին վաճառեն անարդ դնոց զարիւն արդարոյ, իմա զՔրիստոսէ իւրեանց, զդինս արեան Աստուածորդւոյն: Եւ առաւել իսկ յայսմ մասին սեղանաղերձք քան զՅուդա. զի մատնիչն այն գէթ ընդ ճանաչել վէրձեռնն՝ նզովեաց զայն, և սոսկացաւ ընդ այն, ուր սոքա կան մնան անզգայք: Արդ զայս նորանշան կուրութիւն, փրկիչն մեր որպէս լոյս աշխարհի, եկն լուսաւորել. և ահա դեղն գերազանց, զոր եբեր. զի առ՝ ի չօտարանալ ի խորհրդոյս, զաստուածայինս խրատ յընծայմանէ ասուի Քրիստոսէն առնուա՛ ի միտ, թէ որպէս փրկութիւն իմ եղև մեծագին: Անփոյթ առնէի զնմ փրկութիւն, և անփոյթ առնելով զայն՝ անարգէի զանձն իմ և մատնէի կրից իմոց, ծառայէի սարկաւար արարածոյ, հնազանդէի զգայութեանց և մարմնոյ. և այսպէս, ըստ բանի գրոյն, անկեա՛լ ի պատուոյ՝ հաւասարէի անասնոց անբանից: Այլ եկ, ասէ ցիս այսօր Աստուածորդին, եկ և ՝ի ձեռն լուսոյն՝ որ ծագէ ՝ի տաճարիս, խրատեա՛լ ՝ի հանգամանաց՝ յորս տեսանես զնս, և ՝ի պատարագէն՝ զոր մատուցանեմ վասն քո, թէպէտ և դեռ առանց հեղման արեան, սկսիր ճանաչել զքեզ: Ահա կամ ՝ի սեղանի որպէս զոհ ՝ի փրկութիւն հոգւոյ քո. նայեաց, և ՝ի փրկանայ ասուի՝ զոր տամ առ ՝ի գնել զքեզ, ՝ի միտ առ որ ինչ կորուսանեդ կորստեամբ փրկութեան քո: Զայս ահա տայ մեզ Փրկիչն ՝ի միտ առնուլ. և վայ մեզ, եթէ խստացեալ սրտիւ, և եղեռնաւոր ստունգանութեամբ ոչ լուիցուք ձայնի նորա, եթէ երբեք մոռանայցեմք զգերազանցութիւն մեր և զյարդ, և մանաւանդ եթէ ոչ սրբութեամբ վարուց պահեսցուք զպատիւ մեր, և անարգեսցուք որ ինչ եմք:

Զի ՝ի ձեռն փրկութեանն՝ զոր Փրկիչն մեր սկսանի ընծայմամբն Աստուծոյ վասն մեր, լինիմք մեք սեպհական ժառանգութիւն Աստուծոյ, ստացուած Աստուծոյ, ժողովուրդ Աստուծոյ: Զի թէպէտ և որպէս արարածք ըստեղծեալք ՝ի ձեռանէ իւրմէ՝ անգստին իսկ նորա եմք, սակայն գնեալք յԱստուածորդւոյն՝ առաւելագոյն իրաւամբք եղաք իւր, և նուիրեցաք նմա առանձինն իմն օրինակաւ: Այս է՝ զոր կոչէմն արժանապատուութիւն. նկատեցէք ասա զխտիրն էական ընդ Աստուած և ընդ մարդ: Լինել ումեք ՝ի մարդկանէ՝ է գերութիւն, որ խոնարհ առնէ զմեզ և նուաստացուցանէ. իսկ լինել Աստուծոյ, է ըստ գրոց ազատութիւն՝ որ ամբառնայ զմեզ ՝ի պատիւ և փառաւորէ, զերծուցանելով զմեզ ՝ի գերութենէ աշխարհի և դժոխոց: Զայս իրաւ գեղեցիկ ասէր Աւաքեանն առ նախնի հաւատացեալս յասելն. Ձէ՛ անձանց գէր. և առհաւատչեայ քաջալերական ճշմարտութեան զայն ածէր, զի Աստուծոյ էին՝ գնեալք յԱստուածորդւոյն. Քանզի գնոյ գնեցայք: Եւ ոչ այսչափ միայն, այլ որպէս քրիստոնեայք՝ առաւել մանակից եմք մեք փրկութեանն այսմիկ, թէպէտ և հասարակաց իցէ այն և ընդհանուր. զի իբրև քրիստոնեայք առաւելապէս եմք Աստուծոյ, և իբրև քրիստոնեայք պատուիմք՝ սուրբ և փառաւորեալ անուամբն կոչեցեալք որդիք Աստուծոյ:

Աստի ապա նոյն Աւաքեալ զհետ բերէր առ նոսա երկու ինչ, զորս խնդրեմ պինդ ունել միշտ ՝ի մտի՝ առ ՝ի կանոն գնացից ձերոց. Գնոյ գնեցայք, ֆառաւոր արեամբ Աստուածոյ ՝ի մարինս չէր: Այս ինքն՝ չէ բաւական զի ՝ի ձեռն փրկութեան ձերոյ տիրեացէ Աստուած ՝ի հոգիս մեր, այլ պարտ է զի և մարմինք մեր հաղորդակից լինիցին նորահաց այսը խորհրդոյ, և զի ՝ի ձեռն ամենից ժուժկալութեան երևեսցին որպէս զհոգիս մեր գնեալ ՝ի Քրիստոսէ, և սրբեալ յամենայնէ՝ որ արատաւորէ զայն: Վասն որոյ պարտ է մարմնոյ մերոյ զգենուլ զմեռելութիւն Քրիստոսի. և զայս իմանայ Աւաքեանն ՝ի յորդորելն զմեզ՝ կրել զԱստուած ՝ի մարմինս մեր. Գնոյ գնեցայք, զ՚ինչ ֆառաւոր արեամբ Քրիստոսի: Զի է ծառայութիւն իմն մարդկան, որ

ոչ կարէ կալ ընդ երանելի կեանս կատարեալ վրկագործութեան, ծառայութիւն մարդկան հապկս հակառակ աղատութեանն՝ զոր Քրիստոս ստացաւ վասն մեր. ծառայութիւն մարդկան՝ սուկալի ծառայիցն Աստուծոյ բոլորից: Այլ որ քարոզէն զԱւետարանն, ոյց առաւելապէս պարտի ածել զայս սոսկումն, քան կենցաղավարելոց յարքունիս. զի ո՛չ առաւել են արգասիք միտսակարք և աղիտաբերք այսր դատապարտելի ծառայութեան, քան յարքունիս: Ծառայութիւն մարդկան, յանձնառութիւն ինն որպէս կարևոր յանօրէնութիւն, յօժարութիւն պատրաստ յանիրաւութիւն, հպատակութիւն մոլորութեանց հաճոյից և ախտից պղծոց. ծառայութիւն մարդկան՝ որոյ ամենայն բեռն է զգալի, ամենայն անարժանութիւն երևելի, ամենայն հեռանալ միտսակարք քաջածանօթ. զորոց է հեծել յարքունիս, յորոց ցանկալի է զերծանել, և զորոց ոչ իշխէ ոք թօթափել զլուծ. ծառայութիւն մարդկան, որ՝ մուծանէ զձեզ յամենայն հնարս և՛ ի խորհուրդս նոցա մեղանչականս, որ տայ ձեզ դնել զընորհս նոցա հակառակ կամացն Աստուծոյ, հակառակ խղճի մտաց և փրկութեան, և ոչ՝ ի հոգիս ձեր խնայելով: Ո՛հ, եղբարք իմ, իսկ քաջ դուք բանաւորք, և մանաւանդ իսկ դուք քրիստոնեայք այդու ծառայութեամբդ, ասեմ իսկ, այդու ծառայութեամբդ. զի քաւ լիցի ինձ կացուցանել զաղատութիւն քրիստոնէական՝ ի հրաժեշտի արգար պարտուց մերոց առ օրինաւոր իշխանութիւնս: Ընդունիմ ընդ Աւետարանն, և ըստ կարգաց իմաստութեամբ սահմանելոց՝ ի Տեառնէ, զի էն՝ որոց պարտ է հնազանդել և ծառայել. և յաւելում զի ոչ ոք լաւ ևս քան զՀնչմարիտ քրիստոնեայն ծառայէ նոցա. զի հոգին քրիստոնէական՝ է հոգի հնազանդութեան և հպատակութեան: Այլ հպատակութեանս այսորիկ՝ զոր ուսուցանեն մեզ կրօնք, են պայմանք, և դառնամ՝ ի պատուէրն Աւետարանին՝ Մի լինիք ծա-

ռայ մարդկան. ոչ է ձեզ պարտ ծառայել մարդկան՝ մինչև կանգնել ձեզ զնոսա՝ ի կուռս, մինչև կացուցանել զնոսա՝ ի տեղի Աստուծոյ՝ որոյ էք դուք, մինչև վաճառել նոցա զօրէնս իւր, վաճառել զանմեղութիւն ձեր, վաճառել զյաւիտենական կեանս ձեր՝ օգնականք լինելով ախտից նոցա, մեղսակիցք անկարգութեանց, զօրող ցոփութեանց, և համախոհք ամենայնի՝ զոր սադրեն նոցա ցանկութիւն, հաճոյք, փառասիրութիւն, նախանձ, ատելութիւն, օրակալութիւն, ցոփութիւն և ամպարշտութիւն: Այս է զոր ես ոչ ևս կրնեմ հնազանդութիւն բանաւոր, այլ գերութիւն, և անարգագոյն ևս քան զգերութիւն. ասոի կամեցաւ Փրկիչն մեր ազատել զմեզ:

Կալցուք ապա իմաստս արժանիս Փրկչին, և արժանիս անձանց մերոց. մեծարեսցուք՝ ի մեզ զնրաւունս Աստուծոյ, և մի՛ անսուրբ արասցուք որ ինչ՝ ի մեզ սրբեալն է նուիրմամբ Աստուածորդւոյն. զի մարթ իսկ է ինձ պատրաստել աստ՝ ի ձեզ զբան սերկեան Աւետարանին, և ըստ իմաստից նորին ասել զիւրաքանչիւր ումեք՝ ի ձէնջ՝ զի սուրբ Տեառն էք, որպէս ասէ՝ Սուրբ Տեառն կոչեցէք, զի յանձին Քրիստոսի նուիրեցաւ Աստուծոյ. սուրբ Տեառն, զի սահմանեալ է՝ ի ծառայութիւն Աստուծոյ և՝ ի փառաւորել զնա. սուրբ Տեառն, զի է օթևան նորա և տաճար կենդանի, և՝ ի նմա Հոգի Տեառն եկեալ է բնակել և ժառանգել զնա. Սուրբ Տեառն կոչեցէք: Որպէս զի, առանց սանանելոյ ինչ՝ ի մեզ քրիստոնէական խոնարհութեան, կարեմք համարել առաջի Աստուծոյ նուիրական ինչ զմեզ, և ըստ այմ տեսութեան պարտիմք յամենայնի գնալ նովին մտադրութեամբ և զգուշութեամբ, որով ընդ սրբազան իրս վարիմք: Այդ որ ինչ սուրբ է, ոչ է պարտ՝ ի կիր արկանել զայն՝ բայց՝ ի պաշտօն Աստուծոյ, պարտ է յԱստուած միայն վերաբերել զայն. ապա թէ ոչ, լիցի չճանաչել զնա, և ոչ զմեզ:

Այս է, Տէր արքայ, այս ուղիղ դիտաւորութիւն, այս տեսութիւն ըստ Աստուծոյ, որ սրբէ և ամբառնայ զմեծագործութիւնս վհատութեան քո: Ի դատել զայնոսիկ ըստ մարդկային խմաստութեան, գտանեմք ՚ի նոսա զամենայն՝ որ ինչ կարէ թագաւոր մեծ ըստ աշխարհի, թագաւոր հզօր, ինքնակալ ինքնիշխան, մեծագործ ՚ի խաղաղութեան, մչտայաղթ ՚ի պատերազմի, խորախորհուրդ, անվրէպ ՚ի ձեռնարկս, պատկառելի ժողովրդեան, հաւատարիմ առ դաշնակիցս, ահարկու թշնամեաց, օրինաւոր թագաւորաց, որ ունի ՚ի ձեռին զբախտ Եւրոպայ, որ է գեր ՚ի վերոյ մարդահաճութեան և նախանձու՝ բարձրութեամբ իւրով, և համեստութեամբ փառաց իսկ իւրոց: Այլ քո բարեպաշտութիւնդ, տէր արքայ, քաջահմուտ սրբոց խմաստից Աւետարանին, ճանաչէ զընդունայնութիւն և զղջիւթիւն ամենայնի՝ որ փայլէ յաչս մարդկան, եթէ չիցէ նուիրեալ Տեառն, և եթէ չիցէ մարթ ասել զայնմանէ. Սուրբ Տէրո՛ն է: Յամենայն պայծառութենէ փառաց՝ որ շուրջ զքեզ պատեն, ՚ի մեծութենէ անուան՝ որ հնչէ ամենայն ուրեք ընդ երկիր, և համբաւոյ՝ որ ՚ի ծագս աշխարհի հասեալ է, և մեսցէ մինչև ցհեռաւորագոյն ապագայս, ՚ի ձակատամարտից փլուզելոց, ՚ի յաղթութեանց կանգնելոց, և յայնքանեաց գործոց յիշատակի արժանեաց, ոչ ինչ կացցէ առաջի Աստուծոյ, բայց միայն որ ինչ ինքաւ նորին է գրոշմեալ. այն և է՛ն միասցէ, այն միայն եղիցի քեզ յանկասուա՛ն փառս և ՚ի յաւիտենական վաստակ արժանաւոր: Յանդիման եղեր, տէր արքայ, նուիրեցար ամենասեառն, ոչ միայն որպէս անգրանիկ փառաւորագոյն աղգատոհմի ընդ երկինս, այլ և որպէս անգրանիկ որդի սուրբ եկեղեցւոյ: Յամենայն ժամանակի թագաւորք մեր փառաւորեցան այսու պարծանօք. այլ առաւել ևս քո վհատութիւնդ նկարեալով ՚ի պայծառագոյն և ՚ի գերաշխարհիկ առաքինութիւնս: Ոչ չատ համարեալ կոչիլ անգրանիկ եկեղեցւոյ, ֆամեցաք և ընդ զպարտս անգրանկան, և ՚ի վերունել զանուանակոչութիւն քո այնու եղանակաւ, զոր դարք անցեալք ՚ի նուազունս տեսեալ էին զօրինակ: Որպէս անգրանիկ եկեղեցւոյ լուսաւորչէ Քրիստոսի, և խրատուց նոցա անսացեր. օգնեցեր աստուածահնին նախանձու նոցին, մանաւանդ Թէ յորդոր եղեր, և զարթուցիչ և քաջալերս: Եւ որպէս քո բարեբարութիւնդ ինքնին յայտ առնէ զայն, յանձն էառ ամիսոփիլ զիրաւունս իւր առ ՚ի նպաստել ՚ի նորոգութիւն բարեկարգութեան, և ՚ի պահպանութիւն սրբութեան հաւատոց, արհամարհեալ զշահ օգտի անձին յօգուտ եկեղեցւոյ. և առանց ունելոյ խորհրդակից զսուտ խոհականութիւն՝ նախամեծար արարեալ զիրօնս՝ ոչ միայն քան զպահանջմունս իւր, այլ և զտացեալն երկարատև ժառանգութեամբ իրաւունս: Վասն որոյ յայտարարութիւնդ այդ, զոր քո բարեբարութիւնդ ետ արդ, այդպէս վաւերական, այդպէս խոհական, այդպէս լի քրիստոնէական հոգւով, այդպէս քաջագէպ ՚ի միաբանել զքահանայութիւն ընդ թագաւորութեան, կացցէ արձան յիշատակի պատուական: Ընթերցցին զայն յետնորդք, և խոստովան լիցին՝ զի Լուդովիկ Մեծն, ոչ ինչ նուազ եկաց մեծ անլուծանելի սիրոյն եկեղեցւոյ, քան ամենայն քաղաքային և զինուորական զօրութեամբք: Այս է, տէր արքայ, որ գրոշմի ՚ի մատենի կենաց անջնջելի տառիւք: Մոռասցի այլ ամենայն ինչ ժամանակաւ. և որ ինչ անմահութիւն և խոստանայցէ աշխարհ, կորիցէ ինքն իսկ աշխարհ, և ամենայն մեծութիւն աշխարհային ընդ նմա: Որ ինչ քո բարեբարութիւնդ արար եկեղեցւոյ՝ կացցէ անմոռաց, և մի մեռցի. քարոզեսցէ զայն եկեղեցի. և որպէս չիցէ նմա վախճան, այսպէս և շնորհապարտ դոհութիւն նորա լիցի անվախճան, ոչ ինչ ընդհատ և վարձուցն հատուցումն՝ որ պահի քեզ յերանաւէտ յաւիտեանն, որոց արժանի արասցէ զքեզ, և այլն:

ՀՕՐՆ ՊՈՒՐՏԱԼՈՒԻ

ԴՈՒՔԶԵԱՆ.

Ի ՏԵԱՌՆ ԸՆԴ ԱՌԱՋ

Եւ իբրև լցան աւուրք սրբու-
թեան նորա ըստ օրինացն Մով-
սիսի, ածին զնա Երուսաղէմ
յանդիման առնել Տեառն:

Ղուկ. Բ. 22:

Տէր ալքայ, օրինակ եմն Աչմարտութեան էր առ Հրեայս՝ սերկեւանս արարողութիւնն, յորում նուիրէին նոքա Տեառն զանդրանիկս իւրաքանչիւր ընտանեաց. և օրինակիս այսորիկ Աչմարտութիւն էառ լիով կատարումն յանձին Քրիստոսի Փրկչին մերոյ, որ 'ի ձեռն Մարիամու սրբոյ կուսին նուիրեցաւ այսօր Հօրն երկնաւորի, որպէս Աւաքեան յայտ առնէ զնա Անդրանիկ ամենայն պրպածոյ ըստ առաւելաղանցութեան: Այլ ասատանօր նորահրաշ ինչ գեպք պատահեն 'ի հրահանգս մեր. զի ուր այլ օրինակք յառնուլ կատարումն 'ի Քրիստոս դադարեցին վասն մեր, սա ոչ միայն եւայց մնաց, այլ ընկալաւ որպէս նոր եմն յաւելուած պարտուց, զոր ոչն ունէր 'ի մովսիսական օրէնս: Զի կամի Աստուած՝ զի յօրէնս Հնոցդ, նոյնպէս և առաւել ևս քան 'ի գրաւոր

օրհնս, յանդիման լինցուք Տեառն՝ նուիրել նմա զանձինս մեր: Զայս յայտ առնեն մեզ գիրք տալով ՚ի ձեռս մեր մաձեղինս ՚ի նշանակ նուիրմանն, զոր պարտ է մեզ առնել արարչին մերում: Զի եթէ քաջ հասու եղաք, այս են իմասաք՝ զոր ազդէ մեզ խորհուրդս այս: Ծանեաք զի կեանք մեր որպէս զմմաձեղինս զայսոսիկ սրբեալս քահանայական օրհնութեամբ՝ պարտին սպասաւորել ՚ի սպաս Տեառն՝ զոր պաշտեմք, և ծախել ՚ի փառս նորա: Խոստովան եղաք բարձրաձայն՝ զի Աստուծոյ եմք, և զի Աստուծոյ միայն այսուհետև կամիմք լինել: Իսկ եթէ ոչ այսպէս խորհեցարուք, պարտս պաշտաման իմոյ հաստատել ձեզ իմանալ, և խելամուտ առնել զձեզ այսմ կարևոր մասին: Կայս սուրբ, որ յընծայել զորդի քո՝ առաջի առնես մեզ զնա օրինակ մեծ ՚ի նմանութիւն, ընկալ վասն մեր զընորհս կարևորս ուսանելոյ յօգուտ ՚ի կիր արկանել զայն, և հաճեաց լսել աղօթից մերոց՝ որով ողջունեմք զքեզ· Ողջոյն տէր:

Թերևս չկոչէ ձեր քաջ ՚ի միտ առեալ, ո հաւատացեալք, զնմաստս խորհրդոյս՝ զոր ոտնէ այսօր եկեղեցի և Թերևս զվերին երեսս նեթ նկատեալ զայսր արարողութեան, չկոչէ ձեր պարապով ՚ի խորս նորին խելամտեալ: Ինձ ապա անկ է յայտ առնել ձեզ բովանդակ զկարևորն նմացուած. և արդարև մի է այս ՚ի կարևորագոյնից անտի նրոց, զորս ցարդ ՚ի բեմէ աստի ձառեցի, և զորս մարթի նգէ ինձ ձառել: Զի ինդիր է աստ ուսանելոյ զքրիստոնէութիւն յառաջին տարերս իւր ըստ լեզուի Առաքելոյն, ինդիր է աստ ուսանելոյ զՅիսուս Քրիստոս, և նմանող լինելոյ նմա ՚ի միտ ՚ի մեծագործութիւնս և ՚ի սրբագործութիւնս գործոյ կենաց նորա, որ է ընծայումն իւր ՚ի տաճարին: Յանդիման եղաք և մեք ՚ի տաճարի Տեառն. և ոչնս այս Հրեից, առաւել ևս է մեր. այլ խնդիր այն է՝ թէ որպէս ոչնախմբեմք զայն, և ինչպէ՞ք քաջ հասու լեալ խորհրդոյ ոչնիս, զի չկոչեմ

տատեալ է օգուտս ձեր և իմ. առանց այսորիկ Թերի լինչ կատարել զպարտս պաշտաման իմոյ: Մնա գիրք, ազաչեմ, առաջարկութեան ձառիս. Յիսուս Քրիստոս ընծայի Տեառն ՚ի տաճարիս և ընդէր. — առ ՚ի խոստովան լինել և փառաւորել զէրութիւնն Աստուծոյ. զի զայս ցուցանէ չայտնապէս բան Աւետարանին յանդիման առնել Տեառն. այս ինքն ընծայել գերագունի Տեառն աստնային արարածոց: Արդ այսպէս պարտ էր մեզ, և է իսկ պարտ ընծայել նմա զմեզ. և առ ՚ի չայտ առնել ձեզ հակիրճ զիմաս իմ, զգերագոյնս զայս աստուածպետութիւն չերիս գլխաւոր տեսութիւնս զանազանեմ. ՚ի տէրութիւն էական, ՚ի տէրութիւն հանրական, և ՚ի տէրութիւն յաւիտենական: Տէրութիւն էական, հասատեալ ՚ի նոյն ինքն ՚ի բնութիւնն աստուածային. Տէրութիւն հանրական, որ ծառալի անպարագիրը ընդ հանուր. և Տէրութիւն յաւիտենական, որոյ չիք սկիզբն և ոչ վախճան: Աստի առնուամ ասել, Տէրութիւն էական՝ զոր պարտ է մեզ խոստովանել ըստ օրինակին Քրիստոսի անկեղծ ընծայմամբ անձին. այս լինի առաջին մասն ձառիս: Տէրութիւն հանրական, զոր պարտիմք խոստովանել ըստ օրինակի Քրիստոսի բոլորանուէր ընծայմամբ անձին. և այս լինի երկրորդ մասն ձառիս: Տէրութիւն յաւիտենական, զոր պարտ է մեզ խոստովանել ըստ օրինակին Քրիստոսի պատրաստական ընծայմամբ անձին. և այս լինի կինք ձառիս: Երեսակ կէաք խորատականք, որոց ամբաւ են հետևանք, և զորս պարզել սկսանիմ:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Մի է Տէր, ասէ Առաքեալն. և Աստուծոյ միայնոյ է սեպհական տէրութիւնս այս՝ ի վերայ մարդոյ: Են իսկ մեծամեծաց աշխարհի ծառայք, մարթ է նոցա ունել և հպատակս և սարսուռս իսկ. այլ Աստուծոյ է միայն ունել արարածս, որք՝ ի քէնէ հպատակք իցեն նորա, և յայսմ է հռութիւն գերադասին տէրութեան նորա՝ ի վերայ մեր: Արդ ասեմ զհետ գայ նախ, զի քան զամենայն հարկս՝ զորս պարտիմք Աստուծոյ, այն՝ որով խոստովանիմք զԱստուած իբրև Աստուած, և միայն իսկ այն՝ որով պահանջէ Աստուած, զի ծանիցուք զնա՝ զի է Աստուած, է նուիրումն անձանց մերոց, զորմէ բուռն հարեալ եմ տեղեակս առնել զձեզ. զի վասն այլ ամենայն իրաց, որպէս գեղեցիկ խմաստասիրէ սուրբն Օգոստինոս, մարթ է մեզ շնորհապարտս լինել մարդկան. վասն հանապազորդ խնամոյ, վասն ընչից, է զի և կենաց. այլ ոչ երբէք ուստիք վասն գոյութեանս մերոյ մարթ է մեզ լինել շնորհապարտ: Գոյութիւնս մեր այնպիսի ինչ է, զոր իւր պահեալ է Աստուած, և կամի՝ զի իւր միայնոյ լիցուք զայնմանէ շնորհապարտք: Այսպիսի է, յաւելու սուրբն Օգոստինոս, հռութիւն մարդկան. և այս է, սիրելի ունկնդիրք, խորհուրդն մեծ՝ զոր Քրիստոս, մարդն ըստ գերազանցութեան, մարդն նախասահմանեալ՝ առ՝ի լինել նախաստիպ և օրինակ ամենայն մարդկան, մարդն ընտրեալ և առաքեալ յաշխարհ՝ առ՝ի տալ նմա ճանաչել զգերագոյն տէրութիւնն Աստուծոյ, խորհուրդն մեծ ասեմ, զոր եկն յայտնել Քրիստոս՝ ի սերկեան աշխարհս:

Գիտելով նորա՝ զի աստուածպետութիւն չօր իւրոյ երկինաւորի էր Թշնամանեալ, յանձն էառ փոխարինել Թշնամանացն, և ձեռն էարկ հաստատել զայն վերստին՝ ի մարդիկ: Այլ որպէս զոհիւք արդեօք անասնոց և արեամբ ողջակիզաց, խոնհակս արդեօք տալով մատուցանել՝ ի վերայ սեղանոյ Տեառն, կամ ընծայել զարդիւնս երկրի. Ոչ, սիրելի ունկնդիրք, չէր այս անձին նուիրումն. այլ ամենայն զոհք, բայ յինքենէ, չկարէին պատիւ արժանաւոր ընծայել գերագոյն տէրութեանն, զորոյ կամէր նա պայծառացուցանել զխաւս, և գայր՝ ի հատուցանել նմա զպարտականն պաշտօն: Սովին հոգւով յանդիմման եղէ նա աստուածային մեծավայելչութեան, մատուցանել նմա զպաշտօնն զայն՝ զոր ինքն միայն կարէր: Մի՛ շփոթեսցուք զմանկիկս զայս անգրանիկ ընդ այլ անգրանիկս Իսրայելի. զի ընդ քողով մարդկութեան՝ որով ծածկի՝ ոչ մարդ միայն ընծայէ Աստուծոյ նուիրմամբ անձին, այլ Աստուած. զի է իսկապէս Աստուած. և Աստուած գոլով՝ հպատակի, Աստուած գոլով՝ ունայնացուցանէ զանձն, Աստուած գոլով՝ մանանեղ զի վասն գոլոյ իւրոյ Աստուած՝ նուիրի, որպէս զի արժանաւորութիւն անձին իւրոյ ամբաստնայցէ զարժանիս պատարագին:

Դադարեսցուք ասա, ո՛ հաւատացեալք, առաւել ինչ ոչ է մեզ պիտոյ՝ ի հրահանգս: Այս է համառօտութիւն Կաթոլիկ նուիրմանն, յորում բովանդակի ոչ միայն դլխաւոր պարտք մարդոյ, այլ ըստ բանի Իմաստնոյն՝ մարդն իսկ բոլոր. Զի այս է մարդն ամենեքին: Ահա խրատն մեծ և կարևոր՝ զոր տայ մեզ Փրկիչն մեր, և օրինակն՝ զոր առաջի դնէ մեզ՝ ի նմանուելիւն: Զիք ինչ այսուհետև, որ իցէ մեր. և ամենայն ինչ՝ ի միասին չէ առաջի Աստուծոյ առաւել քան զմեզ. պարտ է մեզ ապա զանձինս մեր տալ՝ ի հարկ՝ զոր պահանջէ Աստուած, և որ անժխտելի և անհրաժեշտ կարևորութեամբ անկ է նմա, որպէս Տեառն տերանց: Ա՛ ի լաւ ևս իմացուած մտացս՝

միտ դիք երկուց բանիցս, որոց կարծեցեալ հակառակութիւն քաջայայտ արասցէ զայս գլխաւոր կէտ Ճառիս։ Որպէս արարածք՝ եմք մեք կապիս Աստուծոյ. զայս Ճշմարտութիւն գնեմ ՚ի սկիզբն բանիցս. Ճշմարտութիւն ընդունելի ամենայն աստուածաբանից, զոր բնութիւնն իսկ և բանականութիւն ուսուցանեն մեզ։ Զի ոմ առաւելապէս անկ իցէ ձեռագործ ինչ, քան Ճարտարին՝ որ արարն զայն. սակայն ասեմ, և է Ճշմարտութիւն դրոշմեալ ամենայն ուրեք յաստուածային գիրս, զի ՚ի կամ մեր է լինել Աստուծոյ կամ ոչ. և արդարև իսկ ՚ի ժամանակս ինչ և ՚ի հանգամանս ոչ ևս եմք Աստուծոյ։ Այսպէս ինքն Աստուած յայտ առնէր իսրայելացւոց ՚ի ձեռն Ովսեայ մարգարէի. Ու Ես էմ Աստուած ձո, և ու Ես է ձողվորդ իմ։ Եւ Թէպէտ Աստուածաբան վանն փրկութեան մերոյ ասէ. Զէ՛ անյանդ պէր. սակայն փորձն զհակառակն յայտ առնէ, զի տիրեմք միշտ անձանց, ոչ միայն ընդդէմ Աստուծոյ՝ այլ և մեր իսկ, մինչև կարել իսկ մտանել զմեզ ՚ի կորուստ և ՚ի դատապարտութիւն. և որպէս միաբանել զայս։ Մի՛ տ դիք վայրիկ մի, և խելամուտ լինիցիք. գաղտնիք են այս միաբանութեան տերութեանն Աստուծոյ, և աղաւտութեան մարդոյ։

Ապաքէն չկարեմք լինել Աստուծոյ ընտրութեամբ անիրաւ և եղեռնաւոր կամաց մերոց, թէպէտ և նորա եմք յակամայս ըստ անհրաժեշտ հարկի էութեան մերոյ. սակայն Ճշմարիտ է և՝ զի եմք անձանց տէր աղատ կամաքս, զորոյ Թողեալ է ՚ի մեզ Աստուած զիշխանութիւն, թէպէտև չիցեմք ըստ պարտուց արդարութեան՝ որ արկանէ զմեզ ընդ նովաւ զօրութեամբ արարչութեան։ Արդ ահա, եղբարք իմ, ասէ Սահեբերան, յինչ հաստատեալ է բնական և աստուածային պատուէրն՝ ընծայելոյ զմեզ և նուիրելոյ Աստուծոյ։ Զի եթէ այնպէս էաք Աստուծոյ՝ մինչև չունել ինչ իշխանութիւն ՚ի

վերայ մեր, չկարէաք առնել զայս գերազանց նուիրումն անձանց մերոց, յորում հաստատեալ է գլխաւոր վաստակ մեր արժանաւոր ըստ կրօնից. և եթէ էաք այնպէս տէր անձին՝ մինչև ոչ ևս ունել Աստուծոյ տերութիւն ՚ի վերայ մեր, չպահանջէր ՚ի մէնջ Աստուած նուիրել իւր զանձինս մեր։ Այլ զի նորա եմք հարկաւ, և յեղաշնակաւ իւիք կարեմք չլինել իւր, իրաւունք են Աստուծոյ միոյն և զմիւսն պահանջել. և զի հարկաւ նորա եմք, տայ մեզ զպատուէրս զայս այսպիսի օրինաւոր՝ լինել իւր և ընտրութեամբ և կամաք։ Եւ էջ ինչ առաւել քան զայս իրաւացի։

Զինչ էր ապա գիտաւորութիւնն Աստուծոյ ՚ի սահմանել զսրբութիւն զայս նուիրելոյ իւր զանգրանիկս, և զինչ է ապա խորհուրդ նախախնամութեան իւրոյ ՚ի վերայ մերմ խորհրդեանս յայսմիկ, զոր ծնեալ այսօր եկեղեցի։ Ահաւասիկ, ո՛ հաւատացեալք. կամ՝ զի ազատ և կամաւոր նուիրմամբ անձանց մերոյ Թողցուք ՚ի նա զտերութիւնն, զոր ունիմք ՚ի վերայ մեր. տերութիւն, միտ դիք աղաչեմ, որ ոչ է մեզ օգտակար՝ եթէ ոչ նուիրեսցուք զայն Աստուծոյ. տերութիւն, ճնաւակար մեզ և աղետաբեր, եթէ ոչ Թողուցումք զայն Աստուծոյ։ Կամ ասեմ Աստուած, զի Թողցուք ՚ի նա զայս տերութիւն՝ առ ՚ի բարձրացուցանել, և եթէ օրէն էջէ ինձ ասել, յաւելուլ զայն յիւրն, որպէս զի Ճշմարտեսցի՝ զի նորա եմք ըստ ամենայնի, որով եղանակաւ և մարթէ էջէ մեզ լինել նորա։ Համառօտ ասել. կամ Աստուած՝ զի էցեմք իւր, այլ ոչ կամ յակամայս մեր. զի այսպէս փառք են նմա և մեզ. նմա, վասն զի չիք ինչ՝ որ առաւել պատուեսցէ զնա, քան զկամել ստեղծուածոյ իւրոյ՝ զի էցեն նորա, հպատակեսցեն նմա, և երանելի զանձինս համարեսցին յարել ՚ի նա. իսկ մեզ, զի որչափ առաւել էցեմք նորա՝ այնչափ գեր ՚ի վերոյ քան զբնական նըւաստութիւն մեր ամբառնամք։ Ուստի զհետ գայ, զի

մեծամեծք և իշխանք և թագաւորք երկրի աստիճանաւն իւրեանց ունին առաւել լինն հպատակութիւն ընդ իշխանութեամբն Աստուծոյ, որպէս զի հպատակութիւնն այն տայ նոցա ձեմարիտ մեծութիւն. և առանձինն լինն պարտք նոցա հպատակելոյ Աստուծոյ առաւել քան զայլս 'ի մարդկանէ՝ յիրաւի ամբառնայ զնոսա 'ի վեր քան զամենայն մարդիկ:

Այլ դարձցուք 'ի կարգ բանիս: Պարտ է ապա հնազանդել այսմ առաջին պատուիրանի օրինացն Տնորհաց, նուիրելով Աստուծոյ զանձինս մեր: Այլ զի՞նչ իցէ նուիրումն անձին, և զի՞նչ իմանամք բանիւս՝ նուիրել զանձինս մեր: Ո՛հ, հաւատացեալք, ահա խորհուրդն՝ որում թերևս չիցեմք քաջ հասու լեալ, և զորմէ յաճախ 'ի պատարանս անկանիմք անճառիսրութեամբ: Զիք ինչ գիւրագոյն քան ասել առ Աստուած. ընծայեմ քեզ զանձն իմ, նուիրեմ զիս քեզ, կամիմ քո լինել. այլ պարտ է բացատրել պարզել առաջի Աստուծոյ ըզխորհուրդս զայս թէ զի՞նչ իցեն անձինք մեր: Սրդ է մեր կանոն իմն անսխալ առ 'ի հասու լինելոյ այնմ. զի է անդրանիկ 'ի մեզ սիրտ մեր, յոր այլ ամենայն ինչ յանկի. և այս է անդրանիկն, զոր պարտ է հաւատացելոյ յաւետարանական օրէնս նուիրել Աստուծոյ, որպէս 'ի մովսիսականս զանդրանիկս Իսրայէլի: Սրտիս այսորիկ են ախտք, են յարմունք, են շահախնդրութիւնք, են հաճոյք և ցանկութիւնք. և այսոքիկ են՝ որ կոչին անձինք մեր. այլ մեք յաւպահովի կամք յամենայնէ ասասլ, եթէ իցեմք Աստուծոյ: Այսպէսն սիրտս այս է վիհ իմն անհատակելի. այլ թէպէտ և իցէ այնպիսի, սակայն քաջ գիտեմք ուստի անկ իցէ այն, և ուստի զայն նուիրեցաք, Աստուա՛ծ է առէր նորա, թէ ստեղծուած. քանզի պատգամ է յաւետեւնական Ճշմարտութեան, զի չկարէ այն լինել միւսն և միւսում միանգամայն. և վնասակարագոյն մոլորութիւն աշխարհի է կարծել՝ թէ կարիցեմք բաժանել

զսիրտ մեր ընդ արարչէն և ընդ արարած, ընդ ախտս մեր և ընդ Աստուած. զի հաղիւ կարեմք բաժանել զայն ընդ երկուս ախտս և ընդ երկուս արարածս: Ասել առ Աստուա՛ծ՝ թէ չկամիմք լինել նորա, և թէ այլում ումեք պահեալ եմք զսիրտ մեր, թշնամանք են՝ զոր առնեմք նմա. սակայն գէթ անկեղծութիւն իմն է 'ի թշնամանս անդ, և թերևս ամօթն խոստովան լինելոյ նմա զայն ըզգաստացուսցէ զմեզ: Իսկ ասել առ Աստուա՛ծ՝ թէ եմք նորա, մինչդեռ այլ ինչ տիրացեալ է 'ի մեզ, և գրաւէ զսիրտ մեր, է յաւելուլ եղեռն 'ի վերայ եղեռան, և ասել Հոգւոյն սրբոյ: Սիրտս այս՝ որ է փափկագոյն մասն մեր, և որպէս սուրբն Օգոստինոս ասէ, բովանդակութիւն և միջակէտ մեր, այս է՝ զոր իւր պահեալ է Աստուած: Առանց այսորիկ 'ի զուր լինի մեզ նուիրել նմա զգոյս մեր, զի չէն ինչ նմա ակտք, ասէ Սաղմոսերգուն, գոյից մերոց. և եթէ համարի իւր 'ի պատիւ ընծայէր մեր զայն, է վասն կցորդութեան նոցա ընդ սիրտս մեր. վասն որոյ 'ի նուիրել նմա զինչս մեր՝ եթէ 'ի բաց առնումք զսիրտ մեր, լինի նուէրս մեր որպէս զպատարագն Կայենի: Առանց այսորիկ ընդունայն լինի մեզ խոստովան լինել նմա՝ զի 'ի չէռս իւր են և կեանք մեր և մեծութիւնք, պարտ իսկ է մեզ առնել նմա զայս խոստովանութիւն. այլ այս ամենայն թարմատար բանք են, և միշտ պահանջեսցէ նա զսիրտս մեր, և ընդդէմ այնոցիկ բողոքեսցէ միշտ սիրտ մեր՝ ցորչափ տիրէ 'ի նմա ոք յարարածոց:

Կամ ապա Աստուած զսիրտ մեր, ո՛ հաւատացեալք, և խնդրէ զայն նախանձաւորութեամբ. և զնախանձաւորութիւնն զայն ոչ միայն չհամարի իւր անարժան, այլ և պատիւ իւր համարի զայն 'ի գիր՝ որպէս զի մի 'ի փառասիրութենէ անուանց՝ յոր առաւելապէս պարծի, է Աստուած նախանձոտ: Ոչ նախանձն ընդ մեծութիւնս մեր, և ոչ ընդ յաջողութիւնս, թէպէտ և յաջողութիւնք մեր և մեծութիւնք կարի դուշնաքեայք իցեն, և ոչ արժանի

նախանձու նորա, սակայն և ոչ նախանձի ընդ տուբս իւր, զի ինքն է այնոցիկ պարգեւատու: Կամ իսկ զի իցեմք ճոխք, զի իցեմք մեծ, զի իցեմք հզօրք յաչխարհի, միայն զի սիրտ մեր իցէ իւր: Վասն այսորիկ արար հրաշս սիրոյ· յամենայն ինչ ձեռն էարկ, զամենայն ինչ կրեաց· մինչև սուրբն Ամբրոսիոս ապշեալ երաւապէս ընդ կամ եալ նորա այսպէս զամենայն ինչ յանձն առնուլ, զամենայն գոն գործել, համարի կարել, առանց թերանալոյ ի պատուհասանացս, գոչել· Ո՛վ Տէր, ներեա ինձ ասել՝ զի շռայլես զանձն քո ծայրայեղ սիրով սրտից մարդկան:

Հանդերձ այսու ամենայնիւ անիրաւելիմք ժխտել նմա զսիրտ մեր, որ ըստ այսքան բազմապատիկ իրաւանց իւր իսկ է· կամ մանաւանդ լեցո՛ք մեք այնքան անհաւատարիմք, մինչև բառնալ ի նմանէ զժառանգութիւն սրտից մերոց՝ զորս բաղում անգամ նմա նուիրեցաք: Զի միշտ իսկ առաջի սրբոյ սեղանոյն զայս խոստովան լինէաք՝ նուիրել նմա զսիրտ մեր· և եթէ ոչ կամիմք տալ ընդդէմ մեր վճիռ՝ զի կեղծեօք կամ մանաւանդ ամպարշտութեամբ առնէաք նմա զայն նուէր, պարտ է մեզ հաւանութեամբ մտաց ասել՝ զի սիրտ մեր ոչ ևս է մեր: Եւ ահա այս է, ասէ սուրբ քահանայապետն Գրիգոր, չարութիւն մեղաց, և առաւելապէս այսր մեղաց՝ որով սիրտ մեր չարի և մահու չարաչար մահկանացու· զի վնասակար աերութեանն Աստուծոյ գոանիմք այսուհիկ, կամ լաւ ևս՝ կործանեմք զտէրութիւն նորա ի մեզ, զոր կամօք մերովք սաստկեալ էր ի վերայ մեր, յետս առնուամք զնուէրն՝ զոր յօժարակամ արարեալն էաք նմա, և սեղանաղերձ յաւիժակութեամբ բառնամք ի նմանէ զսիրտ մեր նուիրեալ նմա, և խորհեմք յողջակիզել՝ որ աւելի լեալ է միշտ Տեառն, որպէս մարգարէին յայտ առնէ, և զմեզ ինքեանս գողանամք ի նմանէ՝ յետ ընծայելոյ նմա զանձինս մեր, և զարթուցանեմք զնախանձաւորութիւն նորա, ոչ ևս երկիւր պատանելով որպէս

զնախայեղացիս փայտակերա և քարեղէն աստուածոց՝ յարբուցանելով նախանձորդս նմա զնոսա, այլ մարմնեղէն կառոյ· Դրօշելովք երբեմն նախայ ասէին նմա ըստ Սաղմոսերգուին: Դրօշեալք պիղծք, կուռք ապականիչք անարժանք մեզ, որք կորուսանեն զմեզ, և մատնեն ի գաստպարտութիւն· սակայն մեք կանդնեմք զնոսա համարեալ աստուածս, որ զառածանեն զմեզ յանաստուածութիւն կամ յաստուածանպիտութիւն: Ո՛վ Տէր, և իցէ՞ կարելի զի անօրէնութիւն իմ ցայն վայր զառածանիցի, և ես՝ որ դժուամակիմս կորուսանել գոյն ինչ յերաւանց իմոց, ես՝ որ չհանդուրժեմ զի թերանայցէ ոք ի պատուոյ իւրոյ առ իս, ես Տէր՝ որ իշխեմս պահանջել ի քէն, զի որպէս Աստուած իմ արկցես յիս զնամս տեսչութեան քո, զնմին ցայս վայր անիրաւեցայ քեզ, և որպէս կարիցեմ հանապազորդել յայսմհետէ անկարգութեան, և պակասել յեական պարտուց իմոց առ քեզ: Մինչև ցերբ կացցէ մնասցէ յիս անկարգութիւնս այս, մինչև ցերբ տիրեսցէ ախտս այս ի սրտի իմում, և զնի մինչև ի սպառ գերի նմին, ոչ ևս հատից զկապանս իմ՝ մատուցանել քեզ զայս գեղեցիկ պատարագ օրհնութեան, որպէս մարգարէիդ ասացեր, այս ինքն նուիրել քեզ զանձն իմ, և փառաւորել զքեզ հոգեթեամբս իմով ըստ հոգեշունչ պատգամացդ: Եթէ մատուսցուք ի հաւատացեալք, զպատարագս զայս, ոչ միայն հաստուցանեմք զպարտս մեր գերագունի տէրութեանն Աստուծոյ, այլ և յաղերս ածեմք զնա՝ ընդ զմեզ ընդհոգս: Լիցի մեզ զօրաւիգն յարիականս խորհուրդ, և զօրացուսցէ զմեզ ի կատարումն նորին. հաստատեսցէ զքաղաւկ մեր ի հարուած անվրէպ, առ ի զնուէր զղջհս զայս՝ զոր խնդրէ ի մէնջ: Հեղցէ ի վերայ մեր առատաձեռ օրհնութիւն, և զարմացուք ի գտանելն զամենայն գիւրութիւն՝ ուր կարծեաքն գտանել դժուարութիւն ծանր յոյժ:

Այլ ասիցէք· որ ինչ ՚ի սրտի լմնամ պատուակա-
նագոյն է ինձ, որ ինչ սիրելագոյն, բազում այն֊է՝ զի
այն կացուցանէ զիս յանցաւոր· զի է կցորդութիւն իմն
գործական, սէր արտաքոյ օրինաց և չէզծ: Արդ որ զնո
առնէ եղեռնաւոր, և ինքնին իսկ այնպիսի, որպէս կա-
րեմ նուիրել զայն Աստուծոյ, և զիա՞րդ կարիցէ այն լի-
նել մանն նուիրանաց անձին իմոյ, որով պարտիմն պա-
տուել զԱստուած: Ուշ դիք, և նորանչան իմն բանիւ
պարզեցից ձեզ զմի ՚ի մեծագոյն և ՚ի քաջալերական ճըշ-
մարտութեանց քրիստոնէական կրօնիցս: Այս իսկ են
հրաշք աստուածայինն չնորհաց, զի որ եղեռնաւորս զմեզ
կացուցանէր՝ սպասաւորել առ ՚ի սրբել զմեզ, նուիրելով
մեր զայն Աստուծոյ, և որ ՚ի մեզ գարշելին էր յաչս
Աստուծոյ, հրաշալի յեղափոխութեամբ գտանի հաճո-
յագոյն նմա նուէր· այս ինքն զի կամի Աստուած և ըն-
դունի իւր ՚ի պատիւ զմեզս իսկ մեր, և ոչ միայն չմերժէ
զղօհ մեզաց մերոց, այլ և առաւել քան զամենայն զօհս
համարի, և չիք ինչ ՚ի նուէրս հաճոյագոյն նմա քան զնո-
ցունն մեզաց: Աներկբայելի է մեզ այս ըստ յայտարու-
թեան Աւետեզոյն, որով սակայն զմեզ՝ ծառայեցու-
ցանել զանկարգութիւնս մեր ՚ի սպաս կրօնից և արդա-
րութեան: Եւ այսուհիկ, ո՛ հաւատացեալք, կարեմք միա-
բանել երկու ինչ կարի յոյժ օգտակար մեզ առ ՚ի
խրատ և ՚ի շինութիւն. և Տէր տացէ՝ զի լեզին ձեզ հա-
ճոյ և յօգուտ: Գիտեմք ՚ի հաւատոց՝ զի պարտ է մեզ
նուիրել Աստուծոյ զանձինս մեր այնպէս, զի լեցուք նմա
ընդունելի, այս ինքն ՚ի սրբութեան՝ որպէս արժան է մեզ
և նմա· սակայն նոյն հաւատք ուսուցանեն մեզ, զի Աս-
տուած՝ թէպէտ և արգար, թէպէտ և սուրբ, ոչ մերժէ
զմեզաւորս: Գիտեմք՝ զի որպէս Փրկիչն մեր նուիրեց այս-
օր յանձին իւրում պատարագ սուրբ անմեղ և ան-
արատ, նոյնպէս և մեք պարտիմք յանդիման լինել Աս-
տուծոյ, որչափ է կարելի: Զի է մեր մարմին, և պարտ

է մեզ ընծայել զայն որպէս պատարագ կենդանի սուրբ
և ընդունելի· Պատրաստել զմարմինս իւր պատարագ կենդանի սուրբ
հաճոյ Աստուծոյ· զի եւս մեզ հոգի, և պարտ է մեզ սրբել
զայն սիրով և ամենայն քրիստոնէական առաքինու-
թեամբք՝ վասն արժանի առնելոյ ՚ի նուէր Աստուծոյ· և
համառօտ ասացեալ, պարտ է՝ զի իցեմք սուրբ, որպէս
և նայն սուրբ է· Սուրբ է՛ւ՛ն, չէ՞ սուրբ եմ ես Տէր Աս-
տուած իւր: Գիտեմք զայսսոսիկ, բայց գիտեմք եւս՝ զի և մե-
զաւորք մեզի ՚ի տաճար սրբոյն Աստուծոյ և ոչ ունե-
լով այլ ինչ արժանի նմին, պարտ համարեցան նուիրել
նմա դէթ զանարժանութիւն իւրեանց: Եւ զի՞նչ ապա·
կամիցիմ թէրևս յորդորել զձեզ՝ նուիրել Աստուծոյ
զանաւորք մարմինս ձեր, զՀպարտ և զամբարտաւան մի-
տս, զերկրաքարշ հոգիս, և զսիրտս ապականեալս մե-
ղօք: Գաւ լեցի ինձ, սիրելի ունկնդիրք, այսպիսի ինչ խոր-
հել առանց սոսկալոյ: Այլ վասն չև ևս գոլոյ սուրբք և
անսպիլուակ առաջի Աստուծոյ, չկարեցինք երբեք յան-
դիման լինել նմա: Զեն ինձ կամք այսու բանիւ արկա-
նել զձեզ ՚ի յուսահատութիւն աղետալի, և տալ թեր-
ևս ամպարշտութեան զգանկալին օգնականութիւն: Ոչ,
մի՛ լիցի, ո՛ հաւատացեալք· ոչ զայս ասեմ, և ոչ զայն·
այլ միաբանեալ զերկոսին զայսոսիկ ճշմարտութիւնս,
առ ՚ի հերքել զամենայն պատճառանս՝ որ կարեն ուծա-
ցուցանել զձեզ յԱստուծոյ, ասեմ՝ զի պարտ է ձեզ,
կամ սուրբս գոլ առ ՚ի նուիրել զձեզ Աստուծոյ, և
կամ ՚ի նուիրելն սկսանիցիք լինել սուրբք: Ասեմ՝ զի
պարտ է ձեզ գտանել յանձինս զսքատարագ զայդ ան-
մեղ, որպէս խնդրէ Աւետեզն, և կամ եթէ ոչ գտանի-
ցիք՝ պատրաստեսջիք զայն ՚ի ձեզ· և որպէս,— նուիր-
մամբ անձանց ձերոց: Զի թէպէտ և ապականեալք իցեք
մեղօք, համարիմ՝ զի նուիրմամբդ ևեթ այգուիկ, ըստ
օրինակին՝ որպէս ասացի, սրբեսջիք· և որպէս Փրկիչն
մեր յընծայեն Հօր իւրում սրբեաց այնու ևեթ ընծայ-

մամբն զամենայն արգասս՝ որ եղեն և լինին. Քանզի դով պտղաբեր կոչեցաւ զբբեալսն ՚ի Մչանչենասբս, այսպէս և դուք՝ որ լսեիք լինիլ այգուս միակ նուիրեմբդ, եթէ միայն նուիրիցէք ՚ի սրտէ, մեղաւորբդ աշխարհասկբդ անարժանք Աստուծոյ՝ լինիցին սուրբք կատարեալք և արժանաւորք Աստուծոյ: Եւ ընդէր.— զի ըստ վարդապետութեան Հարց և աստուածաբանից՝ նուիրուածն անձին անկեղծ և ՚ի սրտէ, սրբէ զնուիրեալն. Սուրբ Տէառն կոչէ: Զի նուիրել զանձն Աստուծոյ անկեղծութեամբ և ՚ի սրտէ, է կամել անկեղծաբար և ՚ի սրտէ լինել Աստուծոյ: Արդ այսպիսի կամք լինելոյ Աստուծոյ, է հրաժարել յամենայնէ՝ որ օտարացուցանէ զմեզ յԱստուծոյ, և այս է առեալ զմեզս և գառնալ ՚ի սրտէ առ Աստուած. կամել լինել Աստուծոյ, և կամել ՚ի սրտէ, է բնաջինջ առնել ՚ի սրտէ մերմէ որ ինչ օտարացոյց զմեզ յԱստուծոյ, և որ կարէ օտարացուցանել, և այս է ահա քաւութիւն մեղաց և կատարումն ապաշխարութեան: Կամել լինել Աստուծոյ, է կամել լինել հաշտ ընդ նմա, հնազանդել նմա և ծառայել. և այս է ահա կատարումն քրիստոնէական առաքինութեանց և ամենայն բարեգործութեանց: Նուիրուածն անձին Աշմարիտ հաստատուն և ազդոյ բովանդակէ զայս ամենայն, գէթ յիշեա ՚ի միտս և յառաջագրութեան. և զինչ այլ ևս ինդրի առ ՚ի հաշտեցուցանել զմեզ ընդ Աստուծոյ, և գարձուցանել ՚ի հնորհս իւր:

Մեծ և էական խոիր տեսանէք դուք արդեօք աստ ընդ պարտս կրօնից՝ զոր հատուցանեմք Աստուծոյ, և ընդ անկեղծ խոստումն ծառայութեան՝ զոր առնեմք մարդկան: Զի յորժամ, օրինակ իմն, ընծայեմք զանձինս ուժեք յաւագոյ աշխարհի, ոչ լինիմք այսուհիկ արժանաւորք նմին. կարեմք լինել նմա ՚ի ծառայս, կալով յանարժանութեանս մերում, զի կարեմք լինել նորա՝ առանց յեղափոխելոյ այնուհիկ ՚ի յաւութիւն. զի ոչ ՚ի

կամն մեր է լինել նմա հաճոյ, և է իսկ մարթ՝ զի ձիգն և փոյթ հաճոյ լինելոյ նմա անհաճոյ արասցէ զմեզ: Այլ ընդ հակառակն ամենևին, եթէ կամիցիմք լինել Աստուծոյ, լինիմք. եթէ կամիցիմք հաճոյ լինել Աստուծոյ, լինիմք. եթէ կամիմք արժանի լինել սիրոյ նորա, սկսանիմք լինել արժանի. եթէ կամիմք լինել սուրբ, սկսանիմք լինել սուրբ: Այսպս ուրեմն ոճմ ուժեք յայլոց տեսանց օգուտս իցէ ինձ ընծայել զանձն, և չընծայել իմում զանձն իմ Աստուծոյ՝ ընդ որ ինչ այլ լեալ ինձ մարմնաբել, բայց ընդ յամել իմ ՚ի կատարումն այսպիսի ահրաժեշտ պարտուց: Զի որովհետև դուս ես Աստուած իմ, Տէր, և որովհետև դուս ես սրտի իմոյ, քաջ իրաւացի է՝ զի քո լեալ այն, և ընդէր իցէ ինձ ոչ հատուցանել զայն քեզ որպիսի ստեղծերն. այլ թէպէտև եղծեալ իցէ այն, հաճեսցես ընդունել ՚ի նուիրել իմում քեզ զայն. զնուիրս զայս անօրինութեան գարձուսցես ՚ի զոհ քաւութեան և սրբութեան. մաքրեսցես զայն հըրով սիրոյ քո, և սրբեալ այսպէս՝ լեցի ՚ի փառս քո: Տեսլք աշխարհի, եթէ ընծայեի զիս նոցա յետ անհաւատարիմ լինելոյ առ նոսա որպէս քեզ, մերժէին զիս ՚ի բաց, և ոչ յանձն առնուին լսել իսկ ինձ. իսկ դու, Տէր, տակաւին համարիս քեզ ՚ի պատիւ զնուիրս իմ, զոր մատուցանեմ, և այս զիս քաջալերէ ՚ի մատուցանել: Տէրութիւն Աստուծոյ, տէրութիւն էական, զոր պարտ է մեզ խոստովան լինել ըստ օրինակի Փրկչին՝ անկեղծ նուիրմամբ անձանց մերոց. և տէրութիւն հանրական, զոր պարտ է մեզ խոստովանել դարձեալ ըստ օրինակի Փրկչին բոլորանուէր ընծայմամբ անձանց մերոց, որպէս տեսցուք յերկրորդումն մասին:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Սուրբն Ամբրոսիոս՝ի ձառէն զառաքինութենէ կրօնից, որ է զօդ հնազանդութեան և հպատակութեան ոգւոյն պարան է ընդ Աստուած և ընդ մարդիկ, խորհրդին տեսութեամբ իմաստասիրէ, զի պարտք և արժանիք այսր առաքինութեան ոչ հաստատեալ են՝ի պարզաբար նուէրման անձին առ Աստուած. և պատճառք, զորս ածէ, յաղթահարեն զմիտս: Զի էիք ոք, ասէ, թէպէտ և վատ և բազմամեղ, որ՝ի վատութեան անդ իւրում և յանկարգութեան դնացից՝ չկամիցի լինել Աստուծոյ պատմանօք ինչ, և չկոչէ պատրաստ տալ նմա զանձն ըստ մասին, և ոչ նուիրեսցէ զինքն նմա՝ պահեալ անձին ինչ ինչ: Եւ ինքէ զբանս իւր սուրբ վարդապետն, զի է կրօնից վաստակ արժանաւոր՝ մատուցանել Տեառն նըւէր համեմատ ըստ ընդարձակութեան հանրական տէրութեան նորա: Այդ առ՝ի խոստովան լինել զանպատրաստելի տէրութիւնն Աստուծոյ՝ պայման անհրաժեշտ այն է՝ ընծայել նմա զանձինս մեր բոլորանուէր. սահման նուիրմանս մերոյ պարտ է՝ զի ոչ անեղական, և չափ նորին անչափ: Այսոցի իսկ զվանէրն. զի որովհետև Աստուած բոլորովին առանց չափոյ իրիք է որ ինչ էն, և տէրութիւն նորա է անսահման ըստ էութեան, ամենայն ինչ սահմանեալ չարարածոյ՝ի սպաս և՝ի պաշտօն նորին չկարէ ունել զպարտականն համեմատութիւն առ՝ի պատուել զնա: Պարտ է՝ զի՝ի սրտի մարդոյ, եթէ օրէն իցէ ինձ ասել այսպէս, իցէ ինչ այնպիսի ընդարձակ և անսահման առ՝ի նուէր, որպէս զտէրութիւնն՝ որ է յԱստուած, որպէս զի հաճեսցի Աստուած ընդայն. լմա՝ զի կամիցի մարդ այնպէս հանրապար լինել Աս-

տուծոյ, որպէս տէրութիւնն Աստուծոյ է հանրական՝ի վերայ նորա: Այդ այս հանրականութիւն՝ի կրօնական գործս, զորոց մէջ բանքս էն, գժուարին և դերազանց կացուցանեն զայնոսիկ. սակայն այս է երկրորդ խրատն, զոր պարտ է մեզ առնուլ՝ի խորհրդոյ ասել:

Քանզի Փրկիչն մեր, քաջ մուտիքս լերուք ո՛ հաւատացեալք, ոչ չատ համարի ընծայիլ՝ի տաճարին, այլ ընծայէ ևս ինքնին Աստուծոյ՝նախագիտելով մանրամասնաբար զամենայն, որ ինչ ընծայման իւրոյ ղեկտ գալոցն է. այս ինքն տեսանելով առաջի աչաց որ ինչ յաւուր միում՝ի վերայ մարմնոյ իւրոյ և աստուածային անձին կատարելոց էին պատուէրքը խիստք: Նուիրե Աստուծոյ զինքն՝ի պատարագ վասն ազգի մարդկան, չանձն առնու կատարել մուտիքս որ ինչ զինքենէ նախատացեալ էին պատգամք, մինչև կամել հրաժարել և չանկատուիլ երեսանց վտառաց իւրոց, մինչև կամել կորուսանել և զաղաւութիւն իւր՝ առեալ զծառայի կերպարանս, մինչև կամել Թշնամանալոյ լինել, լինել այր ցաւոց և որդն երկրի, լինել նզով և անէծք, ծածկիլ կեղտիւք մեղաց և համարիլ մեղաւոր. և միով բանիւ՝ մինչև՝ի սոսկալի կատարած մատնելոյ՝ի մահ, և մատնելոյ՝ի ձեռաց մարդկան, և մեռանելոյ՝ի մէջ երկուց աւազակաց, և մեռանելոյ՝ի խաչի. Լեալ հնազանդ մահու՝ մահու խաչի: Այսպէս Թէ ոչ, Թէպէտ և Փրկիչ՝ Թէպէտ և Աստուած՝ սակայն ոչ ընդ առ Աստուած զպարտս իւր, և եթէ զմի ևեթ՝ի հանդիսից ասէ՝ի բաց առնոյր, ոչ լինուլն հաճէր զԱստուած. պարտ էր յանձն առնուլ զամենայն ըստ ամենայն ընդարձակութեան տէրութեանն Աստուծոյ՝ առ՝ի պատուել զնա:

Ո՛հ, եղբարք իմ, աղաղակէ սուրբն Բեռնարդոս, նուէրս այս՝ նկատեալ զայն որպէս կատարեցաւն՝ի տաճարին և ըստ այնմ ժամու, նկատեալ զայն ինքնին միայնակ՝ առանց հետևանացն, Թուէր Թեթև ինչ և դիւրին.

ածի մանուկն 'ի սեղան, նուիրի ամենատեառն՝ տուեալ
'ի ձեռս քահանային, զնի երկուց տատրակաց, և ածի
անդրէն 'ի տուն Յովսեփայ: Մի ըստ պարզութեան այ-
սըր արարողութեան առնէք դատաստան. գայցէ օր,
յորում մանուկս այս Աստուածորդի ոչ ևս 'ի տաճարի
նուիրեսցի՝ այլ 'ի Գողգոթա, ոչ ևս 'ի վերայ բազկաց
Սիմէոնի՝ այլ 'ի թևս խաչին, ոչ ևս 'ի ձեռն Մարիամու՝
այլ 'ի ձեռն դահճաց: Պատարագութիւն լիցի է նախընթ-
ացայ, զոր առնէին այսօր, մանաւանդ թէ որ ինչ յայնժամին
լինելոց է, լըռեալ է և կատարուեալ այսօրիկ՝ որ այսօր լի-
նի: Զի մանուկս այս Աստուածորդի ոչ հալածեսցի, ոչ
նախատեսցի, ոչ կապուտակեսցի 'ի հարուածոց, ոչ
կեղեքեսցի 'ի ձաղկանաց, և ոչ խաչեսցի, եթէ ոչ ինքն
կամեսցի: Արդ աստղին յայսմ օրէ յայս առնէ նա
հանդիսիս զկամս իւր ընդ այս ամենայն, և համարի իւր
պարտ՝ կամել զայն ամենայն 'ի նուիրել անդ զինքն
Աստուածոյ. և օրինակաւն իւրով խրատէ զմեզ, զի և մեզ
ըստ համեմատութեան մերում ծանրագնի պարտին լի-
նել հետևանք այսր բոլորանուէր հպատակութեան առ
Աստուած, յորում պարտ է մեզ կեալ, և զի եթէ դոյզն
ինչ յայնցանէ կամիցիմք անձանց մերոց 'ի պահեստ,
որպէս թէ իրաւահոգ լինելով ընդ Աստուծոյ, լիցի
նուիրուեմն մեր թերի և անընդունելի:

Այս է եղբարք իմ, ասէ սուրբն Լևոն, որ յայտնա-
պէս ցուցանէ զգերազանցութիւն աստուածային օրի-
նացն՝ զորս յանձն առաք, զորս թերահաւատութիւն
ինչ գաղտնի, կուրացուցիչ մտաց մերոց, իշխէ երբեմն
համարել ծայրայեղս: Յորժամ ասիցէ ոք թէ քրիստո-
նէական օրէնք հրամայեն հպատակութիւն լինի և նուի-
րուեմն արարածոյ առ Աստուած մինչև ցաւելութիւն
անձին, մինչև 'ի մեռելութիւն մարմնոյ իւրոյ, մինչև 'ի
նուաստութիւն մտաց, մինչև 'ի մահացումն կենդանագու-
նից և տիրապետն կրից, մինչև 'ի նուաճումն ըղձից, մինչև

'ի ներքուստն անիրաւութեանց, մինչև 'ի մոռացումն օգ-
ուտ, մինչև 'ի զոհ անձին և 'ի զոհ ողջակէզ, և զի առանց
պատրաստութեան սրտի առ այս ամենայն ևս ընդու-
նայն նուիրել զմեզ Աստուծոյ. կարիցեմ ասել, մեք իսկ
որ հաւատացեալս եմք՝ չկարեմք ախորժել զայս բարո-
յական, զի թուի մեզ տարապայման և անցեալ ըստ
ժամ: Այլ ուստի՞ յառաջ գայ մոլորութիւնս մեր 'ի մա-
սինս յայսմիկ — Ի թերութենէ խորհելոյ և քաջ հաստա-
տելոյ սէրութեանն Աստուծոյ, և բռնաւորութեան
աշխարհի. մի մոռասցիք զայս աղաչեմ: Տէրութեանն Աս-
տուծոյ, զի եթէ քաջ հաստատ լինիցաք՝ զինչ է Աստուած,
և ըստ քանի գլխոյ նորա եմք մեք, որչափ և կամեր զմեզ
և զհաւատարմութիւն մեր 'ի փորձ մատուցանել, բա-
նակառնութիւնս մեր չունէր ինչ ընդդիմաբանել: Անօձն
ևէթ Աստուծոյ ամենակալի ընդ ոտիեզերս, իշխան գոլով
գերագոյն սէրութեամբն սահմանել զօրէնս իւր, ոչ 'ի
վերայ այլ իրիք հաստատեալ զայնոսիկ՝ բայց զի է Տէր,
Ես եմ Տէր Աստուած. անուն Աստուծոյ, որում այնպէս
կարօտիմք յամենայնի՝ զի չկարեմք ինչ առանց նորա, և
իւրև միայն կարեմք. այս ևէթ անուն՝ առեալ ըստ ամե-
նայն ընդարձակութեան իւրոյ նշանակութեանն՝ բաւա-
կան եր 'ի պատասխանել ամենայն դժուարութեանց,
զորս մարդկային խոհականութեան մարթ էիցէ առար-
կել ընդդէմ իրաւանց նորա: Յոր վայր և կամիցի նա ըն-
դարձակել զայնոսիկ, խոստովանիմ՝ զի քաջ ևս 'ի բաց
հասանեն, և զի ամենայն սպասք՝ զորս նմա մատուցա-
նեմ՝ են ցոյցք տկարք այնոցիկ, զորս պարտիմ նմա: Եւ
խոստովանիմ զայն առաւելապէս՝ նկատեալ 'ի հակա-
ռակէն զբռնաւորութիւն աշխարհի: Շատ է ինձ յուշ
ևէթ ածել թէ որպէս կամի աշխարհ՝ զի ծառայեցից
նմա, առ 'ի միտ առնուլ՝ զի զոր ինչ խնդրէ յինէն Աս-
տուած՝ չէ ինձ մարթ ժխտել նմա առանց անիրաւելոյ:
Շատանայ աշխարհ, եթէ կէս 'ի կէս տացես նմա զոր

պահանջէ, և պահեսցես քեզ՝ զոր ինչ համարիցես կա-
րել, ուր խնդիր ևցէ ցուցանելոյ զսէր քո առ աւետա-
մահկանացուս, որոյ հարկ կամ պարտ ամենեւին զքեզ
հպատակել: Ահա ապացոյց զգալի և չջափելի, որում
ոչ կարիցեք երբեք տալ պատասխանի. ահա պատճառք՝
որ յամօթ առնեն զձեզ. եթէ ոչ խորհիք յայսոսիկ,
պարտ է ինձ յորդորել զձեզ ՚ի խորհել:

Գիտէք իսկ ցոր վայր յաճախ ածէ աշխարհ զպա-
հանջմունս իւր յայնցանէ, որք ընդ իշխանութեամբ նո-
ցա են: Կշռադատել և դեգևել՝ ուր խնդիր է ծառայե-
լոյ նմա, ոչ լինել կուրաբար անձնատուր յամենայն կա-
մս նորա, հաստանել սահման, և ոչ կամել անդր ևս ան-
ցանել, չատ է առ ՚ի գժիամակել զնա, չատ է առ ՚ի
զայրացուցանել զնա, չատ է առ ՚ի կեղակարծ առնել
զքեզ, և կորուսանել զչնորհս առաջի նորա: Բազում
անգամ էնայես յանձն քո վասն իւր, զիջանիս նմա յա-
մենայնի, խնամս զնա հանապազ՝ ցուցանելով նմա զսէր
քո և զնախանձ, զորոյ ՚ի բիւր գեպս առեալ է քո նմա
հաւաստիս, և զոր ամենայն տաս նորանորս. այլ զի թե-
րահոգ գտար միանգամ, և ոչ ցուցեր զնոյն եռանդն ՚ի
խնամել զնա, և զի չեգիտ զքեզ հաւաստարապես ջերմ և
պատրաստ՝ ոգի ՚ի բռին օգնել ըղձից նորա, չատ է յա-
զարտել զքեզ ՚ի միտս իւր, և ստուերածս ածել ամե-
նայն վաստակոց քոց անցելոց: Ասաց երբեմն Աստուած
ցԱբրահամ ՚ի հնազանդել նահապետին զոհել նմա ըղ-
միակ որդի իւր սիրելի զԻսահակ· Զի արարեր դու էիանդ
գայդ, քանզի հնազանդեցար դու ինձ, լցից զքեզ վա-
ռօք, տաց քեզ սերունդ երկայն և երջանիկ, հեղից ՚ի
վերայ քո զնորհս իմ առատապէս: Ներեսցի ինձ արդ
առնել զայս հակադրութիւն: Ի ինչ կէտ աստանօր, և
կէտ այնպիսի, յորում մեայր աշխարհ ընդունել ՚ի ձէնջ
բոլորապատուշ նուիրումն անձին. և զի խնայեցիք դուք
զանձինս յայնմ մասին, չատ եղև նմա այն առ ՚ի մոռա-

նալ զայլ ամենայն վաստակս ձեր, և արհամարհեացէ
զձեզ և մոռացեալ, նղովեսցէ զձեզ և մերժեացէ: Այս-
պիսի է եղանակ գնացից նորա. այսպիսի են օրինք նորա.
և զարմանալին ևս այն է՝ հպատակել ձեր այսպիսի օրի-
նաց: Որպիսի՞ նուիրմունս ոչ յանձն առնուս աշխար-
հասէրն վասն այնոցիկ՝ որոց առաջի ընորհս խնդրեն գը-
տանել, և սիրելի լինել նոցա: Նուէրս գոյից, ծախս և
ոյժս ծանուցուն՝ առ ՚ի հաճոյ ևեթ լինել նոցա, առ ոչ
ինչ համարեալ զաւերս և զկործանումն ՚ի սպառ իրաց
իւրոց: Նուէրս հանգստեան, քանի՞ մայրաղութիւնք,
քանի՞ խնամք, քանի՞ հսկմունք, քանի՞ երթևեկք, քանի՞
աշխատութիւնք: Նուէրս առողջութեան, զի հաչի ՚ի վաս-
տակոց, առաւել ևս ՚ի տառապանաց՝ որ զհետ գան:
Նուէրս կենաց, զի գնե զանձն ՚ի վտանգ ընդդէմ մրրկաց,
ընդդէմ արկածից զինուց, և շատչէ զարիւն իւր: Եւ
նուէրս հոգւոյ իսկ, զի լինի մեղսակից ամենայն անիրա-
ւութեանց, և զոլոզ անկարգութեանց: Զասեմ ինչ, ո-
րոց չիցէք գուք վկայք, և զորոց չիցէ մեզ պարտ հեծել
և հառաչել: Քաւ լիցի, չեն ինձ կամք թուլացուցանել
քանիւքս զիսոյն և զնեամս, զոր պարտիմք այնոցիկ՝ զորս
կացոյց Տէր ՚ի վերայ մեր տեառս՝ աւանդեալ նոցա զիւր
իշխանութիւնն: Լիցուք սիրասէրք, նախանձաւորք ան-
ձանց նոցա և օգտի. և բաց ՚ի պատուիրանացն Աստու-
ծոյ և ՚ի խղճէ մտաց մերոց՝ մի՛ խնայեսցուք յայլ ինչ
վասն նոցա, հաւատարիմ լիցուք նոցա մինչև ցմահ: Ոչ
միայն հաւանիմ ընդ այն, այլ և պարտ անձին համարիմ
խրատել զձեզ յայն, և էիարեմ ըստ բաւականին յոր-
դորել զձեզ յայն: Յանկամ միայն տալ ձեզ ՚ի միտ առ-
նուլ զանիրաւութիւն ձեր, զոր և ողբամ, զի փառս
համարիք անձանց՝ այդչափ ինչ նուիրել այլոց, և առ
Աստուած՝ որ Տէրն է տերանց՝ այդչափ ՃգիՃք և խնա-
յիէք: Անկարգութիւն մեծ՝ զոր եթէ փոքրս լիներ պարա-
պով հետաքննիցէք, գտանիցէք ՚ի սրտի ձերում: Կա-

միք լինել Աստուծոյ, այլ միշտ պահել անձանց ինչ. խըն-
դրեսցէ նա որ ինչ և կամի, ամենայն ինչ նուիրեսցի նմա,
բայց միայն հնորհեսցէ զայս ինչ կլբա, բայց միայն մի
դատապարտեսցէ զայս ինչ լղձա, բայց միայն կացցէ՛ի
պահեստի այս ինչ կէտ պատուոյ, բայց միայն մի լեցի
պարտ հրաժարել՛ի խաղաղ ասել, բայց միայն օրէն լե-
ցի հանապազորդել յայս ինչ ժողով, յայն ինչ ակումբ:
Ա՛յս կարդ է՝ յոր կամք են ածել զքրիստոնէական
կեանս. այս գաշն է՝ զոր կամք են դնել ընդ Աստուծոյ.
այլ ես ասեմ՝ զի ցնորական է կարգդ այդ, և ոչ է կա-
րելի գաշնադրութիւնդ այդ: Եւ ընդէ՞ր. — վասն զի է
բաժանել զձեզ ընդ Աստուած և ընդ աշխարհ, ընդ Աս-
տուած և ընդ անձինս ձեր. այլ Աստուած մերժէ զբա-
ժինդ զայդ, զի է այդ կամել բաժանակից լինել տերու-
թեանն Աստուծոյ, որ անպարագիրն է: Եղերո՛ք երբէք
քաջ խելամուտ լսմաստից բանին, զոր ասէ Աստուած
ցՄովսէս, յորոյ վերայ հաստատեալ է սերկևեան արա-
րողութիւն. Իմ է ամենայն: Հակիրճ պատգամ, այլ՛ի սը-
զբութեան իւրում բովանդակէ զքվևսաւորագոյն պարտս
մարդոյ առ Աստուած, տալով մեզ ըշխդրեալ նկաքագիրը
տերութեանն Աստուծոյ՛ի վերայ մարգկան. Իմ է ամե-
նայն. այս ինքն որպէս ուսուցանէ մեզ սիրելի Առաքեալն,
ամենայն տիեզերք նովաւ եղեն, և առանց նորա եղև և ոչ ինչ:
Վասն որոյ չիք ինչ մարդոյ, զոր չկոչեն նորա ընկալեալ
յԱստուծոյ. որուամ չկէտ գայ անժխտելի, զի չիք ինչ
մարդոյ՝ որուամ չկոչեն պարտ յանկիլ յաղթութ իւր յԱս-
տուած, և զոր չկոչեն պարտ վերաբերել առ նա: Իմ է ա-
մենայն, այս ինքն զի որպէս արարիչ է ամենայնի, նոյնպէս
ինքն պահպանէ զամենայն. որպէս զի, ըստ բանից Առա-
քելոյն, նովաւ գործեմք զամենայն, և ոչ խորհել ինչ
կարեմք առանց նորա, և ոչ սիրտ մեր զգալ ինչ կարէ,
բայց նովաւ: Վասն որոյ ամենայն խորհուրդք մտաց մե-
րոց, ամենայն որ ինչ կրի՛ի սրտի մերում և ամենայն

գործ մեր՝ պարտ է զի լեցին վասն նորա: Իմ է ամենայն.
այս ինքն զի ըստ պատգամաց սուրբ Հոգւոյն՝ անօրինէ
նա զամենայն որպէս կամի ըստ իմաստուն խորհրդոց նա-
խախնամութեան իւրոյ, զի ուշի՛ի ձեռին զբարիս և
զչարիս, զմեծութիւն և զաղքատութիւն, զբախտս և
զարկածս, զհիւանդութիւն և զառողջութիւն, և բաշխէ
որպէս և կամի և ուր կամի. զի ինքն է՝ որ հարկանէ և
բժշկէ, աղքատացուցանէ և ձոխացուցանէ, խոնարհե-
ցուցանէ և բարձրացուցանէ, վշտացուցանէ և միխիթա-
րէ. զի գիրք սուրբք առհասարակ լի են բանիւքս. և
զինչ ասի է իմաստասիրել. — զայն զի որ ինչ և անօ-
րինեսցէ զմինչ, յորում պայմանի և կացուսցէ զմեզ,
չունիմք և չկարեմք ունել իրաւունս՛ի բաց կալոյ՛ի նը-
մանէ:

Ո՛վ հաւատացեալք, հաստատուն կանոն է այս բա-
րոյականին. ընկալցուք զսա, և խրատեսցուք սովաւ: Չիք
ինչ՛ի մեզ՝ որ չկոչէ Աստուծոյ. սակայն զինչ յամենայնէ
՛ի մէնջ նուիրեմք Աստուծոյ. ՛ի բաժինս յայս՝ զոր առ-
նեմք անձին մերոյ՝ եթէ ոչ բոլորովին իսկ մոռանամք
զԱստուած, սակայն զինչ ոչ պահեմք ունայնասիրու-
թեանս մերում և փառասիրութեան, հաճոյից մերոց և
դիւրութեանց, շահասիրութեան մերում և արծաթասի-
րութեան: Եւս առաւել ողբալի և առաւել վնասակար
մոլորութիւն մեր այն է՝ զի համարիմք ըստ օրինաց ուղ-
ղել զգնացս մեր, այլ ըստ օրինաց՝ որ խաբեն զմեզ, կամ
զորս անձնասիրութիւն մեզ ըստ սահմանի, կամ զնմաստ
նոցին կամակորէ: Զի ասեմք. պարտ է ինձ լինել Աս-
տուծոյ, այլ ըստ պատշաճի իմում պայմանի. պարտ է
ինձ լինել Աստուծոյ, այլ չկարեմ անտես առնել զկարգ
իմ ըստ աշխարհի. պարտ է ինձ լինել Աստուծոյ, այլ
չէ ևս ինձ պարտ օտարանալ՛ի կարգէ իմմէ, և ոչ թե-
բանալ՛ի պատշաճից կարգիս. պարտ է ինձ լինել Աս-
տուծոյ, այլ ոչ հրաժարել յամենայն զբօսանաց և՛ի

հանգստեհնէ. պարտ է ինձ լինել Աստուծոյ, այլ պարտ է և կենցաղավարել ըստ իմումն պատմանի. և եթէ ոչ իմամեցից ես զժամանակեայ գործառնութիւնս իմ, ո՞ խորհեսցի իմամել զայնս: Գնդեցիկ պատճառաբանութիւնք, որք ըստ քրիստոնէական իմաստից՝ կարեն զօրել, և ոչ խորել ինչ 'ի պարտուց մերոց առ Աստուած: Այլ ըստ իմաստից, որպէս մեքս իմանամք, յանկին 'ի Թողուլ 'ի սպառ զԱստուած վասն աշխարհի, կամ դէթ յարգարացուցանել զանարժան պահեստս՝ որով զլսադգոն մասն մեր պահեմք աշխարհի: Յառաջ և խոզացուք. լիք լինէ 'ի մեզ՝ որ միայն էնցես Աստուածոյ, այլ և չկարօտիցի Աստուածոյ առ 'ի կալ և չարժել. և ահա յայտնագոյն անիրաւութիւն՝ զոր կրե յերեսաց մերոց նախապատճառն, որ ազգէ յամենայն 'ի խորհուրդս մեր, 'ի զգացմունս, և 'ի գործս հանապազ, մշտակայ առընթեր: Իսկ մեք գոն ուրեք խորհիմք վայրկի մի 'ի նա, գոն ուրեք գարձուցանեմք զսիրտ մեր առ նա, և յայնքանեաց գործոց ամենայն կենաց մերոց հաղիւ ինչ գըտանեմք արարեալ վասն նորա: Եւ ոչ այսչափ միայն, այլ և որպէս արարիչ՝ է նա գերագոյն Տէր մեր, և Տէր բախտին մերոյ· զի ըստ բանից Առաքելոյն, մի թէ չէ՞ բնիցէ՞ ձեռագիւն անօրինել զձեռագործ իւրմէ որպէս և կամի, զետեղել զայն որպէս անօթ պատուական 'ի սեղանի, կամ 'ի սպաս անարգագոյն 'ի կիր արկանել· պահպանել կամ բեկանել զայն. և որ ինչ և առնէ ընդ նա, ոչ միշտ իւր է ձեռագործ: Այս ինքն զի որ ստեղծն զմեզ ազատաբար առանց մեր, չկարի՞ց առանց մեր ազատաբար սահմանել զբախտս մեր, և որպէս ինչ նախախնամութիւն իւր սահմանէ զմեզ՝ տալ մեզ փայլել շքով, կամ թողուլ զմեզ անշուք 'ի մթան. ընդուլ զմեզ կենցաղական բարեօք, կամ զրկել զմեզ յայնցանէ. երջանկիս առնել զմեզ, կամ չտալ մեզ զկարծեցեալն երջանկութիւն, առնել զմեզ մեծատուն կամ աղքատ, ա-

ւադ կամ նուաստ, առողջ կամ տկար, մխիթարեալ կամ վշտակիր, չնչեմք միշտ արարածք ձեռաց նորա, մի թէ զանազանութիւն հանգամանաց փոխէ զտպաւորեալ 'ի մեզ գրոշմն արարածոյ, փոխէ՞ ինչ զանկապտելի իրաւունս նորա 'ի վերայ մեր, և զինիք տէրութեան՝ որ յաւուրս է նմա: Այսպէս ուրեմն եթէ կամիմք լինել Աստուածոյ, որպէս և պարտիմքս, եթէ կամիմք մատուցանել տէրութեան նորա զպաշտօն՝ որ անկ է նմա, պարտ է զի իցէ այն անսահման հպատակութեամբ, և յանձնառութեամբ ամենայն կամաց նորա: Եթէ ամբարձցէ զմեզ և թէ ի՞նչ ասցէ. եթէ կոչեսցէ զմեզ 'իսպայծառ աւադութիւն, և սահմանեսցէ զմեզ 'ի հասարակ և յանարգագոյն պաշտօն. եթէ յաջողեսցէ զնորհուրդս մեր, և եթէ ըստ առանձին իմն տեսչութեան իմաստութեան իւրոյ ձախողեսցէ, 'ի խաղաղութեան և 'ի մարտի, 'ի փառս յաղթանակի և 'ի կորանս պարտութեան, յիշխանութեան և 'ի հպատակութեան, 'ի գտանել շնորհս և 'ի կորուսանել, 'ի հանգստեան և յաշխատութեան, 'ի ճոխութեան և 'ի կարօտութեան, պարտ է մեզ յիշել յամենայնի ըստ օրինակին Հեղեայ քահանայապետի՝ զի է նա Տէր· Տէր, որ ինչ բարի է առաջի Իւր, ինքն արասցէ· նմա անկ է հրամայել՝ առանց ցուցանելոյ մեզ զպատճառս հրամանաց իւրոց, և մեզանկ է հնազանդել անտրտունջ. և է հակառակ կալ իրաւանց նորա՝ պահանջել, զի ցուցցէ մեզ ընդ ո՞ր ճանապարհ հասանէ մեզ գնալ, և մեղէն ընտրել զկայս՝ ուր հաճոյ իցէ մեզ ամբառնալ· զի յո՞ր և է կարգի՝ նորա եմք, և չիք ոք որ կարիցէ ազատ առնել զմեզ 'ի լինելոյ բոլորովին 'ի նա յանկեղծ սրտէ ապաստան:

Զայս պարտ է ինձ յուշ ածել 'ի կամիլն գնել ջուր և սահման այսմ գլխաւոր և հանրական պարտուց իմոց, և 'ի չկամիլն կալ պատրաստ օրհնելոյ զԱստուած ըստ օրինակի քահանայապետին Հեղեայ՝ յորժամ պատմե-

ցան նմա պատգամքն խնամք, կամ ըստ օրինակի սրբոյ Կուսին՝ յորժամ ազգ եղև նմա ի գիմաց Տեառն սուրբն ցաւոց, որ հանդերձեալ էր անցանել ընդ անձն նորա· կամ ըստ օրինակի Փրկչին, յորժամ վճիռ ասաուածային դատակնքեսցէ զնս ի խաչ, նմա յարկածս և ի վշտակրութիւնս· որչափ յանդգնեցայց անձամբ անձին առաջնորդել, և գնալ ուր և հաճոյ իցէ ինձ, ուր և փառասիրութիւն մղեսցէ զնս, ուր և շահասիրութիւն զառածանիցէ, ուր և ցանկութիւն ձգիցէ, առանց ակն ածելոյ ի խորհրդոցն Աստուծոյ, և առանց քննելոյ որ ինչ Աստուած սահմանեալ իցէ ինձ· որչափ հակառակ կացից Աստուծոյ վասն էղիջանելոյ նորա յիղձս իմ և կամելոյ՝ զի խոնարհեցայց, լքայց, հալածեցայց, և կործանեցայց· որչափ եչխեցից ասել՝ զի եթէ այսպէս կամ այնպէս էի, կարէի ծառայել Աստուծոյ, և տալ զնս նմա, այլ արդ չկարեմ առնել ինչ վասն նորա, և ցորքան եչխեցից մտանել ընդ նմա ի հաշիւ, և ոչ թողից ի նա զամենայն՝ որ ինչ է իմ և որ ինչ լինի, որ ինչ եմ և որ ինչ եղէց, ոչ շատ համարեսցի իւր ի պատիւ, և ոչ խիք լինի ինձ ակն ունել ի նմանէ· զի մինչև ի սկիզբն բանիցս ի վեր եղեալ, կամել ինչ պահել անձին և ժխտել Աստուծոյ՝ է նախամեծար քան զԱստուած առնել որ ինչ պահեսդ անձին, և զլանալ Աստուծոյ· վասն որոյ չէ այդ սէր գերագրական՝ որ գեր ի վերոյ ամենայնի դասէ զնս· և չսիրել զնս այսու սիրով՝ անարժան կացուցանէ զմեզ ընդհայոյ նորա, և արժանի առելութեան և խրատագոյն պատժոց։

Քաջ ի միս առէք զայս, սիրելի ունկնդիրք, զայս կարևոր ճշմարտութիւն· զի այս է՝ որ խափանէ հանապազօր զայնքանսեաց գարձ առ Աստուած· այս է՝ որ ի գերև հանէ զայնքանսեաց զբարի առաջադրութիւն· այս է՝ որ զբազում ի մեզաւորաց պինդ ունի մինչև ցմահ ի սոսկալի հեռաւորութեան յերեսաց Աստուծոյ, և դատապարտ զնոսա։ Յանկամ զի գոք ինքնին խնամուտ լինիցիք այնմ՝ զոր ասեցոյս եմ, և փորձ ձեր լիցի այնմ հետաստի ապացոյց։ Քանիք յաշխարհասիրաց զգան երբեմն զանձինս գրգռեալ ի հնորհացն Աստուծոյ· մեղաւորք սովորեալք ի յոգուընց ամաց հետէ ի մեղս, և խոնասութեալք յանկարգութիւնս, տեսանեն զարհուրանք զլանդ իւրեանց· լոյս բանին լուսաւորէ զնոսա, հաւատք՝ զոր չև ևս կորուսեալ է նոցա ի սպառ, խիղճ մտաց՝ որ խայթէ ի ներքուստ զսիրտ նոցա, ատն նոցա ճանաչել զանկարգութիւն գնացից նոցա, զհարկ գառնալոյ առ Աստուած, զհետևանս գարձին, զամբառ գինս փրկութեան, և կամին խորհել յայն· և զի՞նչ ասեմ թէ կամին, խորհին իսկ և ցանկան այնմ։ Այլ ի մատչէն ի գործ, բազում այն է՝ զի այս ևեթ ցրէ զխորհուրդս նոցա· այս ժայռ խրէ զամենայն առաջադրութիւնս նոցա· եթէ կամէր Աստուած թողուլ նոցա զայս ևեթ, գտանէին պատրաստաբ նուիրել նմա զայն ամենայն։ Եթէ խոստովանահայրն, պաշտօնեայ Աստուծոյ, և վերջինքիս օրինաց նորա, յայսմ ևեթ մասին զկնի, և չնորհէր նոցա զայս, չգիտեր այլ ինչ՝ որում ոչ յօժարէին ներքոյ արկանել զանձինս։ Այլ ևթէ այն ինչ հրամայի նոցա զննուլ զայս իւրեանց խոհակ, այն ինչ՝ի վերայ փափուկ մասինս, այսորիկ դնի մկրատ, ապստամբէ բնութիւնն բացէ ի բաց, և ամենայն հաստատութիւն նոցա սասանի։ Կայլին ի ճանապարհն, գնային ի սրբութիւն, եթ ընդառաջ նոցա այս խոչ, և չիշխեն կոխել զայն։ Քանզի ոչ կամին առնել զայս ճիգն յետին, զի երկիցեն ինքեզ զայս տուն՝ որ կապէ զնոսա, փոխանակ մեբձենալոյ առ Աստուած և մտանելոյ ի հնորհս նորա՝ առաւել ևս հեռանան ի նմանէ, և գառնան յանօրէն սովորութիւնս իւրեանց, անցանեն ըստ ամենայն չափ և սահման, տան զանձինս յամենայն՝ որ ինչ ապականութիւն սրտի նոցա տագրէ։ Քանզի զդան՝ զի ոչ ևս կարեն լինել Աս-

տուածոյ, եթէ ոչ բոլորովին. և զի 'ի նուիրել նմա զամենայն, եթէ խնայեն յայն ևեթ՝ զոր խնդրէ 'ի նոցանէ, ոչ հաճի: Ուսաւի ինքեան, զի ոչ կամելով առնել նմա զայն նուէր՝ 'ի զուր լեցի նուիրել զայլսն, զի նոյն դատապարտութեամբն առաջի կայ նոցա 'ի հաճել զամենայն կերս իւրեանց որպէս զմին: Դատապարտելի խմաստասիրութիւն, որոյ ահագինք են հետեւանք. ոչ ևս ինչ սանձահարէ զնոսա, ոչ ևս երկիւղ է նոցա յԱստուծոյ, ոչ ևս հոգ փրկութեան. և լրումն աղետից նոցա այն է, զի ամք՝ փոխանակ զերծուցանելոյ զսիրտս նոցա 'ի կապանաց, զորս էկարացին վասն Աստուծոյ խակ խղել, կաշկանդեացեն զնոսա և ևս ընդ այնոսիկ, որք լեցին նոցա 'ի կուռս մինչև ցայսհ: Ածեն նոքա ընդ իւրեանս 'ի քարշ զղջմն անօրէնութեան, կամ ոչ թողուն զայն՝ բայց զի անցցեն 'ի թողուրն, 'ի ձեռս աստուածային վրէժխնդրութեան՝ առ 'ի կրել պատուհաս սոսկալի: Փանիք 'ի դատապարտելոյ առնջին 'ի գժոխս, և առնջեսցին 'ի յաւիտեան, վասն միոյ ևեթ յայսպիսեացս կապանաց: Առ այլ ամենայն ինչ էին նոքա քաջ պատրաստականք. էին 'ի նոսա խմաստք լաւութեան և պատուոյ, էր 'ի նոսա հնազանդութիւն և կրօնից. բայց զկրօնս, որ բովանդակեն զամենայն, կամեցան նոքա ամփոփել. կամեցան իրաւախոհ լինել ընդ Աստուծոյ, այլ Աստուած մերժէ 'ի բաց զամենայն իրաւախոհութիւն. եւ իք զնոսա, և լքան յանձանց իսկ իւրեանց:

Եթէ երբեք, ո՛ հաւատացեալք, զդամք այսօր ինչ 'ի մեզ՝ լինելոյ Աստուծոյ, հետեւեսցուք ըզձից մերոց, այլ հոգւով մտորգարէին: Օրինակ այս այնչափ 'ի դէպ է ձեզ և արքունեացս, որչափ զի մեծի արքայի և սրբոյ արքայի է օրինակ: Դաւիթ խոնարհեալ առաջի Աստուծոյ ասէր. Տէր, ամենայն ինչ քո է, և ամենայն ինչ 'ի քէն, մեծութիւն և կարողութիւն և փառք. Քո է, Տէր, ձեռնարկութիւն և պարծանք. Զիք ինչ 'ի վերայ երկրի, որ

ոչ քո իցէ, և որ չիցէ ընդ հրամանաւ սէրութեան քո. Վասն զի դու ամենեցուն, որք են յերկինս և 'ի վերոյ երկրի, փէրեա: Եւ զինչ ասասի զհետս բերելոյ. — Տէր, վասն այսորիկ յօժարութեամբ և անկեղծ սրտիւք նուիրեմք քեզ զամենայն, առանց ինչ խորհելոյ. Եւ մե՛ պարզ սրտիւ յօժարութիւ եղէաք յայսմ ամենայնի: Տեսեք որպէս 'ի հանրականութենէ սէրութեան Աստուծոյ կիզքեր լեր անհրաժեշտ հետեւանս զհանրականութիւն նուիրանաց, զոր պարտիմք Աստուծոյ: Եւ ոչ միայն ոչ մեծ ինչ համարի զայսպիսի նուիրութիւն, այլ զարմանայ ընդ հակառակն՝ զի հաձի Աստուած ընդունել զայն. զի ո՞վ եմ ես, ասէ, և ո՞ է ժողովուրդս այս՝ զորոյ եւս ինձ առաջնորդութիւն, զի իշխեացուք նուիրել ինչ քեզ, և դու հաձեացիս ընդունել զայն 'ի մէնջ. ոչ այս ամենայն քո է պարգեւ, զորս քեզ նուիրեմք: Ո՞եմ ես, և ո՞է ժողովուրդ իմ, զի կարասցուք յօժարապէս ընծայել քեզ այսմ ամենայնի. վասն զի իմ է ամենայն ինչ, և 'ի ձեռաց քոց ետուաք քեզ: Այսպէս ասէր արքայն յաղթող աշխարհակալ. այսպէս 'ի պայծառութենէ փառաց չորս ջապատեալ, և 'ի մէջ ամենայն աշխարհական հանդիսից յուշ ածէր՝ զի գոյ 'ի վերայ ամենայն արքայից, վասն որոյ և գեր 'ի վերոյ ամենայն մարգկան Տէր, որոյ սէրութիւն էական խնդրէ 'ի մէնջ նուիրութիւն անկեղծ անձանց մերոց, և որոյ յաւիտենական սէրութիւն խընդրէ 'ի մէնջ պատրաստ նուիրութիւն որպէս սեպհական յիւրոցդութիւն մասին:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Զեն ինչ զարմանք՝ զի Աւաքեաքն ի հրահանգել Իւրում զնախնի հաւատացեալս, ընդ այլ խմաստս կրծնից առաքի գնէր նոցա և զայս առաւելապէս, զի ոչ օք ի մէնջ կէայ վասն Իւր, այլ զի եթէ կեամք և թէ մեռա նիմք՝ պարտ է մեզ վասն Տեառն կեալ և մեռանել, զի եթէ ի կեանս և եթէ ի մահու՝ Տեառն եմք. Եթէ կեամ՝ Տեառն կեամ, և եթէ ռեռանիմ՝ Տեառն ռեռանիմ: Այսպէս խօսէր Աւաքեաքն, ասէ սուրբ Ոսկեբերան, քանզի գիտէր զի տէրունեան Աստուածոյ է յաւիտենական, և զի վասն այսորիկ չէք և վայրկեան մի կենաց մերոց ազատ ի մշտնջենաւոր տէրութենէ նորա. որպէս զի ընդ գոլ մեր՝ սկսանիմք լինել հպատակք նորին, և ոչ գամք ի չգոյէ ի գոյ՝ բայց առ ի մտանել ի ժառանգութիւն Իւր, այս ինքն առ ի լինել նորա, և ոչ ումեք բայց ի նմանէ՝ իրաւունք են ժառանգելոյ զմեզ: Այսու պատճառաւ սուրբն Թովմաս հաստատէ զերաւացի պարտս մարդոյ, զի ի վայրկենի՝ յորում ճանաչէ զԱստուած՝ պարտի սիրել զնա, և ամբառնալ զսիրտ Իւր առ նա. և զի առաջին մեղք՝ զոր գործեմք ի ծագել լուսոյ բանին ի մեզ և ի կարող լինել մեր վարել ազատութեամբ, է չառնել զնուիրուածն անձին առ Աստուած, զոր սուրբ գիրք անուանէն Ողջակէզ աստուածպն: Կարծիք, թէպէտ և խիստ իմն երևեալ, այլ կարի պատշաճ բնական լուսոյ. զի ըստ իմաստասիրելոց ուրուճն իմաստուն Կարգինալն ի վերայ այսր վարդապետութեան սրբոյն Թովմայի, որպէս օրէն իցէ մարդոյ յերանելն ի տալայութենէ՝ և ի բանալ տեսութեան մըտացն՝ ոչ գարձուցանել զաչս առ արարիչ Իւր, ընդէր և վայրկի միոյմէ ի խոստովանելոյ զնա. և որ իրաւունք

իցէն նորա ոչ նուիրելոյ արարչին զերախայրիս գոյութեանն՝ զոր ընկալաւ ի նմանէ, և զոր չկարէր ընդունել՝ բայց առ ի նուիրել զայն ի պաշտօն Աստուծոյ:

Սովին տեսութեամբ սուրբն Օգոստինոս, հարեալ դառն ի զկղջ առաջի Աստուծոյ վասն ամացն անցելոց կենաց իւրոց, աղաղակէ. Անագան սիրեցի զքեզ գեղեցկութիւն յաւիտենական: Միա գիք, ոչ զկայ առնուն նա յայլ ամենայն պատճառս՝ զոր քրիստոնէական ապաշխարութիւն կարէր ածել նմա վասն ողբալոյ զմեղանչական յապաղումն իւր ի գարձ, այլ չափէր նա զժամանակ յապաղմանն գարձի իւրոյ ընդ ժամանակ արհամարհութեան պարտուցն, և կշռադատեալ զայն ընդ այսմ, ամաչէր ընդ չարաչար անցուցանել իւր զայս, չարաչար վարելով նովին, զի ասէր. Քանի՞ ամօք է լինձ, Աստուածոյ ընդ անսկիզբն յաւիտեանս սիրել զիս, իսկ աշխարհի և սխալից իմոց, անարժան արարածոց և ցանկութեան իմոյ, յափշտակել ի նմանէ զաստուածային մասն սուղ կենաց իմոց, յորում կարէի փոխարէն սիրել զնա. քանի՞ անկարգութիւն, զի Աստուած եղեալ միշտ Աստուած իմ, իսկ ես այսպէս անագան լեալ եմ իւր հպատակ, և այսպէս անագան նուիրեալ նմա զանձն իմ որպէս արարած իւր: Ահա այս էին պատճառք ղջման և ողբոց իւրոց. Անագան տերեցի գեղեցկութիւն յաւիտենական:

Ըստ այսմ կարգի մարգարիտք, որ կացին ի հին օրէնս պատգամք, յաւիտենական պաշտն և երկրպագութիւն Աստուծոյ պահանջէին ի մարդկանէ, ըստ յաւիտենական տէրութեան նորա, որ մի է ի վերհագուննից ստորոգելեաց նորա: Եւ որպէս կեանք մարդոյ ըստ տեղոյ ժամանակի իւրում յաւիտեան իմն է վասն իւր, և որպէս Մովսէս ի խօսելն զԱստուածոյ՝ զայս աստուածային խորհրդաւոր ձև բանի ի կիր արկանէ՝ Թագաւորել Տէառն յաւիտեան և անդր ևս քան զյաւիտեան, զի ասէ. Տէր Թագաւոր յաւիտեան, և յաւիտեան և Ես. այսպէս և

մարդարէն Միքիա ոչ երկնչէր առաւելազանց իմն պարտս յանձն առնուլ ՚ի խոստանալն առ Աստուած պաշտօն յաւիտենական և առաւել քան զյաւիտենական, զի ասէր. Գնասցուք յանուն Տեառն Աստուծոյ մերոյ յաւիտեան և առ յաւիտյան, իբր այն թէ ոչ կամելով, որպէս ասէ սուրբն Հերոնիմոս, զի սէրս Աստուծոյ յաղթեալ նախանձուն իւրոյ և կրծնից, և նախանձաւորութեամբ իմն սրբով գոգցես փառասիրէ լինել այնպէս վոյթ և երկարատև ՚ի պաշտօն Աստուծոյ, որպէս լեալ էր Աստուած ՚ի բարերարել առ ինքն:

Բայց առանց խնդրելոյ այլ օրինակս, զկայ առցուք յայն՝ զոր ընտրհէ մեզ Փրկիչն մեր յայսմ խորհրդեան: Զի զայս կարևոր պարտս մեր կամի յայսմ իսկ օրէ ուսուցանել մեզ: Աստուած ուղայացեալ, Աստուած նորածին քառասնօրեայ, կամի աստուածն ածիլ ՚ի սեղան Տեառն, և նուիրիլ Հօր իւրում: Գեղեցիկ կենացն, զոր վարելոց է յերկրի, ոչ կամ զի և հասակ մի անցցէ առանց նուիրելոյ ՚ի փառս Աստուծոյ. և պարաք, զոր յանձն առնու նուիրմամբս այսուհիկ, չէն միայն վասն առաջնոց ամացն և առաջնիկայ հետ ախոյն, այլ և ապագայից. որպէս զի պատարագն խաչի և մահուան իւրոյ, ոչ եղիցի այլ ՚ի սմանէ պատարագ, այլ վախճան սորին, լըրումն և կատարումն: Եւ յորժամ յերեկոյ չարչարանացն ասացէ առ Հայր իւր, Զգործն կատարեցի, զոր եդեր ինձ, և յորժամ ՚ի վերայ խաչին յաւանդելն առ նա զհոգին՝ գոչեսցէ, Ամենայն ինչ կատարեալ է. ոչ զայլմէ իմեքէ ասիցէ, այլ զպատարագիս զայսմանէ՝ որ սկսանի ՚ի տաճարիս, ՚ի սուրբ նուիրմանս:

Պատկերեսցուք ՚ի մտի, սիրելեալ ունկնդիրք, զի Փրկիչն մեր, ՚ի ութնից՝ զոր կատարեմք, գարձուցեալ զաչս իւր ՚ի մեզ, և օրինակաւն իւրով քաջալերեալ զմեզ, ասիցէ միւսմ միւսմ ՚ի մեզնէ զոր ասաց Առաքեալսն. Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ, և որդիք մարդոյ մատնեսցի, մի յապա-

ղեսցուք, մի կորուսցուք վայրկեան մի, ընծայել Աստուծոյ զփառս՝ որոմ տպատակ յինէն և ՚ի ձէնջ, և զոր կարեմք ընծայել նմա նուիրմամբ անձին: Ի բարբառել Աստուածորդւոյն այսպէս առ աշակերտս իւր, ազդ առնէ Աւետարանիչն՝ զի թէպէտ և պարզ և դիւրիմաց էին բանքն, Այլնոյա ոչ ինչ իմացան: Ախորհի է, ո՛ հաւատացեալք, Թշուառութիւն մեր. յայս եղկութիւն հասեալ եմք. երկնաւոր վարդապետն մեր խրատէ զմեզ այսօր օրինակաւն իւրով, զի պարտ է մեզ վաղագոյն նուիրել ըզմեզ Աստուծոյ, և զի ոչ կարասցուք այլազգ խոստովան լինել զյաւիտենական սիրոյն նորա ՚ի վերայ մեր, ձշմարտութիւն անժխտելի. այլ հանդերձ բացայայտութեամբն չիմանայ հոգի յաւիտենից զայս ճշմարտութիւն. հոգի կոյր և խօթամիտ՝ մթագնէ մեզ զայն, որպէս զի չիմանամք մեք զայն, զի չկամիմք իմանալ. Այլ էր բանն ծածկեալ ՚ի նոցանէ: Զի կամիմք լինել Աստուծոյ, այլ երբ. — միշտ առյապոյ, ոչ երբէք այսօր: Լուարուք ինձ, և միտ գիք հետաքննել զայսմանէ զյոյսն մարդկային սրտի, առ ՚ի գարշել յայնմանէ զոր արժանաւոյն, և եթէ էր կարելի գարշել՝ որպէս ինքն Աստուած գարշի: Կամիմք լինել Աստուծոյ, այլ յորժամ ոչ կամ ինչ ձգեսցէ զմեզ այլուր, և ոչ կարասցէ պինդ ունել. կամիմք լինել Աստուծոյ, այլ երբ, յորժամ ոչ կամ ինասցէ ինչ մեզ ՚ի կենցաղումս, ոչ յոյս ոգեխառնութեան ընդ ումեք, ոչ հաճելոյ զփառասիրութիւն, ոչ թեկն ածելոյ զաւագութեան, ոչ անկորուստ ունելոյ զպահանջմունս, ոչ ճոխանալոյ, և ոչ պայծառանալոյ, յորժամ գոգցես իմն լքեալ թողեալ լինիցիմք յանձինս, և ՚ի նուիրել զմեզ Աստուծոյ՝ ոչ այլ ինչ լիցի նուէրս մեր, բայց կեանք մաշեալ, եղծանելի այնուհետև, և ումպէտ: Կամիմք լինել Աստուծոյ, յորժամ տուեալ իցէ մեր ախոյեց մերոց զամենայն պարտս և զհնարս կշտասպինդ յագեցման, և նուիրեալ նոցա բազում անգամ զամենայն կամ

նորա. յորժամ 'ի թշնամանս փառաց և օրինաց նորա հեռանալ կացեմք կուբաբար ամենայն ըղձից մերոց, և անասնաբար յագեցուցեալ զամենայն ցանկութիւնս մեր: Կամիմք լինել Աստուածոյ՝ յորժամ հաճոյ լիցի մեզ, և ոչ երբեք յորժամ նմա է հաճոյ. յորժամ միաք ևեթ ստիպեսցեն զմեզ, և ոչ 'ի յորդորել կրօնից. յորժամ յեսին և միակ մնասցէ մեզ այն՝ առ 'ի տալ խօսել զմեզ յաշխարհի, կամ առ 'ի զբօսեցուցանել զտաղտկութիւն կենաց մերոց, և ոչ երբեք յորժամ ստիպիմք 'ի պարտուց, կամ յորդորիմք 'ի կրօնից: Զի՛ և երկարեմ. կամիմք լինել Աստուածոյ, յորժամ ոչ և մնասցէ ինչ՝ յորմէ պարտ լցէ մեզ յեսս կալ, կամ յանձն առնուլ զայն. և յորժամ ծանրաբեռնեալ 'ի պարտուց՝ ստիպելցիմք ամենայնիւ ապաշխարութեամբ ցածուցանել զարդարութիւնն Աստուածոյ, և կամ զարհուրելի յուսահատութեամբ յանձն առնուլ զյաւիտենական դատապարտութիւն: Այսպիսի է նկարագիրը դնացից մերոց, զոր գծեմք առաջի Աստուածոյ, այսպէս բաժանեմք զամս մեր ընդ Աստուածոյ, և ըստ ժամանակի՝ զոր կամիմք տալ նմա:

Ա՛յս ևս պատուել զԱստուած, սիրելիք, չէ՛ս այս թշնամանել զնա. ևս՛ այս խոստովանել զգերագոյն առաքութիւն նորա, սահմանել նմա ըստ ժամանակ, որ հաճոյ ևս մեզ: Ի՛ս այս պաշտօն մատուցանել աներկութեան նորա, պահել նմա զվերջին ամն կենաց, զամն՝ յորս և ոչ վստահել կարեմք, և որք թերևս չգայցեն վասն մեր՝ բառնալով զմեզ մահու յառաջ քան զհասանել նոցա: Եւ զի՛նչ. Աստուած, ընդ որում այսպէսն վարիմք, մնայցէ՛ մեզ, հաւանեսցի՛ ընդ այս բաժին մեր. առցէ՛ յանձն, զի նուիրեսցուք նմա զայն՝ զոր աշխարհ յառաջ քան զնա ժառանգեալ ևս ընդ երկար, և բիւրեցս անուրջս արարեալ. զի ընծայեսցուք նմա զարհամարհեալն և զմերժեալն յաշխարհէ, և զոր ընծայեմք նմա՝ վասն զի աչք խարհ սկսանի արհամարհել և մերժել զայն. զի ընծա-

յեսցուք նմա զայն, զի ոչ և ս կարեմք ժխտել առանց ձգելոյ 'ի մեզ զվճիռ դատապարտութեան, այնչափ առաւել անխոսելի՝ որչափ զի մերձ է 'ի չանթել զմեզ: Ահ, Աստուած իմ. լինելիր դու՞ որ ինչ եսդ, եթէ պարտէր քեզ յանձն առնուլ զայսպիսի պայմանս. և լինէ՞ք մեք որ ինչ եմք, եթէ էր մեզ կարելի դնել քեզ պայմանս: Ոչ ոչ, չէ այս հնարաւոր. և Աստուած, որ ինչ պարտիմքս նմա, քաջ խնամեալ է ըստ կարգի նախասահմանութեան մարդկան տալ օրէնս խիստս առ 'ի խափանել զայդպիսի Թշնամանս: Զի եթէ հաւատամք նմա, (և ո՞վ այլ կարիցեմք հաւատալ առաւել, զի անսխալ են պատգամք նորա, և է նա ինքն իսկ Ճշմարտութիւն,) 'ի վարել մերում ընդ նմա այսպիսեաք անարժան գնացիւք, հարցէ զմեզ արհամարհանօք, և զի՞նչ լիցին արգասիք արհամարհելոյ նորա զմեզ, քաջ խորհեցարուք: Իբր ոչ եթէ ոչ և լուիցէ պաղատանաց մերոց, եթէ անկեղծութեամբ և 'ի սրտէ կարգասցուք առ նա. իբր ոչ եթէ հեռի կացցէ 'ի մէնջ' 'ի դառնալ մերում և 'ի խընդրել զնա բոլորով սրտիւ. իբր ոչ եթէ մերժեսցէ նա ըզմեզ, եթէ Ճշմարիտ և հաստատուն նուիրմամբ անձանց մերոց յանդիման լիցուք նմա. զի ինքն ասէ՝ թէ երբ և առ ինքն դառնայցէ մեղաւորն՝ ընկալցի զնա, յորժամ ժամանակի և հաստատեալ լիցեմք լինել նորա, հաճեսցի ընդունել զնուէր մեր. այլ 'ի միտ առէք, զի այս Ճշմարիտ կամք առանց չնորհաց նորա ոչ կարողէն, և զի՞նչ արասցէ յարհամարհելն զնէզ՝ յորժամ արհամարհի 'ի ձէնջ. ոչ տացէ ձեզ զչնորհս զայս, զայս գործունեայ և զօրաւոր չնորհ, այնչափ առաւել կարևոր՝ որչափ զի մերկարագոյնք գտանիք յայնժամ և կարօտք առաւելագոյն ձգանց, ուստիև առաջի երկայնագոյն ուղի ըստ հեռագոյն մոլորութեանդ՝ առ 'ի գտանել զնա: Ժխտեսցէ ձեզ զայն, և ոչ և ս կարիցէք լինել իւր. և գրեթէ չգտանիցէք իսկ ընդունակ խնդրելոյ զնա, զի ոչ կամեցայք խնդրել

զնա յորժամ կարող եղիք: Զամն, զորս սահմանեցիք նմա, կամիցեք տալ և զայնոսիկ աշխարհն. վաղուց 'ի վաղիւ արկանիցէք, մինչև հասցիք յօրն յայն վերջին՝ որոյ չկայ վաղիւ: Կամ եթէ գայցէ ծերութիւն և ժամանակ, յորում թուի թէ կամիցիք տալ զձեզ Աստուծոյ, ոչ լիով կարասցիք կամել, թերի լինին կամք ձեր. կարծեցեք կամել, և ոչ կամիցիք: Զի այսպէս է խմանալ զսպասնալիսն յաճախ յեղեղեալ 'ի սուրբ գիրս, և բացատրեալ բազում այնքան պէսպէս եղանակօք. Յայնժամ կոբզասցէն առն, և ոչ ըստայ նոցա. խնդրեսցեն զնս, և ծածկեցայց 'ի նոցանէ, զի մի գացեն զնս: բաղնեսցեն, և ոչ բացցի նոցա. աղաղակեսցեն՝ Տէր Տէր բաց մեզ, և փակեալ դրամբք տաց նոցա պատասխանի՝ Թէ ոչ գիտեմ զձեզ. արձակեցից զնոսա առ կուռս իւրեանց՝ զորս նախամեծար արարին քան զնս, և որոց նուիրեցին զդեղեցկագոյն իւրեանց աւուրս:

Ահագին, բայց արդար պատուհաս, որում հանդիպելոյ դնես զքեզ 'ի վանդի, ով սիրելի ունկնդիրք. չէք քեզ տեղի որանջալոյ. զի ամենայն խստութեան նորա գոցես արժանի: Այսիցես՝ Թէ ուրեմն պարտ է յուսահատել այնոցիկ, որ ցարդ չաղեալ յաշխարհի և յերեսնաւոր կապանս նորա, անցուցեալ լցեն ամ բազումս՝ առանց տալոյ զինքեանս Աստուծոյ, և կամիցին արդ զգաստանալ և ծառայել նմա. չկցե՞ նոցա այնուհետև յոյս, ոչ ևս կարիցեն ընծայել Աստուծոյ զանձինս 'ի նուէր ընդունելի:— Ոչ հրաժարեմ 'ի խորհելոյ և 'ի հաստատելոյ այսպէս. այլ չէ ինձ անկ սահման հատանել այսուիկ ողորմութեան Աստուծոյ մերոյ: Գիտեմ զի եղեն ապաշխարողք յամենայն հասակի, այս ինքն արք ապստամբք յԱստուծոյ և 'ի չնորհաց նորա, որք անցուցին զկեանս իւրեանց գրեթէ բովանդակ յապստամբութեան և 'ի հանապազորդ անկարգութեան, և սակայն անագան ուրեմն բացան աչք նոցա, ծանեան

զանօրէնութիւնս իւրեանց, և ապաշխարեցին՝ արկանելով զանձինս ընդ տէրութեամբն Աստուծոյ, յորմէ չէր երբեք նոցա օրէն վտարանդել: Կանայք, կռապարիչք աշխարհի, և առաւել ևս անձանց, կանայք՝ որոց աստուածարեալ էր զմարմինս իւրեանց, և զոհեալ իւրեանց ակուռ աստուածոյն, ոչ միայն զծաղիկ հասակի իւրեաց, այլ և զամենայն աւուրս կենաց, հրաժարեցին յանկարծ 'ի չար սովորութեանցն, և եռուն զանձինս 'ի բարեպաշտութիւն, և 'ի բարեպաշտութիւն հաստատուն, և հաստուցին զինքեանս Աստուծոյ՝ յորմէ գողացեալ էին, եթէ օրէն էցէ ինձ ասել այսպէս, և եռուն նմա զանձինս 'ի նուէր՝ զոր հաճեցաւ ընդունել: Այս է զոր գիտեմ, և զոր պարտ է ինձ հաւատալ: Այլ և գուք հաւատացէք՝ զի օրինակքս այսոքիկ, յորս ցուցանէ Աստուած զողորմութիւն իւր ամբաւ, սակաւք են քան զոր կարծեմքս, և բիւրաւորք ընդ հակառակն՝ յորս 'ի կիր արկանէ զամենայն խստութիւն արդարութեան իւրոյ. և ասեմ 'ի միտ առէք երկու ինչ կարևոր և արժանի ամենայն մտադրութեան ձերոյ: Զի յերկաքանչիւրոց ասացի դասուց օրինակաց, ողորմութեանն Աստուծոյ և արդարութեան, զառաջինս յանդիման առնեմ ձեզ՝ առ 'ի հաստատել զվստահութիւն ձեր, եթէ էցէք յայնցանէ՝ զորս խիղճ մտաց կշտամբէ վասն կալոյ իւրեանց ընդ երկար վտարանդեալ 'ի տէրութենէ Աստուծոյ, և յամեալ 'ի ծառայութեան աշխարհի և 'ի գերութեան ախտից իւրեանց: Իսկ զերկրորդսն առաջի առնեմ վասն արկանելոյ 'ի ձեզ ահ փրկաւէտ և ոչ կեղակարծ, առ 'ի սպսպել զձեզ հզօրագոյնս 'ի նուիրել Աստուծոյ զերախայրիս կենաց ձերոց, եթէ էցէք յայնցանէ՝ որք բերոյ մասին վճռակեալ, կարող էցեն առնել զայն: Պարզագոյնս մեկնեցից զբանս իմ:

Խօսիմ նախ առ քեզ, ով սիրելի, որ 'ի խոնարհել հասակիդ սկսանիս ճանաչել և հասու լինել գլխաւոր

պարտուց կրծնիս մերոյ, որով պարտիմք տալ զմեզ Աստուծոյ վաղագոյն, և խոստովան լինել պատրաստ նուիրմամբ անձին՝ զաւետեւնական ուխտիւն նորա: Ճըշմարտութիւն կարևոր, զոր ճանաչես, այլ երկնչես՝ թէ դուցէ յամեցեր 'ի խոստովան լինել զայն· յիրաւի է երկիւղ վասն աստուածաստաց սպառնալեացն՝ զոր ցուցեր քեզ· և հարեալ 'ի խղճէ մտաց, կասկածես՝ թէ դուցէ լցցին այնոքիկ 'ի քեզ, և լքանիս՝ որպէս թէ ոչ ևս իցէ քեզ ժամանակ դառնալոյ յօրէնս Տեառն, և մատուցանելոյ նմա զանձն քո 'ի նուէր ընդունելի: Այլ մի՛ լեր զի բանք իմ եղկացուացեն զերեանդն առաջադրութեան քո, և 'ի դերև հանցեն զձիգն ընորհաց· մի՛, սիրելի իմ: Զի այդ աստուածային սպառնալիք, որ խռովեն զքեզ, չեն այնպէս հանրականք՝ զի չիցէ ոք կամ չկարիցէ լինել զերծ յայնցանէ: Զեն այնոքիկ վճիռք այնպիսի անդարձք, յորոց չիցէ ուրուք կարացեալ, և չկարիցես դու ևս դիմել յայնցանէ յողորմութիւն Տեառն՝ որոյ են սպառնալիք: Այրդ ընդէր չիցես դու 'ի Թիւս այնպիսեացդ, և ընդէր ոչ 'ի կիր առնուս զչնարս կարևորս լինելոյ 'ի Թիւս նոցա: Կարես դու, առ քեզ առանձինն ազդ առնեմ: առ քեզ որ լսեսգ ինձ, և զոր կոչէ Աստուած վերսանն 'ի ձեռն իմ: առ քեզ՝ յորում զարթուցանեն բանք իմ զգացմունս ինչ, որ են արգասիք առաւելագոյն ընորհաց· առ քեզ՝ որում բանայ Աստուած զճանապարհ դարձի ներգնին խորհրդովքդ և ըղձիւք, զորս ինքն ազդէ 'ի քեզ· առ քեզ՝ զոր յայս սակս պահեալ է մինչև 'ի վայրկեանս յայս անգին՝ որ Թերևս իցէ վասն քո յետին, և մարթ է զի լեցի սկիզբն յաւիտենական նախասահմանութեան: Զունիցիս ապաքէն զբարեմասնութիւն վաղագոյն նուիրելոյ Աստուծոյ, ոչբա և հեծեծես ընդ այդ առաջի նորա· և գէթ յայսմհետէ լեցի քեզ առաւելութիւն կալոյ հաւատարիմ առ նա, և լինելոյ նորա մինչև ցյետին չունչ կենաց քոց, փոխարինել յարատե-

ւութեամբ ապաստամբութեան անցելոց աւուրցդ: Այսքան առ քեզ· իսկ առ այլս յաւելում:

Կարծել՝ թէ լեցի քեզ միշտ ժամանակ յանձն առնոյ զլուծ Տեառն յետ թօթափելոյ զայն, սիրելի ունկնդիր, և ըստ այսմ տալ զքեզ աշխարհի յառաջին տիոց, և պահել Աստուծոյ զնիացորդս աւեթ կենաց քոց, և խոստանալ անձին՝ զի միշտ պատրաստ իցէ Աստուած կանխել ամենայն իրօք 'ի խնդիր քո, յուսալ՝ զի գանձք ողորմութեան նորա միշտ բաց իցեն քեզ, և գտցես անդ զամենայն կարևոր օգնականութիւն, և զամենայն պէտս՝ յորս հաստատես զյոյս քո, է յանդուգն վստահութիւն՝ որում 'ի դէմս ածեմ զօրինակ այնքանեաց աշխարհասէր արանց և կանանց, որք յառաջ քան զքեզ խաբեցան, և կարի յիրաւի է ինձ խիթալ՝ զի զհետ նոցա և դու խաբիցիս: Զինչ պատճառք իցեն քեզ յուսալոյ, որ չիցեն և նոցա լեալ· և եթէ հետևանք ահագինք ցուցին նոցա՝ քանի՞ անոսի էր յոյս իւրեանց, ո՞ կարիցէ յապահովել զքեզ՝ զի ոչ և զքեզ փորձ հանգոյն յաւուր միւմ խելամուտ արասցէ, այլ 'ի կործանումն քո յաւիտենական, զի ակնկալութիւն քո չէր առաւել քան զնոցայն հաստատուն: Ո՛հ, հաւատացեալք, մի՛ ձայնատուր լիցուք վտանգին, որում զհետ գան աղէտք սոսկալիք· մի՛ Թողցուք այլում պատահի, որ ինչ կարեմք 'ի դէպս յայս բարեպատեհ· զի ոչ գիպողագոյն ինչ քան զայս լեալ պատեհն այն 'ի փառս Աստուծոյ և 'ի փրկութիւն մեր: Քանի վայրկեանս և ժխտեմք Աստուծոյ, այնքան վայրկեանք կորնչին, ոչ միայն վասն նորա՝ այլ և վասն մեր· և երանի՛ եթէ կորնչէին միայն, այլ կորըստեամբն իւրեանց լինէին նոյնչափ պատճառք գատապարտութեան մերոյ: Նուիրեսցուք զմեզ ըստ օրինակի Փըրկչին մերոյ, վաղագոյն քան որչափ կարեմք, վաղագոյն յորժամ զգամք բերումն 'ի նոյն, վաղագոյն յորժամ կոչէ զմեզ Տէր ինքնին կամ 'ի ձեռն պաշտօնէից իւրոց,

այլ մանաւանդ նուիրեացուք որպէս Փրկիչն մեր ՚ի ձեռն
սիրոյ, — ՚ի ձեռն Մարիամու. զի ՚ի ձեռն նորա կամեցաւ
նուիրիլ, ՚ի ձեռն Մարիամու ածաւ ՚ի տաճարն, ՚ի նմանէ
ընծայեցաւ ՚ի գիրկս քահանայապետին. և եթէ կամիմք
նուիրել զմեզ Տեառն, նուիրեացուք ՚ի ձեռն Տիրամօրն.
որպէս զի նուիրումն անձին մերոյ լինի որպէս լրումն
նուիրման որդւոյ իւրոյ՝ զոր արար այսօր. և ՚ի ձեռանէ
ամենազօր Կուսին՝ չիք ինչ նուէր, որ չիցէ աստուածա-
հաճոյ. և այսպէս փառաւորեացուք զաէրուԹիւնն Աս-
տուածոյ էական, զաէրուԹիւնն հանրական, և զաէրու-
Թիւնն յատկեանական:

Աչս վարդապետուԹիւն, տէր արքայ, վասն Թա-
գաւորաց կաս է, որպէս վասն այլոց ամենեցուն. և այն-
չափ առաւել վստահուԹեամբ և ինԹարուԹեամբ ա-
սեմ զայս առաջի փառաց քոց, որչափ զի չիք ոք ՚ի Թա-
գաւորս, որ մատուցանիցէ գերագունի Տեառն սիեղե-
րաց պայծառագոյն ցոյցս հպատակուԹեան ճշմարիտ
բարեպաշտուԹեամբ: Տեսանեմ զքեզ ՚ի ծագ մարդկա-
յին մեծուԹեան. ամենայն ինչ որ կարէ ամբառնալ
զԹագաւոր, և տալ նմա յաշխարհի անուն մեծ, կցոր-
դեաց Աստուած ՚ի սրբազան անձին քում, զչուք մեծ-
վայելչուԹեան, զլայնածաւալ սերուԹիւն, զնմանատու-
Թիւն խորհրդոց, զյաջողուԹիւն գործոց, և զփառս
զինուց: Աչս է՝ որ զարմացուցանէ զմեզ. այս է՝ զոր
Եւրոպա համօրէն, ՚ի զինի կացեալ ՚ի վերայ քո, սոսկալ
խոստովանել, և որում չկարէ զլանալ գովուԹիւնս և
փառս՝ որչափ առաւել շահեկանագոյն լինէր նմա կա-
րել նուազել և մԹագնել զայնոսիկ: Աչս յայսմհետէ
բարձրուԹեան փառաց քոց, առաւել զարմանաց ար-
ժանի այն է, զի քո մեծանձնուԹիւնդ ոչ չլանայ ՚ի մե-
ծուԹենէն, և ոչ ՚ի լուսափայլ սերուԹեանն մոռանայ՝
զի ՚ի վերայ ամենայն եղծանելի սերուԹեանց՝ գոյ ամե-
նակարող Տէր, և ամրացեալ խոստմունք անսրատ և ան-

կեղծ կրօնիւք՝ յիշէ որպէս զՍողոմոն, Թագաւոր խոս-
տուն, և խոստատուն ըստ առաւելազանցուԹեան, զի է ՚ի
բարձունս երկնից ՚ի վեր քան զինքն, արարիչ ամենայն
մարդկան և Թագաւոր Թագաւորաց: Սովին հոգւով,
տէր արքայ, խոնարհեալ սեաւք զքեզ այսօր առաջի
սրբոյ սեղանոյ փառաց Թագաւորին, նուիրել ՚ի փառս
նորա զամենայն որ ինչ էսգ. սեսաք զքեզ ՚ի միջի պայ-
ծառագոյն արքունեացգ, նուիրելով նմա՝ որ ինչ է ՚ի վե-
րայ երկրի և ըստ աշխարհի պատուականագոյն և առա-
ւել փառաւոր: Ի՞նր և զի՞նչ գեղեցիկ է, յետ երևելոյ
արքայօրէն ՚ի գահոյս առ ՚ի տալ օրհնս ժողովրդեան,
յետ երևելոյ յաճախ իբրև աշխարհակալ ՚ի գլուխ բա-
նակաց առ ՚ի պինդ ուռնել զիրաւունս ինքնակալու-
Թեանդ, ընկճել զդոռոզուԹիւն, և յամօԹ առնել ըզ-
խորհուրդս ազգաց Թշնամեաց, երևել ապա առ ոտս
Աստուծոյ աղաչաւոր՝ առ ՚ի փառաւորել զաէրուԹիւն
նորա գեր ՚ի վերոյ ամենայն սերուԹեանց, կամ մանա-
ւանդ տուիչ և պահպանիչ ամենայն պետուԹեանց, առ
՚ի խոստովան լինել յայսմ յանդիման ամենեցուն ամենայն
երկիւղածուԹեամբ և խոնարհուԹեամբ զհպատակու-
Թիւն, և ներքոյ արկանել նմա բոլորանուէր ընծայ-
մամբ զամենայն, որ ինչ ինքն եդ ՚ի ներքոյ քումդ սե-
րուԹեան: Քանի՛ հաստատուԹիւն հոգւոյ, քանի՛ աղ-
նուականուԹիւն, քանի՛ արդարուԹիւն և ուղղուԹիւն,
քանի՛ անդողդոջ բարեպաշտուԹիւն, առհաւատչեայ
ճշմարիտ մեծուԹեան աստանօր է տեսանել: Եթէ ես-
խելն էիցէ ինձ ասել, յօգուտ և ՚ի փառս Աստուծոյ է
պահել զքեզ յայսմ պայծառուԹեան, որ զամենայն
աչխարհն ՚ի քեզ դարձուցանէ զաչս, զի որչափ առա-
ւել մեծասցես, այնչափ առաւել փառք և պաշտօն ՚ի
ձեռն քո առ Աստուած ընծայեան: Յարքունական
անձին քում լինի նմա որպէս ՚ի ԴաւԹայն՝ գտանել
Թագաւոր ըստ սրտի իւրում, հաւատարիմ յօրէնս

իւր, նախանձաւոր օրինաց իւրոց, պաշտպան նոցին և վրէժխնդիր: Եւ ոչ այսքիւք անցցեն առանց վարձուց և փոխարինաց. զի յետ պսակելոյ զքեզ փառօք ՚ի վերայ երկրի, պատրաստէ քեզ յերկինս պսակ անապական, զոր մաղթեմ բարեպաշտութեան քումդ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն:

ՀՕՐՆ ՊՈՒՐՏԱԼՈՒԻ

Ի ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ԿՈՒՍԻՆ

Մարիամ մանն բարի ընտրեաց, որ ոչ բարձցի ՚ի նմանէ:

Ղ~Է. ՃԻ. 42:

Զայս պանծալի վկայութիւն ետ վասն Մարիամայ քեռ Մարթայի Փրկիչն մեր, Որդին Աստուծոյ. այսպէս հաճեցաւ ընդ գործ նորա, և գովեաց՝ զի կայր նա ՚ի լուր բանից իւրոց, մինչդեռ Մարթա ՚ի սպասու կայր և փութայր ծառայել նմա: Պարտ է ասել՝ զի այս բան Աւետարանին առեալ ՚ի տօնս յայս՝ զոր կատարեմք, քաջ բացատրէ զնկարագիր Մարիամայ մերոյ Փրկչին մերոյ. զի ընտրեաց յամենայնի զման արդարև բարի: Ա~ ՚ի խելամուտ առնել զձեզ այսմ, շատ է ինձ անցանել ընդ ամենայն խորհուրդս՝ որ կատարեցան յանձին անհամեմատ Կուսին, և ցուցանել զանբաւ առաւելութիւնս չնորհաց և փառաց, որ ամբարձին զնա գեր ՚ի վերոյ քան զամենայն արդարս և ընտրեալս յԱստուծոյ: Այլ ես զկայ առնուամ ՚ի խորհուրդ ևեթ վերափոխման նորա: Զի այս վեհ և վսեմ աստիճան փառաց, յորում է տեսանել զնա այսօր, այս անմահութեան պսակ՝ զոր ընդունի այսօր ՚ի ձեռանէ Որդւոյ իւրոյ, այս երանութիւն՝ զոր ժառան-

դէ 'ի յաւիտենական վարձ գերահրաշ առաքինութեանց իւրոց, է լուծանի, ոչ միայն ամենայն հնորհաց՝ որովք լինէր, այլ և ամենայն արժանեաց՝ զորս ստացաւ, և զորոց կարէմք ասել՝ Թէ գերագոյն օրինակաւ և ըստ առաւելագանցութեան. Ընդբեաց նա վասն բարի, որ ոչ բաշխէ 'ի նմանէ: Մասն երջանիկ, զորմէ առաջի կայ լինձ առնել տեսութիւնս, և որուամ պարտ է մեզ ամենեցուն մտագիր լինել, եթէ կցէ 'ի մեզ զգացողութիւն կրօնից, որ ինչ տեսիլ յաղթանակի Տիրամօրն աղդէ 'ի սիրտս մեր: Վերափոխումն իւր՝ է ըստ գերազանցութեան խորհուրդ վասնց նորա. այլ եթէ գիտասցուք մեք պատշաճել զայն 'ի մեզ և յօգուտ 'ի կիր առնուլ, ոչ ինչ ընդհատ լինիցի այն յոսոյ մերոյ խորհուրդ: Ահա է ահա, զոր առնումք ցուցանել ձեզ, խնդրելով լոյս մտաց 'ի Հոգւոյն սրբոյ՝ բացութեամբ Տիրամօրն. Ողջոյն ձեզ:

Յոսով կեայ արդարն և հաւատով. 'ի վերայ յոսոյ և հաւատոյ հաստատեալ կայ բովանդակ քրիստոնէական կառարելութիւն, որոյ լծումն է սէր: Ի ձեռն յոսոյ և հաւատոյ վերանամք մեք առ Աստուած, խնդրեմք զԱստուած, և գտանեմք զարքայութիւնն Աստուծոյ: Ըստ այսմ յորժամ ասեմ՝ Թէ սերկեանս խորհուրդ է մի 'ի խորհրդոց յոսոյ մերոյ, կամիմ տալ ձեզ զայնմանէ լմասաս բարձրագոյնս քան զամենայն տեսութիւնս մտաց 'ի մխիթարութիւն ձեր և 'ի վինութիւն: Լուսաբուք ինձ, և լինիցիք խելամուտ: Այլ առ 'ի կարգաւ յառաջ մատչել, չէն ինձ կամք խորամուխ լինել յերանութիւն և 'ի փառս՝ յորում Տիրուհին հրեշտակաց վարկէ յերկինս. զի որպէս սուրբն Բեռնարդոս ասէ, եթէ աչն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, որ ինչ պատրաստեալ է Աստուած կրաւսերաց գունին յընտրելոց իւրոց, ո՞ապա կարասցէ ըմբռնել և մտնանգիտ պատմել որ ինչ պատրաստեալ է կատարելագունին և սրբագունին քան զամենայն կուսանս: Ոչ

կարելով ապա ձանաչել զինաւս կուսին յերանութեան իւրում, չատ համարիմ հետազօտել զպատճառս և զարգասիս նորին. զպատճառս 'ի կողմանէ Կուսին, և զարգասիս վասն մեր, որք որպէս մանկունք և պաշտօնեայք նորին՝ պարտիմք հաղորդս այնոցիկ լինել: Ի հետազօտել զպատճառս փառաց Կուսին 'ի կողմանէ իւրմէ, գտանեմ 'ի նմա զմի 'ի հզօրագոյն յորդորանաց յոսոյ մերոյ. և 'ի հետազօտել զարգասիս նորա վասն մեր, գտանեմ 'ի նմա զհաստատագոյն նեցուկ յոսոյ մերոյ: Մնա դնել խընդրեմ մտածութեանս խմամ:

Զնք երկբայել՝ զի Մարիամ 'ի վերափոխել իւրում ընկալաւ յԱստուածոյ կրկին լուսութիւն. լուսութիւն երանութեան, և լուսութիւն իշխանութեան. զմին վասն իւր, զմիսն վասն այնոցիկ՝ որ կարդան առնա: Արդ երանութիւն նորա, կամ մանաւանդ պատճառք և աղբիւր երանութեան նորա, պարսին յորդորել զոյս մեր. և իշխանութիւն նորա Տերամբ պարսի հաստատել զոյս մեր: Մարթ էր լինձ չատ համարել զայսվայր. այլ զի չնք լինչ դիւրահասք քան զոյս, ևս և քրիստոնէական, և չնք լինչ բաշմավաստակ յերկնընթաց ձանապարհի՝ քան զերծանել առաքինութեամբս, յաւելում յերկոսին յայսոսիկ ձըշմարտութիւնս տեսութիւն լինչ՝ որ Թուի լինձ կարևոր յոյժ, և աղաչեմ զձեզ՝ մի անտես առնել զայն. և այս է՝ զոր խորհուրդ ծանիս, 'ի յորդորելն և 'ի հաստատել զոյս մեր, խրատ մեզ ունել 'ի կարգի, և մի զերծանիլ նովաս: Խրատ՝ յորում բովանդակեմ զայս ձառ, առ 'ի յաղթահարել զերկուս թանձր մոլորութիւնս՝ յորս անկանիմք սովորաբար 'ի մասին փառաց Կուսին. մին հայի 'ի գնացս, որովք ամբարձաւ նա յայնպիսի փառս, և միսն յարգասիս՝ զորս պարտ է մեզ ընդունել անտի: Զի փոխանակ գնացիցին, որովք եվ նա յայն ծայր բարձրութեան փառաց, հնարիմք մեք այլս ամենևին չիսկանացն. և զարգասիս, զորս պարտ է մեզ գտանել ան-

տի, այլս բոլորովին 'ի ստուգիցն խոստանամք մեզ: Կըր-
կին մոլորութիւնս ասեմ, ինասակարս յոյժ, յորոց դուն
գործեացուք պահել զանձինս մեր. և առ այս՝ ծանիցուք
նախ թէ զինչ եղեն պատճառք երանուելեան Կուսին. և
ապա թէ որպիսի առաւ նմա իշխանութիւն օգնելոյ
մեզ: Պատճառք երանութեան նորա քաջ 'ի միտ առեալ՝
պահեսցէ զմեզ յառաջին մոլորութենէն. և ընդարձա-
կութիւն իշխանութեան նորա քաջ իմացեալ՝ ամրացուս-
ցէ զմեզ յերկրորդէն: Այս է բովանդակութիւն առա-
ջարկութեանս խոյ. առ որ խնդրեմ զչնորհս մտադրու-
թեան ձերոյ:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Տեսանել 'ի վերափոխման Մարիամու՝ զյաղթանակ
կուսի, զպսակումն Թագուհւոյ, ամբառնալ արարածոյ
գեր 'ի վերոյ դասուց բնաւից հոգւոց երանելեաց, և գե-
րակայել 'ի ծայր փառաց. և միով բանիւ, զփառաւորել
մեր Աստուածոյ Աստուածորդւոյն իւրմէ՝ զոր ինքն յղա-
ցաւ և տարաւ 'ի մաքրական որովայնին, խոստովանիմ՝
զի մեծ իմն է, և անձառելի մարդկային չրթանց. և 'ի
նկատելն զայս ամենայն՝ արժան իսկ է գոչել. Ո՛վ խոր-
ութ՜ եղծողնեան: Թուի իմն այնպէս, զի սուրբ եկեղեցի զայս
նախ առաջի առնիցէ մեզ 'ի ծանիս, և մինչև ցայս վայր
սահմանիցին տեսութիւնք մեր զխորհրդոյս: Այլ եթէ
այսպէս իցէ, և պարտ իցէ մեզ աստանօր զկայ առնուլ,
որչափ և հրաշափառ Թուեսցի մեզ խորհուրդ ծանիս, իշ-
խեմ ասել՝ զի ոչ գոլք, և ոչ ես, հասու իմաստից սորա
գտանիցիմք լեալ, ո՛վ սիրելի ունկնդիրք. զի այս՝ վերա-
փոխման Տիրամօր պայծառութիւն եւեթ է և փառք:
Այլ հոգի հաւատոյ՝ որ թափ անցանէ 'ի խորս ներքինս,

և ըստ Առաքելոյն՝ Ինձ և ինծոյս Աստուծոյ, աստանօր
քօղախնդրեալ հոլանէ այլ ևս զարմանալիս: Եւ ահա
մի յայնցանէ, որ լինի ձեզ ոչ միայն 'ի հիացումն՝ այլ
և 'ի շինութիւն, և ազատեալ զմիտս ձեր 'ի պատրանաց՝
զարթուսցէ 'ի սրտի ձերում զեռանդն յուսոյ արդա-
րոյ: Ուշ դնել ազաչեմ:

Զինչ ուրեմն 'ի միտ առնում, և պարտ է ինձ 'ի միտ
առնուլ 'ի խորհրդոյս՝ զոր տօնախմբեմք: Փառաւորու-
թիւն Աստուածամօր, ոչ վասն այն եւեթ՝ զի էր մայր Աս-
տուծոյ, այլ զի եղև խոնարհ առաջի Աստուծոյ, այլ զի
ըստ խոնարհութեանն եղև առանձինն իմն օրինակաւ և
գերազանցաբար աղախին Աստուծոյ: Այս է՝ զոր ես
նկատեմ 'ի վերափոխման նորա էական և գլխաւոր կէտ,
յորում պարտ է մեզ զկայ առնուլ. և այս է համառօ-
տիւ բովանդակութիւն այսր առաջին մասին ճառիս:
Զարմանայցէք թերևս, և ծանրանայցէք 'ի հաւատալ,
զի որ ամբարձն զՄարիամ յանհասանելի փառն՝ զոր
ժառանգէ այսօր յերկինս, չիցէ առաւելապէս գերա-
զանցութիւն չնորհաց աստուածամայրութեան նորա
յերկրի: Զի ո՞ր այլ առաւելութիւն կարէր տալ նմա
զփառս մտանելոյ որպէս դշխոյ յարքունիս որդւոյ իւրոյ
քան զլինել մայր նորա. և եթէ մնայր չնորհաց առ 'ի
նմանէ, ի՞ պարտ էր իւր մնալ՝ եթէ ոչ աստուածա-
մայրութեամբն: Սակայն, ո՛ հաւատացեալք, մասն է
հաւատոյ՝ զի մայրութիւնդ այդ, թէպէտ և աստուա-
ծային, չէ յատկապէս և ճշդիւ այն՝ որ ամբարձ զնա
այսօր յայն փառս. զի այսպէս Փրկիչն մեր իւրով բե-
րանով ետ պատգամ, և է անժխտելի. լուեալ իցէ ձեր
քաղցր անգամ, այլ Թերևս ոչ ըստ բաւականին հե-
լամուտ լեալ. լուարուք ապա, և անմոռաց յուշի կա-
պեցէք: Գիտէք իսկ որպէս կինն այն, զորմէ խօսի սուրբն
Ղուկաս Աւետարանին, աղքեալ յաւուր միում 'ի Հո-
գւոյն 'ի պատիւ Քրիստոսի աղաղակէը. Երանի որ-
վայ-

նին՝ որ էրեայն ղ֊էնդ, և սրբանցն՝ որ գիներսոլին ղ֊էդ: Համարձակ և նա որպէս զմեզ, զի երանութիւն Մարիամու հաստատեալ լցէ՛ի լինել նորա մայր մարմնացելոյն Աստուծոյ: Այլ գիտէք եւ՝ որպէս Քրիստոս ելոյծ զպատրանս նորա հրաշալի պատասխանեաւն: Ոչ, ոչ բարեաւք խորհիս դու զայդ. որ ծնաւն զնա, և կրեաց յարգանդի, ոչ վասն այդորիկ է երանելի. ոչ ջափ և ոչ պատճառ երանութեան նորա այդ է իսկապէս. առատաձեռ օրհնութիւնք՝ զորս կանխեաց ետ նմա Աստուած, և որովք կատարեսցէ յաւուր միում ընուել զնա, բոլորովին յայլմ աղբերէ յառաջ գան: Մինա դիք արդ, ո հաւատացեալք, զի յոր ինչ Աստուածորգին կացուցանէը զերանութիւն Մարիամու, այն է որ արարն և որ առնէ արդ յերկինս զիաուս նորա: Քանզի փառք արարածոյ և երանութիւն իւր առաջի Աստուծոյ, է մի ինչ: Մարիամ՛ի միաս Քրիստոսի ոչ յատկապէս վասն մայրութեանն էր երանելի, ապա և ոչ յատկապէս վասն այն է փառաւորեալ: Քաջայայտ է կարգ բանիս ըստ ամենայն կանոնաց աստուածաբանութեան, և հաւատոյ իսկ վարդապետութեան: Ի՞նչ ապա Տիրամայրն այսքան փառօք գեբակալի յերկինս.— ուսարուք զայն՛ի Քրիստոսէ, որ գիտաց յայտնել մեզ զայն: Ուսարուք զայն և՛ի Կուսէն, որ յանձին իւրում զփորձ իրացն էառ, և զկատարումն նոցին ետես: Դիք՛ի միասին զերկուսին զայսոսիկ վկայութիւնս, և ընկալարուք խրատս կրկին վասն գնայցէ ձերոյ: Ոչ ինչ առաւել քան զայսոսիկ ասացէ ձեզ առնուզ զձառակ չնորհացն՝ զոր կոչեմ յայս քրիստոնէականն, և ոչ ինչ՝ որ աւաւել ազդեսցէ՛ի ձեզ եռանդն նախանձու՛ի սրբութիւն:

Ա.հաւասիկ վկայութիւնն Քրիստոսի. յայտ առնէը՛ի հանրական պատասխանւոյն՝ զոր ածի արդ՛ի մէջ, յորում առաւել ևս խնամայր զմայր իւր, զի զնմանէ էին բանքն, յայտ առնէը՝ զի երանութիւն Մարիամու յա-

ւաջ գայը անտի միայն, զի հաւատարիմ էր առ Աստուած, և հնազանդ բանից նորա. Նա՝ էրանի այնորիկ է, որ լէն զքանն Աստուծոյ և առնէն զնա: Այս պատգամ է աստուածային խնամատութեան, յայտնի ըստ նկարագրին, և յայսմ առաւելապէս արժան է հաստատել զվոլատնուրեթիւն Կուսին՝ զոր պատուիրք: Լսել նորա և պահել անթերի որ ինչ վասն նորա էր բան Աստուծոյ, պատուէր Աստուծոյ, և հաճոյք Աստուծոյ. այս ինքն հետևել ամենայն չարժմանց չնորհացն՝ որ ներգործէրն՛ի նմա, առանց ամենևին հակառակ կալոյ, կատարելով հանապազ զազդեցութիւնն ընկալեալս յԱստուծոյ. ընուել ամենայն հաւատարմութեամբ զամենայն խորհուրդս՝ զոր տահմանեալ էր Աստուած վասն նորա. չխոտորել երբեք՛ի ճանապարհաց, յորս առաջնորդէրն նմա աստուածահնամ տեսչութիւն. առնել իւր օրէնս զամենայն կամս Աստուծոյ՝ զՀաճոյն և զկատարեալ. ընծայել զանձն Աստուծոյ բոլորապատուղ՛ի գժուարագոյն նուէրս՛ի փորձ առաքինութեան. սրբել զկեանս իւր՛ի հանապազորդ կըրթանս հնազանդութեան. առնել զամենայն ինչ, ևս և գուշնաքեայ, պատուական առաջն Աստուծոյ՛ի ձեռն արժանաւոր հպատակութեան, և ոչ երբեք թերանալ յառաջին եռանդանէ և վայրկ մի, միչտ մտադիր այնմ՝ զոր Հոգին Աստուծոյ ազդէր՛ի նա, միչտ գործել զվան Աստուծոյ, միչտ միացեալ սրտիւ ընդ Աստուծոյ, միչտ հպատակ Աստուծոյ. այս ամենայն է, ասէ սուրբն Օգոստինոս, զոր պահեաց Աստուած և փառաւորեաց՛ի նմա. Փառաւորեաց զնա Տէր, զի զնմա Հօր էրոյ աչօք, և ոչ զի՛ի նմանէ ծնաւ: Այսպէս սուրբ վարդապետն բարբառի, որպէս Թէ ասէր. Մի խաբիք, եղբարք իմ, և մի չփոթիք զպարգեւս Աստուծոյ. ծնանել ըստ մարմնոյ զՔրիստն յաւիտենական, և անճառահրաշ աքանչելիօք լինել մայր արարչին իւրոյ, է պատիւ՝ զոր ընկալաւ Մարիամ յԱստուծոյ. այլ քաջ հչուել՝ ոչ է այս վաստակ,

զոր պարտ էր Աստուածոյ ըստ օրինաց արդարութեան վարձատրել ՚ի Մարիամ: ոչ դրուատեաց ՚ի նմա, բայց զոր արարն վասն իւր: Արդ որ ինչ եգիտն ՚ի նմա գովելի, այն էր միայն՝ որ առնէր նմա փառս առաջի իւր:

Այլ ոչ հաւատարմութիւն ևեթ Մարիամու եղև պատճառ երանութեան նորա և փառաց, որով Աստուած որպէս գոտեաւոր արդար փառաւորեաց զնա ՚ի վերա-փոխելն: Միւս այլ յառաքինութեանց նորա կալաւ անդ մասն. և որպէս ուսուցանեն մեզ հաւատաք, եղև խոնարհութիւն իւր: Խոնարհութիւն Մարիամու, դուէ սուրբն Ամբրոսիոս, որ ՚ի մարդեղութեան Բանին կարաց ձգել զԱստուած յերկինից ՚ի յերկիր, կարող եղև ամբառնալ ևս զսոսկ արարած ՚ի բարձունս երկնից: Զի լինել հաւատարիմ Աստուծոյ, և լինել հնազանդ բանից նորա՝ որպէս եղև Մարիամ, էր արդարև մեծ. այլ չլինէր այնպիսի, եթէ չէր նա լեալ և խոնարհ, և եթէ ՚ի գործել իւրում վասն Աստուծոյ զամենայն զոր առնէրն՝ չէր նորա յաւելեալ ՚ի լրումն արժանաւոր վաստակոյ՝ ընծայել անձին և ոչ ինչ: Վասն այսորիկ Աստուած, արդար և գերագոյն վարձահատոյց եղից զԿոյն անզուգական, ոչ միայն պարգևօք և չնորհօք, այլ և ամբաւելի փառօք՝ որոց արար զնա ժառանգաւոր. և զայս ինքն իսկ սուրբ Կոյսն, լի Հոգւով սրբով վկայէ հաստատութեամբ յայսելն. Զի հայեցաւ ՚ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ, վի՛ահա յայսհետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք: Այո՛, ասէ յօրհնեբդութեան անդ իւրում, որ ըստ սրբոյն Ամբրոսեայ եղև հիացութիւն իմն խոնարհութեան և չնորհապարտ գոհութեան: Այո՛, վասն այսորիկ կոչեցայց երանելի և ելից իսկ, զի հայեցաւ Աստուած ՚ի նուաստութիւն իմ: Եւ երբ ասէր նա զայս, յաւելու սուրբն Ամբրոսիոս.— յետ ողջունելոյ զնա հրեշտակապետին մայր Աստուծոյ, և յետ կալոյ Թագուհի երկնի և երկրի, կրելով յինքեան զԲանն Աստուած՝ որ բնակէրն ՚ի նմա մարմնապէս, և

սրտեռանդն խոստովանութեամբն այնուիկ նուաստութեան իւրոյ յայտ առնէր զխոնարհութիւն իւր: Զի հայեցաւ ՚ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. և վասն այսորիկ առաւելապէս երանեցայց: Զի ահա յայսհետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք: Վասն այսորիկ ամենակալն ցուցցէ յիս զամենայն մեծութիւն իւր. և որ խոնարհեցուցանէ զամբարտաւանս՝ հաճեսցի բարձրացուցանել զխոնարհութիւն իմ: Յանկամ յայտ առնել զայն ամենեցուն. որպէս զի օգտեսցին արդարք խոստովանութեամբս իմով, և գիտասցեն՝ զի խոնարհութիւն ևեթ ածէ ՚ի ձեմարիտ փառս: Զինչ է ասել խնկապէս վերափոխումն Կուսին. մի՛ շատասցուք ասել՝ Թէ է օր պսակման իւրոյ և յաղթանակի, այլ ասասցուք Թէ է օր պսակման և յաղթանակի խոնարհութեան իւրոյ. որով բացատրեմք զխորհուրդս՝ զորոյ կատարեմքս զտօն: Եւ այսու լաւ ևս կարեմք լուծանել զինդիրս, ոչ միայն տգէտ և աշխարհիկ մարդկան՝ այլ և հոգւոյ երկնայնոց, որոց վերափոխումն Կուսին եղև ՚ի զարմանս և ՚ի հիացումն: Պանդխտ և հրեշտակաց, ասէ սուրբն Բեռնարդոս, յափշտակեալ իմն ՚ի հիացումն՝ տեսանելով զհանդէս վերացման Կուսին, և զմայլեալ ընդ նորահրաշ տեսիլն, ՚ի դէպ էր հարցանել ընդ հարսնաւէրս. Ո՞վ է սա՝ որ ելեալ գայ յանապատէ էբրե՛ զպեղեն ծխոյ խնկեալ: Որոց մարթ էր տալ պատասխանի, որ ինչ Աւաքեաղն տայ ՚ի խօսել զհամբարձմանէ Աստուածորդւոյն. Որ են ո՞վ, երե՞ ու ո՞վ էվ նախ ՚ի ոտն բին կոմ երկրէ:

Յանկա՛ք գիտել՝ ո՞վ է որ ելանէ, և ընդէր ելանէ. գիտասջիք զի սա է սրբագոյնն և կատարեալագոյն քան զամենայն արարածս, սակայն կալաւ զանձն ՚ի վայր քան զամենայն աղախնայս Աստուծոյ, և ոչ ելանէ ՚ի վեր քան զամենեսին, բայց զի էջ խորին խոնարհութեամբն ՚ի խորս ոչընչութեան իւրոյ. Որ են ո՞վ է, երե՞ ու ո՞վ էվ նախ. մի՛ այլ ինչ խնդրէք պատճառս: Այն խոնարհու-

թիւն գերահրաշ, որ էր տիրուհի առաքինութեանցն Մա-
րիամու, այն ուրացումն անձին, յորոյ վերայ հիմնեաց
նա բովանդակ շէնուած սրբութեան իւրոյ, այն հրա-
ժարումն յամենայն ունայնութեանց աշխարհի, զոր 'ի
սկզբնաբոյս հասակէն ուխտեաց Աստուծոյ, այն կեանք
ծածկեալ՝ յոր կեայր առանձինն, այն խորշումն ևս և 'ի
կարի իրաւացի գովութեանց, մինչև խոտվել 'ի լուր մե-
ծարանաց բանից՝ զոր հրեշտակապետն 'ի դիմաց Աստու-
ծոյ բարբառէր, այն հրաշալի պատրաստութիւն 'ի խընդ-
րել յամենայնի զնուաստութիւն անձին, 'ի կամել երե-
ւել մեղաւոր՝ գոլով սուրբ ամենևին, 'ի բերել յանձին
զձգտունս ապաշխարողի՝ ոչ երբեք կորուսեալ զանմեղու-
թիւն, 'ի սրբել զանձն որպէս զայլ կանայս՝ գոլով գե-
րամաքուր, 'ի մտանել ընդ օրինօք՝ գեր 'ի վերոյ գոլով
ամենայն օրինաց, այն տեսութիւն ոչընչութեան իւրոյ՝ որ
'ի բարձր կացորդութեանն ընդ Աստուծոյ, էր իբր հակա-
կշիռ շնորհաց՝ զորս ընդունէրն 'ի նմանէ, այն փոյթ փա-
ռաւորելոյ զՏէրը ըստ գործելոյ Տեառն 'ի նմա զմեծա-
մեծ սքանչելիս, և այն խոնարհութիւն՝ որ էր երբեք ե-
րևեալ յերկրի, և որոյ ինքն էր միակ օրինակ, այս ինքն
խոնարհութիւն կցորդեալ ընդ լուութեան շնորհաց, կը-
ցորդեալ ընդ լուութեան արժանեաց, կցորդեալ ընդ
լուութեան փառաց, այսոքիկ են՝ զորս մեծարեաց Աս-
տուած 'ի նմա, այսոքիկ են՝ վասն որոյ ամբարձ զՄա-
րիամ յայն ծագ մեծութեան. Զի հայեցաւ 'ի խոնարհութիւն
աղախնոյ իւրոյ, ւի ահա յայսմհետէ երանելոցեն ինչ ազգք։

Ասեցէք գարձեալ՝ զի Փրկիչն մեր, որպէս գրեալ է
յԱւետարանին, ընկալեալ էր 'ի Հօրէ իշխանութիւն դա-
տաստան առնելոյ, վասն որոյ և վարձատրելոյ· սրդ 'ի
պսակել և յերանաւետել զկոյսն՝ ոչ ակն էած 'ի նմա-
նէ, զի մայր իւր էր, ոչ հասոյց ինչ ըստ գործովանացն՝
զոր ունէր առ նա, և զոր պահեաց 'ի սպառ։ — Ոչ ա-
մենևին, ասէն Հարք. և պատճառք՝ զոր ածէն անժխտե-

լի են· զի Փրկիչն մեր 'ի պսակելն և յերանաւետել ըզ-
Կոյսն՝ ոչ որպէս որդի նորա դառեր, այլ որպէս Ա-
ստուած և գերագոյն դատաւոր· արդ յամենայնի՝ որ կից էր
աստուածային իրաւանց և իշխանութեան, վարեցաւ օրի-
նօք ևէթ՝ առանց ակնառութեան մարմնոյ և արեան։ Ըստ
այսմ 'ի հարսանիսն Կանայ, յորժամ խնդրեաց Կոյսն 'ի
նմանէ առնել սքանչելիս, քաջ 'ի բաց 'ի զինջանելոյ վասն
նորա՝ խոսիս լեալ Թուէր վարել ընդ նմա յասելն, զի
չայնպիսի աստուածային գործս չկայր ինչ իւր ընդ նմա·
Զի՞ կայ իմ և ձո, կին դոս։ Ըստ այսմ և 'ի լինել ամաց երկո-
տասանից՝ յորժամ մեկնեալ 'ի մօրէն 'ի տաճարին, ուր
չետ երից աւուրց եգիտ զնա մայրն 'ի մէջ վարդապե-
տաց, ոչ միայն չեցոյց ինչ կարեկցութիւն ընդ վիշտս
մօրն վասն կորստեանն, այլ և սաստանէր լեալ զնա, և
դժուարել Թուէր, պարտ համարելով մօրն գիտել զպա-
տպել իւր 'ի սպասաւորութիւն Հօր իւրոյ երկնաւորի։
Զի՞ նդրեիք ինձ, ոչ գիտէիք եթէ 'ի պան Հօր իմոյ պարտ էր ինչ
լինել։ Ըստ այսմ և 'ի գալ սրբոյ Կուսին 'ի միւսմ աւուրց
խօսել ընդ նմա, մինչդեռ լինքն աւետարանէր Ժողովրդ-
գեան զարքայութիւնն Աստուծոյ, յասել ուրուն՝ Թէ
Ահա մայր ձո, մայր իւր և եղբարս յայտ արար զայնոսիկ,
որ առնէին զկամս Հօր իւրոյ· Ո՞վ է իմ մայր, կամ ո՞վ են իմ
եղբարք· որ առնիցէ զկամս Հօր իմոյ՝ որ յերկինսն է, նա է իմ եղբայր և
քոյր և մայր։ Ըստ այսմ և 'ի խաչին 'ի նուիրելն Աստուծոյ
պատարագ որպէս քահանայապետ 'ի փրկութիւն մարդ-
կան, կամելով յանձնել մօր իւրում զմի յաշակերտաց
իւրոց, ոչ մեծարեաց զնա՝ տալով նմա զանուն մայրենի,
այլ ասէր· Կին դոս, ահա որդի ձո։ Արդ եթէ այսպէս վա-
րեցաւ ընդ նմա մինչդեռ 'ի մտհկանացու կեանս էր՝ հպա-
տակ մօրն, որչափ ևս առաւել, ասէ սուրբն Ոսկեբերան,
պարտ էր նմա վարել նոյնպէս յորժամ նստեալ ընդ աջ-
մէ Հօր առնէր իրաւունս Մարիամու, և տայր նմա 'ի ժա-
ռանգութիւն զփառս՝ որ պահեալ էր նմա։ Զի անդ, որ-

պէս ասացի, սահմանէր տիրաբար և աստուածապէս, և ոչ որպէս մարդ. ինքնին իսկ զայն յայտ արար՝ զի որպէս մարդ չկարէր ինչ յաւէնի անդ ընդհարձել ինչ իբրոյն. Նոքաոյանել ընդ աջմէ և ընդ ահեղէ խմբէ՝ ու է իմ փաւ: Ասպա ուրեմն հայեցաւ նա յարժանիս Մարիամու, և ոչ՝ի մեծարանաց անուանս նորա, և մինչև՝ի սահմանել զվարձս Հուսոյն և՝ի պսակելն զնա՝ երբեր յանձին զիտաւորեալ դէմս, զոր ընծայեն նմա սուրբ գիրք, զանաչառ դատաւորի, և զարդար վարձատուի ամենեցուն ըստ իւրաքանչիւր գործոց. Զի ու գոյ պինաուրինեն աուչէ Աստուծոյ: Այսպէս իմաստասիրէ սուրբն Ոսկեբերան, հաստատեալ յօրէնս նախասահմանութեանն Աստուծոյ:

Սակայն յաւելից ինչ, սիրելի ունկնդիրք, որ քաղցրացուցանէ միանգամայն և հաստատէ զշնմարտութիւնս զայս, զորմէ են բանքս: Առանց ինչ ամփոփելոյ զօրէնս այսր անաչառ արդարութեան, Որդին Աստուծոյ,՝ի վերուն որպէս գերագոյն Տէր և որպէս Աստուած՝ արար սրբոյ Հուսոյն ըստ այլոցն մասին զմեծարանս, որոյ օրէն էր նմա անկ ունել որպէս Աստուածամայր: Զի առանց ինչ սահանելոյ աստուածային վճռոց, որոց կցորդ էնախասահմանութիւն մարդոյ, առաւելութիւն Մարիամու որպէս մօր Աստուածորդւոյ՝ յաւել զերանութիւն նորա: Պարզեցից զբանս իմ. յորմէմ մասին Որդին Աստուծոյ որպէս գերագոյն Տէր արար ինչ խորութիւն Հուսոյն, և մեծարեաց զնա որպէս մայր իւր: — Յայնմ, զի պատրաստեաց ըստ այսմ տեսութեան շնորհս առանձնականս, անսովոր և առաւաղելի, որոց ինքն հաւատարմութեամբ իւրով եւս լծուն, և արար իւր նոքօք այնքան վաստակս արժանաւորս, զորոց զվարձան ընկալաւ: Եւ յորմէմ մասին առաւելութիւն աստուածամայրութեան Հուսոյն յաւել զերանութիւն նորա. — յայնմ, զի աստուածամայրութիւն յաւել զայրգ խոնարհութեանն նորա, որ հանդերձեալն էր լինել հիմն բարձրութեան նորա: Սակայն առաջարկեալս յինէն խնդիր կայ և ճնայ անյապաղ, զի մերձաւոր պատճառ երանութեան Հուսոյն չէ՞զ ձգտիւ աստուածամայրութիւն, այլ հաւատարմութիւն իւր, և խոնարհութիւն: Ճշմարտութիւն այսպիսի հաստատուն... (այլ ներեա ինձ սուրբ Կոյս հարցանել ինչ ասա, որ և այն յանկի՝ի փառս քո. զի առաւել ևս ածէ՝ի լոյս զգերագոյն արդարութիւն գատաստանին Աստուծոյ՝ ՝ի կացուցանելն զքեզ դէմոյ՝ի վերափոխման քումմ, և զանկշռելի արժանիս կատարեալ գործակցութեան քո ընծորհացն Աստուծոյ): Ճշմարտութիւն այնպիսի հաստատուն, զի եթէ սուրբ Կոյն չէա յաղթեան Բանին Աստուծոյ չէր լեալ նմա հնազանդ, և մանայր զինքն մինչև լինել անձնահաճոյ և յանձնապատան, թէպէտ և Աստուածամայր՝ ոչ ժառանգէր զերանութիւն և զփառս, յոր եհաս: Եւ ընդէր. — զի ընդհրաշափառ աստուածամայրութեանն ոչ գտանէր՝ի նմա Աստուած զդիտմ ընտրելոց իւրոց, զարդարութիւն և զսրբութիւն: Եւ ընդ հակառակն՝ եթէ Մարիամ առանց յաղանալոյ զԱստուածորգին էր կամ կարէր լինել նոյնպէս հնազանդ և խոնարհ որպէս եղևն, այնպէս կատարեալ յաւաքինութեան և այնպէս լի արժանաւոր վաստակով, իշխեմ ասել՝ զի առանց իսկ աստուածամայրութեան ամբառնայր՝ի նոյն փառս, և նոյնպէս մերձ յաթոռն Աստուծոյ:

Այս է, ով հաւատացեալք, կոչեցեալն յինէն պատճառ և յորդոր յուսոյ մերոյ: Զի եթէ Մարիամ վասն գոլոյ նէթ մայր Փրկչին հասեալ էր յայս փառս, պարտ էր մեզ պատուել զնա և մեծարել, և կատարել պատակառանօք և կրօնիւք մեծահանդէս զօր յաղթանակի նորա, այլ յամենայնի յայսմիկ չգտանէր ինչ՝ որ արծարծանէր՝ի մեզ զոյս. թէպէտ և լինէր մեզ հրաշանալ ընդ Կոյսն վասն ամբառնալոյ նորա յերկինս, այլ չէր մեզ յուսալ եղանելոյ անդր զհետ նորա. և իզձք իսկ, որ ծնանէին՝ի

սիրտս մեր առ այն, լինելին ոչ միայն ցնորականք և անո-
ւնք, այլ և յանդգնունք: Այլ ՚ի խորհել մեր, զի ուզին՝
ընդ որ եղ նա՝ բաց ե և մեզ, և յածել զմտաս՝ զի գնացք,
որ ածին զնա յերանելութիւնն վերին, նոյն այն են՝ զորս
ցուցանէ մեզ Աստուած առ ՚ի հաստանել անդր, յորժամ
մոածեմք՝ զի Մարիամ եմուտ յուրախութիւն Տեառն
իւրոյ այնու բանիւ, որ ոչ ինչ ընդհատ հայի և ՚ի մեզ,
Այնչ ձառայ բարի ե հաւատարիմ, մնա յուրախութիւն Տեառն
ս, յորժամ յուշ ածեմք՝ զի օրէնք, որովք Աստուած
երաւ առնելով բարձրացոյց զկամաւոր խոնարհութիւն
Կուսին՝ ոչ էին վասն նորա առանձինն, այլ օրէնք հան-
րականք վասն ամենեցուն. Ամենայն, որ խոնարհեցուցանէ
զանձն, բարձրասցի, յորժամ ասեմք անձամբ ցանձինս մեր՝ զի
ամենայն իրաւունք Մարիամու ՚ի փառս, որովք լցեալն
է, կարեն համեմատաբար և պարտին պատկանել և ինձ՝
եթէ օրինակաւ նորա օգտեցայց, ոհ հաւատացեալք, ընդ-
արձակին սիրտք մեր, և իրարանութեամբ եզանել զեր ՚ի վե-
րոյ երկրաւորացս, և սկսանիմք ՚ի միտ առնուլ զգալն
օրինակաւ, ոչ միայն զունայնութիւն ամենայն փառաց
աշխարհի, ոչ միայն զանպիտանութիւն առաքինութեանց
իսկ սոսկապէս մարդկայնոց՝ յորս են վաստակք և կատա-
րելութիւնք իմաստնոց աշխարհի, այլ որ կարևորագոյնն
է ինձ գիտել՝ զանբաւականութիւն բարեմասնութեանց
ինչ՝ ևս և գերբնականաց, որովք Թերևս խաբիմք, և հաս-
տատեմք ՚ի նոսա զսուտ վստահութիւն մեր յԱստուած:
Այդ հասու եղեալ կուրութեան մերոյ և մոլորութեան
՚ի խորհրդեանս յայսմիկ, յորում լայս հաւատոյ պայծա-
ռացուցանէ զմիտս մեր, խրատիմք, ուղղեմք զանձինս
մեր, քաջալերիմք, կշտամբեմք զդաղջութիւն մեր, ող-
բամք զթուլութիւն մեր, հրաժարեմք յամբարտաւանու-
թենէ, ապաստանիմք ՚ի խոնարհութիւն՝ որ է առաքի-
նութիւն նախատահմանելոց, և այս ամենայն յաջողէ ՚ի
մեզ արծարծմամբ քրիստոնէական յուսոյ՝ զոր ազդէ ՚ի

մեզ սերկեանս ոճն: Եւ այսոքիկ են արգասիք օրհնու-
թեան և սրբութեան, որ ՚ի խորհրդեանս յայսմիկ Հո-
գւոյն Աստուծոյ բանդակին:

Այո՛, սիրելի ունկնդիրք, քաջալերեալ յուսով
այսուիկ՝ որով արդարն կեայ, և մեղաւորն զօրանայ, մա-
ւանամ ըստ խրատուս Առաքելոյն զերկրաւորս, և զերկ-
նիս խնդրեմ, ուր Թագուհին կուսանաց բազմի, ոչ որ-
պէս Աստուածորդին ընդ աջմէ Հօր, այլ յետ Աստուծոյ
անընդմիջ, և գեր ՚ի վերոյ ամենայնի՝ որ չէ Աստուած. և
խրախուսեալ ՚ի յուսոյ ասեմ՝ առնում զձաշակ երկնա-
ւոր բարեաց, ցանկամ այնոցիկ և հառաչեմ, և վառեալ
սուրբ նախանձու՝ յաւելում ՚ի ձիգն զհետ շաւղաց Մա-
րիամու, հասանել ՚ի նոյն կէտ: Զի այսոքիկ են խրատք,
զորս տամ անձին՝ ուսնելով զնա առաջի աչաց յօրինակ.
կարեմ ուրեմն և ես ըստ չափու ընդունիմ
յԱստուածոյ՝ լինել հաւատարիմ առ Աստուած, որպէս
նա եղեւ. կարեմ ըստ չափու խորհրդոցն Աստուծոյ ՚ի
վերայ իմ՝ ընդուել զպատուիրանս իւր, որպէս եղեւ Մա-
րիամ. կարեմ լսել բանիցն Աստուծոյ ազդելոյ ինձ՝ նո-
ւիրն հոգւով և հլութեամբ, որպէս լուաւն Մարիամ. կա-
րեմ հնազանդել նեղութեան ազդեցութեանց նուիրն պատ-
րաստութեամբն Մարիամու: Եւ թեպէտ չիցեմ սահմա-
նեալ առ մեծամեծս՝ որպէս Մարիամ, կարեմ ըստ օրինա-
կի նորա սրբել զգործս իմ, զզբաղմունս, և զախորժակս,
որպէս զի կարացից ըստ օրինակի նորա ասել ՚ի մտիս.
Զբարուք պաթերազմի պաթերազմեցայ, զընթացան կատարեցի, զհա-
ւատան պահեցի, այսուհետև կայ ե ինձ քնչ արդարութեան պսակ:
Զեռ ինձ Աստուած զքանքարս, զոր ետ Մարիամու. այլ
հաստատեաց ինձ յԱւետարանի, զի չատ լինի ինձ լինել
հաւատարիմ ՚ի սակաւուն առ ընդունելոյ զբազումն.
Որովհետև ՚ի սակաւուն եղեր հաւատարիմ, ՚ի վերայ բազմաց կացու-
ցից զքեզ: Ոչ կարեմ հաւատարել Մարիամու, քաւ լինի,
և ոչ լինել երբեք զնա ձոխ ՚ի վաստակս. այլ կարեմ խո-

նարհել որպէս զինքն. և այն զի անարժանութեան իմում առ նովաս, մարթ է և պարտ լինել ընդունակ խորագոյն ևս խոնարհութեան: Մեղաւոր եմ, բայց կարեմ փոխանորինել ապաշխարութեամբ՝ որ ինչ կորուսի ընդ անմեղութեան: Եթէ չեմ ինչ յաշխարհի, կարեմ սիրել ըստ օրինակին Մարիամու զկենցաղ մերին և ծածկեալ Աստուած. իսկ եթէ իցէ ինձ առաւելութիւն ինչ յաշխարհի, կարեմ հանդոյն նմին՝ ի կիր արկանել զայն ի պաշտօն Աստուծոյ: Այս է ահա, որ զօրացուցանէ զսոյս իմ: Այլ և ոչ ասա զի այ առնու:

Զի այս փառք Մարիամու, հաստատեալ ի վերայ խոնարհութեան իւրոյ, և հաւատարմութեան առ ընորհս Փրկչին, խրատէ զնս ընդ հակառակին՝ որ ինչ պարտ իցէ ինձ խորհել զայլմ ամենայնէ, և որում իմիք ակն ունել անտի: Զի նովաս ուսանիմ սուրբ իմն արհամարհանս ամենայնի՝ որ կոչի պատիւ և բարձրութիւն ըստ աշխարհի. անտի մեծութիւն, ընդ որ ոչ հաճի Աստուած, և հանապազոր յամօթ առնէ զայն, զի է այն գրեթէ միշտ արգասիք կամ պատճառք անիրաւութեան, փոխանակ զի մեծութիւն Մարիամու եղև պարզապէս և միայն վարձ սրբութեան: Նովաս ի միա առնումն զակարութիւն կամ մանաւանդ զոչընչութիւն յոգունց այնքան աշխարհական առաքինութեանց՝ որովք պարծին որդիք յաւիտենից և դովին, և որք չարժեն ինչ առ ի յաւիտենական փրկութիւն: Նովաս զերծանիմ ի բազմաւանգ և ի յաճախեալ մոլորութենէ՝ որպէս թէ Աստուած ի դատաստանի և յընտրութեան արգարոց խոսիր առնիցէ ընորհաց ինչ, որ այլով մասամբ թուին գոլ մեզ նպաստամատոյց. օրինակ իմն զի եմ քրիստոնեայ, և իբր քրիստոնեայ՝ եմ որդեգիր Աստուծոյ: Զի որպէս սուրբն Ոսկեբերան իմաստասիրէ, եթէ Աստուած ի փառաւորիչն զՄարիամ՝ ոչ հայեցաւ յաստուածամայրութիւն նորա, զոր վաստակութիւն կարիցեմ ես ունել յորդեգրութիւն

իմ, և զի գտանիմ այնուիկ ի թիւս որդւոց նորա: Կնիքս այս որդիութեան՝ զոր ընկալայ ի սուրբ աւազանէն, եթէ չուենիցի իւր կցորդ զսրբութիւն վարուց, ստիպեցէ զԱստուած թողուլ ի բաց զիրաւունս արգարութեան իւրոյ, զոր և աստուածամայրութեան խնկելի չկարեր ստիպել. և բարեբաստութիւն քրիստոնէութեան իմոյ, և զի ընդունիմ զՔրիստոս ի սուրբ խորհուրդս, կարասցէ տալ ինձ իրաւունս խնդրելոյ ի նմանէ հաղորդս առնել զիս փառաց իւրոց, ուր առանձնաշնորհ և անհամեմատ առաւելութիւն Մարիամու՝ որ ընկալաւ զնա որպէս մայր ի մաքուր արգանդի իւրում՝ ոչ բաւէր դասել զնա ի կարգ նախասահմանելոց:

Ոչ, ոչ, եղբարք իմ, յաւելու սուրբն Ոսկեբերան, ոչ ակն առնու Աստուած յամենայնէ ասաի. զի այս ամենայն են պարգևք իւր, զորոց համարս պահանջեսցէ ի մէնջ. են ընորհք և ձիրք, զորոց կշռամբեսցէ զչարաչար վարուն. են պարտիք, զորս պարտ է մեզ ընուլ. այլ այս ամենայն չեն վաստակք արժանաւորք առաջի Աստուծոյ, որոց կարիցեմք ակն ունել փոխարինացն: Հաւատարմութիւն և խոնարհութիւն, այսոքիկ են՝ որ դիցին յաւուր միում ի նժար կշռոյ: Արդար իսկ էր, Տէր իմ, այսմ այսպէս լինել. արդար իսկ էր՝ ըստ չափոյ հաւատարմութեան մերոյ առ քեզ լինել երանելի, և ըստ չափոյ խոնարհութեան մերոյ լինել առաջի քո մեծ: Յորմէ հետէ սահմանեցեր յերկինս աթոռս երկուս, մի վասն խոնարհութեան Որդւոյ քո մարդացելոյ, միւս ևս վասն խոնարհութեան աստուածամօր Կուսին, արժան էր՝ զի այլ ամենայն աթոռք, յորս հանդերձեալ էին բազմել ընտրեալք քո, կանգնէին ի վերայ նորին հիման, և չգոյր և ոչ մի՝ որոյ գլխաւոր խարիսխ չիցէ հաստատուն խորին և անկեղծ խոնարհութիւն սրտի: Քրիստոնեայ եմ ես, ասասցէ արդ աչխարհասէրն, խելամուտ լեալ և յորդորեալ ի վարդապետութենէ ասի, քրիս-

առնեայ եմ, և վասն այսորիկ խոստացոյն և դատեսցէ զնա Աստուած, և սասկիկ ևս դատապարտեսցէ և պատուհասակոծ արասցէ, եթէ անարգեալ զՀաւատս իմ և զանուն՝ զոր կրեմ, լինիցեմ անարժան քրիստոնեայ: Հարան եմ Քրիստոսի, ասասցէ երկիւղածն, այլ չէ ինձ պարտ յուսալ Թագաւորելոյ յաւուր միում ընդ այնմ՝ զոր ընտրեցի ինձ ՚ի փեսայ, եթէ ոչ ընդ հարանութեան կցորդեցայց զնոմանց և զՀաւատարմութիւն ազգիննոյ: Տէր, ո՞վ կացցէ ՚ի խորանի քում, կամ ո՞վ բնակիցէ ՚ի լերան սուրբ քո, հարցանէ Սաղմոսերգուն, և տայ պատասխանի. Որ գնայ ամբիծ, և գործէ զարդարութիւն. որոյ արգար են կեանք և անարատ. որ հնազանդի օրինաց քոց, և է անսգիւտ ՚ի գնացս իւր. որ հրաժարեալ յաշխարհէ, գնայ ընդ ճանապարհս պատուիրանաց քոց. որ հաւատարիմ առ Տնօրէն քո, կատարէ հանապազ զպարտս իւր և ընու զամենայն արդարութիւն: Զէ օրէն բառնալ ինչ ՚ի բաց ՚ի կանոնէ աստի. տեսաք ըստ այմ զպատճառս երանութեան Կուսին. տեսցուք արդ յերկրորդումն մասին, որպիսի էառ նմա Աստուած կարողութիւն օգնելոյ մեզ:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Հաւատաւ է՝ զի Մարիամ ՚ի մէջ ամենայն ընտրելոց ընկալաւ գեր ՚ի վերոյ քան զամենեսին Տնօրէնս, որով կարէ բարեխօսել վասն մեր առաջի Աստուծոյ. և ասել ըզհետ գայ հարկաւ՝ զի և մեք կարեմք դիմել առ նա սրբութեամբ յօգուտ մեր, և խնդրել զպաշտպանութիւն իւր ՚ի կարիս մեր: Այս ճշմարտութիւն, որ ըստ բաւականին յայտնեալ է յԱստուծոյ, և որում աւանդութիւն ամենայն վկայէ հաստատութեամբ, գտանի և համաձայն

հասարակաց մտաց և լուսոյ բանին. և այս ևեթ շատ է յամենի առնել զյամառութիւն մոլորելոցն՝ որք հերքեն զայս և ընդդիմամարտին: Զի եթէ հրեշտակք ևս երանելիք՝ որք կան միշտ առաջի Աստուծոյ, մատուցանեն նմա անդադար զաղօթս մեր, որպէս ուսանիմք ՚ի սուրբ գրոց, ընդէր սուրբ Կոյսն Թագուհին հրեշտակաց, չկարասցէ առնել վասն մեր զնոյն առաւելագոյն զօրութեամբ և արժանաւորութեամբ: Եւ եթէ կարէաք գիմել առ նա, մինչդեռ յերկրի աստ էր, զի բարեխօսեսցէ վասն մեր առ միածինն որդի իւր. այսինքն աղաչել զնա՝ զի ինդրեսցէ յԱստուածորդւոյն զնորհս վասն մեր, արդ զի յերկինս կայ, ընդէր չկարեցեմք: Թերևս ոչ ևս կամիցի գթալ ՚ի մեզ, կամ ոչ ևս կարասցէ օգնել մեզ. միթէ ոչ ևս գիտիցէ զկարիս մեր, կամ զի Թերևս կարգալով զնա յօգնութիւն՝ Թերի առնեմք զգերագոյն պաշտօնն պահել Աստուծոյ և Քրիստոսի: Ի չորեսին յայսոսիկ կէտս յանկին ամենայն պատճառանք մոլորելոց. միտ գնիք, և հերքեցից զայնոսիկ համառօտիւ:

Կարեցէ՞ իսկ ոք ածել զմտաւ՝ զի սուրբ Կոյսն ՚ի փառս իւր ոչ ևս կարեկիցէ լինի մեզ. սէր իւր՝ որ յոյժ առաւել է կատարեալ յերկինս, վասն որոյ և առաւել հրաբորբոք, կարիցէ ցրտանալ. և ընդէր սուրբ Կոյսն, որ վասն փառացն Աստուծոյ ՚ի վեր քան զամենայն ցանկալի փրկութեան մարդկան, ոչ ևս լինիցի նմա փոյթ՝ եթէ օրէն եղիցէ ինձ ասել՝ ՚ի փոխակերպիչն ՅԱստուած, և ՚ի միանալն ընդ նմա, որով պայծառացոյնս տեսանիցէ քանի պատուական է առաջի նորա փրկութիւն մարդկան: Ի բաց տար, ասէր սուրբն Կիպրիանոս զսրբոց առ հասարակ փառաւորելոց, զոր ես զսրբոյ Կուսէն ասեմ առանձինն. զի չէր նոցա ՚ի կեանս իւրեանց այնքան նախանձ վասն փրկութեան մերոյ, որպէս արդ. Ոչափ յապահովի կան ընդ իւրեանց երանութիւնն, այնչափ առաւել ցանկան ջերմութեամբ: Եւ սուրբն Բեռնարդոս յաւելու, զի հաւասար է ջան-

նաչէլոյ զսուրբ Կոյն՝ համարել, վի որ ըստ օրինակին Աստուածոյ սիրեաց զմարդիկ մինչև տալ վան նոցա զմիածծին որդի իւր, ՚ի ժառանգէլն զերանութիւն իւր՝ մուտ ցեալ և լքեալ ի՛ցէ զնոսա բոլորովին: Համարել դարձեալ՝ զի Կոյն Մարիամ հանդերձ այսպիսի սիրուին չկամբիցէ օգնել մեզ, անտեղի և ի՛ց: Որպէս նուազ ի՛ցէ նմա կարողութիւն յերկինս, ուր յետ Աստուածոյ կայ ՚ի բարձրագոյն տեղւոջ՝ քան յորժամ կայր ՚ի միջի մարդոյն, յայսմ աքսորանաց վայրի: Կարէր յայնժամ աղաչել զորդի իւր՝ զի արասցէ աքանչելիս, կարէր ընդունել ՚ի նմանէ զդեղափոխութիւն օրինաց բնութեան, զի բռնադատեալով նմա զկարգ նախախնամութեան՝ չըլնասցէ զջուր ՚ի գինի. եւ յորմէ հետէ ընկալաւ զպատկն անմահութեան՝ մի՛ թէ անկա՛ ՚ի զօրութենէ, և դադարեա՞ց ՚ի վարելոյ կարողութեամբն իւրով: Համարին մոլորեալք՝ զի ոչ ևս լսէ Կոյն աղօթից մերոց երբ և առ ինչ կարդամք առ նա. այլ այսմ յամառեալք ևեթ կամ խօթամիտք հաւատասցեն. զի որպէս անդիտանայցէ Կոյն զըկարիս մեր, ուր և հրեշտակք գիտեն զայն: Աստուած՝ որ յանձն արար ՚ի նոսա զինամս անձանց մերոց, յայտնէ նոցա և զկիրս մեր ներքինս, և կարգեալք ՚ի հսկել գնացից մերոց՝ քաջ գիտեն զգաղտնիս սրտից մերոց, ուրախանան ընդ գարձ մեր, և տօնեն յերկինս ըստ Աւետարանին՝ եթէ ոք ՚ի մեզաւորաց ապաշխարեսցէ յերկրի. և զնո՛րդ սուրբ Կոյն վեհագոյն քան զնոսա ՚ի փառս ոչ տեսանիցէ յԱստուած՝ որ լինչ նոքա տեսանեն: Իսկ զի կարդալով մերով առ սուրբ Կոյն անարգեսցի գերագոյն պաշտօնն՝ զոր առ Աստուած միայն և առ Փրկիչն մեր պարտ է մատուցանել, մոլորութիւն է ողորմելի, և ինքնին հերքելի: Զի ըստ աստուածաբանից՝ կարդամք մեք առ սուրբ Կոյն, իբր ոչ եթէ ընդ ձեռամբ նորա խցեն ընծրհք, և ինքն ըստ հաճոյս իւր բաշխիցէ զոյնս, կամ նմա անկ իցէ տալ մեզ ընծրհս. այլ զի կարող է

խնդրել զայն վասն մեր և ընդունել: Եւ ոչ կարդամք առնա, զի վասն վաստակոց իւրոց ընկալցի վասն մեր զընծրհս, այլ վասն վաստակոց Փրկչին մերոյ: Ուսեալք ՚ի բանից Աստուածորդւոյն որ ասէ. Եկայք առ իս. ոչ դիմեմք առ սուրբ Կոյն վասն իւր, այլ նովաւ առ Քրիստոս. որպէս ուսուցանեն մեզ հաւատք, զի նովաւ Քրիստոս եկն առ մեզ: Դիմեմք մեք առ Քրիստոս, որպէս առ միակ միջնորդ. այլ դիմեմք և առ սուրբ Կոյն, որպէս առ հզօրագոյն և առաջին ՚ի բարեխօսս մեր առաջի նորա:

Արդ զայս բարեխօսութիւն Տիրամօրն, զայս երաւունս կարգալոյ առ նա, զայս ժառանգութիւն՝ յորում եմք դիմելոյ առ նա, կամի սուրբ եկեղեցի՝ զի կալցուք որպէս զմի ՚ի հաստատուն յենարանաց յուսոյ մերոյ: Զի ասացէք լինձ, ո՛ հաւատացեալք, զինչ են՝ որովք ոկարանայ սովորաբար և սասանի յոյս մեր. — երկիւղ դատաստանին Աստուծոյ, և տեսութիւն մեզաց մերոց: Արդ զինչ գոանեմք յանձին Մարիամու, փաստաբան ամենազօր յետ գատաւորին մերոյ, և մայր ողորմութեան վասն մեղաւորաց. ներեցէք լինձ զի ՚ի չնութիւն ձեր և ՚ի քաջալերութիւն տաց ձեզ առնուլ զձաչակ իմասասիցս այսոցիկ: Այո՛, եղբարք իմ, ասեր սուրբն Բեռնարդոս, ոշնիմք զՄարիամ յերկինս բարեխօս վասն մեր առ որդին իւր միածին, որպէս ոշնիմք զՔրիստոս առ Հայր իւր երկնաւոր. և ո՞ յերկուասցի թէ գուցէ Մարիամ, մայր գատաւորին՝ որ տալոց է զվճիռս կենաց և մահու, մայր նորա սիրելի, մայր սուրբ, մայր պատկեալ փառաւք, ոչ լիցի լսելի. ո՞ յերկուասցի, թէ ՚ի բարեխօսել իւրում վասն մեր՝ ոչ լիցի մայրութեամբն ընդունելի: Ոչ զհետ գայ ասել՝ իբր թէ վերագոյն քան զորդին չնա գասիցեմք, որպէս թէ մայրութիւն տացէ նմա իւրաւունս պահանջելոյ յորդւոյն զթողութիւն մեզաց մերոց. քաւ մի լիցի, խորհել մեզ այսպէս: Եթէ երբէք առ յոյժ վատահութեան վազէր ընդ չտեսնուս մեր բան

ինչ այսպիսի անդր քան զարդար սահման, և ասէաք որ-
պէս իշխեմն ասել՝ զի Քրիստոս լուեալ աղաչանաց Կու-
սին հաճի՝ յերկինս իսկ հնազանդել ինն նմա երբև որդի,
և մեծարելով զնա որպէս մայր իւր, կուսակեաց մնալ-
լուեթեան չէր օրէն գայթակղել ընդ այն, որպէս և ոչ
ընդ նոյնպիսի բանս սուրբ գրոց· եթէ Թէ՝ ի կասել արե-
գական յընթացս իւր՝ կամեցեալ եցէ Աստուածոյ հնա-
զանդել մարդոյ, զի ասեն· Ե՞ռ երբէք եղեն այնպիսի օր՝ լսել
Աստուծոյ ձայնի մարդոյ: Նոյնպէս և յորժամ յաւելցու
Սաղմոսերգուն՝ զի Զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր, իբր
Թէ հնազանդելով նոցա: Այլ մեզ չէն իսկ պէտք այսմ
պաշտպանութեան· զի որ ինչ և ասեմք զկարողութենէ
Կուսին՝ բերեն յինքեանս զարգարութիւն իւրեանց,
ընդդէմ ամենայն սադաւանաց: Քանզի մեր բանք այն են,
զի սուրբ Կոյս աղաչէ զՔրիստոս, և ոչ Թէ հրամայէ
նմա· այլ յաւելումք, զի որ երբեմն հնազանդեր Կուսին,
լսէ նմա և արդ ամենայն մեծարանօք՝ զոր պահէ առ նա,
և պահեսցէ յաւիտեան· մեծարանք՝ որ հաստատեալն է
ի գերազանց վաստակս նորա արժանաւորս: Այրդ զար-
ձեալ ասեմ, զի յամառեալք ևեթ ի մոլորութիւնս
իւրեանց կարեն հակառակել այսմ ճշմարտութեան· զի
եթէ Տէր հրամայէր ի սուրբ գիրս՝ բարեկամացն Յոբայ,
դիմել առ ծառայ իւր Յովբ, զի աղաչեսցէ վասն նոցա,
որպէս զի քաւեսցին մեզք իւրեանց· Երկայ առ ծառայ
իմ Յովբ, և արասցէ աղօնս վասն ձեր· եթէ Մովսէս բարեխո-
սութեամբ իւրով խափանէր զաստուածասպան չանթիս
պատրաստեալս ի ձայթել ի վերայ խորայելացւոց,
Թոյլ փոթ ինչ, և բաքինեալ սրտմտութենէմ իմով ի նոսա ապա-
ջնջիլ ընդ առաջ եթէ Աստուած ի պատգամն իւր առ Երե-
միա՝ բարեխոսս հզօրս համարէր զՄովսէս և զՍամուէլ,
եթէ Յուդա Մակաբէ եւս զքահանայապետն Ոնիաս
չեա բազում ամաց մեռանելոյ նորա, զի աղօթիւք իւ-
րովք ցածուցանէր զբարկութիւն երկնից ի վերայ ամե-

նայն աղգին Հրէից, կարելիցեմք երկբայել՝ զի բարեխօսու-
թիւն սրբոյ Կուսին չիցէ խարխիս հաստատուն յուսոյ
մերոյ առ ի դիմել վստահութեամբ յաթոռ ընդրհաց և
ողորմութեան Աստուածոյ մերոյ: Բայց մեզք իմ արգե-
լուն, ասես, մեզաւոր եմ, ոչ իշխեմ դիմել առ Կոյսն,
և ոչ յուսամ ի նա: Այլ էգիտեցեմք, ասէ սուրբն Բեռ-
նարդոս, զի մի ի մեծութեանց նորա է լինել մայր մեզա-
ւորաց· էգիտեցեմք, զի յերազանաւոր իմն ամենայն փա-
ռաց նորա մեզաւորքս եմք պատճառք· զի արդարև եթէ
չէին մեզաւորք, չլինէր նա Աստուածամայր· և երանու-
թիւն իւր, մանաւանդ Թէ նախասահմանութիւն ի յա-
ւիտենից, ի թշուառութենէ մարդկան և ի մեզաւորաց
կալաւ պատճառս· և ինքն ի գոհութիւն իմն արժանի
իւր, չունելով ինչ յանձին որ չիցէ սուրբ, զի միաբանէ
ամենեսին զսրբութիւն ընդ աւետութեան և ընդ զարհու-
րանաց մեզաց, պարտս իմն համարի անձին օգնել մեզա-
ւորաց, լինել ապաստան մեզաւորաց, ի կիր առնուլ
զամենայն համարձակութիւն իւր առաջի Աստուծոյ առ
ի դարձ մեզաւորաց անարժանադունից և խստացելոց·
քանզ գիտելով, զի Թէպէտև մեզաւորք են և խստա-
ցեալք, այլ վասն նոցա, և առաւելապէս վասն նոցա,
արար զինքն Աստուած որ ինչ է· և յայսմ ևս մասին կեր-
պարանակից լինի յօժարութեանց սրտի որդւոյն, որ ա-
ռանց աղմկելոյ զկարգ երից՝ սիրէ զմեզաւորս, Թէպէտև
եկն յաշխարհ առ ի կործանել և անհետ առնել զմեզս:

Այս է՝ զոր կոչեմն յոյս· այլ կարիք տեսանել՝ որ-
պէս մարթ իցէ զեղծանել նովաւ· ասա է, սիրելի ուն-
կընդելիք, ուր ժամենայն մտադրութեան ձերոյ պէտք են
ինձ ի վախճան ճառիս: Զեղծումն՝ որով չարաչար վա-
րիմք ի կարդալ առ սուրբն Կոյսն, և որ անօգուտ առ-
նէ մեզ զհամարձակութիւն նորա առաջի Աստուծոյ,
այն է՝ զի փոխանակ համարելոյ զնա բարեխօս մեր, որ
կարէ ընդունել վասն մեր զչնորհս փրկութեան, այս

ինքն զնսկական և հնարաւոր չնորհս, զնորհս հաստա-
տունս և կարևոր, զնորհս կարգեալս և հշռեալս ըստ աս-
տուածային կարգաւորութեան, զնորհս յաղթականս՝
որոց պարտ է մարմնչել 'ի մեզ ընդդէմ ախտից, և յաղ-
թանակել 'ի վերայ մարմնոյ և աշխարհի, գաղտնի և ա-
ղետաւոր մղորութեամբք խաբեալ, ստայօդ կարծիս 'ի
միտս մեր ստեղծանեմք զԱստուածն, մինչև խոստանալ մեզ
'ի ձեռն պաշտպանութեան իւրոյ չնորհս ցնորականս և
անհնարինս, չնորհս ըստ հաճոյից մերոց և ըստ ապակա-
նեալ ըղձից, չնորհս՝ եթէ կայցեն այնպիսիք՝ անբաւա-
կանս 'ի սրբել զմեզ, և կարողս զեղծուցանել, չնորհս
աքանչելագործս, և յորս յանդգնութիւն ևեթ մեր կա-
րէ վստահել: Պարզ ևս ասացից. կարդամք առ սուրբ
Կոյսն, այլ կոյր իմն վստահութեամբ. 'ի նա զփրկու-
թիւն մեր ապաստան արարեալ, անփոյթ լինիմք, զամե-
նայն հոգ փրկութեան մերոյ 'ի բաց դնեմք. որպէս թէ
պարտ իցէ սրբոյ Կուսին ամենայն համարձակութեամբն
առաջի Աստուծոյ ապահովել զփրկութիւն մեր՝ առանց
դարձի մերոյ առ Աստուած, զփրկութիւն մեր՝ առանց
փոխելոյ զվարս մեր, զփրկութիւն մեր՝ առանց հրաժա-
րելոյ յանձնէ, զփրկութիւն մեր՝ առանց պողոյ ապաշ-
խարութեան, և առանց մեռուցման զդպայարանաց. որ-
պէս թէ 'ի չնորհս սրբոյ Կուսին՝ պարտ իցէ մեզ տանել
յաղթութիւն առանց պատերազմի, ընդունել վարձս
առանց վաստակոց, չահել վաստակս առանց աշխատա-
նաց, և առաքինութիւնս անջան. չնորհք ցնորականք և
անհնարինք: Կարդամք մեք զսուրբ Կոյսն, այլ յանդգն-
նութեամբ՝ որ ոչ միայն չէ նմա 'ի պատիւ, այլ և 'ի թերա-
նամանս. յուսամք ընդունել 'ի ձեռն նորա մահ բարի՝
յետ աշխարհային կենաց. երջանիկ վախճան՝ յետ 'ի խոր
մռայլս արկանելոյ զԱստուած, յարատևութիւն
սուրբ մինչ 'ի սպառ՝ յետ յամառելոյ մերոյ ընդդէմ ա-
մենայն երկնաձիր լուսաւորութեանց, նաւահանգիստ

անքոյթ՝ յետ այնչափ արտուղի թափառանաց և նաւա-
կոծութեանց. չնորհք հնարաւորք, այլ հրաշալիք: Կար-
դամք առ աւրբ Կոյսն, այլ թանձր ոգիտութեամբ 'ի
մոլ եղեալ՝ զն անխաւիր կարիցէ նա և կամիցի զամենայն,
և յուսալով 'ի ձեռն նորա գտանել զԱստուած եր-
կայնմտութիւն անսպառման ընդ հետաւութիւն մեր, պատ-
րաստութիւն յարաժամ առ 'ի ներել մեզ, ողորմու-
թիւն անսպառելի՝ միշտ յօժարամիտ առ կամս մեր,
պաշտպանութիւն ապահով և անվրէպ՝ փոխանակ յա-
մառ և չարախոհ յամեցման մերոյ, և չնորհս՝ (եթէ կայ-
ցեն չնորհք այնպիսիք) անզօրս 'ի սրբագործել զմեզ, և
բազմազօրս 'ի զեղծուցանել: Կարդամք առ սուրբ Կոյսն,
այլ գաւտապարտելի վստահութեամբ 'ի կարողութիւն
նորա յապահովեալք, զն առանց ելանելոյ 'ի բաց 'ի
մերձաւոր վտանգաց մեղաց՝ պահեսցէ զմեզ 'ի մեղաց.
զն 'ի մէջ բոցոյ կեցուսցէ անկիզ և անվնաս որպէս զե-
րիս մանկունսն 'ի հնոցին Բաբելացւոյ. չնորհս ըստ հաճո-
յից մերոց և ըստ ապականեալ ըղձից, որոց վասն այսո-
րիկ իսկ չէ մեզ ակն ունել 'ի Կուսէն. և որք ոչ միայն
չկարեն առնել զայս քրիստոնէական, այլ և յամենայն
ժամանակի լեալ են ժայռք առ 'ի կորուստ: Չի Կոյսն
ոչ ընկալաւ համարձակութիւն առաջի Աստուծոյ՝ որ
տայ նմա այնպիսի կարողութիւն, առ 'ի հայթայթել
մեզ օգուտ ընդդէմ Աստուծոյ, և ոչ թագուհի երկնից
կացուցաւ՝ առ 'ի թագաւորեցուցանել զմեզս 'ի մեզ, և
ոչ փաստաբան մեր է առ 'ի տալ մեզ յամառել 'ի մեղս
անապաշխար: Ամենազօր է որդուոյն՝ ոչ առ այլ ինչ,
ասեն սուրբ Հարք, այլ ըստ կարգի աստուածային սահ-
մանադրութեան՝ այլ յընդարձակութիւն սրբոց օրի-
նաց, խմաստութեամբն Աստուծոյ հաստատելոց, առանց
սահանելոյ խմաստից Աստուածարանին, և անողոքելի նոցին
խստութեան: Այս ինքն ամենազօր է Կոյսն առ 'ի ձգել
զմեզ առ Աստուած, և մերձեցուցանել զԱստուած առ

մեզ, ամենազօր առ՝ի չարժել զԱստուած՝ի գթութիւն ընդ արտասուս մեր· ամենազօր առ՝ի հաճոյ առնել Աստուծոյ զաղօթս մեր, զապաշխարանս և զնուէրս· այլ ոչ երբեք ամենազօր առ՝ի բառնալ չարս ամենայն պարտս, և առ՝ի տալ Աստուծոյ մուռանալ զէական ստութիւնս իւր, և լինել որպէս թէ ընդդէմ սրբութեան իւրոյ օգնական անիրաւութեան մերոյ:

Զքեզ կարդամք այսօր յօդնութիւն, Կոյս սուրբ, այլ յօժարութեամբ սրտի բոլորովին ըստ պարտեաց մերոց, բոլորովին ըստ կարգաց՝ զոր սահմանեն մեզ կրօնք, բոլորովին՝ ի գէպ խորհրդոց փառաւորեալ վերափոխման քո: Խնդամուտ եղեալ օգոստ մերում, և խորհրդոցն Աստուծոյ՝ ի վերայ մեր, ոչ ևս խնդրեմք՝ ի քէն զշնորհս ժամանակեայս՝ որ սնոտի բերկրութիւնս ևեթ ատեն մեզ, և ոչ զյաջողութիւնս երկրաւորս՝ որ տածեն ևեթ զվատթարութիւն մեր, և հաճեն զանձնասիրութիւն· այլ դիմեմք առ քեզ վասն մեծ և կարեւոր ալեցոյց և բարեաց, թերևս ոչ այնչափ մեզ ախորժելեաց, և վասն բարձրագոյն տեսութեանց դիպողագունից քրիստոնէական կարգաց՝ զորս գտանեմք: Ծանրաբեռնեալք ընդ աղէտիւք, և՝ի միտ առեալ՝ զի կարող ես օգնել մեզ, կարդամք առ քեզ՝ի հրաշափառ ծնիս, և զայսոսիկ խնդրեմք՝ի քէն: Ընկալ վասն մեր՝ի Տեառնէ քոյով ամենազօր բարեխօսութեամբդ զշնորհս գերագոյնս, յորս հաստատեալ է փրկութիւն մեր և կատարելութիւն: Ընկալ վասն մեր առելութիւն սատկիկ ընդդէմ մեզաց, և հպատակութիւն աստուածային օրինաց անթերի: Ընկալ զքրիստոնէականն զայն զօրութիւն, այնքան կարեւոր առ՝ի պահել զմեզ յատկանութենէ աշխարհի, և մի տալ զմեզ՝ի գնացս ուղևից սովորութեան, առ՝ի կալ ընդդէմ դայթակղութեան չար օրինակի, և գեր՝ի վերոյ մարդկային ակնածութեան, առ՝ի զերծանել՝ի բռնաւորութենէ ախտից մերոց, առ՝ի հրաժարել՝ի

փառասիրութենէ, մի մտանիլ՝ի գերութիւն ագահութեան, առ՝ի յաղթել ցանկութեան մարմնոյ, և նուաճել զնա ընդ իշխանութեամբ հոգւոյ: Ընկալ վասն մեր զդէրսզանց առաքինութիւնս՝ որոնք գերագոյն գտար՝ի մէջ արդարոց· զհաւատս գերաչխարհիկ՝ որով եղեր երանելի, հաւատալով որ ինչ յայտնեցաւն քեզ՝ի Տեառնէ· զխորին խոնարհութիւնն՝ որ այդչափ բարձրացոյց զքեզ, և իջոյց զԱստուածորդին առ մեզ· զմաքրութիւնն հրեշտակային՝ որ այնքան սիրելի եղև քեզ, և զոր նախամեծար արարեր քան զամենայն մեծութիւնս՝ որ առաջի կային քեզ· զնազանդութիւնն՝ զոր Աստուածորդին քո արժանագոյն համարեցաւ գովութեան իւրոյ, և առաւել արդոյ՝ի քեզ քան զաստուածամայրութիւն· զնախանձ փառացն Աստուծոյ և զփրկութեան մարդկան՝ որով յաղթեալ գորովոյ սրտիդ, հաւանեցար ընդ պատարագ և ընդ մահ միածնիդ յընծայել քո զնա՝ի տաճարին որպէս զոհ, առ՝ի զենուլ վասն մեզաց մերոց: Ոչ կարեմք նկրտել՝ի բարձրութիւն ասպետական առաքինութեանցդ՝ ուր հասեր, ընկալ վասն մեր որչափ արժան է՝ի լուսոյն պարտուց մերոց· հաւատոք կենդանի՝ որ տայցէ մեզ գործել, և լինել պատրաստ՝ի կրել վասն Աստուծոյ զամենայն, յոյս առ Աստուած անսասանելի՝ որ ոչ ամաչեցնէ, սէր առ Աստուած՝ անչիջանելի՝ի ջուրց տառապանաց և արկածից կենցաղոյս, եղբայրսիրութիւն՝ որ զմեզ զամենեսեան սիրոտ կալցէ առ Քրիստոս սրբութեամբ: Ընկալ վասն մեր յաղթութիւն կատարեալ՝ի վերոյ աշխարհի, հրաժեշտ յանձնէ բոլորովին, սիրտ սուրբ և հոգի խոնարհ: Զայսոսիկ, Կոյս սուրբ, խնդրեմք ընդունել շնորհս վասն մեր, և ոչ երկմտեմք՝ թէ զլացես մեզ վասն այսոցիկ զբարեխօսութիւն քո: Ողջունեմք զքեզ ընդ եկեղեցւոյ՝ Ողջ լեր Խաչուհի· այլ մի լեցի մեզ յանդգնել՝ մտանելոյ՝ի փառս ընդ այլ ձառնասարս արտուղի յառաքինութենից քոց: Ա՜մէն վէ-

բագոլէմ առ դշխոյդ երկնից, և խնդրեմք ՚ի քէն ընդունել վասն մեր զշնորհս ընթանալոյ զհետ քո, նմանելով քումդ օրինակի· ընտրեմք զդշխոյդ ՚ի պաշտպան մեր, լուր հառաչանաց մերոց· Աւա՜ ելէ հառաչէմ· ոչ առ այլ ինչ խնդրեմք զպաշտպանութիւն քո, այլ զի ընկալցիս վասն մեր զշնորհս ապաշխարութեան: Անկասկածք ՚ի լինելոյ ՚ի Թիւս յանդուգն պաշտօնասիրաց քոց՝ կոչեմք զքեզ Մայր ողորմութեան: Այլ ոչ համարիմք ունել այսուիկ պատճառս ներելոյ ախտից մերոց, և կալոյ աներկևան յանկարգութիւնս մեր: Ընդդէմ սուգտանաց գառն գառաւորաց կրօնիս մերոյ՝ ապաւինիմք ՚ի քեզ· այլ վստահութիւն մեր ՚ի քեզ ոչ սայ մեզ մոռանալ, զի առ ընդունելոյ վարձս իւրև զքեզ, պարա է մեզ ըստ համեմատութեան մերում լինել արժանի վարձուց իւրև ընդքեզ, և զի ոչ երբեք այլազգ մարթ է մեզ հասանել յաքայութիւնն երկնից, որում արժանի արասցէ զմեզ Քրիստոս և այլն:

ՀՕՐՆ ՊՈՒՐՏԱԼՈՒԻ

ԴԱՐՁՆԱԼ

Ի ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ԵԻ Ի ՊԱՇՏՕՆ ԿՈՒՍԻՆ

Եմուտ ՚ի գիւղ մի, և կին ոմն անուն Մարթա ընկալաւ զնա ՚ի տան իւրում:

Ղու. ժ. 38:

Կինս այս պատուեալ յերեսաց Փրկչին մերոյ ըստ Աւետարանին, ո՛վ հաւատացեալք, էր ըստ գրոյն Մարթա քոյր Մագդաղենացւոյն· այլ ըստ տեսութեան սրբոյ եկեղեցւոյ՝ է Մարիամ մայր Քրիստոսի, Թագուհին կուսանաց, դշխոյ երկնի և երկրի, որ ընկալաւ ՚ի մարքուր արգանդի իւրում զԱստուածորդին, և զոր նա ինքն ընդունի այսօր յօթևանս փառաց: Երանաւէտ ընդունելութիւն, աղաղակէ սուրբն Բեռնարդոս, երկաքանչիւր ևս երանաւէտ, Մարիամն յընդունել անդ զՔրիստոս ՚ի խորհուրդ մարդեղութեան, և Քրիստոսին յընդունել զՄարիամ ՚ի վերափոխման: Այլ առ ինչ էգ յիշել արդ զառաջինն, հարցանէ նոյն ինքն սուրբ վարդապետն, և տայ պատասխանի. — առ ՚ի բարւոք դառնել զերկրորդին. առ ՚ի միտ առնուլ Ճշգրիտ զկերպարան իրին. առ ՚ի խնամուտ լինել փառաց և գերազան-

յուԹեան նոցա, կամ մանաւանդ առ 'ի գիտել՝ զի որպէս առաջինն է ամենևին անհասանելի, այսպէս և երկրորդն 'ի վեր է քան զամենայն միտս և ղբան: Զի ո՞ր լեզու կարէ պատմել՝ որպէս մեծվայելչուԹիւնն Աստուծոյ, անբովանդակելի 'ի լայնածաւալ տիեզերս, փակեցաւ յարգանդն Կուսին. և որպիսի փառաւք եմուտ Կոյսն սուրբ յերկինս՝ ընդունել պսակ, և Թագաւորել անդ ընդ ամենայն յաւիտեանս: Վասն որոյ պարտ համարեցայ, սիրելի ուսկնդիրք, ընտրել խմաստս Ճառիս համեմատս սըկարուԹեանս մերում, ն. օգտակարագոյնս ձեզ: Համարեցայ՝ զի մեծ և անձառելի խորհուրդ վերափոխման Կուսին ընծայել ինձ պատեհ Ճառել առ ձեզ զջերմեռանդն պաշտամանէ Տիրամօրն: Այս ինձ առաջի կայ. և առայս, Կոյս սուրբ, օգնականուԹեան քոյոմ կարօտիմ. հաձեաց ընդունել զնախանձն՝ որ խրախուսէ զիս, հաձեաց յաջողել զայն, վասն որոյ մատուցանեմ քեզ ողջոյն ընդ հրեշտակապետին. Ողջոյն ՚եզ:

Ի ձեռնարկել խմում Ճառել ձեզ, ո՛ հաւատացեալք, զպաշտամանէ Կուսին՝ ոչ կարեւոր համարիմ յորդորել զձեզ յայն, զի ոչ երկբայիմ Ճշմարիտ հաւատացելոցդ ունել առ Տիրամայրն զամենայն սէր և մեծարանս՝ որ անկ են նմա. այլ տալ ձեզ 'ի վերայ կարեւոր մասինս զամենայն հրահանգս, զորս պարտ է կատարեալ և հրաշնասէր հաւատացելոց բերել յանձինս, եԹէ կամին ժամանել 'ի գործ բանաւոր պաշտաման՝ զոր Առաքեալն յանձն առնէ մեծապէս. Ջնօրհն պաշտօնդ ձեր: Վասն որոյ, սիրելիք, փոխանակ յորդորելոյ զձեզ 'ի պաշտօն Կուսին՝ կամիմ ուսուցանել ձեզ 'ի կարգի ունել զայն, յօգուտ 'ի կիր արկանել զայն, և սրբել նուաւ զանձինս ձեր: Կամիմ տալ ձեզ Ճանաչել զՃշմարիտ կինք նորին և զԹերուԹիւնս. կամիմ յայտնել զնորին զեղծմունս, և այսու տալ ձեզ վարել նուաւ 'ի սրբուԹիւն: Մաքթէր ինձ ընտրել պատշաձագոյն ինչ ձերումդ բարեպաշտուԹեան, և օգտակարագոյն ինչ նմին ինքեան պաշտամանն՝ զորմէ բանքս են: Ըստ սրբոյն Բեռնարդեայ, յեղիս գլխաւոր պարոս հաստատեալ է այն. 'ի մեծարել զսուրբ Կոյսն, 'ի կարդալ զնա յօգնուԹիւն, և 'ի նմանող լինել նմին: Ա.յսոքիկ են երրեակ պարաք, յորս ամփոփեմ զՃառս, և այսոքիկ են մասունք Ճառիս համառօտիւ: Պարտ է մեծարել զսուրբ Կոյսն, այլ մեծարել իմաստուԹեամբ, այս առաջին մասն. պարտ է կարդալ զնա յօգնուԹիւն, այլ կարդալ արդեամբք, և այս երկրորդ մասն. պարտ է նմանող լինել սրբոյ Կուսին, և լինել երկիւղածուԹեամբ, և այս վերջին մասն: Պարտ է մեծարել զնա իմաստուԹեամբ, զի է Թագուհի երկնից. զի պատիւ Թագուհւոյն երկնից, որպէս և Քրիստոս Թագաւորին Թագաւորաց, պահանջէ զայս 'ի վեր քան զամենայն. Զի պոպիւ Թագաւորի պէրաւոնս պէրէ. այսպէս իմաստասիրէ սուրբն Բեռնարդոս, պաշտաձելով 'ի սուրբ Կոյսն զայս բան Սաղմոսերգուին՝ ասացեալ ցԱստուածն: Պարտ է կարդալ զնա յօգնուԹիւն արդեամբք. զի ընդունայն է վասն մեր համարձակուԹիւն նորա առաջի Աստուծոյ, եԹէ մեք անարժանուԹեամբ աղօԹից մերոց, կամ անպաշխար կենօք մերովք զհամարձակուԹիւն նորա առնեմք անպիտան: Պարտ է մեզ ըստ կարի նմանել սրբոյ Կուսին երկիւղածուԹեամբ. զի սրբուԹիւն նորա է օրինակ՝ յոր կամի Աստուած կերպարանել մեզ. և եԹէ ոչ կերպարանիմք, ըստ այնմ դատեսցի զմեզ Աստուած: ՃշմարտուԹիւնք, որ երեքին եւս օգնեն միապէս 'ի դարձ մեղաւորաց և 'ի շինուԹիւն արդարոց: Սկսայց:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Աւ 'ի պատուել սրբոլթեամբ ՂՏիրամայրն՝ պարտ է պատուել զնա իմաստութեամբ. այամ ոչ ոք կարասցէ հակառակել, և չիք իսկ ոք՝ որ չիցէ 'ի մասինս յայսմիկ միաբան ընդ իս: Այլ միանգամայն պարտ է ընդունել այլ ինն Ճշմարտութիւնն՝ որ ըստ իս հաւասարապէս է անժխտելի. զի եթէ կարևոր է ընտրութիւն և խոհեմութիւն առ 'ի պատուել ՂՏիրամայրն, ոչ ինչ ընդհատ է կարևոր, մանաւանդ թէ առաւել ևս կարևոր առ 'ի ստգտանել զպատուօղս նորա, և բաղմել գառն գատաւորս պաշտամանն և պատուոյ՝ զոր ընծայենն նմա: Թուի ինձ՝ զի իրաւամբք կարիցեմ պահանջել նախ 'ի բարեպաշտութենէ ձերմէ, չբաժանել 'ի միմեանց զերկոսին զայսոսիկ խմաստս 'ի միմեանց 'ի գատելն զայսպիսի մեծ և կարևոր խնդիր. և էք կորովամիտք առ իմանալոյ զիմս իմ, և արդարակորովք առ ընդունելոյ, զի և լսցես բանին և ուղղափառ և անկեղծ կրօնք զայս այսպէս պահանջեն. պարզաբար ասացից: Իցեն թերևս յաչխարհի, 'ի նուիրեցոյ 'ի պաշտօն Կուսին, որ ելանիցեն ըստ ջաի, հաւանիմ ընդ ձեզ. և եթէ իցեն արդարև այնպիսիք, քաւ լիցի ինձ անբասիր առնել զնոսա և արդարացուցանել: Այլ իցեն ևս գառն գատաւորք պաշտաման Կուսին, և ոչ բաւականասցէս խորհին զայսմանէ բազումք: Յերկուց աստի անկարգութեանց պանծալի Թուի խորշել յառաջնմէն, և պատահէ հանապազ՝ զի բազումք համարիցին իւրեանց ձախողակի 'ի վաստակս զերկրորդն, և պարծիցին իսկ սուաւ անհեթեթս: Սակայն ոչ ինչ ընդհատ վտանգաւոր է երկրորդս այս քան զառաջինն. և այր հաւատացեալ ոչ ինչ նուազ 'ի վտանգ արկանէ զանձն

առաջի Աստուծոյ 'ի դատապարտել յանդգնաբար ըզպաշտօն օրինաւոր, քան մատուցանելով յանգիտս ըզպաշտօն առաւելագանց և նանրահաւատ: Վասն որոյ, սիրելի ունկնդիրք, պարտ է մեզ զգուշանալ յերկաքանչիւրոցն, և ինձ անկ է որպէս պաշտօնէի Աւետարանին՝ առաջնորդել ձեզ ընդ մէջ երկոցունց ժայռից. այլ ընդ որ ուղի. — տալով ձեզ կանոնս անսխալս մեծարելոյ իմաստութեամբ զԹագուհին երկնից, և առաջի առնելով զնոյն կանոնս՝ առ 'ի չգատել թերևսաբար զմեծարանս իսկ ոմանցին ընծայեալս նմա: Ոչ տարատամն ինչ ձառեցից, և 'ի կամել պարզել զշմարտութիւնս զայսոսիկ՝ ոչ պատերազմեցայց ընդ ցնորս, այլ մանրամասնաբար զարդեանց իրացն պարզաբանեցից:

Եղեն՝ որք կարծեցին, զի հանդերձ ինամովքն՝ զոր կալան հոլիւքը հոգևորք 'ի հրահանգել զժողովուրդս, և 'ի սրբել առ մեօք զկիրծս կամ զբարեպաշտութիւն հաւատացելոց՝ եցեն դեռևս աւելագանցութիւնք և զեղծմունք 'ի պաշտամունս սրբոյ Կուսին: Այլաբեմ, միտ դնել զի չեն միայն յայտնի թշնամիք սուրբ եկեղեցւոյ՝ որք զայս այսպէս գատին, այլ և ոմանք յորդւոց իսկ նորա ողբան զայսպիսի զեղծմունս: Ողղափառք իսկ, կարծեցեալ նախանձայոյզք, այլ նախանձ նոցա առանց գիտութեանն՝ զոր Աւետեաւն խնդրէ, համարին նախանձել 'ի մասինս յայսմիկ զնախանձ Տեառն. և որպէս ինչ յայտնեն զմիտս իւրեանց, այսոքիկ են երբեակ գլուխք՝ յորս պաշտամունք հաստարակաց հաւատացելոց առ Տիրոմայրն՝ Թուի նոցա ծայրայեղ. զի այսպէս նոքա զմիտս իւրեանց բացատրեն. և կարևոր է մեզ քաջ 'ի միտ առնուլ միանգամ՝ զորմէ իրաց են ստգտանք նոցա: Վաղեալք 'ի նախանձ փառացն Աստուծոյ, բողոքեն՝ զի աստուածծական պաշտօն մատուցանի սրբոյ Կուսին: Բողոքեն զի ընծային նմա անձանձք մեծարանաց, ոչ անկասելք նմին, մանաւանդ կոչելով զնա միշտորդ և նորո-

գող աշխարհի: Բողոքեն՝ զի ընծային նմա նորանոր ա-
ռաւելութիւնք, ոչ 'ի սուրբ գիրս յայտնեալք, և ոչ
վկայեալք յաւանդութենէ: Առցուք զորտունջ նոցա 'ի
քնին, առանց մոահաճութեան. և քանզի գրովք հրա-
տարակեցին նոքա զայսոսիկ առ հաւատացեալս, իբր
խրատս աղդեալս 'ի Կուսէն առ պաշտօնասէրս իւր ան-
խոհեմս, մեք որ ցանկամք՝ զի պաշտօն մեր լցեալ խոհա-
կան հաստատուն և անսագիտ, յօգուտ 'ի կիր առցուք
զնորատս զայսոսիկ 'ի շինութիւն մեր, թէպէտև չիցէ նո-
ցա հիմն հաստատուն: Գոնեա քննութիւնս այս առաջի-
կայ կացուսցէ զմեզ զգուշագոյնս և անսագիտս 'ի պաշ-
տօն Կուսին: Մի՛ս գիք, զի ոչ գիմանալեաց լինչ զգժուա-
րահաս իրաց են բանք՝ որ տաղտուկ ածիցեն:

Ճշմարիտ է, ո՛ հաւատացեալք, հաստատեմ բարձ-
րաձայն, զի պաշտել զսուրբ Կոյսն իբրև Աստուած,
Թէպէտ և 'ի ձեռանէ Աստուծոյ, ոչ եթէ անկարգու-
թիւն միայն է և անիմաստութիւն, այլ և եղեռն և ամ-
պարշտութիւն: Քանզի Մարիամ, Թէպէտ և Աստուա-
ծամայր, սակայն արարած միայն է, և խոնարհ աղախին
Աստուծոյ, որոյ ամենայն երանութիւն հաստատեալ է
'ի հաւատարիմ խոստովանութեան նորա զնուաստու-
թիւն իւր և զդժնդակութիւն. Զի հայեցաւ 'ի խոնարհութիւն ա-
ղախնոյ իւրոյ, զի ահա յայսմհետէ երանելոցեն ինչ ամենայն ազգք:
Զայս այսպէս ինքն ուսուցանէ մեզ. և այնպէս քաջ գի-
տեմք զայս, զի առ 'ի ջմռանաալ՝ ողջունեմք զնա հանա-
պազօր որպէս աղախին Տեառն. Ահաւասիկ էամ աղախին
Տեառն: Վասն որոյ գոհութիւն և փառք աստուածա-
խնամ տեսչութեան, և Հոգւոյն սրբոյ՝ որ առաջնորդէ
քրիստոնէական հաւատոցս, հաստատեմ՝ զի եկեղեցի
Քրիստոսի, մանաւանդ 'ի ժամանակի պայծառութեանն՝
որպէս առ մեզ, չէ ինչ կարօտ կարծեցեալ վիրաւէտս
խրատուցն աղդելոց 'ի վերուստ: Զի որպէս ծանուցեալ
ձեզ յայլ այսպիսի դէպս՝ որ լինչ սուրբն Օգոստինոս

ասէր առ մանկիքեցիս, որք խորամանկութեամբ և անիրա-
ւութեամբ ամբաստանէին զուղղափառս 'ի կռապաշ-
տութիւն վասն պաշտամանն սրբոց մարտիրոսաց, Թէ ո՞
'ի մէնջ ոչ խոստովան լինի՝ զի ոչ Աստուածամօրն նուի-
րեմք զսեղանս, և ոչ նմա մատուցանեմք պատարագս,
այլ Աստուծոյ՝ որ ընտրեացն զնա և սրբեաց, Աստուծոյ՝
որ փառաւորեացն զնա: Ասա քաջ 'ի բաց հեռի եմք 'ի
Թանձր մոլորութենէ այսի և յանճռնի խօթամտութե-
նէ աստուածարելոյ զկոյսն. և խօթամտութիւնն այն,
եթէ էր 'ի մասինս յայսմիկ, համարելի էր այնոցիկ՝ որ
կարծեն Թէ բաղմութեան հաւատացելոց յանդիման հո-
վուաց իւրեանց մարթ լցեալ անկանել, և անկեալ իսկ ի-
ցեն յայսքան զեղծուածն հաւատոյ: Խօթամտութիւնն
ոչ միայն տայր նորոգել զտարապարտ և զնոտի ամբաս-
տանութիւնս մոլորելոցն առաջնոց ընդդէմ եկեղեցւոյ,
այլ օգնէր նորաշանդից և 'ի համարել զուղղափառս
որպէս Թէ խեղամուռս լեալ՝ զի հաւատք մեր արդա-
րև զեղծեալ լցեն 'ի յեսին դարս: Ֆաւ լիցի, սիրե-
լի ունկնդիրք, դարձեալ ասեմ քաւ լիցի. եկեղեցի
Քրիստոսի ոչ երբեք լքեալ է այդպէս յերեսաց Աստու-
ծոյ: Զի զինչ այլ լցէ պատուէրս մեր խմաստութեամբ
զՏիրամայրն, այլ ընծայել ևեթ նմա պաշտօն 'ի վայր
քան զԱստուածոյ, և 'ի վեր քան զայլոց ամենեցուն յեա
Աստուածոյ: Արդ այսպէս պատուէրք մեք զՏիրամայրն,
որպէս և գարուց 'ի դարս պատուեցին զնա հաւատա-
ցեալք. վայ այնոցիկ՝ որ չփոթեն զնա ընդ Աստուածոյ.
այլ վայ և նմա՝ որ ոչ ընծայէ նմա զգերյարգութիւն, և
ոչ համարի զնա 'ի վեր քան զամենայն՝ որ չիցէ Աս-
տուած: Պարա՛ էր լինել յամել 'ի սկզբան ատ 'ի մասինս
յայսմիկ, և խեղամուռս առնել զձեզ. այլ արդ յառաջ
խաղասցուք:

Եպերևն իբրև ծայրացել զնախանձ հաւատացելոց,
ընծայելոց սրբոյ Կուսին փառաւորեալ անուանս՝ զորս

ոչ համարին անկաւորս նմա. այլ ես աւասիկ կամ՝ ի հաստատել, զի յորմէհետէ ընդհանրական եկեղեցի, եւ բևեռագունիւն՝ ի վճիռս իւր՝ ի ժողովն Եփեսոսի, այնպ կալաւ զկոչումն աստուածամայրութեան Կուսին, որոյ փառացն կամ աստանօր ջատագով, ընդդէմ հերեսիով տապետին Նեստորի, չիք անուն փառաւորեալ՝ որ չիցէ նմա անկաւոր, և ոչ գերազանցութիւն՝ զոր չիցէ օրէն ընծայել նմա առանց առաւելազանցութեան: Եւ զի ինդիր է ասա առաւելապէս զանուանցս ՓՆՈՒԴ և Նորոգող աշխարհի, զորս ամիսփիչք պաշտաման նորա կամին բառնալ՝ ի նմանէ, տեսցուք զինչ զայսցանէ ասէ սուրբն Բեռնարդոս, ոչ՝ ի դէպս և՝ ի ձառս մեծացուցանելոյ զՏիրամայրն հոյակապ ներբողիւք՝ զորս արար զնմանէ, այլ՝ ի հաչակաւոր Թղթին՝ զոր գրեաց առ ուխտ եկեղեցւոյն Լիոնի. ուր աստուածաբանօրէն խմաստասիրելով, և խիստ դատաստանաւ, ցուցանէ մեզ զսահմանս պաշտաման սրբոյ Կուսին: Շատ համարիմ թարգմանել զայն, և ոչ ինչ երկբայիմ՝ զի գորովեսցի սիրտ ձեր ընդ այն: «Տուք, ասէ, տուք Մարիամու զերաւացի գովեստիւնս՝ որ անկ են նմա, և յուշ լիցի ձեզ՝ զի սրբութիւն Ճշմարտութեամբ ևեթ փառաւորի, առաւելագունի իրիք չէն նմա պէտք: Ասացէք նմա՝ զի եգիտ վասն իւրոց վասն մեր զաղբիւրն շնորհաց, ասացէք՝ զի է ՓՆՈՒԴ փրկութեան մերոյ, և Նորոգիչ յաւիտենից, և ասիցէք զարդարն. զի եկեղեցի համօրէն զայս այսպէս նուագէ»: Որոց անուանքս այսքիկ էիցեն Հաճոյ՝ իշխեսցէն կալ ընդդէմ վկայութեան սրբոյն Բեռնարդոսի, և չքնդուռնել զբանս այնպիսւոյ հզօր վարդապետի՝ ի Հարս, որ իրրև հաւատարիմ պատմիչ՝ ի մէջ ածէ՝ որ ինչ սուրբ եկեղեցի առ ժամանակաւք իւրովք հաւատայր, և որ ինչ արգեամբք ուսուցանէր: Ահա է ահա պատուել զսուրբ Կոյսն իմաստութեամբ, որպէս ասէի, ընծայել նմա որ ինչ սուրբ եկեղեցի ընծայէ փառաւորեալ անուանս:

Գիտեմք քաջ զի մի է միջնորդ փրկութեան մերոյ. այլ հաւաստի է և այն՝ զի չէ երբեք խորել ինչ յիւրաւանց նորա՝ ընդունել ըստ սուրբ գրոց բաց՝ ի միոջէն, որ է Յիսուս Քրիստոս, այլ ևս միջնորդս բարեխոսս. և չեմք պարտ գերագասել՝ ի նոսա զՏիրամայրն: Գիտեմք զի Քրիստոս միայն գնեաց արեամբ իւրով զմարդիկ, այլ և ոչ անգիտանամք՝ զի արիւնն այն հեղեալ՝ ի նմանէ վասն մեր, եր՝ ի գոյացութենէ Կուսին, վասն որոյ և կարեմք ասել՝ զի սուրբ Կոյսն պատրաստեաց նովիրեաց և մաղց զարիւնն զայն՝ որ եղև մեզ՝ ի փրկանս. զի յայս հաստատեալ սուրբ եկեղեցի, կոչէ զՏիրամայրն միջնորդ և նորոգող աղքի մարդկան: Վասն այսորիկ խոթամուրթիւն այն էր, (պարտ էր ինձ ասա Ճշգրիտ ևս և սաստկագոյն՝ ի կիր արկանել բառս,) խոթամուրթիւն այն էր, ժխտել նմա զփառաւորեալ և զհաստատուն կալեալ անուանս: Այլ առանց այլ ևս իմաստասիրելոյ՝ շատ համարիմ, յաւելուս սուրբն Բեռնարդոս, զի եկեղեցի ուսուցանէ ինձ այսպէս պատուել զՏիրամայրն. զի որ ինչ եկեղեցի ուսուցանէ, այնմ պատկառ կամ, և ոչ մեկնեցայց երբեք յայնմանէ: Որ ինչ հաւատայ եկեղեցի, զայն և ես հաւատամ. և որ ինչ արգեամբ ուսուցանէ, զայն կամիմ հաւատալ և՝ ի կիր առնուլ անխարիր և անթերի, և համարիմ զիս յատկահովի. զի ինքն է պատգամ՝ որում պարտ է ինձ լսել, և անմոլար առաջնորդ՝ որում պարտ է ինձ հետևել. Զոր՝ ի նմանէ ընկալայ, պինդ առնիմ անվարանգ:

Արդ ըստ այսմ կանոնի, սիրելի ուսկնդիրք, մի երկիցուք գոլ խոթամիտք՝ ի պաշտօն Կուսին, ՝ի կոչելն զնա միջնորդ և նորոգող մեր, ՝ի կարգալն զնա աղբիւր կենաց, ՝ի խոստովանելն զնա ՝ի վայրկ սատ աքսորանաց՝ միսիթարութիւն մեր, և ՝ի մէջ ամենայն վտանգաց՝ յոյս մեր. և ընդէր.— զի մինչև ՝ի յաւիտեան ընդդէմ մոլորելոց աղաղակեսցէ սուրբ եկեղեցի ողջունելով զնա.

կեանք, փաղչրուքիւն, և յոյս մեր: Կեանք մեր յեսու Աստուածոյ և Փրկիստոսի. Միխիթարուքիւն մեր, յեսու Աստուածոյ և Փրկիստոսի. և յոյս մեր, յեսու Աստուածոյ և Փրկիստոսի: Եւ ո՛ խլեսցէ առանց խօթամտուքեան, և առանց իսկ չարուքեան, կասկածել զմէնջ, մանաւանդ թէ զսուրբ եկեղեցւոյ, զի այլազգ իմանայցէ: Եւ քանզի քաջայայտ է և անժխտելի՝ զի զայս այսպէս իմանայ սուրբ եկեղեցի, և զի մեք ևս զնոյն ընդ նմա, ընդդէմ ձախողակի երկիւղածուքեան դառն դատաւորաց մերոյ պաշտամանս առ Տիրամայրն, մի երկմտեսցուք կարդալ զնա Ձէմարիա կեանք մեր. Ձէմարիա միխիթարուքիւն, և յոյս մեր Ձէմարիա. Ողջ լեր նագռահի, ՝ենախ փաղչրուքիւն և յոյս մեր: Այո՛ այսպէս ընդ սուրբ եկեղեցւոյ երգեմք, և երգեսցի մինչև ՝ի կատարած աշխարհի: Անցցեն հակառակորդք սրբոյ Կուսին, այլ կացցէ մնասցէ եկեղեցի, և նովին իմաստուքք, դիմեալ առ ոտս նորա, ասասցէ ՝ենախ, փաղչրուքիւն և յոյս մեր:

Համարեցան դարձեալ նախանձ խօթամիտ զեռանդն հաւատացելոց պաշտպան կալոյ առանձնաշնորհ ձրիւ սրբոյ Կուսին, անարատ յղուքեան նորա, յաղթանակի վերափոխման նորա, և այլոց շնորհաց, զորս ոչ ՝ի թիւ արկանեմ, որպէս և նոքա շատ համարին՝ հանրաբար մերժել զայնոսիկ: Այլ ես նովին դարձեալ կանոնիս այսպէս իմաստասիրեմ. զի որովհետև Աստուածամայրը զսուրբ Կոյսն խոստովանիմք, յամենայն առանձնաշնորհ պարգևաց՝ որ մեծացուցանեն զփառս աստուածամայրուքեան՝ եթէ՞ ինչ, զոր ոչ յօժարիւիմք ընծայել նմա, կամ մանաւանդ չեցէ մեզ պարտ ընծայել նմա: Եթէ Աստուած ոչ հաւասարապէս յայտնեաց մեզ զամենայն, եթէ չեցէ մեզ ՝ի վերայ ամենայնի այսոցիկ նոյն աստուգուքիւն, և եթէ ոչ այսոքիկ առհասարակ եցեն մասունք հաւատոյ առ հաւատացեալս, ոչ շատ եցէ մեզ այս միայն վասն ընծայելոյ Կուսին՝ առանց

ինչ խորհելոյ յերաւանցն Աստուածոյ, զի են շնորհք վայելուչք Աստուածամօր: Ոչ շատ եցէ՝ զի են շնորհքս այսքիկ վկայեալք յիմաստնոց սուրբ եկեղեցւոյ, ընկալեալք ՝ի հաստարակաց հաւատոց քրիստոնէից, հաստատեալք՝ եթէ ոչ քաջայայտ ցուցակուքեամբ, գոնեա հզօր իմաստասիրուքեամբ, և հաստատուն և անհերքելի վկայուքեամբք: Արդ այսպիսի են առանձնաշնորհուքիւնք Կուսին, որովք պատուեմք զնա, և պատուեմք իմաստուքեամբ, հոգի բանաւոր և իմաստուն, մանաւանդ յօժար և ջերմեռանդն ՝ի պաշտօն Կուսին, (զի այս եկարևոր,) հոգի ազատ ՝ի մոահաճուքենէ և զերծ յանձնասիրուքենէ, յընտրուքեան երկաքանչիւր կողմանց, (եթէ արդարև եցեն երկու արժանի ընտրելոյ,) ոչ յօժարեսցի ՝ի կողմն վայելուչ սրբոյ Կուսին՝ զոր փառաւորեմք. ոչ նախամեծար արասցէ զայն, ոչ ընդդրկեսցէ զհաստատագոյնն և զառաւել ընկալեալ: Իսկ զինչ պարտ եցէ մեզ խորհել զայնցանէ, որ միշտ պատրաստ են յերկեայս արկանել զմեծուքիւնս Տիրամօրն, և զերևելագոյն առաւելուքիւնս նորա, միշտ ՝ի խնդիր նորանոր հնարից առ ՝ի կեղակարծ առնել մեզ զայնս. որ միշտ չանան աղմկել զբարեպաշտուքիւն հաւատացելոց, և ձարտարանօք գոն գործեն ամփոփել և ընդվայր հարկանել զհնագոյն սովորուքիւնս, թերևս և բնաջինջ առնել, փոխանակ վաստակելոյ առ ՝ի պինդ ունել և ընդարձակել զայնոսիկ: Ո՛վ Տէր, պաՓրտ ուրեմն էր՝ զի պաշտօնեայք Աւետարանի քո պաշտպան կացցեն այսօր պատուոյ և պաշտամանն, զոր մատուցանեն հաւատացեալք առ ամենասուրբ Կոյսն: Յետ ոգեսպառ լինելոյ աւագագոյնից արանց կրօնիս մերոյ ՝ի հզակել զմեծուքիւնս Կուսին, յետ յուսահատելոյ նոցա գտանել բարբառ համեմատ բարձրուքեան նորա, յետ խոստովան լինելոյ սրբոյն Օգոստինեայ ՝ի գիմաց ամենեցուն զանբաւականուքիւն իւր, և յայտ առնել բարձրաձայն,

զի պահասեն նմա բանք առ 'ի տալ սրբոյ Կուսին զԱ-
ւոլթիւնս՝ որ անկ են նմա, Ու գիտեմ որովհ ղէպ գալոս-
նալնեամբ բարեբացուցանել, պարտ էր ինձ հարկաւորել 'ի
ձիւն ընդդէմ անտեղի զգուշութեան այնոցիկ՝ որք խն-
թան թէ գուցէ առաւել քան զարժանն գովիցեն զՏի-
րամայրն, և իշխեն բողոքել ընդդէմ առաւելապանց պա-
տուոյ նորա: Մի յանկարգութեանց ժամանակիս է այս.
ըստ եղծանել բարուց, ընդ կերպարանաւ նորոգու-
թեան՝ պարզել զպաշտամունս. ընդ գաղջանալ և նուա-
զել հաւատոց՝ երևեցուցանել զայն վառ և կենդանի,
չգիտեմ որով մասամբք, որ ոչ առ այլ ինչ օգնեցին՝
բայց 'ի յարուցանել վէճս, և բաժանել զոգիս, և ոչ 'ի
շինել: Եթէ կարծեցեալ նախանձաւորքս այսոքիկ, և
գառն գաւաւորք պաշտամանն Կուսին, հրաւիրեալ էին
'ի խորհուրդ, և կարծիք նոցա հարցեալ, չհաւանէին
երբէք ընդ յաձախութիւն ժողովոյ սահմանելոյ 'ի պա-
տիւ Տիրամօրն. անհաճոյ թուէր նոցա բազմութիւն տա-
ճարաց և սեղանոց, նուիրելոց Աստուծոյ յանուն Տիրա-
մօրն. զարթէին ընդ բարեգործութիւնս սահմանեալս
յեկեղեցւոյ 'ի պահպանութիւն պաշտամանն մերոյ առ
Տիրամայրն. և եթէ լսէր ոք նոցա, վճիռ իսկ տային խա-
փանել զայնոսիկ: Զերև նոցա պարապ, և ոչ տակաւին
լեալ, ընդ պատճառանօք իմաստուն պաշտամանն ըստ նո-
ցա, մուծանել 'ի քրիստոնէութիւն՝ որպէս կամէին
կրօնս լինն լոկ իմանալի, որ վաղընդվաղ փոխէր, և յա-
ւուրս մեր փոխել իսկ յայնմանպէս 'ի կատարեալ գաղ-
ջութիւն: Այլ հակառակ ամենայն հնարից հերետիով-
տաց 'ի դարուց հետէ պատրաստելոյ ընդդէմ քո,
սուրբ Կոյս, եկաց և կացցէ քոյդ պաշտօն: Դրունք
գժոխոց մի երբեք յաղթահարեսցեն զեռանդն ձմարիտ
հաւատացելոյ, և զհաւատարմութիւն նոցա 'ի հարկա-
նել քեզ զարգարն պաշտօն՝ որ աստուածամայրու-
թեան քում է անկ: Որ ինչ հնարս և 'ի գործ արկցեն և

քանի ձիգն առ 'ի խլել 'ի սրտից նոցա զպատկառելին և
զքաղցր գորով որ զօդէ զնոսա 'ի պաշտօն քո, բարե-
պաշտութիւն նոցա յաղթեսցէ. սերա կալցին զայն,
յայտ արասցեն, պարծեսցին յայն, և ոչ ինչ կարասցէ
մոլորեցուցանել զնոսա և դրդռուել. զի ընդդէմ քո,
սուրբ Աստուածամայր, իբրև զժայռի հարեալ բեկան
ամենայն մոլորութիւնք, և բեկցին միշտ. դու յաղթա-
նակեցեր ընդդէմ ամենայն մոլորութեանց. չիք և ոչ մի
յայնցանէ, զոր չիցէ քո յամօթ արարեալ: Յաղթու-
թիւն՝ զոր տարցես, և զոր տարար ընդդէմ յանդուգն
և դառն դատաւորաց պաշտամանն քո, տացէ լրումն
յաղթանակիդ. եթէ պէտք լցեն և 'ի մէնջ կուսէ ձը-
գանց, ոչ 'ի մի ինչ խնայեսցուք. եթէ պէտք լցեն խո-
սելոյ, ոչ խնայեսցուք 'ի բանս. 'ի բեմ ձշմարտութեան
բարձրացուսցուք զբարբառ մեր, լսելի արասցուք զձայն
մեր. և ուսուցեալ հաւատացելոց պատուել զքեզ ի-
մաստութեամբ, ուսուսցուք նոցա և արդեամբք առ քեզ
կարդալ: Զայսմանէ, ո՛ հաւատացեալք, լեսցի երկրորդ
մտան ձառս:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Զի կարիցեմք մեք կարդալ առ Տիրամայրն, և զի լցէ
նա 'ի կարիս մեր օգնական ամենաղօր և ամենողորմ, այն-
պէս է հաւատամք՝ զի երկբայել իսկ զայսմանէ ոչ է մեզ օ-
րէն, եթէ լցեմք ձշմարիտ որդիք եկեղեցւոյ, և ուսեալք
զմտաւունս հաւատոց մերոց: Զի եթէ սահմանեաց եկե-
ղեցի, և օրէն է մեզ կարդալ առ ամենայն իսկ սուրբս՝
զորս կոչեաց Աստուած յերկրի, և կացոյց մերձ ինք-
ն՛ոյնսի և առաւել կարիցեմք յամենայն 'ի կարիս մեր
կարդալ առ Կոյսն սուրբ, ոչ միայն ամենայն սրբոց՝

այլ և երանաւէտ զուարթնոց ի Թագուհի, և մատուցանել նմա զաղօթս մեր: Զի՞նչ պակասէ նմա առ ի հասատատել զայս մեր ի նա. կարիցեմք հաւատալ՝ զի նա ընդ երանուելիսն ևեթ իւր չատացեալ, և որպէս թէ զբաղեալ ի փառս իւր, չիցէ ողորմելեացս կարեկից. չիցէ և միշտ մայր ողորմութեան: Կարիցեմք կարծել, զի Աստուած ի փառաւորելն զնա՝ այնպէս ամփոփեալ իցէ զնչխանութիւն նորա, զի չիցէ մեզ մարթ ընդունել զիրկաւէտ արգասիս կարողութեան նորա: Այլ չիցէ նա միշտ մայր Աստուծոյ փրկչին մերոյ՝ զոր ինքն ետ աշխարհի, և որ եղեւն նմա յերկրի աստ հնազանդ. Թերևս յընդունել իւրում զվարձս վաստակոց իւրոց՝ կորիցս զգեղեցկագոյն մասն իրաւանց իւրոց. եթէ երկրպագելի որդին իւր՝ զոր յարգանդի տարաւ՝ արար յերկրի աստ աքանչելիս վասն աղաչանաց իւրոց, զնայցէ ինչ նմա յերկինս: Այսպէս խմաստասիրեցեն սուրբ Հարք, և յայս հաստատեալ՝ յորդորեն զմեզ աղաղողադոյն և հզօր բանիւք, աղաղակել անդադար առ Տիրամայրն: Ո՛տայր ինձ կարել աստ տալ նոցա բարբառել, կամ՝ մանաւանդ՛ տայր ինձ կարել ածել այսր համառօտիս զբովանդակութիւն բանից, որովք խրատեն զմեզ կարդալ առ նա, և ուսուցանեն զարգասիս՝ որ անտի զեղուն ի մեզ: Ո՛տայր ինձ լսելի առնել ձեզ զվերհադոյն վարժապետս, և ըստ բանի Առաքելոյն խելամուտ առնել զձեզ բազմութեամբ վկայից: Զի եթէ էին խակ մեզ այլ ապացոյցք, էին ինչ պէտք առաւելագունի քան զայս. և զինչ ասեմ, չէր խակ յամառութիւն անհեթեթ, զդեմ ունել վկայութեան ամենեցուն, որ յայսքանէից դարուց հետէ կացին պատգամք և վարդապետք յեկեղեցւոյ Քրիստոսի:

Եւ ոչ աստ զկայ առնում ասել ևեթ՝ զի կարեմք կարդալ առ Տիրամայրն, այլ յաւելում ևս՝ զի պարտիմք. և ընդ է՞ր, — առ ի միաբանել ընդ սուրբ եկեղեցւոյ, առ ի հանդիսել հնուհաց Կուսին, առ ի պատ-

րաստել մեզ ընդդեմ վանդակաց աշխարհի հզօր օգնականութիւն և ամուր ապաստանի, առ ի յապահովել զփրկութիւն մեր: Զի եթէ պարտ է մեզ հաւատալ՝ որ ինչ հաւատոյ սուրբք եկեղեցի որպէս կանոն հաւատոց մերոց, չիցէ մեզ պարտ և առնել՝ որ ինչ առնէ սուրբ եկեղեցի որպէս կանոն վարուց մերոց: Այդ քանի՞ աղօթս հանապազօր ոչ մատուցանէ հանդիսիւ սուրբ եկեղեցի առ Տիրամայրն առ ի խնդրել զօգնականութիւն նորա. և չիցէ այս Թերահաւատութիւն անփոյթ առնել՝ զորմէ այնքան փոյթ է սուրբ եկեղեցւոյ, և ոչ խնդրել՝ զոր նայն խնդրէ, և ոչ դիմել առ նա ի խնդիր՝ յորմէ՝ կամ մանաւանդ որով, խնդրէ նա: Եթէ կարևոր են մեզ չնորհք, և ոչ կարեմք անգիտանալ քանի՞ կարևոր են մեզ առաւելապէս ի դէպս ինչ, օրի՞ն իցէ մեզ անփոյթ առնել զմիջնէ յապահովագոյն հնարից ընդունելոյ զայնս. արդ այս հնարք՝ բարեխօսութիւն Տիրամօրն է, և բազում անգամ լուսաւորք՝ զի ի ձեռն նորա բաշխէ Աստուած զպարգևս իւր, և ընդ ձեռն նորա անցանեն առ մեզ չնորհք աստուածայինք: Եթէ զգամք զկարօտութիւն մեր, և հեծեծեմք ի տեսանել զանձինս մեր յայնքան վտանգս, և պարտիմք ևս զգուշանալ յայնցանէ, չիցէ՞ մեզ պարտ զամենայն հնարս ի կիր առնուլ առ այս: Այդ քան զամենայն հնարս՝ զոր կարեմք առնուլ ի կիր՝ աղաղողադոյն է և առաւեւնապատրաստ բարեխօսութիւն Կուսին. և որպէս յոգունք զփորձ առեալ՝ ուսուցանեն մեզ, չիցէ՞ հաւանել ընդ կորուստս մեր անփոյթ, և չինդրել զայսպիսի օգնականութիւն: Եւ զարձեալ՝ եթէ կարևոր գործ մեր է փոյթ փրկութեան մերոյ, և ըստ ամբաւ հեռևանաց՝ այն է մեր գործ մեծ, գործ էական, և գործ միակ, իցէ՞ մեզ ներելի չառնուլ ի կիր որ ինչ առ այս պատրաստեն մեզ կրօնք կարևորս առ ի յաջողել: Այդ գործակից Աստուծոյ ի յաջողութիւն փրկութեան մերոյ է Տիրամայրն, և որպէս փրկու-

Թիւն մեր սկսաւ նուաւ և հաւանութեամբ նորա ընդ բանս հրեշտակապետին որ բարբառէր առ նա յերեսաց Աստուծոյ, այսպէս և պարսի առնուլ և կատարումն գործակցութեամբ Տիրամօրն: Ուստի ցկեա գայ, զի պարտ է մեզ ի մահկանացու կենցաղումն կարգալ առ նա, և չկարեմք ըստ բաւականին թախանձել զնա ի բարեխօսութիւն: Յառաջ խաղասցուք:

Կարեմք կարգալ առ Տիրամայրն, և պարտիմք կարգալ: Ձչմարտութիւնք անժխտելիք. այլ գործ այն է՝ կարգալ արդեամբք. այսինքն կարգալ առ նա այնպէս, զի ընդունելի լիցին նմա աղօթք մեր, զի արժանի Թուեսցին լսելի լինելոյ: Զի ըստ տէրունեան բանին, ոչ ամենայն որ ասէ Տէր Տէր, լսելի լիցի և մտցէ յարքայութիւնն երկնից. ըստ այմ կանոնի յաւելցեմ, զի բազումք յայնցանէ՝ որք ապաւինին կամ կարծեն ապաւինել ի պաշտպանութիւն սրբոյ Կուսին, ի զուր կարդան առ նա. զի ոչ կարգան քրիստոնէական հոգւով, որով է արժանի լինել կարեկցութեան նորա, և շարժել զնա ի գութ: Վասն որոյ կրկին վտանգք են ասա. և երկուս ծայրք, յորոց պարտ է խորշել. և որպէս առաքինութիւն ի միջասահմանին կայ երկուց հակառակ ծայրից, այսպէս և Ձչմարտութիւն ի մէջ երկուց մոլորութեանց զկայ առնու: Կէսք կարի յոյժ վստահին ի պաշտպանութիւն Կուսին, այլք ոչ խոստովանին զայն, կամ թուին չխոստովանել. առաջինք ըստ ըղձից իւրեանց և ըստ հաճոյս աչաւեցն ընդարձակեն զայն, և է այս մոլորութիւն յանդուգն քրիստոնէից. իսկ երկրորդք ըստ մոլոր կանոնաց իւրեանց կարի ամփոփեն, և է այս մոլորութիւն նորոգել կամեցողաց ըզկրօնս. առ որս են բանք իմ, և որք այլազգ իմն խոհեմութեամբ արտաքոյ Աւետարանին ձեռներէց լինին առ մեզ հրահանգս ի գայթակղութիւն հաւատացելոց: Վասն որոյ պարտս պաշտամանն իմոյ համարիմ զգեմ ու-

նել նոցա ամենայն զօրութեամբ աստուածային բանից. ուշ ունել ազաչեմ:

Այս ի ձեռնտեղ նախ ընդգիմ առաջնոցն մոլորութեան՝ պարտ է, ո հաւատացեալք, խոստովան լինել զի զվստահութիւն մեր մեծաւ երբեմն անդր քան զսահման, և մատուցանեմք սրբոյ Կուսին աղօթս՝ որոց ոչ կարէ լսել. և ընդդէմ. — զի թշնամանագիրք են Աստուծոյ, անարժանք լինքեան, և մեզ իսկ վնասակարք: Թշնամանագիրք Աստուծոյ, զի են ուղղակի ընդդէմ օրինաց աստուածախնամ տեսչութեան, և ի կործանումն կարգի փրկութեան մերոյ, զի կարգ և օրինք նախախնամութեան հաստատեն զփրկութիւն մեր նախ ի ձեռն Աստուծոյ, և ապա մեր, զի օգնականութեամբ շնորհացն Աստուծոյ աշխատ լիցուք հասանել այնմ. ընկալցուք շնորհս առ այս ի ձեռն Տիրամօրն, այլ փոյթ կալցուք յարդել զայն, այլ արասցուք զայն արդասաւոր գործովք մերովք, այլ պահպանեսցուք զայն քանիւք մերովք անկորուստ: Այս է կարգն աստուածագիր: Իսկ մեք անտես արարեալ զկարգադրութիւնն Աստուծոյ, ստեղծանեմք այլ իմն կարգ ըստ մտաց մերոց, այսինքն ըստ խանդարեալ զբայութեանց մերոց և ըստ ապականեալ յօժարութեանց: Եթէ կարծեմք՝ զի ընդ պաշտպանութեամբ Կուսին ձերն լիցի մեզ փրկութիւն, զի կատարելով գործս ինչ թարմատար բարեպաշտութեան ի պատիւ Տիրամօրն, լիցի մեզ կալ առաջի Աստուծոյ որպէս թէ զայլ ամենայն պարտս մեր կատարեալ, զի զըզգեստ պաշտօնէից Կուսին բերելով զանձամբ՝ ամրացուք յամենայն վտանգաց աշխարհի, յամենայն փորձութեանց կենցաղոյս, յամենայն գաթանակալութեանց մահու, յամենայն գառամկնքոց աստուածային արդարութեան և յերկնառաք չանթից, և այսպէս կարասցուք դիմել աներկիւղ ի վտանգս, կալ ձեալ ի չար սովորութիւնս և ի մեղս, և վաղուց ի վաղիւ արկանել զապաշ-

խարուեթիւն մեր, ո՛հ հաւատացեալք, եթէ այսպէս կար-
ծեմք, ոչ այսպէս դաւի Աստուած, և ոչ երբեք դատե-
ցի այսպէս: Ապա Թէ ոչ, ինքն իւր հակառակէր. և ո՛ր
տեղի յուսոյ մնայր ձեզ, մանաւանդ այդպէս սովորելոց,
փոխելոյ Աստուծոյ զանգարձ վճիռս յաւիտենական ի-
մաստութեան իւրոյ: Աղօթք դարձեալ անարժանք Տի-
րամօրն. քանզի հաւասար է այս խնդրելոյ 'ի նմանէ՝ զի
ասացէ մեզ համարձակութիւն մեղանչելոյ ընդդէմ Աս-
տուծոյ, զի յապահովս կացուսցէ զմեզ 'ի դատաստա-
նացն Աստուծոյ, մինչև անփոյթ լինել մեզ կանխելոյ,
պատրաստ կալոյ, և զի դարձեալ թողցէ մեզ յարատևել
յանկարգութիւնս մեր, և մեռանել անապաշխար: Եւ
դարձեալ աղօթք, որք փոխանակ մերձեցուցանելոյ զմեզ
առ Աստուած, հեռացուցանեն զմեզ բայց 'ի բաց, և են
վնասակարք մեզ յոյժ: Արդ կարծել՝ զի այսպիսի ա-
ղօթք կարիցեն շարժել զսիրտ սրբագունին 'ի կուսանս,
հաւատարմագունին յօրէնս Տեառն, հնազանդագունին
խորհրդոց և կամացն աստուածայնոց, նախանձաւորա-
գունին փառացն Աստուծոյ և սրբութեան հաւատացե-
լոց, ո՛չ յայտնի և զգալի լինէր անտեղութիւնն:

Ասեցէք՝ Թէ ուրեմն մեղաւորն որ 'ի մեղս կայցէ,
չիցէ մարթ կարգալ արդեամբք առ Տիրամայրն.— կարի
խոկ քաջ. զի չունելով զսէրն Աստուծոյ յանձին, և կա-
լով անապաշխար, 'ի զուր ապաւինի առ սուրբ Կոյսն և
աղօթէ, զի ամենայն աղօթք նորա անօգուտք են, և ա-
մենայն եռանդեամբ իւրով 'ի պաշտօն Կուսին ոչ հա-
սանէ փրկութեան: Մոլորութիւն է և այս, յորմէ պարտ
է մեզ զգուշանալ. զի պատիր բանիւք և չարարուեստ
հնարիւք կեղծաւորեալ, ընդ պատրուակաւ քրիստոնեա-
կան օգտակար խրատուց, և ընդ կերպարանօք ՃՀմար-
տութեան՝ որ ազդէ 'ի մեզ, չտայ տեսանել զվանդն.
և խորագիտին տեսութեան պէտք են առ 'ի հոլանել զսյն:
Զիք ինչ գեղեցիկ յերեւման քան զառաքինութիւնս

զոր առնեն մեզ մոլորեցուցիչք. առաքինութիւնք տար-
տամք, ըստ մտսին Ճշմարիտք, մոլորք ըստ այլոյմ մա-
սին, միշտ վտանգաւորք. զի բերին 'ի բառնալ զվստա-
հութիւն մեր 'ի մայրն ողորմութեան, որ ապաստան է
մեղաւորաց: Աւեթ՝ Թէ չիցէ պարտ խարդաւանել զպար-
զամիտս 'ի պատրանս, տալով նոցա յուսալ 'ի նա ա-
ռաւել քան զարժանն: Ընդունիմ զայն. այլ ասեմ՝ զի
և ոչ պարտ է խարդաւանել զպարզամիտս 'ի պատրանս՝
բառնալով զամենայն յոյս նոցա. և առ 'ի յայտնել և ևս
զմիտս իմ, սիրելի ունկնդիրք, և առ 'ի տալ ձեզ զկայ
առնուլ յարդար սահմանի, ուր պարտ է կալ ամենայն
հաւատացելոյ, պարզեցից զնմանս իմ. ազաչեմ միտ դք-
նել:

Արդարև ասել մեղաւորի, զի առանց ապաշխարու-
թեան՝ բարեխօսութեամբ և աւետ սրբոյ Աստուածածնին
մարթ իցէ արդարանալ և հասանել փրկութեան, է ար-
կանել զնա 'ի մոլորութիւն, և 'ի թանձրագոյն քան զա-
մենայն մոլորութիւնս. զի առանց ապաշխարութեան չիք
արդարութիւն, և ոչ փրկութիւն: Այլ ասել ևս նմա,
զի եթէ չիցէ արդեամբք հրաժարեալ 'ի մեղաց, եթէ
չիցէ առաջադրեալ արդեամբք՝ խզել զկապանս մեղան-
ւոյն, եթէ չիցէ արդեամբք եկեալ 'ի զղջ, ընդու-
նայն է նմա կարգալ առ Տիրամայրն, և յոյս իւր ոչ ինչ
օգնեսցէ, է խաբել զնա և մոլորեցուցանել: Զի չիցէ՞
նմա մարթ չև ապաշխարեալ՝ գալ բարեխօսութեամբ
Կուսին յապաշխարութիւն. չիցէ՞ նմա մարթ չև խրա-
խուսեալ կորզել զանձն յաշխարհէ և յամենայն ապարա
ցանկութեանց՝ խնդրել բարեխօսութեամբ Տիրամօրն
ընորհս առ այն և ընդունել. չիարիցէ՞, չև ազդոզապես
շարժեալ Աստուծոյ, զգացեալ զսիրութիւն սրտի
իւրոյ, և անվստահ յանձն իւր, բարեխօսութեամբ սըր-
բոյ Կուսին խնդրել Աստուծոյ ընորհս զղջման, ընորհս
լուսաւորութեան և զօրութեան: Զիցէ՞ նմա մարթ 'ի

գթոյ՝ ուր անկեալ կայ՝ ձեռն կարկառել առ Կայն, և կարդալ զնա յօգնութիւն, աղաղակելով առ նա. Թա-
գուհի երկնից, և ամենաշքեղ միջնորդ Աստուծոյ և մարդկան, մի թողուր զիս զմեղաւորս, զկուրացեալս, զնաստացեալս սրտիւ, զկարս և զծանրաբեռնեալս մեղօք, որ ոչ կարեմ լինձէն յառնել կալ, և չունիմ զոք բայ 'ի քէն բարեխօս առաջի գառաւորին իմոյ՝ ածել զնա յաշխարս, գարձուցանել յիս զզօրութիւնն՝ զոր կորուսի, որոմ կարօտս եմ. Սբ Ե ու ա ր դ Մ ա բ ի ամ մայր Աստուծոյ, բարեխօսեա վասն մեր ցաղթեալս վասն մեղաւորաց: Զկարիցէ՞, ասեմ, կարդալ այսպէս առ Տիրամայրն, և կարծիցեմք թէ սուրբ Կոյսն կացցէ անկարեկիր առ այսպիսի հեծութիւնս, և ոչ գըթասցի ընդունել վասն նորա չնորհս գարձի:

Արդարև ասել մեզաւորի՝ զի առանց սիրոյն Աստուծոյ, բարեխօսութեամբ հեթ սուրբ Աստուածածնին, կարիցէ ժամանել 'ի ժառանգութիւն Աստուծոյ, ոչ միայն խաբէութիւն է՝ այլ և ամպարշտութիւն. զի առանց աստուածսիրութեան չկարէ ոք լինել բարեկամ Աստուծոյ, և ոչ ընդունի զոք Աստուած 'ի թիւս ընտրելոց իւրոց յարքայութիւն իւր, բայց միայն զբարեկամս իւր: Բայց և ասել մեզաւորին, զի ջանելով արդեամբք զսէրն Աստուծոյ յանձին, չկարիցէ խնդրել ինչ 'ի սրբոյ Կուսէն, և զի ընդունայն ձգնի ունել զնա իւր օգնական, է զեղծանել գիւրահաւանութեամբ նորա, և բառնալ 'ի նմանէ յաղէտս նորա զմի 'ի ստոյգ և 'ի հաստատուն նպաստից նորա: Զի զոր ջանի նա յանձին զաստուածսիրութիւն՝ չկարիցէ՞ առնալ ապա, և առ 'ի աստնալ՝ չկարիցէ՞ դիմել առ Տիրամայրն, որ է մայր գեղեցիկ սիրոյ ըստ բարբառոյ սուրբ գրոց: Որպէս առանց ունելոյ յանձին արդեամբք զաստուածսիրութիւն՝ մարթ է հաւատալ յԱստուած, և 'ի հաւատոյ անտի եղանել ապա 'ի վեր յաստուածսիրութիւն, չկարէ՞ մարթ և առանց բերելոյ յանձին զսէրն Աստուծոյ՝ ունել 'ի սրտի յոյս 'ի

Տիրամայրն, և խրախուսեալ այսու յուսով չկարիցէ՞ խոնարհել առաջի նորա, յանդիման առնել նմա զանձին թշուառութիւն, և զարթուցանել զգութ նորա՝ որ պատրաստեալ է օգնել մեզ, և այսուհետ գտեալ մուտս առ նմա՝ գառնալ 'ի չնորհս, և սառնալ անդրէն զսպարգև անկշռելի սիրոյն Աստուծոյ: Եւ չէ օրէն ածել ինձ 'ի դէմ՝ զի առանց աստուածսիրութեան չիցէ մարթ լինել նախասահմանեալ, և իբր հարկաւ զկնի բերել՝ զի առանց աստուածսիրութեան չիցէ յուսալ բարւոյ խնդիր 'ի պաշտամունէ Տիրամօրն և 'ի կարդալոյ առ նա: Իմաստասիրութիւն, զորոյ չատ է ցուցանել զերկդիմութիւն առ 'ի յայտ առնել զստութիւն: Գիտեմք՝ զի առանց աստուածսիրութեան չէ մարթ լինել նախասահմանեալ ըստ կատարման և ըստ լրութեան, կամ պարզ ևս՝ առանց աստուածսիրութեան չէ մարթ հասանել 'ի լրումն նախասահմանութեան, այս ինքն 'ի փառս. այլ նախ քան զչասանել յայն, և 'ի մեղս խակ, և առանց սիրոյն Աստուծոյ, չիցէ՞ մարթ լինել նախասահմանեալ՝ առ 'ի հասանել յաւուր միում 'ի փառս: Զի մարթ խակ է լինել նախասահմանեալ հրաժարելոյ 'ի մեղաց՝ առ 'ի մտանել 'ի ճանապարհս արդարութեան, արծարծանել զհուր սիրոյ 'ի սրտի. և որո՞վ իւիք.— նպաստիւք՝ զոր տացէ մեզ Աստուած: Այսպէս սուրբ Մագդաղենացին մինչդեռ 'ի մեղս կայր, էր նախասահմանեալ. այսպէս Աւրքեալն հեթանոսաց յորժամ հալածէր զեկեղեցին Աստուծոյ, էր նախասահմանեալ. այսպէս այսպէս բիւրք բիւրուց մեզաւորաց՝ 'ի մեղս խակ իւրեանց՝ էին նախասահմանեալ: Արդ զնպաստս զայսոսիկ նախասահմանութեան յոյր ձեռն հաւաստեաւ և անվրէպ կարեմք ընդունել, եթէ ոչ 'ի ձեռն Տիրամօրն:

Զնոյն իմաստասիրեմք և վասն այլոց բազում այնքան խրատուց, որովք կարծեն մոլորեալքն յուղղութիւն ածել զվստահութիւն մեր 'ի մայրն Աստուծոյ, և

զգուշացուցանել զմեզ ’ի ցնորական զեղծմանց. ասեմ
եւկ ’ի ցնորական զեղծմանց: Զի յորժամ խրատեն զմեզ՝ մի
կարծել թէ չէցէ իշխանութիւն Աստուծոյ գատապար-
տել զմեղաւորն վասն բերելոյ նորա յանձին նշանակս
ինչ արտաքինս պաշտաման սրբոյ Կուսին, մի համարել՝
զի առաւել էցէ ողորմած սուրբ Կոյսն և նախանձաւոր
փրկութեան մերոյ քան զնիւքն իսկ զՓրկիչն մեր, և մի
առաւել յուսալ ’ի բարեխօսութիւն նորա քան ’ի վաս-
տակս Աստուածորդւոյն, մի կարծել՝ զի առանց Տիրա-
մօրն չէցէ մարթ մերձենալ առ Աստուած, և ոչ ’ի ձեռն
Փրկչին մերոյ, և մի դնել զսուրբ Կոյսն ’ի կշիռ ընդ Աս-
տուծոյ և ընդ Քրիստոսի. մի բառնալ ’ի Քրիստոսէ զո-
ղորմութիւն առ ’ի տալ զայն մօր նորա, մի նախամեծար
առնել զպաշտօն նորա քան զաստուածայնութիւն և
զվստահութիւն՝ զոր պարտ է մեզ ունել Աստուած.
յորժամ զայս ամենայն խրատս ընդունայն մեզ ’ի հան-
դէս ածեն, չէցէ այս տալ մեզ զեղծմունս՝ ’ի ցնորից
մտաց իւրեանց սահմանական, առ ’ի չարահամբաւել ըզ-
պաշտօնասէրս Կուսին հաւատացեալս. չէցէ այս վայ-
րապար երևեցուցանել զնոսա մնապաշտս և նանրահա-
ւատս: Ո՛ ’ի մէնջ այսպիսի ինչ խորհեցաւ, ո յայսպիսի
ծայրայեղ կամ մանաւանդ յայլանդակ պաշտամունս
զառածաւ: Այլ եղբարք իմ, առ պաշտօնեայս սեղանոյ
բարբառիմ, ընտրեալս Աստուծոյ յառաջնորդութիւն
ժողովրդեան իւրոյ և ’ի փրկութիւն նոցա. ’ի ժամանա-
կի՝ յորում ապականութիւն տիրէ ընդ հանուր, և տե-
սանեմք այսքան հոգիս, դնեալս պատուական արեամբն
Քրիստոսի, մոլորեալ և ապականեալ, մի փակեսցուք
նոցա զճանապարհս գարձի և փրկութեան: Այլ մի ’ի
ճանապարհայ ասէի ապահովագունից է սրտեռանդն
պաշտօն Կուսին: Աստցուք հաւատացելոց, զի առ ’ի
կարդալ արդեամբք առ Տիրամայրն՝ պարտ է քրիստո-
նէական կարդալ, այս ինքն խոստովանելով զկարողու-

թիւն նորա և զհամարձակութիւն առաջի Աստուծոյ,
փոխել զվարս, և ուղղել զգնացս, ’ի բաց կալ յախտից,
և նուաճել զկիրս, յաղթել մարմնոյ և զդէմ ունել յար-
ձակմանց նորա, զգուշանալ ’ի հաղթից բանսարկուին,
և ’ի հրապուրանաց աշխարհի՝ յոյժ առաւել վանգաւա-
բաց վասն նոցա քան զամենայն ղօրութիւնս դժոխոց,
պարապել ’ի հրահանգս կրօնից, և բարեգործութեամբ
ղօրանալ ’ի հաւատս, սրբել զանձինս և արժանի առնել
յաւիտենական երանութեան: Բայց յաւելցուք և ասել
նոցա, զի թէպէտ և յանկարդութեան կեցեալ էցեն,
թէպէտև մեղաւոր լեալ, և արդ իսկ էցեն, ընկալցի զնո-
սա Տիրամայրն, դիմեսցեն առ նա խոնարհ և որդիական
վստահութեամբ. զի ոչ միայն ոչ մերժեսցէ զնոսա, այլ
և ձեռն տուեալ նոցա և գիրկս տարածեալ՝ հրաւիրեսցէ
զնոսա, և մատուսցէ նոցա օգնութիւն: Զայսոսիկ նոցա
պարտ է մեզ ասել, և զայսոսիկ ’ի դիմաց քոց, Կոյս
սուրբ, ասեմ առ նոսա. գիտեմ զի հաճիս ընդ այս, և
հպատակես զբանս իմ: Բարբառիմ առ հաւատացեալս,
այլ և ’ի սոսա քանիք էցեն՝ որք գայթ ’ի գայթի կայցեն,
մերձ ’ի կործանումն: Քանիք գաղջք և նուաղեալք ’ի
ծառայութիւն Աստուծոյ, և ’ի կատարումն պարտուց
իւրեանց. քանիք կուրացեալք և խաբեալք յուսան ’ի
կարծեցեալ իւրեանցն անմեղութիւն, և կեան ’ի մոլոր
խղճի. քանիք մեղաւորք, թշնամիք Աստուծոյ և առե-
ցեալք ’ի նմանէ, ’ի վտանգի տալոյ նմա վերջին: Վասն
սոցա աղաչեմ և վասն իմ, վասն սոցա առ քեզ աղաղա-
կեմ, քեզ զսոսա յանձն առնեմ, զգաղջս և զվստահսիր-
տս, զկոյրս և զգագեաս, զաշխարհասէրս և զմեղաւորս:
Ընկալ զնոսա և քաջալերեա, լուսաւորեա զնոսա, և
հաշտեցո՛ ընդ Աստուծոյ, տուր երկնից առ հասարակ
օգնել նոցա, և դու ինքն օգնեա: Այսպէս, ո՛ հաւատա-
ցեալք, պարտ է մեզ կարդալ արդեամբք առ Տիրա-
մայրն, և նմանող լինել նմա երկիւղածութեամբ, որ-
պէս յերրորդումս մասին առաջի կայ ինձ ասել:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Գեղեցիկ իմաստասիրէ սուրբն Օգոստինոս ՚ի խօսելն զսրբոց վկայից, և զպաշտամանց՝ զորս նոցա ընծայեմք: Խրատ տայ մեզ կատարել զսօնս նոցա, ջանալով նմանողք լինել հաստատուԹեան նոցա. զի ոչ է, ասէ վարդապետս այս մեծ, պատուել զսուրբս ըստ արժանւոյն յերկրի աստ՝ առանց դնալոյ զկնի հետոց նոցա. և սօնք, զոր սահմանեաց եկեղեցի վասն վկայից, են առ ՚ի յորդորել զմեզ ՚ի վկայուԹիւն. Տօնք վկայէ յորդորէն զմեզ ՚ի վկայուԹիւն: Ի հաստատուԹիւն առաքինուԹեանս իմոյ ՚ի կիր առնուիմ զբանս զայս. և յայսմ աւուր՝ յորում կատարեմք զսօն երանելւէտ վերափոխման Կուսին յերկինս, համարիմ՝ զի չկարեմք մեք նորոգել զպաշտօն մեր առ նա, և ոչ հաստատել զայն լաւագոյն, քան հաւատարիմ և անյեղլի նմանողուԹեամբ առաքինուԹեանց նորա: Երկու ինչ զայսմանէ առաջի կայ ինձ ասել՝ նախ՝ զի յորում իմիք պարտ է մեզ նմանիլ Կուսին, և երկրորդ՝ զի ընդէր պարտիմք նմանիլ նմա: Յորում մասին պարտ է մեզ նմանիլ՝ է սրբուԹիւն կենաց նորա, զոր պարտիմք ունել մեզ յօրինակ. իսկ ընդէր պարտ է մեզ նմանիլ նմա, որպէս զի հաղորդս լինցուք փառաց նորա. և այս առ ՚ի յորդորիլ զմեզ ՚ի նմանուԹիւն: Բաւական էր այս ՚ի յօրինուած բովանդակ ճառի. համառօտեմ զայն, խնդրելով վայրկ մի ևս զձեզդ մտադրուԹիւն:

Պարտ է մեզ նմանող լինել սրբուԹեան վարուց Տիրամօրն, զոր պատուեմք և կարդամք մեք յօդնուԹիւն. և ահա յորում մասին կարեմք ունել զնա մեզ յօրինակ: Ոչ յառանձնաշնորհուԹիւնս, զորս ընկալաւ

Աստուածոյ, և զորս ոչ կամեցաւ Աստուած յայտնել մեզ, և յանդգնուԹիւն էր պահանջել զայն. ոչ և ՚ի գերաշխարհիկ պատիւ նորա և ՚ի փառաւորեալ պարգեւս՝ զորս շնորհեաց նմա Աստուած, զհետ ընարուԹեանն յաստուածամայրուԹիւն. զարմացուք ընդ աքանչելիսն, խոստովան լիցուք զգերադոյն մեծուԹիւն ամենակալին՝ որ արարն զայնոսիկ, և ՚ի միտ առցուք զարժանաւորուԹիւն այնորիկ՝ յոր զաչս իւր դարձոյց Բարձրեալն, և յորում եցոյց զամենայն զօրուԹիւն իւր. և մատուսցուք նմա զանկաւարն իւր պաշտօն և պատկառանս և պատիւս: Այլ այս ամենայն սքանչելիք չէն մեզ ՚ի կանոնս վարուց, զի ոչ եղ զայն Աստուած ՚ի կարի մերում, այլ գնդ ՚ի վերոյ են քան զմեզ: Յորմէ իմիք ապա պարտ եցէ մեզ նմանող լինել սրբոյ Կուսին. — սրբուԹեան վարուց նորա, լուսեղէնութեան, կատարելուԹեան, և անդըրդուելի հաստատուԹեան սրբուԹեան նորա: Գանե՛ք իսըրատ մեծամեծք վասն մեր, սիրելի ունկնդիրք, և քանի՛ ընդարձակ ասպարէզ մտածուԹեան:

Լուսեղէն սրբուԹեան ասէ. զի որպէս սուրբն Ամբրոսիոս ազգ առնէ, զի ՚ի սուրբ Կոյսն ոչ որպէս յայլս տեսանեմք փայլեալ առաքինուԹիւնս ինչ, յորս ամիսոիւ սրբուԹիւն նոցա և վաստակ. խորհեցցուք ՚ի վարս նորա, և գոցուք զայն իսրատ ընդհանրական ամենայն առաքինուԹեանց ամենայն տիոց և կարգաց. զի ասէ. Այնպիսի եղեւ Մարիամ, պէս նորա գիտայ էնանի ամենեցուն առ հասարակ է ՚ի խրատ: Յօրինելով զվարս մեր ըստ իւրոյն, ուսցուք լինել հաւատարիմք առ Աստուած, արդարակորովք և եղբայրասէրք առ այլս, հրաժարելք յանձնէ, մտադիրք ՚ի մէջ: Ուսանիցիք, օրիորդք, որ լինչ անփոյթ առնէիք դիտել, և յոյժ կարևոր է ձեզ ոչ անգիտանալ, այս լինքն յատկահոլիկ զանմեղուԹիւն հոգւոց ձերոց, և պահել զմեծագին զանկշռելի զգանձն կուսուԹեան անարատ. փախչել առ այս յաչխարհէ, և մանա-

ւանդ յակմբից լինչ աշխարհականաց· կալ հանապազ ՚ի
կատածի զսրտից ձերոց, և չներել նոցա խոսսափիլ
յերեսաց ձերոց, և ոչ ՚ի գեպս գոչինաքեայս· նուաճել
զզգայուԹիւնս ձեր, և արգելուլ նոցա զազատուԹիւն,
ոչ միայն մեղանչական՝ այլ և վոանգաւոր· պահել յա-
մենայնի զզգուշուԹիւն զպարկեշտուԹիւնև զզգաստու-
Թիւնՙ որ անկ է ձերումդ բնուԹեան, և յօրինել ձեզ
զարդ գեղեցկագոյն: Հարք և մարք, ուսարուք անտի
զտեսչուԹիւն ընտանեաց՝ ունել զնոսա ՚ի բարեկար-
գուԹեան և ՚ի բարեպաշտուԹեան, կրթել զորդիս ձեր
ոչ ըստ սեռուԹեան ձերումՙ այլ ըստ Աստուծոյ· ոչ
վասն ձեր և ՚ի սփոփուԹիւն ձերՙ այլ վասն Աստուծոյ և ՚ի
փառս նորա, նուիրել նմա զնոսա և պատարագել: Մա-
նեմ յանդգնեսից ՚ի մանրամասնունՙ որ օտար հանեն
զնս ՚ի բնաբանէս· այլ առանց հարկի լջանալոյ ՚ի մի ՚ի
մասանց առանձինն, ասացից· ո՛ անգիտանայ՝ զի ՚ի յա-
ջողուԹեան և յարկածս, ՚ի մեծուԹեան և ՚ի նուաս-
տուԹեան, ՚ի գործել և ՚ի կրել, ՚ի հրամայել և ՚ի հնա-
զանդել, յաղօԹել և ՚ի պարապել ՚ի գործս՝ եւս և ՚ի
մարդկայինս, ՚ի կատարել զպարտս քաղաքական և քրիս-
տոնէական հոգևոր կենաց, յօրինս Տեառն և ՚ի մարդ-
կայինս, յո՛ր և իցէ դեպս, ամենայն ուրեք յանդիման
լինի սուրբ Կոյսն առ ՚ի խրատել զմեզ, և լինել մեզ օրի-
նակ և առաջնորդ· Այնպիսի եղեալ Մարիամ, զի նորա ոչնոյ
ՀԵանգ՝ լիցի ամենեցուն ՚ի հրահանգս:

ԿատարելուԹիւն սրբուԹեան ասէի· այս լինչն գե-
րամաքուր և գեր ՚ի վերոյ քան զամենայն սրբուԹիւնՙ
բաց յաստուածայնոյն: Այլ Թուեսցի ինձ Թերևս այն-
պէս՝ զի որչափ գերագոյն իցէ սրբուԹիւն Կուսին և կա-
տարելագոյն, այնչափ ապիկար գտանիցիմք նմանել
այնմ: Այլ տամ առ այս պատասխանի, զի կամի Փրկիչն
մեր՝ զի իւր իսկ նմանեսցուք, Թէպէտ և Աստուած է, և
իբրև Աստուածՙ անքաւ առաւելուԹեամբ սրբագոյն քան

զմայր իւր· նա աւանիկ հրամայէՙ զի նմանեսցուք Հօր
իւրում, և լիցուք կատարեալք որպէս զնա· Եղերու-թ-
նոպարեալ, որպես և Հայրն ձեր երկնաւոր նոպարեալ է: Ասպաքէն
ոչ զնոյն ընդ Տիրամօրն ընկալաք մեզ, վասն որոյ և
չկարեմք աչն ունել ՚ի կատարելուԹիւն նորա հասանե-
լոյ· այլ կարեմք աւելի կամ նուազ մերձենալ յայն, այլ
կարեմք, առաջի ունելով զնա և զեռանդն կրօնից նորա,
սԹափել ՚ի ԹմրուԹենէՙ որ առնէ զմեզ գաղջս և ան-
փոյԹս ՚ի կատարումն հանապազորդ պարտուց կրօնից·
այլ կարեմք, օրինակ ունելով զնա և զսէր նորա առ Աս-
տուած, կշտամբել զանհոգուԹիւն մեր առ Տէրՙ որ ար-
ժանին է ամենայն փուԹոյ, և արծարծանել ՚ի մեզ է-
ռանդն նոր· այլ կարեմք, օրինակ ունելով զՏիրամայրն
և զանզբաղուԹիւն սրտի նորա, ամաչել ընդ ցնդմունս
մտաց մերոց կամաւորս և յաճախաւորս ՚ի սրբագոյն
հրահանգս կրօնից, և ստէպ կալ աղօԹից· այլ կարեմք,
օրինակ ունելով զնա, և զեռանդն նորա և զարիւնուԹիւն,
զղօրուԹիւն համբերուԹեան նորա, զուղղուԹիւն դի-
տաւորուԹեան և զնօրին խոնարհուԹիւն, խոստովան
լինել առաջի Աստուծոյ զտկարուԹիւն մեր և զքնքչանս,
զընդունայն դիտաւորուԹիւնս և զնօթական հաճոյս
հպարտուԹեան, և խրախուսել ՚ի մարտ ընդդէմ նոցա,
և ուզղել զայնոսիկ: Ոչ կարասցուք ելանել ՚ի բարձրու-
Թիւնՙ առաքինուԹեանց նորա, այլ մերձագոյնս ըստ կա-
րի մերում գնալով զհետ նորա, կալցուք ՚ի ստորև բարձ-
րագոյն կայս:

Ասէի գարձեալ զյարատևուԹիւն և զանդրդուե-
լի հաստատուԹիւն սրբուԹեան Տիրամօրն: Ո՛վ հա-
ւատացեալք, ՚ի կատարել այսօր զսոն երանաւետ վե-
րափոխման նորա, տեսնեմք ընդ նմին և զնիշատակ պա-
տուական մահու նորա· և իբ այնպէս եղև պատուական
մահ նորա առաջի Տեառն: — Ասկոյՙ զի սուրբ լեալ էին
հեանք նորա, մանաւանդ Թէ օր քան զօր սրբագոյնք՝

հանապազօր վաստակոյն աճեցմամբ: Այլ աւաղ, եթէ նկրտիմք մեք 'ի նմանութիւն նորա յամենայնի, այլ յաքրատեւութեան նորա՝ ոչ ևս. այլն ամենայն որչափ և մեծ էցէ, որչափ գերաշխարհիկ, չէցէ մեզ յօգուտ. զի 'ի հաւատայեալս ոչ զսկիզբն վաստակոց պսակէ Աստուած, ասէ սուրբն Հերոնիմոս, այլ զվախճան: Այս է գերազանց օրինակն, զոր պարտ է մեզ ունել միշտ առաջի, սրբութիւն Կուսին, սրբութիւն լի և ամբողջ, սրբութիւն վեհ և վսեմ, սրբութիւն յարատեւ և հաստատուն: Զայս պարտ է մեզ ուսանել, յայս խոհալ, այսմ պարապել, եթէ հաստատուն կամիմք կալ 'ի պաշտօն Տիրամօրն: Այլ, սիրելի ունկնդիրք, խոստովան լինցուք անկեղծութեամբ, զի այս է կէտն գլխաւոր՝ ուր պաշտօն մեր թերանայ, ուր եռանդն մեր ցրտանայ: Ոչ վերջանամք 'ի հուչակելոյ զմեծութիւնս Կուսին, ոչ յետնիմք 'ի նախանձաւորութենէ պաշտպանելոյ գերազանցութեանց և առանձնաշնորհութեանց նորա, և մատուցանելոյ նմա պատիւ և սպաս: Այս ամենայն բարի է և գովելի. և հաւատարիմ իսկ եմք առ այս ամենայն, զի չէն ինչ յոյժ գժուարինք. այլ նմանօղ լինել անապական մաքրութեան նորա, և ինամոց առ 'ի պահել զյն անարատ, նմանել 'ի բաց կալոյ նորա յաշխարհէ և սիրոյ առանձնութեան, հրաժարելոյ յանձնէ իսկ և յամենայն երկրաւոր բարեաց, կոյր հնազանդութեան առ ամենայն կամս Աստուծոյ, արիութեան 'ի գործել և 'ի կրել զամենայն վասն սիրոյն Աստուծոյ, մեռուցման զպայարանաց, հանապազորդութեան աղօթից, ամենայնի՝ որ օգնէ սրբութեան, այս է որ զարհուրեցուցանէ զընութիւն, զի մարթ ընդդէմ նորա յարդարէ և տագնապէ զնա: Սակայն մի խաբիցուք. զի որպէս գիտեմք եմ 'ի նմա պարտ է մեզ նմանիլ, ուսցուք և զայն՝ թէ վասն ի՞ր պարտիմք նմանիլ. այս ինքն վասն մանաւանդ լինելոյ փառաց՝ զոր դէպսն երկնից ընկալաւ այսօր. զի քան զամենայն ինչ կարևորագոյն այս է, մի մոռանայցէք զայս:

Մխա դիք աղաչեմ. վերափոխի սուրբ Կոյն այսօր առ Աստուած, առ 'ի վայելել յերանութիւն յաւիտենական. այլ այս երանութիւն, ոչ որպէս զայլսն է բազումս՝ վաղ ընկալեալս 'ի նմանէ, ընդորհ ձրի, այլ է վարձ վաստակոց. և ըստ կարգի աստուածախնամ տեսչութեան պարտ էր այսմ լինել պատուղ վաստակոց նորա և սրբութեան. այլ ամենայն արժանապատուութիւնք իւր ոչ բաւէին տալ նմա իրաւունս առ 'ի ժառանգել զայս երանութիւն: Զիցէ՞ լինէ արդ օրէն՝ ասսի զհետ բերել, զի եթէ կամիմք հաղորդս լինել փառաց Տիրամօրն՝ պարտ է մեզ պատրաստել զանձինս առ այն, հաւատարիմ նըմանողութեամբ վարուց նորա: Այո՛, սիրելի ունկնդիրք, մարթ է ինձ ասս ասել ձեզ՝ ցուցանելով զՏիրամայրն, որ ինչ Աբրահամն առ նախնի հաւատացեալս ասէր՝ առաջի դնելով նոցա զնա ինքն զԲրիստոս. Եղիջ լուսաբանող նորա կորդ լինիցիմ, և փառաց նորա հաղորդ լինելոց եմ: Եթէ գործիցէք որպէս զԿոյն, պսակեսջիք որպէս զնա. եթէ կրիցէք ընդ նմա, հանգոյն նմին և փառաւորեսջիք: Ահա կէտն՝ յոր դիմէք, և ուղին՝ ընդ որ ունիք հասանել անդր. մի բաժանեսցուք զերկոսին զայսոսիկ. զի 'ի բաժանելն լիցի մեզ անկանել, կամ 'ի յանդգնութիւն եղեռնական, և կամ 'ի վատ փոքրոգութիւն: Յանդգնութիւն եղեռնական, եթէ ոչ հայեցեալ 'ի յաղթանակ Կուսին և 'ի պայծառութիւն փառաց, կարծիցեմք հասանել անդր ընդ այլ ուղի, և առանց զնոյն հնարս 'ի կիր արկանելոյ. զի ո՞չ ապաքէն նորանշան լիմն լինէր առաստաձեռնել առ մեզ Աստուծոյ քան առ մայր իւր, և ձրի ամենևին ընձեռել մեզ զոր այնքան մեծագնի կամեցաւ տալ մօր իւրում: Եւ վատ փոքրոգութիւն, եթէ զգժուարութիւնս ևևթ ուղւոյն ածեալ զմտաս՝ ընդ որ սուրբ Կոյն ընթացաւ, լքանիցիմք 'ի հասանելոյ 'ի կէտն՝ ուր նայն առաջնորդեալ եհաս, փոխանակ քաջալերելոյ 'ի տեսիլ կիսին, և յանձն առնլոյ զամենայն դժուարութիւնս

Ճանապարհին, և կոխելոյ զամենայն խոչ և զխոտ՝ որ ընդ առաջ լինին մեզ: Կալցուք ապա առաջի աչաց հանապազ զերկոսին զայսոսիկ մեծամեծ տեսիլս, զՄարիամ յերկրի, և զՄարիամ յերկինս. եթէ կեանք նորա վըշտակիր և տաժանաւոր յերկրի ապրեցուցանեն զտկարութիւն մեր, կեանք նորա փառաւորեալ յերկինս լցին մեզ 'ի քաջալերութիւն և 'ի սփոփանս:

Մանաւանդ զի (քաջ 'ի միտ առեք զոր ասեմ, և որով վախճան առնեմ բանիցս,) մանաւանդ զի այս փառք յաղթանակի նորա յերկինս մեծապէս օգնեն մեզ, 'ի հայթայթել հզօրագոյն օգնականութիւն նմանոզ լինելոյ վշտակիր կենաց նորա յերկրի: Պարզ և ասացից, և կրկնեմ զայս 'ի մխիթարութիւն ձեր և 'ի հնից ճառիս: Ասպաքէն սուրբ Կոյսն վերափոխի՝ կալ առ աթոռովն Աստուծոյ, և բազմել յաթոռ՝ զոր պատրաստեալ է նմա Աստուած. առ ինչ. բայց առ 'ի բարեխօսել անտի աղաղողադոյնս վասն մեր, և լինել մեզ օգնական, առ իջուցանել 'ի վերոյ մեր առատապէս զգանձս երկնայինս, առ 'ի լուր պաղատանաց մերոց, առ 'ի տալ զամենայն պէտս մեր, առ 'ի յարդարել վասն մեր զաթոռն փառաց՝ յորում բազմի՝ յաթոռ ողորմութեան և ընդունելոյ: Ասյս է՝ որ զպաշտօն Կուսին արար հասարակաց և ընդհանուր յամենայն դարս եկեղեցւոյ. այս է՝ որ ձգեաց առ նա ըղձս և զմեծարանս ամենայն ժողովրդոց և ամենայն կարգաց. այս է՝ վասն որոյ չիւք քաղաք և ոչ գիւղ ընդ ոլորտս քրիստոնէութեան, ուր չիցէ տեսանել արձանս երևելիս պաշտաման հաւատացելոց առ Տիրամայրն. այս է՝ որ յորդորեաց զարքայս և զինքնակալս, դնել զթագ իւրեանց և զգաւազան ընդ պաշտպանութեամբ նորա, խնդամուտ լեալ՝ զի չէր մարթ ունել խարխոս հաստատութեան անսասանելի քան զպաշտպանութիւն Կուսին, որոյ համարձակութիւն առաջի Աստուծոյ, որպէս սուրբն Իգնատիոս ասէ, իշխանական իմն է: Ասյս է՝ որ

յորդորեաց զմի 'ի թագաւորաց մերոց, զԼուդովիկ ԺԳ, փառաց յիշատակի արժանաւոր, նուիրել Տիրամօրն զանձն և զթագաւորութիւն իւր, ոչ 'ի ծածուկ ինչ ուխտեալ 'ի սրտէ, այլ յայտ յանդիմման՝ որպէս չէր ուրուք 'ի թագաւորաց քրիստոնէից արարեալ. զի արար զայն հանդէսն Դաւթի առաջի ամենայն ժողովրդեան. Զաղջիս իմ պաշտօնէի ամենայն ձողովրդեան նորա, և եա հրամարակել զայն ընդ ամենայն տեղիս տէրութեան իւրոյ, հաղորդակից ձնպատակս իւր առնելով բարեացն, և հրամայեաց յաւերժական զայնորիկ արձանացուցանել զնշատակ: Ասհա սկիզբն և լուծումն այս ամենայն սրբազան հանդիսից՝ որ կատարին այսօր ընդ համօրէն Գաղղիա, որովք թագաւորք մեր տան աշխարհօրէն առ հաւատչեայ հպատակութեան իւրեանց առ Տիրամայրն, և խոստովանին զնա տիրուհի իւրեանց: Կամիք, սիրելք ունկնդիրք, զի տաց ձեզ առնել գործ արժանի բարեպաշտութեան ձերում, ոչ ինչ դժուարին, և յորմէ չիք ինչ՝ որ խափանել զձեզ կարասցէ. արարէք իւրաքանչիւր ոք ըստ ձերում պայմանի, զոր արար արքայն երկնց քրիստոնեայ, որոյ ուխտին լծցի այս լուծն: Նուիրեցաց նա Կուսին զտէրութիւն իւր. նուիրեցէք և դուք դշխոյին երկնից զտուն և զընտանիս ձեր. ուխտեցաց նա զանձն և զժողովուրդ իւր, ուխտեցէք և դուք զձեզ և զորդիս ձեր: Եւ ոչ այսչափ միայն. այլ որպէս արքայն մեծ հաստատուն բարեպաշտութեամբն իւրով որ կացոյց զնա արդար առաջի Աստուծոյ և մարդկան, կամեցաւ՝ զի հրապարակեսցի ուխտ իւր, մի ամաչեսցուք և մեք յայտնի առնել զմերս: Խոստովան լիցուք համարձակ որ ինչ եմքս, քանզի հաւատք մեր այս փրկելոց է զմեզ: Մի յանձն առցուք՝ զի աշխարհասէրքդ խառնակեցիկք յանդգնեսցին 'ի ծաղրել զպաշտօնն՝ զոր մեք մատուցանեմք Կուսին, քան թէ մեք 'ի պաշտպանել նմին: Եթէ իցեմք կարգեալ 'ի խնամս և 'ի տեսչութիւն հոգւոց, յորդորես-

ցուբք զնոսա ՚ի նոյն եռանդն և ՚ի նախանձ: Ցուշ լինի ձեզ մանաւանդ, ո հաւատացեալք, բան սրբոյն Անսելմեայ, զի որպէս ամենայն տուն՝ հաստատութեամբ և սրբութեամբ նուիրեալ փառաւորելոյ Կուսին՝ ոչ կարիցէ, պարտ է մեզ համարել զի չիցէ սրհնութիւն առաքինական ՚ի տան, ուր չիք պաշտօն փառաւորելոյ Կուսին:

Այսու հոգւով, ով ամենաշքեր թագուհի երկնից, համբ առաջի քո· քանի՛ ցնծութիւն է մեզ, քոյոց չերմ եռանդն պաշտօնէից, տեսանել այսօր խոնարհեալ յոտս քո թագաւորս հզօրս· զի յայսմ աւուր մեծամեծք առհասարակ և ճոխք պաղատին ՚ի քէն օգնականութիւն, ըստ Սաղմոսերգուին· Ձերեսս սորա պաղատեսցեն ղեծամեծս ՚ի ծողովրդոց: Զի յայսմ աւուր ըստ օրինակի թագաւորաց մերոց, և ՚ի կատարումն ուխտին՝ զոր առբարեալ է նոցա քեզ, տեսանեմք զդստաւորս և զաւագանին, որք զառաջին կայս ՚ի միջի մերում ունին և ըզբարձրագոյն պատիւս, երևեալ առ սեղանովք քովք՝ մատուցանել քեզ պաշտօն: Արդ եթէ ճոխք և մեծամեծք այսպէս պատուեն զքեզ, զո՞ր պատիւ ոչ մատուսցեն քեզ աղքատք և նուաստք, պարզամիտք կրօսերք և խոնարհք, որոց հաւատք՝ բազում այն է՝ զի կենդանագոյնք են, և պաշտօն նոցա սրտեռանդն: Իսկ այն որպէս և է, այլ պարտ է իմումս պաշտամանն, սրբուհի Տիրամայր, ժողովել զուսոս բովանդակ ժողովրդեանն՝ որ լսեն ինձ, զխոքուննց և զմեծամեծաց, և նուիրել քեզ: Ներեա զի և զնմա յաւելից ՚ի նոցայն· և մանաւանդ նեբեա՝ զի յանուն ամենեցուն խնդրեցից ՚ի քէն զշնորհս, զոր ձանձրեաս մեզ կարևորս, և կարես տալ անձրևել ՚ի վերայ մեր: Հէզ ՚ի վերայ մեր զաստուածային շնորհս, որոց եսգ եբր աւանդապահ և մատակարար· հէզ ՚ի գըլուխս օծելոյ անղուգական արքային, որ ուղղէ զմեզ· հէզ առատապէս ՚ի վերայ պետութեանս, նուիրելոյ ՚ի

պաշտօն քո· հէզ ՚ի վերայ ամենեցուն և խրատքանչիւրոց: Թէպէտ և յամենայնի ես դու օգնական մեր, այլ ոչ այնչափ երկրաւոր շնորհս խնդրեմք ՚ի քէն, որչափ շնորհս հոգևորս: Շինօ զհօուր պատերազմի, որ բորբոքի ընդ եբրայս համօրէն, և բաժանէ զմեզ հոգևորս քրիստոնեայս· այլ օգնեա մեզ առաւելապէս չնչուցանել ՚ի մեզ զբոց ախտից, և զընտանի պատերազմ դրգռեալ յայնցանէ ՚ի սրտի մերում: Տուր մեզ խաղաղութիւն ընդ թշնամիս երկրի մերոյ· այլ առաւել քան զայն օգնեա մեզ առ ՚ի ստանալ վերստին՝ զոր կորուսաքն, զխաղաղութիւն առ Աստուած, և պինդ կալ ՚ի նմին՝ եթէ լիցի մեզ երջանկութիւն գտանել զայն: Եւ քանզի ամենայն շնորհք փրկարարք բովանդակին ՚ի միում, ընկալ վասն մեր ով որ անթերի օրինակդ ես ամենայն քրիստոնէական առաքինութեանց, ընկալ վասն մեր զշնորհս նմանիոզ լինելոյ որպէս զքեզ Քրիստոսի, որպէս զի թագաւորեսցուք ընդ նմա և ընդ քեզ ՚ի յաւիտենական երանութեանն, որում արժանի արասցէ զմեզ և այլն:

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

ՊՈՍԻԻԷԻ

Ի վշտակցութիւն սրբոյ Կուսին 7
Դարձեալ ՚ի վշտակցութիւն սրբոյ Կուսին . . 33
Յանարատ յղութիւն սրբոյ Կուսին . . . 63
Դարձեալ յանարատ յղութիւն սրբոյ Կուսին . 85
Ի ծնեալ անարատ յղութեան և ՚ի պաշտօն
սրբոյ Կուսին 109
Ի Ծնունդ Տիրամօրն 133
Դարձեալ ՚ի Ծնունդ Տիրամօրն 155
Դարձեալ ՚ի Ծնունդ Տիրամօրն 171

ՄԱՍԻԼԻՈՆԻ

Յանարատ յղութիւն ամենասուրբ Կուսին . . 189
Յայտնութիւն Կուսին 219
Ի Տեառն ընդ առաջ 245
Դարձեալ ՚ի Տեառն ընդ առաջ 283
Ի վերափոխումն Տիրամօրն 313

ՀՕՐՆ ՊՈՒՐՏԱԼՈՒԻ

Յանարատ յղութիւն Տիրամօր 345
Յաւետումն սրբոյ Կուսին 381
Դարձեալ յաւետումն սրբոյ Կուսին . . . 409
Ի Տեառն ընդ առաջ 441
Դարձեալ ՚ի Տէառն ընդ առաջ 473
Դարձեալ ՚ի Տեառն ընդ առաջ 505
Ի վերափոխումն Կուսին 547
Դարձեալ ՚ի վերափոխումն և ՚ի պաշտօն Կուսին . 575

3178



ՀՀ Ազգային գրադարան
NL0030080

3082